Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հրատարակչությունը, չհետապնդելով որևէ եկամուտ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի համացանցային կայքերում ներկայացնում է իր հայագիտական հրատարակությունները: Գիրքը այլ համացանցային կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ հրատարակչության համապատասխան թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐՄԱՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ԱՄՆ-Ի ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ

(19-ՐԴ ԴԱՐ - 1914 Թ.)

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2014

ՀՏԴ · 93/99:32.001
ԳՄԴ 63.3+66.01
Կ 530

Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ միջազգային հարաբերությունների
ֆակուլտետի գիտական խորհուրդը

Կ 530 Կիրակոսյան Ա.
ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը և արևմտահայությունը (19-րդ դար-1914 թ.)/Ա. Կիրակոսյան, -Եր.: ԵՊՀ հրատ., 2014.- 400 էջ:

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արման Ջոնի Կիրակոսյանի ներկա աշխատության մեջ փորձ է կատարված վերլուծել ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության ընդհանուր սկզբունքները, Օսմանյան կայսրության հետ հարաբերությունների ձևավորումն ու զարգացումը, միսիոներական շարժման սկիզբն ու աշխատանքի ուղղությունները, ամերիկյան դիվանագետների և բողոքական առաքելությունների գործունեությունը, լուսաբանել արևմտահայության իրավիճակին, դիվանագետների և միսիոներների՝ 1894-1896, 1909 թթ. կոտորածներին վերաբերող վկայությունները, ամերիկյան հասարակայնության արձագանքն ու տուժած հայերի համար օգնության կազմակերպումը: Նախատեսվում է պատմաբանների, թուրքագետների, քաղաքագետների, դիվանագետների, ուսանողների, ինչպես նաև հանրապետության և սփյուռքի ընթերցող լայն շրջանակի համար:

ՀՏԴ 93/99:32.001
ԳՄԴ 63.3+66.01

ISBN 978-5-8084-1879-0

© ԵՊՀ հրատարակչություն, 2014
© Արման Կիրակոսյան, 2014

ՆՎԻՐՎՈՒՄ Է

1915 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

ԱՌԱՋԱԲԱՆ

19-րդ դարի ընթացքում և 20-րդ դարի սկզբին Ամերիկայի Միացյալ Նահանգների քաղաքականությունն Օսմանյան կայսրության նկատմամբ և միսիոներական կազմակերպությունների գործունեությունը որոշակի դերակատարություն են ունեցել արևմտահայության ճակատագրում, որի ուսումնասիրությունն ու գիտական ընդհանրացումն ունի արդիական քաղաքական և կարևոր պատմագիտական նշանակություն: Թեև հայ պատմագրությունը զգալի աշխատանք է կատարել այդ շրջանի Օսմանյան կայսրության, Արևմտյան Հայաստանի, ազգային-ազատագրական շարժման պատմության, Հայկական հարցում եվրոպական տերությունների քաղաքականության ուսումնասիրման բնագավառում, առ այսօր բացակայում էր հատուկ աշխատություն, ուր սկզբնաղբյուրների հիման վրա լուսաբանված լինեն ԱՄՆ-ի քաղաքականությունն ու դիվանագիտության գործունեությունն Օսմանյան կայսրությունում, ինչպես նաև արևմտահայության վիճակն ամերիկա-օսմանյան հարաբերությունների կոնտեքստում:

Ներկա աշխատության մեջ փորձ է կատարված ուսումնասիրել և վերլուծել ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության ընդհանուր սկզբունքները, Օսմանյան կայսրության հետ հարաբերությունների ձևավորումն ու զարգացումը, միսիոներական շարժման սկիզբն ու աշխատանքի ուղղությունները, ամերիկյան դիվանագիտության և բողոքական առաքելությունների գործունեությունը, լուսաբանել դիվանագետների և միսիոներների՝ արևմտահայության իրավիճակին, 1894-1896, 1909 թթ. հայկական կոտորածներին վերաբերող վկայությունները, ամերիկյան հասարակայնության արձագանքն ու տուժած հայերի համար օգնության կազմակերպումը:

Գլխավորաբար ԱՄՆ-ի պետական քարտուղարության արխիվային և հրատարակված փաստաթղթերի, ամերիկյան այլ աղբյուրների ու գրականության հիման վրա գրված ներկա աշխատությունը գալիս է ամբողջացնելու և ամփոփելու ամերիկյան կառավարության քաղաքականությունն ու դիվանագիտության գործունեությունն Օսմանյան կայսրությունում: Հեղինակն աշխատել է ԱՄՆ-ի ազգային արխիվում, Կոնգրեսի գրադարանում, Վաշինգտոնի հայկական ազգային ինստիտուտում, Միչիգան-Դիարբորն համալսարանի հայկական հետազոտությունների կենտրոնում, հավաքել, հետազոտել ու վերլուծել է աշխատության ժամանակագրական շրջանին վերաբերող մեծ ծավալի վավերագրական նյութեր, մասնավորապես ամերիկ-

յան դիվանագիտության գրագրությունը, որն արժեքավոր աղբյուր է ոչ միայն ԱՄՆ-ի, եվրոպական տերությունների, Օսմանյան կայսրության քաղաքականության, այլև արևմտահայության վիճակի և ազատագրական շարժումների ուսումնասիրության համար:

Գիրքը կազմված է առաջաբանից, հինգ գլուխներից, ենթագլուխներից, վերջաբանից և անվանացանկից:

«Ամերիկայի Միացյալ Նահանգների արտաքին քաղաքականության սկզբունքները (1776-1914)» I գլխում վերլուծվում են ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության ձևավորումը, գլխավոր ուղղությունները, ամերիկյան արտաքին քաղաքական վարդապետությունները՝ սկսած Ամերիկյան հեղափոխությունից և անկախության ձեռքբերումից մինչև Առաջին համաշխարհային պատերազմն ընկած ժամանակաշրջանը: ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության սկզբունքների լուսաբանումը կարևոր է Օսմանյան կայսրության հանդեպ ԱՄՆ-ի քաղաքականության, այդ պետության հետ հարաբերությունների ձևավորման և զարգացման, արևմտահայության և Հայկական հարցի նկատմամբ ամերիկյան կառավարության և հասարակական շրջանակների դիրքորոշման ուսումնասիրության նպատակով:

«ԱՄՆ-Օսմանյան կայսրություն միջպետական հարաբերությունների սկիզբը և միսիոներական շարժումը» II գլխի առաջին ենթաբաժնում ուսումնասիրված են Օսմանյան կայսրության նկատմամբ ԱՄՆ-ի քաղաքականության ձևավորումն ու առնչությունների սկզբնական շրջանը 19-րդ դարի առաջին կեսին, դիվանագիտական հարաբերությունների հաստատումն ու առաջին միջպետական փաստաթղթերի ստորագրումը, ամերիկյան դիվանագիտական և հյուպատոսական առաքելությունների հիմնադրումն ու գործունեությունը: Գլխի երկրորդ ենթաբաժնում վերլուծվում են ամերիկյան միսիոներների առաջին քայլերն Օսմանյան կայսրությունում, նրանց գործունեության շարժառիթները, քրիստոնյաների, մասնավորապես արևմտահայության շրջանում տարվող նրանց աշխատանքը, բողոքական համայնքի ձևավորումը, միսիոներական առաքելությունների տարածումը դեպի արևելյան շրջաններ, Արևմտյան Հայաստան:

III գլխում՝ «Ամերիկյան դիվանագիտության գործունեությունն Օսմանյան կայսրությունում 1860-1890-ական թթ.», ուսումնասիրվում է ամերիկյան դիվանագետների և հյուպատոսների աշխատանքն ինչպես երկկողմ հարաբերությունների զարգացման, այնպես էլ ԱՄՆ-ի քաղաքացիների, մասնավորապես առևտրականների ու միսիոներների իրավունքների և անվտանգության պաշտպանության ոլորտում: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել արևմտահայության ծանր իրավիճակը, 1893 թ. Մարզվանի դեպքերը լուսաբանող ամերիկյան ներկայացուցչության և հյուպատոսների զեկուցագրերին ու տեղեկանքներին:

«ԱՄՆ-ի դիվանագիտությունը և 1894-1896 թթ. հայկական կոտորածները» IV գլխի շարադրանքի համար հիմք է ծառայել ամերիկյան դիվանագիտական նամակագրությունը՝ պետքարտուղարության, դիվանագետների և միսիոներների՝ հայկական կոտորածների մասին նամակներն ու զեկուցագրերը, որոնք կարևորագույն սկզբնաղբյուր են օսմանյան իշխանությունների կողմից հակահայկական քաղաքականության կազմակերպման և իրականացման ուսումնասիրության գործում:

V գլխում՝ «Ամերիկյան արձագանքը և օգնության կազմակերպումը կոտորածներից տուժած արևմտահայությունը», ներկայացված է ամերիկահայության համառոտ պատմությունը 19-րդ դարի ընթացքում: Լուսաբանվում են ԱՄՆ-ի կրոնական և հասարակական շրջանակների, Կոնգրեսի, պարբերական մամուլի արձագանքն ու դիրքորոշումը 1894-1896 թթ. արևմտահայության կոտորածների նկատմամբ, ամերիկյան բարեգործական հաստատությունների, Ամերիկյան Կարմիր խաչի, միսիոներական կազմակերպությունների ու անհատ միսիոներների կողմից արևմտահայությանը ցուցաբերված օգնությունը:

«Ամերիկյան դիվանագիտության գործունեությունն Օսմանյան կայսրությունում 1897-1914 թթ.» VI գլխում վերլուծվում են ԱՄՆ-ի պետքարտուղարության և Կոստանդնուպոլսում դեսպանության աշխատանքը 1894-1896 թթ.՝ արևմտահայության կոտորածներից հետո ընկած ժամանակաշրջանում, երիտթուրքական հեղափոխության առաջին տարիներին և 1909 թ. Ադանայի հայկական կոտորածների ընթացքում, դեսպան Հենրի Մորգենթաուի գործունեությունն Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին:

Գիրքն ունի նաև համապատասխան ծանոթագրություններ, որոնց միջոցով ընթերցողը կարող է անհրաժեշտ տեղեկություններ քաղել օգտագործված աղբյուրների, ինչպես նաև ԱՄՆ-ի, Օսմանյան կայսրության, եվրոպական տերությունների պետական ու քաղաքական գործիչների, դիվանագետների, ամերիկյան ու հայ հասարակական և կրոնական գործիչների կյանքի ու գործունեության մասին:

ԳԼՈՒԽ I

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ (1776-1914 ԹԹ.)

1. ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության ձևավորումը

Օսմանյան կայսրության հանդեպ ԱՄՆ-ի քաղաքականության, այդ պետության հետ հարաբերությունների ձևավորման ու զարգացման, արևմտահայության վիճակի ու Հայկական հարցի նկատմամբ ամերիկյան կառավարության և հասարակական շրջանակների դիրքորոշման ուսումնասիրության նպատակով կարևոր է Ամերիկյան հեղափոխությունից ու անկախության ձեռքբերումից մինչև Առաջին համաշխարհային պատերազմն ընկած ժամանակաշրջանի ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության սկզբունքների և ընդհանուր բնութագրի լուսաբանումը:

Պատմության այդ ժամանակաշրջանի ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության հիմնական սկզբունքն ընդունված է համարել համաշխարհային խնդիրներին և մասնավորապես Եվրոպայի մեծ տերությունների գործերին չմիջամտելու՝ «չմիջամտողականության» (Non-Interventionism) կամ «ամերիկյան կոնտինենտալիզմի» (American Continentalism) ուղեգիծը: ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը բնութագրելու նպատակով պատմագրության մեջ հաճախ օգտագործվում է նաև «մեկուսացվածություն» (Isolationism) հասկացությունը, որը, սակայն, լիարժեքորեն չի արտահայտում պատմական իրականությունը: Թեև Միացյալ Նահանգները խուսափում էր դաշինքների մեջ մտնելուց և արտաքին քաղաքականության ոլորտում իր վրա որևէ պարտականություններ վերցնելուց, սակայն միաժամանակ իրականացնում էր բավականին գործուն արտաքին քաղաքականություն արևմտյան կիսագնդում, իսկ այնուհետև խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում ու Հեռավոր Արևելքում սատարում էր արտաքին առևտրին ու տնտեսական համագործակցության զարգացմանը, պաշտպանում իր քաղաքացիների ու առևտրի շահերն աշխարհի տարբեր անկյուններում:

ԱՄՆ-ի՝ 19-րդ դարի արտաքին քաղաքականությունն անվանում են նաև «ռեալիստական»՝ ազգային շահի պաշտպանությանը միտված քաղաքականություն, որը ժամանակի ընթացքում ենթարկվեց ձևափոխությունների և Առաջին համաշխարհային պատերազմի սկզբնական շրջանում դարձավ «իդեալիստական» ու ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի[1] անունով կոչվեց «Վիլսոնյան»:[2] «Իդեալիստական ինտերնացիոնալիզմի» նոր ուղեգիծը նշանավորեց ԱՄՆ-ի մուտքը համաշխարհային քաղաքականություն՝ աշխարհում խաղաղություն և ժողովրդավարություն ապահովելու նպատակով:

ԱՄՆ-ի ավանդական արտաքին քաղաքականության ձևակերպումն առաջին անգամ իր արտահայտությունը գտավ նախագահ Ջորջ Վաշինգտոնի[3]՝ 1793 թ. Չեզոքության հռչակագրում և 1796 թ. իր Հրաժեշտի ուղերձում: Այդ քաղաքականության գաղափարական հիմքը հանդիսացավ դեռևս Ամերիկյան հեղափոխության շրջանում (1776 թ.) հրատարակված Թոմաս Փեյնի[4] «Առողջ դատողություն» երկը: Այդ աշխատության մեջ Փեյնը ներկայացրել էր Մեծ Բրիտանիայից անկախանալու և ինքնիշխան քաղաքականություն վարելու հետևյալ փաստարկները.

1) «կղզու կողմից մի ամբողջ մայրցամաք կառավարելն անհեթեթություն է»,

2) «Ամերիկայի բնակչությունը կազմված է ոչ միայն բրիտանացիներից, այլև տարբեր եվրոպական ազգերի ներկայացուցիչներից»,

3) «եթե նույնիսկ Բրիտանիան մայր երկիր է համարվում Ամերիկայի համար, ապա ինչո՞ւ է այն այդքան դաժան վարվում իր զավակների հետ»,

---

[1] **Վուդրո Վիլսոն** (1856-1924) - ԱՄՆ-ի պետական գործիչ, պատմաբան և փիլիսոփա, Պրինստոնի համալսարանի դասախոս, 28-րդ նախագահ՝ Դեմոկրատական կուսակցությունից (1913-1921), «Տասնչորս կետեր» խաղաղության ծրագրի հեղինակ, Խաղաղության Նոբելյան մրցանակի դափնեկիր (1919), անկախ հայկական պետության ստեղծման, Հայաստանի մանդատը ստանձնելու կողմնակից, որն Ազգերի լիգայի հանձնարարությամբ հանձն առավ 1920 թ. Սևրի հաշտության պայմանագրով ստեղծվող հայկական պետության սահմանները որոշողի դերը:

[2] **Russell, Richard**, American Diplomatic Realism: A Tradition Practised and Preached by George F. Kennan // *Diplomacy and Statecraft*, 2000, November, Vol. 11, Issue 3, pp. 159-183.

[3] **Ջորջ Վաշինգտոն** (1732-1799) – ԱՄՆ-ի հիմնադիր հայրերից, Կոնտինենտալ բանակի գլխավոր հրամանատար, անկախության պատերազմի մասնակից, ԱՄՆ-ի առաջին նախագահ (1789-1797):

[4] **Թոմաս Փեյն** (1737-1809) - անգլո-ամերիկյան գրող, փիլիսոփա, հրապարակախոս, համարվում է ԱՄՆ-ի «կնքահայրը», հիմնական աշխատությունները՝ «Առողջ դատողություն» (1776), «Ամերիկյան ճգնաժամը» (1776-1783), «Մարդու իրավունքները» (1791), «Բանականության դարը» (1793-1794):

4) «հանդիսանալով Բրիտանիայի մաս՝ Ամերիկան կարող է ներքաշվել եվրոպական պատերազմների մեջ և զրկվել միջազգային առևտրում իր ունեցած առավելություններից»:[1]

Նույնիսկ որպես Բրիտանիայի գաղութային հպատակներ՝ ամերիկացիներն իրենց մասնակցությունն ունեցել էին համաշխարհային քաղաքականության մեջ, ինչպես օրինակ՝ 17-18-րդ դարերի պատերազմներում, սակայն հեղափոխությունից հետո Միացյալ Նահանգների ղեկավարները ժամանակավորապես սահմանափակեցին ամերիկյան շահերը միմիայն Հյուսիսային Ամերիկայի մայրցամաքով:[2]

ԱՄՆ-ի «մեկուսացվածության» կամ «չեզոքության» սկզբունքը ձևավորվել էր եվրոպական հզորության վտանգի պայմաններում: Անկախության ձեռքբերումից ի վեր ամերիկացիները սկսեցին որոնել քաղաքականություն, որը հնարավորինս հեռու պահեր նրանց Ֆրանսիական հեղափոխության և Նապոլեոնական նվաճումների հետևանքով ստեղծված եվրոպական հորձանուտից: Եթե «ծովերի ազատության» սկզբունքը բաց էր պահում Ատլանտյան օվկիանոսն ամերիկյան առևտրի համար, «մեկուսացվածությունն» օվկիանոսը դարձնում էր բաժանարար գիծ Հին աշխարհի և Նոր աշխարհի միջև: Համարելով իրեն խաղաղասեր հանրապետություն՝ Միացյալ Նահանգները ձգտում էր հեռավորության վրա մնալ Եվրոպայի «գիշատիչ, պատերազմամետ և հարստահարիչ միապետություններից»: Այսպիսով՝ ամերիկյան անկախ քաղաքականությունը ձևավորվեց երկու կիսագնդերի խաղաղ գոյակցության հիմնարար գաղափարի վրա: Ամերիկյան քաղաքական գործիչները դիմադրում և խուսափում էին եվրոպական միջամտությունից Ամերիկայի մայրցամաքում և միաժամանակ չէին ցանկանում ներգրավվել Եվրոպայի դաշինքների ու պատերազմների մեջ: Այս գաղափարը, փաստորեն, իր ձևավորումը ստացավ Ամերիկայի պատմության գաղութային շրջանում, անգլո-ֆրանսիական իմպերիալիստական մրցակցության ընթացքում:[3]

1793 թ. ապրիլի 22-ի Ջորջ Վաշինգտոնի Չեզոքության հռչակագրում ԱՄՆ-ն իր չեզոքությունն էր հայտարարում Ավստրիայի, Պրուսիայի, Սարդինիայի, Մեծ Բրիտանիայի, Միացյալ Նիդերլանդների և Ֆրանսիայի միջև ընթացող պատերազմում: Իսկ 1796 թ.՝ նախագահի իր պաշտոնը թողնելու նախօրյակին, Ջորջ Վաշինգտոնը համոզում էր իր հայրենակիցներին հանդես բերել իմաստություն և պահպանել «մեկուսացված և հեռավորության. դիրքորոշում», խուսափել մշտական դաշինքներից, եվրոպական վեճերի և պատերազմների մեջ ներքաշվելուց, խրախուսել ազատ առևտուրը:[1]

Իր ելույթում Վաշինգտոնը նշում էր, որ Եվրոպան ունի մի շարք հիմնարար շահեր, որոնք Միացյալ Նահանգների համար ոչինչ չեն նշանակում կամ ունեն շատ հեռավոր նշանակություն: Հետևաբար, շարունակում էր Վաշինգտոնը, Եվրոպան «ներգրավված է բազմաթիվ վիճաբանությունների մեջ, որոնց պատճառներն էապես օտար են մեր շահերին...»: Մեր իրավիճակը, ասում էր նա, ստիպում է մեզ որդեգրել «տարբեր ուղեգիծ»: Ըստ Վաշինգտոնի՝ ԱՄՆ-ն այնպիսի իրավիճակում չէ, որ չմտածի արտաքին աղբյուրից սպասվող հնարավոր նյութական վնասների մասին, ուստի հարկավոր է որդեգրել չեզոքության քաղաքականություն, որը կդառնա հարգանքի առարկա, քանի որ պատերազմող երկրները չեն համարձակվի ներքաշել մեզ սադրանքների մեջ:[2]

Դա ոչ միայն նշանակում էր, որ ԱՄՆ-ը որդեգրում է եվրոպական գործերին չմիջամտելու քաղաքականություն, այլև ակնարկ էր այն մասին, որ մոտ ապագայում Միացյալ Նահանգները պաշտոնապես զգուշացնելու է եվրոպական պետություններին, որ այլևս չի հանդուրժելու նրանց կողմից որևէ ոտնձգություն ամերիկյան մայրցամաքի նկատմամբ: Տարիների ընթացքում, երբ ԱՄՆ-ը դարձավ ավելի ուժեղ, բարեկեցիկ ու զարգացած պետություն, ամերիկյան հասարակության մեջ ձևավորվեց և ավելի ամրապնդվեց այն համոզմունքը, որ ամերիկյան կիսագունդը պատկանում է իր բնակիչներին:

Ջորջ Վաշինգտոնին փոխարինած ղեկավարները շարունակեցին այդ քաղաքականությունը 19-րդ դարի ընթացքում: ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունն այդ շրջանում կարելի է բնութագրել որպես «մշտական ազգային շահի վարդապետություն», որի նպատակն էր Ամերիկայում խաղաղության պահպանումը, իսկ արևելյան կիսագնդում՝ միջազգային համագործակցությունն ու ամերիկյան կամ արևմտյան քաղաքակրթության տարածումը:[3]

Երբ իսպանական գաղութները հեղափոխություն սկսեցին եվրոպական տերությունների տիրապետության դեմ, ամերիկացիների համակրանքի պատճառը ոչ միայն որդեգրված հանրապետական սկզբունքներն էին, այլև եվրոպական հսկողությունն ու ազդեցությունն Ամերիկայի տարածքից

---

[1] Paine, Thomas, Common Sense. The Rights of Man and Other Essential Writings of Thomas Paine, New York: Dover Publications, 1997, p. 64.
[2] Carleton, William G., The Revolution in American Foreign Policy. Its Global Range, New York: Random House, 1963, pp. 17-18.
[3] Hunt, Michael H., Traditions of American Diplomacy: from Colony to Great Power // American Foreign Relations Reconsidered, 1890-1993 (Edited by Gordon Martel), London and New York: Routledge, 1994, pp. 8-9.

[1] Նույն տեղում:
[2] Foster, John W., A Century of American Diplomacy: Being a Brief Review of the Foreign Relations of the United States, 1776-1876, Boston and New York: Houghton Mifflin Company, 1900, pp. 438-439.
[3] Hart, Albert Bushnell, The Foundations of American Foreign Policy, New York: The Macmillan Company, 1901, pp. 239-240.

դուրս մղելու «լուրջ ցանկությունը»: Երբ վտանգ ստեղծվեց, որ փլուզվող իսպանական կայսրության որոշ տարածքներ կարող են ընկնել մյուս եվրոպական տերությունների ձեռքը, ԱՄՆ-ի նախագահ Թոմաս Ջեֆերսոնը[1] գրեց Օրլեանի տարածքի նահանգապետին. «Մենք կբավարարվենք նրանով, որ Կուբան և Մեքսիկան շարունակեն մնալ ներկայիս կախվածության կարգավիճակում, սակայն շատ անցանկալի կլինի նրանց տեսնել Ֆրանսիայի, կամ էլ Անգլիայի քաղաքական կամ տնտեսական հսկողության ներքո: Մենք համարում ենք, որ նրանց ու մեր շահերը համընկնում են, և մեր ընդհանուր խնդիրը պետք է լինի եվրոպական ազդեցության դուրս մղումն այս կիսագնդից»:[2]

ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության իրականացմանը զուգահեռ ձևավորվեց նաև համապատասխան հասարակական կարծիք, համաձայն որի՝ դիվանագիտական հարաբերություններում Ամերիկան մեկուսացված էր մնացած աշխարհից: Ժամանակակիցները նշում էին, որ ամերիկացիներն այնպես էին վերաբերվում իրենց պատմությանը, քաղաքական համակարգին ու արտաքին քաղաքականությանը, կարծես այդ ամենը որևէ առնչություն չունենար այլ ազգերի կամ պետությունների հետ: Երբ ամերիկացիները խոսում էին Հին աշխարհի և Նոր աշխարհի մասին, նրանք կարծես բաժանում էին մարդկության պատմությունը երկու մասի ու բաժանարար գծեր պատկերում երկրագնդի երեսին: «Աշխարհագրական մեկուսացվածության» այս մոտեցումը ստեղծում էր ամերիկացիների մոտ մի զգացում, համաձայն որի՝ նրանք կարծես կտրվել են նախահայրերի ավանդույթներից, կարծես ընդհանրապես նախահայրեր չեն ունեցել, կարծես ցանկանում են մոռանալ հազարամյակների «փառավոր» ժառանգությունը:[3]

Ամերիկայում ձևավորված այդ մտայնության ընդդիմախոսներից Ալբերտ Հարթը[4] նշում էր, որ թեև մայրցամաքի դիմագիծը նոր էր, սակայն Ամերիկայի մտավոր, սոցիալական, բարոյական և քաղաքական զարգա-

[1] **Թոմաս Ջեֆերսոն** (1743-1826) – ԱՄՆ-ի հիմնադիր հայրերից, Անկախության հռչակագրի (1776) հեղինակ, դիվանագիտական ներկայացուցիչ (լիազոր նախարար) Ֆրանսիայում (1785-1789), առաջին պետքարտուղար (1790-1793), փոխնախագահ (1797-1801), 3-րդ նախագահ (1801-1809):

[2] **Foster, John W.**, նշվ. աշխ., էջ 440:

[3] **Hart, Albert Bushnell**, նշվ. աշխ., էջ 1:

[4] **Ալբերտ Հարթ** (1854-1943) - ամերիկացի պատմաբան, գրող, ուսուցիչ, Հարվարդի և Բեռլինի համալսարանների դասախոս, Ամերիկյան պատմական և քաղաքագիտության ասոցիացիաների նախագահ, *«American Historical Review»* ամսագրի խմբագիր, հիմնական աշխատությունները՝ «Ֆեդերալ կառավարության ուսումնասիրության ներածություն» (1890), «Միության ձևավորումը» (1897), «Ամերիկյան արտաքին քաղաքականության հիմունքները» (1901), «Եվրոպայի պատերազմը» (1914), «Մոնրոյի դոկտրինը» (1915), «Նոր ամերիկյան պատմությունը» (1917), «Ամերիկան պատերազմի մեջ» (1917), «Պատերազմի պատճառները» (1920):

ցումը մարդկության պատմության մաս է կազմում: Թեև ամերիկացիների բնութագիրը փոխվել էր ներգաղթի արդյունքում, սակայն նրանց հայրերը ժառանգել էին ավանդույթներն ու բնավորության գծերը դանիացիներից, սաքսոններից և նորմանդացիներից, շոտլանդացիներից, ուելսցիներից և իռլանդացիներից: Նա շարունակում էր, որ *Նոր աշխարհ* հասկացությունը շինծու էր, քանի որ Ամերիկայում զարգացում ստացած ավանդույթներն ու սկզբունքներն անծանոթ չէին աշխարհին և ամերիկացիները չէին կարող անտարբեր մնալ, երբ նրանց եղբայրները Եվրոպայում վտանգի տակ էին: Ամերիկացիները ժառանգել էին իրենց ազգակիցների կրոնական ավանդույթները, արվեստն ու գրականությունը, կրթական համակարգը, օգտագործել նրանց գյուտերը, հաշվի առել նրանց սխալներն ու օգտվել կառավարման հաջողություններից: Փոխարենն ամերիկացիները մարդկությանն էին տալիս իրենց գյուտարարության, մտավոր զարգացման, կառավարման ու կրոնական ազատության նոր փորձը:[1]

Իրականում Ամերիկան մեկուսացված չի եղել իր պատմության գաղութային շրջանում (1493-1775 թթ.). Եվրոպայից ժամանած միջազգային դերակատարներն իրենց ազդեցությունն են ունեցել արևմտյան կիսագնդի վրա: Միջազգային բախումների երեք պատճառները՝ տարածքը, առևտուրն ու օտարերկրյա տիրապետությունը, միշտ էլ առկա են եղել՝ սկսած առաջին գաղութային բնակավայրերի ժամանակաշրջանից մինչև հեղափոխությունը:

Անգլիայի և Ֆրանսիայի միջև տարածքային վեճը սկսվել էր դեռևս 1613 թ. և շարունակվել դադարներով մինչև 1763 թ.: Գաղութների բնակեցման հետևանքով Անգլիայի և Իսպանիայի միջև մեկ դար շարունակ վեճ էր տեղի ունեցել: Ռեյսվեյկի (1697 թ.), Ուտրեխտի (1713 թ.), Ախենի (1748 թ.) և Փարիզի (1763 թ.) պայմանագրերում կարևոր հոդվածներ կան, որոնք վերաբերում են ամերիկյան տարածքներին: Երբ հեղափոխության արդյունքում Միացյալ Նահանգները հայտարարեց իր անկախության իրավունքների և արտոնությունների մասին, այն ընդունեց աշխարհում ընդունված անկախ ազգերին վերաբերող միջազգային օրենքները: Հանրապետության հայրերը երբևիցե չէին մտածել, որ իրենց ազդեցությունը պետք է սահմանափակվի միայն Հյուսիսային ու Հարավային Ամերիկայով. նրանց վաղ դիվանագիտությունն ուղղված էր միմիայն գոյություն ունեցող եվրոպական ուժերի հավասարակշռության պահպանմանը: Դրա վառ վկայությունը ֆրանսիական կողմին սատարելն էր, որի արդյունքում Մեծ Բրիտանիան ստիպված եղավ խաղաղություն կնքել:[2]

[1] Նույն տեղում, էջ 2:

[2] Նույն տեղում, էջ 2-3, 9:

Միացյալ Նահանգների՝ 19-րդ դարի արտաքին քաղաքականության էությունը հիմնականում այն էր, որ նա հրաժարվում էր ենթարկվել այլ տերությունների թելադրանքին՝ միաժամանակ անհրաժեշտության դեպքում չհրաժարվելով համատեղ գործողություններից, եթե դա էր պահանջում ազգային շահը: Իրականում Միացյալ Նահանգների քաղաքականության բանալին պետք է փնտրել ոչ թե որևէ վարդապետության կամ պետական վարքականոնի, այլ շահի մեջ: Այդ ընթացքում ԱՄՆ-ում հաճախ օգտագործվող «խճճել դաշինքները», «եվրոպական քաղաքական համակարգ» կամ «դոկտրին» արտահայտություններն օրենքներ կամ դոգմաներ չէին, այլ արտահայտում էին ԱՄՆ-ի շահերից բխող ժամանակավոր ազգային համոզմունքները: Եթե Միացյալ Նահանգներն օգտագործում էր միջամտության հնարավորությունն Ամերիկայի մայրցամաքում, դա միայն նշանակում էր, որ նրա հետաքրքրություններն ու շահերը հիմնականում գտնվում էին այդ տարածաշրջանում: ԱՄՆ-ի դիվանագիտական պատմությունը վկայում է այն մասին, որ կառավարությունը երբեք էլ չի երկմտել և խորշել Ամերիկայի մայրցամաքից դուրս գտնվող տարածքներում իր միջամտությունից, եթե այդպես են պահանջել երկրի շահերը:

Համաձայն ԱՄՆ-ում ձևավորված մտայնության՝ հեղափոխության արդյունքում ստեղծված Նոր աշխարհը պետք է վերափոխեր մարդկության պատմությունը, քանի որ, սկսած Ամերիկայի հայտնաբերումից, դարեր շարունակ աշխարհի պատմությունը զարգանում էր սահմանված հնամոլ կարգով. Ասիան և Աֆրիկան կիսված էին մահմեդականների կողմից, ինչը «սպանել» էր համաշխարհային տիրապետության գաղափարը, իսկ Եվրոպան հետզհետե վերածվում էր իշխանության մեծ և առանձին միավորների: Եվ բնական էր, որ, ըստ այդ արմատացած տեսակետի, ամերիկյան նոր պետությունը՝ իր աշխարհագրական դիրքով, առևտրի հնարավորություններով, մեծ ներգաղթով, մարդկանց մտավոր և քաղաքական հնարագիտությամբ, պետք է վերափոխեր ուժերի հավասարակշռությունն աշխարհում և հավակներ դառնալ համաշխարհային տերություն:[1]

Ամերիկայի հաջողության համար կարևոր էին ոչ միայն ներքին զարգացումները, այլև արտաքին հարաբերություններում տեղի ունեցող փոփոխությունները: Անգլո-ֆրանսիական երկարատև պայքարը համաշխարհային տիրապետության համար հանդիսանում էր հիմնական արքելքն ամերիկյան ծավալապաշտության համար: Եվ ինչպես Մեծ Բրիտանիայի գաղութ, այնպես էլ որպես անկախ պետություն, ամերիկացիները փորձում էին հասնել անկախության, պաշտպանել իրենց առևտուրն ու ապահովել իրենց հսկողության տակ գտնվող տարածքները բրիտանական իմպերիալիստական նկրտումներից ու պարբերական միջազգային ճգնաժամերից: Նույնիսկ երբ Բրիտանիան կորցրեց հսկողությունն իր գաղութների նկատմամբ, բրիտանական քաղաքական գործիչները փորձում էին թույլ պահել նորաստեղծ պետությունը՝ սահմանափակելով նրա ծովային և առևտրային հնարավորությունները և կախվածության մեջ պահելով նրան Բրիտանիայից:

Միաժամանակ Միացյալ Նահանգների հզորության ճանապարհն առաջինը բացեցին բրիտանացիները, որոնք, համոզվելով, որ այլևս չեն կարողանալու ամերիկյան մայրցամաքում հաղթել ֆրանսիացիների հետ դաշինք կազմած իրենց ապստամբ հպատակներին, 1783 թ. ճանաչեցին ԱՄՆ-ի անկախությունը: Սակայն Լոնդոնը շարունակեց իր պահանջները նույնիսկ ճանաչումից հետո՝ սկսելով երկրորդ պատերազմն ամերիկացիների հետ 1812 թ.: Բայց այս անգամ Մեծ Բրիտանիան վերջնականապես համոզվեց, որ նույնիսկ իր ծովային տիրապետության միջոցով չի կարողանալու իր ցանկությամբ լուծել որևէ խնդիր: Այս անգամ նա ստիպված եղավ պատանդ թողնել Կանադայի կարգավիճակն ԱՄՆ-ի քաղաքական կամքին:

Ամերիկացիները հաջողությամբ կարողացան օգտվել միջազգային հարաբերություններում գոյություն ունեցող իրավիճակից: Գտնվելով միմյանց հետ մրցակցության մեջ՝ եվրոպական տերությունների հարաբերությունները Միացյալ Նահանգների հետ սահմանափակված էին Ատլանտյան օվկիանոսով, համապատասխան միջոցների բացակայությամբ և պատերազմներից հոգնած բնակչության տրամադրություններով: Դրսևորելով համբերություն՝ ԱՄՆ-ի քաղաքական գործիչները կարողացան օգտվել միջազգային հարաբերություններում գոյություն ունեցող մրցակցային իրավիճակից և ապահովել բարենպաստ պայմաններ երկրի համար: Իսկ այն պարագաներում, երբ դիվանագիտությամբ հնարավոր չէր լինում լուծել վիճելի տարածքային հարցերն Ամերիկայի մայրցամաքում, նրանք օգտագործում էին այս կամ այն եվրոպական տերության հետ դաշինք կնքելու սպառնալիքը, որը մեծ հնարավորություններ էր տալիս բարենպաստ լուծումների համար, քանի որ քաղաքական դաշինքն ԱՄՆ-ի հետ, ինչպես հետագայում է հաճախ տեղի ունեցել պատմության ընթացքում, կարող էր բախտորոշ դառնալ յուրաքանչյուր եվրոպական տերության համար:

2. Մոնրոյի վարդապետությունը

19-րդ դարի ընթացքում ամերիկյան արտաքին քաղաքականությունն ունեցել է չորս ամենից կարևոր և ճանաչում ստացած վարդապետությունն-

[1] Նույն տեղում, էջ 5-6:

ներ կամ սկզբունքներ: Առաջինը 1823 թ. ԱՄՆ-ի նախագահ Ջեյմս Մոնրոյի[1] հայտնի վարդապետությունն էր, երկրորդը՝ նախագահ Ջեյմս Փոլկի[2] սկզբունքն էր, համաձայն որի՝ ԱՄՆ-ը կարող էր զավթել յուրաքանչյուր ամերիկյան տարածք, որին կարող էր անեքսիա սպառնալ եվրոպական երկրների կողմից: Երրորդ վարդապետությունը պատկանում էր պետքարտուղար Ջեյմս Բլեյնին[3], որը 1881 թ. հայտարարեց, որ ԱՄՆ-ը ամերիկյան նեղուցով անցնող տրանզիտի միակ խնամակալն ու Լատինական Ամերիկայի երկրների միջև ծագող խնդիրների իրավարարն է: Չորրորդ վարդապետությունը ձևակերպվել էր պետքարտուղար Ռիչարդ Օլնիի[4] կողմից 1895 թ., որի համաձայն՝ Միացյալ Նահանգներն ինքնիշխան է Ամերիկայում, իսկ Ամերիկայի բրիտանական գաղութները ժամանակավոր են: Բոլոր այս գաղափարների կապող սկզբունքը «մշտական ազգային շահն էր»:[5]

Մոնրոյի վարդապետությունը, որը ներկայացվել էր 1823 թ. Կոնգրեսին նախագահի տարեկան ուղերձում, Ֆրանսիական հեղափոխության, Նապոլեոն Բոնապարտի[6] հաստատած իշխանության ու ձեռնարկած պատերազմների, իսպանական ամերիկյան հանրապետությունների հանդեպ եվրոպական ագրեսիայի հետևանքն էր: 1807 թ.՝ Իսպանիայից Բուրբոնների հեռացումից և Ջոզեֆ Բոնապարտի[7] թագավոր դառնալուց անմիջապես հետո, Իսպանիայի հսկողությունը Նոր աշխարհի իր տարածքների հանդեպ գրեթե դադարել էր: Դրա արդյունքը եղավ այն, որ Իսպանիայի բոլոր գաղութները հայտարարեցին իրենց անկախության մասին և ընտրեցին կառավարման հանրապետական ձև՝ հիմնված Միացյալ Նահանգների օրինակի վրա:

1814 թ. Բուրբոնները վերադարձան իշխանության Իսպանիայում: Ինչպես Իսպանիան, այնպես էլ մյուս եվրոպական տերությունները չճանաչե-

[1] **Ջեյմս Մոնրո** (1758-1831) – ԱՄՆ-ի հիմնադիր հայրերից, դիվանագիտական ներկայացուցիչ (լիազոր նախարար) Ֆրանսիայում (1794-1796) և Բրիտանիայում (1803-1808), Վիրջինիայի նահանգապետ (1799-1802), պետքարտուղար (1811-1817), պատերազմի քարտուղար (1814-1815), 5-րդ նախագահ (1817-1825):

[2] **Ջեյմս Փոլկ** (1795-1849) - ԱՄՆ-ի պետական գործիչ, Ներկայացուցիչների պալատի խոսնակ (1835-1839), Տենեսիի նահանգապետ (1839-1841), 11-րդ նախագահ՝ Դեմոկրատական կուսակցությունից (1845-1849):

[3] **Ջեյմս Բլեյն** (1830-1893) - ԱՄՆ-ի պետական գործիչ, Հանրապետական կուսակցության անդամ, Ներկայացուցիչների պալատի խոսնակ (1869-1875), պետքարտուղար (1881, 1889-1892):

[4] **Ռիչարդ Օլնի** (1835-1917) - ԱՄՆ-ի պետական գործիչ, Դեմոկրատական կուսակցության անդամ, գլխավոր դատախազ (1893-1895), պետքարտուղար (1895-1897):

[5] Նույն տեղում, էջ 212:

[6] **Նապոլեոն I Բոնապարտ** (1769-1821) – Ֆրանսիական Հանրապետության առաջին կոնսուլ (1799-1804), 1804-1815 թթ.՝ Ֆրանսիայի կայսր:

[7] **Ջոզեֆ Բոնապարտ** (1768-1844) – Նապոլեոն Բոնապարտի եղբայրը, Նեապոլի և Սիցիլիայի (1806-1808), Իսպանիայի (1808-1813) թագավոր:

ցին ամերիկյան նոր հանրապետությունները, և Իսպանիան երկարատև ու դաժան պատերազմ սկսեց՝ այդ տարածքները կրկին իրեն ենթարկելու նպատակով: 1815 թ.՝ Նապոլեոն Բոնապարտին վերջնականապես գահընկեց անելուց հետո, դաշնակից տիրակալները սկսեցին իրականացնել իրենց ծրագրերը, որոնք մշակել էին Վիեննայի կոնգրեսում:[1]

Նապոլեոնական շրջանի իրավիճակի կրկնության վախը ստիպեց Ռուսաստանի, Ավստրիայի կայսրերին և Պրուսիայի թագավորին 1815 թ. կազմավորել Սրբազան դաշինքը: Դաշինքի հայտարարված նպատակը կայանում քաղաքականությունը քրիստոնյա կրոնի ենթակայության տակ առնելն էր, սակայն իրականում այդ նպատակը հակասում էր ժողովուրդների իրավունքներին և ազգերի ազատությանը: Շուտով Ֆրանսիան նույնպես միացավ Դաշինքին: Մինչև 1822 թ. Դաշինքի զանազան համաժողովներ էին տեղի ունեցել, որոնցից մի քանիսին իր մասնակցությունն էր բերել նաև Մեծ Բրիտանիան, թեև պաշտոնապես Դաշինքի մաս չէր կազմում:[2]

1820 թ. Իսպանիայի «հայրենասերները» ստիպեցին Ֆերդինանդ 7-րդին[3] հռչակել 1812 թ. Նապոլեոնի սահմանադրությունը: Այդ հանգամանքը չափազանց անհանգստացրեց Եվրոպայի միապետներին: Այդ առիթով նրանք 1822 թ. հավաքվեցին Վերոնայում: Ֆրանսիան պատրաստվում էր հարձակվել Իսպանիայի վրա՝ Նապոլեոնի սահմանադրությունը վերացնելու նպատակով: Իր հսկողությունը սահմանելով Իսպանիայի նկատմամբ՝ Ֆրանսիան առաջարկեց նաև օժանդակել Նոր աշխարհում նրա տիրույթները ետ բերելու գործում: Մեծ Բրիտանիան, ի դեմս արտաքին գործերի քարտուղար Ջորջ Կաննինգի[4], վախենալով, որ այդ քայլը կարող էր խախտել Եվրոպայում ուժերի հավասարակշռությունն ու ուժեղացնել Ֆրանսիայի ու Իսպանիայի դիրքերը, հայտարարեց, որ բրիտանական կառավարությունը չի հանդուրժելու Ֆրանսիայի կողմից պատերազմական որևէ գործողությունների ձեռնարկումը Նոր աշխարհում: Սակայն Մեծ Բրիտանիան օգնության կարիք ուներ, քանի որ գործում էր միայնակ: Կաննինգը որոշեց դիմել Միացյալ Նահանգներին՝ ներկայացնելով վերջինիս «իրավական շահերը» վտանգված եվրոպական տերությունների կողմից:[5]

[1] Davis, Cushman Kellogg, A Treatise on International Law Including American Diplomacy, St. Paul, Minn.: Keefe-Davidson Law Book Co., 1901, p. 263.

[2] Foster, John W., նշվ. աշխ, էջ 441-442:

[3] **Ֆերդինանդ VII** (1784-1833) – Իսպանիայի թագավոր (1808, 1813-1833):

[4] **Ջորջ Կաննինգ** (1770-1827) – Մեծ Բրիտանիայի պետական և քաղաքական գործիչ, արտաքին գործերի նախարար (1807-1809, 1822-1827), վարչապետ (1827):

[5] Davis, Cushman Kellogg, նշվ. աշխ., էջ 265-266:

Կաննինգը նամակ գրեց Լոնդոնում ԱՄՆ-ի նախարար Ռիչարդ Ռաշին[1]՝ առաջարկելով, որ ԱՄՆ-ը համապատասխան քայլեր ձեռնարկի Սրբազան դաշինքի պետությունների՝ Հարավային Ամերիկայում ռազմական միջամտությունը խափանելու ուղղությամբ: Մասնավորապես, առաջարկվեց ստորագրել հռչակագիր երկու կառավարությունների միջև հետևյալ սկզբունքների շուրջ՝

1) երկու պետությունները չեն հավակնելու Իսպանիայի գաղութների նկատմամբ,

2) երկու պետություններն անտարբեր չեն կարող մնալ, եթե այդ գաղութներից որևէ մեկն անցնի մեկ այլ տերության տիրապետության ներքո:

Ռաշը համաձայնվեց ստորագրել հռչակագիրը մեկ պայմանով. Մեծ Բրիտանիան պետք է ճանաչի այդ գաղութների անկախությունը: Կաննինգը հրաժարվեց ընդունել այդ առաջարկը, քանի որ դա կարող էր փչացնել Բրիտանիայի հարաբերությունները Դաշինքի անդամ-պետությունների հետ: Արդյունքում երկու պետությունների այդ գործարքը շարունակություն չունեցավ:[2]

Ամերիկյան դիվանագետը զեկուցեց այդ մասին պետքարտուղար Ջոն Քվինսի Ադամսին[3], որն իր հերթին ներկայացրեց խնդիրը նախագահ Մոնրոյին: Նախագահը հակված էր ընդունելու Կաննինգի առաջարկը, սակայն Ռաշն ու Ադամսն իրենց մտահոգությունը հայտնեցին բրիտանական առաջարկի շարժառիթների կապակցությամբ: Նրանք վախենում էին, որ Բրիտանիայի հետ համագործակցությունը հավասարազոր եվրոպական դաշինքի դեմ դուրս գալուն կամ որ Բրիտանիան կարող է օգտագործել նման համաձայնությունը՝ արևմտյան կիսագնդում իր ազդեցությունն ընդլայնելու նպատակով: Ադամսը կարծում էր, որ Կաննինգը չափազանցնում էր եվրոպական միջամտության վտանգը Լատինական Ամերիկայում, որ իր կողմից բերված առաջարկությունն ուղղված էր անմիջապես Սրբազան դաշինքի դեմ և կարող էր նույնիսկ թուլացնել Միացյալ Նահանգների ազդեցությունն արևմտյան կիսագնդում: Պետքարտուղարն առաջարկեց, որ ԱՄՆ-ն ինքնուրույն հանդես գա Նոր աշխարհի նկատմամբ եվրոպական միջամտության դեմ, ինչը նա համարում էր «ավելի արժանապատիվ և պատվավոր», քան դառնալ «բրիտանական ռազմանավի հետքերով ընթացող փոքր մի նավակ»: Ի վերջո նրա տեսակետը հաղթանակեց: Առանձին հայտարա-

[1] Ռիչարդ Ռաշ (1870-1859) – ԱՄՆ-ի պետական գործիչ և դիվանագետ, գլխավոր դատախազ (1814-1817), նախարար Մեծ Բրիտանիայում (1817-1825), ֆինանսների քարտուղար (1825-1829), լիազոր նախարար Ֆրանսիայում (1847-1849):

[2] Foster, John W., նշվ. աշխ., էջ 442-443:

[3] Ջոն Քվինսի Ադամս (1767-1848) - ԱՄՆ-ի պետական գործիչ և դիվանագետ, նախարար Նիդերլանդներում (1794-1797), Պրուսիայում (1797-1801), Ռուսաստանում (1809-1814), Մեծ Բրիտանիայում (1814-1817), պետքարտուղար (1817-1825), 6-րդ նախագահ (1825-1829):

ությամբ հանդես գալու Ադամսի տեսակետն ավելի շատ պայմանավորված էր արևմտյան կիսագնդում ռուսական ազդեցության հնարավոր ընդլայնմամբ, քան Լատինական Ամերիկայում եվրոպական միջամտությամբ: Այդ շրջանում Ռուսաստանն էական տարածքային պահանջներ էր դրսևորում Խաղաղ օվկիանոսի հյուսիս-արևմուտքում: Նախագահի համար պատրաստած հռչակագրի առաջին նախագծում Ադամսը նույնիսկ չէր հիշատակել Լատինական Ամերիկան: Մոնրոն անձամբ ինքն էր դա մտցրել տեքստի մեջ և Ադամսի ու մյուս խորհրդատուների հետ երկարատև քննարկումներից հետո ներկայացրել հայտարարությունը Կոնգրեսին ուղղված ուղերձում:[1] Համարվում է, որ Մոնրոյի դոկտրինի հեղինակն իրականում ԱՄՆ-ի պետքարտուղար Ջոն Քվինսի Ադամսն էր:

Նախագահ Մոնրոն խորհուրդ հարցրեց նաև Ջեֆերսոնից և Մեդիսոնից[2]: Ջեֆերսոնի՝ Մոնրոյին ուղղված նամակում գրված էր. «Մեր առաջին և հիմնարար սկզբունքը պետք է լինի Եվրոպայի կրակների մեջ երբեք չխառնվելը: Մեր երկրորդ սկզբունքը պետք է լինի երբեք թույլ չտալ Եվրոպային միջամտել Ատլանտյան գործերին»: Նա խորհուրդ էր տալիս նաև բոլոր հնարավոր միջոցներով թույլ չտալ որևէ տերության կողմից նախկին եվրոպական գաղութների նկատմամբ տիրապետության կամ հսկողության հաստատումը: Ջեֆերսոնը համոզված էր, թե ինչքան կարևոր է եղբայրացումը բոլոր ամերիկյան ազգությունների միջև, նրանց սերտաճումը Եվրոպայից ամբողջապես անկախ ամերիկյան համակարգի մեջ: Նույն խորհուրդները Մոնրոյին տվեց նաև Մեդիսոնը:[3]

Եվրոպական գործերին չմիջամտելու քաղաքականությունը, երկրի հզորացումն ու զարգացումը, ինչպես նաև մյուս ամերիկյան ազգերի անկախացման գործընթացը ստեղծեցին բոլոր նպաստավոր պայմանները, որ ԱՄՆ-ի նախագահ Մոնրոն հայտարարություն անի ամերիկյան նոր արտաքին քաղաքական սկզբունքի մասին:

Նախագահի ուղերձում նշվում էր, որ ելնելով Միացյալ Նահանգների իրավունքներից և շահերից՝ «ազատ և անկախ» պայմաններում գտնվող ամերիկյան մայրցամաքը չի կարող դառնալ որևէ եվրոպական տերության ապագա գաղութացման առարկա: «Բարյացակամ և անկեղծ» հարաբերություններ ունենալով այդ տերությունների հետ՝ Միացյալ Նահանգները հայտարարում էր, որ չի հանդուրժելու որևէ տերության կողմից գաղութացման

[1] Rich, Norman, Great Power Diplomacy, 1814-1914, New York: McGraw-Hill, Inc., 1992, pp. 41-42; Foster, John W., նշվ. աշխ., էջ 443:

[2] Ջեյմս Մեդիսոն (1751-1836) - ԱՄՆ-ի պետական գործիչ, ամերիկյան սահմանադրության գլխավոր հեղինակներից, պետքարտուղար (1801-1809), 4-րդ նախագահ՝ Հանրապետական կուսակցությունից (1809-1817):

[3] Foster, John W., նշվ. աշխ., էջ 442-443:

համակարգի ընդլայնման փորձ ամերիկյան կիսագնդում, որը կարող էր վտանգել «մեր խաղաղությանն ու անվտանգությանը»: ԱՄՆ-ը չի միջամտելու գոյություն ունեցող գաղութների կարգավիճակին, սակայն այն կառավարությունների հանդեպ, որոնք հռչակել են իրենց անկախությունը, ու որոնք ճանաչվել են ԱՄՆ-ի կողմից, որևէ միջամտություն և հսկողություն եվրոպական տերությունների կողմից չի հանդուրժվելու և համարվելու է ոչ բարեկամական քայլ ԱՄՆ-ի նկատմամբ:[1]

Ուղերձում բառացիորեն ասվում էր հետևյալը. «...Նրանց կողմից յուրաքանչյուր փորձ՝ ընդլայնելու իրենց համակարգն այս կիսագնդի որևէ հատվածի նկատմամբ, մենք կհամարենք որպես վտանգ մեր խաղաղության և անվտանգության հանդեպ: Մենք չենք միջամտել և չենք էլ պատրաստվում միջամտել եվրոպական տերության ներկայիս որևէ գաղութի կամ կախյալ տարածքների գործերին: Սակայն այն կառավարությունների առնչությամբ, որոնք հայտարարել են իրենց անկախությունն ու պահպանում են այն, և որոնց անկախությունը մենք ճանաչել ենք մեծ հարգանքով և արդար սկզբունքների հիման վրա, մենք որևէ եվրոպական տերության միջամտություն իրենց ճնշելու կամ իրենց ճակատագիրը հսկելու նպատակով չենք ուզում տեսնել, և ամեն պարագայում կդիտարկենք այն որպես Միացյալ Նահանգների նկատմամբ ոչ բարեկամական դիրքորոշման արտահայտություն...»:[2]

Վարդապետությունն ուներ երեք էական դրույթ: Առաջին դրույթը վերաբերում էր Ռուսաստանի կողմից Օրեգոնի հանդեպ հնչող պահանջներին: Ուղերձում հայտարարվում էր, որ ամերիկյան մայրցամաքի տարածքները չեն կարող հանդիսանալ որևէ եվրոպական տերության ապագա գաղութացման առարկա: Երկրորդ դրույթը վերաբերում էր իսպանա-ամերիկյան պետություններին. որևէ եվրոպական տերության կողմից ճնշում գործադրելու կամ հսկողություն սահմանելու փորձն այդ պետությունների նկատմամբ դիտարկվելու է որպես «Միացյալ Նահանգների նկատմամբ ոչ բարեկամական դիրքորոշման արտահայտություն»: Երրորդ դրույթը վերաբերում էր հեղափոխական շարժումների դեմ ուղղված եվրոպական դաշինքի համակարգի ընդլայնմանը:[3]

Մոնրոյի վարդապետության հիմնական գաղափարը հետևյալն էր. Ամերիկայի մայրցամաքում ԱՄՆ-ն իրեն իրավունք էր վերապահում միջամտելու ամեն պարագայում, նույնիսկ եթե իր հանդեպ ագրեսիա տեղի չէր ունեցել, իսկ Եվրոպայում ԱՄՆ-ը միջամտելու էր միայն այն դեպքում, երբ դա պահանջեր իր շահը:

[1] Davis, Cushman Kellogg, նշվ. աշխ., էջ 267-268:
[2] Foster, John W., նշվ. աշխ., էջ 444-445:
[3] Hart, Albert Bushnell, նշվ. աշխ., էջ 214-215:

Հայտարարության ազդեցությունը զգացվեց անմիջապես: Ֆրանսիայի, Իսպանիայի և Սրբազան դաշինքի ծրագիրը, փաստորեն, տապալվեց: ԱՄՆ-ի միջոցով Մեծ Բրիտանիան «մահացու վիրավորանք» հասցրեց Դաշինքին և վերականգնեց «եվրոպական ուժերի հավասարակշռությունը»: Վարդապետությունն արժանացավ «ընդհանուր հասկացողության և հարգանքի» Եվրոպայում:[1] Թեև Մեծ Բրիտանիան ստիպված եղավ ճանաչել, սակայն երբեք էլ չհարգեց Մոնրոյի վարդապետությունը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ անխոհեմ կլիներ այն խախտել:[2] Անձամբ Կաննինգը թեև վիրավորվեց ԱՄՆ-ի միակողմանի քայլից, սակայն ստիպված եղավ ողջունել Լատինական Ամերիկայի նկատմամբ նման քաղաքականությունը: Այդ ժամանակաշրջանում ԱՄՆ-ն այնքան ուժեղ չէր և դժվար թե կարողանար դիմադրել հնարավոր եվրոպական դաշինքի ռազմական գործողությանը, սակայն Լատինական Ամերիկայում եվրոպական տերությունների միջամտությունը դեմ կլիներ Բրիտանիայի սեփական շահերին, ինչը ստիպում էր բրիտանական կառավարությանը, նույնիսկ առանց իրավական ձևակերպման, օգտագործել իր հզոր նավատորմի գործոնը՝ պաշտպանելու Միացյալ Նահանգների շահերը: Տասնամյակներ շարունակ բրիտանական նավատորմը, փաստորեն, հանդիսացավ Մոնրոյի վարդապետության իրական պաշտպանը:[3]

1824 թ. իր տարեկան ուղերձում Մոնրոն կրկին հայտարարեց. «Եվրոպական կառավարությունները հնարավորություն չունեն միջամտելու նրանց (անկախ ամերիկյան պետությունների - Ա. Կ.) գործերին՝ ...առանց մեզ դիպչելու»: Սա հստակորեն նշանակում էր, որ այսուհետ Ամերիկան ամերիկացիների համար է, քանի որ հակառակ պարագայում Միացյալ Նահանգների «խաղաղությունն ու անվտանգությունը» վտանգվելու էին: Թեև Մոնրոն կարող էր ներկայացնել իր հռչակագիրը Եվրոպայի տերություններին դիվանագիտական ճանապարհով՝ պետքարտուղարության և եվրոպական մայրաքաղաքներում ամերիկյան դիվանագիտական ներկայացուցչությունների միջոցով, սակայն նա խելացիորեն որոշեց դա անել Կոնգրեսին ներկայացվող տարեկան ուղերձի միջոցով, ինչը նշանակում էր, որ ԱՄՆ-ի նոր քաղաքականությունն ուղղված էր ոչ միայն Սրբազան դաշինքին, այլև ողջ աշխարհին:[4]

Մոնրոյի վարդապետության համաձայն՝ Միացյալ Նահանգների քաղաքականությունը (որը վերաբերում էր տարածքներին, պատերազմներին, դաշինքներին և ազդեցության ոլորտներին), պետք է դուրս չգար արևմտյան

[1] Davis, Cushman Kellogg, նշվ. աշխ., էջ 268-269:
[2] Hart, Albert Bushnell, նշվ. աշխ., էջ 273:
[3] Rich, Norman, նշվ. աշխ., էջ 41-42:
[4] Foster, John W., նշվ. աշխ., էջ 447:

կիսագնդից, և, դրան ի պատասխան, ոչ ամերիկյան տերությունները պետք է հեռու պահեին իրենց Ամերիկայի մայրցամաքի քաղաքական խնդիրներից: Միաժամանակ ոչ ամերիկյան տերությունները կարող էին պահպանել իրենց գաղութները արևմտյան կիսագնդում, սակայն պետք է հրաժարվեին նոր գաղութների ձեռքբերումից և եղածների ընդլայնումից: Ընդ որում՝ ԱՄՆ-ն իր նոր քաղաքականությունը սկսեց իրագործել միայնակ, առանց որևէ եվրոպական տերության կամ լատինամերիկյան պետության աջակցության:

Եվրոպայի կողմից ընդդիմություն այդպես էլ չեղավ, քանի որ սկսած 1815 թ. Վաթերլոոյի ճակատամարտից մինչև 1914 թ. Գերմանիայի կողմից Բելգիայի գրավումը, եվրոպական տերությունները գտնվում էին ուժերի հավասարակշռության շրջանում, երբ որևէ պետություն կամ պետությունների խմբավորում անկարող էր այն խախտել: Նրանք զբաղված էին նաև արդյունաբերական հեղափոխությունների կողմից ստեղծած ներքին տնտեսական խնդիրներով: Փաստորեն՝ ամերիկյան կոնտինենտալիզմի տարիները հիմնականում համընկան աշխարհում տիրող ժամանակավոր խաղաղության շրջանի հետ:[1]

Մոնրոյի վարդապետությունն ուներ հետևյալ դրական կողմերը.

1) որևէ եվրոպական տերություն կամ տերությունների դաշինք իրավունք չուներ միջամտելու ամերիկյան կիսագնդի որևէ տարածքի գործերին՝ ուժի կիրառման միջոցով ազգերի կողմից ընտրված կառավարություն փոխելու կամ հսկողություն սահմանելու այդ ժողովուրդների ազատ կամքի նկատմամբ.

2) որևէ պետություն կամ պետությունների դաշինք չէր կարող ամերիկյան կիսագնդում հսկողություն սահմանել նոր տարածքների կամ գաղութների նկատմամբ.

3) այն գաղութները կամ տարածքները, որոնք գտնվում էին եվրոպական տերությունների հսկողության ներքո, չէին կարող ընդլայնվել կամ փոխանցվել այլ եվրոպական տերությանը: ԱՄՆ-ը չէր ցանկանում միջամտել գոյություն ունեցող կարգավիճակին, սակայն ցանկանում էր տեսնել Ամերիկան ամբողջությամբ ամերիկյան.

4) որևէ միջօվկիանոսյան ջրանցք Կենտրոնական Ամերիկայում պետք է ազատ լիներ եվրոպական տերությունների հսկողությունից:[2]

Միևնույն ժամանակ Մոնրոյի վարդապետությունն ուներ նաև իր թերի կողմերը.

[1] Carleton, William G., նշվ. աշխ., էջ 18:
[2] Foster, John W., նշվ. աշխ., էջ 475-476:

1) ԱՄՆ-ն չէր դիտարկում մշտական դաշինք որևէ ամերիկյան պետության հետ՝ քաղաքականությունը մշակելով միմիայն իր խաղաղության և անվտանգության տեսանկյունից, թեև ողջունում էր համագործակցությունն ամերիկյան պետությունների հետ.

2) ԱՄՆ-ը թեև նախընտրում էր, որ ամերիկյան պետություններն ընդունեին կառավարման հանրապետական համակարգ, սակայն ճանաչում էր կիսագնդի բոլոր երկրների ժողովուրդների իրավունքը՝ ինքնուրույն ձևավորելու իրենց կառավարությունը.

3) ԱՄՆ-ը չէր բացառում եվրոպական տերությունների իրավունքը՝ իրենց պահանջները ամերիկյան պետություններին պարտադրելու նպատակով, միայն եթե նրանք չեն խախտում վերը նշված շրջանակները.

4) ԱՄՆ-ը մտադրված չէր պրոտեկտորատ հաստատել որևէ ամերիկյան ազգի նկատմամբ՝ ցանկանալով վերահսկել վերջինիս հարաբերությունները այլ պետությունների հետ և միաժամանակ պատասխանատվություն չկրելով վերջինիս գործողությունների համար: Դոկտրինը չուներ նաև որևէ պարտավորեցնող նշանակություն, քանի որ միջազգային իրավունքի ուժ չուներ և երբևիցե չէր ընդունվել կամ հռչակվել Կոնգրեսի կողմից: Միևնույն ժամանակ դոկտրինը չէր նախատեսում Կոնգրեսի հսկողությունը գործադիր իշխանության նկատմամբ:[1]

Մոնրոյի դոկտրինը դարձավ ԱՄՆ-ի քաղաքականության ամենաերկարատև և հիմնարար վարդապետությունը: Արդյունքում Մեծ Բրիտանիան, փաստորեն, ճանաչեց ԱՄՆ-ի գերիշխանությունն ամերիկյան մայրցամաքում: 1846 թ. Մեծ Բրիտանիան և ԱՄՆ-ը փոխզիջման եկան Օրեգոնի տարածքի և ԱՄՆ-Կանադա սահմանագծի վերաբերյալ: ԱՄՆ-ն արդեն այնպիսի հեղինակություն և հզորություն էր ձեռք բերել, որ նույնիսկ 1861-1865 թթ. քաղաքացիական պատերազմի ընթացքում ոչ Բրիտանիան, ոչ էլ մյուս եվրոպական տերությունները չհամարձակվեցին միջամտել պետության ներքին գործերին:[2]

Ժամանակի ընթացքում մյուս պետությունները նույնպես զիջումների էին գնում: Նապոլեոնը վաճառել էր Լուիզիանայի տարածքն ԱՄՆ-ին դեռևս 1803 թ., իսկ թուլացած Իսպանիան զիջեց Ֆլորիդան 1819 թ.: Եվրոպայից ժամանող ներգաղթյալների մեծ հոսքի ճնշման տակ Մեքսիկան ստիպված եղավ զիջել Տեխասն ԱՄՆ-ին 1845 թ., իսկ 1848 թ., երբ ամերիկյան բանակը գրավեց Մեխիկոն, Մեքսիկան շատ ավելի մեծ տարածքներ զիջեց ԱՄՆ-ին: 1867 թ. Ռուսաստանը վաճառեց Ալյասկան, իսկ 1898 թ. Իս-

[1] Նույն տեղում, էջ 476-477:
[2] Hunt, Michael H., նշվ. աշխ., էջ 2-3:

պանիան. հանձնեց Միացյալ Նահանգներին Կուբան, Պուերտո Ռիկոն և Ֆիլիպինները:[1]

3. ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության սկզբունքները 19-րդ դարի երկրորդ կեսին

1845 թ. ԱՄՆ-ի նախագահ Ջեյմս Փոլկը նոր լրացումներ կատարեց արտաքին քաղաքականության մեջ: Վերահաստատելով Կոնգրեսին ուղղված իր ուղերձում Մոնրոյի վարդապետության սկզբունքների կիրառման անհրաժեշտությունը՝ նա ավելացրեց. «Առանց մեր թույլտվության Հյուսիսային Ամերիկայի մայրցամաքի որևէ հատվածում չի կարող հիմնվել կամ հաստատվել ապագա եվրոպական գաղութ կամ դոմինիոն»:

Փոլկի նախագահության ընթացքում ԱՄՆ-ը, պատերազմելով Մեքսիկայի հետ, գրավեց Նյու Մեքսիկոն և Կալիֆոռնիան, իսկ Մեծ Բրիտանիան զիջեց նրան Օրեգոնը: Ցանկություն հայտնելով գրավել նաև Յուկատանը՝ 1848 թ. Փոլկը հայտարարեց, որ դրանով ԱՄՆ-ը կանխում է այդ տարածքի եվրոպական տերության գաղութ և Եվրոպայի «քաղաքական համակարգի» մաս դառնալու վտանգը:[2]

Ընդլայնելով իր տարածքները մայրցամաքում՝ ամերիկացիները կիրառում էին «ռեալիզմի» քաղաքականություն՝ օգտագործելով որպես հինգերորդ շարասյուն Եվրոպայից ժամանող նորաբնակներին Ֆլորիդայում, Տեխասում, Օրեգոնում և Կալիֆոռնիայում: Սակայն, երբ ամերիկացիները սկսեցին զբաղվել միջազգային քաղաքականությամբ արևմտյան կիսագնդից դուրս, նրանք սկսեցին օգտագործել «իդեալիստական» և «գաղափարախոսական» տերմիններ և արտահայտություններ: Նույնիսկ ԱՄՆ-ի նախագահ Մոնրոն, խախտելով իր իսկ «չմիջամտելու» սկզբունքը, դեռևս Հունական հեղափոխության ժամանակ զգուշացնում էր պահպանողական եվրոպական տերություններին, որ Ամերիկան դեմ է Հունաստանում միապետական ռեժիմի վերականգնմանը, թեև ավելի իրատեսական քաղաքականության կողմնակից իր պետքարտուղարը դեմ արտահայտվեց նման մոտեցմանը: Այդուհանդերձ, 19-րդ դարի ընթացքում ամերիկացիները ողջունում էին հանրապետական և ազատական հեղափոխությունները, քանի որ դրանք մոտ էին ամերիկյան ավանդույթներին:[3]

Քաղաքացիական պատերազմի ժամանակ «ամերիկյան կոնտինենտալիզմի» սկզբունքը մի պահ վտանգվեց: Մինչ այդ արդեն հայտնի էր, որ

[1] Նույն տեղում, էջ 3:
[2] Hart, Albert Bushnell, նշվ. աշխ., էջ 218-219:
[3] Carleton, William G., նշվ. աշխ., էջ 20:

ուժի հավասարակշռության սկզբունքը չի գործում Ամերիկայի մայրցամաքում, քանզի ո՛չ Կանադան, ո՛չ էլ Մեքսիկան չէին կարող մրցել Միացյալ Նահանգների հետ: Սակայն Հարավային կոնֆեդերացիայի համար հնարավորություն ստեղծվեց հաջողության հասնել Անգլիայի և Ֆրանսիայի օգնությամբ: Նապոլեոն 3-ը[1] փորձեց օգտվել ընձեռված հնարավորությունից և մեքսիկական գահին բարձրացրեց Մաքսիմիլիանին[2]: Այս անգամ կրկին կիրառվեց Մոնրոյի վարդապետության սկզբունքը, սակայն հետաքրքիր է, որ ճգնաժամի ընթացքում պետքարտուղար Ուիլյամ Սյուարդը[3] երբևիցե չօգտագործեց «Մոնրոյի դոկտրին», «գաղութացում», «քաղաքական համակարգ» բառակապակցությունները: Նա հայտարարեց, որ Միացյալ Նահանգների քաղաքականության համաձայն, «Մեքսիկայի բախտը պետք է թողնել իր սեփական ժողովրդի որոշմանը»: Եվ թեև 1867 թ. ԱՄՆ-ը սպառնաց պատերազմով, եթե Ֆրանսիան դուրս չբերեր իր զորքը Մեքսիկայից, Սյուարդն իր քաղաքականությունն այդ հարցում հիմնեց այն թեզի վրա, որ ամերիկյան ժողովուրդներն իրենք պետք է ձևավորեն իրենց կառավարման ձևը:[4]

Սկսած 1867 թ.՝ ԱՄՆ-ը կիրառում է զավթողական քաղաքականություն Ամերիկայի տարածքների նկատմամբ, ինչպես որ դա տեղի ունեցավ Վեստ Ինդիայի պարագայում 1867-1869 թթ.: Սակայն ամերիկյան ժողովրդի կողմից հետաքրքրություն հանդես չբերելու հետևանքով այս ծրագրի իրականացման ժամանակ ԱՄՆ-ը կորցրեց Սենտ Թոմասն[5] ու Սան Դոմինգոն,[6] թեև երկու կղզիները հեշտությամբ կարող էին անցնել ԱՄՆ-ին: Այդ ընթացքում ԱՄՆ-ը ձեռք բերեց Ալյասկան, ինչի հետևանքով ներքաշվեց հյուսիսխաղաղօվկիանոսյան խնդիրների, այդ թվում՝ փոկերի (ծովաշների) որսի համար Ռուսաստանի, Ճապոնիայի, Մեծ Բրիտանիայի միջև ծագած վեճերի մեջ, որոնք լուծում ստացան 1895 թ. Փարիզյան հանձնաժողովի աշխատանքի արդյունքում:

1868-1878 թթ. Տասը տարվա կամ Կուբայի պատերազմի արդյունքում, որն ավարտվեց Իսպանիայի պարտությամբ, ԱՄՆ-ը հաստատեց իր համաշխարհային տերություն հանդիսանալու դիրքը, մասնավորապես, երբ

[1] Շարլ Լուի Նապոլեոն Բոնապարտ, Նապոլեոն III (1808-1873) – Ֆրանսիական Հանրապետության առաջին նախագահ (1848-1852), Ֆրանսիայի կայսր (1852-1870):
[2] Ֆերդինանդ Մաքսիմիլիան Ջոզեֆ ֆոն Հաբսբուրգ, Մաքսիմիլիան I (1832-1867) - Ավստրո-Հունգարիայի կայսր Ֆրանց Ջոզեֆի կրտսեր եղբայրը, Մեքսիկայի կայսր (1864-1867):
[3] Ուիլյամ Սյուարդ (1801-1872) - ԱՄՆ-ի պետական գործիչ, Հանրապետական կուսակցության անդամ, Նյու Յորքի նահանգապետ (1839-1842), սենատոր (1849-1861), պետքարտուղար (1861-1869):
[4] Hart, Albert Bushnell, նշվ. աշխ., էջ 212-220:
[5] 1917 թ. ԱՄՆ-ի կառավարությունը Դանիայից գնեց Սենտ Թոմաս կղզին 25 միլիոն դոլարով:
[6] Հետագայում կղզին երկու անգամ (1916-1924, 1965-1966) գրավվել է ԱՄՆ-ի կողմից (ներկայումս՝ Դոմինիկյան Հանրապետություն):

1873 թ. նախագահ Ուլիս Գրանտն[1] առաջարկեց եվրոպական տերություններին հետ համատեղ իրականացնել ռազմական միջամտություն: 1877-1881 թթ. Չիլիի և Պերուի միջև ծագած պատերազմի ժամանակ ԱՄՆ-ը միջնորդեց խաղաղության պայմանների հաստատմանը, թեև հետագայում հրաժարվեց այդ դերից՝ Լատինական Ամերիկայի նկատմամբ ոստիկանական ազդեցությունից խուսափելու նպատակով: 1890 թ. բարդություններ ծագեցին Չիլիի հետ հարաբերություններում: Լատինական Ամերիկայի պետություններն ընդհանուր առմամբ չէին կարող դժգոհել Միացյալ Նահանգների քաղաքականությունից, թեև նրանցից յուրաքանչյուրը կցանկանար, որ ԱՄՆ-ը կողմ զբաղեցներ և պատժեր իր ախոյաններին:[2]

Կարիբյան ավազանի նկատմամբ իր հսկողությունն ապահովելուց հետո ԱՄՆ-ը սկսեց տարածել իր ազդեցությունը Խաղաղ օվկիանոսի կղզիների վրա՝ դեպի Ճապոնիա և Կորեա տանող առևտրական ճանապարհների անվտանգությունն ապահովելու նպատակով: Այդ ճանապարհին կարևոր էին 1867 թ. Միդվեյ կղզու, ինչպես նաև Հավայան կղզիների, Գուամի, Վեյկ կղզու, Սամոայի և Ֆիլիպինների մի մասի գրավումը 19-րդ դարի վերջին: Այս ձեռքբերումներն ամրապնդեցին նաև ԱՄՆ-ի քաղաքական և տնտեսական դիրքերը Չինաստանում:

Մոնրոյի վարդապետությունը չէր նշանակում տնտեսական մեկուսացում. Միացյալ Նահանգները ցանկանում էր առևտուր անել աշխարհի տարբեր երկրների հետ: Նրանց հետ բանակցվում և ստորագրվում էին առևտրական պայմանագրեր: Սկսած 1844 թ., օգտվելով Բրիտանիայի կողմից Օպիումի պատերազմի արդյունքում ստեղծված հնարավորությունից, ԱՄՆ-ը Չինաստանի հետ սկսեց բանակցել առևտրական իրավունքների հարցը, իսկ 1853 թ., ուժ կիրառելով, ամերիկացիները բացեցին իրենց առևտրի համար Ճապոնիան:[3]

Արևելյան Ասիայում իր քաղաքականությունն իրականացնելիս ձևավորվեց «բաց դռների» սկզբունքը: Այն առաջին անգամ կիրառվեց 1899 թ., երբ նախագահ Ուիլյամ Մակ Քինլիի[4] պետքարտուղար Ջոն Հեյը[5] ամերիկյան առևտրի համար պահանջեց հավասար պայմաններ Չինաստանում: ԱՄՆ-ը փորձում էր «բաց դռների» քաղաքականության միջոցով չեզոքացնել եվրոպական իմպերիալիստական նկրտումները Չինաստանի նկատ-

[1] Ուլիս Գրանտ (1822-1885) – ԱՄՆ-ի պետական և ռազմական գործիչ, բանակի հրամանատար (1864-1869), 18-րդ նախագահ՝ Հանրապետական կուսակցությունից (1869-1877):
[2] Նույն տեղում, էջ 45-46:
[3] Carleton, William G., նշվ. աշխ., էջ 19:
[4] Ուիլյամ Մակ Քինլի (1843-1901) - ԱՄՆ-ի պետական գործիչ, Օհայո նահանգի նահանգապետ (1892-1896), 25-րդ նախագահ՝ Հանրապետական կուսակցությունից (1897-1901):
[5] Ջոն Հեյ (1838-1905) - ԱՄՆ-ի պետական գործիչ, դիվանագետ, լրագրող, պետքարտուղարի տեղակալ (1879-1881), պետքարտուղար (1898-1905):

մամբ: Մեկ տարի անց, երբ Հյուսիսային Չինաստանում ճգնաժամ ծագեց, Հեյը հայտարարեց, որ ԱՄՆ-ը պատրաստ է պաշտպանել Չինաստանի անկախությունը: «Բաց դռների» քաղաքականությունն ուժեղացնում էր ԱՄՆ-ի քաղաքական և մշակութային ազդեցությունը, ինչպես նաև ապահովում Չինաստանի տնտեսական զարգացման հնարավորությունը: «Բաց դռների» քաղաքականությունը նորություն չէր ԱՄՆ-ի համար. դեռևս 1850-ական թթ. հավասար վերաբերմունքի սկզբունքը կիրառվեց Ճապոնիայում և Կորեայում:[1]

Սակայն այն սկզբունքները, որոնք ԱՄՆ-ն օգտագործում էր Լատինական Ամերիկայում և Արևելյան Ասիայում, դեռևս անհնարին էր կիրառել Եվրոպայի նկատմամբ: «Բաց դռների» քաղաքականությունն այստեղ որևէ ազդեցություն ունենալ չէր կարող, քանի որ եվրոպական տերությունները բավականին հզոր էին, որպեսզի թույլ տային, որ Միացյալ Նահանգները թելադրեր իր առևտրի պայմաններն ինչպես մետրոպոլիային, այնպես էլ նրանց գաղութներին: Եվրոպական ռազմական հզորությունը, ձևավորված քաղաքական ուղենիշն ու «մշակութային ինքնավստահությունն» արգելափակում էին ամերիկյան գաղափարների տարածումը եվրոպական մայրցամաքում: Ուստի Եվրոպան հնարավոր վտանգ էր ներկայացնում ամերիկյան անվտանգությանն ու ազգային ինքնությանը: Եվրոպային վերաբերող երկու սկզբունքները միաժամանակ ղեկավարվում էին հակասական մղումներով՝ մի կողմից անվտանգ քաղաքական և ռազմական տարածության վրա պահելով Հին աշխարհը, իսկ մյուս կողմից՝ մուտքի հնարավորություն թողնելով իր համար, քանի որ եվրոպական մայրցամաքը կարևոր շուկա էր ամերիկյան ապրանքի և ներդրումների աղբյուր ԱՄՆ-ի տնտեսական զարգացման համար:[2]

«Ծովերի ազատության» սկզբունքն արտահայտում էր Եվրոպայի կարևորությունն ամերիկյան տնտեսական կյանքի համար: Այն ապահովում էր ԱՄՆ-ի անխափան մուտքը դեպի եվրոպական շուկաները՝ եվրոպական տերությունների միջև տեղի ունեցող բախումների ընթացքում: Որպես չեզոք պետություն՝ ԱՄՆ-ն օգտվում էր մինիմալ սահմանափակումների և պատասխանատվության իրավունքից՝ ծովով անվտանգ բեռներ տեղափոխելու համար: Այն ապահովում էր ամերիկյան առևտրական հարաբերությունների զարգացումն ու մուտքը դեպի այնպիսի շուկաներ, որոնք սովորաբար փակ էին ԱՄՆ-ի համար խաղաղ պայմաններում: Դա նաև հնարավորություն ստեղծեց ԱՄՆ-ին հզորացնելու իր ռազմածովային ուժը՝ ամերիկ-

[1] Hunt, Michael H., նշվ. աշխ., էջ 7:
[2] Նույն տեղում, էջ 7-8:

յան առևտրական շահերը պաշտպանելու և այլ պետությունների առևտրի նկատմամբ հսկողություն սահմանելու նպատակով:[1]

Այսպիսով՝ 1890-ական թթ. Միացյալ Նահանգները հաստատեց իր տիրապետությունն ամերիկյան կիսագնդում և համաշխարհային կայսրություն դառնալու ճանապարհին մրցակցության մեջ մտավ մյուս տերությունների հետ: Նախագահ Ուիլյամ Մակ Քինլին պահանջեց իր երկրի համար գաղութներ ունենալու իրավունք և «ճնշված ժողովուրդներին» օգնելու պատասխանատվություն՝ աշխարհում իր հզորությունն ու ազդեցությունը տարածելու նպատակով: Ինչպես նշում էին որոշ հեղինակներ, «շահելու էին ոչ միայն ամերիկացիներն, այլև ողջ մարդկությունը»:[2]

ԱՄՆ-ն առաջին անգամ դուրս եկավ «կոնտինենտալիզմից» 1889 թ., երբ Բրիտանիայի և Գերմանիայի հետ եռակողմ պրոտեկտորատ հաստատեց Սամոա կղզիների նկատմամբ: 1893 թ. ամերիկյան հինգերորդ շարասյունը հեղափոխություն իրականացրեց Հավայան կղզիներում և բարձրացրեց այնտեղ ԱՄՆ-ի դրոշը: Հավայան նոր կառավարությունը խնդրեց ԱՄՆ-ին անեքսիայի ենթարկել կղզիները, սակայն այդ անգամ մեկուսացման քաղաքականության կողմնակիցները թույլ չտվեցին նախագահ Գրովեր Քլիվլենդին[3] բարձրացնել ամերիկյան դրոշը: Սակայն 1898 թ., երբ Իսպանիայի հետ պատերազմի ընթացքում ծովակալ Ջորջ Դյուին[4] գրավեց Մանիլան, Հավայան կղզիներն անեքսիայի ենթարկվեցին Կոնգրեսի համատեղ որոշմամբ:[5]

Երբ Միացյալ Նահանգների և Մեծ Բրիտանիայի միջև հակասություններ ծագեցին ֆրանսիական Պանամայի նեղուցի չեզոքությունը եվրոպական երաշխավորությամբ ապահովելու նկատմամբ, 1881 թ. պետքարտուղար Բլեյնը հայտարարեց, որ այս հարցում «եվրոպական ագրեսիան ստացել է Միացյալ Նահանգների դեմ ուղղված դաշինքի տեսք»: Հանդես գալով ամերիկյան պետությունների ընդհանուր շահերի պաշտպանության տեսանկյունից՝ Բլեյնի քաղաքականությունը հիմք հանդիսացավ 1889 թ. Համամերիկյան համաժողովի գումարման համար, որի ժամանակ փորձ կատարվեց ստեղծելու Ամերիկյան «համերգ»՝ ամերիկյան պետությունների համագործակցության հարթակ:[6]

[1] Նույն տեղում, էջ 8:
[2] Նույն տեղում, էջ 11:
[3] Գրովեր Քլիվլենդ (1837-1908) - ԱՄՆ-ի պետական գործիչ, Նյու Յորք նահանգի նահանգապետ (1883-1885), 22-րդ (1885-1889) և 24-րդ նախագահ՝ Դեմոկրատական կուսակցությունից (1893-1897):
[4] Ջորջ Դյուի (1837-1917) - ԱՄՆ-ի ռազմական գործիչ, ծովակալ:
[5] Carleton, William G., նշվ. աշխ., էջ 21:
[6] Hart, Albert Bushnell, նշվ. աշխ., էջ 221:

ԱՄՆ-ը վերջնականապես հրաժարվեց «կոնտինենտալիզմի» քաղաքականությունից, երբ 1898 թ. իսպանա-ամերիկյան պատերազմը, որը սկսվեց որպես խաչակիր արշավանք կուբացիներին ազատելու նպատակով, ավարտվեց Ֆիլիպինների գրավումով: Վերջինս գտնվում էր Ամերիկայից 7 հազար մղոն հեռավորության վրա: Դա հնարավորություն էր ստեղծում գաղութ ունենալու Ասիայում, տեղացիներին դարձնելու քրիստոնյա և պաշտպանելու կղզիները Գերմանիայի նկրտումներից:[1]

Այդ ժամանակաշրջանում ամերիկացի հայտնի գործիչներ, ինչպիսիք էին Գրովեր Քլիվլենդը, Բենջամին Հարրիսոնը,[2] Էնդրյու Կարնեգին,[3] Ուիլյամ Ջեյմսը,[4] Մարկ Տվեյնը,[5] Կարլ Շուրցը,[6] Ուիլյամ Ջեննինգս Բրայանը,[7] սենատորներ Ջորջ Ֆրիսբի Հոարը[8] և Ջորջ Գրեհամ Վեստը,[9] հանդես էին գալիս կոնտինենտալիզմից հեռանալու դեմ: Գրեթե բոլոր փաստարկներն ամերիկյան մեկուսացման օգտին արվել էին այդ ժամանակ. ենթակա ժողովուրդների ղեկավարների կոռուպցիոն ազդեցությունը, մեծ նավատորմ և բանակ պահելու դժվարությունը, ամերիկյան քաղաքականության և հասարակայնության ռազմականացման, արտասահմանյան դաշինքների անդամ դառնալու և ասիական ու եվրոպական պատերազմների մեջ ներքաշվելու վտանգը:[10]

Սակայն 19-րդ դարի ավարտին ԱՄՆ-ը հասել էր իր կոնտինենտալ լիմիտներին և շարունակում էր ընդլայնել իր քաղաքականության շրջանակ-

[1] Carleton, William G., նշվ. աշխ., p. 20:
[2] Բենջամին Հարրիսոն (1833-1901) - ԱՄՆ-ի պետական գործիչ, սենատոր Ինդիանայից (1881-1887), 23-րդ նախագահ՝ Հանրապետական կուսակցությունից (1889-1993):
[3] Էնդրյու Կարնեգի (1835-1919) – ԱՄՆ-ի խոշոր գործարար, պողպատի արդյունաբերող, միլիոնատեր, մեծ բարերար, որը եղել է մեծապես նպաստել է մշակույթի, կրթության և գիտության զարգացմանը, աշխարհում խաղաղության հաստատման կողմնակից, կառուցել է Կարնեգի Հոլը (Նյու Յորք), հիմնել է Կարնեգի կորպորացիան (Նյու Յորք), Միջազգային խաղաղության Կարնեգի հիմնադրամը (Վաշինգտոն),Գիտության հաստատությունը (Վաշինգտոն), Կարնեգի Մելլոն համալսարանը (Պիտսբուրգ), Կարնեգի թանգարանները (Պիտսբուրգ) և այլն:
[4] Ուիլյամ Ջեյմս (1842-1910) - ԱՄՆ-ի գիտնական, փիլիսոփա և հոգեբան, պրագմատիզմի դպրոցի խոշոր ներկայացուցիչ և ֆունկցիոնալ հոգեբանության հիմնադիր:
[5] Մարկ Տվեյն (Սեմյուել Լենգհորն Կլեմենս) (1835-1910) - ամերիկացի գրող, լրագրող և հասարակական գործիչ, «Թոմ Սոյերի արկածները», «Հեքլբերրի Ֆիննի արկածները», «Արքայազնն ու աղքատը» ստեղծագործությունների հեղինակ:
[6] Կարլ Շուրց (1829-1906) – գերմանացի հեղափոխական, ԱՄՆ-ի պետական գործիչ, բանակի գեներալ, դիվանագետ, նախարար Իսպանիայում (1861), սենատոր Միսսուրիից (1869-1875), ներքին գործերի քարտուղար (1877-1881):
[7] Ուիլյամ Ջեննինգս Բրայան (1860-1925) - ԱՄՆ-ի քաղաքական և պետական գործիչ, Դեմոկրատական կուսակցության ղեկավարներից, պետքարտուղար (1913-1915):
[8] Ջորջ Ֆրիսբի Հոր (1826-1904) - ԱՄՆ-ի քաղաքական գործիչ, Հանրապետական կուսակցության անդամ, սենատոր Մասաչուսետսից (1877-1904):
[9] Ջորջ Գրեհամ Վեստ (1830-1904) - ԱՄՆ-ի քաղաքական գործիչ, Դեմոկրատական կուսակցության անդամ, սենատոր Միսսուրիից (1879-1903):
[10] Նույն տեղում, էջ 22:

ները: Ամերիկյան քաղաքականության հիմնական նպատակը ոչ թե շուկաների կամ հումքի ձեռքբերումն էր, ինչպես որ դա անհրաժեշտություն էր դարձել Բրիտանիայի և մյուս եվրոպական տերությունների համար, այլ հիմնականում քարածխի լիցքավորման կայաններ և ծովային հենակետեր ունենալու հանգամանքը: Միացյալ Նահանգներում կարծիք էր ձևավորվել, որ ժամանակն է, որ համաշխարհային հեղինակություն ստանալու համար ԱՄՆ-ը նույնպես ունենա գաղութներ աշխարհի տարբեր անկյուններում:

Պետք է նշել, որ 19-րդ դարի ընթացքում Միացյալ Նահանգների դիվանագիտական և հյուպատոսական ծառայության մեջ հիմնականում աշխատում էին ոչ մասնագետներ: Արտաքին ծառայության բոլոր մակարդակներում, բացի մի քանի բացառություններից, քաղաքական նշանակումներ էին տեղի ունենում ընդհուպ մինչև 20-րդ դարի առաջին տարիները, երբ բոլոր արդյունաբերական պետություններն ունեին դիվանագիտական և հյուպատոսական կարիերային համակարգեր: Այդ շրջանի միջին ամերիկացիները, որոնք զբաղված էին իրենց երկրի ներսում ստեղծված հնարավորություններով, բացարձակապես հետաքրքրված չէին արտաքին քաղաքականությամբ կամ երկրի արտասահմանյան ներկայացուցչությունների աշխատանքով: Այս վերաբերմունքը գալիս էր ոչ միայն արտաքին քաղաքականության սկզբունքներից, այլև արտաքին խնդիրների նկատմամբ ամերիկացիների ունեցած անտարբերությունից: Սիրողական կամ ոչ պրոֆեսիոնալ դիվանագիտության հիմքում ընկած էին էգալիտարիզմի և ժողովրդավարական իդեալների սկզբունքները, որոնց համաձայն՝ հյուպատոս կամ դիվանագետ կարող էր լինել յուրաքանչյուր ոք: Բացի այդ՝ դիվանագիտական ծառայությունը լավ չէր վարձատրվում, ուստի դիվանագետներ էին նշանակվում մարդիկ, որոնք ունեին ֆինանսական հնարավորություններ:[1]

ԱՄՆ-ի ազգային քաղաքականությունը պտտվում էր հիմնականում ներքին խնդիրների շուրջ, նույնիսկ երկրի արդյունաբերականացումն ու ներգաղթը դիտարկվում էին որպես ներքին խնդիրներ, թեև արտաքին առևտուրը հետզհետե դառնում էր կարևոր հարց երկրի տնտեսության զարգացման համար: Ինչպես նշվեց, 1890-ական թթ. սկզբին տեղի ունեցան երևույթներ, որոնք իրենց ազդեցությունն ունեցան արտաքին քաղաքականության ակտիվացման վրա: Առաջին հերթին դա երկրի տնտեսական զարգացման վրա արտաքին շուկաներ հայտնաբերելու կարևոր հանգամանքն էր: Երկրորդ կարևոր հանգամանքը սոցիալ-դարվինիզմի և անգլո-սաքսոնականության ազդեցությունն էր, որի համաձայն՝ ամերիկացիները պետք է գերազանցեին մյուս ազգերին, մասնավորապես արդյունաբերական պետություններին՝ գաղութային մրցակցության ընթացքում: Եվ երրորդ հանգամանքը ռազմական նավատորմի նշանակությունն էր, արտաքին աշխարհում ծովային հենակետերի ստեղծման անհրաժեշտությունը, որը պետք է նպաստեր ԱՄՆ-ի առևտրական շահերի պաշտպանությանը: Այս հիմնական գործոններն իրենց ազդեցությունն ունեցան երկրի արտաքին քաղաքականության փոփոխության և մասնավորապես ամերիկյան դիվանագիտության զարգացման գործում:

[1] Mattox, Henry E., The Twilight of Amateur Diplomacy. The American Foreign Service and Its Senior Officers in the 1890s, Kent, Ohio and London, England: The Kent State University Press, 1989, pp. 1, 4.

4. Արտաքին քաղաքականության նոր տեսության ձևավորման և բրիտանա-ամերիկյան բարեկամության սկիզբը

Նոր արտաքին քաղաքականության տեսությունը ձևավորում և առաջ էին քաշում ոչ թե առևտրականներն ու արդյունաբերողները, այլ գիտնականները, հրապարակախոսները, քաղաքական և ռազմական գործիչները: Նրանց շարքում էր առաջին հերթին Ալֆրեդ Մահանը,[1] որը 1890 թ. հրատարակեց «Ծովային իշխանության ազդեցությունը պատմության վրա» գիրքը, որը զգալի ազդեցություն ունեցավ ամերիկյան նավաշինության վրա: Մահանը պաշտպանում էր նաև Հավայան և Սամոա կղզիների ամբողջության գաղափարը: ԱՄՆ-ի ռազմական նավատորմի հրամանատարները երկար ժամանակ ստիպում էին, որ Կոնգրեսը կղզիների գրավման որոշում կայացնի, սակայն հաջողության հասան միմիայն 1878 թ., երբ ընդունել տվեցին Պագո Պագո նավահանգիստի ձեռքբերման բանաձևը: Հավայան կղզիները Արևելք գնացող ծովային ճանապարհին կարևոր հենակետ էին ամերիկյան նավերի համար:[2]

Սակայն ամերիկյան նոր քաղաքականությունը հակասություններ էր առաջացնում «մայր և դուստր» պետությունների միջև: 1854 թ. Միացյալ Նահանգներն ու Բրիտանիան պայմանագիր կնքեցին փոխադարձ առևտրի և ձկնորսության իրավունքի մասին: Սակայն կանադացիները բողոքում էին, որ պայմանագիրը ավելի ձեռնտու էր ամերիկյան կողմին: Ստորագրվեց և 1888 թ. Կոնգրես ներկայացվեց նոր պայմանագիր, սակայն վերջինս այն այդպես էլ չվավերացրեց: Ամերիկացիների և կանադացիների միջև վեճ գոյություն ուներ նաև Ալյասկայի ափերի մոտ ձկնորսության իրավունքի հետ

[1] Ալֆրեդ Մահան (1840-1914) - ԱՄՆ-ի ռազմական գործիչ, փոխծովակալ, ռազմագետ և պատմաբան:

[2] Bertram, Marshall. The Birth of Anglo-American Friendship. The Prime Facet of the Venezuelian Boundary Dispute. A Study of the Interraction of Diplomacy and Public Opinion, Lanham, Ney York, London: University Press of America, 1992, pp. 1-2.

կապված, ինչպես նաև սահմանային վեճ Ալյասկայի և Բրիտանական Կոլումբիայի միջև:

Ամերիկյան հեղափոխությունից ի վեր այս բոլոր խնդիրներն ակտիվ էին պահում հակաանգլիական տրամադրություններն ԱՄՆ-ում: Հասարակական կարծիք էր ձևավորվել այն մասին, թե ԱՄՆ-ի ծավալապաշտական քաղաքականության հիմնական թշնամին Բրիտանիան է: 1850 թ. Քլեյտոն-Բալվեր պայմանագրի ստորագրությամբ Բրիտանիային հսկողության իրավունք էր ստանում պարանոցային ջրանցքի նկատմամբ, ինչն ԱՄՆ-ում դիտարկվում էր որպես արգելք ջրանցքի կառուցման համար:[1]

Ժամանակի ընթացքում տեղի ունեցան այլ իրադարձություններ, որոնք էլ ավելի խորացրին հակաբրիտանական տրամադրությունները: Այսպես՝ 1888 թ. նախագահական ընտրությունների քարոզարշավի ժամանակ, երբ Գրովեր Քլիվլենդը պայքարում էր վերընտրվելու համար, Վաշինգտոնում Բրիտանիայի դեսպանորդ-նախարար Լայոնել Սեկվիլ-Վեստը[2] շինծու նամակ ստացավ ոմն Չարլզ Մարչիսոնից, որը, ծնված լինելով Անգլիայում, խորհուրդ էր հարցնում, թե ինչպես է պետք քվեարկել: Դիվանագետը նրան խորհուրդ է տալիս քվեարկել ոչ թե հանրապետական, այլ դեմոկրատ թեկնածուի օգտին, քանի որ դա բխում էր Անգլիայի շահերից:

Բրիտանացի դիվանագետի նամակը հայտնվեց մամուլում և հանրապետականները փորձեցին այն օգտագործել: Քլիվլենդը պահանջեց, որ բրիտանացի դիվանագետը հեռանա ԱՄՆ-ից: Միաժամանակ Ուիլյամ Գլադստոնի[3] ու լիբերալների ձախողումն Իռլանդիայի ինքնավարության հարցում և լորդ Ռոբերտ Սոլսբերիի[4] ու պահպանողականների իշխանության գալն ընդունվեց շատ ամերիկացիների կողմից որպես հակազդեցություն ժողովրդավարության դեմ:

Այսպիսով՝ 1895 թ. ԱՄՆ-ում լայնորեն տարածված թշնամության զգացում կար Մեծ Բրիտանիայի դեմ: Միաժամանակ բրիտանացիները նման հակակրանք ԱՄՆ-ի հանդեպ չունեին: Ընդհակառակը, նրանց վերաբեր-

[1] Նույն տեղում, էջ 2:

[2] **Լայոնել Սեկվիլ-Վեստ** (1827-1908) - բրիտանացի դիվանագետ, դեսպանորդ-նախարար Արգենտինայում (1872-1878), դեսպան Իսպանիայում (1878-1881), դեսպանորդ-նախարար ԱՄՆ-ում (1881-1888):

[3] **Ուիլյամ Գլադստոն** (1809-1898) - բրիտանացի պետական գործիչ, առևտրի նախարար (1843-1845), գաղութների գործերի նախարար (1845-1847), ֆինանսների նախարար (1852-1855, 1859-1866), 1868 թ.-ից՝ Լիբերալ կուսակցության ղեկավար, վարչապետ (1868-1874, 1880-1885, 1886, 1892-1894):

[4] **Ռոբերտ Սոլսբերի** (1830-1903) - բրիտանացի քաղաքական և պետական գործիչ, Հնդկաստանի գործերի նախարար (1866-1867, 1874-1878), արտգործնախարար (1878-1880), 1881 թ.-ից՝ պահպանողականների ղեկավար Լորդերի պալատում, այնուհետև Պահպանողական կուսակցության ղեկավար, վարչապետ (1885-1886, 1886-1892, 1895-1902) և մինչև 1900թ. միաժամանակ արտգործնախարար:

մունքը բարյացակամ էր, շատերը նույնիսկ առաջարկում էին դաշինք կնքել Միացյալ Նահանգների հետ՝ մյուս եվրոպական տերությունների քաղաքականությունը չեզոքացնելու նպատակով: Բրիտանացիների համար ամերիկացիներն օտարերկրացի չէին համարվում: Շատերը նույնիսկ հպարտանում էին ամերիկացիների հաջողություններով համար:[1]

Ինչպես Բրիտանիայում, այնպես էլ ԱՄՆ-ի որոշ շրջանակներում առանձնահատուկ դժգոհություն կար Սոլսբերիի նկատմամբ: Հիմնական պատճառներն էին նրա ձախողումը թուրքերի կողմից ջարդի ենթարկված հայերի պաշտպանությունն ապահովելու հարցում, ինչպես նաև իր համոզվածությունը, որ սուլթանի վրա ճնշում գործադրել չի կարելի:[2]

1890-ական թթ. կեսերից ԱՄՆ-ի կառավարությունը նոր ուժգնությամբ շարունակեց ապահովել ամերիկյան մայրցամաքում իր գերակայության իրավունքը, որի նոր արտահայտությունը դարձավ Բրիտանիայի և Վենեսուելայի միջև սահմանային վեճի հարցը: Խոսքն Էսսեքվիբոյի և Օրինոկո գետերի միջև ընկած տարածքի մասին էր: Վենեսուելան 1811 թ. հռչակել էր Իսպանիայից իր անկախության մասին, սակայն հստակ սահմանազատում Վենեսուելայի և Հոլանդական Գվիանայի միջև այդպես էլ տեղի չէր ունեցել: 1814 թ. վերջինս Մեծ Բրիտանիային էր զիջել Վենեսուելային սահմանակից արևմտյան հատվածը: 1840 թ. Բրիտանիայի արտաքին գործերի նախարար Հենրի Փալմերսթոնը[3] հանձնաժողով կազմեց՝ Վենեսուելայի և Բրիտանական Գվիանայի միջև սահմանը հստակեցնելու նպատակով, սակայն Վենեսուելան չհամաձայնվեց հանձնաժողովի արդյունքների հետ, իսկ ոսկու հանքերի հայտնաբերումը վիճելի տարածքում էլ ավելի սրեց հարաբերությունները երկու երկրների միջև: 1888 թ. Վենեսուելան խզեց իր հարաբերությունները Բրիտանիայի հետ և դիմեց ԱՄՆ-ի կառավարությանը՝ իրավարար որոշում կայացնելու նպատակով:[4]

1894 թ. դեկտեմբերին Կոնգրեսին ներկայացրած իր ուղերձում ԱՄՆ-ի նախագահ Քլիվլենդը, նշելով Գվիանայի հարցում բանակցությունների անբավարար ընթացքի մասին, հույս հայտնեց, որ ԱՄՆ-ը կկարողանա իր որդեգրած քաղաքականության միջոցով «ձերբազատել այս կիսագունդը ծովի այն կողմի տերությունների հետ հակասությունների բոլոր պատճառներից»՝

[1] Նույն տեղում, էջ 3:

[2] Նույն տեղում, էջ 116; Lord Salisbury and Armenia // The Armenian Massacres, 1894-1896: US Media Testimony (Edited and with an Introduction by Arman J. Kirakossian), Detroit, 2003, pp. 58-61.

[3] **Հենրի Ջոն Փալմերսթոն** (1784-1865) - բրիտանացի պետական գործիչ և դիվանագետ, ռազմական նախարար (1809-1828), արտաքին գործերի նախարար (1830-1834, 1835-1841, 1846-1851), ներքին գործերի նախարար (1852-1855), վարչապետ (1855-1858, 1859-1865), 1859 թ.-ից՝ վիգերի ղեկավար:

[4] Rich, Norman, նշվ. աշխ., էջ 350-352, Foster, John W., նշվ. աշխ., p. 467:

պատրաստակամություն հայտնելով ձեռնարկել նոր փորձեր՝ միջնորդական իր առաջարկն իրականացնելու համար:

1895 թ. սկզբին Կոնգրեսը համատեղ բանաձև ընդունեց՝ առաջարկելով Քլիվլենդին դիմել կողմերին՝ իրավարարի դերակատարություն ստանձնելու համար: 1895 թ. հուլիսին պետքարտուղար Օլնին Լոնդոնում ԱՄՆ-ի դեսպան Թոմաս Բայարդի[1] միջոցով հայտագիր ներկայացրեց Սոլսբերիին: Փաստաթղթում ներկայացնելով արևմտյան կիսագնդում ԱՄՆ-ի շահերն ու Մոնրոյի դոկտրինը՝ Օլնին հայտարարում էր, որ յուրաքանչյուր եվրոպական պետության կողմից դոկտրինի անտեսումը համարվելու է ոչ բարեկամական քայլ Միացյալ Նահանգների նկատմամբ: Շեշտելով իր ինքնիշխանությունն ամերիկյան մայրցամաքի նկատմամբ՝ Օլնին նշում էր փաստաթղթում, որ «որևէ մշտական քաղաքական միություն եվրոպական կամ որևէ ամերիկյան պետության միջև անբնական է և ոչ նպատակահարմար», որ Եվրոպայի և Ամերիկայի շահերն անհամատեղելի են, որ «այսօր Միացյալ Նահանգներն իրականում սուվերեն է այս մայրցամաքում» և հանդիսանում է «իրավիճակի տերը»: «Ամերիկայի անսահման ռեսուրսները՝ աշխարհագրորեն մեկուսացված դիրքի հետ մեկտեղ, - գրված էր փաստաթղթում, - նրան դարձնում են իրավիճակի տերը և պրակտիկորեն անխոցելի յուրաքանչյուր կամ մյուս բոլոր տերությունների նկատմամբ»: Եթե բրիտանական կառավարությունը հրաժարվի ԱՄՆ-ի իրավարար միջնորդությունից վիճելի տարածքների հարցի լուծման պարագայում, դա կհամարվի որպես «վիրավորանք Միացյալ Նահանգների ժողովրդի շահերի հանդեպ»:[2]

Օլնին հրահանգեց դեսպանին կարդալ 17 էջանոց փաստաթուղթը Սոլսբերիին և հայցել բրիտանական կառավարության պատասխանը մինչև դեկտեմբեր, երբ ԱՄՆ-ի նախագահը պետք է ուղերձով հանդես գար Կոնգրեսի առջև: Այս դիրքորոշումն ամբողջությամբ համապատասխանում էր Մոնրոյի վարդապետության էությանը, համաձայն որի՝ եվրոպական որևէ տերություն չէր կարող ուժի կիրառման միջոցով փորձել լուծում տալ ամերիկյան կիսագնդում տեղի ունեցող վեճին:[3]

Զբաղված լինելով Հայկական հարցով,[4] ինչպես նաև Աֆրիկայի և Արևելյան Ասիայի խնդիրներով՝ Սոլսբերին ներկայացրեց հարցը կառավարության քննարկմանը միայն 1895 թ. նոյեմբերին: Դեկտեմբերի 6-ին ԱՄՆ-ում Մեծ Բրիտանիայի դեսպան Ջուլիան Փոնսֆոտը[1] ներկայացրեց Քլիվլենդին բրիտանական պատասխանը, որը մերժում էր ԱՄՆ-ի առաջարկը: Պատասխանը ներկայացված էր երկու փաստաթղթի տեսքով: Առաջին փաստաթղթում նշվում էր, որ Մոնրոյի վարդապետությունը ճանաչված չէր որպես միջազգային օրենք, ուստի որևէ կիրառություն չէր կարող ունենալ Վենեսուելայի հետ գոյություն ունեցող վիճելի հարցում: Երկրորդ փաստաթղթում նշվում էր, որ Վենեսուելայի պահանջներն անհիմն են, ուստի ԱՄՆ-ը չէր կարող հանդես գալ իրավարար որոշմամբ: Մեծ Բրիտանիան չէր կարող նման իրավունք տալ ԱՄՆ-ի կառավարությանը, որի արդյունքում օտար պետությանը, որը բնակեցված էր այլալեզու օտար ազգությամբ, կանցներ զգալի մի տարածք, որտեղ ապրում էին և կարող էին վտանգի ենթարկվել Բրիտանիայի մեծ թվով հպատակներ:

Դեկտեմբերի 17-ին նախագահ Քլիվլենդը տեղեկացրեց Կոնգրեսին Բրիտանիայի պատասխանի մասին՝ առաջարկելով կազմել հանձնաժողով, որը կքններ կողմերի պահանջներն ու կկայացներ իր որոշումը սահմանազատման մասին: Ինչ որոշում էլ կայացներ հանձնաժողովը, ԱՄՆ-ը պատրաստ կլիներ ամեն գնով պաշտպանել իր շահերը: Բանաձևն ընդունվեց Կոնգրեսի կողմից 1896 թ. հունվարի 4-ին, որի համաձայն՝ Քլիվլենդը կազմեց հանձնաժողով, որին տրամադրվեց 100 հազար դոլար՝ աշխատանքն իրականացնելու համար:[2]

Այդ օրերի բրիտանական մամուլի դիրքից կարող էր թվալ, որ շուտով պատերազմ է ծագելու երկու անգլախոս տերությունների միջև: Թեոդոր Ռուզվելտն[3] այդ առիթով հայտարարում էր. «Եթե այդպես է պետք, թող պատերազմը սկսվի: Ինձ չի հուզում, եթե մեր ծովափնյա քաղաքները կոմբակոծվեն, այդ դեպքում մենք կգրավենք Կանադան»:[4] Սակայն, այնուամենայնիվ, ինչպես ամերիկացիների, այնպես էլ բրիտանացիների շրջանում ընդունված մտայնություն գոյություն ուներ, համաձայն որի՝ երկու պետությունները կարող են միայն բարեկամներ լինել, այլ ոչ թե պատերազմել միմյանց դեմ:[5]

Տիրելով Կանադային և Նյուֆաունդլենդին, Վեստ Ինդիայի կղզիներին, Բելիզին և Գվիանային՝ Մեծ Բրիտանիան էլ էր հանդիսանում ամերիկյան տե-

---

[1] **Թոմաս Բայարդ** (1828-1898) - ԱՄՆ-ի քաղաքական գործիչ, իրավաբան, դիվանագետ, սենատոր Դելավերից (1869-1885), պետքարտուղար (1885-1889), դեսպան Մեծ Բրիտանիայում (1893-1897):

[2] **Rich, Norman**, նշվ. աշխ., էջ 350-352; **Hart, Albert Bushnell**, նշվ. աշխ., էջ 222:

[3] **Rich, Norman**, նշվ. աշխ., էջ 350-352; **Foster, John W.**, նշվ. աշխ., էջ 468-469:

[4] **Կիրակոսյան Արման**, Բրիտանական դիվանագիտությունը և արևմտահայության խնդիրը (XIX դարի 30-ական թթ. – 1914 թ.), Երևան, 1999, էջ 280-375:

[1] **Ջուլիան Փոնսֆոտ** (1828-1902) – բրիտանացի փաստաբան և դիվանագետ, պետքարտուղարի տեղակալ (1882-1889), դեսպան ԱՄՆ-ում (1893-1902):

[2] **Rich, Norman**, նշվ. աշխ., էջ 350-352; **Foster, John W.**, նշվ. աշխ., էջ 472-473; **Burton, David H.**, British-American Diplomacy, 1895-1917. Early Years of the Special Relationship, Malabar, Florida: Krieger Publishing Company, 1999, p. 10.

[3] **Թեոդոր Ռուզվելտ** (1858-1919) – ԱՄՆ-ի պետական և քաղաքական գործիչ, Հանրապետական կուսակցության ղեկավար, 26-րդ նախագահ (1901-1909), Խաղաղության Նոբելյան մրցանակի դափնեկիր:

[4] **Rich, Norman**, նշվ. աշխ., էջ 350-352:

[5] **Burton, David H.**, նշվ. աշխ., էջ 11:

ռություն և կարող էր լուծել իր տարածքային խնդիրներն ԱՄՆ-ի հետ պատերազմի միջոցով: Սոլսբերին արդեն իսկ պատրաստվում էր անցնել լուրջ գործողությունների, սակայն Լինդեր Ջեյմսոնի[1] անհաջող արշավանքը Տրանսվաալի դեմ և Գերմանիայի կայսր Վիլհելմ 2-րդի[2] շնորհավորական հեռագիրը Հարավային Աֆրիկայի Հանրապետության նախագահ Փոլ Կրյուգերին[3] փոխեցին իրավիճակը: 1896 թ. հունվարի 11-ին Սոլսբերին զեկուցեց թագուհուն, որ Վենեսուելայի հարցում Մեծ Բրիտանիան պետք է ընդունի ԱՄՆ-ի առաջարկն իրավարարության վերաբերյալ:

ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի միջև տեղի ունեցած երկարատև բանակցություններից հետո կողմերը համաձայնության եկան Վենեսուելայի և Մեծ Բրիտանիայի միջև ստորագրվելիք արբիտրաժի պայմանագրի պայմանների հարցում, ընդ որում՝ Վենեսուելան այդպես էլ որևէ մասնակցություն չունեցավ բանակցություններին: Պայմանագիրը ստորագրվեց 1899 թ. նոյեմբերի 12-ին, համաձայն որի՝ հանձնաժողովի կազմում ընդգրկվեցին երկու անդամ ԱՄՆ-ից, երկուսը՝ Մեծ Բրիտանիայից և մեկը՝ Շվեդիայից: Թեև Վենեսուելան դժգոհեց պայմանագրի պայմաններից և սահմանային հանձնաժողովի աշխատանքի արդյունքից, որը, ըստ վենեսուելական կողմի, ավելի ձեռնտու էր Մեծ Բրիտանիային, այնուամենայնիվ, վեճը հնարավորինս հարթվեց:[4]

Վենեսուելայի սահմանային ճգնաժամի հաղթահարումը շրջադարձային կետ դարձավ դիվանագիտական պատմության մեջ, երբ Մեծ Բրիտանիան վերջնականապես ճանաչեց Միացյալ Նահանգների գերիշխանությունն արևմտյան կիսագնդում, և թեև դեռևս բազմաթիվ խնդիրներ էին մնացել, անգլո-ամերիկյան հարաբերությունները ենթարկվեցին փոփոխության՝ կասկածից և թշնամությունից դեպի փոխադարձ հարգանք և բարեկամություն:

Վերլուծելով 1899 թ. համաձայնության արդյունքները կարելի է գալ այն եզրակացության, որ առաջինը՝ համաձայնության հասնելու, այլ ոչ թե պատերազմելու մասին երկրներում գոյություն ունեցող հասարակական կարծիքն իր կարևոր ազդեցությունն ունեցավ դեպքերի զարգացման վրա, երկրորդը՝ ԱՄՆ-ի քաղաքականությունը Վենեսուելայի հետ ծագած սահմանային վեճի հարցում էլ ավելի ամրապնդեց Մոնրոյի վարդապետության հեղինակությունը, և երրորդը՝ համաձայնությունը հաստատեց անգլո-սաքսոնական պետությունների միջև գոյություն ունեցող բարեկամությունը:

[1] **Լինդեր Ջեյմսոն** (1853-1917) – բրիտանացի գաղութային պաշտոնյա, Ռոդեզիայի կառավարիչ (1894-1896), Քեյպ գաղութի վարչապետ (1904-1908):
[2] **Վիլհելմ II** (1859-1941) - Գերմանիայի կայսր (1888-1918):
[3] **Փոլ Կրյուգեր** (1825-1904) – Հարավ-Աֆրիկյան Հանրապետության (Տրանսվաալի) նախագահ (1880-1900), պայքարում էր Մեծ Բրիտանիայի տիրապետության դեմ:
[4] **Rich, Norman**, նշվ. աշխ., էջ 352-353; **Hart, Albert Bushnell**, նշվ. աշխ., էջ 47-48:

ԱՄՆ-ի և Բրիտանիայի միջև ծագած հակասությունը սահմանային վեճի առնչությամբ էլ ավելի ձևավորեց պատերազմի դեմ ուղղված հասարակական կարծիքն ու ղեկավարների համոզմունքն առ այն, որ նման հարցերը կարելի է լուծել խաղաղ ճանապարհով՝ բանակցությունների միջոցով:[1]

1895-1917 թթ. ընթացքում զգալի փոփոխություններ տեղի ունեցան անգլո-ամերիկյան հարաբերություններում. Մեծ Բրիտանիան սկսեց հետզհետե գնահատել և աջակցել Միացյալ Նահանգների համաշխարհային հավակնություններ ձեռք բերելու ուղղությամբ իրականացվող քաղաքականությունը: Երկու պետությունների միջև հաստատվող այդ բարեկամությունը նախադրյալներ ստեղծեց, որ «20-րդ դարը դառնա ամերիկյան դարաշրջան»: Լոնդոնի փնտրտուքը համաշխարհային նոր քաղաքականություն որդեգրելու և Վաշինգտոնի ջանքերը գերտերություն ճանաչվելու ուղղությամբ համընկան մեկը մյուսին: Գիտակցելով այն հանգամանքը, որ Մեծ Բրիտանիան հայտնվեց իր հզորության մայրամուտում, Բրիտանիայի ղեկավարներն ու Ֆորին Օֆիսի մասնագետները եկան այն համոզման, որ Ամերիկյան հանրապետությունը կարող է դառնալ բրիտանական նոր դիվանագիտական ռազմավարության վճռական բաղադրիչը: Միաժամանակ ամերիկացիները վերաբերվում էին Բրիտանիային որպես «մայր երկրի»:[2]

Մյուս գործոնը, որի հետևանքով Միացյալ Նահանգներն ու Մեծ Բրիտանիան պատրաստ էին մոռանալ կամ հրաժարվել իրենց միջև գոյություն ունեցող հին տարաձայնություններից և թշնամանքից, նոր Գերմանիայի հայտնությունն էր: Եթե Օտտո Բիսմարկի[3] ժամանակ Գերմանիան եվրակենտրոն քաղաքականություն էր իրականացնում և, ըստ կանցլերի հայտնի արտահայտության, գաղութները «չարժեն նույնիսկ Պոմերանյան գրենադերի ոսկորները», ապա Վիլհելմ 2-րդը սկսեց նախապատրաստել «իր հպարտ ազգն» իմպերիալիստական ճակատագրի համար. ստեղծեց հզոր նավատորմ, որը պետք է ապահովեր Գերմանիայի շահերն Աֆրիկայում, Հեռավոր Արևելքում և Խաղաղ օվկիանոսում, ինչպես նաև Ամերիկայում: Գերմանական այս ռազմավարությունն ուղղված էր Բրիտանիայի հեգեմոնիայի՝ ինչպես Թագավորական նավատորմի համաշխարհային գերիշխանության, այնպես էլ Սուեզի և Հնդկաստան տանող ցամաքային ճանապարհի անվտանգության դեմ: Գերմանիայի նոր քաղաքականության հետևանքով 1904 թ. Բրիտանիան և Ֆրանսիան եկան դաշնություն ստեղծելու հա-

[1] **Burton, David H.**, նշվ. աշխ., էջ 14:
[2] Նույն տեղում, էջ 3:
[3] **Օտտո Բիսմարկ** (1815-1898) - գերմանացի պետական գործիչ և դիվանագետ, իշխան, Պրուսիայի գեսպան Ռուսաստանում (1859-1862), Ֆրանսիայում (1862), Պրուսիայի վարչապետ և արտաքին գործերի նախարար (1862-1867), Գերմանական կայսրության բունդեսկանցլեր (1867-1871), ռայխսկանցլեր (1871-1890):

մածայնության, որին երեք տարի անց միացավ նաև Ռուսաստանը: Թեև ԱՄՆ-ի հետ նման ձևական համաձայնություն այդպես էլ չկնքվեց, սակայն շահերի համընկնումը, ինչպես նաև ընդհանուր լեզվի, գրականության և օրենքների գոյությունը, լիովին հավասարակշռում էր այդ հանգամանքը:[1]

«Նավալիզմի», «սոցիալ-դարվինիզմի», «կոմերցիալիզմի» և «հայրենասիրության» տեսությունները պետք է հիմք հանդիսանային Միացյալ Նահանգների համաշխարհային տերություն դառնալու ճանապարհին: Այդ ուղղությամբ Մոնրոյի դոկտրինը շարունակում էր մնալ ԱՄՆ-ի համար կարևորագույն արտաքին քաղաքական վարդապետությունը,[2] որն էլ ավելի էր ամրապնդվել 1890-ական թթ., թեև Գերմանիայի նոր քաղաքական ծավալապաշտական քաղաքականությունը կարող էր վտանգ դառնալ ԱՄՆ-ի համար, եթե նա չկարողանար ձևավորել դաշնակցային համակարգ այլ տերությունների հետ: Զարմանալի է, որ Բրիտանիայի կողմից Մոնրոյի վարդապետության խախտումը Վենեսուելայի սահմանային վեճի ժամանակ պատրվակ հանդիսացավ Վաշինգտոնի և Լոնդոնի մերձեցման համար: Այս մոտեցմանը նպաստեց նաև Բրիտանիայի աջակցությունն ԱՄՆ-ին 1898 թ.՝ ԱՄՆ-ի և Իսպանիայի միջև ծագած պատերազմի ընթացքում: Թեև երկու տերությունների միջև շարունակում էին ծագել մանր և ոչ կարևոր հակասություններ, ինչպես դա տեղի ունեցավ, օրինակ, 1903 թ. Ալյասկայի սահմանային վեճի ժամանակ, սակայն նման միջադեպերն ազդեցություն չունեցան ԱՄՆ-ի և Բրիտանիայի միջև ամրապնդվող դաշինքի վրա: Նման իրավիճակն իր գագաթնակետին հասավ հետագայում՝ 1917 թ., երբ ԱՄՆ-ը մուտք գործեց Առաջին համաշխարհային պատերազմ որպես Անգլիայի և Ֆրանսիայի դաշնակից, պատերազմ, որը նախագահ Վիլսոնն անվանեց «պատերազմ, որը վերջ է դնելու մնացած բոլոր պատերազմներին»:[3]

5. ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը 20-րդ դարի առաջին քառորդում

20-րդ դարի առաջին տասնամյակների ընթացքում Կարիբյան ծովը դարձավ «ամերիկյան լիճ»: Միացյալ Նահանգները հսկողություն էր հաստատել Կուբայի և իր սուվերեն.իրավունքն էր սահմանել Պուերտո Ռիկոյի, Գուամի, Հավայան կղզիների և Ֆիլիպինների նկատմամբ: Ծովակալ Ալֆրեդ Մահանը բնութագրում էր ամերիկյան արտաքին քաղաքականությունն Իսպանա-ամերիկյան պատերազմից մինչև Առաջին համաշխարհային պատերազմ ընկած շրջանը՝ որպես միջամտություն Ասիայի գործերին, Կարիբյանի նկատմամբ ազդեցության ոլորտի ամրապնդում և Եվրոպայում չմիջամտության քաղաքականության շարունակություն: Չունենալով նախկինում իր ազդեցության ոլորտը Չինաստանում՝ Միացյալ Նահանգները շուտով դարձավ այդ երկրի տարածքային ամբողջականության պաշտպանության և «բաց դռների» քաղաքականության առաջատարը, որը ցինիկաբար անվանվում էր որպես «ոչ մի հատուկ արտոնություն Չինաստանը շահագործող առանձին պետությունների համար, հավասար հնարավորություններ բոլոր շահագործող պետությունների համար»:[1]

Միացյալ Նահանգները շարունակում էր հզորացնել իր նավատորմը, որի արդյունքում 1880-ից մինչև 1900 թ. 12-րդ տեղից տեղափոխվեց 3-րդն աշխարհում: ԱՄՆ-ը կառուցեց Պանամայի ջրանցքը, որի պաշտպանության համար նրան հարկավոր էր ազդեցություն հաստատել Վիրջինյան կղզիների, Պուերտո Ռիկոյի, Դոմինիկյան Հանրապետության, Հայիթիի, Կուբայի, Նիկարագուայի և, բնականաբար, ամերիկացիների կողմից ստեղծված Պանամայի Հանրապետության նկատմամբ: Ի վերջո, Պուերտո Ռիկոն և Վիրջինյան կղզիները դառնում են Ամերիկայի լիակատար սեփականությունները, Կուբան և Պանամա՝ իրավական պրոտեկտորատները, իսկ Դոմինիկյան Հանրապետությունը, Հայիթին և Նիկարագուան՝ քողարկված պրոտեկտորատները: Գուանտանամոյում կառուցվեց ամերիկյան ծովային հենակետը:[2]

1899 թ. ապրիլին Թեոդոր Ռուզվելտը կոչ արեց իր հայրենակիցներին դիմավորել «կայսերական» արտաքին քաղաքականության նոր մարտահրավերներն ու պատասխանատվությունները. «Եթե մենք պետք է դառնանք իրապես մեծ ժողովուրդ, - հայտարարում էր Ռուզվելտը, - մենք պետք է բարեխղճությամբ ջանանք մեծ դերակատարություն ստանձնել աշխարհում»: Նրա տեսլականն ընդգրկում էր ջրանցքի կառուցումը, ռազմավարական հենակետերի գրավումը՝ «որոշելու համար Արևելքի և Արևմուտքի օվկիանոսների ճակատագիրը»:

Երեք տարի անց սենատոր Ջորջ Հորը «ողբում» էր, որ ազգը որոշում է կայացրել հետևել Ռուզվելտի խորհրդին: Հորը մեղադրում էր Միացյալ Նահանգները Մոնրոյի վարդապետությունը «հավերժ ճշմարտության և արդա-

[1] Նույն տեղում, էջ 4:
[2] 1899 թ. Հաագայի խաղաղության համաժողովին մասնակցած ԱՄՆ-ի պատվիրակությունը, ստորագրելով Միջազգային կոնֆլիկտների խաղաղ կարգավորման կոնվենցիան, միաժամանակ հանդես եկավ հայտարարությամբ, որը տեղ գտավ համաժողովի արձանագրություններում: Հայտարարության մեջ ասվում էր, որ կոնվենցիայի դրույթները չեն կարող մեկնաբանվել ԱՄՆ-ի շահերի դեմ: ԱՄՆ-ը մեկ անգամ ևս ցույց էր տալիս աշխարհին, որ չի շեղվելու Մոնրոյի դոկտրինի ուղեգծից (Foster John W., նշվ. աշխ., էջ 475):
[3] Նույն տեղում, էջ 4-5:

[1] Carleton, William G., նշվ. աշխ., էջ 22-23:
[2] Նույն տեղում, էջ 23:

ռության» քաղաքականությունից «մեր սեփական առավելության հասնելու դաժան եսասիրության դոկտրինի» վերածելու մեջ: Իրականում շատ ամերիկացիներ և ազդեցիկ գիտնականներ, քաղաքագետներ եկել էին այն եզրակացության, որ Միացյալ Նահանգները 1890 թ. հետո իմպերիալիզմի կիրառման գործում միացել էր եվրոպական տերություններին: Ի տարբերություն բրիտանացիների, որոնք արդարացնում էին և մեծապես հպարտանում իրենց իմպերիալիստական սխրագործություններով, ամերիկացիներն իրենց հերթին համառորեն բացառում էին ամերիկյան կայսրության գոյությունը կամ ցանկանում էին ցույց տալ, որ այն կրում է ավելի «բարի և տարանցիկ» բնույթ, քան եվրոպական տերությունների իմպերիալիստական նկրտումները:[1]

Եթե մինչև 1895 թ. աշխարհը բաժանված էր երկու ազդեցության ոլորտների, ապա ժամանակի ընթացքում այդ իրավիճակը փոխվեց: Այդ առիթով Ալբերտ Հարթը գրում է. «Ասել, որ Մոնրոյի դոկտրինը շարունակում էր մնալ ԱՄՆ-ի առաջնային սկզբունքը, նշանակում է հայտարարել, որ Միացյալ Նահանգները որևէ ուժ չունի Ամերիկայից դուրս: Երկու կիսագունդերն այսօր մեկուսացված չեն և այլևս չեն կարող լինել մեկուսացված: Միացյալ Նահանգները համաշխարհային տերություն է, որին հնարավոր չէ տրամադրել հատուկ արտոնություններ: Միաժամանակ ԱՄՆ-ը տիրապետող ուժ է արևմտյան կիսագնդում»:[2]

Միացյալ Նահանգները ժամանակի ընթացքում սկսեց մշտական և աճող հետաքրքրություն հանդես բերել եվրոպական հարցերի նկատմամբ: Կրետեի ապստամբությունը և հայկական կոտորածներն այնպիսի բողոքի ալիք էին բարձրացրել երկրում, որը երբևիցե բնորոշ չէր եղել Միացյալ Նահանգների համար:[3]

Դառնալով խաղաղօվկիանոսյան տերություն՝ ԱՄՆ-ը սկսեց հետզհետե ներգրավվել եվրոպական գործերի մեջ: 1905 թ. ԱՄՆ-ն իր միջնորդությունն առաջարկեց Մարոկկոյի համար ծագած ճգնաժամում Ֆրանսիայի և Գերմանիայի միջև, ինչպես նաև ռուս-ճապոնական պատերազմում: Վաշինգտոնը աստիճանաբար ընդգրկվում էր միջազգային հարաբերությունների, մասնավորապես եվրոպական քաղաքականության համակարգի մեջ, նկատվում էր Վաշինգտոնի և Լոնդոնի միջև դիրքորոշումների մոտեցման միտում:[4]

[1] Fry, Joseph A. Imperialism, American style, 1890-1916 // American Foreign Relations Reconsidered, 1890-1993 (Edited by Gordon Martel), London and New York: Routledge, 1994, p. 52.
[2] Hart, Albert Bushnell, նշվ. աշխ., էջ 233:
[3] Նույն տեղում, էջ 232:
[4] Hunt, Michael H., նշվ. աշխ., էջ 4:

Միացյալ Նահանգները սկսեց օգտագործել իմպերիալիզմն «անախորժ խղճմտանքով» և մյուս ժողովուրդներին ինքնիշխանությանը նախապատրաստելու պարտավորություններ ստանձնելով: Այս պարտավորությունները տարանջատում էին ամերիկյան իմպերիալիզմը եվրոպական տարբերակից և գործում որպես «անվտանգության փական»՝ պաշտպանելով Միացյալ Նահանգները «մեծ տերության որոշ գայթակղություններից՝ չարաշահումների, հիասթափությունների և ցինիզմի կիրառումից:[1]

Ամերիկայի Միացյալ Նահանգները շատ արագ կարողացավ դառնալ մեծ տերություն՝ պատմական կարճ ժամանակահատվածում երկրի բնակչության նյութական բարեկեցության ապահովման ու արտաքին քաղաքականության բնագավառում կիրառվող սկզբունքների հիման վրա: Օգտագործելով միջազգային առևտրում բրիտանական տիրապետության հնարավորությունները՝ ամերիկացիները հիմնականում մեծ շահույթներ էին ստանում գյուղատնտեսական արտադրանքի և հումքի վաճառքից: Առևտրից կուտակված կապիտալը ներդրվեց տեղական արտադրության մեջ, որի աճի արդյունքում Միացյալ Նահանգներն իր արդյունաբերական արտադրողականությամբ 1830 թ. գրավեց 6-րդ, իսկ 1890 թ. հետո ընկած ժամանակաշրջանում՝ 2-րդ և նույնիսկ 1-ին տեղերն արդյունաբերական տերությունների շարքում: 1900 թ. տվյալներով ԱՄՆ-ը արտադրում էր այնքան երկաթ և մետաղ, ինչքան Մեծ Բրիտանիան և Գերմանիան միասին վերցրած:[2]

Դատելով տվյալ ժամանակաշրջանի ցուցանիշներից՝ 20-րդ դարի սկզբին ԱՄՆ-ն ապահովել էր իր վերելքը: Եթե 1783 թ. ԱՄՆ-ն ուներ ընդամենը 3 մլն բնակչություն, ապա 1860 թ. այն հասավ 32, իսկ 1914 թ.՝ 98 միլիոնի: Միացյալ Նահանգների տարածքը զբաղեցնում էր մի ողջ մայրցամաք, որն ուներ հարուստ բնական պաշարներ, և որին չէր սպառնում որևէ իրական արտաքին վտանգ: 1914 թ. ԱՄՆ-ը գերազանցում էր բոլոր հիմնական տերություններին իր ազգային և մեկ շնչին ընկնող եկամուտով: Որպես մրցակից՝ ԱՄՆ-ին ամենից մոտ կանգնած տերությունը Մեծ Բրիտանիան էր, որի ազգային եկամուտն ԱՄՆ-ի մեկ երրորդն էր կազմում (11 մլրդ դոլար՝ 37-ի դիմաց), իսկ մեկ շնչին հասնող եկամուտը՝ երկու երրորդը (244 դոլար՝ 377-ի դիմաց): Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին բոլոր եվրոպական տերությունների, ներառյալ Ռուսաստանի ազգային եկամուտը գերազանցում էր ԱՄՆ-ի ազգային եկամուտն ընդամենը 4 միլիարդ դոլարով: Ամերիկյան նավատորմը 1914 թ. երրորդն էր աշխարհում բրիտանական և գերմանական նավատորմերից հետո:[3]

[1] Fry, Joseph A., նշվ. աշխ., էջ 61-62:
[2] Hunt, Michael H., նշվ. աշխ., էջ 1-2:
[3] Նույն տեղում, էջ 2:

Վերլուծելով ամերիկյան արտաքին հարաբերությունների պատմությունն ԱՄՆ-ի անկախացումից մինչև Առաջին համաշխարհային պատերազմն ընկած ժամանակաշրջանը՝ կարելի է գալ այն եզրակացության, որ իր ծննդից ի վեր Միացյալ Նահանգներն աշխարհի երկու կիսագնդում էլ եղել է համաշխարհային տերություն՝ իր ռազմական ուժով, այլ պետությունների նկատմամբ ազդեցությամբ, իր հնարավորություններն ընդլայնելու ձգտումով: Օգտագործելով իր աշխարհագրական դիրքն ու չեզոքության կարգավիճակը՝ ԱՄՆ-ը հաճախ է հաջողությունների հասել պայմանագրեր բանակցելու և վեճեր կարգավորելու գործում: Միաժամանակ ԱՄՆ-ը կառավարությունը միշտ էլ ինքն է որոշում կայացրել, թե երբ և ինչ ձևեր ընտրի այս կամ այն միջազգային խնդրում իր միջամտության համար: Միացյալ Նահանգների ուժը գտնվել է իր հնարավորությունների, այլ ոչ թե «մեկուսացվածության» մեջ: Եվ երբ շահը պահանջել է, այն միշտ էլ կիրառվել է:

ԳԼՈՒԽ II

ԱՄՆ-ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԿԻԶԲԸ ԵՎ ՄԻՍԻՈՆԵՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

1. ԱՄՆ-Օսմանյան կայսրություն միջպետական հարաբերությունների հաստատումն ու զարգացման սկզբնական շրջանը

Թեև Ամերիկայի Միացյալ Նահանգներն ու Օսմանյան կայսրությունը ճանաչեցին միմիանց 1830 թ., իսկ դիվանագիտական հարաբերությունները հաստատվեցին 1831 թ., քաղաքական և առևտրական առնչություններն այդ երկրների միջև սկիզբ էին առել ավելի վաղ շրջանում: Ինչպես գրում էր Ադամ Սմիթը,[1] նույնիսկ անկախությունից առաջ «Նոր Անգլիան» առևտուր էր անում «Միջերկրականի տնտեսությունների» հետ՝ արտահանելով ձուկ այդ հեռավոր ափերը: Նա նշում էր, որ եթե առաջ բրիտանական առևտուրն էր պահպանում «մեծ ծովային տերության» պատիվը Միջերկրականում, ապա, 1770-ական թթ.-ից սկսած, ամերիկյան առևտուրը գերազանցեց իր «մայր երկիրը»:[2]

Անկախությունից ի վեր ԱՄՆ-ի քաղաքական գործիչները մեծ հետաքրքրություն էին հանդես բերում Օսմանյան կայսրության հետ առևտրական հարաբերություններ հաստատելու ու զարգացնելու հարցում, սակայն ԱՄՆ-Բրիտանիա-Ֆրանսիա հարաբերությունների քաղաքական դժվարությունները դարավերջին մի կողմից, Բրիտանիայի, Ֆրանսիայի ու Ռուսաստանի մշտական միջամտությունն օսմանյան ներքին գործերին մյուս կողմից, խանգարում էին երկկողմ պայմանագրի շուրջ բանակցությունների ընթացքին:

---

[1] **Ադամ Սմիթ** (1723-1790) – շոտլանդացի փիլիսոփա և տնտեսագետ, քաղաքատնտեսության հիմնադիր, համարվում է ժամանակակից տնտեսագիտության «հայրը», շոտլանդական վերածննդի գլխավոր դեմքերից մեկը, հիմնական աշխատությունները՝ «Բարոյական զգացմունքների տեսությունը», «Ժողովուրդների հարստության բնույթի և պատճառների ուսումնասիրություն»:

[2] **Smith, Adam**, An Inquiry into the Nature and Causes of the Wealth of Nations, Indianopolis: Liberty Fund, 1981, vol. 2, pp. 578, 598-599.

1774 թ., երբ Ջոն Ադամսը,[1] Բենջամին Ֆրանկլինը[2] ու Թոմաս Ջեֆերսոնը նշանակվեցին լիազոր ներկայացուցիչներ՝ օտարերկրյա պետությունների հետ պայմանագրեր ստորագրելու նպատակով, Կոնտինենտալ Կոնգրեսն ընդգրկեց Օսմանյան կայսրությունն այն երկրների ցանկում, որոնց հետ պետք էր բանակցություններ սկսել: Այդ տարիներին Օսմանյան կայսրությունը շատ ավելի բնակեցված էր, քան Միացյալ Նահանգները և մինչև Լուիզիանայի ձեռքբերումը՝ տարածքով շատ ավելի մեծ: Սակայն մինչև 1786 թ., երբ բանակցություններ սկսվեցին Ալժիրի հետ, ամերիկյան կառավարությունը դեռևս մտադրված չէր պայմանագիր ստորագրել Բարձր Դռան հետ: Դա բացատրվում էր այն հանգամանքով, որ Բարձր Դռան հետ պայմանագիր ստորագրելը կախված էր մեծ ծախսերի, մասնավորապես բանկարժեք և ճոխ նվերների հետ:[3]

Ռուֆուս Քինգը,[4] որը Միացյալ Նահանգների դիվանագիտական ներկայացուցիչն էր Մեծ Բրիտանիայում, մեծ հետաքրքրություն էր հանդես բերել Օսմանյան կայսրության հետ պայմանագիր բանակցելու հարցում և քննարկել էր խնդրո առարկան Լոնդոնում Օսմանյան կայսրության դեսպանի հետ: Դիվանագետի զեկուցագրերի արդյունքում նախագահ Ջոն Ադամսը 1799 թ. փետրվարի 8-ին Օսմանյան կայսրությունում արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարար նշանակեց Ուիլյամ Սմիթին Չարլստոն քաղաքից (Հարավային Կարոլինա), որն այն ժամանակ ԱՄՆ-ի դեսպանորդ-նախարարն էր Պորտուգալիայում: Նրա առջև խնդիր դրվեց առևտրի և բարեկամության պայմանագիր կնքելու նպատակով բանակցել Բարձր Դռան հետ: Թեև դիվանագետն ընդունել էր այդ նշանակումը, սակայն այդպես էլ Կոստանդնուպոլիս մեկնելու հրահանգ չստացավ: Պատճառը հանդիսացավ ֆրանս-բրիտանական պատերազմի հետևանքով ստեղծված միջազգային լարված իրավիճակը: Մեծ Բրիտանիան և Ռուսաստանը Օսմանյան կայսրության դաշնակիցներն էին՝ Նապոլեոնին Եգիպտոսից դուրս հանելու հարցում: ԱՄՆ-ում այդ ժամանակ տիրում էին ֆրանսամետ տրամադրություններ և ձևավորված կարծիք գոյություն ուներ, որ Բարձր Դռան հետ

[1] Ջոն Ադամս (1735-1826) - ԱՄՆ-ի հիմնադիր հայրերից, քաղաքական գործիչ և դիվանագետ, դիվանագիտական ներկայացուցիչ, նախարար Նիդերլանդներում (1782-1788), Մեծ Բրիտանիայում (1785-1788), 1-ին փոխնախագահ (1789-1797), 2-րդ նախագահ (1797-1801):
[2] Բենջամին Ֆրանկլին (1706-1790) - ԱՄՆ-ի հիմնադիր հայրերից, քաղաքական գործիչ, քաղաքագետ, լրագրող, գիտնական-ֆիզիկոս, գյուտարար, երաժիշտ, դիվանագետ, դիվանագիտական ներկայացուցիչ, նախարար Ֆրանսիայում (1778-1785), Շվեդիայում (1782-1783):
[3] Gordon, Leland James, American Relations with Turkey. 1830-1930. An Economic Interpretation, Philadelphia: University of Pennsylvania Press; London: Oxford University Press, 1932, p. 8.
[4] Ռուֆուս Քինգ (1755-1827) - ԱՄՆ-ի պետական գործիչ, իրավաբան և դիվանագետ, սենատոր Նյու Յորքից (1789-1796, 1813-1825), դիվանագիտական ներկայացուցիչ, նախարար Մեծ Բրիտանիայում (1796-1803, 1825-1826):

պայմանագիր ստորագրելուն ուղղված բանակցությունները կարող էին լարվածություն առաջացնել ֆրանս-ամերիկյան հարաբերություններում:[1]

1800 թ. «Ջորջ Վաշինգտոն» ֆրեգատի հրամանատար Ուիլյամ Բեյնբրիջը[2] ժամանեց Ալժիր՝ ամերիկյան տարեկան տուրքը Բերբերյան ծովահեններին վճարելու համար: Այն բանից հետո, երբ նավապետն առաջարկեց վճարել գումարը, նրանից պաշտոնապես պահանջվեց այս անգամ տուրքը վճարել օսմանյան սուլթանին: Նավապետը փորձեց հրաժարվել, սակայն նրան հայտնեցին, որ ամրոցի բոլոր թնդանոթներն ուղղված են ամերիկյան նավի վրա: Նույն թվականի նոյեմբերի 9-ին «Ջորջ Վաշինգտոնը» մտավ Կոստանդնուպոլսի նավամատույցը: Արտասովոր նավի հայտնությունը մեծ տպավորություն առաջացրեց Կոստանդնուպոլսում՝ սուլթան Մահմուդ 2-րդը[3] հրամայեց, որ նավը մուտք գործի ներքին նավամատույց ու անցնի կայսերական պալատի մոտով: Ի պատիվ ամերիկյան նավի՝ հրավառություն արձակվեց 21 թնդանոցից: Սուլթանը, որը դիտում էր նավն իր ապարանքներից, աստղեր նկատեց ամերիկյան դրոշի վրա: Այն հանգամանքը, որ օսմանյան դրոշի վրա նույնպես աստղ կա, համարվեց նրա կողմից որպես բարի նշան երկու երկրների միջև ապագայում բարեկամական հարաբերությունների հաստատման և զարգացման համար:

Նավապետին ընդունող Օսմանյան կայսրության մեծ ծովակալ (*կապուդան* կամ նավապետ փաշա) Քյուչուկ Հուսսեյն փաշան զրույցի ժամանակ առաջարկեց պայմանագիր ստորագրել երկու երկրների միջև: Բեյնբրիջը տեղեկացրեց զրուցակցին, որ Ամերիկայի նախագահն Օսմանյան կայսրությունում ԱՄՆ-ի շահերը ներկայացնելու համար արդեն իսկ նշանակել էր դիվանագիտական ներկայացուցիչ, որը գտնվում էր Լիսաբոնում և Կոստանդնուպոլիս պետք է ժամաներ վեց ամսվա ընթացքում:[4]

Օսմանյան կայսրության հետ ամերիկյան առևտրի սկիզբն է համարվում 1785 թ.: Առաջին ամերիկյան նավը, որը մուտք էր գործել օսմանյան նավահանգիստ, 1782 թ. Մասաչուսետս նահանգի Սալեմ քաղաքում կառուցված «Մեծ թուրք» նավն էր: Այդ նավը սովորաբար ԱՄՆ էր տեղափոխում խեժ, գորգեր, թուզ և չամիչ: Հիմնական նավահանգիստը, ուր այցելում էին ամերիկյան առևտրական նավերը, Զմյուռնիան էր: Այստեղից նավերն ապրանք էին տեղափոխում Բոստոն, Նյու Յորք և Ֆիլադելֆիա: Փաստո-

[1] Նույն տեղում; Howard, Harry N., Turkey, the Straits and U.S. Policy, Baltimore and London: The Johns Hopkins University Press, 1974, pp. 2-3.
[2] Ուիլյամ Բեյնբրիջ (1774-1833) - ԱՄՆ-ի ռազմական գործիչ, նավատորմի կոմոդոր՝ առաջին կարգի նավապետ:
[3] Մահմուդ 2-րդ (1789-1839) – Օսմանյան կայսրության 30-րդ սուլթան (1808-1839), 1820-1830 թթ. իրականացրեց մի շարք առաջադիմական բարեռորոգումներ, որոնք նպաստեցին Թանզիմաթի ընդունմանը սուլթան Աբդուլ Մեջիդի կողմից:
[4] Gordon, Leland James, նշվ. աշխ., էջ 7-8; Howard, Harry N., նշվ. աշխ., էջ 2-3.

րեն՝ մինչև առևտրական պայմանագրի ստորագրումը՝ 1830 թ., 45 տարիների ընթացքում ամերիկացիներն առևտուր էին անում օսմանցի առևտրականների հետ: Թեև ամերիկյան առևտրի շրջանառության ծավալն Օսմանյան կայսրության հետ շատ մեծ չէր, սակայն այն արագորեն աճում էր: 1811-1820 թթ. տարեկան կտրվածքով միջինը 13 ամերիկյան նավ էր մտնում Զմյուռնիայի նավահանգիստ՝ վաճառելով բամբակյա իրեր, թութուն, վառոդ և ռում: Այդ ընթացքում բրիտանական «Levant» ընկերությունը, որը Մերձավոր Արևելքում աշխատանքի երկարատև փորձ ուներ, թույլատրել էր ամերիկյան նավերին նավարկել ընկերության հովանու և պաշտպանության ներքո: Ընկերությունն Օսմանյան կայսրությունում օգտվում էր հատուկ արտոնություններից[1]:

Այդ պրակտիկան շարունակվում էր մինչև 1811 թ., երբ ԱՄՆ-ի հպատակներ Վուդմասն ու Օֆֆլին առևտրական տուն հիմնեցին Զմյուռնիայում: Օսմանյան իշխանությունները ձգտում էին մոտ հարաբերություններ հաստատել ԱՄՆ-ի հետ և խոստացել էին հովանավորություն Զմյուռնիայում: ԱՄՆ-ը նաև երաշխիքներ էր ստացել, որ թուրքական նավահանգիստներում իր առևտուրը ստանալու է «ամենից արտոնյալ պետության» (most favored nation) կարգավիճակ, ազատ մուտքի իրավունք դեպի Սև ծով, ինչպես նաև թույլտվություն՝ թուրքական ծովափնյա քաղաքներում հյուպատոսներ նշանակելու համար:[2]

Սակայն շուտով «Levant» ընկերության հետ վեճ ծագեց, որը կապված էր ամերիկյան առևտրականներից գանձվող տուրքի սակագների հետ: Թեև մաքսատուրքի չափը 3% էր և լրացուցիչ գանձվում էր ևս 10%՝ որպես թեյանվեր, սակայն ամերիկյան ապրանքների համար գանձվում էր 15%: Դեյվիդ Օֆֆլին վիճարկեց ստեղծված իրավիճակն ու բանակցություններ սկսեց Բարձր Դռան հետ, որոնք ավարտվեցին հաջողությամբ: Ամերիկյան ապրանքների ներմուծման համար պայմանավորվածություն ձեռք բերվեց գանձել այնքան, ինչքան որ գանձվում էր ֆրանսիական ապրանքների համար: Այդ պայմանավորվածությունը շարունակում էր գործել մինչև 1830 թ., երբ ստորագրվեց երկկողմ պայմանագիրը, որի համաձայն՝ ամերիկյան ապրանքից սկսեց գանձվել ընդհանուր առմամբ 8% մաքսատուրք:[3]

[1] Օսմանյան կայսրության կողմից կիրառվում էր հատուկ արտոնությունների տրամադրում օտարերկրյա պետություններին երկկողմ պայմանագրերի կնքման միջոցով:
[2] Gordon, Leland James, նշվ. աշխ., էջ 41-42; Payaslian, Simon, United States Policy Toward the Armenian Question and the Armenian Genocide, New York: Palgrave Macmillan, 2005, pp. 1-2; Grabill, Joseph L., Protestant Diplomacy and the Near East. Missionary Influence on American Policy, 1810-1927, Minneapolis: University of Minnesota Press, 1971, p. 36.
[3] Gordon, Leland James, նշվ. աշխ., էջ 42:

1802 թ. մայիսին Ուիլյամ Սթյուարտը նշանակվեց առաջին ամերիկյան հյուպատոս Զմյուռնիայում, սակայն նա այդպես էլ թույլտվություն չստացավ Բարձր Դռնից: 1808 թ. Բալտիմորից Սլոանը նշանակվեց հյուպատոս Զմյուռնիայում, սակայն նա նույնպես չճանաչվեց օսմանյան կառավարության կողմից: Մինչև 1824 թ., երբ Բարձր Դուռը վերջապես ճանաչեց 14 տարի Զմյուռնիայում բնակվող Դեյվիդ Օֆֆլիի իրավասությունները՝ որպես ԱՄՆ-ի հյուպատոս (այդ պարտականությունները կատարում էր Դանիայի և Շվեդիայի հյուպատոսը):[1]

Միջազգային պայմանների հետևանքով պայմանագրի բանակցությունները հետաձգվեցին մինչև 1820 թ., երբ պայմանագրի կնքման հնարավորություններն ու ցանկությունն ուսումնասիրելու նպատակով ԱՄՆ-ի պետքարտուղարությունը Կոստանդնուպոլիս գործուղեց Լյութեր Բրեդիշին:[2] 1820 թ. դեկտեմբերի 20-ին նա զեկուցում էր, որ առևտրական տեսանկյունից ցանկալի է բանակցություններ սկսել Օսմանյան կայսրության հետ՝ պայմանագիր ստորագրելու նպատակով, քանի որ ամերիկացի առևտրականները վճարում են 5% մաքսատուրք, երբ այլ երկրների առևտրականները՝ 3%: Բանակցությունների համար նախատեսվում էր ծախսել մոտավորապես 50 հազար ԱՄՆ դոլար: Սակայն հետագայում նա առաջարկեց հետաձգել բանակցությունները հունական հեղափոխության հետևանքով Թուրքիայում ստեղծված քաղաքական իրավիճակի պատճառով: Բարձր Դուռը ցանկանում էր սիրաշահել Մեծ Բրիտանիային, քանի որ վերջինս ընդդիմանում էր թուրք-ամերիկյան պայմանագրի կնքմանը:[3]

Հունաստանի անկախության պատերազմի ընթացքում ամերիկյան հասարակությունը բաժանվել էր առևտրականների, որոնք մի կողմից ցանկանում էին ընդլայնել առևտրական հարաբերություններն Օսմանյան կայսրության հետ և կրոնական շրջանակների ու միսիոներների շահերի միջև, մյուս կողմից, որոնք քննադատում էին Բարձր Դռան քաղաքականությունը՝ կարևորելով քրիստոնեության և հույների ինքնորոշման իրավունքի պաշտպանությունը: Ինչպես նշվեց, 1823 թ. ԱՄՆ-ի նախագահ Ջեյմս Մոնրոն հակված էր ճանաչելու Հունաստանի անկախությունը, սակայն կառավարությունը դիմադրում էր Օսմանյան կայսրության հետ առևտրի խոշոր ծավալների պատճառով:[4]

Վաշինգտոնի և Կոստանդնուպոլսի միջև պաշտոնական հարաբերությունների հիմքը դարձավ տնտեսական շահը: 1823 թ. ԱՄՆ-ի կառավարութ-

[1] Նույն տեղում:
[2] Լյութեր Բրեդիշ (1783-1863) - ԱՄՆ-ի քաղաքական գործիչ, իրավաբան:
[3] Նույն տեղում, էջ 8-9:
[4] Grabill Joseph L., նշվ. աշխ., էջ 36:

յունը հանձնարարեց Ջորջ Ինգլիշին[1] ուսումնասիրել պայմանագիր բանակցելու հնարավորությունները: Վերջինս առաջարկեց գաղտնի բանակցություններ սկսել Բարձր Դռան հետ՝ նկատի առնելով եվրոպական տերությունների հնարավոր բանսարկությունները: Արդյունքում 1825 թ. կառավարությունը հանձնարարեց ԱՄՆ-ի միջերկրական էսկադրայի հրամանատար Ջոն Ռոջերսին գաղտնի բանակցություններ վարել *Կապուդան* փաշայի հետ: Նա հրահանգ էր ստացել ապահովել ամերիկյան առևտրի իրավունքները բոլոր թուրքական նավահանգիստներում, նշանակել այդ քաղաքներում հյուպատոսներ, ինչպես նաև ապահովել Դարդանելում ազատ ելումուտի իրավունքներ ամերիկյան նավերի համար: 1828 թ. փետրվարի 7-ին *Կապուդան* փաշան պատասխանեց, որ Բարձր Դուռը պատրաստ է բանակցությունների, սակայն միակ ամերիկացին, որը ճանաչված էր օսմանյան կառավարության կողմից, Դեյվիդ Օֆֆլին էր: Վերջինս գտնվում էր Զմյուռնիայում, սակայն ԱՄՆ-ի կառավարությանը ներկայացնելու լիազորություններ չուներ:[2]

Այդ օրերին Օֆֆլին հանդիսանում էր Զմյուռնիայում գործող ամերիկացի գլխավոր առևտրականը: Նա էլ բնականաբար ղեկավարում էր գործարարների շարժումն Օսմանյան կայսրության հետ պաշտոնական հարաբերություններ հաստատելու ուղղությամբ: Նրա՝ Ֆիլադելֆիայի ընկերությունը հսկում էր Օսմանյան կայսրության հետ ապրանքաշրջանառության 30%-ը: Սակայն այդ շրջանում սուլթանական կառավարությունը հետաքրքրված չէր առևտրական կապեր ունենալու ԱՄՆ-ի հետ նրա հեռավորության պատճառով: Միևնույն ժամանակ Բարձր Դուռն ամերիկյան նավերի կարիք ուներ, քանի որ ԱՄՆ-ը բարձր համբավ ուներ նավաշինության ասպարեզում: Օֆֆլին փորձում էր շահագրգռել Ջոն Ադամսի վարչակազմը՝ Բարձր Դռան հետ պայմանագիր ստորագրելու հարցում: Իրավիճակը փոխվեց Օսմանյան կայսրության՝ Նավարինոյում տեղի ունեցած ծովային խոշոր պարտությունից հետո, երբ սուլթանի և իր եգիպտացի հպատակների միջև տեղի ունեցած ճակատամարտի ժամանակ Օսմանյան կայսրությունը կորցրեց իր 75 նավերից կազմված նավատորմի 60 նավը: Այս պարտությունները պատճառ դարձան ԱՄՆ-ի հետ պայմանագիր կնքելու համար:[3]

Վեց ամիս անց նախագահ Ադամսը նավապետ Ուիլյամ Քրեյնին և Դեյվիդ Օֆֆլիին նշանակեց որպես լիազոր ներկայացուցիչներ՝ բանակցություններ վարելու համար: Նրանց տրվեց 20 հազար ԱՄՆ դոլար՝ բանակցությունները սկսելու նպատակով: Նրանց հանձնարարվել էր բանակ-

[1] Ջորջ Ինգլիշ (1778-1828) - ամերիկացի արկածախնդիր, զինվոր, դիվանագետ, ծառայել է Եգիպտոսի խեդիվ Իսմայիլ փաշային, ընդունել է Իսլամ:
[2] Նույն տեղում, էջ 9:
[3] Նույն տեղում, էջ 36-37:

ցությունների ժամանակ ուշադիր լինել թարգմանության որակին, որը վերաբերում էր արտոնյալ իրավունքներին, քանի որ այդ մասին բազմաթիվ դժգոհություններ կային եվրոպական տերությունների ներկայացուցիչների կողմից: Սակայն Քրեյն-Օֆֆլի առաքելությունն ավարտվեց անհաջողությամբ, քանի որ թուրքական կողմը փորձեց պահպանել բարձր տուրքերն ամերիկացի առևտրականների համար, ինչպես նաև պահանջեց պայմանագրի դիմաց որպես նվեր ստանալ ԱՄՆ-ում կառուցված նավեր:[1]

1829 թ. սեպտեմբերի 12-ին ԱՄՆ-ի նախագահ Էնդրյու Ջեկսոնը[2] պայմանագրի կնքման համար բանակցելու լիազոր ներկայացուցիչներ նշանակեց նավապետ Ջեյմս Բիդդլին,[3] Դեյվիդ Օֆֆլիին և Օսմանյան կայսրության հետ աշխատող ամենահին ամերիկացի առևտրական Չարլզ Ռինդին: Պետքարտուղար Մարտին Վան Բյուրենն[4] իր հանձնարարականում նշել էր, որ ԱՄՆ-ի կառավարությունը համաձայն է 3,5%-ին, սակայն Ռինդը շարունակեց պնդել 3%-ի համար և հասավ հաջողության: Բանակցությունները սկսվեցին 1830 թ. փետրվարի 8-ին և մայիսի 10-ին ավարտվեցին պայմանագրի ստորագրումով: Ռինդը միայնակ էր ստորագրել պայմանագիրը, քանի որ ներկայացուցիչների միջև կային անհամաձայնություններ:[5]

Սուլթանին գոհացնելու նպատակով պայմանագրում ներառվել էր նաև գաղտնի հոդված, որի համաձայն՝ Բարձր Դուռը պետք է բանակցեր ԱՄՆ-ի շուտով նշանակվելիք դեսպանորդ-նախարարի հետ՝ պայմանագրի դիմաց ամերիկյան նավեր և շինափայտ ձեռք բերելու հնարավորության ուղղությամբ: Սակայն այդ հոդվածը չստորագրվեց, քանի որ որոշվեց, որ դա ընդամենը պայմանավորվածություն է: Դրա փոխարեն 1831-1832 թթ. ամերիկացի նավաշինարար Հենրի Էկֆորդն[6] ու նրա օգնական Ֆոստեր Ռոդսը սկսեցին թուրքական նավատորմի նորացման աշխատանքները:[7]

1830 թ. դեկտեմբերի 15-ին նախագահ Ջեկսոնը ներկայացրեց ստորագրված պայմանագիրը սենատի հաստատմանը, որը վավերացվեց հաջորդ տարվա փետրվարի 2-ին՝ այսպիսով նշանավորելով Միացյալ Նահանգների և Օսմանյան կայսրության միջև պաշտոնական հարաբերութ-

[1] Նույն տեղում, էջ 8-9:
[2] Էնդրյու Ջեկսոն (1767-1845) - ԱՄՆ-ի պետական և ռազմական գործիչ, 7-րդ նախագահ՝ Դեմոկրատական կուսակցությունից (1829-1837):
[3] Ջեյմս Բիդդլ (1783-1848) - ԱՄՆ-ի ռազմական գործիչ, կոմոդոր՝ առաջին կարգի նավապետ:
[4] Մարտին Վան Բյուրեն (1782-1862) - ԱՄՆ-ի պետական գործիչ և դիվանագետ, պետքարտուղար (1829-1831), նախարար Մեծ Բրիտանիայում (1831-1832), փոխնախագահ (1833-1837), 8-րդ նախագահ (1837-1844):
[5] Նույն տեղում, էջ 10:
[6] Հենրի Էկֆորդ (1775-1832) – Շոտլանդիայում ծնված ամերիկացի նավաշինարար, ճարտարապետ, ինժեներ և գործարար:
[7] Նույն տեղում, էջ 36-37:

յունների սկիզբը:[1]: Պայմանագիրը հնարավորություն էր տալիս կատարելու դիվանագիտական և հյուպատոսական հիմնարկությունների փոխանակություն երկու երկրների միջև: 1831 թ. մարտի 2-ին ԱՄՆ-ի կոնգրեսը 36 500 դոլար հատկացրեց՝ Կոստանդնուպոլսում դիվանագիտական առաքելություն հիմնելու նպատակով, իսկ ապրիլի 15-ին նախագահ Ալժիրում գլխավոր հյուպատոս Դեյվիդ Պորտերին[2] նշանակեց որպես հավատարմատար Օսմանյան կայսրությունում: Պորտերը Կոստանդնուպոլիս ժամանեց «Ջոն Ադամս» ռազմանավով, որը Դարդանել մտավ առանց թնդանոթների, իսկ պայմանագրի վավերագրերի փոխանակումը տեղի ունեցավ 1831 թ. հոկտեմբերի 3-ին:[3] Այդ իրադարձության կապակցությամբ Կոստանդնուպոլսում ԱՄՆ-ի դիվանագիտական առաքելության քարտուղար Ուիլյամ Հոդգսոնը գրում էր. «Մեր հայրենակիցները մեծ խանդավառությամբ են ընդունել պայմանագրի փոխանակումը: Առևտրական նավերի նավապետերն անմիջապես բարձրացնում են ամերիկյան և թուրքական դրոշները և սկսում հրավառություն»:[4]

1835 թ. Նիկոլսոն Փերիչը նշանակվեց ամերիկյան հյուպատոս Բուրսայում: Նա անվճար աշխատում էր երկու տարի, սակայն ամերիկյան միսիոներներ Շնայդերը և Փաուերսը, բարձր գնահատելով նրա աշխատանքը միսիոներների շահերը պաշտպանելու գործում, նշանակում են նրան աշխատավարձ՝ 500 դոլարի չափով: 1856 թ. Հարբֆորդ Սմիթը նշանակվեց Օսմանյան կայսրության առաջին հյուպատոս Նյու Յորքում:[5]

Միաժամանակ Բարձր Դռան կողմից մշտապես մտահոգություն էր արտահայտվում, որ Միացյալ Նահանգների կառավարությունը պատշաճ կերպով չի գնահատում նոր դիվանագիտական պաշտոնը: Պորտերը, որը ժամանել էր Կոստանդնուպոլիս վավերագրերը փոխանակելու նպատակով, շարունակում էր մնալ հավատարմատար, իսկ Բարձր Դուռը հույս էր հայտնում, որ այդ պաշտոնը պետք է ստանձնի առնվազն լիազոր նախարար:[6]

[1] Նույն տեղում, էջ 10-11:
[2] Դեյվիդ Պորտեր (1780-1843) - ԱՄՆ-ի ռազմական գործիչ և դիվանագետ, ծառայել է նավատորմում որպես սպա, կոմոդոր (1798-1825), Մեքսիկայի նավատորմի հրամանատար (1826-1829), լիազոր նախարար Բերբերյան պետություններում (1829-1831), հավատարմատար (1831-1839), լիազոր նախարար Օսմանյան կայսրությունում (1839-1843):
[3] Howard, Harry N., նշվ. աշխ., էջ 3-4; Gordon, Leland James, նշվ. աշխ., էջ 11-12:
[4] Archives of the American Embassy at Constantinople. Letters and Papers of the American Legation, (1830-1838).
[5] Gordon, Leland James, նշվ. աշխ., էջ 42-43:
[6] Archives of the American Embassy at Constantinople. Letters and Papers of the American Legation (1830-1838), 1832, July 10.

Իրավիճակը զգալի կերպով վատթարացրեց նաև նվերների հետ կապված հարցը, որը կենսական նշանակության խնդիր էր Արևելքում, մասնավորապես պայմանագրերի ստորագրման ժամանակ: Նվերները Բարձր Դռանն ուղարկելուց առաջ Պորտերն ամեն մեկի վրա նշել էր գինը, որպեսզի թուրք պաշտոնյաները վստահ լինեն, որ ԱՄՆ-ի կառավարությունն արժեքավոր նվերներ էր մատուցել: Սակայն *ռայս*-էֆենդին[1] քաղաքավարի հայտագիր ներկայացրեց, որում նշվում էր, որ եթե նվերներին կցված գինը համապատասխանում է իրականությանը, ապա նման նվերների համար մուծված գումարը շատ բարձր է: ԱՄՆ-ի ներկայացուցիչը վստահ էր, որ թուրքերը ցանկանում են ավելին պահանջել: Նա պատասխանում էր *ռայս*-էֆենդիին, որ վստահ է նվերների գնի համապատասխանության հարցում: Որոշ ժամանակ *ռայս*-էֆենդին սպառնում էր վերադարձնել նվերները, սակայն այդպես էլ դա չարվեց, և հարցը վերջնականապես փակվեց:[2]

Համաձայն պայմանագրի 7-րդ հոդվածի՝ ամերիկյան առևտրական նավերն արտոնյալ իրավունք էին ստացել նման պայմանագրեր ստորագրած մյուս պետությունների հետ միասին: Նրանք իրավունք ունեին մուտք գործել օսմանյան ջրերը, անցնել նեղուցներն ու մուտք գործել Սև ծով: Պայմանագրում ոչինչ ասված չէր ռազմանավերի մասին, թեև այդ ժամանակ ԱՄՆ-ի համար դա առանձնահատուկ նշանակություն դեռևս չուներ: Բացի դրանից, համաձայն կայսրությունում գործող «հնագույն կարգի», ռազմանավերի մուտքը Դարդանել և Բոսֆոր խաղաղ ժամանակ արգելված էր:[3]

1830 թ. պայմանագրի ստորագրումից հետո առևտրի ծավալն երկու երկրների միջև աճեց. 1850 թ. այն հասավ մեկ միլիոնի, իսկ 1862-ին՝ մեկ և կես միլիոն դոլարի:[4] Այդ տարիներին Թուրքիայից ԱՄՆ ներմուծվող հիմնական ապրանքատեսակներն էին ափիոնը, մրգերն ու ընկույզը, արծաթը, մորթը, կաշին և չմշակված բուրդը, իսկ ԱՄՆ-ից Թուրքիա էր արտահանվում մշակված բուրդ և ալկոհոլային խմիչք:[5] Միաժամանակ ամերիկյան առևտուրն Օսմանյան կայսրության հետ զգալի աճ չէր կարողանում ապահովել, որի պատճառներն էին Կոնգրեսի կողմից 1850-ական թթ. բարձրացված տարիֆները, ամերիկյան կառավարության հետաքրքրության պա-

[1] Օսմանյան կայսրության արտաքին գործերի նախարարությունը ստեղծվեց 1836 թ., մինչ այդ արտաքին հարաբերությունների ոլորտին վերաբերող խնդիրներով զբաղվում էր օսմանյան դիվանի քարտուղարների ղեկավարը՝ *ռայսուլքյութթափը* (*reisülküttap*) կամ *ռայս*-էֆենդին:
[2] Archives of the American Embassy at Constantinople. Letters and Papers of the American Legation, 1830-1838, 1830, November 19.
[3] Howard, Harry N., նշվ. աշխ., էջ 2-3:
[4] Gordon, Leland James, նշվ. աշխ., էջ 44-45:
[5] Նույն տեղում, էջ 48:

կասն Օսմանյան կայսրության հանդեպ, Բրիտանիայի և եվրոպական մյուս տերությունների մրցակցությունը:[1]

Միաժամանակ պայմանագրի արտոնյալ դրույթներից սկսեցին օգտվել ինչպես առևտրականները, այնպես էլ այդ ընթացքում Օսմանյան կայսրություն ժամանող ամերիկացի միսիոներները, որոնք արտոնյալ իրավիճակում հայտնվեցին երկրի հետադիմական օրենսդրության պայմաններում:[2]

Թեև ամերիկյան առևտրի ծավալներն Օսմանյան կայսրության հետ շատ մեծ չէին, բայց ԱՄՆ-ի ռազմական առագաստանավերը սկսեցին ավելի հաճախ հայտնվել Միջերկրականի ջրերում և նեղուցներում՝ ամերիկյան շահերի պաշտպանությունն ապահովելու նպատակով: Այս հանգամանքը խնդիրներ սկսեց ստեղծել ԱՄՆ-Օսմանյան կայսրություն հարաբերությունների համար, քանի որ այդ գործողությունները հակասում էին նեղուցներին վերաբերող միջազգային պայմանագրերին: Այս իրավիճակը շարունակվեց մինչև 1923 թ., երբ ԱՄՆ-ը միացավ Լոզանի պայմանավորվածություններին:

Նեղուցների հարցում առավելություններ և հատուկ կարգավիճակ ուներ Ռուսաստանը: Համաձայն 1798, 1805 և 1833 թթ. պայմանագրերի՝ Ռուսաստանն իրավունք էր ստացել փակ պահել նեղուցները, այսինքն՝ մուտքը դեպի Սև ծով ոչ զետային ռազմանավերի համար, իսկ 1833 թ., ըստ Ունքյար Իսքելեսիի պայմանագրի, սուլթանը պարտավորվել էր փակ պահել նեղուցները բոլոր օտարերկրյա ռազմանավերի համար այն պարագայում, եթե Ռուսաստանը ներգրավվեր պաշտպանական բնույթի պատերազմի մեջ:

1840 թ. հուլիսի 15-ի և 1841 թ. հուլիսի 13-ի Լոնդոնի կոնվենցիաների համաձայն՝ նեղուցներում ապահովվում էր առևտրական ազատություն խաղաղության ժամանակ, իսկ ռազմանավերի մուտքն արգելվում էր բոլոր ժամանակներում: Այսինքն, եթե առաջ սուլթանը կարող էր թույլ տալ թեթև ռազմանավերի մուտքը նեղուցներ Օսմանյան կայսրությունում հավատարմագրված օտարերկրյա առաքելությունների խնդրանքով, ապա կոնվենցիաների համաձայն՝ քանի դեռ Օսմանյան կայսրությունը պատերազմի մեջ չէր, ռազմանավերի մուտքն արգելվում էր: Այս սկզբունքները հաստատվեցին 1856 թ. մարտի 30-ի պայմանագրով:[3]

ԱՄՆ-ն այս միջազգային գործիքների անդամ չէր և որևէ մտադրություն չուներ ենթարկվելու այդ սահմանափակումներին: Արդյունքում ամերիկյան ռազմանավերը կարողանում էին մուտք գործել Դարդանել: Նման դեպք տեղի ունեցավ, օրինակ, 1851 թ., երբ ԱՄՆ-ի պետքարտուղար Դենիել Վեբստերը[1] հանձնարարեց Օսմանյան կայսրությունում ամերիկյան նախարար Ջորջ Մարշին[2] զբաղվել Հունգարական հեղափոխության պարտությունից հետո Օսմանյան կայսրություն փախած հունգարացի հեղափոխական Լայոշ Կոշուտին[3] Միացյալ Նահանգներ տեղափոխելու հարցով: Սեպտեմբերի 7-ին այդ նպատակով ռազմանավ «Միսսիսիպին» մտավ Դարդանել, որտեղ և տեղի ունեցավ Կոշուտի փոխադրումն ամերիկյան ռազմանավ և նրա տեղափոխումն ԱՄՆ:

Իսկ 1858 թ. ԱՄՆ-ի դիվանագիտական ներկայացուցիչ, դեսպանորդ-նախարար Ջեյմս Ուիլյամսի խնդրանքով Կոստանդնուպոլիս ժամանեց 50 թնդանոթ ունեցող մեծ ֆրեգատ «Վաբաշը»: Սուլթանն անձամբ մասնակցեց ռազմանավի վրա տեղի ունեցած ընդունելությանը՝ ի պատասխան մեկ տարի առաջ օսմանյան ծովային սպաների պատվին ԱՄՆ-ում ցուցաբերված ընդունելության: Այդ կապակցությամբ Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան և Ռուսաստանը բողոք ներկայացրին Բարձր Դռանը: Մասնավորապես, Ռուսաստանի կառավարությունը, ի դեմս արտաքին գործերի նախարար Ալեքսանդր Գորչակովի,[4] նշել էր, որ որևէ ոչ բարեկամական զգացմունքներ չի տածում ԱՄՆ-ի հանդեպ, սակայն բողոքում է Փարիզի պայմանագրի դրույթները խախտելու համար:

1859 թ. հունվարի 14-ին պետքարտուղար Լյուիս Կասսը[5] հայտնում էր Ռուսաստանի կառավարությանը, որ ԱՄՆ-ը չի ստորագրել Փարիզի պայմանագիրը, ուստի իր գործողությունները կարող է քննարկել միմիայն Բարձր Դռան հետ:[6]

Դիվանագիտական հարաբերությունների հաստատումից և Կոստանդնուպոլսում դիվանագիտական ներկայացուցչության հիմնումից ի վեր ամերիկացի դիվանագետներն այնքան «պարապ էին և անգործ», որ շատ հաճախ Օսմանյան կայսրությունում հաստատված հեղինակավոր միսիոներներն էին դիվանագիտական առաքելություններ իրականացնում, ինչպես օ-

[1] Grabill, Joseph L., նշվ. աշխ., էջ 37-38:
[2] Նույն տեղում, էջ 36-37:
[3] Howard, Harry N., նշվ. աշխ., էջ 4-5:

[1] Դենիել Վեբստեր (1782-1852) - ԱՄՆ-ի քաղաքական և պետական գործիչ, սենատոր Մասաչուսետսից (1827-1841, 1845-1850), պետքարտուղար (1850-1852):
[2] Ջորջ Մարշ (1801-1882) – ամերիկացի դիվանագետ և բանասեր, նախարար Օսմանյան կայսրությունում (1849-1854), Իտալիայում (1861-1882):
[3] Լայոշ Կոշուտ (1802-1894) – հունգարացի պետական գործիչ, հեղափոխական, իրավաբան, Հունգարիայի վարչապետ և ղեկավար-նախագահ (1848-1849) Հունգարական հեղափոխության ժամանակ:
[4] Ալեքսանդր Գորչակով (1798-1883) – Ռուսաստանի պետական գործիչ, արտաքին գործերի նախարար (1856-1882):
[5] Լյուիս Կասս (1782-1866) - ԱՄՆ-ի պետական գործիչ և դիվանագետ, պատերազմի քարտուղար (1831-1836), դեսպան Ֆրանսիայում (1836-1842), սենատոր Միչիգանից (1849-1857), պետքարտուղար (1857-1860):
[6] Նույն տեղում, էջ 6-7:

ինակ՝ Ռոբերտ քոլեջի նախագահ Ջորջ Ուոշբըրնը[1] կամ Սիրիական բողոքական քոլեջի տնօրեն Հովարդ Բլիսը, որոնք շատ հաճախ հարցեր էին քննարկում և լուծում մասնավորապես Մեծ Բրիտանիայի դեսպանի հետ: Հետագայում՝ 20-րդ դարի սկզբին տեղի ունեցած զարգացումները ստիպեցին Վաշինգտոնին բարձրացնել դիվանագիտական առաքելության ղեկավարի մակարդակը և նշանակել դեսպաններ՝ սկսած 1906 թ.-ից, ինչպես նաև ստեղծել պետքարտուղարությունում մերձավորարևելյան հարցերի բաժին 1909 թ.:[2]

Ինչպես գրում էին արևելագետներ Լյուիս Թոմասն ու Ռիչարդ Ֆռայը, 19-րդ դարի ընթացքում ԱՄՆ-Օսմանյան կայսրություն «հարաբերությունները երբեք կարևոր նշանակություն չունեցան կողմերի համար»: «Տրանսպորտային և հաղորդակցության միջոցների զարգացումը երկու պետություններն ավելի հասանելի դարձրին միմյանց,- նշում էին հեղինակները,- սակայն իրական տնտեսական, քաղաքական և մշակութային շահերի բացակայությունն իրական մոտեցման չբերեց»:[3]

Չնայած Օսմանյան կայսրության ԱՄՆ-ի համար «ոչ կարևոր լինելու» հանգամանքին՝ ամերիկյան կառավարությունը հաճախ զբաղվում էր իր քաղաքացիների անվտանգության պաշտպանության խնդիրներով: 1840 թ. պետքարտուղար Վեբստերը հարց բարձրացրեց բողոքական միսիոներների և հաստատությունների պաշտպանության մասին: Ամերիկացիները պարբերաբար ճնշում էին գործադրում Բարձր Դռան վրա՝ օրենսդրական փոփոխություններ կատարելու հարցում: Մյուս կարևոր խնդիրը Թուրքիա վերադարձած և ԱՄՆ-ի հպատակություն ստացած հազարավոր մարդկանց հարցն էր:[4]

2. Միսիոներական շարժման սկիզբն ու շարժառիթները

ԱՄՆ-ի «մշակութային իմպերիալիզմի» տեսության իրականացման գործում մեծ դերակատարություն ունեցան ոչ պետական դերակատարները՝ միսիոներները, ուսուցիչներն ու բժիշկները, որոնք նպաստում և աջակցում էին արտաքին քաղաքականության սկզբունքների իրականացմանը, օտար երկրներում ԱՄՆ-ի ներկայության ազդեցությանը: Այլ ազգերի կողմից ժողովրդավարական և կապիտալիստական արժեքներ յուրացնելու ամերիկյան համառությունը «վիակատար իմպերիալիստական» բնույթ էր կրում: Ամերիկացիները ճնշում էին գործադրում կուբացիների վրա, որպեսզի նրանք հրաժարվեն քաղաքական բռնությունների մշակույթից կամ պատրաստում ֆիլիպինցիներին ինքնիշխանության համար, որն ամբողջությամբ հիմնված էր ԱՄՆ-ի մոդելի վրա: ԱՄՆ-ը պահանջում էր, որ իր ազդեցության ներքո գտնվող երկրները ձևափոխեն իրենց հասարակություններն ամերիկյան արժեքների հիմքի վրա: Այդ «բարեփոխումները» նպատակաուղղված էին տնտեսությունների կայունացմանը, ազնիվ, գործունյա և ներկայացուցչական կառավարություններ պատրաստելուն, առողջապահության և բժշկության նոր մեթոդներ կիրառելուն, հետապնդում էին համապատասխան մշակութային փոփոխություններ հասարակություններում:[1]

Ամերիկյան միսիոներությունը Նոր աշխարհի մշակույթը քարոզող ոչ պետական դերակատարների ամենանշանավոր խումբն էր: Ամերիկյան միսիոներական պատմության մեջ 19-րդ դարի սկիզբը համարվում է ամենից եռանդունը: Բողոքականության և Ամերիկայի անկախ պետականության գաղափարներին ու սկզբունքներին հավատարիմ և շատ դեպքերում իրենց գործողություններն ԱՄՆ-ի կառավարության հետ չհամաձայնեցնող միսիոներները մնացյալ աշխարհում համապատասխան փոփոխությունների, արմատական ձևափոխությունների գիտակից գործակալներն էին: Բացի կրոնական գործունեությունից՝ նրանք իրականացնում էին նաև զանազան կրթական և բժշկական ծրագրեր:

Մերձավոր Արևելքը, մասնավորապես Օսմանյան կայսրությունը՝ իր բազմակրոն և բազմազգ բնակչությամբ, դարերի ընթացքում գտնվում էր եվրոպական տերությունների և եկեղեցիների ուշադրության կենտրոնում: Եվրոպական տերությունները մի կողմից, իսկ միսիոներները մյուս կողմից, տարբեր պատճառներից ելնելով, կրոնական շահեր էին հետապնդում Օսմանյան կայսրությունում: Որոշ տերություններ չէին կարողանում մոռանալ, որ Կոստանդնուպոլիսը ժամանակին հանդիսացել էր արևելյան քրիստոնեության կենտրոնը, իսկ միսիոներները պարարտ հող էին հայտնաբերել՝ արևելյան քրիստոնյաների «հոգիները որսալու» նպատակով: Տերությունները մրցակցում էին միմիանց հետ՝ Օսմանյան կայսրությունում հատուկ արտոնություններ ստանալու նպատակով օգտագործելով այս կամ այն կրոնական փոքրամասնությունների վիճակը:

Վաղ շրջանում սուլթանն իրավունք էր տվել Ֆրանսիային հովանավորել կաթոլիկներին, հետագայում Ռուսաստանն իրավունք ստացավ հովանավորել ուղղափառներին: Իրենց հերթին Օսմանյան կայսրության քրիս-

[1] Ջորջ Ուոշբըրն (1833-1915) – ամերիկացի կրթական գործիչ, փիլիսոփա, 1870 թ.-ից՝ Կոստանդնուպոլսի Ռոբերտ քոլեջի նախագահի պաշտոնակատար, նախագահ:
[2] Grabill, Joseph L., նշվ. աշխ., էջ 39:
[3] Thomas, Lewis V. and Frye, Richard N., The United States and Turkey and Iran, Cambridge, Massachusetts: Harvard University Press, 1951, p. 139.
[4] Նույն տեղում, էջ 39-40:

[1] Fry, Joseph A., նշվ. աշխ., էջ 63-64:

տոնյաները, առանձին համայնքներն ու անհատներն օգտվում էին այդ իրավիճակից և բողոքում երկրի գրեթե բոլոր նահանգներում գործող եվրոպական տերությունների հյուպատոսներին իրենց դեմ կիրառվող վերաբերմունքի համար: Եվրոպական տերությունները բարեհաջող կերպով օգտագործում էին քրիստոնյա համայնքների վիճակը՝ իրենց սեփական շահերից ելնելով: Օսմանյան կայսրության քրիստոնյաներն էլ եվրոպական պաշտպանության մեջ ճանապարհ էին տեսնում իրենց իրավունքներն ու ազատություններն ապահովելու, իսկ հետագայում նաև ինքնավարություն կամ անկախություն ստանալու համար:

Միսիոներների հայտնությունը նոր «հարթություն» ստեղծեց Օսմանյան կայսրությունում: Մի կողմից, միսիոներներն արտաքին աշխարհին տեղեկատվություն էին տրամադրում քրիստոնյաների վիճակի մասին, իսկ մյուս կողմից, նրանք մշտապես պահանջներ էին ներկայացնում կայսրության պետական մարմիններին՝ քրիստոնյաներին լայն ազատություններ տրամադրելու մասին, որն էլ «լուրջ լարվածություններ» էր ստեղծում: Նրանց գործունեությունն առաջացնում էր արևելյան եկեղեցիների առաջնորդների, մահմեդականների, օսմանյան կառավարության և նույնիսկ դիվանագիտական ներկայացուցիչների դժգոհությունը:[1]

Օսմանյան կայսրություն մեկնող ամերիկյան առաջին միսիոներների նպատակը մահմեդականներին և հրեաներին «ուշքի և դարձի բերելուն» մեջ էր կամ «Մերձավոր Արևելքի քրիստոնյաներին վերակենդանացնելը»: Առաջին բողոքականներն այս տարածաշրջան էին եկել դեռևս 16-րդ դարում, սակայն նրանց մշտական գործունեության սկիզբն է համարվում 1810 թ., երբ Մերձավոր Արևելք ժամանեց բրիտանական «Արևելյան Հնդկաստան ընկերության» (East India Company) քահանա Հենրի Մարտինը: Վերջինս շուտով մահացավ, և Անգլիայի ու Ամերիկայի բողոքականները դարձրին նրան «միսիոներական պատեհության» խորհրդանիշ: Շուտով Օսմանյան կայսրություն ժամանեցին անգլիական «Եկեղեցու միսիոներական ընկերության» (Church Missionary Society) անդամները, իսկ 1820 թ.՝ «երիտասարդ և ճարպիկ» պատվելիներ Լիվայ Փարսոնզն ու Փլինի Ֆիսկը, որոնք ներկայացնում էին Միաբանության եկեղեցու «Արտաքին առաքելությունների հանձնակատարների ամերիկյան խորհուրդը» (American Board of Commissioners for Foreign Missions): Նրանք դուրս էին եկել Բոստոնից 1819 թ. նոյեմբերի 3-ին «Սելլի Էնն» նավով, հասել Մալթա դեկտեմբերի 23-ին, հանգստացել տեղի միսիոներական կայանակետում և 1820 թ. հունվարի 9-ին ճանապարհ ընկել դեպի Զմյուռնիա: Վեց օր անց նրանք ժամանեցին

[1] Salt, Jeremy, Imperialism, Evangelism and the Ottoman Armenians, 1878-1896, Portland, Oregon: Frank Cass, 1993, p. 30.

Զմյուռնիայի նավահանգիստ, ուր տարեկան տասնյակ ամերիկյան նավեր էին այցելում:[1]

Իր իշխանության «բարձրության և փառքի» շրջանում գտնվող օսմանյան կառավարությունը որևէ արգելք չէր ստեղծում միսիոներների աշխատանքի համար: Զմյուռնիա ժամանելուց անմիջապես հետո Ֆիսկը հաղորդում էր «Ամերիկյան խորհրդին», որ «քրիստոնյա միսիոներները կարող են բնակություն հաստատել Թուրքիայի տարածքի յուրաքանչյուր մասում՝ ...առանց կառավարության կողմից միջամտության նույնիսկ մտադրության»:[2]

Առաջին շրջանում բրիտանացի միսիոներները զգալի աջակցություն ցուցաբերեցին ամերիկյան առաքելություններին: Ամերիկացի միսիոներները նշում էին, որ «մեծապես կախման մեջ էին գտնվում անգլիական միսիոներական ընկերությունների տեղեկություններից, խորհուրդներից և աջակցությունից»: Միսիոներներին աջակցում էին նաև Մեծ Բրիտանիայի դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունները:[3]

Օսմանյան կայսրություն ժամանած առաջին միսիոներները տպավորված էին այն փաստով, որ կայսրության բոլոր ժողովուրդներից հայերն ամենից բացն էին բողոքական միսիոներների գործունեության հանդեպ: 1821 թ. Յերուսաղեմում Փարսոնզը հանդիպել էր մի քանի հայ ուխտավորների, որոնք ջերմ վերաբերմունք էին ցուցաբերել միսիոներին և առաջարկել դիմել «Ամերիկյան խորհրդին»՝ ավետարանական եկեղեցիներին Հայաստանի իրավիճակի մասին տեղեկություններ տրամադրելու խնդրանքով: 1827 թ. Սիրիայի առաքելության միսիոներներ Բիրդն ու Ուիլյամ Գուդելը[4] երկու Բեյրութի եկեղեցում ընդունեցին հայ օգնականի՝ եպիսկոպոս Դիոնիսիուսին և վարդապետ Գրիգորին, որոնք դարձան միսիոներների առաջին հայ աշխատավորները:[5]

Փարսոնզն ու Ֆիսկն ԱՄՆ-ի Մասաչուսետս նահանգի Ուիլյամս քոլեջի ուսանողներ էին, որի ղեկավարն էր Սեմյուել Միլզը: 1810 թ. Միլզն ու իր գաղափարակիցները, որոնք այդ ժամանակ ուսանում էին Անդովերի աստվածաբանական սեմինարիայում, համոզեցին միաբանության և պրեսբիտերական պաշտոնյաներին և հիմնադրեցին «Արտաքին առաքելությունների հանձնակատարների ամերիկյան խորհուրդը»՝ առաջին կազմակերպությունը Միացյալ Նահանգներում, որը պետք է զբաղվեր միսիոներական արտա-

[1] Grabill, Joseph L., նշվ. աշխ., էջ 4-5; Gordon, Leland James, նշվ. աշխ., էջ 221:
[2] Gordon, Leland James, նշվ. աշխ., էջ 227:
[3] Salt, Jeremy, նշվ. աշխ., էջ 30:
[4] Ուիլյամ Գուդել (1792-1867) - ամերիկացի միսիոներ, հայ-թուրքական բողոքական առաքելության հիմնադիր, Աստվածաշնչի հայատառ թուրքերեն թարգմանության հեղինակ:
[5] Arpee, Leon, A Century of Armenian Protestantism. 1846-1946, New York: The Armenian Missionary Association of America, Inc., 1946, p. 5.

սահմանյան առաքելություններով: «Ամերիկյան. խորհուրդը» կարողացավ իր գործունեության մեջ ընդգրկել Նոր Անգլիայի հասարակայնության տարբեր շրջանակների: «Երկրորդ մեծ արթնացումն» ու նրա աստվածաբանությունը պրակտիկ քրիստոնեության մասին, որի հիմնադիրն էր Սեմյուել Հոպկինսը,[1] առաջ մղեց ոչ միայն արտաքին առաքելությունների հարցը, այլև «հակաստրկատիրական», «չափավորության» կամ «զսպվածության» և «խաղաղասիրական» շարժումների ծնունդը: Յունիտարիանիզմի նկատմամբ արձագանքն օգնեց ավանդական Կալվինիզմին որոշակի դինամիզմ հաղորդելուն: Ընդհանուր գաղափարն այն էր, որ արտաքին առաքելությունների գլխավոր նպատակը պետք է դառնար աշխարհի բարոյական վերակառուցումը, այն է՝ պատերազմների վերացումը, աշխարհի բոլոր անկյուններում դպրոցի և եկեղեցու հիմնադրումը, յուրաքանչյուր ընտանիքի համար Աստվածաշունչ կարդալու և աղոթելու հնարավորության ստեղծումը: Յեյլի քոլեջի նախագահ Տիմոթի Դուայթը նույնիսկ համոզված էր, որ սինագոգի, պագոդայի, մզկիթի և կաթոլիկ տաճարի ժամանակները մոտենում են իրենց ավարտին: Դուայթի գաղափարն այն էր, որ արտասահմանյան առաքելությունների հիմնական նպատակն Նոր աշխարհի բողոքականության արտահանումն ու տարածումն էր: Այս ծրագիրը պետք է ուղեկցվեր Ասիայում և Աֆրիկայում ամերիկյան առևտրականների ակտիվ գործողություններով՝ ԱՄՆ-ի ռազմածովային նավատորմի ուղեկցությամբ:[2]

Այսպիսով, նման «հարաբերական կոսմոպոլիտ» գաղափարներով տոգորված, 19-րդ դարի սկզբին «Ամերիկյան խորհուրդը» սկսեց արտասահման գործուղել իր առաջին առաքելությունները: Երկրի մաքրակրոն (պուրիտան) շրջաններից, Պողոս առաքյալի օրինակով հավաքագրելով տղամարդկանց և կանանց, «Ամերիկյան խորհուրդը» նվիրյալ անձնավորություններ գործուղեց Հավայան կղզիներ, Չինաստան և Մերձավոր Արևելք: Մասնավորապես Փարսոնզն ու Ֆիսկը ստացել էին «Ամերիկյան խորհրդից» հետևյալ հանձնարարականները՝ սովորել լեզուներ, հավաքել տեղեկատվություն, տարածել ավետարաններ և կրոնական գրականություն, չանարգել օրենքներն ու ավանդույթները: Այս միջոցները պետք է օգնեին ավետարանականացնել մահմեդականներին ու հրեաներին: Պուրիտան մտածելակերպ ունեցողները համոզված էին, որ Սուրբ երկրում ապրող ոչ քրիստոնյաները շատ շուտով կխոնարհվեն «բողոքական հայտնության» առջև, ինչին կհետևի աշխարհում «Աստծո թագավորության» հաստատումը: Փարսոնզն ու Ֆիսկն իրենց ուղերձը պետք է հասցնեին նաև ավանդական եկեղեցիների ժողովուրդներին, որոնց «Ամերիկյան խորհուրդը» համարում էր «նոմինալ» քրիստոնյաներ:[1]

«Ամերիկյան խորհրդի» կազմավորման առաջին տարիներին ղեկավար կազմի մեջ էին մտնում այնպիսի նշանավոր քաղաքական գործիչներ և հարուստ առևտրականներ, ինչպիսիք էին Ջոն Ջեյը[2], Էլիաս Բուդինոտը,[3] Ուիլյամ Ֆիլիպսը,[4] Ռոբերտ Ռալստոնը,[5] որոնք մեծ ներդրում ունեցան միսիոներական շարժման կազմակերպման գործում: ԱՄՆ-ի գործարարները ֆինանսապես և բարոյապես սատարում էին Օսմանյան կայսրությունում գործող միսիոներներին: Երբ առաջին միսիոներները ժամանեցին Զմյուռնիա, նրանք ջերմ ընդունելություն ստացան եվրոպացի և ամերիկացի առևտրականների կողմից: Սուլթանի մոտ այդ ժամանակ աշխատող հայտնի ամերիկացի նավաշինարար Հենրի Էկֆորդը նույնպես մեծ ներդրում էր ունեցել միսիոներական շարժման ձևավորման գործում:[6]

«Ամերիկյան խորհուրդը» որոշում կայացրեց առաքելություն ստեղծել Օսմանյան կայսրությունում, քանի որ այն համարվում էր «մահմեդական աշխարհի կենտրոնը», «ժամանակի առաջատար երկրներից մեկը», ուներ 35 մլն բնակչություն, և որի տարածքն ընդգրկում էր երեք մայրցամաք: Սկիզբ դրվեց մի ծրագրի, որը «հետաքրքիր և կարևոր գլուխ բացեց թուրք-ամերիկյան հարաբերությունների պատմության մեջ»:[7] Որոշ հեղինակներ միսիոներների գործունեությունը բնութագրում էին որպես «խաղաղ խաչակրաց արշավանք»:[8]

Առաջին առաքելությունը բացվեց 1823 թ. Պաղեստինում, սակայն 1827 թ. այն լքվեց ստեղծված դժվարությունների պատճառով: 1925 թ. և 1828 թ. կայաններ բացվեցին Բեյրութում և Զմյուռնիայում, սակայն երկուսն էլ փակվեցին 1830 թ. աշխատակիցների մահվան և երկրում ստեղծված ծանր կացության հետևանքով:[9]

---

[1] Սեմյուել Հոպկինս (1721-1803) – Միացյալ Նահանգների ուշ գաղութային շրջանի աստվածաբան, «նոր աստվածաբանության» կամ «հոպկինսիանիզմի» հիմնադիր:
[2] Grabill, Joseph L., նշվ. աշխ., էջ 5:

[1] Նույն տեղում, էջ 6:
[2] Ջոն Ջեյ (1745-1829) - ԱՄՆ-ի հիմնադիր հայրերից, քաղաքական գործիչ և դիվանագետ, Կոնտինենտալ կոնգրեսի նախագահ (1778-1779), նախարար Իսպանիայում (1779-1782), արտաքին գործերի քարտուղար (1784-1790), Գերագույն դատարանի գլխավոր դատավոր (1789-1795), Նյու Յորքի նահանգապետ (1795-1801):
[3] Էլիաս Բուդինոտ (1740-1821) - ԱՄՆ-ի պետական գործիչ և իրավաբան, Կոնտինենտալ կոնգրեսի նախագահ (1782-1783):
[4] Ուիլյամ Ֆիլիպս (1750-1827) - Բոստոնի առևտրական, քաղաքական գործիչ և բարերար:
[5] Ռոբերտ Ռալստոն (1761-1836) – Ֆիլադելֆիայի առևտրական և բարերար:
[6] Payaslian, Simon, նշվ. աշխ., էջ 10-11:
[7] Gordon, Leland James, նշվ. աշխ., էջ 221:
[8] Cox, Samuel S., Diversions of a Diplomat in Turkey, New York: Charles L. Webster & Co., 1887, p. 292.
[9] Gordon, Leland James, նշվ. աշխ., էջ 221:

1828 թ. մայիսին, երբ Նավարինոյի ճակատամարտից հետո միսիոներներին վտանգ էր սպառնում աճող մահմեդական մոլեռանդության պատճառով, Բեյրութի միսիոներներն ու նրանց հայ օգնականները մեկնեցին Մալթա, որտեղ տեղակայված էր բողոքականների կենտրոնականը: Այստեղ Գուդելը Դիոնիսիուսի օգնությամբ թարգմանեց Աստվածաշունչը հայատառ թուրքերեն: Հայատառ թուրքերեն Նոր կտակարանը տպագրվեց 1831 թ., իսկ Հին կտակարանը՝ 1842 թ.: Հետագայում Գուդելի հայատառ-թուրքերեն Աստվածաշունչը տպագրվեց 1863 թ.:[1]

Բեյրութի կայանը վերաբացվեց 1831 թ., միաժամանակ միսիոներական առաքելություն մեկնեց դեպի Հայաստան և Վրաստան՝ հետազոտություններ կատարելու նպատակով: 1831 թ. Կոստանդնուպոլսում ամերիկյան դիվանագիտական ներկայացուցչության հետ միաժամանակ բացվեց նաև միսիոներական կայանը: Երկու տարի անց վերաբացվեց Զմյուռնիայի կայանը, և 1834 թ. նոր կայաններ հաստատվեցին Բուրսայում և Տրաբզոնում: Այդ ժամանակվանից միսիոներական առաքելության գործունեությունն արագորեն սկսեց ընդլայնվել:[2]

Յերուսաղեմ այցելելուց հետո Փարսոնզն առողջական պատճառով մեկնեց Եգիպտոս՝ Ալեքսանդրիա, որտեղ էլ մահացավ: Ֆիսկը ժամանակավորապես մեկնեց Մալթա՝ բողոքական առաքելությունների կենտրոնական, որտեղ իրեն են միանում նոր միսիոներներ Անդովերից: Քանի որ Յերուսաղեմում գործունեություն ծավալելու հնարավորություն չկար, իսկ Զմյուռնիայի վիճակն ապահով չէր Հունաստանի անկախության համար մղվող պատերազմի հետևանքով, Ֆիսկը որոշեց ամերիկյան առաքելության կենտրոնը հիմնել Բեյրութում, որտեղ Բրիտանիան ուներ հյուպատոս, և գոյություն ուներ ռազմածովային պաշտպանության հնարավորություն:

Սակայն Բեյրութում հաստատված քրիստոնյա համայնքներն ուժեղ ընդդիմություն հանդես բերեցին ԱՄՆ-ից ժամանած բողոքականների գործունեության նկատմամբ: Վերջիններս ակտիվորեն փորձում էին քարոզել քրիստոնեության իրենց «բրենդը» նամակների և մասնավոր քննարկումների միջոցով, քանի որ հանրային քարոզն իրենց համար արգելված էր: Բողոքական ղեկավարները Միացյալ Նահանգներում չէին հասկանում, որ «Երկրորդ մեծ արթնացման» անհատական և բարեպաշտ մոտեցումը վտանգ էր պարունակում Մերձավոր Արևելքի եկեղեցիների համայնքային, ծեսային, բարդ քաղաքական համակարգի, այսինքն՝ գոյություն ունեցող *ստատուս քվոյի* դեմ: Օսմանյան կայսրության քրիստոնյա համայնքները «չափազանց պահպանողական էին»: Օսմանյան օրենքն իր հերթին պաշտպանում

[1] Arpee, Leon, նշվ. աշխ., էջ 5-6:
[2] Gordon, Leland James, նշվ. աշխ., էջ 221:

էր գոյություն ունեցող իրավիճակը, որը հիմնվում էր ոչ թե յուրաքանչյուր անհատի քաղաքացիական իրավունքների և բոլոր քաղաքացիների ազատությունների, ինչպես դա տեղի էր ունենում ԱՄՆ-ում, այլ քրիստոնյա և մահմեդական ավանդույթների վրա: Եթե յուրաքանչյուր անհատի իրավունքն ազատորեն ընտրելու իր կրոնն այդ օրերին դառնում էր օրինակելի Միացյալ Նահանգներում, ապա Թուրքիայում դա համարվում էր ոչ օրինական, իսկ կրոնափոխ մահմեդականները դատապարտվում էին մահվան:[1]

Առաջին ամերիկյան միսիոներների գործունեությունը Բեյրութում ավարտվեց անհաջողությամբ: Միսիոներները նախաձեռնեցին դպրոց հրեա երեխաների համար, ուր փորձում էին ընթերցել Աստվածաշունչը, սակայն երեխաները վաճառում էին գրքերը շուկայում որպես թուղթ: 1825 թ. գարնանը Նազարեթի մոտ ավազակը մտրակով ծեծեց Ֆիսկին, որը հիվանդացավ և աշնանը մահացավ: Միաժամանակ մարոնիտների և հույն ուղղափառ եկեղեցիների հոգևորականությունն ամեն ինչ արեց՝ թույլ չտալու ամերիկյան միսիոներների կրթական գործունեության շարունակությունը: Օսմանյան պաշտոնյաներն էլ իրենց հերթին արգելեցին Աստվածաշնչի տարածումը բնակչության շրջանում: Կրոնափոխ էին եղել միայն հայ և սիրիացի վարձված ուսուցիչներն ու թարգմանիչները, որոնցից մեկը հայտնվեց բանտում և մահացավ այնտեղ անհայտ պատճառով: Միսիոներներին հաջողվեց նաև Ամիերստի և Յեյլի քոլեջներ ուղարկել մի խումբ երիտասարդ հույների: Այդ հանգամանքը բավականին դրական ազդեցություն ունեցավ ամերիկացիների վրա, որոնց համար հույների պայքարն անկախության համար դիտարկվում էր որպես «պատերազմ խաչի և կիսալուսնի միջև»: Այդ հանգամանքով էր նաև պայմանավորված ԱՄՆ-ում հայամետ քարոզչությունը 1894-1896 թթ. և Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ՝ հայկական կոտորածների և տեղահանությունների հետևանքով: Ամերիկյան քարոզչությանը Բեյրութում մեծ վնաս հասցրեց 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմը, որի հետևանքով միսիոներները կրկին մեկնեցին Մալթա և մնացին այնտեղ մինչև 1830 թ.:

Համոզվելով, որ մահմեդականների[2] և հրեաների ավետարանացումն անիրականանալի է, 1831 թ. «Ամերիկյան խորհուրդը» որոշում կայացրեց իր ողջ գործունեությունն ուղղել Արևելքի «այլասերված» եկեղեցիների «հոգևոր լուսավորությանը»: Նույն տարվա ընթացքում հաստատվեցին մի քանի կայաններ: Կոստանդնուպոլսի կայանի նպատակն էր կրոնափոխության աշխատանք տանել հայերի, Զմյուռնիայի և Աթենքի կայանները՝ հույների, Բեյրութի կայանը՝ արաբ քրիստոնյաների շրջաններում: Հե-

[1] Grabill, Joseph L., նշվ. աշխ., էջ 6-7:
[2] Մինչև 1861 թ. ընդամենը 23 մահմեդական էր հնարավոր եղել կնքել Կոստանդնուպոլսում (Gordon, Leland James, նշվ. աշխ., էջ 223):

տագայում՝ 1843 թ., հույն ուղղափառ եկեղեցու ցասումի արդյունքում հունական ծրագրերը զգալիորեն կրճատվեցին: Առաջին տարիների ընթացքում միսիոներները կենտրոնանում էին լեզու սովորեցնելու, Աստվածաշունչ թարգմանելու, կրոնական գրականություն տպագրելու վրա: Հիմնական հաջողությունն արձանագրվեց հայերի հետ նրանց գործունեության արդյունքում:[1]

Կայսրություն ժամանած առաջին միսիոներները պատրաստված չէին իրենց համար այդ աշխարհի պայմաններին, սակայն նրանք «արտակարգ արագություն և խորաթափանցություն» հանդես բերեցին՝ նոր իրավիճակին հարմարվելու համար: Նրանցից ամենակարողներն անմիջապես հասկացան, որ Օսմանյան կայսրության քրիստոնյա բնակչությունը ոչ թե քարոզի կամ «պարզ ավետարանականացման» կարիք ունի, այլ կրթության: «Կրթությունը հանգեցրեց Աստվածաշնչի թարգմանությանն ու հրատարակմանը մայրենի լեզվով, ...տեղական լեզուների, օրինակ՝ հայերենի և բուլղարերենի զարգացմանը, նպաստեց ժամանակակից գրական լեզու դառնալուն»: Այս առումով միսիոներները գիտակցաբար կամ անգիտակցաբար դառնում էին տեղացի «ազգայնական քարոզիչների» թշնամիները, քանի որ ազգային լեզուները 19-րդ դարի ազգային գիտակցության զարթոնքի «էական տարրերից էին»:[2]

Առողջապահական կրթությունն ու բժշկական ծառայությունների մատուցումը նույնպես կարևոր նշանակություն ուներ: Զբաղվելով նաև այդ խնդիրներով՝ ամերիկյան միսիոներները հիմնեցին նաև բժշկական հաստատություններ՝ հիվանդանոցներ և մանկատներ, ուր աշխատում էին քրիստոնյա բժիշկներ ու աշխատավորներ: Միսիոներների թարգմանչական, հրատարակչական և «ավետարանականացման» գործունեությանն ավելացավ նաև ընդհանուր կրթության բնագավառը: Միսիոներական դպրոցներն ընդգրկում էին բոլոր տեսակի կրթական հաստատություններ՝ սկսած մանկապարտեզից մինչև աստվածաբանական ճեմարան, որոնք աջակցություն էին ստանում և հսկվում ամերիկացիների կողմից: Հատուկ նշանակություն ուներ նաև մարմնամարզության և սպորտի ժողովրդականացումը:[3]

ԱՄՆ-ից ժամանած միսիոներները շատ քիչ հնարավորություն ունեին բարեփոխելու Մերձավոր Արևելքի քրիստոնյա եկեղեցիները: Նրանք շուտով հասկացան, որ հնարավորություն ունեն միայն «բուն քրիստոնյա հողի» վրա պատվաստելու «եռանդուն ամերիկյան բողոքականությունը»: Իրենց գործունեությունը միսիոներները սկսեցին՝ քննադատելով սովորություններն ու ծիսակատարությունները, որոնք նրանք պաշտամունքային էին

[1] Grabill, Joseph L., նշվ. աշխ., էջ 8:
[2] Thomas, Lewis V. and Frye, Richard N., նշվ. աշխ., էջ 60:
[3] Նույն տեղում, էջ 141:

համարում: Առաջին հերթին նրանք քննադատում էին «տգետ հոգևորականությանը», նրանց «զգեստավորությունը», վանքերը, հոգևորականության «ամուրիությունը», «եպիսկոպոսական կառուցվածքը»: Սակայն միսիոներները չէին հաշվարկել, որ նման մոտեցումը կարող է հանգեցնել բախման տեղի հնագույն հայկական և սիրիական եկեղեցիների ղեկավարների հետ:

Առաջին հերթին միսիոներները սկսեցին իրենց «վերածնության» կամ «աշխուժացման» գործընթացը հայերի շրջանում, քանի որ նրանք համարում էին հայկական եկեղեցին «աշխարհի հնագույն քրիստոնեական կազմակերպությունը»: Հայերի մեծամասնությունը խոսում էր թուրքերեն և պատկանում կրոնական ու ազգային համայքին, հայկական միլլեթին, որը «կիսանկախ հաստատություն» էր և որոշակի «քաղաքացիական իմունիտետ» էր վայելում կենտրոնական կառավարության շրջանում: 9-րդ դարից սկսած, շրջապատված լինելով մահմեդական ժողովուրդներով, Հայ առաքելական եկեղեցին որոշ չափով ինքնապահպանման և գոյատևելու արդյունքում «ետ նահանջ կատարեց դեպի կեղևապատ ծիսակարգը»: Ըստ Ջոզեֆ Գրաբիլի՝ 1830-ական թթ. սկսած միսիոներները փորձեցին «ուժ տալ» առաքելական հայերին, որոնք դարերի ընթացքում դանդաղորեն «խորտակվում էին» մահմեդական ծովում:[1]

Ամերիկահայ պատմաբան Սիմոն Պայասլյանը նշում է, որ 19-րդ դարի ընթացքում ամերիկյան միսիոներները «քիչ հարգանք են դրսևորել հայերի նկատմամբ»՝ համարելով նրանց «ողորմելի տգիտության և անկման վիճակում գտնվող» «նոմինալ» կամ «միայն անվանապես քրիստոնյաներ», «անկիրթ բնակչություն, որն ապրում է գետնափոր տներում և աղոթում գետնափոր եկեղեցիներում, ղեկավարվում տգետ քահանաների կողմից»: Պատմաբանի կարծիքով՝ միսիոներների տեսակետները հայերի հանդեպ ժամանակի ընթացքում փոխվեցին՝ ելնելով ԱՄՆ-ի և Օսմանյան կայսրության միջև քաղաքական և տնտեսական հարաբերությունների հանգամանքներից:[2]

3. Ամերիկյան միսիոներների և արևմտահայերի առնչությունները: Ավետարանական եկեղեցու և համայնքի ձևավորումը

1831 թ. Ուիլյամ Գուդելը Բեյրութից տեղափոխվեց Կոստանդնուպոլիս, իսկ «հայկական առաքելության հիմնահայր» համարվող Հարրիսոն

[1] Grabill, Joseph L., նշվ. աշխ., էջ 10-11:
[2] Payaslian, Simon, նշվ. աշխ., էջ 13:

Գրեյ Օտիս Դուայթը[1] ժամանեց Օսմանյան կայսրության մայրաքաղաք 1832 թ.: Նա ծնվել էր 1803 թ. Կոնվեյում (Մասաչուսետս), Երրորդ պրեսբիտերական եկեղեցու անդամ էր դարձել 15 տարեկան հասակում, ավարտել էր Համիլտոն քոլեջը 1825 թ. և երեք տարի անց՝ Անդովերի աստվածաբանական ճեմարանը: Դուայթը նվիրել էր իր կյանքի շուրջ 30 տարին Օսմանյան կայսրությունում բողոքական համայնքի կազմավորմանը, մահացել էր երկաթուղային արկածի ժամանակ ԱՄՆ-ում 1862 թ.:[2]

Տարիների ընթացքում միսիոներները հիմնեցին «տպավորիչ ներկայություն» Կոստանդնուպոլսում՝ դպրոցներ, տպարաններ և Աստվածաշնչի տներ, որտեղից էլ տարածվում էր կրոնական գրականությունը, իրականացվում միսիոներների ֆինանսական միջոցների բաշխումը: Կոստանդնուպոլսից միսիոներական շարժումը տարածվեց դեպի Անատոլիա: Մեծ քաղաքներից շատերում բացվեցին դպրոցներ, քոլեջներ, եկեղեցիներ, տպարաններ և հիվանդանոցներ:[3]

Ամերիկահայ պատմաբան և աստվածաբան Լ. Արփին գրում էր, որ երբ առաջին ամերիկացի միսիոներներ Գուդելն ու Դուայթը «եկան մեզ մոտ», նրանք որևէ թշնամական մտադրություն չունեին «մեր» ազգային եկեղեցու նկատմամբ: Ըստ Արփիի՝ թեև միսիոներները նախապաշարմունք ունեին Հռոմի եկեղեցու հանդեպ, նրանք նման մոտեցումներ հանդես չէին բերում Հայաստանյաց եկեղեցու կամ հայ քրիստոնեության հանդեպ: Իրականում հայերն ընդունեցին միսիոներներին որպես բարեկամների, իսկ որոշ հայ մարդկանց մոտ եղած նախապաշարմունքը մեծ մասամբ «պատրաստված էր Հռոմում»: Ինչպես նշում էր Արփին,Գուդելն ու Դուայթն ունեին բարեկամական մտադրություններ և եկել էին վճարելու իրենց պարտքը ոչ թե հայ պավլիկյանությանը, ինչպես որ երբեմն սխալ կերպով մեկնաբանվում է, այլ հետառաքելական շրջանի քրիստոնեությանը, որն իրենց էր հասել ոչ թե Հունաստանից, Հյուսիսային Աֆրիկայից կամ Իտալիայից, այլ Փոքր Ասիայի եկեղեցուց:[4]

Ուիլյամ Գուդելը համարվում է Կոստանդնուպոլսում ամերիկյան առաջին միսիոները: Նա միսիոներական գաղափարներին նվիրված անձնավորություն էր, ծնվել և ապրել էր շատ ծանր պայմաններում Մասաչուսետսի Տեմպլտոն քաղաքում, որը հնարավորություն էր տվել նրան դիմակայելու նոր կյանքի դժվարություններին և նվիրյալին վայել կատարելու իր պարտականությունները: Մինչև 1844 թ. Օսմանյան կայսրություն էին ժամանել Գուդելի նման նվիրյալ 60 միսիոներներ, որոնք բոլորն էլ ուսում էին ստացել Յեյլի, Ամհերստի, Դարտմութի, Ուիլլիամզի և Միդլբերիի քոլեջներում: Բոլորն էլ ունեցել էին կյանքի ծանր պայմաններ: Այդ շրջանում ԱՄՆ-ի բնակչության միայն երկու տոկոսն էր այցելում քոլեջ: Այդ երկու հանգամանքները նրանց հավելյալ ուժ և կորով էին հաղորդել միսիոներական առաքելությունն իրականացնելու համար, ինչն էլ տարբերում էր նրանց ամերիկյան առևտրականներից և պաշտոնյաներից: Մինչև 1843 թ. նրանք բոլորն էլ աշխատում էին առանց աշխատավարձի, ծանր պայմաններում, որի արդյունքում նրանց ընդհանուր թվից 30%-ը մահացավ հիվանդություններից:[1]

Շատ դեպքերում միսիոներներն ու իրենց ընտանիքներն ապրում և աշխատում էին շատ դժվար պայմաններում, հայտնվում այնպիսի վայրերում, որոնք տարվա մեծ մասն անանցանելի էին դառնում եղանակի պատճառով: Մահացության աստիճանը միսիոներների շրջանում շատ բարձր էր: Ֆիսկն ու Փարսոնզը մահացել էին համապատասխանաբար 31 և 30 տարեկան հասակում: Միսիոներների կանայք և երեխաները հաճախ հիվանդանում էին այնպիսի հիվանդություններով, որոնք գոյություն չունեին Ամերիկայում: Մինչև 1842 թ. Օսմանյան կայսրություն եկած միսիոներների 46 կանանցից 13-ը մահացել էին, տասը ետ էին վերադարձել ԱՄՆ:[2]

Գուդելի և Դուայթի «իրական» աշխատանքը սկսվեց այն բանից հետո, երբ որ նրանք ծանոթացան Ջոն Տեր-Սահակյանի հետ: Վերջինս սովորել էր պատրիարքարանի ճեմարանում, համարվում էր Գրիգոր Փեշտիմալճյանի[3] ուսանողը և ժամանակի այն հայ երիտասարդներից էր, որ հանդես էր գալիս հայ եկեղեցու սնահավատության դեմ և ցանկանում էր բարեփոխել եկեղեցին: Իմանալով, որ քաղաքում հաստատվել են ամերիկացի միսիոներները, նա այցելում է առաքելություն իր համախոհ-ընկերոջ՝ Պողոս Մինասյանի հետ և առաջարկում իրենց ծառայությունները՝ ներկայացնելու ամերիկացի միսիոներների ուղերձը քաղաքի հայ բնակչությանը: Բուրսայում մի քանի ամիս միսիոներների համար աշխատելուց հետո 1834 թ. հոկտեմբերին Տեր-Սահակյանը նշանակվում է Բերայում հիմնադրված ամերիկյան բարձրագույն դպրոցի կառավարիչ: Ըստ Արփիի՝ սա առաջին դպրոցն էր հայերի համար Կոստանդնուպոլսում, որտեղ սովորեցնում էին

---

[1] Հարրիսոն Գրեյ Օտիս Դուայթ (1803-1862) – ամերիկյան միսիոներ, շուրջ 30 տարի աշխատել է Օսմանյան կայսրությունում, համարվում է հայ բողոքական առաքելության հիմնադիրը, հիմնական աշխատությունը՝ «Քրիստոնեության վերածնունդն Արևելքում» (1850):
[2] Arpee, Leon, նշվ. աշխ., էջ 49-50:
[3] Salt, Jeremy, նշվ. աշխ., էջ 30-31:
[4] Arpee, Leon, նշվ. աշխ., էջ 2-3:

[1] Grabill, Joseph L., նշվ. աշխ., էջ 9-10:
[2] Salt, Jeremy, նշվ. աշխ., էջ 31-32:
[3] Գրիգոր Փեշտիմալճյան (1774-1837) – հայ բառարանագիր, քերականագետ, փիլիսոփա, մանկավարժ, 1824-1826 թթ. վարել է Կոստանդնուպոլսի Մայր եկեղեցուն կից դպրատան ճարտասանության, տրամաբանության, հայոց լեզվի և կրոնագիտության դասընթացները, 1826 թ.-ից՝ Գում Գափուի «Ընծայարան» ուսումնարանի տնօրեն ու գլխավոր ուսուցիչ, միաժամանակ 1830 թ. վերաբացված Պեզճյան Մայր վարժարանի տնօրեն:

արևմտյան և արևելյան լեզուներ, թվաբանություն, աշխարհագրություն, կենդանաբանություն, ֆիզիկա, աստղագիտություն, աստվածաբանություն: Սակայն դպրոցը շատ կարճ կյանք ունեցավ, քանի որ հայ համայնքի պահպանողական տարրերը կասկածանքով էին վերաբերվում դպրոցի գործունեությանը, պատրիարքարանը ստուգումներ էր կատարում դպրոցում, իսկ 1837 թ., երբ ճարտարապետներ Կարապետ Պալյանն[1] ու Հովհաննես Սերվերյանը նախապատրաստական աշխատանքներ սկսեցին Սկյութար հայկական դպրոց հիմնելու ուղղությամբ, պատրիարքարանի պնդմամբ ծնողները արգելեցին իրենց երեխաներին այցելել «օտարների հաստատություն»:[2]

Թեև միսիոներները աշխատում էին հիմնականում Օսմանյան կայսրության ծովափնյա քաղաքներում բնակվող քրիստոնյա փոքրամասնությունների հետ, փորձեր սկսեցին կատարվել նաև ներքին շրջաններում ամերիկյան մշակույթը տարածելու ուղղությամբ: Նման «խիզախ հետազոտություն» առաջինը կատարեցին Անդովերի շրջանավարտներ Էլի Սմիթը[3] և Հարրիսոն Դուայթը, որոնք 1830 թ. մեկնեցին արևելք՝ նպատակադրվելով ուսումնասիրել Անատոլիան և Պարսկաստանը: Նրանք ճամփորդեցին երկու հազար մղոնից ավելի և վերադարձան Կոստանդնուպոլիս 1831 թ. մայիսին: Իրենց ուսումնասիրությունը տպագրվեց ԱՄՆ-ում 1833 թ.:[4] Պարսկաստանի հյուսիս-արևմուտքում նրանք հայտնաբերեցին նեստորիան քրիստոնյաների և որոշում կայացրին կայան հիմնել Ուրմիայում, որը հետագայում՝ 1834 թ., բացվեց Ջաստին Պարկինզի կողմից: Հայերի կողմից բնակեցված վայրերից նրանք ընտրեցին Տրաբզոնն ու Էրզրումը, որտեղ միսիոներական կայաններ բացվեցին համապատասխանաբար 1835 և 1839 թթ.:[5]

---

[1] **Կարապետ Պալյան** (1800-1866) – հայ պալատական ճարտարապետ, ամենանշանավոր գործերը՝ Կոստանդնուպոլսի Դոլմաբահչեի պալատը (1856), Չիֆթե սարայլար, Ջեմիլի և Մյունիրեի սուլթանական ծովափնյա պալատները, Չրաղանի հին պալատը (1836, 1839, 1843), Իզմիթի իշխանական դղյակը, Եղիզի հին ապարանքը, Գյումյուշսուի զորանոցը (1843, 1857-1862), Եղիկուլեի «Սուրբ Փրկիչ» հայոց հիվանդանոցը (1834, Հ. Սերվերյանի հետ), Ս. Հակոբ (1853), Պեշիկթաշի Ս. Աստվածածին (1838), Գալաթասարաի Ս. Երրորդության (1836-1838, Հ. Սերվերյանի հետ) եղեղեցիները Սկյութարի ճեմարան-վարժարանը (1838, Հ. Սերվերյանի հետ), Պեշիկթաշի հայոց գերեզմանատունը (1848) և այլն:

[2] **Arpee, Leon**, նշվ. աշխ., էջ 7-8:

[3] **Էլի Սմիթ** (1801-1857) - ամերիկացի միսիոներ և գիտնական, աշխատել է Մալթայում և Բեյրութում, ճանապարհորդել է Հայաստանով, Վրաստանով և Պարսկաստանով, մեծ ներդրում է ունեցել արաբերեն լեզվով ավետարանի թարգմանության գործում:

[4] Researches of the Rev. E. **Smith** and Rev. H. G. O. **Dwight** in Armenia: Including a Journey through Asia Minor, and into Georgia and Persia, with a Visit to the Nestorian and Chaldean Christians of Oormiah and Salmas, In 2 Vols., Boston: Crocker and Brewster; New York: Jonathan Leavitt, 1833, 348 p.

[5] **Grabill, Joseph L.**, նշվ. աշխ., էջ 8-9:

Ըստ Արփիի՝ «Ամերիկյան խորհրդի» առաքելությունների քաղաքականությունն ուղղված էր հայերի շրջանում ոչ թե հավատափոխություն իրականացնելուն, այլ «ավետարանչական գաղափարներ և իդեալներ» պատվաստելուն՝ առանց կտրելու նրանց ազգային եկեղեցուց: 1838 թ. Մերձավոր Արևելք մեկնելուց առաջ պատվելի Սայրուս Համլինը[1] հրահանգ էր ստացել առ այն, որ արևելյան եկեղեցիների հանդեպ տարվող աշխատանքում հիմնական նպատակը ոչ թե նրանց հավատափոխությունն էր, այլ նրանց շրջանում բարեփոխումների իրականացումը: Հավատափոխության քաղաքականության իրականացումը կարող էր բողոքի ալիք բարձրացնել բողոքականների դեմ ազգային եկեղեցու կողմից: Ավետարանչական քարոզչության իրականացումն առանց հավատափոխության քաղաքականության կարող էր հաջողության երաշխիք դառնալ արևելյան եկեղեցիների շրջանում, որը չէր կարելի ասել Հռոմի եկեղեցու գործելաոճի պարագայում:[2]

«Ամերիկյան խորհրդի» միսիոներները հավատացած էին, որ «անհատական զղջումի և Աստծուն հնազանդության» գաղափարը կարող էր ավելի հրապուրիչ դառնալ հայերի համար, քան առաքելական ծեսերը: Շուտով տեղացի հայերը սկսեցին հետաքրքրություն հանդես բերել բողոքականության հանդեպ: Ջոն Տեր-Սահակյանի նման որոշ հայ երիտասարդներ նախընտրեցին «անհատական գրագետ ավետարանչականությունը համայնքային, խորհրդավոր լուսավորչականությանը»: Միսիոներների հետ համագործակցաբար Տեր-Սահակյանը ստեղծեց «Ավետարանական միություն», որը 1836 թ. ուներ արդեն շուրջ 20 անդամ: Սակայն շատ շուտով ճգնաժամ առաջացավ միսիոներների և Կոստանդնուպոլսի հայ պատրիարք Ստեփանոս Բ Աղավնի Զաքարյանի (1831-1839) միջև, որը դիտարկում էր «Ամերիկյան խորհրդի» և բրիտանական դիվանագիտության կողմից աջակցություն ստացած «Ավետարանական միությունը»՝ որպես համայնքի ամբողջականության դեմ ուղղված լուրջ վտանգ: Նա նզովքի ենթարկեց բոլոր այն հայերին, որոնք ավետարանչական գրականություն էին կարդում կամ շփվում ամերիացիների հետ: Պատրիարքը հասավ նրան, որ Տեր-Սահակյանը ձերբակալվեց իշխանությունների կողմից, սակայն 1839 թ. նրան ազատեցին բանտից: Նա կրկին շարունակեց «Ավետարանական միության» գործունեությունը, որի անդամների թիվը հասավ մինչև հարյուրի:

---

[1] **Սայրուս Համլին** (1811-1900) - ամերիկյան միսիոներ, աշխատել է Օսմանյան կայսրությունում 1839-1876 թթ., կառուցել է 13 հայ բողոքական եկեղեցի, հիմնադրել է Բեբեկի ճեմարանը (1840), հիմնադրել (1871) և գլխավորել է (1871-1876) Կոստանդնուպոլսի Ռոբերտ քոլեջը, 1880-1885 թթ. եղել Վերմոնտի Միդլբերի քոլեջի նախագահը, դասավանդել է աստվածաբանություն, հիմնական աշխատությունները՝ «Թուրքերի մեջ» (1878), «Իմ կյանքը և ժամանակը Թուրքիայում» (1893):

[2] **Arpee, Leon**, նշվ. աշխ., էջ 52-53:

1843 թ. «Ամերիկյան խորհուրդը» քննարկեց գոյություն ունեցող ավանդական կառույցները ոչ թե քանդելու, այլ ինքնուրույն եկեղեցի ստեղծելու գաղափարը: Ընդունված որոշման մեջ ասվում էր, որ «մեր առաքելության նպատակը եկեղեցիների ձևավորումն է, այլ ոչ թե աղանդի ստեղծումը»: 1844 թ. պատրիարք ընտրվեց Մաթեոս Բ Չուխաճյան Կոստանդնուպոլսեցին (1844-1848), որը շատ ավելի ուժեղ պայքար սկսեց բողոքականության դեմ: 1846 թ. նա հայտարարեց հայ բողոքականներին «քրիստոնեության սուրբ հավատքի թշնամիներ և հայերի Սուրբ ուղղափառ եկեղեցու քանդողներ»:[1]

Միսիոներների գործունեությունը չէր սահմափակվում կրթական և կրոնական հարցերով և շատ հարցեր էր առաջացնում Օսմանյան կայսրության հայ համայնքների շրջանում՝ նրանց գործունեության քաղաքական նպատակների վերաբերյալ: Հայերի փոքր թիվ ողջունում էր միսիոներների գործունեությունը՝ տեսնելով այդ շարժման մեջ վերածննդի և տնտեսական զարգացման հնարավորություն: Հայերի մեծամասնությունն ուժգնորեն դիմադրում էր միսիոներների աճող ազդեցությանը: Ինչպես նշվեց, հայկական եկեղեցին վրդովմունքով էր արտահայտվում ամերիկյան միսիոներների «ստորացուցիչ» վերաբերմունքին հայերի հանդեպ և համոզված էր, որ միսիոներները հատուկ «տարաձայնություններ և երկպառակություն» էին սերմանում հայկական համայնքներում՝ հայկական եկեղեցու հեղինակությունը նսեմացնելու և իսպառ վերացնելու նպատակով:[2]

Ավետարանական շարժման առաջին տասնամյակի ընթացքում Օսմանյան կայսրությունում հիմնվեցին եկեղեցիները՝ 1846 թ.՝ Կոստանդնուպոլսում, Նիկոմեդիայում, Ադաբազարում, Տրաբզոնում. 1847 թ.՝ Էրզրումում, 1848 թ.՝ Այնթապում, Բուրսայում, 1850 թ.՝ երկրորդ եկեղեցին Կոստանդնուպոլսում, 1851 թ.՝ Դիարբեքիրում, Սըվազում. 1852 թ.՝ երրորդ եկեղեցին Կոստանդնուպոլսում, Հալեպում, Ռոդոսթոյում, 1853 թ.՝ Զմյուռնիայում, Քեսապում, Մարզվանում, 1854 թ.՝ Կեսարիայում, Արաբկիրում, Ակիսարում, Թոխաթում, Մարաշում, 1855 թ.՝ Մաշկերտում (Խարբերդի շրջան), Տևրիկում, Ադանայում:

Շարժման երկրորդ տասնամյակի ընթացքում եկեղեցիների հիմնադրումն այնքան էլ արագ չէր ընթանում. 1856 թ.՝ Խարբերդում, Խնուսում, 1861 թ.՝ Այտնում, 1863 թ.՝ Դիարբեքիրում, 1864 թ.՝ Բիթլիսում, Մալաթիայում, 1870 թ.՝ Գյուրունում, 1871 թ.՝ Զեյթունում, 1872 թ.՝ Հաճնում, 1876 թ.՝ Վանում: Հետագայում ստեղծվեցին տարածքային հետևյալ կազմակերպությունները, 1864 թ.՝ «Բյուրանիայի միությունը» և «Այնթապի ավետարանական միությունը», 1865 թ.՝ «Խարբերդի ավետարանական միությունը», 1868 թ.՝ «Կենտրոնական ավետարանական միությունը», 1872 թ.՝ «Կիլիկիայի միությունը»:[1]

Ամերիկյան միսիոներների հետ կապեր հաստատած հայերը ենթարկվում էին ճնշումների ինչպես ազգային եկեղեցու, այնպես էլ օսմանյան կառավարության կողմից: Այդ շրջանում նման քաղաքականությունն իր աջակցությունն էր ստանում նաև Կոստանդնուպոլսում հավատարմագրված դիվանագետների կողմից: Նույնիսկ ԱՄՆ-ի հավատարմատար Դեյվիդ Պորտերը, որն անձնական առումով բարեկամական կապեր ուներ միսիոներների հետ, պաշտոնապես պարտավոր էր իրականացնել 1830 թ. թուրք-ամերիկյան պայմանագրի այն դրույթը, որն արգելում էր ամերիկյան միսիոներների հավատափոխությանն ուղղված գործունեությունը: Թեև Բրիտանիայի դեսպան Ջոն Պոնսոնբին[2] բողոքական էր, սակայն նա նույնպես պաշտոնական դիվանագիտության կողմնակից էր և չէր համարվում միսիոներների բարեկամ: Ինչպես կաթոլիկ տերությունների, այնպես էլ Հոլանդիայի, Շվեդիայի և Պրուսիայի դիվանագիտական ներկայացուցչությունները պաշտպանում էին հայկական ազգային եկեղեցու դիրքորոշումը՝ բողոքականությունն Օսմանյան կայսրությունից վտարելու ուղղությամբ:

Ինչ վերաբերում էր Ռուսաստանի դեսպան Ապոլինարի Բուտենյովին,[3] ապա նա Թուրքիայում «Ամերիկյան խորհրդի» առաքելությունների «անդրդվելի թշնամի էր» համարվում, որը հայտարարել էր. «Իմ տերը՝ Ռուսաստանի ցարը, երբեք թույլ չի տալու, որ բողոքականությունը հաստատվի Թուրքիայում»:[4]

Բողոքականների դեմ կազմակերպված պայքարի առաջին փորձն ավարտվեց 1839 թ.՝ սուլթան Մահմուդի 2-րդի մահվանից հետո, երբ հայ ազգային եկեղեցու հեղինակավոր ներկայացուցիչները զրկվեցին կայսերական աջակցությունից: Միաժամանակ իր ազդեցությունն ունեցավ նաև Մեծ Բրիտանիայի դիրքերի ամրապնդումն ու Ռուսաստանի ազդեցության նվազումը: Այդ շրջանում բողոքական շարժման զարգացումն Օսմանյան կայսրությունում կապված էր պատրիարքարանի ճեմարանի հեղինակավոր

[1] Grabill, Joseph L., նշվ. աշխ., էջ 12-13:
[2] Payaslian, Simon, նշվ. աշխ., էջ 13:

[1] Arpee, Leon, նշվ. աշխ., էջ 67:
[2] Ջոն Պոնսոնբի (1770-1885) – իռլանդացի և բրիտանացի քաղաքական գործիչ և դիվանագետ, Մեծ Բրիտանիայի դեսպան Օսմանյան կայսրությունում (1833-1837), Ավստրիայում (1846-1850):
[3] Ապոլինարի Բուտենյով (1787-1866) – Ռուսաստանի պետական գործիչ և դիվանագետ, հավատարմատար, դեսպան Օսմանյան կայսրությունում (1829-1943, 1856-1858), Պետական խորհրդի անդամ (1856-1866):
[4] Նույն տեղում, էջ 12-13:

տնօրեն Գրիգոր Փեշտիմալճյանի անվան հետ, որը հայոց եկեղեցու բարեկարգման մեծ կողմնակից էր:[1]

1840-ական թթ. սկզբին բողոքական առաքելության հիմնական աշխատանքը տարվում էր հայերի հետ, թեև որոշակի աշխատանք կար նաև հույների հետ: 1844 թ. առաքելությունը ստացավ երկու անվանում՝ «Առաքելություն հայերի համար» և «Առաքելություն հրեաների համար»: Հետագայում հրեաների համար ստեղծված առաքելությունը լուծարվեց: Թեև հետագայում այն բաժանվեց երեք մասի՝ «Արևմտյան Թուրքիայի առաքելություն», «Կենտրոնական Թուրքիայի առաքելություն» և «Արևելյան Թուրքիայի առաքելություն», ամերիկյան միսիոներները հիմնականում շարունակում էին աշխատել հայ բնակչության հետ:[2]

Ըստ Արփիի՝ չի կարելի ասել, որ հայ ժողովուրդն իր ամբողջության մեջ լավ էր ընդունում բողոքականությունը: Համեմատելով 16-րդ դարում գերմանացիների և 19-րդ դարում հայերի վերաբերմունքը բողոքական շարժմանը՝ նա նշում էր, որ առաջինը՝ հայերը գերմանացիների համեմատությամբ այդքան էլ կրթված չէին, իսկ երկրորդը՝ եթե գերմանացիների դժգոհությունն օտարերկրյա կաթոլիկ պապի նկատմամբ կրում էր ոչ միայն կրոնական, այլև լայնածավալ քաղաքական բնույթ, ապա հայերը, որոնք ցրված էին և ապրում էին «թշնամաբար տրամադրված» ազգությունների շրջանում, իրենց կրոնի հանդեպ դժգոհություններ չէին տածում, քանի որ այն ապահովում էր հայերի ինքնությունը: Այդ էր պատճառը, շարունակում էր Արփին, որ հայերը չծուլվեցին հույն, իսկ ապագայում կաթոլիկ եկեղեցու մեջ և ներկայումս էլ հրաժարվում էին համատարած կերպով ընդունել բողոքականություն:[3]

Բողոքականության աճն ու միսիոներների «անդրդվելի կրոնական համոզվածությունն» առաջացնում էր ինչպես հայ առաքելական, այնպես էլ կաթոլիկ համայնքի անհանգստությունն ու դժգոհությունը: Դեռևս 1826 թ. մարոնիտների պատրիարքն արգելել էր իր համայնքի անդամներին շփվել միսիոներների հետ: Օսմանյան իշխանությունները նույնպես մեծապես մտահոգ էին միսիոներների գործունեության ազդեցության պատճառով, դրա հետևանքով քրիստոնյա պատրիարքները սկսել էին բողոքել արտասահմանյան ազդեցության դեմ: 1845 թ. պատրիարք Մաքենս Բ-ն արգելեց հայերին մասնակցել բողոքական արարողություններին, իսկ հայկական եկեղեցու այն անդամների նկատմամբ, որոնք գործ էին ունեցել ամերիկյան միսիոներների հետ, սկսվեց հետապնդումների արշավ՝ եկեղեցուց նրանց օտարելու միջոցով: 1846 թ. հայ քահանա հեռացվեց՝ եկեղեցուց ավետարանական կրոնավորներին աջակցելու համար: Սակայն հետապնդումները չկարողացան նվազեցնել կրոնափոխ հայերի թիվը: Վերջիններս էլ միավորվեցին և կազմակերպեցին ավետարանական բողոքական եկեղեցի:[1]

1846 թ. փետրվարին միսիոներները նամակով դիմեցին մեծ վեզիր Մուստաֆա Ռեշիդ փաշային[2] հերքելով բոլոր մեղադրանքները «քաղաքացիական ապստամբություն» կազմակերպելու մեջ: Նշվում էր, որ իրենց նկատմամբ վերաբերմունքի պատճառների հիմքն այն էր, որ բողոքականներն ընդամենը հրաժարվում էին ընդունել ազգային եկեղեցու արարողությունները: Միսիոներները հայցում էին կայսերական կառավարության հովանավորությունը: Նույն ամսվա ընթացքում նրանք դիմումներ ներկայացրին սուլթանին, ինչպես նաև Բրիտանիայի, Պրուսիայի և ԱՄՆ-ի դիվանագիտական ներկայացուցիչներին: Նույն թվականի մարտին Ռեշիդ փաշան այդ հարցով դիմեց պատրիարք Մաքենս Բ-ին, որը հերքական պատարագի ժամանակ ստիպված եղավ հայտարարել, որ «կրոնն ազատ է Թուրքիայում»: Մայիսին բողոքականները տեղեկացվեցին ոստիկանության պետի կողմից, որ նրանց թույլատրվում է իրականացնել իրենց գործունեությունը: Նամակ ստացվեց նաև մեծ վեզիրից, ուր սուլթանի անունից նրանց թույլատրվում էր նաև վերաբացել իրենց խանութները:[3]

1846 թ. հունիսի 25-ին Կոստանդնուպոլսում տեղի ունեցավ «Ամերիկյան խորհուրդի» միսիոներների համաժողով, որի ժամանակ մշակվեց սահմանադրություն Հայ ավետարանական եկեղեցու համար: Սահմանադրությունը միաբանության և պրեսբիտերականության միջև ընկած եկեղեցու կառավարման մի տարբերակ էր:[4]

Եկեղեցական կազմակերպություն ճանաչվելուց հետո ժամանակը եկավ նաև քաղաքացիական ճանաչում ստանալուն: 1846 թ. օգոստոսի 17-ին նոր համաժողով հրավիրվեց, որը ստեղծեց «Չորսի գործադիր կոմիտե», որը պետք է ներկայացներ համայնքն իր արտաքին հարաբերություններում: Մեկ տարի անց կոմիտեն դիմեց սուլթանին՝ համայնք կազմելու իրավունք ստանալու խնդրանքով:[5]

---

[1] Նույն տեղում, էջ 13:
[2] Gordon, Leland James, նշվ. աշխ., էջ 224:
[3] Arpee, Leon, նշվ. աշխ., էջ 70-71:

[1] Frazee, Charles A., Catholics and Sultans. The Church and the Ottoman Empire, 1453-1923, London, New York, New Rochell, Melbourne, Sydney: Cambridge University Press, 1983, p. 264; Salt, Jeremy, նշվ. աշխ., էջ 32-33; Gordon, Leland James, նշվ. աշխ., էջ 227-228; Grabill, Joseph L., նշվ. աշխ., էջ 14:
[2] Մուստաֆա Ռեշիդ փաշա (1800-1858) – Օսմանյան կայսրության պետական գործիչ և դիվանագետ, Թանզիմաթի առաջին շրջանի բարենորոգումների նախաձեռնող և իրագործող, դեսպան Ֆրանսիայում (1834-1836, 1841-1845), Մեծ Բրիտանիայում (1836-1838, 1839-1841), արտաքին գործերի նախարար (1838-1839), 1846-1858 թթ.՝ մեծ վեզիր (ընդմիջումներով):
[3] Arpee, Leon, նշվ. աշխ., էջ 31:
[4] Նույն տեղում, էջ 36:
[5] Նույն տեղում, էջ 40-41:

Բրիտանիայի դեսպան Ստրեթֆորդ Կաննինգի[1] ճնշման ներքո 1847 թ. նոյեմբերի 17-ին սուլթան Աբդուլ Մեջիդը[2] հրովարտակ ստորագրեց՝ բողոքականներին ինքնավարություն և պաշտպանություն ապահովելու մասին. բողոքական հպատակները պաշտոնապես ճանաչվեցին որպես առանձին և անկախ կրոնական համայնք, նրանց շնորհվեց խղճի և աղոթքի ազատության իրավունք: Արդյունքում Հայոց պատրիարքարանի իշխանությունը նրանց հանդեպ նվազեց: Իսկ 1850 թ. նոյեմբերի 27-ին օսմանյան կառավարության հետ Գուդելլի և Կաննինգի բանակցությունների արդյունքում սուլթանը հրովարտակ ստորագրեց, համաձայն որի՝ Օսմանյան կայսրությունում ստեղծվեց բողոքական *միլեթ*, որը քաղաքացիական ղեկավար ընտրելու իրավունք ստացավ: Այդ ցանկում ընդգրկվեցին նաև բողոքական հույները ու սիրիացիները:[3]

Ամերիկյան հեղինակներ Լյուիս Թոմասն ու Ռիչարդ Ֆռայը գնահատել են միսիոներական գործունեությունը Թուրքիայում որպես ամերիկյան բողոքականության ողջ պատմության «ամենահմայիչ և զարմանալի, ինչպես նաև ոգեշնչող դրվագներից մեկը»: Ըստ նրանց՝ «հիմնական նպատակը ոչ թե մահմեդականների դավանափոխությունն էր, այլ օսմանյան արևելքի բնիկ քրիստոնյա եկեղեցիների մեջ կյանքի ներարկումը, որոնցից ամենից արձագանքողը հայերը գտնվեցին»: Բողոքական համայնքի ստեղծումը, նշում էին հեղինակները, միակ «իրագործելի լուծումն» էր՝ միսիոներների և դավանափոխների նկատմամբ քրիստոնյա եկեղեցիների «թշնամությունը» մեղմելու ուղղությամբ:[4]

Բողոքական համայնքը շատ արագ սկսեց զարթոնք ապրել: 1850 թ. տվյալներով՝ համայնքի «հայկական դաշտում» արդեն ստեղծվել էին յոթ միսիոներական կայաններ՝ Կոստանդնուպոլսում, Բեբեկում, Բուրսայում, Զմյուռնիայում, Տրաբզոնում, Էրզրումում և Այնթապում, վեց օժանդակ կայաններ՝ Նիկոմեդիայում, Աղաբազարում, Ռոդոսթոյում, Դիարբեքիրում, Ուրֆայում և Կեսարիայում: Կայաններում աշխատում էին 18 տղամարդ և 20 կին միսիոներներ, 5 տեղացի քահանա և քարոզիչ, 20 տեղացի ուսուցիչներ: Գործում էին 8 եկեղեցիներ, որոնցից երկուսը Կոստանդնուպոլսում՝ շուրջ 240 անդամներով, երկու ճեմարան՝ 50 աշակերտով, 7 ազատ դպրոց՝ 110 աշակերտով:[5]

[1] Ստրեթֆորդ Կաննինգ, վիսկոնտ Ռեդկլիֆ (1786-1880) – Մեծ Բրիտանիայի պետական գործիչ և դիվանագետ, դեսպան Օսմանյան կայսրությունում (1825-1828, 1841-1858):
[2] Աբդուլ Մեջիդ I (1823-1861) – Օսմանյան կայսրության 31-րդ սուլթան (1839-1861):
[3] Frazee, Charles A., նշվ. աշխ., էջ 264; Salt, Jeremy, նշվ. աշխ., էջ 32-33; Gordon, Leland James, նշվ. աշխ., էջ 227-228; Grabill, Joseph L., նշվ. աշխ., էջ 14:
[4] Thomas, Lewis V. and Frye, Richard N., նշվ. աշխ., էջ 140:
[5] Arpee, Leon, նշվ. աշխ., էջ 46-47:

1860 թ. բողոքական համայնքի գործունեությունն այնքան էր ընդլայնվել, որ որոշում կայացվեց այն բաժանել Արևմտյան Թուրքիայի (Կոստանդնուպոլիս, Զմյուռնիա, Թոխաթ, Սեվազ, Կեսարիա, Յոզղատ, Մարզվան, Աղրիանուպոլիս, Ֆիլիպպուպոլիս), Կենտրոնական Թուրքիայի (Այնթապ, Մարաշ, Ուրֆա, Հալեպ, Անտիոք) և Արևելյան Թուրքիայի (Մոսուլ, Դիարբեքիր, Մարդին, Բիթլիս, Էրզրում, Արաբկիր, Խարբերդ) առաքելությունների: Գործում էին միսիոներական 23 կայաններ, 65 օժանդակ կայաններ, 50 տղամարդ միսիոներներ և այդքան էլ կին օգնական-միսիոներներ, 180 տեղացի ուսուցիչներ, քարոզիչներ ու այլ օգնականներ, 40 ավետարանչական եկեղեցի՝ 130 անդամներով, 7 քահանաներով և 33 քարոզիչներով, երկու բարձրագույն դպրոց՝ շուրջ 90 երկսեռ աշակերտներով, 100 դպրոց՝ 280 աշակերտներով:[1]

Հայկական ավետարանական եկեղեցու կայացմանը զուգահեռ նման աշխատանք էր տարվում նաև սիրիացի արաբների շրջանում: 1848 թ. Բեյրութում ստեղծվեց առաջին միաբանությունը՝ 19 անդամներով: Համայնքի կարգավիճակ ստանալուց անմիջապես հետո հայկական և սիրիական ավետարանական եկեղեցիներն ու «Ամերիկյան խորհուրդի» առաքելությունները սկսեցին տարածվել երկրով մեկ: Անատոլիայի հայերի շրջանում կայաններ բացվեցին Այնթապում (1848), Սեվազում (1851), Մարզվանում և Ադանայում (1852), Դիարբեքիրում (1853), Թալասում և Մարաշում (1854), Խարբերդում (1855) և Տարսոնում (1859): Մինչև 1860 թ. ամերիկացիները հայերին իրավունք տվեցին ստեղծել իրենց անկախ միաբանություններն ու ավետարանական ընկերությունները: Մասնավորապես ամերիկացիներն իրենց գոհունակությունն էին հայտնում Այնթապի հայերի կատարած աշխատանքին, որոնք սկսեցին 1848 թ. 8 հոգանոց միաբանությամբ, իսկ 1869 թ. արդեն ունեին երկու միաբանություն՝ 350 անդամով:[2]

4. Ամերիկյան միսիոներների գործունեությունն Օսմանյան կայսրությունում

Մերձավոր Արևելքը դարձավ «Միացյալ Նահանգների ագրեսիվ կրթական կենտրոններից մեկն արտասահմանում»: Այն բանից հետո, երբ 1830-ական թթ. սկզբին սուլթանը ճանաչեց «Ամերիկյան խորհուրդի» գործունեությունն Օսմանյան կայսրությունում և սկսեց գրքեր և գրենական պիտույքներ ձեռք բերել Գուդելլից, այդ հանգամանքը հիմք հանդիսացավ եր-

[1] Նույն տեղում, էջ 47-48:
[2] Grabill, Joseph L., նշվ. աշխ., էջ 17:

կու թուրքական դպրոց բացելու համար: Սկսեց զարգանալ նաև առաքելության կրթական համակարգը: Եթե 1850 թ. միսիոներական դպրոցներում ուսանում էր մի քանի հարյուր աշակերտ, ապա 1914 թ. այդ թիվն անցավ 33 հազարից: Ամերիկյան կրթական համակարգի միջոցով տեղի բնակչությունը սկսեց ճանաչել ամերիկյան կյանքի յուրահատկությունները: Ջոզեֆ Գրաբիլը գրում էր, որ «ավանդական կաշառակերությունն ու ֆատալիզմը հակադրվեց Միացյալ Նահանգներից ժամանած կրոնականների ազնվությանն ու լավատեսությանը»: Ամերիկյան միսիոներների կողմից օգտագործվող և երկիր ներմուծվող ապակե պատուհանները, պայտե հատակները, ծածկակառքերը, ժամացույցները, կարի մեքենաները, բամբակազտիչ մեքենաները, հեռագրատիպ գործիքները, կարտոֆիլն ու լոլիկը նույնպես զգալի հետաքրքրություն էին առաջացնում:[1]

1820-1830-ական թթ. ամերիկյան միսիոներները բացեցին առաջին տարրական դպրոցները, ուր կարդալ էին սովորեցնում հրեա, հայ, հույն և արաբ երեխաներին: Առաջին հերթին սովորեցնում էին կարդալ տեքստեր Աստվածաշնչից: Սկզբնական շրջանում միսիոներներն օգտագործում էին հայատառ թուրքերենն ու արաբերենը: Կրթական գործի համար մեծ նշանակություն ունեցան տպագրական մեքենաները, որոնք առաջինը բերվեցին 1843 թ. Մալթայից՝ «Ամերիկյան խորհուրդի» կենտրոնակայանից, և տեղադրվեցին Թուրքիայում և Պարսկաստանում՝ Բեյրութում, Զմյուռնիայում (հետագայում տեղափոխվեց Կոստանդնուպոլիս) և Ուրմիայում: Աստվածաշունչ և կրոնական գրականությունը տպագրվում էր տասնյակ լեզուներով՝ հիմնականում հայատառ թուրքերեն և արաբերեն: Բացի կրոնական գրականությունից՝ միսիոներները սկսեցին հրատարակել նաև բառարաններ և ընդհանուր բնույթի գրքեր (լեզվաբանություն, աշխարհագրություն, պատմություն, մաթեմատիկա), ինչպես նաև պարբերականներ՝ հինգ լեզուներով: Մինչև 1914 թ. միսիոներները տարածել էին 8 մլն գիրք, որոնցից 4 մլն՝ Աստվածաշունչ:[2]

Հրատարակչական գործում մեծ դերակատարություն ունեցավ միսիոներ Իլիաս Ռիգզը:[3] Նա ավարտել էր Ամհերստի քոլեջը և ժամանել Մերձավոր Արևելք 1830 թ., արձակուրդ էր գնացել ԱՄՆ միայն մեկ անգամ, 68 տարի (որոնցից 40 տարի Կոստանդնուպոլսում) ծառայելուց հետո մահացել էր 1901 թ.: Նա ուներ երեք երեխա, 11 թոռ, երկու ծոռ, որոնցից շատերը շարունակեցին Ռիգզի գործը որպես միսիոներներ Մերձավոր Արևելքում: Ռիգզը

[1] Նույն տեղում, էջ 19:
[2] Նույն տեղում, էջ 20-21:
[3] Իլիաս Ռիգզ (1810-1901) – ամերիկացի միսիոներ և լեզվաբան, երկար տարիներ աշխատել է Օսմանյան կայսրությունում, բուլղարների շրջանում, կազմակերպել է Ավետարանի՝ բուլղարերեն և հայերեն թարգմանությունը:

տիրապետում էր հունարենին, հայատառ թուրքերենին, բուլղարերենին, արաբերենին, լատիներենին, եբրայերենին, արամեյերենին և կոպտերենին: Նա թարգմանել էր Աստվածաշունչը հայատառ թուրքերեն, բուլղարերեն, մեծ դերակատարություն էր ունեցել հայատառ թուրքերենի զարգացման գործում:[1]

Մյուս նշանավոր միսիոներներից էր պատվելի Սայրուս Համլինը, որը հիմնադրեց Կոստանդնուպոլսում «Ամերիկյան խորհուրդի» Բեբեկի ճեմարանը: Շուտով ճեմարանին կից նա կազմակերպեց նաև արհեստագործական բաժին, որտեղ երեխաները սովորում էին արհեստներ: Հետագայում Համլինը սկսեց մտածել բարձրագույն կրթության մասին: Հարրիսոն Դուայթի երկու որդիները, «Ամերիկյան տուն-առաքելություն ընկերության» (American Home Mission Society) գանձապահ, գործարար Քրիստոֆեր Ռոբերտսի ֆինանսական աջակցությամբ 1863 թ. Բեբեկի ճեմարանի շենքում բացվեց բարձրագույն քոլեջ, որն անկախ էր «Ամերիկյան խորհուրդից»: Սայրուս Համլինը, որն ամերիկյան ֆինանսական աջակցություն ստացավ իր գաղափարների զարգացման համար, հրաժարվեց միսիոներական գործունեությունից և հիմնեց բոլորի համար բաց ամերիկյան քոլեջ, որն իր նպատակով և բնույթով պետք է դառնար քրիստոնյա հաստատություն, սակայն տարբերվեր միսիոներական հաստատություններից: Տարիների ընթացքում քոլեջը դարձավ արտասահմանում գործող ԱՄՆ-ի լավագույն կրթական հաստատությունը: Ամերիկայում քաղաքացիական պատերազմի ժամանակ հիմնված Համլինի քոլեջն անվանվեց Ռոբերտ քոլեջ՝ նրա հիմնական մեկենաս Քրիստոֆեր Ռոբերտսի անունով և գրանցվեց Նյու Յորք նահանգի «Կրթական խորհուրդի» կողմից: Հետագայում Համլինին որպես քոլեջի երկրորդ նախագահ փոխարինեց Ջորջ Ուոշբըրնը, հաստատության հովանավորներն էին Նյու Յորքի բարեգործներ Ջոն Սթյուարտ Քենեդին, Ուիլյամ և Կլիվլենդ Դոջը, Քրիստոֆեր Ռոբերտսը, որոնք ընդհանուր առմամբ հավաքել էին 400 հազար դոլար: 1904 թ. Ռոբերտ քոլեջին կից բացվեց սպորտային ուղղություն ունեցող Դոջ մարմնամարզական գիմնազիան՝ Թուրքիայում առաջին փակ բասկետբոլային դաշտով, իսկ 1912 թ.՝ ինժեներական դպրոցը:[2]

1871 թ. Բարձր Դռան որոշմամբ Քոբերտ քոլեջին տրամադրվեց նոր շենք: Նախնական շրջանում քոլեջում հիմնականում ուսանում էին ոչ մահմեդականներ, թեև ողջունվում էին նաև մահմեդական դիմողները: Սուլթան

[1] Նույն տեղում, էջ 21:
[2] Նույն տեղում, էջ 22-24; Thomas, Lewis V. and Frye, Richard N., նշվ. աշխ., էջ 141; Gordon, Leland James, նշվ. աշխ., էջ 225:

Աբդուլ Համիդի 2-րդի[1] ժամանակաշրջանում մահմեդական թուրքերին արգելված էր ուսանել քոլեջում: Մինչև 1914 թ. քոլեջում հիմնականում ուսանում էին հայեր, հույներ և բուլղարացիներ: Կայսրության տարածքում գործում էր նաև Սիրիական բողոքական քոլեջը (ներկայիս Բեյրութի Ամերիկյան համալսարանը), որը մրցակցում էր Ռոբերտ քոլեջի հետ, իսկ հետագայում, դառնալով Ամերիկայի լավագույն համալսարանն արտասահմանում, գերազանցեց նրան: Մինչև Առաջին համաշխարհային պատերազմն Օսմանյան կայսրությունում գործում էին բազմաթիվ այլ կրթական հաստատություններ, որոնք գտնվում էին միսիոներական առաքելությունների հսկողության ներքո, որտեղ հիմնականում սովորում էին ոչ մահմեդականներ: Բոլոր այս հաստատությունները հիմնականում տղաների համար էին, թեև կային նաև քոլեջներ աղջիկների համար, որոնցից արժանահիշատակը դարձավ 1871 թ. հիմնադրված Կոստանդնուպոլսի ամերիկյան քոլեջն աղջիկների համար:[2]

1878-1903 թթ. ընթացքում «Ամերիկյան խորհուրդը» բացեց յոթ քոլեջ Թուրքիայում, որոնք իրենցից ներկայացնում էին բարձրագույն և կրտսեր հաստատությունների համակցություն՝ Եփրատի քոլեջը՝ (իր ճեմարանով) Խարբերդում, Ամերիկյան քոլեջը՝ Վանում, Կենտրոնական Թուրքիայի քոլեջը՝ տղաների և աղջիկների մասնաբաժիններով՝ համապատասխանաբար Այնթապում և Մարաշում, Ս. Պողոսի քոլեջը՝ Տարսոնում, Անատոլիական քոլեջը՝ Մարզվանում և Միջազգային քոլեջը՝ Զմյուռնիայում: 1880 թ. գործող Կենտրոնական Թուրքիայի քոլեջը վայելում էր Այնթապի հայերի աջակցությունը: Մասնավորապես քոլեջի բացումն ապահովելու համար տեղի հայերը կարողացել էին հավաքել 60 հազար դոլար: Տեղացի մի մահմեդական թուրք օգնել էր գնել դպրոցի ունեցվածքը: 30 տարիների ընթացքում տղաների մասնաբաժնի գլխավոր դասախոսն էր Ալեքսան Բեզջյանը, որը դասավանդում էր ֆիզիկա և քիմիա:[3]

Եթե Օսմանյան կայսրության հյուսիս-արևելյան շրջաններում ուսանում էին 2 500 քոլեջի ուսանողներ, 4 500 աշակերտ՝ 50 ավագ դպրոցներում,

[1] Աբդուլ Համիդ 2-րդ (1842-1918) – Օսմանյան կայսրության սուլթան (1876-1909), կառավարման սկզբնական շրջանում ներկայացել է իբրև բարեռորոգումների և սահմանադրական կարգերի կողմնակից, 1876 թ. հռչակել է օսմանյան սահմանադրությունը, 1878 թ. արձակել է խորհրդարանը, հաստատել դաժան վարչակարգ («զուլում»), դաժանորեն ճնշել է բուլղարների, մակեդոնացիների, արաբների, հայերի ազատագրական շարժումները, կազմակերպել է կայսրության հայ բնակչության համատարած ջարդ (1894-1896), որի համար ստացել է «Կարմիր սուլթան» մականունը, 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո հարկադրված վերականգնել է սահմանադրությունը, 1909 թ. հեղաշրջման անհաջող փորձից գահընկեց է արվել և աքսորվել:

[2] Thomas, Lewis V. and Frye, Richard N., նշվ. աշխ., էջ 142; Gordon, Leland James, նշվ. աշխ., էջ 226:

[3] Grabill, Joseph L., նշվ. աշխ., էջ 26:

20 000՝ 400 տարրական դպրոցներում, ապա Սիրիայի բողոքական քոլեջում և 100 երկրորդական և տարրական դպրոցներում սովորում էին ընդամենը 6 000 երեխա:[1]

1903 թ. Զմյուռնիայում հիմնադրվեց Միջազգային քոլեջը, որն ինչպես և մյուս դպրոցների պարագայում, հիմնականում հայերի և հույների համար էր: 1891 թ. Ռոբերտ քոլեջում հիմնադրվեց «Երիտասարդ տղամարդկանց քրիստոնեական ընկերակցության» (Young Men`s Christian Association) մասնաճյուղը, իսկ կազմակերպության գործադիր մասնաճյուղը բացվեց Կոստանդնուպոլսում 1899 թ.:[2]

Միսիոներները հանդիսացան նաև կանացի կրթության առաջնեկներն Օսմանյան կայսրությունում: Հայկական առաջին աղջիկների դպրոցը հիմնադրվեց 1845 թ. օրիորդ Լովելլի կողմից Բերայում: 1868 թ. Էլի քույրերը հիմնադրեցին աղջիկների դպրոց Բիթլիսում: Նմանատիպ դպրոց բացվեց 1868 թ. Մարզվանում, իսկ 1871 թ.՝ Սկյութար, որի շենքը կառուցվեց 1875-1876 թթ.: Վերջինս 1890 թ. վերածվեց Կոստանդնուպոլսի ամերիկյան քոլեջի՝ աղջիկների համար: 1914 թ. այն տեղափոխվեց Բոսֆորի մյուս ափը և կոչվեց Կոստանդնուպոլսի քոլեջ: 1874 թ. աղջիկների դպրոց բացվեց Նիկոմեդիայում, որն ապագայում տեղափոխվեց Ադաբազար: 1880 թ. Մարաշի բնակչությունը նույնիսկ 2 250 դոլարի չափով գումար հավաքեց աղջիկների ճեմարան հիմնելու համար, որը բացվեց 1886 թ.՝ աղջիկների համար Կենտրոնական Թուրքիայի քոլեջ անվան տակ: 1881 թ. Զմյուռնիայում բացվեց Աղջկաց համալսարանական ինստիտուտը: Առաջին մանկապարտեզը երկրում բացվեց 1884 թ. միսիոներ Բարտլետի դստեր կողմից:[3]

Բողոքական միսիոներները, ինչպես նաև շատ ամերիկացիներ դեռևս 18-րդ դարի սկզբին մեծ հետաքրքրություն էին հանդես բերում բնական այն միջավայրի նկատմամբ, որը սնել էր սուրբ գրքերն ու «արաբական գիշերները»: 1835 թ. գրող-ճանապարհորդ Ջոն Լլոյդ Ստեֆենսն[4] այցելեց Մերձավոր Արևելք և հրապարակեց երկու *բեստսելլեր* իր ճանապորհուրդության մասին: Երեք տարի անց Անդովերի աստվածաբանական ճեմարանի դասախոս Էդվարդ Ռոբինսոնն[5] ու «Ամերիկյան խորհուրդի» անդամ Էլի Սմիթը Պաղեստինի մասին շատ կարևոր ուսումնասիրություն հրատարակեցին, որը «Բրիտանական թագավորական աշխարհագրական միության» կողմից

[1] Նշվ. աշխ., էջ 27:

[2] Gordon, Leland J., նշվ. աշխ., 226-227:

[3] Arpee, Leon, նշվ. աշխ., էջ 73:

[4] Ջոն Լլոյդ Ստեֆենս (1805-1852) – ամերիկացի ճանապարհորդ, գրող և իրավաբան, ճանապարհորդել և ուսումնասիրություններ է հրատարակել Եգիպտոսի, Հունաստանի, Մերձավոր Արևելքի, Ռուսաստանի, Լեհաստանի, Կենտրոնական Ամերիկայի մասին:

[5] Էդվարդ Ռոբինսոն (1794-1863) - ամերիկացի գիտնական-արևելագետ, համարվում է «բիբլիական աշխարհագրության» և ժամանակակից պաղեստինագիտության հիմնադիրը:

արժանացավ ոսկե շքանշանի: Նրա հաջողությունը հնարավոր դարձրեց 1842 թ. Բոստոնում ստեղծել «Ամերիկյան արևելագիտական ընկերությունը»: Նրա 68 անդամների շարքում 16-ը «Ամերիկյան խորհուրդի» անդամներ էին: Ռոբինսոնի և Սմիթի կատարած աշխատանքը հիմք հանդիսացավ Պաղեստինի կամ Սուրբ երկրի ուսումնասիրող հնագետների, պատմաբանների, Աստվածաշնչի մասնագետների նոր դպրոցի ստեղծման համար:

Առանձնահատուկ կերպով ընդունվեց նաև Ուիլյամ Թոմսոնի երկհատորյակը (1859) Սիրիայի մասին, որը տպագրվել էր 200 հազար տպաքանակով: Միսիոներների կողմից գրված և հարյուր հազարավոր տպաքանակով տպագրվող ուսումնասիրությունները, նոթագրությունները, հուշերը մեծ հետաքրքրություն էին ստեղծում ԱՄՆ-ում Մերձավոր Արևելքի մասին, որի արդյունքում 1900 թ. Յերուսաղեմում ստեղծվեց «Արևելյան ուսումնասիրությունների ամերիկյան դպրոցը»:[1]

Միսիոներական գործունեության ազդեցությունն Օսմանյան կայսրության կյանքի վրա չէր սահմանափակվում միայն կրոնական և կրթական բաղադրիչներով: Հանդիսանալով ոչ առևտրական կազմակերպություն՝ միսիոներական առաքելությունն ու միսիոներները գիտակցաբար կամ անգիտակցաբար գովազդում էին ամերիկյան ապրանքը, քարոզում ամերիկյան կյանքի ապրելակերպը, աշխատանքի և արտադրության փորձը: Միսիոներական առաքելության կրթական և բարեգործական գործունեությունը մեծ ազդեցություն ունեցավ կայսրության տնտեսական կյանքի զարգացման վրա: 1876 թ., ներկայացնելով «Ամերիկյան խորհուրդի» տարեկան ժողովում իր գործունեության մասին զեկույցը, Էդվին Բլիսը նշում էր, որ, օգտագործելով ամերիկյան արտադրության տնային գործիքներ և մեքենաներ, ինչպիսիք էին, օրինակ, կարի մեքենաները, միսիոներները քարոզում էին բարեկեցության և նյութական կոմֆորտի ամերիկյան կյանքի փորձը:[2]

Չնայած գոյություն ունեցող դժվարություններին, միսիոներները շարունակում էին վճռականորեն գրավել «հեթանոսների» սրտերն ու հոգիները, պնդել «նոմինալ» կամ «միայն անունով քրիստոնյաներին» լուսավորելու իրենց «աստվածային իրավունքի» կիրառման կարևորությունը: Միսիոներական դպրոցները սովորեցնում էին անգլերեն, մաթեմատիկա, գիտություն, ինչպես նաև ապահովում ուսանողներին աշխատանքով: Սայրուս Համլինի ղեկավարությամբ մի շարք գործարաններ բացվեցին, որոնք արտադրում էին վառարաններ, ալրաղացներ, հացի փուռեր: Երբ այդ ամերիկյան ներդրումները սկսեցին հակասել տեղական շահերին, միսիոներները հնարավորություն ստացան օսմանյան կառավարության կողմից տրված արտոնություններ

[1] Grabill, Joseph L., նշվ. աշխ., էջ 38-39:
[2] Gordon, Leland James, նշվ. աշխ., էջ 244:

ների միջոցով շարունակել այդ. ընկերությունների գործունեությունը: Միսիոներների արդյունաբերական գործունեությունը, որը նպատակաուղղված էր սերմանելու քրիստոնյա-ամերիկյան աշխատաձևի ավանդույթներ Օսմանյան կայսրությունում, իր զարգացումը ստացավ և վերածվեց «մեծ բիզնեսի», որի շահույթը ներդրվում էր եկեղեցիների շինարարության, հրապարակումների, հիվանդանոցների կառուցման մեջ:[1]

Միսիոներների գործունեության մասին տեղեկատվության տարածումը, նրանց հրապարակումներն ու պատմվածքներն ընդլայնում էին արտաքին աշխարհի և արտասահմանցիների մասին Միացյալ Նահանգների կառավարության և ժողովրդի ընկալումը: Ամերիկյան եկեղեցիները բարեգործական և տեխնիկական օժանդակություն էին տրամադրում Օսմանյան կայսրությունում՝ շատ դեպքերում անգիտակցաբար առիթ ստեղծելով Վաշինգտոնի համար հետագայում հնարավոր միջամտության համար: Միսիոներների ուղեբեռը, բացի ավետարանից և եկեղեցական գրականությունից, պարունակում էր նաև կարի մեքենաներ և ժամանակակից այլ գործիքներ, գրքեր ազատ կառավարման ձևերի մասին: Օրինակ՝ Հավայան կղզիների գրավումը 1898 թ. մեծապես պայմանավորված էր Նոր աշխարհի միսիոներների կողմից հավայան հասարակության ամերիկանացումով: Նույն գործընթացն իր զարգացումը ստացավ նաև Մերձավոր Արևելքում:

Միաժամանակ ԱՄՆ-ում լայնորեն տարածում ստացան «ակնհայտ ճակատագրի» և «սոցիալ դարվինիզմի» գաղափարները «անգլո-սաքսոնական հաստատությունների բնական գերազանցության» մասին: Օսմանյան կայսրությունում գործող շատ միսիոներներ հավատացած էին, որ «տոկուն հայերը պայքարող գոյատևման ապացույց են, ինչը ամուր հիմք է հանդիսանում համարձակ ամերիկացիների հետ քաղաքական առնչությունների համար»:[2]

1869 թ. Օսմանյան կայսրության ողջ տարածքում արդեն գործում էին 21 ամերիկյան միսիոներական կայաններ, որոնց սպասարկում էին 46 ամերիկացի միսիոներներ և մեծ քանակությամբ տեղացի հայ աշխատողներ: Եկեղեցիներից բացի՝ գործում էին 185 դպրոցներ: 1891 թ. Թուրքիայում գործող միսիոներական առաքելությունը համարվում էր «Ամերիկյան խորհուրդի» ամենահաջողված ծրագիրը: 1900 թ. ամերիկացի միսիոներների թիվն Օսմանյան կայսրությունում հասնում էր 162-ի: Առաջին համաշխարհային պատերազմի նախաշեմին Օսմանյան կայսրությունում գործում էին 17 հիմնական կայաններ և 256 ենթակայաններ, 174 միսիոներներ: Բացի կրոնական գործունեությունից, որի արդյունքում տպագրվում էր մեծ քանակութ-

[1] Payaslian, Simon, նշվ. աշխ., էջ 14:
[2] Grabill, Joseph L., նշվ. աշխ., էջ 4:

յամբ կրոնական գրականություն, երկրում գործում էին նաև 9 հիվանդանոցներ և 426 դպրոցներ, ուր ուսանում էին 25 հազար աշակերտներ:[1]

Ամերիկյան միսիոներների գործունեությունը հայերի շրջանում ամերիկյան հեղինակների կողմից համարվում է «տպավորիչ»: 1895 թ. տվյալների համաձայն՝ հայերի շրջանում աշխատում էին 176 ամերիկացի միսիոներներ, նրանց օգնում էին 878 տեղացի օգնականներ: Գործում էր 125 եկեղեցի 12 787 ծխականներով և 423 դպրոց՝ 20 496 աշակերտներով: Ըստ Կոստանդնուպոլսում ԱՄՆ-ի արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարար Սեմյուել Կոքսի[2], 1880 թ. տվյալների համաձայն, միսիոներները գործում էին Օսմանյան կայսրության 394 բնակավայրերում: Հիմնական ուսումնական կենտրոններն էին Կոստանդնուպոլիսը (Ռոբերտ քոլեջը և հետագայում Աղջկաց ամերիկյան քոլեջը), Այնթապը (Կենտրոնական Թուրքիայի քոլեջը), Մարզվանը (Անատոլիայի քոլեջը), Խարբերդը (Եփրաթի քոլեջը), Զմյուռնիան (Միջազգային քոլեջը), Վանը (Վանի քոլեջը) և Տարսոնը (Սուրբ Պողոսի ինստիտուտը): Ամերիկյան միսիոներների նվիրվածությունն իրենց գործունեության նկատմամբ ակնհայտորեն պայմանավորված էր Օսմանյան կայսրությունում իրենց անցկացրած երկար ժամանակով: Այսպես՝ Էլիաս Ռիգգն իր կյանքի 67 տարին աշխատել էր Օսմանյան կայսրությունում, Աստվածաշնչի տան գանձապահ Ուիլյամ Փիթն աշխատել էր Կոստանդնուպոլսում 35 տարի, պատվելի Ջորջ Նեփն աշխատել էր Բիթլիսում 1858-1895 թթ.: Նրանք բոլորը ժամանել էին այստեղ իրենց ընտանիքներով և շատ հաճախ նրանց երեխաները նույնպես դառնում էին միսիոներներ՝ սկիզբ դնելով միսիոներական դինաստիաներին:[3]

Թեև միսիոներները որոշել էին «ուղիղ ազդեցություն» չգործադրել մահմեդականներին կրոնափոխելու ուղղությամբ, իրականում նրանք աշխատում էին տարածել իրենց կրոնական գրականությունն ինչպես քրիստոնյա, այնպես էլ մահմեդական շրջանակներում: Միսիոներները համարում էին 1856 թ. Հաթթի Հումայունի 6-րդ հոդվածը որպես ոչ միայն քրիստոնյաների, այլև մահմեդականների հետ աշխատելու հնարավորություն: Հոդվածը երաշխավորում էր բոլորի համար կրոնական հավատամքի ազատություն: Թեև միսիոներների կողմից տարվող աշխատանքը մահմեդականների շրջանում առաջին հերթին վտանգում էր մահմեդականների կյանքը, 1878 թ. տվյալների համաձայն՝ 20 տարվա ընթացքում Օսմանյան կայսրությունում շուրջ 50 մահմեդականներ ընդունել էին քրիստոնեություն:[4]

[1] Gordon, Leland James, նշվ. աշխ., էջ 222:
[2] Սեմյուել Կոքս (1824-1889) - ԱՄՆ-ի քաղաքական գործիչ և դիվանագետ, արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարար Օսմանյան կայսրությունում (1885-1886):
[3] Salt, Jeremy, նշվ. աշխ., էջ 31:
[4] Նույն տեղում, էջ 34-35:

Միսիոներների գործունեության հետ առնչվող առաջին լուրջ խնդիրը ծագեց 1860-ական թթ., երբ Բարձր Դուռը խիստ պայմաններ հաստատեց առաքելության կրթական հաստատությունների համար: Դուռը պայմանավորում էր այդ խստացումները ազգայնականություն և հեղափոխություն քարոզելու փոքրամասնությունների միջավայրում և կրթելու հանգամանքով: Միսիոներների անհանգստությունն ավելի ուժեղացավ, երբ 1880-ական թթ. Աբդուլ Համիդը սկսեց անհանգստացնել նրանց՝ փակելով միսիոներական դպրոցները: Ըստ Ջոզեֆ Գրաբիլի՝ ֆրանսիացի և ռուս գործակալները հաճախ ուղղում էին օսմանյան կառավարությունն այդ կրթական հաստատությունների դեմ՝ հայտնելով օսմանյան պաշտոնյաներին, որ նրանք զբաղվում են քաղաքականությամբ:[1]

Որոշ հեղինակներ միսիոներների գործունեությունն Օսմանյան կայսրությունում այսօր էլ բնութագրում են որպես «սադրիչ»: Ըստ Անկարայի Բիլքենտի համալսարանի դասախոս, բրիտանացի Ջերեմի Սոլթի՝ միսիոներները հասել էին նրան, որ ազատորեն դուրս էին բերում իրենց գրքերը Ստամբուլի փողոցներն ու քարոզում իրենց կրոնը: Դեռևս 1864 թ., համոզվելով, որ այդ գործողությունները կարող են վտանգել հասարակական կարգը, օսմանյան իշխանությունները փակեցին բրիտանացի և ամերիկացի միսիոներների Ստամբուլի գրասենյակներն ու հավաքատեղիները՝ առգրավելով նրանց գրականությունը: Իշխանությունների գործողություններն առաջացրել էին միսիոներների զայրույթը, նրանք շարունակաբար բողոքում էին՝ նշելով, որ այդ քայլերը հակասում էին Հաթթի Հումայունի դրույթները կրոնի ազատության մասին: Իսկ օսմանյան իշխանությունները պնդում էին, շարունակում էր Սոլթը, որ չեն կարող թույլ տալ՝ միսիոներները կրոնը քարոզող գրականություն տարածեն Ստամբուլի փողոցներում: Արտաքին գործերի նախարար Ալի փաշան նշում էր, որ պետք է տարբերակել կրոնի «հանդուրժող արտահայտությունները» կրոնի «պարբերական քարոզչությունից»:[2]

1882 թ. «Ամերիկյան խորհուրդի» հաշվետվության մեջ նշվում էր, որ թեև օսմանյան կառավարությունը շարունակում էր հանդուրժել միսիոներական գործունեությունը, այն այլևս բարյացակամ չէր. մշտական դժվարությունն էր ստեղծում շինությունների կառուցման թույլտվությունները տալու և միսիոներական գործունեության հետ առնչվող այլ հարցերում: 1886 թ. Բարձր Դուռը որոշում կայացրեց փակել այն բոլոր դպրոցները, որոնք, համաձայն հին օսմանյան օրենքի, հիմնադրման մասին կայսերական թույլտվություն չունեին: Օրինակ՝ սիրիական հյուպատոսական շրջանում գործող 62 դպրոցներից շատերը բացվել էին առանց թույլտվության: 1887 թ. Յերու-

[1] Grabill, Joseph L., նշվ. աշխ., էջ 40-41:
[2] Salt, Jeremy, նշվ. աշխ., էջ 35-37:

սաղեմում ԱՄՆ-ի գլխավոր հյուպատոս Սելահ Մերրիլը[1] գրում էր, որ օսմանյան կառավարությունը միանշանակ փոխել էր իր վերաբերմունքը միսիոներական գործունեության նկատմամբ: Դա արտահայտվում էր թերթերն արգելելու, դպրոցները փակելու, դպրոցների և եկեղեցիների կառուցման թույլտվությունները չտալու, արտասահմանցիներին հողը որպես սեփականություն չտրամադրելու մեջ:[2] Սուլթան Աբդուլ Համիդը համոզված էր, որ «մասնավոր դպրոցները լուրջ վտանգ էին ներկայացնում մեր ազգի համար»: Նրա մտահոգությունն այն էր, որ արևմտյան կրթությունն ու արևմտյան կենսակերպի հետ ծանոթացումը կարող էր բերել նրան, որ շատ հայեր և արաբներ կմեկնեն Միացյալ Նահանգներ կամ կքաջալերեն փոքրամասնությունների ապստամբությունը հետադիմական օսմանյան կառավարության դեմ:[3]

Սակայն միսիոներները շարունակում էին իրենց գործունեությունը՝ համարելով, որ օսմանյան իշխանությունները խախտում էին իրենց իսկ օրենքները, մասնավորապես Հաթթը Հումայունը: Մյուս խնդիրը, որը ծագեց միսիոներների և օսմանյան իշխանությունների միջև այն էր, որ վերջիններս համոզված էին, որ միսիոներները վատ ազդեցություն են ունենում «երիտասարդ և դյուրազգաց քրիստոնյաների» վրա: Այս համոզմունքն ու կասկածներն այն մասին, որ միսիոներները «վտանգավոր գաղափարներ են սերմանում երիտասարդ գլուխներում», շատ ավելի խորացան 1878 թ., երբ Բուլղարիան անկախացավ Օսմանյան կայսրությունից: Այն հանգամանքը, որ Կոստանդնուպոլսի ամերիկյան Ռոբերտ քոլեջի շրջանավարտները դարձան բուլղարական առաջին կառավարության անդամներ, ավելի խորացրեց այդ կարծիքը: 1890 թ. Կոստանդնուպոլսում ԱՄՆ-ի արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարար Ալեքսանդր Տերրելը[4] գրում էր, որ «թուրքերը հավատացած են, որ ազատ մտածելակերպ կրթող և քաջալերող Ռոբերտ քոլեջը պատճառ է դարձել Բուլղարիայի կորստի համար»:[5]

Բողոքական միսիոներների գործունեությունն առաջացնում էր նաև Ռուսաստանի իշխանությունների դժգոհությունը: 1882 թ. հոկտեմբերի 19-ին Ռուսաստանի արտաքին գործերի նախարարությունը հրահանգում էր Կոստանդնուպոլսում իր դեսպանությանը տեղեկություններ հավաքել հայկական շրջաններում միսիոներների գործունեության մասին: Նույն թվակա-

[1] **Սելահ Մերրիլ** (1837-1909) - ԱՄՆ-ի հյուպատոս Յերուսաղեմում (1882-1885, 1891-1893, 1898-1907), ննագետ:
[2] **Gordon, Leland James**, նշվ. աշխ., էջ 228-229:
[3] **Grabill, Joseph L.**, նշվ. աշխ., էջ 28:
[4] **Ալեքսանդր Տերրել** (1827-1912) - ԱՄՆ-ի իրավաբան, գնդապետ, Քաղաքացիական պատերազմի մասնակից, արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարար Օսմանյան կայսրությունում (1893-1897):
[5] **Salt, Jeremy**, նշվ. աշխ., էջ 38:

նի նոյեմբերի 4-ին արտաքին գործերի նախարարությանն ուղղված նամակին ռուս դեսպանը կցում էր Տրաբզոնում հյուպատոսի առաջարկած գործողությունները՝ հայաշատ վայրերում միսիոներների դիրքերը թուլացնելու նպատակով.

1) Փոքր Ասիայում գործող ռուսական գործակալները պետք է ամեն կերպ հայերի միջավայրում ուժեղացնեն այն գաղափարի տարածումը, ըստ որի՝ առանց Ռուսաստանի նրանք չեն կարող փրկվել թուրքական լծից,

2) ուժեղացնել Էջմիածնի կաթողիկոսի ազդեցությունը Անատոլիայի և թուրքահայ այլ շրջաններում,

3) թուրքահայ երիտասարդներին հնարավորություն տալ սովորելու Կովկասի ուսումնական հաստատություններում,

4) ռուսական հյուպատոսները տարին մեկ կամ երկու անգամ պետք է այցելեն կաթողիկոսին Էջմիածնում, դրանով իսկ նպաստեն հայկական երկփեղկված շրջանների միավորմանը՝ թուլացնելով միսիոներների քարոզչությունը հայերի շրջանում,

5) պետք է նյութապես օգնել հայկական դպրոցներին,

6) Ռուսաստանից ուսուցիչներ ուղարկել և ռուսերեն դասավանդել տեղի հայկական դպրոցներում, իսկ ռուսաց լեզվին տիրապետելը թուրքահայ երիտասարդներին հնարավորություն կտա իրենց ուսումը շարունակել Ռուսաստանում և ոչ թե եվրոպական ուրիշ երկրներում:

Հյուպատոսը եզրակացնում էր, որ այս միջոցառումների իրականացումն էլ ավելի կամրապնդի ոչ միայն մշակութային կապերը, այլև կզարգացնի առևտրատնտեսական հարաբերություններն արևմտահայության և Ռուսաստանի միջև:[1]

Ռիզե քաղաքում ամերիկյան միսիոներ Փամլիի հետ ունեցած զրույցի ժամանակ Ռուսաստանի փոխհյուպատոս Ա. Ի. Գիպպիուսը նշում էր. «Իմ կարծիքով՝ վերջին շրջանում ուժեղացած հայկական քարոզչությունը կարող է միայն կործանել հայերի ողջ ապագան: Նրանց իսկ սեփական շահից ելնելով՝ պետք էր գործել հակառակ կերպ. նստել հանգիստ, բարեկամություն անել թուրքերի հետ, փորձել բազմանալ, զարգանալ մտավի և բարոյապես հարստանալ: Ազատված լինելով պարտադիր զինվորական ծառայությունից ու գտնվելով դրա հետևանքով շատ ավելի բարենպաստ պայմաններում, քան մահմեդականները՝ մի քանի տասնյակ տարիներից հետո հայերը կարող էին իրենց կողմը քաշել փաստացի նշանակության ծանրության կենտրոնը, և այդ ժամանակ թուրքերի վերջը կգար իրերի բերումով»: Գիպպիուսը մեծապես զարմացած էր մնացել, երբ միսիոները պատասխանել էր

[1] **Սողոմոնյան Ա. Մ.**, Անգլիական միսիոներների գործունեությունը Արևմտյան Հայաստանում // *«Պատմա-բանասիրական հանդես»*, Երևան, 1988, No. 4, էջ 234:

հետևյալ կերպ. «Իսկ դուք գիտե՞ք, որ մեր գլխավոր խնդիրը նման հեղաշրջման աստիճանական նախապատրաստումն է»:[1]

Շատ հեղինակներ և ուսումնասիրողներ այն կարծիքին են, որ ամերիկյան միսիոներները իրենց գործունեությամբ պարարտ հող էին նախապատրաստել Օսմանյան կայսրությունում հայ ազգային-ազատագրական շարժման համար: Ըստ Լյուիս Թոմասի ու Ռիչարդ Ֆրայի՝ «Օսմանյան աշխարհում ամերիկյան միսիոներության գործունեության զգալի մասն ուղղված էր հայերին», շարժում, որի գլխավոր և ոչ կանխամտածված արդյունքներից կամ «կողմնակի արտադրանքից» մեկը հետագայում «սարսափեցրեց» միսիոներներին՝ «հայկական ազգայնական հույսերի ուժեղացումը կամ երիտասարդ հայերին օսմանյան պետության դեմ գործող պոտենցիալ հեղափոխականներ դարձնելը»: Տարիների ընթացքում Անատոլիայի դեռևս մեծաթիվ ոչ մահմեդական բնակչությունն այսպիսով դարձավ «պոտենցիալ ապստամբ», որի վրա «համառորեն ազդեցություն էր գործել վեստերնիզացիան», մասնավորապես «արևմտյան ազգայնականությունը»:[2]

Գրեթե նույն կարծիքին էր Լելանդ Գորդոնը: Նրա կարծիքով, թեև ամերիկյան միսիոներները «բծախնդրորեն աշխատում էին անկողմնակալ վերաբերմունք հանդես բերել քաղաքական խնդիրների նկատմամբ», օսմանյան կառավարությունը միշտ էլ կասկածում էր, որ նրանք «բորբոքում են հայերի քաղաքական ձգտումները»: Հեղինակը համոզված էր, որ միսիոներների գործունեությունը «կարևոր անուղղակի» ազդեցություն էր գործել «հայկական ազգայնական զգացմունքների զարգացման վրա», թեև «որոշ հայ ղեկավարներ մեղադրում էին ամերիկացի միսիոներներին քաղաքական շարժման մեջ մասնակից չլինելու մեջ»:[3]

Իրականում միսիոներների մեծամասնությունը հանդես էր գալիս հեղափոխական շարժման դեմ: Մանուկ Ճիզմեճյանը գրում էր, որ «առաջին օրեն իսկ միսիոներներ հակառակ էին հայոց մեջ հեղափոխական գաղափարի քարոզչության: Անոնք կտեսնեին Ռուսիո մատը տաճկահայ հեղափոխական շարժումներուն մեջ և հայերու ռուսասեր քաղաքականությունը՝ խոշոր վտանգ մը կնկատեին Տաճկաստանի միսիոներական դպրոցներու ու հաստատությանց առաջադիմության»:[4] Այսպես՝ 1893 թ. «Ամերիկյան խորհուրդի» քարտուղար Ջեյմս Բարտոնը կազմակերպել էր հանդիպում Մասաչուսետսի նահանգի Վուստերի հայ համայնքի հետ, որին մասնակցում էին նաև Վանից, Էրզրումից, Այնթապից և այլ քաղաքներից ժամանած

[1] ՀԱԱ, Քաղվածքների ֆոնդ, ց. 1, գ. 339 (2), թ. 117-118:
[2] Thomas, Lewis V. and Frye, Richard N., նշվ. աշխ., էջ 60:
[3] Gordon, Leland James, նշվ. աշխ., էջ 224:
[4] Ճիզմէճեան, Մանուկ Գ., Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց, 1890-1925, Ֆրեզնո: Նոր Օր, 1930, էջ 8:

միսիոներները: Նրանք փորձում էին համոզել հայերին հրաժարվել հեղափոխական շարժումից և քարոզչությունից, որը կարող է հանգեցնել համատարած կոտորածների:

«Ամերիկյան խորհուրդի» «շրջիկ քարոզիչ» Մ. Հ. Հիչկոկն այցելում էր հայ գաղթականների տները և կոչ անում չաջակցել հայ հեղափոխականների գործողությունները:[1] ԱՄՆ-ի հայ համայնքին ուղղված շրջաբերական նամակում վերջինս, սխալ համարելով հայ հեղափոխականների քաղաքականությունը, եզրակացնում էր.

«1. Հաջողության հույս և հավանականություն չերևիր:

2. Հեղափոխության հետևանքը հավանականապես սոսկալի ջարդ ու կոտորած պիտի ըլլա, և քանի որ հաջողելու ալ հույս մը չերևիր, մեծ հանցանք (եղեռն) է հեղափոխիլն:

3. Անկախ և ինքնիշխան կառավարության մը ձեռնարկն հայոց համար ներկա պարագայից տակ գործադրելի չէ»:[2]

Սայրուս Համլինին մտահոգում էր այն, որ ամերիկյան բողոքական միսիոներները կարող էին ներքաշվել «հեղափոխականների մեքենայությունների մեջ»: Թեև միսիոներներին խորհուրդ էր տրվում որևէ աջակցություն չցուցաբերել հնչակյաններին և նրանց «հեղափոխական և սադրիչ ծրագրերին», նրանց համար դժվար էր խուսափել հեղափոխականների «սադրանքներից» և «վարկաբեկվել» օսմանյան կայսրության աչքում: 1880-ական թթ. վերջում միսիոներների համակրանքը հայերի վիճակի նկատմամբ, ինչպես նաև ամերիկյան դպրոցներում աշխատող բազմաթիվ հայ ուսուցիչներն առաջացնում էին նաև ԱՄՆ-ի ներկայացուցչության մտահոգությունները, որի մասին նրանք տեղեկացնում էին պետքարտուղարությանը: Մասնավորապես 1893 թ., երբ Մարզվանի քոլեջում աշխատող հայ ուսուցիչները ձերբակալվեցին հեղափոխական գործունեությամբ զբաղվելու մեղադրանքով, մի կողմից առաջացրին ամերիկյան և եվրոպական հասարակայնության դժգոհության ալիք, իսկ մյուս կողմից, էլ ավելի լուրջ կասկածներ առաջացրին օսմանյան կառավարության շրջանում՝ հայ հեղափոխական շարժման նկատմամբ միսիոներների համակրանքի և աջակցության համար:[3]

Միսիոներական գործունեության հանդեպ օսմանյան կառավարության դժգոհությունն ավելի բարդացավ հայերի նկատմամբ աճող թշնամության համատեքստում: Այդ ընդդիմությունն իր գագաթնակետին հասավ 1894 թ. սկսված կոտորածների ժամանակ: Շատ դեպքերում այդ պոռթկումներն ուղղված էին բողոքական առաքելությունների աշխատանքի դեմ: Օրինակ՝ Խարբերդի և Մարաշի ջարդերից հետո օսմանյան կառավարության կողմից

[1] Նույն տեղում, էջ 13:
[2] Նույն տեղում, էջ 18:
[3] Salt, Jeremy, նշվ. աշխ., էջ 64:

«կոշտ ու կոպիտ» փորձեր եղան ամերիկյան միսիոներներին երկրից վտարելու նպատակով: Թուրք պաշտոնյաներն իրենց իրավունք վերապահեցին բացել և ստուգել բոլոր նամակները, որոնք հասցեագրված էին կոտորածների շրջաններում գործող ամերիկյան դիվանագետներին և միսիոներներին, ինչպես նաև այնտեղից ուղարկված նամակները: Դա վերաբերում էր ինչպես պաշտոնական, այնպես էլ միսիոներների անձնական նամակագրությանը: Ամերիկյան կառավարությունը բողոքի հայտագրեր ներկայացրեց օսմանյան կառավարությանը՝ ԱՄՆ-ի դիվանագիտական ներկայացուցիչների և քաղաքացիների իրավունքները խախտելու համար:[1]

Ըստ Ջերեմի Սոլթի, քանի որ միսիոներները շատ դեպքերում քրիստոնյա համայնքների իրավիճակի մասին տեղեկատվության հիմնական աղբյուրներն էին հանդիսանում դրսի աշխարհի համար, նրանց «խոտորված» կարծիքը մեծ ազդեցություն էր ունենում հասարակական կարծիքի ձևավորման վրա:[2] Ըստ նույն հեղինակի՝ հեղափոխականների ծրագրերն ու Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի բարենորոգումների պահանջները հայերի համար Աբդուլ Համիդը գնահատում էր որպես նախնական քայլեր հայկական ինքնավարության ճանապարհին, և նա վճռական էր այդ հարցում զիջում թույլ չտալու մեջ: Իր իշխանության օրոք նա արդեն խոշոր տարածքներ էր կորցրել, գրում է Սոլթը, և հայկական պետության ստեղծումը վեց արևելյան վիլայեթների շրջանում մահմեդականների համար «ճչացող անարդարություն էր, և նրանք ավելի շուտ կթրցնեին նրա գլուխն ուսերից, քան թույլ տային, որ Հայաստանը դուրս գար կայսրություն կազմից»: Ռազմական առումով հայերը չէին կարող շահել պայքարը կայսրության կանոնավոր և ոչ կանոնավոր ուժերի դեմ, սակայն նրանք շահում էին ճակատամարտն միսիոներների կողմից պատրաստված արտասահմանյան հասարակական կարծիքի միջոցով, քանի որ Անգլիայում, Եվրոպայում և Միացյալ Նահանգներում հայերի հանդեպ համակրանքը խարսխված էր իսլամի հանդեպ «խորը արմատացած» հակակրանքի վրա: Եվրոպական տերությունները, իրենց հերթին, նպատակադրված կերպով իրականացնում էին հայերի համար բարենորոգումներ իրագործելու քաղաքականությունը, որն առաջացնում էր «համայնքային անկարգություններ» և կարող էր ավարտվել տերությունների ռազմական միջամտությամբ:[3]

Որոշ հեղինակներ համարում են, որ միսիոներների ավանդն Օսմանյան կայսրությունում տեղի ունեցող «բռնությունների մեջ» հնարավոր է պայմանավորված էր նրանով, որ նրանք շատ ավելի մեծ ուշադրություն էին դարձնում հայերին, քան թե թուրքերին: Միսիոներները չէին սպասում, որ

[1] Gordon, Leland James, նշվ. աշխ., էջ 229-230:
[2] Salt, Jeremy, նշվ. աշխ., էջ 39:
[3] Նույն տեղում, էջ 67:

հայատառ թուրքերենի քաջալերումն Աստվածաշնչի թարգմանության միջոցով և դպրոցների առկայությունը հայերի շրջանում, կարող են քաջալերել նրանց ազգայնականությունը: «Ամերիկյան խորհուրդի» անդամներն ամեն կերպ ժխտում էին իրենց անուղղակի մասնակցությունը տեղի ունեցող կոնֆլիկտում: Փոխարենը նրանք հանդես էին գալիս օսմանյան անարդարության դեմ, որի արդյունքում թուրքերը սարսափելի հեղինակություն ունեին ԱՄՆ-ում: Վաշինգտոնում օսմանյան դիվանագիտական ներկայացուցիչ Ռուստեմ փաշան հայտարարում էր, որ «Թուրքիան դարձել է պարբերական հարձակումների առարկա Միացյալ Նահանգների մամուլում: Այն ներկայացվում է որպես անիրավության օրինակ»: Միսիոներները չէին հասկանում, որ Բարձր Դուռը չի կարող բարեսրտորեն վերաբերվել միսիոներներին, որոնք հայ փոքրամասնությանը գրագիտություն և մասնագիտություններ էին սովորեցնում, փոքրամասնություն, որը նաև սկսել էր խոսել անկախության մասին:[1]

Միաժամանակ «հասարակական մտքի և կրոնի միաձուլումն օգնեց բողոքական էմիսարներին դառնալ կարևոր հանգամանք օսմանա-ամերիկյան հարաբերությունների համար»: Միսիոներները մերժում էին եկեղեցու և պետության միությունը, սակայն ընդունում էին քրիստոնեության և մշակույթի միությունը: Քանի որ միսիոներները պատրաստ չէին կայսրությունում տեղի ունեցող տեղաշարժերին, որոնք իրենցից ներկայացնում էին քաղաքականության և կրոնի համակցություն, 1890-ական թթ. միսիոներները հայտնվեցին մի իրավիճակում, երբ դարձան Օսմանյան Թուրքիայում ԱՄՆ-ի կառավարության «հիմնական շահն ու մտահոգությունը»: Պաշտոնական Վաշինգտոնի երկրորդական հետաքրքրություններից էին տուրիստների, գիտնականների, առևտրականների և ամերիկյան հպատակություն ստացած կայսրության նախկին քաղաքացիների իրավունքների հարցերը: Սակայն մինչև 1914 թ. ընկած երկու տասնամյակի ընթացքում թուրք-ամերիկյան դիվանագիտական հարաբերությունների ամենամեծ խնդիրը միսիոներներ էին և նրանց դժվարությունները:[2]

Առաջին համաշխարհային պատերազմից երկու տասնամյակ առաջ միայն ԱՄՆ-ի պաշտոնական շրջաններում հասկացան, թե ինչ բան է Արևելյան հարցը, և թե ի՞նչ դեր կարող է խաղալ Օսմանյան կայսրությունը եվրոպական ուժերի հավասարակշռության համակարգում: Լավ հասկանալով, որ եվրոպական «դժբախտությունները» կամ խնդիրները անուղղակի կերպով կարող են օգտակար լինել հաջողությունների հասնելու հարցում, ԱՄՆ-ի կառավարությունն ավանդաբար ձեռնպահ էր մնում Հին աշխարհի

[1] Grabill, Joseph L., նշվ. աշխ., էջ 47:
[2] Նույն տեղում, էջ 35:

գործերին միջամտելուց: Վաշինգտոնի ուշադրությունն բևեռված էր առաջին հերթին իր սահմանների ընդլայնման, Կարիբյան ավազանում իշխելու և Հեռավոր Արևելք մուտք գործելու հարցերի վրա:[1]

1819-1896 թթ. ընթացքում «Ամերիկյան խորհուրդն» Օսմանյան կայսրության իր առաքելությունների պահպանման և 700 միսիոներների գործունեության համար ծախսել էր 7 մլն դոլար: Միայն 1896 թ. այդ ծախսը կազմել էր 1,5 մլն դոլար: Մինչև Առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը՝ իր գործունեության 96 տարիների ընթացքում, այդ ծախսը հասել էր 20 մլն դոլարի: Միսիոներական առաքելությունների սեփական հողի, շինությունների և սարքավորումների արժեքը կազմում էր 2 մլն դոլար:[2]

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին «Ամերիկյան խորհուրդը» ստեղծել էր Թուրքիայում աշխարհում նմանը չունեցող գործունեության դաշտ, որը բաժանված էր չորս վարչական տարածքների՝ Եվրոպական, Արևմտյան, Կենտրոնական և Արևելյան: Այստեղ գործում էին 20 կայաններ՝ 150 աշխատակիցներով (քահանաներ, բժիշկներ, միսիոներների կանայք), շուրջ 180 տեղացի քահանաներով, հազարից ավելի տեղացի աշխատողներով, 15 հազար անդամ ունեցող 137 հայկական բողոքական եկեղեցիներով: Հայոց պատրիարք Մաղաքիա Օրմանյանի[3] 1910 թ. տվյալներով՝ Թուրքիայի տարածքում կար 49 050 հայ բողոքական:[4]

1903 թ. Խարբերդում ԱՄՆ-ի հյուպատոս Թոմաս Նորտոնը կարծիք էր հայտնում, որ 50 տարիների կրթական աշխատանքի միջոցով միսիոներները մեծ ազդեցություն էին ունեցել առևտրական և տնտեսական փորձի ու մեթոդների կիրառման վրա: Դա ներառում էր Ամերիկյան տան կազմակերպումը, համապատասխան գործիքների օգտագործումը, ամերիկյան գրքերի և պարբերականների տարածումը, հնարագիտության և նախաձեռնողական հմտությունների ուսուցանումը: 1908 թ. Ջեյմս Բարտոնը, որը «Ամերիկյան խորհուրդի» արտասահմանյան քարտուղարն էր, հրապարակել էր մի գիրք,[5] որի մի առանձին գլուխ նվիրված էր միսիոներական գործունեության շնորհիվ Թուրքիայում տեղի ունեցած արդյունաբերական փոփոխություններին: Նրանց աշխատանքի արդյունքում Թուրքիայում սկսեցին կիրառել ատաղձագործական և գյուղատնտեսական նոր գործիքներ: Կարի մեքենաների և նավթի լամպերի օգտագործումը տներում նա նույնպես վերագրում

[1] Նույն տեղում, էջ 40-41:
[2] Arpee, Leon, նշվ. աշխ., էջ 71-72:
[3] Մաղաքիա Օրմանյան (1841-1918) – աստվածաբան, հայագետ, պատմաբան, բանասեր, հրապարակախոս, ազգային պահպանողական ուղղության գործիչ, Կոստանդնուպոլսի հայոց պատրիարք (1896-1908), հիմնական աշխատությունները՝ «Հայոց եկեղեցին և յուր պատմությունը», «Համապատում», «Ազգապատում», «Խոհ և խոսք»:
[4] Grabill, Joseph L., նշվ. աշխ., էջ 33; Arpee, Leon, նշվ. աշխ., էջ 72:
[5] Barton, James L., Daybreak in Turkey, Boston, 1908.

էր միսիոներներին: Իսկ 1909 թ. ԱՄՆ-ի հյուպատոսն իր հաշվետվության մեջ գրում էր, որ «Ռոբերտ քոլեջն ուժեղ ազդեցություն ուներ Թուրքիայի հետ աճող ամերիկյան առևտրի վրա»: Ամերիկյան միսիոներության գործունեությունը՝ իր ուսուցիչներով, կրթական մեթոդներով, գրքերով, աշխատանքի մեթոդներով և իդեալներով, ապահովեց «Միացյալ Նահանգների ապագա առևտրական գերիշխանությունը Թուրքիայում»:[1]

Այսպիսով՝ «Ամերիկյան խորհուրդն» ու ԱՄՆ-ի մյուս բողոքական կազմակերպությունները կարողացան ի վերջո գլխավորել աշխարհի տարբեր անկյուններում քրիստոնեության յուրահատուկ շարժում: Ամերիկացիները դարձան այն հիմնական ուժը, որն օգնում էր քրիստոնեությանը դառնալ առաջին և միակ կրոնը, որն ուներ լայնորեն տարածված, միջմայրցամաքային համախոհ-կրոնակիցներ: Այս շարժման գագաթնակետը հանդիսացավ 1910 թ. Էդինբուրգում տեղի ունեցած Համաշխարհային միսիոներական համաժողովը, որին մասնակցեցին 1 200 բողոքական միսիոներներ աշխարհի տարբեր անկյուններից, որը նախագահում էր Ջոն Մոտտը[2]՝ «Քրիստոնյա ուսանողների համաշխարհային ընկերակցության» և «Երիտասարդ մարդկանց քրիստոնյա ընկերակցության» ղեկավարը:[3]

[1] Gordon, Leland James, նշվ. աշխ., էջ 244-245; Monthly Consular and Trade Reports, No. 350, 1909, November, p. 30.
[2] Ջոն Մոտտ (1865-1955) - բողոքականության խոշոր գործիչ, «Քրիստոնյա ուսանողների համաշխարհային ընկերակցության» (World Student Christian Federation) և «Երիտասարդ տղամարդկանց քրիստոնյա ընկերակցության» (Young Men's Christian Association) ղեկավար, 1946 թ. Խաղաղության Նոբելյան մրցանակի դափնեկիր:
[3] Grabill, Joseph L., նշվ. աշխ., էջ 6:

ԳԼՈՒԽ III

ԱՄԵՐԻԿՅԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 1860-1890-ԱԿԱՆ ԹԹ.

1. ԱՄՆ-Օսմանյան կայսրություն հարաբերությունները 1860-1870-ական թթ.

ԱՄՆ-Օսմանյան կայսրություն հարաբերությունները սկսեցին վերելք ապրել 1860-ական թթ., մասնավորապես 1861-1865 թթ. Ամերիկայի քաղաքացիական պատերազմի ժամանակաշրջանում: Օսմանյան կայսրությունը մշտապես իր համակրանքն էր արտահայտում Միությանը կամ Հյուսիսին, հարաբերություններն այդ ընթացքում ընդգծված բարեկամական էին: Լիազոր նախարար Էդվարդ Ջոյ Մորրիսը,[1] որը որպես ԱՄՆ-ի դիվանագիտական ներկայացուցիչ ժամանել էր Կոստանդնուպոլիս 1861 թ., ջերմ ընդունելություն էր ստացել մեծ վեզիրի կողմից: Մորրիսը զեկուցում էր պետքարտուղարին, որ ԱՄՆ-ի նկատմամբ օսմանյան կառավարության կողմից ցուցաբերվում էր առանձնահատուկ վերաբերմունք, թեև «իր նախորդը հարավցի էր և պետք է ներկայացներ թուրքերին հարավային նահանգների տեսակետները»:[2]

1862 թ. փետրվարի 25-ին ԱՄՆ-ն ու Օսմանյան կայսրությունը Փարիզում ստորագրեցին Բարեկամության և առևտրի պայմանագիր, որի համաձայն՝ օսմանյան կողմն ամերիկյան քաղաքացիներին և նավերին շնորհեց «ամենից արտոնյալ պետության» կարգավիճակ, իսկ ամերիկյան կողմն այլևս չէր պահանջելու թուրք առևտրականներից «առևտրային թույլտվություններ» (trade permits):[3] Պայմանագիրն ուժի մեջ մտավ նույն թվականի հուլիսի 2-ին:

[1] Էդվարդ Ջոյ Մորրիս (1815-1881) - ԱՄՆ-ի Հանրապետական կուսակցության գործիչ և դիվանագետ, հավատարմատար Երկու Սիցիլիաների թագավորությունում (1850-1853), լիազոր նախարար Օսմանյան կայսրությունում (1861-1870):
[2] United States Department of State. Papers Relating to Foreign Affairs, 1861, p. 786; Gordon, Leland James, նշվ. աշխ., էջ 12.
[3] Gordon, Leland James, նշվ. աշխ., էջ 50.

Քաղաքացիական պատերազմից հետո, ինչպես զենքի և զինամթերքի, այնպես էլ զինվորների ավելցուկը, հնարավորություն ստեղծեցին ավելի խորացնելու առևտրական հարաբերություններն Օսմանյան կայսրության հետ, որոնք հիմնականում ղեկավարվում էին զենքի արտադրության «Remington» ընկերության կողմից: Հնդկացիների և մեքսիկացիների դեմ պայքարի մեծ փորձ ունեցող ամերիկացի շատ զինվորներ անցան ծառայության օսմանյան կառավարությունում: 1860-ական թթ. օսմանյան կառավարությունը սկսեց խրախուսել բամբակի սերմնացուի ներկրումն ԱՄՆ-ից՝ գյուղատնտեսական արտադրությունը զարգացնելու նպատակով:[1]

1862 թ. մարտի 26-ին սուլթան Աբդուլ Ազիզը[2] հրամանագիր ստորագրեց, որն արգելում էր սպասարկել թուրքական նավահանգիստներում ինչպես Կոնֆեդերացիայի կամ Հարավի, այնպես էլ այն երկրների նավերը, որոնք կարող էին վտանգել Հյուսիսի շահերը:[3] Սուլթանն արգելեց նաև, որ նավահանգիստներ մուտք գործեն այն ծովահենների նավերը, որոնք վնաս էին հասցնում ամերիկյան առևտրին:[4] Օսմանյան կառավարությունը որոշում կայացրեց նաև ազատելու Հյուսիսի ռազմանավերի մուտքն ամեն տեսակի արգելքներից: Բարձր Դուռը հայտարարեց նաև, որ չի ճանաչում Կոնֆեդերացիան որպես պատերազմող կողմ, ինչպես որ դա արել էին Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան, ինչպես նաև չի համակրում Ամերիկյան միությունը փլուզելու նրանց քաղաքականությանը:[5]

ԱՄՆ-ի կառավարությունն իր հատուկ շնորհակալությունը հայտնեց թուրք սուլթանին բարեկամական նման դրսևորումների համար՝ հույս հայտնելով, որ մյուս երկրները նույնպես կհետևեն Օսմանյան կայսրության օրինակին:[6] 1862 թ., երբ պատվելի Դենիել Բլիսի[7] գլխավորությամբ մի շարք միսիոներներ պահանջեցին ճնշում գործադրել օսմանյան կառավարության վրա՝ միսիոներների շահերը պաշտպանելու նպատակով պետքարտուղար Ուիլյամ Սյուարդը պատասխանեց. «Դուք հասկանում ե՞ք պարոն, որ Թուրքիան միակ երկիրն է երկրագնդի երեսին, որը պաշտոնապես աջակցել է ամերիկյան կառավարությանը մեր այս փորձությունների ժամանակ»:[8]

[1] Payaslian, Simon, նշվ. աշխ., էջ 5:
[2] Աբդուլ Ազիզ (1830-1876) – Օսմանյան կայսրության 32-րդ սուլթան (1861-1876):
[3] United States Department of State. Papers Relating to Foreign Affairs, Washington: Government printing Office, 1862, p. 788.
[4] Նույն տեղում, էջ 784:
[5] Howard, Harry N., նշվ. աշխ., էջ 7-8:
[6] United States Department of State. Papers Relating to Foreign Affairs, Washington: Government printing Office, 1862, p. 784.
[7] Դենիել Բլիս (1823-1916) - ամերիկացի միսիոներ, Բեյրութի Ամերիկյան համալսարանի հիմնադիր (1866):
[8] Gordon, Leland James, նշվ. աշխ., էջ 12:

Այդ տարիների ամերիկյան դիվանագետների զեկուցագրերին բնորոշ էին Օսմանյան կայսրության իրավիճակի և ներքին քաղաքականության մասին դրական գնահատականները՝ ի հակադրություն եվրոպական տերությունների դիրքորոշման: Այսպես՝ 1863 թ. մայիսի 21-ին Մորրիսը գրում էր Սյուարդին, որ Օսմանյան կայսրության քրիստոնյա հպատակները վայելում էին այն աստիճանի խղճի ազատություն, որը գոյություն չուներ նույնիսկ Եվրոպայի ամենակիրթ թագավորություններում, որտեղ աղանդավորները հալածվում են իշխող կրոնի կողմից: Մորրիսը շարունակում էր, որ քրիստոնյաները վճարում էին հատուկ հարկեր, սակայն ազատված էին զինվորական ծառայությունից և շատ դեպքերում օգտվում էին ավելի մեծ արտոնություններից, քան մահմեդական բնակչությունը: Նրանցից շատերը, ըստ դիվանագետի, զբաղեցնում էին բարձր պաշտոններ և օգտվում կառավարության հովանավորությունից, իսկ տնտեսությունն ու առևտուրը, արդյունաբերության շահութաբեր ճյուղերը գտնվում էին նրանց ձեռքում: Մորրիսի կարծիքով՝ քրիստոնյաների արտոնյալ վիճակն ու եվրոպական տերությունների նրանց հովանավորությունը մահմեդական ենթակաների կողմից կասկածի և խանդի հիմնական պատճառն էին:[1]

Իսկ 1863 թ. օգոստոսի 6-ի իր զեկուցագրում Մորրիսը գրում էր, որ թեև եվրոպական տերությունները հրապարակայնորեն հայտարարում էին Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանման և, Փարիզում ձեռք բերված որոշումների համաձայն, Դանուբյան իշխանապետությունների ներկայիս կարգավիճակի մասին, նրանցից շատերը գաղտնի կերպով դավեր էին հյուսում նրա քայքայման նպատակով: Բարձր Դռան կասկածամտությունը եվրոպական տերությունների քաղաքականության նկատմամբ ստիպեց ուժեղացնել օսմանյան բանակի և նավատորմի կարողությունները: Ըստ Մորրիսի՝ օսմանյան բանակը գտնվում էր շատ լավ վիճակում. կարգապահությունը հասել էր բարձրագույն մակարդակի, շատ հաճախ տեղի էին ունենում զորավարժություններ:

Մորրիսը նշում էր նաև, որ Բարձր Դռան հիմնական մտահոգությունն այն էր, որ Ռուսաստանը զորքեր էր կուտակում ասիական սահմանի վրա: Ըստ ԱՄՆ-ի ներկայացուցչի՝ ռազմական գործողությունների և ապստամբության հրահրումը եվրոպական տերությունների կողմից կարող էր ոչ միայն անկայուն իրավիճակ ստեղծել Օսմանյան կայսրությունում, այլև արել նրանց միջև գոյություն ունեցող հակասությունները: Այդ կապակցությամբ Մորրիսը գրում էր, որ Միության բանակի վերջին հաղթանակները Գեթիսբուրգում, Վիկսբուրգում և Պորտ Հադսոնում մեծ բավարարվածությամբ

[1] US Department of State. Papers Relating to Foreign Affairs, Accompanying the Annual Message of the President to the Second Session Thirty-Eighth Congress, Part IV, Washington: Government printing Office, 1865, p. 368.

էին ընդունվել ամերիկյան ազատության և միության կողմնակիցների կողմից Կոստանդնուպոլսում, որոնց թվին էին պատկանում կառավարության անդամներն ու անձամբ սուլթանը: Ըստ Մորրիսի՝ զրույցների ընթացքում նրանք բոլորն էլ անհամբերությամբ սպասում էին Ամերիկյան միության շուտափույթ վերականգնմանը:[1]

Այդ թեման մեծապես շոշափվում էր այդ օրերին օսմանյան պաշտոնյաների, մասնավորապես արտաքին գործերի նախարար Մեհմեդ Էմին Ալի փաշայի[2] հետ Մորրիսի հանդիպումների ընթացքում: 1863 թ. հոկտեմբերի 23-ին նա գրում էր պետքարտուղարին, որ ինչպես Ալի փաշան, այնպես էլ Բարձր Դռան բոլոր անդամներն ուշադրությամբ հետևում էին Ամերիկայում տեղի ունեցող իրադարձություններին և մեծ սպասելիքներ ունեին Միության հաղթանակից, թեև իր նախորդը՝ Ջեյմս Ուիլլիամսը (1858-1861), եռանդուն կերպով փորձում էր ապակողմնորոշել օսմանյան ղեկավարությանը՝ կեղծ տեղեկատվություն տրամադրելով ապստամբների օգտին: Մորրիսը մեծապես կարևորում էր թուրք-ամերիկյան հարաբերությունների զարգացումը և ԱՄՆ-ի մասին հավաստի քաղաքական և տնտեսական տեղեկատվական նյութերի տրամադրումն օսմանյան կառավարությանը:[3]

1863 թ. դեկտեմբերի 4-ին Մորրիսը գրում էր պետքարտուղար Սյուարդին, որ Միացյալ Նահանգներում կայացած վերջին ընտրությունները փարատեցին Օսմանյան կայսրությունում տարածվող բոլոր կասկածներն այն մասին, որ ամերիկյան ժողովուրդը վճռական է շարունակել պատերազմը՝ Միությունը վերականգնելու նպատակով:

Միաժամանակ դիվանագետը զեկուցում էր, որ բոլոր նախանշանները գալիս են ապացուցելու, որ Ռուսաստանը պատրաստվում է «վճռական» պատերազմ սկսել Թուրքիայի դեմ, ինչը կարող էր բերել շատ ավելի մեծ եվրոպական պատերազմի:[4]

Օսմանյան «մեծության և հանդուրժողականության» տարիներին ամերիկյան առաքելություններին կառավարական օժանդակության կարիքն այնքան էլ չէր զգացվում: Այդ ընթացքում ինչպես ամերիկյան առևտրականների, այնպես էլ միսիոներների անվտանգությունը երաշխավորված էր օսմանյան կառավարության կողմից: Սակայն 1860-ական թթ. կեսերին՝ հետադիմական միտումների ի հայտ գալուց հետո, միսիոներները սկսեցին դժվարություններ ունենալ, կանգնել բազմաթիվ արգելքների առջև: Ըստ Լե-

[1] Նույն տեղում, էջ 372:
[2] Մեհմեդ Էմին Ալի փաշա (1815-1871) – Օսմանյան կայսրության պետական գործիչ և դիվանագետ, Թանզիմաթի շրջանի բարենորոգումների հիմնական ճարտարապետներից, դեսպան Մեծ Բրիտանիայում (1841-1844), արտաքին գործերի նախարար, մեծ վեզիր 1850-1860 թթ.:
[3] Նույն տեղում, էջ 372-373:
[4] Նույն տեղում, էջ 376:

լանդ Գորդոնի՝ պատճառն օսմանյան «բազմագլուխ» կառավարության էության մեջ էր. ներքին շրջանները ղեկավարվում էին անկարող և կոռումպացված պաշտոնյաների կողմից, կյանքի և ունեցվածքի անվտանգությունն ապահովված չէր, շատ հաճախ կենտրոնական կառավարությունը չէր կարող իր ողջ իշխանությունը հաստատել շրջանների պաշտոնյաների նկատմամբ:[1]

Միսիոներների գործունեության դեմ ուղղված օսմանյան քաղաքականության առաջին տարիներին ԱՄՆ-ի կառավարությունը ոչ էֆեկտիվ գտնվեց իր քաղաքացիների շահերը պաշտպանելու հարցում, ինչն ունի մի քանի բացատրություն: 1830 թ. պայմանագրով սահմանված էքստերիտորիալ իրավունքների ամերիկյան մեկնաբանությունը, փաստորեն, մերժվում էր Բարձր Դռան կողմից: ԱՄՆ-ում քաղաքացիական պատերազմի և դրանից հետո ընկած շրջանում ամերիկյան կառավարությունը գործուն կերպով չէր զբաղվում այդ հարցով: Թեև օսմանյան կառավարությունը համակրանք էր տածում ամերիկյան կառավարության հանդեպ Քաղաքացիական պատերազմի շրջանում, սակայն, այնուամենայնիվ, ԱՄՆ-ի դիրքերն Օսմանյան կայսրությունում թուլացել էին: Բացի դրանից՝ պատմության այդ շրջանը նշանավորվեց միջազգային հարաբերություններում գաղտնի դիվանագիտության կիրառմամբ: Օգտագործելով տերությունների հակասությունները՝ Բարձր Դռան ղեկավարները փորձում էին պահպանել կայսրությունը և, ինչպես որ հարկն է, չէին պատասխանում «ամերիկյան քաղաքականության բաց դիվանագիտությանը»:[2]

Ժամանակի ընթացքում, երբ կայսրությունը սկսվեց փլուզվել, երբ նրա տարածքը փոքրացավ, իսկ ուժը նվազեց, օսմանյան կառավարության «լիբերալ» քաղաքականությունը ենթարկվեց փոփոխության: Մասնավորապես դա սկսվեց 1864 թ., երբ օսմանյան կառավարությունը փակեց միսիոներների տպարանները ու բանտարկեց կրոնափոխ թուրքերին: Այդ հետադիմական քայլերն ունեցան իրենց շարունակությունը: 1874 թ. Կոստանդնուպոլսի Գալաթա կամուրջն անցնելիս Շեյխ ուլ-իսլամն Աստվածաշունչ էր գնել, որի ընթերցումից հետո նախաձեռնել էր կայսերական հրավարտակի ստորագրումը, որն արգելեց արաբատառ թուրքերենով Աստվածաշնչի հրատարակումը: Ի շարունակություն այդ քաղաքականության՝ 1875 թ. մեծ վեզիրը հայտարարեց, որ անհնարին է կրոնափոխություն թույլ տալ մահմեդականներին, քանի որ իսլամը հանդիսանում է կառավարության հիմքը:[3]

Օսմանյան կառավարության վճռականությունը միսիոներների գործունեության նկատմամբ հսկողություն սահմանելու ուղղությամբ հետագայում

[1] Gordon, Leland James, նշվ. աշխ., էջ 232-233:
[2] Նույն տեղում, էջ 233:
[3] Նույն տեղում, էջ 228:

արտահայտվեց 1869 թ. կրթության օրենքում, որի համաձայն՝ ռաուցիչների որակավորումը պետք է հաստատվի կրթության նախարարության կողմից, իսկ կայսրությունում գործող բոլոր դպրոցները պետք է ներկայացնեն իրենց ուսումնական ծրագրերը կառավարությանը, որպեսզի դասավանդումը չհակասի հաստատված բարոյական և քաղաքական օրենքներին:[1]

Ամերիկյան դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցիչները հետզհետե սկսեցին զբաղվել Օսմանյան կայսրությունում ապրող և աշխատող ԱՄՆ-ի քաղաքացիների կյանքի և ունեցվածքի պաշտպանության խնդիրներով: 1863 թ. դեկտեմբերի 4-ին Մորրիսը զեկուցում էր պետքարտուղար Սյուարդին իր գործողությունների և իշխանությունների հետ բանակցությունների մասին, որոնց արդյունքում հնարավոր դարձավ ձերբակալել Պայասի կայմական Մաստուկ փաշային, որը հովանավորում և արդարադատությունից թաքցնում էր ամերիկյան միսիոներ, պատվելի Կոֆֆինգի սպանության մեջ մեղադրվողներից մեկին՝ ոմն Քալիլին: Ըստ Մորրիսի՝ փաշայի ձերբակալությունը, որը վերջին 15 տարիների ընթացքում սարսափի մեջ էր պահում Ալեքսանդրեթի շրջանի բնակչությանը, մեծ խանդավառություն էր առաջացրել ինչպես քրիստոնյա, այնպես էլ մահմեդական բնակչության շրջանում: Այդ կապակցությամբ Բեյրութում ԱՄՆ-ի հյուպատոսն ու Ալեքսանդրեթում փոխհյուպատոսը զեկուցում էին, որ ամերիկյան քաղաքականության շնորհիվ հնարավոր դարձավ արդարություն հաստատել կայսրության անհանգիստ այդ շրջանում: Մորրիսը գրում էր, որ ամերիկյան դիվանագետների գործունեությունը լիովին համապատասխանում էր ԱՄՆ-ի նախագահ Աբրահամ Լինկոլնի[2] վարչակազմի կողմից արտասահմանյան ներկայացուցչությունների առջև դրված խնդրին՝ «խստագույնս կերպով կատարել ամերիկյան կյանքի պաշտպանությանն ուղղված պարտականությունները»:[3]

ԱՄՆ-ի դեսպանությունն ուշադրությամբ հետևում էր Օսմանյան կայսրությունում տեղի ունեցող իրադարձություններին, մասնավորապես քրիստոնյա այլ փոքրամասնությունների ու արևելյան շրջաններում տիրող իրավիճակին:

1864 թ. մարտի 3-ին Մորրիսը գրում էր Սյուարդին, որ Բերայում տեղի էր ունեցել կառավարական զինվորական դպրոցի վերաբացումը, որը նշանավորվեց 35 քրիստոնյա ուսանողների ընդունելությամբ: Նրանք ներկա-

[1] Salt, Jeremy, նշվ. աշխ., էջ 33:
[2] Աբրահամ Լինկոլն (1809-1865) - ԱՄՆ-ի պետական գործիչ, ազգային հերոս, որպես 16-րդ նախագահ հաղթել է Քաղաքացիական պատերազմում և վերացրել ստրկատիրությունը:
[3] US Department of State. Papers Relating to Foreign Affairs, Accompanying the Annual Message of the President to the Second Session Thirty-Eighth Congress, Part IV, Washington: Government printing Office, 1865, pp. 373-374.

յացնում էին հայ, կաթոլիկ, հույն և բուլղարական համայնքները: Դիմելով ուսանողներին՝ սուլթանը նշել էր, որ «իր հաստատուն ցանկությունն է կատարյալ հավասարություն ստեղծել իր հպատակների բոլոր խավերի միջև»: Բերելով այս օրինակը՝ Մորրիսը նշում էր, որ սա ևս մեկ ապացույցն էր այն բանի, որ կայսրությունում տեղի էր ունենում քրիստոնյա հպատակների հանդեպ թուրքական կառավարության հանդուրժողականության աճող գործընթաց:[1]

Նույն թվականի ապրիլի 21-ին Մորրիսը հաղորդում էր այն մասին, որ Ղրիմի պատերազմից (1853-1856) ի վեր 60 հազար չերքեզ ու Ղրիմի թաթար էին գաղթել Օսմանյան կայսրություն: Ըստ դիվանագետի՝ օսմանյան կառավարությունը շարունակում էր կազմակերպել չերքեզների տեղափոխումն ու բնակեցումը՝ հոգալով այդ ծրագրի բոլոր ծախսերը: Ռուսաստանին հաջողվել էր «ազատել» չերքեզներից Ղրիմից մինչև թուրքական սահման ընկած ամբողջ ծովեզերքը, ինչն էլ նրան հնարավորություն էր տվել գրավել Սև ու Կասպից ծովերի միջև ընկած տարածաշրջանն ու ճանապարհ բացել դեպի Պարսկաստան ու Հնդկաստան: Մորրիսը բնութագրում էր չերքեզներին որպես լավ գյուղացիներ, որոնք անմիջապես կարողանում էին արագ ընտելանալ կայսրության կյանքին, ընդունել բոլոր սովորությունները: Թեև նրանք մահմեդական էին, գրում էր դիվանագետը, սակայն եվրոպական դիմագծեր ունին, և նրանց հնարավոր չէր տարբերել անգլո-սաքսոն կամ լատինական ժողովուրդներից:[2]

Նույն թվականի նոյեմբերի 29-ի իր զեկուցագրում Մորրիսը գրում էր, որ Բարձր Դուռը որոշել է վարչական բաժանում իրականացնել Ասիական Թուրքիայում, որի արդյունքում տարածաշրջանը պետք է բաժանվի երեք մասի: Առաջին մեծ նահանգն ընդգրկելու է Դամասկոսի, Սայդայի և Յերուսաղեմի նահանգները՝ Դամասկոս մայրաքաղաքով, երկրորդ նահանգը կազմելու են Հալեպի, Երֆասի, Ադանայի և Մարաշի նահանգները՝ Հալեպ մայրաքաղաքով, իսկ երրորդն ընդգրկելու է Քրդստանի և Էրզրումի փաշալիկները՝ Էրզրում մայրաքաղաքով: Մորրիսի կարծիքով՝ այս ծրագիրն ու իրականացվելիք բարեփոխումները հնարավորություն են տալու Բարձր Դռանը բարելավելու Ասիական Թուրքիայի կառավարումն ու իրավիճակը, որի բնակչությունը ներկայումս գտնվում է ծանր վիճակում տեղի իշխանավորների կողմից հաստատած կաշառակերության և անօրինականության մթնոլորտի հետևանքով:[3]

ԱՄՆ-Օսմանյան կայսրություն հարաբերություններում նախագահ Մոնրոյի վարդապետությունն ունեցել էր որոշակի դերակատարություն: Օս-

[1] Նույն տեղում, էջ 380:
[2] Նույն տեղում, էջ 382-383:
[3] Նույն տեղում, էջ 384:

մանյան կայսրությունում տեղի ունեցած ժանտախտի սարսափելի համաճարակը (1864 թ.) ստիպեց օսմանյան կառավարությանը 1865 թ. հրավիրել առողջապահական համաժողով Կոստանդնուպոլսում մի շարք պետությունների մասնակցությամբ՝ հիվանդության կրկնությունը կանխելու նպատակով: ԱՄՆ-ի կառավարությունը նույնպես հրավեր ստացավ, սակայն, եվրոպական գործերին չմիջամտելու ավանդական քաղաքականության համաձայն, հրավերը մերժվեց: Որպես պատճառ բերվեց Քաղաքացիական պատերազմով զբաղված լինելու հանգամանքը, սակայն իրականում ամերիկյան կառավարությունը մտահոգություն ուներ, որ համաժողովը կարող էր վերածվել մերձավորարևելյան քաղաքական համաժողովի:[1]

Նույն թվականին Ֆրանսիայի կայսր Նապոլեոն 3-րդի աջակցությամբ Մեքսիկայի կայսր հռչակված, սակայն հանրապետական շրջանակների կողմից չընդունված Մաքսիմիլիան I-ը Կոստանդնուպոլիս գործուղեց գեներալ Մարկեսին՝ սուլթան Աբդուլ Ազիզին բարձր շքանշան շնորհելու նպատակով: Իրական պատճառն օսմանյան կառավարությունից օգնություն և աջակցություն ստանալն էր՝ եգիպտական սեամորթներին Մեքսիկա զինվորական ծառայության վերցնելու նպատակով: Գեներալը թույլտվություն ստացավ հավաքագրելու 900 մարդ, որոնք ուղարկվեցին Մեքսիկա՝ կայսերական բանակում ծառայելու նպատակով: Դրան անմիջապես հետևեց ամերիկյան կառավարության բողոքի հայտագիրը, որում նշվում էր, որ նման գործողությունները հակասում են ԱՄՆ-ի շահերին: Օսմանյան կառավարության պատասխանը բավականին հաշտվողական էր, որի արդյունքում Եգիպտոսից դեպի Մեքսիկա այլևս զինվոր չուղարկվեց:[2]

Ամերիկյան քաղաքացիական պատերազմի ընթացքում օսմանյան կառավարությունը դրական էր արձագանքում Միության հաղթանակներին, ջերմորեն շնորհավորեց Կոստանդնուպոլսում Միացյալ Նահանգների դիվանագիտական ներկայացուցչին նախագահ Լինկոլնի վերընտրության կապակցությամբ, իսկ հետագայում որպես մեծ դժբախտություն որակեց Միության անկման հնարավորությունը Լինկոլնի սպանությունից հետո:[3]

Սևծովյան նեղուցներով ամերիկյան ռազմանավերի նավարկության խնդիրը մշտապես գտնվում էր ԱՄՆ-ի դիվանագետների օրակարգում: 1866 թ. հունվարի 22-ին Մորրիսն առաջարկում էր պետքարտուղարին մյուս պետությունների դեսպանների հետ միասին հայտագիր ներկայացնել Բարձր Դռանը՝ նավերը գիշերով Բոսֆորով ու Դարդանելով անցկացնելու պահանջով: Նույն թվականի փետրվարի 28-ին Մորրիսն առաջարկում էր պետքարտուղարությանը միանալ պետությունների մյուս հայտագրին՝ «փոթորկա-

[1] Gordon, Leland James, նշվ. աշխ., էջ 13-14:
[2] Նույն տեղում, էջ 14:
[3] Նույն տեղում, էջ 12-13:

լից» Սև ծովում առևտրականների կյանքն ու ունեցվածքը պաշտպանելու մասին:[1]

Նույն թվականի հուլիսի 6-ին Կոնգրեսի ներկայացուցիչների պալատի Պենսիլվանիայի ներկայացուցիչ Ուիլյամ Կելլին սնծովյան նեղուցներին վերաբերող բանաձև ներկայացրեց պալատի քննարկմանը, որն ընդունվեց առանց լուրջ քննարկումների: Բանաձևն առաջարկում էր, որ նախագահն Օսմանյան կայսրությունում լիազոր նախարարի միջոցով սուլթանական կառավարությունից պահանջի ամերիկյան ռազմանավերի համար նեղուցներով անցնելու և Սև ծով մուտք գործելու բոլոր արգելքների վերացումը:[2]

ԱՄՆ-ի դիվանագիտական ներկայացուցիչը ոգևորվել էր Կոնգրեսում ընդունված բանաձևի ընդունման փաստով, թեև այն որևէ իրական նշանակություն ունենալ չէր կարող: 1866 թ. հուլիսի 20-ին Մորրիսը գրում էր պետքարտուղարին, որ ժամանակը եկել է, որ հանվեն բոլոր արգելքները նեղուցներով և Սև ծովով աշխարհի բոլոր երկրների ռազմանավերի նավարկության համար: Նա նշում էր, որ մասնավորապես Ղրիմի պատերազմի ընթացքում ամերիկյան ծովային շահերի անհրաժեշտությունն այս տարածաշրջանում շատ էր զգացվում: Մորրիսի կարծիքով՝ ամերիկյան շահերն այս շրջանում լայն զարգացման հնարավորություն և ապագա ունեն: Ըստ դիվանագետի՝ գոյություն ունեցող միջազգային պայմանագրերը, որոնց տակ չկար ԱՄՆ-ի ստորագրությունը, մեծ վնաս են հասցնում ամերիկյան առևտրին և հակասում 1862 թ. ամերիկա-օսմանյան պայմանագրի դրույթներին:[3]

Ամերիկյան ռազմանավերի նեղուցներ և Սև ծով մուտքի հարցն իր լուսաբանումն էր ստացել դեռևս 1857 թ. Նյու Յորքում Օսմանյան կայսրության գլխավոր հյուպատոս, ազգությամբ հայ Քրիստոֆեր Օսկանյանի գրքույկում:[4] Նա գրում էր, որ նեղուցներով ռազմանավերի անցման արգելքի հարցը հանդիսանում էր ոչ միայն Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության, այլև եվրոպական խաղաղության ապահովման երաշխիք: Նշվում էր նաև, որ, ստորագրելով 1830 թ. պայմանագիրն Օսմանյան կայսրության հետ, ԱՄՆ-ն ընդունել էր սահմանափակումների փաստը: Իսկ ինչ վերաբերում է առևտրական նավերի նավարկությանը, Բարձր Դուռը միշտ էլ իր պատրաստակամությունն էր հայտնում լուծել այն բոլոր խնդիրները ու արգելքները, որոնք առնչվում էին նավարկության հետ:[5]

[1] Howard, Harry N., նշվ. աշխ., էջ 8:
[2] Congressional Globe, 74, pt. 4, 40th Congress, 2nd Session (1867-1868), pp. 3764-3765.
[3] Howard, Harry N., նշվ. աշխ., էջ 10:
[4] Oscanyan, Christopher, The Sultan and his People, by a Native of Turkey, New York: Derby and Jackson, 1857.
[5] Howard, Harry N., նշվ. աշխ., էջ 11:

1866 թ. սեպտեմբերի 7-ին 11 օրվա այցով Կոստանդնուպոլիս ժամանեց ԱՄՆ-ի ռազմանավ «Տիկոնդերոգան»՝ նավապետ Ստիդմանի հրամանատարությամբ: Նավապետն այցելեց մեծ վեզիրին, ծանոթացավ դիվանագիտական կորպուսին, ճաշեց բրիտանացի և ռուս դեսպանների հետ: Մորրիսը հաղորդում էր պետքարտուղարությանը, որ ռազմանավի այցելության ընթացքում որևէ միջադեպ տեղի չէր ունեցել: Նա նշում էր, որ ռազմանավի այցելության ազդեցությունն զգալի էր, քանի որ այդ չափի եվրոպական տերության նավի մուտքը նեղուցներով դեպի Կոստանդնուպոլիս արգելված էր:[1]

1868 թ. օգոստոսի 24-ին Մորրիսը հաղորդում էր պետքարտուղարությանը ծովակալ Դեյվիդ Գլազգո Ֆարրագուտի[2] Կոստանդնուպոլիս այցելության մասին: Բարձր Դուռը տվել էր իր թույլտվությունը՝ ամերիկյան ռազմանավ «Ֆրոլիկի» մուտքի վերաբերյալ, քանի որ նավի տոննաժը համապատասխանում էր 1856 թ. Փարիզի պայմանագրի պահանջներին: Սակայն մի քանի օր անց ծովակալի ֆլագմանը՝ ռազմանավ «Ֆրանկլինը», հայտնվեց Դարդանելի մուտքի մոտ՝ սպասելով ծովակալի հրամանին: Մորրիսը դիմեց մեծ վեզիր Ալի փաշային և արտաքին գործերի նախարար Մեհմեդ Ֆուադ փաշային[3]՝ ռազմանավի մուտքի վերաբերյալ թույլտվություն ստանալու համար, քանի որ «Ֆրանկլինը» չէր համապատասխանում Փարիզի պայմանագրի պահանջներին: Օգոստոսի 20-ին Մորրիսը պատասխան ստացավ Բարձր Դռնից առ այն, որ սուլթանի թույլ է տալիս, որ «Ֆրանկլին» ռազմանավը մուտք գործի Կոստանդնուպոլիս, քանի որ «մեծ ամերիկյան հանրապետության» հանդեպ ցուցաբերվում է «հատուկ» և «տարբեր մոտեցում»: Միաժամանակ Բարձր Դուռը հայտագիր ներկայացրեց Փարիզի պայմանագրի անդամ պետություններին՝ տեղեկացնելով նրանց իր որոշման մասին: Ծովակալը «բացառիկ» ընդունելություն ստացավ Օսմանյան կառավարության կողմից, նրան ընդունեց սուլթանը, նրա պատվին ճաշ տվեցին մեծ վեզիրը և Մեծ Բրիտանիայի ու Ռուսաստանի դեսպանները: Օգոստոսի 26-ին ծովակալ Ֆարրագուտն ընդունելություն տվեց «Ֆրանկլին» ռազմանավի վրա մեծ վեզիրի, արտաքին գործերի նախարարի և դիվանագիտական կորպուսի համար: Երեք օր անց «Ֆրանկլինն» ու «Ֆրոլիկը» մեկնեցին Կոստանդնուպոլսից դեպի Պիրեյ:[4]

[1] Նույն տեղում, էջ 8-9:
[2] Դեյվիդ Գլազգո Ֆարրագուտ (1801-1870) - ԱՄՆ-ի ռազմական գործիչ, Քաղաքացիական պատերազմի ժամանակնավատորմի հրամանատար, ծովակալ:
[3] Մեհմեդ Ֆուադ փաշա (1814-1869) - Օսմանյան կայսրության պետական գործիչ, Թանզիմաթի շրջանի բարենորոգումների հիմնական ճարտարապետներից, արտաքին գործերի նախարար (1858-1860, 1867-1869), մեծ վեզիր (1861-1866):
[4] Նույն տեղում, էջ 12-13:

1871 թ. Լոնդոնի պայմանագիրը կրկին անգամ հաստատեց նեղուցների նավարկությանը վերաբերող սկզբունքները, որոնց համաձայն սուլթանին վերապահվում էր խաղաղ պայմաններում թույլտվություն սահմանել նեղուցներ մուտք գործող բարեկամ երկրների ռազմանավերին: Նույնիսկ այդ պայմանագրի ստորագրումից հետո ամերիկյան կառավարությունն ու դիվանագիտական ներկայացուցչությունը շարունակում էին բանակցել Բարձր Դռան հետ՝ ԱՄՆ-ի համար այդ սահմանափակումը վերացնելու նպատակով՝ նշելով, որ ԱՄՆ-ը ոչ միայն բարեկամ պետություն է հանդիսանում Օսմանյան կայսրության համար, այլև չեզոք և անկողմնակալ քաղաքականություն է իրականացնում Եվրոպայի գործերի նկատմամբ, որ իր ռազմանավերի ազատ նավարկությունն անհրաժեշտ է միմիայն առևտրական շահերի պաշտպանության համար: Այդ ուղղությամբ մեծ աշխատանք էր տանում ԱՄՆ-ի դիվանագիտական ներկայացուցիչ Ուեյն Մակվիգը:[1] 1871 թ. մայիսի 5-ին ԱՄՆ-ի պետքարտուղար Համիլտոն Ֆիշը[2] գրում էր Մակվիգին, որ թեև ԱՄՆ-ը չէր ցանկանում փոխել այս հարցում հաստատված *ստատուս քվոն* և միջամտել եվրոպական տերությունների գործերին, սակայն ցանկանում էր օսմանյան կառավարությունից ստանալ նեղուցներ ազատ մուտքի իրավունք:[3]

Բնութագրելով եվրոպական տերությունների քաղաքականությունն Օսմանյան կայսրության նկատմամբ՝ 1874 թ. հունվարի 29-ին Կոստանդնուպոլսում ԱՄՆ-ի դիվանագիտական ներկայացուցիչ, նախարար Ջորջ Հենրի Բոկերը[4] գրում էր պետքարտուղար Ֆիշին, որ «ներկայիս թուրքն այն ցեղի հետնորդն է, որի անունը ոչ այնքան հեռավոր անցյալում լսելուն պես ողջ Արևելյան Եվրոպան գունատվում էր», իսկ այսօր «ես ցավով և ամոթի զգացումով հետևում եմ, թե ինչպես են քրիստոնյա պետությունները նենգ քաղաքականության միջոցով հյուծում նրա ուժի մնացուկը, դատարկում նրա գանձատան վերջին դրամը, հանձնում նրան իրենց սեփական դավանանքին պատկանող վաշխառուներին, խարեբաներին և դրամաշորթներին՝ միաժամանակ փաղաքշելով և ժպտալով նրա մոլորված երեսին ու կուրորեն թեթև ավար դարձնում նրան հեռու գնացող ձգտումներ հետապնդող որոշ հարևանների համար»: Բոկերը հույս էր հայտնում, որ իմաստությունն ի վերջո հաղթելու է և կանխելու է մի մեծ աղետ, որն այդպիսի սարսափով շա-

[1] Ուեյն Մակվիգ (1833-1917) - ԱՄՆ-ի քաղաքական գործիչ, իրավաբան, դիվանագետ, նախարար Օսմանյան կայսրությունում (1870-1871), գլխավոր դատախազ (1881), դեսպան Իտալիայում (1893-1897):

[2] Համիլտոն Ֆիշ (1808-1893) - ԱՄՆ-ի քաղաքական և պետական գործիչ, Նյու Յորքի նահանգապետ (1849-1850), սենատոր Նյու Յորքից (1851-1857), պետքարտուղար (1869-1877):

[3] Նույն տեղում. - էջ 14-19:

[4] Ջորջ Հենրի Բոկեր (1823-1890) - ամերիկացի բանաստեղծ, դրամատուրգ և դիվանագետ, նախարար Օսմանյան կայսրությունում (1871-1875):

հարկվում է Արևմտյան Եվրոպայի տերությունների կողմից: «Մյուս անգամ,- շարունակում էր Բոկերը, - երբ կրկին կխախտվի Թուրքիայի ինքնիշխանությունը, պակաս սարսափ չի ստեղծվելու և պակաս արյուն չի թափվելու անիմաստ կերպով»:

Ամերիկացի դիվանագետը համոզված էր, որ «Միացյալ Նահանգները չի դառնա քայքայիչ գործընթացի մասնակից կամ էլ համբերատար վկա, որը դանդաղորեն տանում է դեպի Օսմանյան կայսրության փլուզումը»: Բոկերի կարծիքով՝ Միացյալ Նահանգները պետք է իր մեծ և վեհանձն քաղաքականության միջոցով օրինակ ծառայի այն բարեկամ, սակայն կարճատես պետությունների համար, որոնք, անձնական շահերից ելնելով, փորձում են օգտվել Օսմանյան կայսրության թուլությունից և միջամտում են իր ներքին գործերին, երբ այն ամեն ինչ անում է վերականգնելու իր սպառված միջոցները:[1]

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում ԱՄՆ-ի ներկայացուցչության զեկուցագրերը հայ համայնքի անցուդարձի մասին: Այսպես՝ 1874 թ. ապրիլի 14-ին դիվանագետ Ջ. Գուդնաուն հաղորդում էր պետքարտուղար Ֆիշին Օսմանյան կայսրության հայ կաթոլիկ համայնքում տեղի ունեցած միջադեպի մասին: 1870 թ. կաթոլիկ հայերի կաթողիկոս Պետրոս Թ-ն (Անտոն Հասունյանը)[2] մասնակցել էր Վատիկանի գլխավոր խորհրդի՝ Պապի «անսխալականության» տեսությանը նվիրված քննարկումներին և հայտարարել այնտեղ, որ սխալ է այդ գաղափարը կիրառել արևելյան կաթոլիկ եկեղեցիների շրջանում, քանի որ այն կբերի պառակտման: Նա նույնպես սխալ էր համարել լատինական բնույթի ծիսակատարությունների, ինչպես նաև լատինական եկեղեցու հերարխիկ համակարգի կիրառումը հայ կաթոլիկ եկեղեցում: Սակայն երբ Վատիկանը հայտարարեց «անսխալականության» դոգմայի ընդունման մասին, Հասունյանը վերադարձավ Կոստանդնուպոլիս և անվերապահորեն փորձեց այն իրագործել՝ պայքար սկսելով հայ կաթոլիկ եկեղեցու ինքնավարության կողմնակիցների դեմ: Նա փորձեց վերացնել հայ կաթոլիկ եկեղեցու երկու հիմնական արտոնությունները՝ պատրիարքի ընտրությունը համայնքի կողմից և եկեղեցու սեփականության տնօրինումն

[1] US Department of State. Papers Relating to the Foreign Relations of the United States, Transmitted to Congress, With the Annual Message of the President, December 7, 1874, Washington: Government Printing Office, 1874, p. 1150.

[2] Անտոն Պետրոս Թ (Անտոն Հասունյան) (1809-1884) – հայ եկեղեցական գործիչ, Կոստանդնուպոլսի կաթոլիկ հայերի պատրիարք (1846-1847), 1847 թ.-ից՝ կաթոլիկ հայերի կաթողիկոս: 1850-ական թթ. ձևավորված «Հասունյանականների» կուսակցությունը դավաբանական պայքար էր ծավալել Էջմիածնի կաթողիկոսության և Կոստանդնուպոլսի պատրիարքարանի դեմ, որն առաջացրել էր նույնիսկ կաթոլիկ հայերի մի մասի զայրույթը: Վերջիններս ստեղծել էին «Հակահասունյանական» խմբակցություն, որը պայքարում էր մայրենի լեզվի և ազգային ավանդույթների պահպանման համար:

ու կառավարումը մեծ մասամբ համայնքի կողմից: Հայ կաթոլիկների զգալի հատվածը հակադրվեց Հասունյանի ծրագրերին և կազմավորեց նոր համայնք: Հայ կաթոլիկները բաժանվեցին «հասունյանականների» և «հակահասունյանականների»: Օսմանյան կառավարությունը ճանաչեց նոր համայնքը և թույլ տվեց կատարել նոր պատրիարքի ընտրություններ: Ըստ ամերիկացի դիվանագետի՝ Հասունյանը չխորշեց դիմել Ֆրանսիայի կառավարության օգնությանը և փորձեց դավեր հյուսել թուրքական կառավարության դեմ: Սակայն վերջինս վտարեց Հասունյանին երկրից: Նա մեկնեց Հռոմ և սկսեց այնտեղից ղեկավարել իր կողմնակիցների գործունեությունն Օսմանյան կայսրությունում:

Ըստ դիվանագետի՝ ներկայումս «հակահասունյանականները» մեծամասնություն են կազմել և պայքար է սկսվել եկեղեցիների համար: Գուդնաուն նկարագրում էր, թե ինչպես է Կոստանդնուպոլսի Գալաթայի Սուրբ Փրկիչ կաթոլիկ եկեղեցին կռվախնձոր դարձել պառակտված համայնքի հատվածների միջև:[1]

1875 թ. օսմանյան կառավարությունը հայտարարեց իր մտադրության մասին՝ ավելացնել մաքսային տուրքերն Օսմանյան կայսրություն ներմուծվող ապրանքների համար 8%-ից մինչև 11%: Ժամանակին կնքված պայմանագրերի պայմանների համաձայն, ինչպես ԱՄՆ-ն, այնպես էլ եվրոպական տերությունները պետք է իրենց համաձայնությունը տային նման քայլի համար: Եվրոպական տերությունները պատասխանել էին, որ իրենց համաձայնության դիմաց իրենք պահանջելու են որոշակի պայմաններ: Այդ բանակցությունները տևեցին 32 տարի, որից հետո տերությունները, բավարարվելով բանակցությունների արդյունքներից, տվեցին իրենց համաձայնությունը:

Միայն Միացյալ Նահանգները չէր մասնակցել բանակցություններին, քանի որ Մոնրոյի վարդապետությունը սահմանափակում էր կառավարության իրավունքները՝ նման գործարքների մեջ մտնելու համար: Սակայն Կոստանդնուպոլսում ԱՄՆ-ի ներկայացուցչությունն ամերիկյան դպրոցների, միսիոներական առաքելությունների և ներմուծվող ապրանքի նկատմամբ Բարձր Դռան դիսկրիմինացիոն քաղաքականության հետ կապված այնքան դժվարություններ ուներ, որ ԱՄՆ-ի կառավարությանն առաջարկություն ներկայացվեց բանակցել օսմանյան կառավարության հետ նոր պայմանների շուրջ: Պետքարտուղարությունը որոշում կայացրեց բանակցել համաձայնության դիմաց հինգ պայմանների շուրջ՝ շրջանցելով Մոնրոյի վարդապետությունը: Թեև բավարարվեցին միայն երեք պայմանները, ԱՄՆ-ի կառավարությունն ի վերջո տվեց իր համաձայնությունը, և սկսած

[1] Նույն տեղում, էջ 1156-1158:

1907 թ.-ից՝ օսմանյան կառավարությանը թույլ տրվեց ավելացնել մաքսատուրքն ամերիկյան ապրանքի համար 3%-ով:[1]

2. Ամերիկյան դիվանագիտության գործունեությունը 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքում և 1880-ական թթ.

Կոստանդնուպոլսում ԱՄՆ-ի ներկայացուցչությունն ուշադրությամբ հետևում էր 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքին և պետքարտուղարություն էր ներկայացնում բալկանյան և կովկասյան ճակատներում տեղի ունեցող գործողությունների վերաբերյալ բոլոր մանրամասները: 1877 թ. ապրիլի 25-ին Կոստանդնուպոլսում ԱՄՆ-ի նոր լիազոր նախարար Հորաս Մեյնարդը[2] գրում էր պետքարտուղար Ուիլյամ Էվարտսին,[3] որ դեռևս վաղ է գուշակել, թե պատերազմը կավարտվի մի քանի ռազմական գործողություններից հետո, թե նրանում կներքաշվի նաև Եվրոպան: Ըստ Մեյնարդի, ռազմական մասնագետների կարծիքով, Ռուսաստանը հաղթելու է, թեև Թուրքիան պատրաստվել է պատերազմին շատ ավելի լավ, քան երբևէ: Թուրքիան մեծ քանակությամբ փոքր զենք էր գնել ԱՄՆ-ից, իսկ ծանր հրետանին՝ Գերմանիայից:[4]

1877 թ. նոյեմբերի 30-ին Մեյնարդը հաղորդում էր Կարս քաղաքի անկման մասին, ինչը զգալի հարված էր Թուրքիայի դիրքերին: Ըստ դիվանագետի՝ ռուսական բանակը շատ լավ վերաբերմունք էր ցուցաբերել հայ բնակչության հանդեպ, որը բացատրվում էր առաջին հերթին քաղաքական շարժառիթներով՝ նրանց քրիստոնյա լինելու, ինչպես նաև ռուսական բանակի գեներալ Միքայել Լորիս-Մելիքովի[5] ծագումով հայ լինելու հանգամանքով:[1]

[1] Gordon, Leland James, նշվ. աշխ., էջ 14-15:

[2] Հորաս Մեյնարդ (1814-1882) - ԱՄՆ-ի քաղաքական գործիչ և դիվանագետ, նախարար Օսմանյան կայսրությունում (1875-1880), Փոստային ծառայության ղեկավար (1880-1881):

[3] Ուիլյամ Էվարտս (1818-1901) - ԱՄՆ-ի քաղաքական գործիչ և իրավաբան, գլխավոր դատախազ (1868-1869), պետքարտուղար (1877-1881), սենատոր Նյու Յորքից (1885-1891):

[4] US Department of State. Papers Relating to the Foreign Relations of the United States, Transmitted to Congress, With the Annual Message of the President, December 3, 1877, Washington: Government Printing Office, 1877, No. 147.

[5] Միքայել Լորիս-Մելիքով (1825-1888) – Ռուսաստանի պետական և ռազմական գործիչ, կոմս, բանակի հեծելազորի գեներալ, Հարավային Դաղստանի զինվորական պետ և Դերբենդի քաղաքապետ, Թերքի մարզի պետ (1860-1873), 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ Կովկասյան առանձին կորպուսի հրամանատար, Աստրախանի, Սարատովի, Սամարայի և Խարկովի ժամանակավոր գեներալ-նահանգապետ (1879-1880), Գերագույն կարգադրիչ հանձնաժողովի նախագահ, ներքին գործերի նախարար (1880-1881):

Դեկտեմբերի 3-ին Կոնգրեսին ուղղված իր տարեկան ուղերձում ԱՄՆ-ի նախագահ Ռաթերֆորդ Հեյսը[2] նշում էր. «Ռուսաստանի և Թուրքիայի միջև ծագած պատերազմը, որն անցյալում տխուր ազդեցություն էր ունենում եվրոպական մյուս պետությունների վրա, որևէ միտում չունի անհանգստացնելու ԱՄՆ-ի և երկու պատերազմող երկրների հետ գոյություն ունեցող բարյացակամ հարաբերությունները: Պատշաճ և անկողմնակալ չեզոքության կեցվածք է պահպանվելու և ես գոհունակությամբ պետք է հաստատեմ, որ ռուսական և թուրքական կառավարություններն իրենց միջև գոյություն ունեցող թշնամության այս իրավիճակում լուրջ պատրաստակամություն են հանդես բերում հավատարիմ մնալ Միացյալ Նահանգների հետ ստորագրված բոլոր պայմանագրերի պարտավորություններին, մասնավորապես ամերիկյան քաղաքացիների իրավունքներին»:[3]

1878 թ. մարտի 7-ին Մեյնարդը տեղեկացնում էր Էվարտսին ԱՄՆ-ի նախկին նախագահ, գեներալ Ուլիս Գրանտի Կոստանդնուպոլիս ժամանելու մասին: Գեներալի ժամանման մասին տեղեկատվությունը, ըստ դիվանագետի, ստացվել էր մի քանի օր առաջ և անմիջապես փոխանցվել Բարձր Դռանը՝ այցը պատշաճ կերպով կազմակերպելու նպատակով: Գրանտն իր կնոջ և որդու հետ ժամանել էր Կոստանդնուպոլիս ամերիկյան «Վանդալիա» կորվետով: Գրանտի այցը Կոստանդնուպոլիս պետք է տևեր մեկ շաբաթ, որից հետո նավը պետք է մեկներ Հունաստան, իսկ այնուհետև Իտալիա: Մեյնարդն իր գոհունակությունն էր հայտնում Բարձր Դռան վերաբերմունքից և ընդունելությունից, թեև օսմանյան կառավարությունն ափսոսանք էր հայտնել, որ պատերազմական իրավիճակը թույլ չէր տվել ընդունել գեներալին շատ ավելի բարձր մակարդակով: Գրանտին ընդունել էր սուլթանը, իր պատվին ճաշ էր տրվել պատերազմի նախարար Ռաուֆ փաշան, ինչպես նաև Մեծ Բրիտանիայի դեսպան Օստին Հենրի Լեյարդը[4]: Նա հանդիպումներ էր ունեցել մեծ վեզիրի, արտաքին, պատերազմի, ծովային նա-

[1] US Department of State. Papers Relating to the Foreign Relations of the United States, Transmitted to Congress, With the Annual Message of the President, December 2, 1878, Washington: Government Printing Office, 1878, p. 849.

[2] Ռաթերֆորդ Հեյս (1822-1893) - ԱՄՆ-ի քաղաքական և պետական գործիչ, Օհայո նահանգի նահանգապետ (1868-1872, 1876-1877), 19-րդ նախագահ՝ (1877-1881) Հանրապետական կուսակցությունից:

[3] US Department of State. Papers Relating to the Foreign Relations of the United States, Transmitted to Congress, With the Annual Message of the President, December 3, 1877, Washington: Government Printing Office, 1877, p. XI.

[4] Օստին Հենրի Լեյարդ (1817-1894) - բրիտանացի ճանապարհորդ, հնագետ, պատմաբան, քաղաքական գործիչ և դիվանագետ, արտգործնախարարի տեղակալ (1861-1866), դեսպան Օսմանյան կայսրությունում (1877-1880):

խարարների, Կոստանդնուպոլսում հավատարմագրված դեսպանների հետ:[1]

1878 թ. սեպտեմբերի 1-ին ամերիկյան միսիոներ Ռ. Մ. Քոլը նամակ էր գրել Մեծ Բրիտանիայի դեսպան Լեյարդին երկրի արևելյան նահանգներում տիրող իրավիճակի մասին: Ըստ Քոլի՝ թեև միսիոներների կողմից մեծ աշխատանք էր ծավալվել Ռուսաստանի կողմից պատերազմի ժամանակ գրավված տարածքներում աղքատության և սովի խնդիրը որոշ չափով կարգավորելու ուղղությամբ, քրիստոնյա բնակչության վիճակը մնում էր շատ ծանր, 25 տարիների ընթացքում օսմանյան կառավարության կողմից խոստացված բարեփոխումներն այդպես էլ չէին իրագործվել: Թեև քրիստոնյաների որոշ հատվածներ, չդիմանալով այս պայմաններին, արդեն իսկ դիմել էին փախուստի, միսիոներները շարունակում էին աշխատել՝ նրանց տեղերում պահելու համար: Քրիստոնյաներն այս շրջաններում այնպիսի ծանր վիճակում էին, որ հնարավոր էր ապստամբություն սկսվեր նրանց կողմից, քանի որ «մահն ավելի գերադասելի է, քան ներկայիս նրանց շան կյանքը»: Մասնավորապես նա նկարագրում էր Խնուսի և Ալաշկերտի քրիստոնյա բնակչության ծանր վիճակը քրդերի իշխանության ներքո՝ տեղական իշխանությունների անկարողության և թողտվության պայմաններում: Հայերից շատերը մտածում էին Ռուսաստան հեռանալու մասին:

Քոլը դիմում էր Բրիտանիայի դեսպանին՝ քրիստոնյաների վիճակը բարելավելու ուղղությամբ գործողություններ իրականացնելու խնդրանքով, և որպես առաջին քայլ՝ առաջարկում դեսպանության ներկայացուցիչ գործուղել այդ շրջանները, ինչը կարող էր ազդեցություն ունենալ իշխանությունների վրա: Քոլը «Հայաստանի քրիստոնյաների» և իր անունից կոչ էր անում Բրիտանիայի դեսպանին հանուն մարդկության և քրիստոնյա հավատի փրկել «ոտնակոխ եղած» Հայաստանը:[2]

Երկու շաբաթ անց Քոլն Էրզրումից գրում էր Մեյնարդին, որ այդպես էլ որևէ պատասխան չի ստացել Մեծ Բրիտանիայի դեսպանից: Նա նշում էր, որ այս ընթացքում «թուրքերը շատ ավելի բացահայտ կերպով են արտահայտում իրենց բացասական վերաբերմունքը քրիստոնյաների հանդեպ՝ նպատակադրվելով իրագործել նրանց դեմ ուղղված սպառնալիքները»: Քոլը տեղեկացնում էր Էրզրումում տեղի ունեցած բազմաթիվ հայերի սպանությունների, նրանց ունեցվածքի թալանի դեպքերի մասին: Թուրքերը, շարունակում էր Քոլը, նույնիսկ չեն համբերում, որ ռուսները վերջնականապես դուրս գան երկրից: Հուսահատված հայերը, ըստ միսիոների, ցույցի էին

[1] US Department of State. Papers Relating to the Foreign Relations of the United States, Transmitted to Congress, With the Annual Message of the President, December 2, 1878, Washington: Government Printing Office, 1878, pp. 861-864.

[2] Նույն տեղում, էջ 910 -911:

դուրս եկել նահանգապետարանի առջև, հետո գնացել դեպի քաղաքապետի և Ֆրանսիայի հյուպատոսի նստավայրերը՝ վանկարկելով՝ «պաշտպանե՛ք կամ սպանե՛ք մեզ»: Թեև քաղաքապետը հրահանգել էր ցրել ցուցարարներին, իսկ հայկական եկեղեցին փորձել էր հանդարտեցնել կրքերը՝ կոչ անելով մնալ օրինապաշտ, հայերի կրքերն այդպես էլ չհանդարտվեցին. նրանք հավաքվում էին հայկական գերազմանատանն ու այլ վայրերում: Նրանք հայտարարում էին, որ «պետք է դիմել ամերիկացիներին, քանի որ անցյալ ձմռանը նրանք մեզ փրկեցին սովից»:

Քոլը նշում էր, որ այս դեպքերի զարգացումը կարող էր բերել շատ լուրջ անկարգությունների և դժբախտության՝ խնդրելով միջոցներ ձեռնարկել իրավիճակը բարելավելու, ինչպես նաև ԱՄՆ-ի քաղաքացիների անվտանգությունն ապահովելու ուղղությամբ: Նա գրում էր, որ Ալաշկերտի շրջանն ընդհանրապես գտնվում էր քրդերի իշխանության տակ և հայերը հարկադրաբար հեռանում էին դեպի Ռուսաստան: Ամերիկացի միսիոնները ցանկանում էր հավատալ, որ ինչ-որ բան դեռևս հնարավոր էր ձեռնարկել, որ հայերը չթողնեն իրենց բնակավայրերն ու չգաղթեն Ռուսաստան:[1]

Ամերիկյան դիվանագիտական ներկայացուցչությունը մեծ հետաքրքրություն էր հանդես բերում բողոքական համայնքի խնդիրների նկատմամբ: Այսպես՝ 1879 թ. հոկտեմբերի 21-ին Մեյնարդը պետքարտուղար Էվերտսի ուշադրությունն էր հրավիրում Օսմանյան կայսրության բողոքական համայնքի աշխարհիկ ներկայացուցիչ, ազգությամբ հայ Հակոբ էֆենդի Մաքեոսյանի կողմից պատրաստված «Բողոքականությունը Թուրքիայում» տեղեկանքի վրա: Կից նամակում Մեյնարդը նշում էր, որ «բնիկ քրիստոնյա եկեղեցիների համար հիմնական խթան և արդյունավետություն կարող է ապահովել կրթության և լուսավոր ու եռանդուն բարեպաշտության հանդեպ նվիրվածության արթնացումը, այլ ոչ թե ուղիղ արդյունքները»:

Իր տեղեկանքում Մաքեոսյանը գրում էր, որ Օսմանյան կայսրությունում գործող բողոքական համայնքը դեռևս մեծ արդյունքների չէր հասել, ինչպես դա ակնհայտ կերպով երևում էր աճող կաթոլիկ համայնքի օրինակով, սակայն իր կարևոր դերակատարությունն ուներ «հրեաների առջև պատնեշ կանգնեցնելու և հույների հիմարության հետ պայքարելու առումով»: Կաթոլիկները, ըստ Մաքեոսյանի, որևէ համակրանք և հարգանք չէին տածում բողոքական կազմակերպությունների և նրանց գործունեության նկատմամբ, թեև հասարակ ժողովրդի շրջանում նրանք հետզհետե ձեռք են բերում մեծ հեղինակություն իրենց ազատական մոտեցումների և սկզբունքների շնորհիվ: Ըստ հեղինակի՝ թվաքանակի առումով բողոքականները չէին կարող մրցել կաթոլիկների կամ մյուս քրիստոնյա դավանանքների հետ,

[1] Նույն տեղում, էջ 911-912:

քանի որ նրանց ամբողջ աշխատանքը խարսխված էր անգլո-սաքսոնական կայունության ու ժողովրդի լրջախոհ շերտի վրա: Միայն ժամանակի ընթացքում, շարունակում էր հեղինակը, նրանք կկարողանան հակադրվել «ցուցամոլ լատինական ազդեցությանը», որը զգալի ազդեցություն ուներ բարձր խավի շրջանում:

Ըստ Մաքեոսյանի՝ բողոքական համայնքն արդեն 35 տարվա պատմություն ունի, սակայն դեռևս իր սահմանադրությունը, որը պետք է ապահովեր համայնքի հավասարությունը մյուս հարանվանությունների հետ, հաստատված չէ օսմանյան կառավարության կողմից: Սակայն, ըստ տեղեկանքի հեղինակի, բողոքական եկեղեցին իրավունք ունի, ունենալով իր համապատասխան դիրքերը քաղաքակիրթ աշխարհում, պայքարելու այս երկրում հավասարություն ձեռք բերելու և *միլեթի* կարգավիճակ ստանալու համար: Մաքեոսյանը նկարագրում էր *միլեթ* հասկացության ստեղծման պատմությունն ու դրդապատճառները, այն, որ օսմանցի ղեկավարների համար դա միակ հնարավորությունն էր՝ իշխելու իրենց կողմից զավթած բոլոր ազգությունների վրա: Թեև հիմնական նպատակը եղել էր այդ բոլոր ազգությունները քաղաքական լծակներից զրկելու, նրանց հլու-հնազանդ վիճակում պահելու մեջ, շարունակում էր հեղինակը, տրամադրելով *միլեթների* գործունեությանը միմիայն կրոնական և կրթական երանգ, սակայն կայրության ղեկավարներին այդպես էլ չէր հաջողվել ձուլել կամ ընդհանրապես ոչնչացնել քրիստոնեությունը: Վերջին 52 տարվա ընթացքում Օսմանյան կայսրությունում երկու նոր *միլեթներ* էին ստեղծվել. դա հայ կաթոլիկ և բողոքական *միլեթներն* էին: Երբ առաջին հայ կաթոլիկները ենթարկվեցին մահապատժի և ճնշումների, կաթոլիկ տերություններն եկան իրենց օգնության, և դրա շնորհիվ էլ ստեղծվեց կայսրության հայ կաթոլիկների *միլեթը*: Երբ բողոքական բարեփոխումների կողմնակիցները սկսեցին ենթարկվել նման վերաբերմունքի, նրանց պաշտպանությունը լուրջ խնդիր դարձավ: Ըստ Մաքեոսյանի՝ քանի որ, կայսրությունում հաստատված բողոքական առաքելությունների հիմնական խնդիրը ավետարանական սկզբունքների տարածումն էր և գոյություն ունեցող քրիստոնյա հաստատությունների բարեփոխումը, այլ ոչ թե առանձին աղանդի ստեղծումը. բողոքական *միլեթի* հաստատումն ինքնին հակասում էր այդ ինստիտուտի էությանը:

Այսպիսով՝ շարունակում էր Մաքեոսյանը, համաձայն գոյություն ունեցող օսմանյան օրենքների՝ ավետարանական եկեղեցիների և հաստատությունների հետագա գոյությունն ու իրավական կարգավիճակ ստանալու հարցն Օսմանյան կայսրությունում կախված էր բողոքական *միլեթ* ստեղծելուց, որը հավասար իրավունքներ կունենար մյուս բոլոր միլեթների հետ: Սակայն բրիտանական և գերմանական դեսպանությունների միջամտության շնորհիվ հնարավոր դարձավ ստեղծել ոստիկանության հսկողության

ներքո գտնվող մարմին, որը ներկայացված կլիներ օսմանյան իշխանությունների մոտ որպես «բողոքական համայնքի» *վեքիլ*, աշխարհիկ ներկայացուցիչ: Այս դեպքում աշխարհիկ ներկայացուցիչը դառնում էր իշխանությունների առջև համայնքի անդամների քաղաքացիական իրավունքների պատասխանատու: Բողոքականների *միլեթի* ինքնավարությունն ապահովված չէր կայսերական հրովարտակով և չուներ քաղաքացիական կարգավիճակ մնացած *միլեթների* օրինակով: Այսպիսով, թեև բողոքականությունը կայսրությունում արգելված չէր, սակայն համապատասխան կարգավիճակ չուներ: Տեղեկանքի հեղինակը հույս ուներ, որ օսմանյան կառավարության կողմից շրջանառության մեջ դրված բողոքականների սահմանադրությունն ի վերջո հաստատվելու է, և վերջիններս վերջապես հավասար իրավունքներ են ստանալու մյուս միլլեթների օրինակով:[1]

1880 թ. հունվարի 10-ին Մեյնարդը զեկուցում էր պետքարտուղար Էվարտսին կայսրությունում հայերի իրավիճակի մասին: «Այդ հնագույն ժողովուրդն ունեցել էր ծանր պատմություն, նրանց ներկայիս գոյությունը, - գրում էր Մեյնարդը, - թեև շատ ավելի նվազ թվաքանակով, ապացուցում է մի ողջ ժողովուրդ ոչնչացնելու դժվարությունը, եթե ոչ անհնարինությունը»: Նրանց աշխարհագրական դիրքը Փոքր Ասիայի սահմանամերձ շրջաններում պատճառ դարձավ, որ նրանք զոհվեն թյուրքական ցեղերի, սկզբում սելջուկների, ապա օսմանցի թուրքերի արշավանքների ժամանակ: «Նրանք ենթարկվեցին իրենց ճակատագրին, - նշում էր ամերիկացի դիվանագետը, - և, մասնավորապես նրանք, ովքեր մնացին իրենց բնիկ հողի վրա, վերածվեցին ստորացված ստրուկների, ինչը շարունակվում է առանց զգալի բարելավումների մինչև ներկայիս դարի կեսերը»: Շուրջ 30 տարի առաջ, գրում էր Մեյնարդը, Միացյալ Նահանգներից եկած միսիոներներն իրենց ջանքերն ուղղեցին այդ ոտնահարված ժողովրդի վիճակը բարելավելու համար: Ըստ դիվանագետի, ինչպես ամենուրեք Թուրքիայում, այնպես էլ Կոստանդնուպոլսում, միսիոներներն ու ԱՄՆ-ի ներկայացուցչությունը պաշտպանում են բոլոր նրանց, որոնց հետ աշխատում և համագործակցում են: Այնուհետև Մեյնարդը, որպես այդ ամենի վկայություն՝ մի հատված էր ներկայացնում անգլիացի մի հեղինակի գրքից (Twenty Years' Residence among the People of Turkey, Chapter V, Harper&Brothers, 1879):

Վերջինս գրում էր, որ այն օրվանից, երբ բազմաթիվ ամերիկացի միսիոներները հիմնեցին իրենց հաստատությունները Հայաստանում, ժողովրդի շրջանում զգալի փոփոխություններ տեղի ունեցան: «Այս գովասանքի արժանի և կատարյալ աշխատողների անխոնջ ջանքերը քաղաքակրթության և մարդկության գործի համար, - գրում էր հեղինակը, - սկսում են բերել իրենց պտուղները, մասնավորապես այն օրվանից, երբ կրթությունը դարձավ նրանց հիմնական խնդիրը: Նրանք հրաշքներ էին գործում այս մինչև վերջերս դժբախտ երկրի անկիրթ բնակիչների շրջանում, որտեղ որ հիմնվեցին դպրոցներ, որտեղ հայերը բարոյական և կրոնական ուսում էին ստանում, ինչպես նաև ծանոթանում առողջ մրցակցության հիմունքներին: Այն բարոյական ազդեցությունը, որն այսօր իրականացնում է Ամերիկան Արևելքում, զուրկ է որևէ քաղաքական բանսարկությունից և մրցակցությունից»: Ամենուրեք, ուր միսիոներները հաստատել էին իրենց հաստատությունները, շարունակում էր անգլիացի հեղինակը, նրանք վայելում էին ժողովրդի սերն ու հարգանքը:

Վերջին ռուս-թուրքական պատերազմը, գրում էր Մեյնարդն Էվարտսին, շատ ավելի վատթարացրել էր կայսրության հպատակ ազգությունների վիճակը, սակայն 1878 թ. անգլո-թուրքական կոնվենցիան նոր հույսեր առաջացրեց նրանց շրջանում, ինչպես դա տեղի ունեցավ Բուլղարիայի և եվրոպական այլ նահանգների քրիստոնյա հպատակների վիճակի դեպքում:[1]

1880 թ. հուլիսի վերջին Նիկոմեդիայի շրջակայքում թուրք ավազակների կողմից սպանվել էին ամերիկյան միսիոներ Ջաստին Ու. Փարսոնզն ու նրա հայ օգնական Կարապետը: Օգոստոսի 21-ին պետքարտուղար Էվերտսը հանձնարարել էր ժամանակավոր հավատարմատար Ջ. Հիպին դիմել թուրքական իշխանություններին՝ խստագույնս պահանջելով նրանցից հայտնաբերել և պատժել մարդասպաններին, ապահովել ԱՄՆ-ի քաղաքացիների անվտանգությունը կայսրության ողջ տարածքում:[2] Սեպտեմբերի 2-ին պետքարտուղարի պաշտոնակատար Ջոն Հեյը, կրկին հանձնարարում է պահանջել թուրքական իշխանություններից Փարսոնզի սպանության մեջ մեղադրվող անձանց արդարացի և խիստ պատիժ, ինչպես հաղորդում էր Հիպին, Եվրոպայում ԱՄՆ-ի ռազմածովային ուժերի հրամանատար, փոխծովակալ Ջոն Հաուվելլին[3] հանձնարարվել էր ռազմանավ ուղարկել դեպի Թուրքիա, որն օժանդակելու էր ԱՄՆ-ի ներկայացուցչության կողմից գործադրվող ջանքերին՝ այդ հարցն իր ցանկալի ավարտին հասցնելու նպատակով:[4]

Հոկտեմբերի 11-ին Հիպը տեղեկացնում էր Էվարտսին արտաքին գործերի նախարար Ասսիմ փաշայի հետ իր հանդիպման մասին, որի ընթացքում ամերիկացի դիվանագետը կրկին պահանջել էր շուտափույթ կերպով

[1] US Department of State. Papers Relating to the Foreign Relations of the United States, Transmitted to Congress, With the Annual Message of the President, December 6, 1880, Washington: Government Printing Office, 1880, pp. 961-964.

[1] Նույն տեղում, էջ 971-972:
[2] Նույն տեղում, էջ 986-987:
[3] Ջոն Հաուվելլ (1840-1918) - ԱՄՆ-ի ռազմական գործիչ, Քաղաքացիական պատերազմի մասնակից, փոխծովակալ:
[4] Նույն տեղում, էջ 987-988:

դատավարություն սկսել միսիոների սպանության մեջ մեղադրվող երեք անձերի նկատմամբ, որն էլ դրական ազդեցություն կունենար ԱՄՆ-ի հասարակական կարծիքը հանգստացնելու, ինչպես նաև Թուրքիայի հետ հարաբերությունները բարելավելու ուղղությամբ: Հիպը շեշտում էր, որ Փարսոնզի սպանության դեպքը մեծ կասկածանքի տակ էր դրել Օսմանյան կայսրությունում օտարերկրյա քաղաքացիների անվտանգության ապահովությունն ու արդարացի դատավարությունը հարկավոր էր առաջին հերթին Թուրքիայի համար:[1]

1881 թ. մայիսի 5-ին Հիպը տեղեկացնում էր պետդարտուղար Ջեյմս Բլեյնին, որ հաղորդագրություն էր ստացել Նիկոմեդիայի շրջանի գյուղերից մեկում գործող ամերիկյան միսիոներ, պատվելի Ջ. Ի. Փիրսից առ այն, որ աշխատանքային ճամփորդության ժամանակ նա թալանի էր ենթարկվել մի խումբ չերքեզների կողմից: Հիպը գրում էր, որ եթե Փարսոնզի մարդասպանների դատավարության ընթացքն այսքան չերկարեր, և նրանք արժանանային արդար պատժի, այդ նոր դեպքը կարող էր և տեղի չունենար:[2]

Մայիսի 9-ին Հիպն արտահայտում էր նույն այդ միտքն արտաքին գործերի նախարարին, որը խոստանում էր ամեն ինչ անել թալանի մասնակիցներին պատժելու համար: Իսկ ինչ վերաբերում էր Փարսոնզի սպանողների վճռի կայացմանը, դա ամբողջությամբ կախված էր սուլթանի որոշումից, որը կարող էր ինչպես ենթարկել մահապատժի կամ բանտարկել, այնպես էլ ներում շնորհել: Հիպի կարծիքով՝ սուլթանը չէր համարձակվի մահապատժի ենթարկել մահմեդականի, որը նույնիսկ մի քանի անհավատ քրիստոնյա էր սպանել:[3]

Մի քանի օր անց՝ մայիսի 11-ին, Հիպը տեղեկացնում էր Բլեյնին նոր միջադեպերի մասին: Խարբերդից Սըվազ ճամփորդության ժամանակ թալանի էր ենթարկվել ամերիկյան միսիոներ, պատվելի Բարնըմը, իսկ Մարաշում՝ ԱՄՆ-ի հյուպատոսական գործակալ Մոնթգոմերին: Հիպը հայտագիր էր ներկայացրել Օսմանյան կայսրության արտաքին գործերի նախարարին վերջին դեպքերի մասին՝ կրկին պահանջելով հետաքննություն և արդար դատավարություն:[4]

1881 թ. սեպտեմբերի 29-ին պետդարտուղար Բլեյնը հանձնարարում էր Օսմանյան կայսրությունում նորանշանակ դիվանագիտական ներկայացուցիչ, արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարար Լյուիս Ուոլլեսին[1] խստորեն պահանջել օսմանյան իշխանություններից ապահովել ԱՄՆ-ի քաղաքացիների անվտանգությունը: Ըստ Բլեյնի՝ այս խնդիրը դարձել էր ԱՄՆ-ի նախագահի անհանգստության առարկան: Ցանկանալով վերահաստատել բարեկամական հարաբերությունները սուլթանի և իր իշխանությունների հետ, ինչպես նշում էր Բլեյնը, վարչակազմը շարունակաբար Բարձր Դռան ուշադրությունը պետք է հրավիրեր ամերիկացի քաղաքացիների անվտանգության ապահովման անհրաժեշտության և կատարված սպանությունների ու թալանի համար մեղավորներին արդար պատժի ենթարկելու վրա: Արձանագրված դեպքերից ոչ մեկից հետո, նշում էր պետքարտուղարը, օսմանյան կառավարությունը համապատասխան միջոցներ այդպես էլ չէր ձեռնարկել՝ չնայած ամերիկյան ներկայացուցչության մշտական դիմումներին և պահանջներին: Բլեյնը բացասաբար էր արտահայտվում Օսմանյան կայսրությունում տիրող իրավիճակի, սպանությունների և թալանի, անարդարության և անպատժելիության մասին, մասնավորապես այն հանգամանքի, որ որևէ մահմեդական պատժի չի ենթարկվել այդ երկրում քրիստոնյա արտասահմանցիների հանդեպ գործած հանցագործության համար: Ժամանակը եկել է, ըստ Բլեյնի, որ օսմանյան կառավարությունը կատարի իր բոլոր պարտավորությունները՝ անկողմնակալ արդարադատություն հանդես բերելու համար: Պետքարտուղարը հանձնարարում էր Ուոլլեսին պահանջել Բարձր Դռնից անմիջապես իրագործել Փարսոնզի սպանողների դատավճիռը, ինչպես նաև համապատասխան ընթացք տալ մնացած միջադեպերի մեղավորներին պատժելու գործերը: Բլեյնը հանձնարարում էր նաև տեղյակ պահել մյուս տերությունների ներկայացուցիչներին այս հարցում ԱՄՆ-ի վճռականության և նրանց հետ համագործակցության պատրաստակամության մասին:[2]

Հոկտեմբերի 26-ին Ուոլլեսը գրում էր Բլեյնին արտաքին գործերի նախարար Ասսիմ փաշայի հետ ունեցած հանդիպման մասին, որի ժամանակ կրկին ԱՄՆ-ի ներկայացուցիչը պահանջել էր մեկ տարի առաջ հայտարարված դատարանի որոշման համաձայն իրագործել Փարսոնզի սպանությունն իրագործած Ալիի մահապատիժը, ինչպես նաև ընթացք տալ մնացած գործերին:[3]

Նոյեմբերի 23-ին Ուոլլեսը զեկուցում էր, որ 1879-1881 թթ. ընթացքում Օսմանյան կայսրությունում գրանցվել էր ամերիկյան միսիոներների սպա-

[1] Նույն տեղում, էջ 990-991:
[2] US Department of State Papers Relating to the Foreign Relations of the United States, Transmitted to Congress, With the Annual Message of the President, December 5, 1881, Washington: Government Printing Office, 1882, p. 1178.
[3] Նույն տեղում, էջ 1180-1181:
[4] Նույն տեղում, էջ 1181:

[1] Լյուիս Ուոլլես (1827-1905) - ԱՄՆ-ի պետական, քաղաքական և ռազմական գործիչ, գեներալ, իրավաբան և դիվանագետ, Նյու Մեքսիկոյի նահանգապետ (1878-1881), արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարար Օսմանյան կայսրությունում (1881-1885):
[2] Նույն տեղում, էջ 1184-1186:
[3] Նույն տեղում, էջ 1189-1190:

նության և թալանի ուղ դեպք, որոնցից յոթն ամերիկյան դիվանագիտական ներկայացուցչության ջանքերի շնորհիվ բացահայտվել էին, և մեղավորները հիմնականում պատժվել էին: Ուոլլեսը ներկայացնում էր կատարված հանցագործությունների ցանկը.

1. 1879 թ. պատվելի Փարսոնզին, նրա կնոջը և օրիորդ Լ. Ֆարնհեմին թալանել էր մի չերքեզ,

2. 1879 թ. պատվելի Լ. Բարտլետին և նրա կնոջը (Կեսարիայից), դոկտոր Դեյվիսին և նրա կնոջը, օրիորդ Լաուրա Չեմբերլենին (Սրվազից) թալանել էին Բուրսայից Կեսարիա տանող ճանապարհին,

3. 1879 թ. պատվելի Ջ. Լեոնարդին և նրա կնոջը, օրիորդ Էլիզա Ֆալչերին (Մարզվանից) թալանել և ծեծել էին չերքեզները,

4. 1880 թ. պատվելի Փարսոնզին և նրա ծառային թալանել ու սպանել էին Նիկոմեդիայի շրջանի գյուղերից մեկում,

5. 1881 թ. պատվելի Հ. Փերրիին թալանել էին Սրվազի մոտ,

6. 1881 թ. գարնանը պատվելի Հ. Ն. Բարնըմին թալանել էին Խարբերդից Սրվազ տանող ճանապարհին,

7. 1881 թ. պատվելի Ջ. Մոնթգոմերիին (Մարաշից) թալանել էին Մարաշից Ադանա տանող ճանապարհին,

8. 1881 թ. պատվելի Ջ. Փիրսին թալանել էին Նիկոմեդիայի սարերում:[1]

1881 թ. դեկտեմբերի 5-ին Կոնգրեսին ուղղված իր տարեկան ուղերձում նախագահ Չեստեր Արթուրը[2] նշում էր, որ «կյանքի և ունեցվածքի անվտանգությունը Թուրքիայի շատ շրջաններում հաճախակի է դարձել մեր թղթակցությունը Դռան հետ, որի նպատակն է, մասնավորապես կայսրությունում ամերիկյան միսիոներների պաշտպանության ապահովումը: Թեև մեր կառավարությունը շարունակաբար օրինակելի արդարություն է պահանջել, նշանավոր միսիոներ, դոկտոր Ջաստին Ու. Փարսոնզի դատապարտված մարդասպանը դեռևս պատժված չէ»:[3]

Դեկտեմբերի 20-ին Ուոլլեսը տեղեկացնում էր Բլեյնին, որ Էրզրումում գործող ամերիկյան միսիոներ, պատվելի Ռ. Մ. Քոլից նամակ է ստացել առ այն, որ Էրզրումում Մեծ Բրիտանիայի փոխհյուպատոս, մայոր Էվերետը հրաժարվել էր ամերիկյան շահերի պաշտպանությունից՝ առաջարկելով այդ հարցով դիմել Կոստանդնուպոլսում Մեծ Բրիտանիայի դեսպանին: Սո-

[1] US Department of State Papers Relating to the Foreign Relations of the United States, Transmitted to Congress, With the Annual Message of the President, December 4, 1882, Washington: Government Printing Office, 1883, pp. 494-495.

[2] Չեստեր Արթուր (1829-1886) - ԱՄՆ-ի պետական գործիչ, 21-րդ նախագահ՝ Հանրապետական կուսակցությունից (1881-1885):

[3] US Department of State. Papers Relating to the Foreign Relations of the United States, Transmitted to Congress, With the Annual Message of the President, December 5, 1881, Washington: Government Printing Office, 1882, p. V.

վորաբար Մեծ Բրիտանիայի հյուպատոսական ներկայացուցչությունները պաշտպանում էին ամերիկյան միսիոներների շահերն այն քաղաքներում, ուր ԱՄՆ-ը հյուպատոս չուներ: Ուոլլեսը հանդիպել էր Բրիտանիայի դեսպանի հետ, որը նրան պատասխանել էր, որ օգոստոսին, հրահանգ ստանալով Լոնդոնից, դեսպանը շրջաբերական էր հղել բոլոր բրիտանական հյուպատոսներին առ այն, որ օտարերկրյա քաղաքացիները, այդ թվում՝ ամերիկյան միսիոներները, կարող են օգտվել բրիտանական հյուպատոսական ներկայացուցչությունների պաշտպանությունից միայն այն պարագայում, երբ տվյալ երկիրը հատուկ խնդրանքով կդիմի բրիտանական կառավարությանը: Ուոլլեսն անմիջապես համապատասխան հայտագիր-խնդրանք է ներկայացնում բրիտանական դեսպանությանը: Ուոլլեսի կարծիքով՝ ամերիկյան ներկայացուցչության համար իրապես կարող էր դժվար կացություն ստեղծվել կայսրության որոշ շրջաններում ամերիկյան շահերի պաշտպանության հարցում:[1]

1882 թ. հունվարի 7-ին պետքարտուղար Ֆրեդերիկ Ֆրելինգհույսենը[2] հանձնարարում էր Ուոլլեսին, ելնելով ԱՄՆ-ի նախագահի տարեկան ուղերձում տեղ գտած դրույթներից, դիմել այս հարցով Օսմանյան կայսրության արտաքին գործերի նախարարին՝ խնդրելով թույլ տալ Բրիտանիայի ներկայացուցիչներին շարունակել պաշտպանել ամերիկյան միսիոներների շահերը: Իսկ եթե ոչ, նշվում էր հանձնարարականում, Բարձր Դուռը պետք է համապատասխան միջոցներ ձեռնարկեր՝ պաշտպանելու համար ամերիկյան շահերն այն շրջաններում, որտեղ ԱՄՆ-ը հյուպատոսներ չունի:[3]

Փետրվարի 1-ին Ուոլլեսը գրում էր պետքարտուղարին, որ պետքարտուղարությունում միսիոներներից ստացված այն տեղեկությունը, թե իբր բրիտանական կառավարությունը հրաժարվել է ամերիկյան շահերի պաշտպանությունից Բարձր Դռան ճնշման արդյունքում, իրականությանը չի համապատասխանում: Ուոլլեսը կից ներկայացնում էր Մեծ Բրիտանիայի դեսպան Ֆրեդերիկ Դաֆֆերինի[4] կողմից իրեն ուղղված նամակն առ այն, որ բրիտանական կառավարությունը որոշում է ընդունել շարունակել ամերիկյան միսիոներների շահերի պաշտպանությունը կայսրության այն շրջանե-

[1] US Department of State. Papers Relating to the Foreign Relations of the United States, Transmitted to Congress, With the Annual Message of the President, December 4, 1882, Washington: Government Printing Office, 1883, pp. 495-497.

[2] **Ֆրեդերիկ Ֆրելինգհույսեն** (1817-1885) - ԱՄՆ-ի քաղաքական և պետական գործիչ, սենատոր Նյու Ջերսիից (1871-1877), պետքարտուղար (1881-1885):

[3] Նույն տեղում, էջ 498:

[4] **Ֆրեդերիկ Դաֆֆերին** (1826-1902) – Մեծ Բրիտանիայի քաղաքական գործիչ և դիվանագետ, Կանադայի նահանգապետ (1872-1878), դեսպան Ռուսաստանում (1879-1881), Օսմանյան կայսրությունում (1881-1884), Հնդկաստանի փոխարքա (1884-1888), դեսպան Իտալիայում (1888-1891), Ֆրանսիայում (1891-1897):

ռում, որտեղ ԱՄՆ-ը հյուպատոսներ չունի: Ի պատասխան փետրվարի 28-ին՝ Ֆոելինգհույսենը խնդրում էր իր անունից շնորհակալություն հայտնել դեսպան Դաֆֆերինին՝ փոխանցելով նաև ԱՄՆ-ի նախագահ Արթուրի գոհունակությունը բրիտանական կառավարության որոշման կապակցությամբ:[1]

1883 թ. մայիսի 1-ին Ուոլլեսը հաղորդում էր Ֆոելինգհույսենին, որ Երզնկայում ամերիկյան միսիոներ, պատվելի Քոլի տան վրա հարձակում էր տեղի ունեցել, որի առնչությամբ ԱՄՆ-ի ներկայացուցիչը կայսրության արտաքին գործերի նախարար Սարիֆի փաշային հայտագիր էր հղել, ուր պահանջել էր իշխանություններից միջոցներ ձեռնարկել՝ հարձակվողներին հայտնաբերելու և պատժելու համար:[2]

1883-1884 թթ. ընթացքում ԱՄՆ-ը ներկայացուցչությունը Կոստանդնուպոլսում եռանդուն կերպով պահանջում էր Բարձր Դռնից ձերբակալել, դատել և խստագույնս պատժել ամերիկյան միսիոներներ Նեփի և Ռեյնոլդզի վրա հարձակվողներին: Դեպքը տեղի էր ունեցել 1883 թ. մայիսի 22-ին Բիթլիսի վիլայեթում, հարձակման մեջ ամերիկացիները մեղադրում էին հայտնի քուրդ ավազակապետ Մուսսա բեյին, որի ավազակախումբը թալանել էր միսիոներներին և ծանր վիրավորել միսիոներ Ռեյնոլդզին:

ԱՄՆ-ի ներկայացուցչությունը բազմաթիվ հայտագրեր էր ներկայացրել Բարձր Դռանն այդ կապակցությամբ, սակայն որևէ արդյունք այդպես էլ չէր արձանագրվել: Մասնավորապես ամերիկյան դիվանագետները դժգոհում էին Բիթլիսի նահանգապետից, որը ոչինչ չէր ձեռնարկում այդ ուղղությամբ և, փաստորեն, թաքցնում էր Մուսսա բեյին օրենքից: Ամերիկյան ներկայացուցչությունը պահանջել էր Բարձր Դռնից փոխհատուցում՝ Նեփի համար՝ 1 500, իսկ Ռեյնոլդզի համար՝ 2 000 ֆունտ ստեռլինգ:[3] Հետագայում՝ 1885 թ. ապրիլի 9-ին, Ուոլլեսը տեղեկացնում էր պետքարտուղար Թոմաս Բայարդին, որ Բարձր Դուռը հրաժարվում էր փոխհատուցել ամերիկյան միսիոներներին հասցված վնասը՝ վկայակոչելով օսմանյան համապատասխան օրենքն այն մասին, որ պետությունը պարտավոր չէ փոխհատուցել որևէ անհատին հասցված վնասը:[4]

1884 թ. հունվարի 26-ին Ուոլլեսը տեղեկացնում էր պետքարտուղար Ֆոելինգհույսենին, որ Բարձր Դուռը մի քանի անգամ հայտագիր էր ներկայացրել՝ խնդրելով ներկայացնել Օսմանյան կայսրությունում ժամանակավոր բնակություն հաստատած ԱՄՆ-ի քաղաքացիների ցուցակը: Բանն այն է, շարունակում էր դիվանագետը, որ, ըստ օսմանյան իշխանությունների, Պաղեստինում բնակություն հաստատած հրեաները, որոնք ժամանել էին Ռուսաստանից, ներկայանում էին որպես ԱՄՆ-ի քաղաքացիներ և իրենց իրավունքների պաշտպանություն էին փորձում հայցել Յերուսաղեմում ամերիկյան հյուպատոսությունից: ԱՄՆ-ի ներկայացուցչության կողմից տրամադրված ցուցակները, ըստ Բարձր Դռան, կհեշտացնեն տեղական իշխանությունների աշխատանքը: Այս հարցի կապակցությամբ պետքարտուղարը փետրվարի 29-ին գրում էր Ուոլլեսին, որ հարկավոր է խուսափել օսմանյան իշխանություններին որևէ ցուցակ տրամադրելուց: Յուրաքանչյուր պետություն, շարունակում էր քարտուղարը, կարող էր ունենալ օտարերկրյա քաղաքացիներին գրանցելու կարգ և որևէ ցուցակ տրամադրելով Բարձր Դռանը՝ ԱՄՆ-ի ներկայացուցչությունները, փաստորեն, կներգրավվեն տվյալ պետության ներքին, ոստիկանական գործողությունների մեջ: Պետքարտուղարը նշում էր, որ ԱՄՆ-ի քաղաքացիության վկայություն է հանդիսանում ամերիկյան անձնագիրը, իսկ որոշ դեպքերում նրան կարող է նաև կցվել հյուպատոսության կողմից հաստատված վկայականը:[1]

Ապրիլի 26-ին Վաշինգտոնում Օսմանյան կայսրության դիվանագիտական ներկայացուցիչ Հուսսեյն Թևֆիկն իր երկրում ԱՄՆ-ի քաղաքացիների իրավունքների պաշտպանության կապակցությամբ գրում էր Ֆոելինգհույսենին, որ հանցագործությունների պարագայում Բարձր Դուռը որևէ բացառություն չի կարող անել ԱՄՆ-ի քաղաքացիների համար, թեև նրանց արտոնություններն ու իմունիտետները, ինչպես և այլ տերությունների քաղաքացիների դեպքում երաշխավորված են:[2]

Հուլիսի 18-ին Կոստանդնուպոլսում ժամանակավոր հավատարմատար Հիպը գրում էր պետքարտուղարին, որ Մեծ Բրիտանիայի դեսպան Դաֆֆերինից և ամերիկյան միսիոներ, պատվելի Հերրիկից նամակ էր ստացել առ այն, որ տեղական իշխանությունները Հայաստանում դժվարություններ և խոչընդոտներ են ստեղծում ամերիկյան միսիոներների համար գրքերի վաճառքի հարցում: Հիպը նշում էր, որ սա սովորական երևույթ էր արդեն դարձել ոչ միայն փոքր քաղաքներում և գյուղերում, այլև մեծ քաղաքներում և Կոստանդնուպոլսում նույնպես: Այս դիմադրությունը գալիս է մասամբ նաև հայերից, նշում էր Հիպը, և մասնավորապես Փոքր Ասիայում ժողովրդի շրջանում մեծ ազդեցություն ունեցող հոգևոր դասից, որի համոզ-

[1] Նույն տեղում, էջ 501-502:
[2] US Department of State. Papers Relating to the Foreign Relations of the United States, Transmitted to Congress, With the Annual Message of the President, December 4, 1883, Washington: Government Printing Office, 1884, p. 839.
[3] US Department of State. Papers Relating to the Foreign Relations of the United States, Transmitted to Congress, With the Annual Message of the President, December 1, 1884, Washington: Government Printing Office, 1885, pp. 532-539, 542, 544.
[4] Նույն տեղում, էջ 846-847:

[1] Նույն տեղում, էջ 539-541, 543-544, 546-548, 549-550:
[2] US Department of State. Papers Relating to the Foreign Relations of the United States, Transmitted to Congress, With the Annual Message of the President, December 8, 1885, Washington: Government Printing Office, 1886, p. 892:

մամբ՝ միսիոներների գործունեությունն ու գրքերը պատճառ են դառնում, որ շատ հայեր ընդունեն բողոքականություն: Թուրքերին էլ, գրում էր Հիպը, իրենց հերթին մտահոգում էր այն հանգամանքը, որ միսիոներների հրապարակումների և գործունեության ազդեցության արդյունքում երիտասարդ շատ հայեր մեկնում են Միացյալ Նահանգներ, ընդունում հպատակություն, այնուհետև վերադառնում Թուրքիա և հայցում իրավունքների պաշտպանություն՝ որպես ԱՄՆ-ի քաղաքացիներ: Օսմանյան կառավարությունը սկսել էր այլևս չճանաչել իրեն հպատակների օտարերկրյա քաղաքացիություն ստանալու հանգամանքը, որոնք առանց թույլտվության են մեկնել երկրից: Ըստ Հիպի՝ սա տեղի էր ունենում գրեթե բոլոր հայերի հետ, որոնք մեկնել էին ԱՄՆ: Այդ պատճառով էլ ամերիկյան ներկայացուցչությունը ստիպված էր նմանատիպ յուրաքանչյուր հարցով դիմել օսմանյան իշխանություններին՝ պահանջելով ԱՄՆ-ի քաղաքացու իրավունքների պաշտպանություն:[1]

1884 թ. օգոստոսի 30-ին Օսմանյան կայսրության ներկայացուցիչ Հուսսեյն Թևֆիկը տեղեկացնում էր պետքարտուղարությանը, որ 1862 թ. ԱՄՆ-ի և Թուրքիայի միջև ստորագրված առևտրական պայմանագիրն այլևս ուժի մեջ չէ, և առաջարկում էր, որ Կոստանդնուպոլսում ԱՄՆ-ի դեսպանությունը նշանակի ներկայացուցիչ՝ օսմանյան կառավարության հետ նոր պայմանագիր և սակագներ բանակցելու նպատակով: Թևֆիկը հավաստիացնում էր, որ ԱՄՆ-ից ներմուծվող ապրանքը կունենա նույն արտոնությունները, որոնցից նաև օգտվում էին մյուս տերությունները: Ուստի Բարձր Դուռը չէր կարող համաձայնել ԱՄՆ-ի կառավարության այն առաջարկի հետ, որ ամերիկացի առևտրականները նոր պայմանագիրն ու սակագները բանակցելու ընթացքում շարունակեն օգտվել այլևս չգործող պայմանագրի արտոնություններից:[2]

Պատասխանելով Թևֆիկին հոկտեմբերի 24-ին Ֆռելինգհույսենն իր զարմանքն էր հայտնում Բարձր Դռան որոշման կապակցությամբ նշելով՝ որ այն հակասում էր երկու երկրների միջև գոյություն ունեցող բարեկամական հարաբերությունների մակարդակին, ինչպես նաև կնքված պայմանագրերին: Պետքարտուղարը նշում էր, որ ԱՄՆ-ը պատրաստ է նոր պայմանագիր և սակագներ քննարկել Բարձր Դռան հետ, և հասկանալի է, որ դրանք աճելու են, ինչպես որ դա տեղի էր ունեցել մյուս տերությունների օ-

[1] US Department of State Papers Relating to the Foreign Relations of the United States, Transmitted to Congress, With the Annual Message of the President, December 1, 1884, Washington: Government Printing Office, 1885, pp. 569-570, 574-575.
[2] US Department of State. Papers Relating to the Foreign Relations of the United States, Transmitted to Congress, With the Annual Message of the President, December 8, 1885, Washington: Government Printing Office, 1886, p. 896.

րինակով, սակայն կրկնում էր իր կառավարության դիրքորոշումը՝ մինչև նոր պայմանագրի ուժի մեջ մտնելը շարունակել առևտուրը գոյություն ունեցող պայմաններով: Նա հանձնարարել էր Կոստանդնուպոլսում ԱՄՆ-ի ներկայացուցչին բողոքարկել Բարձր Դռան այդ որոշումը:[1]

Նոյեմբերի 26-ին Թևֆիկը գրում էր պետքարտուղար Ֆռելինհույսենին, որ 1830 թ. երկկողմ պայմանագրի համաձայն՝ Բարձր Դուռը խոստացել էր ԱՄՆ-ի քաղաքացիներին օգտվել նույն արտոնություններից, որոնք տրված էին մյուս «ֆռանկերին»: Ըստ Թևֆիկի՝ ժամանակի ընթացքում օրենքները կայսրությունում ենթարկվել էին փոփոխության, և հնարավոր չէ, որ ամերիկացիները շարունակեն օգտվել նախկին բոլոր արտոնություններից: Համաձայն օսմանյան օրենքի՝ եթե «ֆռանկը» սպանություն կամ այլ հանցագործություն էր գործել, իշխանությունները պետք է տեղեկացնեն օտարերկրյա պետության ներկայացուցիչներին, և դատավորներն ու պաշտոնյաները չեն կարող շարունակել գործընթացն առանց դեսպանի, հյուպատոսների կամ նրանց ներկայացուցիչների ներկայության: Ամերիկացիները, շարունակում էր Թևֆիկը, չեն կարող բացառություն պահանջել: 1830 թ. պայմանագիրն ուրիշ որևէ բացառություն ԱՄՆ-ի քաղաքացիների համար անել չի կարող: Հենվելով միմիայն այս հիմնարար սկզբունքի վրա՝ կարելի է լուծել ԱՄՆ-ի հետ ներկայումս ծագող խնդիրները:[2]

1884 թ. դեկտեմբերի 1-ին Կոնգրեսին ուղղված իր տարեկան ուղերձում նախագահ Չեստեր Արթուրը նշում էր, որ ԱՄՆ-ի և Օսմանյան կայսրության միջև դեռևս գոյություն ունեն չլուծված խնդիրներ. «Մեր քաղաքացիների դժգոհությունները գոհացուցիչ կերպով կարգավորված չեն», «Դուռը փորձում է զրկել մեր առևտուրը հովանավորյալ իրավունքից, որը մենք ստացել էինք գոյություն ունեցող պայմանագրային պարտավորություններով, իսկ սակագների վերանայումը մնացել է անավարտ»:[3]

Նույն օրերին ԱՄՆ-ի ժամանակավոր հավատարմատար Հիպը հաղորդում էր պետքարտուղար Ֆռելինգհույսենին, որ 24 տարի առաջ միսիոներները երկու դպրոց էին բացել Խարբերդում, որոնցից մեկը՝ տղաների, իսկ մյուսը՝ աղջիկների համար: Ժամանակի ընթացքում այս երկու դպրոցները վերածվեցին ամերիկյան Եփրատի քոլեջի տղաների և աղջիկների բաժինների: Իր բացման և գործունեության համար դպրոցը որևէ թույլտվություն կամ իրավունք թուրքական կառավարությունից չէր ստացել, քանի որ նման պահանջ կամ դրա կարիքը չէր եղել, մինչև որ 1883 թ. դպրոցի

[1] Նույն տեղում, էջ 896-898:
[2] Նույն տեղում, էջ 898-901:
[3] US Department of State. Papers Relating to the Foreign Relations of the United States, Transmitted to Congress, With the Annual Message of the President, December 1, 1884, Washington: Government Printing Office, 1885, p. VIII.

տնօրենն այդ կապակցությամբ հարցում էր ստացել շրջանի փոխնահանգապետից: Իշխանությունները, ըստ Հիպի, պահանջում էին փակել դպրոցը, քանի որ այն չուներ համապատասխան թույլտվություն: Հավատարմատարը նշում էր, որ դպրոցի տնօրինությունը ոչ միայն չէր դիմել այդ հարցով իշխանություններին դպրոցի հիմնադրման ընթացքում, այլև այն ժամանակ, երբ Օսմանյան կայսրությունում համապատասխան օրենք էր ընդունվել դպրոցների վերաբերյալ: Եվ երրորդ սխալն այն էր, ըստ Հիպի, որ դպրոցի տնօրինությունը թույլ չէր տվել կառավարության կողմից նշանակված դպրոցների տեսուչին այցելել աղջիկների բաժինն այն պատրվակով, որ նա չամուսնացած երիտասարդ էր: Այս խնդիրները կարող էին լուծում ստանալ, եթե ԱՄՆ-ը հյուպատոսական ներկայացուցչություն ունենար այդ շրջաններում՝ միսիոներների շահերը իրավական հարցերում պաշտպանելու համար:[1] 1885 թ. հունվարի 24-ին Ուոլլեսը տեղեկացնում էր պետքարտուղարին, որ ներկայացուցչության ջանքերի շնորհիվ օսմանյան իշխանությունները որոշում են կայացրել լուծում տալ խնդրին:[2]

Դեկտեմբերի 18-ին Հիպը տեղեկացնում էր Ֆռելինգհույսենին, որ Աստվածաշնչի տան հրատարակչության տնօրենները բողոք էին ներկայացրել Բարձր Դռանն առ այն, որ իշխանությունները խոչընդոտում են իրենց կողմից տպագրված Աստվածաշնչի օրինակների վաճառքը: Այս հարցով Հիպը հանդիպում էր ունեցել Մեծ Բրիտանիայի ժամանակավոր հավատարմատարի հետ, որը տեղեկացրել էր, որ վերջերս ամերիկյան միսիոներներ Բլիսն ու Դուայթը խնդրել էին իրենից միջամտել իշխանությունների կողմից բանտարկված և սովի ենթարկված, քրիստոնեություն ընդունած 15 մահմեդականներին ազատ արձակելու հարցում: Միսիոներները տեղեկացրել էին նաև, որ ևս 200 մահմեդականներ ներկայումս ցանկանում են կրոնափոխ լինել, սակայն նրանց անվտանգությունն ապահովված չէ: Միսիոներները հավատացած էին, որ կրոնափոխության այդ երևույթները տեղի էին ունենում Աստվածաշնչի ազդեցությունից: Ըստ Հիպի՝ այս հանգամանքը բավականին դժվարեցնում էր իշխանությունների հետ երկխոսությունը գրքերի վաճառքի հարցում:[3]

1885 թ. հունվարի 24-ին արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարար Ուոլլեսը հաղորդում էր Ֆռելինգհույսենին ամերիկյան ապրանքի ներմուծման սակագների ճշտման հարցով Օսմանյան կայսրության արտաքին գործերի նախարարի հետ իր հանդիպման մասին: Նախարարը նշում էր, որ

[1] US Department of State. Papers Relating to the Foreign Relations of the United States, Transmitted to Congress, With the Annual Message of the President, December 8, 1885, Washington: Government Printing Office, 1886, pp. 819-820.
[2] Նույն տեղում, էջ 831:
[3] Նույն տեղում, էջ 823:

նախկինում ԱՄՆ-ի նկատմամբ ցուցաբերվում էր ճիշտ նույն մոտեցումը, որը կիրառվում էր եվրոպական տերությունների հանդեպ, և ապագայում նույնպես «մենք որևէ հիմք չունենք առևտրի հարցում նրան վերաբերվել այլ կերպ, քան որպես արտոնյալ պետության»: Ուոլլեսն ընկալել էր նախարարի ասածը որպես 1830 թ. պայմանագրի ճանաչում՝ կարծիք հայտնելով, որ այդ պարագայում ԱՄՆ-ի իշխանությունները պետք է որևէ դժգոհություն այլևս չունենան: Նա հետաքրքրվել էր նախարարից այլ տերությունների հետ սակագների հարցի առնչությամբ բանակցությունների արդյունքներով: Վերջինս պատասխանել էր, որ Ֆրանսիայի, Գերմանիայի, Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի սակագներն արդեն իսկ որոշված են: Ինչ վերաբերում է պայմանագրին, ապա Օսմանյան կայսրությունը նպատակադրվել էր նմանատիպ մեկ պայմանագիր ստորագրել բոլոր տերությունների հետ: Նախագիծը ներկայումս քննարկվում էր կառավարությունում, որից հետո նախարարը խոստանում էր օրինակ տրամադրել Ուոլլեսին՝ ԱՄՆ-ի կառավարությանը ներկայացնելու նպատակով:

Այնուհետև Ուոլլեսը քննարկեց նույն խնդիրը մեծ վեզիրի հետ: Մեծ վեզիրն ասում էր, որ ինչպես և մյուս տերություններից, ԱՄՆ-ից նախկինում գանձվում էր 8%: Նա առաջարկում էր ներկայացուցիչ նշանակել՝ նոր սակագինը բանակցելու նպատակով: Միաժամանակ մեծ վեզիրը հույս էր հայտնում, որ ԱՄՆ-ը նույնպես կընդունի այդ առաջարկը, քանի որ Բարձր Դռան նպատակն է տրամադրել հնարավորինս հավասար պայմաններ և արտոնություններ բոլոր տերություններին: Ուոլլեսը դրական էր գնահատում մյուս տերությունների հետ համահավասար արտոնություններ ունենալու գաղափարը՝ առաջարկելով պետքարտուղարությանն ընդունել Բարձր Դռան առաջարկը:[1]

Մայիսի 29-ին ԱՄՆ-ի պետքարտուղար Բայարդը գրում էր ժամանակավոր հավատարմատար Ու. Էմմետին, որ Բեյրութում հյուպատոսից տեղեկություն էր ստացվել առ այն, որ Կոստանդնուպոլսի քաղաքացիության գրասենյակը մերժել էր վավերացնել Գևորգ Գյուլիզյանի և Պետրոս Իսքիյանի ԱՄՆ-ի քաղաքացիությունը՝ հիմք ընդունելով այն, որ նրանց անձնագրերում նշում չկար այն մասին, որ նրանք մեկնել են Օսմանյան կայսրությունից մինչև 1869 թ. օրենքի հռչակումը, համաձայն որի՝ կայսրության հպատակը չէր կարող մեկնել երկրից՝ այլ երկրում քաղաքացիություն ստանալու նպատակով, եթե չուներ իշխանությունների համապատասխան թույլտվությունն այդ մասին: Պետքարտուղարը նշում էր, որ այդ մարդիկ կանոնավոր կերպով հպատակություն էին ստացել ԱՄՆ-ում, և նրանց տրամադրվել էին անձնագրեր պետքարտուղարության կողմից: Ըստ Բա-

[1] Նույն տեղում, էջ 829-830:

յարդի՝ ԱՄՆ-ում օրենք չկար այն մասին, որ անձնագրում պետք է նշում լինի, թե երբ է հպատակություն ստացող քաղաքացին դուրս եկել իր ծննդավայր հանդիսացող երկրից: Պետքարտուղարն իր զարմանքն էր հայտնել նաև թուրքական այն օրենքի կապակցությամբ, որ երկրի սահմաններից դուրս եկող օսմանյան հպատակի միակ նպատակն է այլ երկրի քաղաքացիություն ստանալը:[1]

Հունիսի 8-ին պետքարտուղարի պաշտոնակատար Ջեյմս Պորտերը[2] հանձնարարում էր Կոստանդնուպոլսում ժամանակավոր հավատարմատար Էմմետին դիմել օսմանյան իշխանություններին՝ Բոստոնում բնակվող ԱՄՆ-ի քաղաքացի Հակոբ Առաքելյանի խնդիրը լուծելու խնդրանքով: Առաքելյանը 18 տարի առաջ մեկնել էր ԱՄՆ՝ մշտական բնակության, ամուսնացել ամերիկուհու հետ, 14 տարի է, ինչ ամերիկյան քաղաքացի էր և Օսմանյան կայսրություն վերադառնալու որևէ ցանկություն չուներ: Միաժամանակ նա օգնում էր Արաբկիրում բնակվող իր հորն ու եղբորը: Նրա բողոքն այն էր, որ թուրքական իշխանությունները շարունակում էին իրենից հարկեր գանձել, ստիպում եղբորն աշխատել հարկ չվճարելու դիմաց և այլն:[3]

Հուլիսի 23-ին Էմմետը պատասխանում էր, որ այդ հարցով հանդիպել էր արտաքին գործերի նախարարի հետ, որը խորհուրդ էր տվել Առաքելյանին կապի մեջ մտնել ԱՄՆ-ում Թուրքիայի ներկայացուցչության հետ, լրացնել համապատասխան ձևեր, որը հնարավորություն կտար իշխանություններին հանելու նրա անունը գրանցումից: Ըստ նախարարի՝ ինչ-ինչ պատճառներով, հնարավոր է՝ Առաքելյանի բարեկամները նրա մեկնելուց հետո, գույքը գրավ են դրել, որից հետո նրա անունը մնացել է գրանցված, և նրանք հարկերը վճարում են նրա փոխարեն:[4]

Կրկին անդրադառնալով այդ խնդրին 1885 թ. նոյեմբերի 28-ին՝ Օսմանյան կայսրությունում նորանշանակ արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարար Սեմյուել Կոքսին ուղղված իր նամակում Բայարդը նշում էր, որ 1869 թ. օսմանյան օրենքի 5-րդ կետի համաձայն՝ «օսմանյան հպատակը, որը ձեռք է բերում օտարերկրյա քաղաքացիություն կայսերական կառավարության թույլտվությամբ, համարվելու է և ստանալու է օտարերկրյա հպատակի կարգավիճակ: Հակառակ պարագայում, եթե նա օտարերկրյա հպատակություն է ստացել՝ առանց կայսերական կառավարության նախնական

[1] Նույն տեղում, էջ 847-848:
[2] Ջեյմս Պորտեր (1828-1912) - ԱՄՆ-ի քաղաքական գործիչ և դիվանագետ, Թենեսի նահանգի նահանգապետ (1875-1879), պետքարտուղարի օգնական (1885-1887), լիազոր նախարար Չիլիում (1893-1894):
[3] Նույն տեղում, էջ 848-849:
[4] Նույն տեղում, էջ 854:

թույլտվության, նրա ընդունած հպատակությունը չեղյալ է համարվելու և իրենն վերաբերվելու են իբրև օսմանյան հպատակի: Որևէ օսմանյան հպատակ որևէ պարագայում չի կարող հպատակություն ստանալ որպես օտարերկրացի՝ առանց ստանալու իշխանությունների վավերացումը կայսերական հրովարտակի միջոցով»:

Փաստորեն, ինչպես նշում էր պետքարտուղարը, այդ օրենքով Բարձր Դուռը խտրականություն էր դնում ԱՄՆ-ում հպատակություն ստացած և ԱՄՆ-ի քաղաքացիների միջև՝ 1869 թ. հետո կայսրությունից առանց համապատասխան թույլտվության մեկնած օսմանյան հպատակներին վերաբերվելով որպես կայսրության քաղաքացիների: Ըստ քարտուղարի գնահատականի՝ «ոչ մի երկիր այս հարցում նման աստիճանի խստություն հանդես չի բերում: Կան, իհարկե, երկրներ, որոնք առանց նախնական համաձայնության մերժում են վտարելու իրավունքը, ենթարկում օտարերկրացիներին իրենց օրենքի պատասխանատվությանը, սակայն այս պարագայում ընդհանրապես մերժվում էր օտարերկրյա քաղաքացիություն ունենալու հանգամանքը: Որևէ երկրում նման օրենք գոյություն չունի: Թուրքական իշխանությունները խտրականություն են դնում օտարերկրացիների միջև, ոչ միայն վերաբերվում են այդ մարդկանց որպես կայսրության հպատակների, այլև թուրքացնում նրանց»: Թուրք իշխանությունները միակն են, որ կիրառում են «հավիտենական հավատարմության» գաղափարախոսությունը: «Փաստորեն՝ երկու պետությունների օրենքները հակասության մեջ են, - շարունակում էր պետքարտուղարը, - սովորաբար տվյալ պարագաներում պետությունները պետք է բանակցեն և ելք գտնեն:

Ամերիկյան կողմը համաձայնել էր, որ երբ ԱՄՆ-ում հպատակություն ստացած անձը վերադառնում է իր նախկին քաղաքացիության կամ ծննդավայր երկիր, կարող է երկու տարի ունենալ հատուկ կարգավիճակ. ընդունող կողմը երկու տարվա ընթացքում իրավունք չունի նրան զրկելու այլ քաղաքացիությունից և վերականգնելու նախկինը: Երկու տարվա ընթացքում ԱՄՆ-ում հպատակություն ստացած անձը կարող է կամավոր կերպով հրաժարվել իր նոր քաղաքացիությունից և վերականգնել նախկինը»: Նման պայմանագիր Օսմանյան կայսրության հետ ստորագրվել էր 1874 թ., սակայն, ըստ պետքարտուղարի, այն այդպես էլ չվավերացվեց Բարձր Դռան կողմից: Բայարդը հանձնարարում էր Կոքսին բանակցել Բարձր Դռան հետ այս խնդրի շուրջ՝ գոյություն ունեցող խնդիրները լուծելու նպատակով:[1]

1885 թ. հուլիսի 29-ին «Ամերիկյան խորհուրդի» քարտուղար Ն. Կլարկը նամակ էր հղել ԱՄՆ-ի նախագահին՝ Օսմանյան կայսրությունում ամերիկյան միսիոներների գործունեության և նրանց անվտանգությունն ապա-

[1] Նույն տեղում, էջ 885-890:

հովելու անհրաժեշտության մասին: Ըստ Կլարկի՝ Օսմանյան կայսրությունում, Մակեդոնիայից մինչև Պարսկաստան, Սև ծովից մինչև Արաբիայի հյուսիսը, ներկայումս աշխատում են շուրջ 200 ամերիկյան միսիոներներ: Նրանք կամ նրանց գործակալները ներկայացված են 300-ից 400 քաղաքներում և բնակավայրերում, սպասարկում են շուրջ 150 եկեղեցիներ՝ 10 հազարից ավելի ծխականներով: Շուրջ մեկ միլիոն դոլարի ներդրում էր կատարվել կրթական և հրատարակչական գործի մեջ: Ներկայումս կայսրությունում գործում էին քոլեջի աստիճանի ութ հաստատություններ՝ հազարից ավելի ուսանողներով, 75-80 ավագ դպրոցներ և սեմինարիաներ՝ շուրջ 2 500 աշակերտներով: 200 միլիոն էջ կրթական և կրոնական բնույթի գրականություն էր տպագրվել, վեց տարբեր լեզուներով: «Աստվածաշնչի ամերիկյան ընկերությունը» միայն 125 հազար դոլարի տպագրական գործիքներ էր ներկրել երկիր, որոնց միջոցով տպագրվում էր տարեկան 50 հազար գիրք՝ թուրքերեն, հայերեն, բուլղարերեն և այլ լեզուներով: Բացի իր ունեցվածքից՝ ընկերությունը Կոստանդնուպոլսում ուներ 80 հազար դոլարի արժողությամբ շենք՝ իր հողամասով:

Վերջին շրջանում, շարունակում էր Կլարկը, օսմանյան կառավարությունն ավելի ու ավելի կասկածամտությամբ էր սկսել վերաբերվել միսիոներների կրթությանն ուղղված գործունեությանը և նրանց աճող ազդեցությանը: Հետզհետե տարբեր ճանապարհներով միսիոներների աշխատանքը ենթարկվում էր սահմանափակումների: Առաջին հիմնական սահմանափակումը, ըստ Կլարկի, վերաբերում էր միսիոներների հրատարակությունների տարածմանն ու վաճառքին, երկրորդը՝ դպրոցների շինարարության համար թույլտվություն ստանալուն, երրորդը՝ ամենից կարևորը՝ միսիոներների իրավունքների և անվտանգության պաշտպանությանը:

Ըստ Կլարկի՝ ներկայումս տարբեր տերությունների քաղաքացիներ շատ ավելի ապահովված և պաշտպանված էին իրենց զգում Օսմանյան կայսրությունում, քան ԱՄՆ-ի քաղաքացիները: Կլարկն առաջարկում էր, որ բացի պաշտոնական ներկայացումներից և բողոքներից, որպես անհրաժեշտ միջոց՝ հաճախակի դարձվի Միջերկրականի ամերիկյան նավատորմի կամ առանձին ռազմանավերի մուտքը Զմյուռնիա, Դարդանել կամ Սալոնիկ: Ըստ Կլարկի՝ նման քաղաքականությունը պետք է օգտագործել ոչ թե որպես սպառնալիք, այլ որպես հիշեցում աշխարհի հզոր տերություններից մեկի՝ Միացյալ Նահանգների մասին, որը կամրապնդի ԱՄՆ-ի ներկայացուցչի ազդեցությունը, կվերականգնի ամերիկյան անունն ու հեղինակությունը և կնպաստի ԱՄՆ-ի քաղաքացիների իրավունքների և անվտանգության պաշտպանությանն այս երկրում:[1]

[1] Նույն տեղում, էջ 856-858:

1886 թ. հունվարի 5-ին Կոքսը հաղորդում էր պետքարտուղար Բայարդին Բարձր Դռան կողմից Քաղաքացիության գրասենյակ ստեղծելու մասին: Դեռևս 1869 թ. Բարձր Դուռը հանձնաժողով էր ստեղծել քաղաքացիության հարցով, որը վերածվեց արտաքին նախարարությանը կից գործող գրասենյակի: Գրասենյակի առաջարկներն այս կամ այն հարցի վերաբերյալ ներկայացվում էին արտաքին գործերի նախարարին, որը և կայացնում էր վերջնական որոշումը: Գրասենյակի ստեղծման հիմնական նպատակն էր վկայագրեր տրամադրել այն անձանց, որոնք դիմել էին իրենց արտասահմանյան երկրի քաղաքացի հանդիսանալու հանգամանքը հաստատելու համար: Թեև օտարերկրյա հպատակների պարտադիր գրանցում երկրում չէր իրականացվում, սակայն երբ օտարերկրացին այս կամ այն հարցով դիմում էր դատարան կամ պետք է վավերացներ որևէ պաշտոնական փաստաթուղթ, նա պարտադիր պետք է դիմեր Քաղաքացիության գրասենյակ և ստանար համապատասխան վկայական այն մասին, որ նա Օսմանյան կայսրության հպատակ չէ, այլ օտարերկրյա քաղաքացի:[1]

1886 թ. դեկտեմբերի 6-ի Կոնգրեսին ուղղված իր տարեկան ուղերձում ԱՄՆ-ի նախագահ Գրովեր Քլիվլենդն Օսմանյան կայսրության հետ հարաբերությունների կապակցությամբ նշում էր. «Անցնող տարվա ընթացքում փորձ էր արվել 1874 թ. Բարձր Դռան հետ ստորագրված հպատակության մասին պայմանագրի ուժի մեջ մտնելու հետ կապված արգելքները վերացնելու ուղղությամբ, որը դեռևս չէր իրագործվում ծննդավայր երկիր հպատակություն ստացած քաղաքացիների վերադարձի իրենց և ժամանակավոր բնակություն հաստատելու հետ առնչվող հոդվածների մեկնաբանության անհամաձայնության պատճառով: Ես հավատացած եմ, որ շուտով հայտարարելու եմ այս մեկնաբանության տարբերությունների նպաստավոր կարգավորման մասին: Բարձր գոհունակությամբ է արձանագրվել Թուրքիայում ամերիկյան միսիոներների նկատմամբ բարելավվող վերաբերմունքը, ինչպես որ դա հաստատվում է այդ կառավարության մոտ մեր վերջին նախարարին ուղղված նրանց շնորհակալագրերով՝ իրենց օգտին հաջողությամբ միջամտելու համար»:[2]

1887 թ. հունվարի 11-ին Կոստանդնուպոլսում ժամանակավոր հավատարմատար Փենդլտոն Քինգը զեկուցում էր պետքարտուղար Բայարդին Օսմանյան կայսրությունում ամերիկյան դպրոցների հարցի մասին: 1869 թ. հուլիսին Բարձր Դուռն օրենք էր ընդունել, որի համաձայն՝ երկրում գործող բոլոր դպրոցները պետք է դիմեն իշխանություններին՝ թույլտվություն ստա-

[1] US Department of State. Papers Relating to the Foreign Relations of the United States, Transmitted to Congress, With the Annual Message of the President, December 6, 1886, Washington: Government Printing Office, 1887, pp. 862-864.
[2] Նույն տեղում, էջ XI:

նալու համար: Ամերիկյան դպրոցների հետ կապված խնդիրը ծագել էր 1874 թ. և լուրջ բնույթ ստացել 1886 թ., երբ միայն Բեյրութի հյուպատոսական տարածքում փակվեց շուրջ 30 դպրոց: Քինգը նշում էր, որ այսպես կոչված «ամերիկյան դպրոցներից» 200-ն ամբողջությամբ ամերիկյան չէին. դրանք գործում էին տեղի բնակիչների տներում, աշակերտներն ուսում էին ստանում իրենց մայրենի լեզվով, իսկ միսիոներները մասամբ ծածկում էին ֆինանսական ծախսերն ու իրականացնում ընդհանուր հսկողություն: Հավատարմատարը հանդիպումներ էր ունեցել հասարակական ուսուցման նախարարի հետ՝ խոստանալով բոլոր դպրոցների համար թույլտվություն ստանալու դիմաց նախարարությանը ներկայացնել դասագրքերն ու ուսումնական ծրագրերը: Ըստ Քինգի՝ նախարարությունը պետք է վստահ լիներ, որ դպրոցներում չէին սովորեցնում երկրի համար վտանգ ներկայացնող հեղափոխական գաղափարներ: Նախարարի հետ պայմանավորվածություն ձեռք բերելուց հետո Քինգն այդ մասին շրջաբերական նամակ էր հղում բոլոր դպրոցների տնօրեններին և միսիոներներին:[1]

Դեռևս 1886 թ. նոյեմբերի 23-ին ամերիկյան միսիոներ Հենրի Դուայթը[2] տեղեկանք էր ներկայացրել ԱՄՆ-ի դիվանագիտական ներկայացուցչությանը՝ Օսմանյան կայսրությունում ամերիկյան միսիոներների դպրոցների վերաբերյալ: Ըստ Դուայթի՝ ամերիկյան միսիոներների կողմից Օսմանյան կայսրությունում հաստատված առաջին դպրոցը հիմնվել էր 1824 թ. Բեյրութում: Այդ օրվանից միսիոներներն ընդլայնել էին իրենց կրթական գործունեությունն Օսմանյան կայսրությունում՝ իշխանությունների կողմից առանց որևէ դիմադրության: Ըստ միսիոների՝ կայսրությունում գործում էին շուրջ 400 դպրոցներ, որոնք ամբողջությամբ կամ մասամբ ֆինանսավորվում էին միսիոներների կողմից: Դպրոցներից 75-ը գործում էին միսիոներների տներում, 100-ը՝ ամերիկացիներին պատկանող կամ վարձված շինություններում, ուր բնակվում էին միսիոներական հաստատությունների տեղացի գործակալները, իսկ մնացածը՝ տեղացի բնակիչների տներում:[3]

1887 թ. մարտի 22-ին Բարձր Դուռը տեղեկացնում էր հավատարմատար Քինգին այն մասին, որ Աստվածաշնչի ընկերությունը հրատարակել և տարածել էր գրքեր, որոնք վիրավորում և զրպարտում էին մահմեդականությունը: Բարձր Դուռը որոշում էր կայացրել բռնագրավել այդ հրատարակությունները և խուզարկության ընթացքում հայտնաբերվել էր մեծ քանակությամբ նման գրականություն: Պատասխան նամակում (1887 թ. 6 ապրիլի) Քինգն ամբողջությամբ հերքում էր գրքերի վնասակար լինելու հանգամանքն ու բողոքում առանց ԱՄՆ-ի ներկայացուցչության իմացության ոստիկանների կողմից «Աստվածաշնչի ամերիկյան ընկերության» տարածք մուտք գործելու կապակցությամբ:[1]

Նույն թվականի ապրիլի 20-ին ԱՄՆ-ի պետքարտուղար Բայարդը Կոստանդնուպոլսում նորանշանակ ներկայացուցիչ, արտակարգ դեսպան-նորդ և լիազոր նախարար Օսկար Շտրաուսին[2] ուղարկել էր նամակ-հանձնարարական՝ թուրք-ամերիկյան հարաբերությունների և ներկայացուցչության խնդիրների մասին: Առաջնահերթ խնդիրը, ըստ պետքարտուղարի, Օսմանյան կայսրությունում բնակություն հաստատած ԱՄՆ-ի քաղաքացիների, ինչպես նաև նրանց կողմից հիմնադրած կրթական և կրոնական հաստատությունների կարգավիճակի, նրանց իրավունքների պաշտպանության հարցն էր:

Բայարդը նշում էր, որ դեռևս վաղ շրջանից ի վեր Կոստանդնուպոլսի շրջանում բնակություն էին հաստատել տարբեր և բազմապիսի ազգություններ, որոնք ավանդաբար ունեցել են ինքնակառավարման իրավունք: «Երբ Օտտոմանյան Դուռը դարձավ իշխող երկրում,- շարունակում էր պետքարտուղարը,- նույն այդ համակարգը ճանաչվեց, և ամեն մի ազգությանը տրված ինքնակառավարման իրավունքը ոչ միայն ընդունվեց, այլև էլ ավելի ընդլայնվեց: Եվ ոչ միայն հայերի և այլ ազգությունների ինքնակառավարման իրավունքը ստացավ ճանաչում, այլև օտարերկրյա քրիստոնյա քաղաքացիներին նույնպես սկսեցին տրվել արտոնություններ: Դռան այդ քաղաքականության արդյունքում Թուրքիայի վրա տարածում չի ստացել ամենուրեք ճանաչված տարածքային սուվերենության սկզբունքը: Երբ որ Դուռն իշխող դարձավ երկրում, վերջինիս բնակչությունը հիմնականում կազմված էր քրիստոնյա ազգություններից, որոնց տրված էր ինքնակառավարման իրավունք»:

Բայարդը նշում էր, որ քրիստոնյա ազգություններին հնարավոր չէր վտարել՝ առանց տեղահանելու բնակչության զգալի մասը, քանի որ նրանք պաշտոնապես տիրում էին հողին և իրականացնում երկրի գործարար կապերը: Միևնույն ժամանակ, գրում էր Բայարդը, «Դուռը չէր կարող հանձն առնել այդ ազգությունների տեղական ինքնակառավարումը, լուծումներ

[1] US Department of State. Papers Relating to the Foreign Relations of the United States, for the Year 1887, Transmitted to Congress, With a Message of the President, June 26, 1888, Washington: Government Printing Office, 1888, pp. 1083-1085.
[2] **Հենրի Դուայթ** (1843-1917) - ամերիկյան միսիոներ և լրագրող, եղել է «Ամերիկյան խորհուրդի» ներկայացուցիչը և «*New York Tribune*» թերթի թղթակիցը Կոստանդնուպոլսում:
[3] Նույն տեղում, էջ 1085-1087:

[1] Նույն տեղում, էջ 1092-1093:
[2] **Օսկար Շտրաուս** (1850-1926) - ԱՄՆ-ի պետական գործիչ և դիվանագետ, արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարար Օսմանյան կայսրությունում (1887-1889, 1898-1899), առևտրի և աշխատանքի քարտուղար (1906-1909), դեսպան Օսմանյան կայսրությունում (1909-1910): Նա բնութագրվում էր որպես «լուրջ, փառասեր և հողաբաշխ» անձնավորություն (**Mattox, Henry E.**, նշվ. աշխ., էջ 107-108):

տալ նրանց գործարար վեճերին, հսկողություն սահմանել նրանց կրոնական գործունեության վրա, քանի որ նրանք, ովքեր չէին ընդունում Մոհամմեդին, թուրքի համար ոչ միայն լոկ թշնամի էին, այլ գյավուրներ՝ ոչ մաքուր անձինք, որոնց հետ թուրքը չէր կարող գործ ունենալ կամ ընդհանրապես շփման մեջ մտնել»: «Այդ իսկ պատճառով,-գրում էր Բայարդը,- քրիստոնյաները չէին ծառայում բանակում, նրանց երեխաները չէին կարող սովորել թուրքական դպրոցներում, նրանք հիմնում էին իրենց դպրոցները, որտեղ որ ուսուցումը հիմնված էր քրիստոնյա սկզբունքների և հիմունքների վրա: Քրիստոնյաների միջև գործարար վեճերը լուծում էին ստանում ազգությունների դատարանների կողմից, իսկ կրոնական վեճերը՝ համապատասխան եկեղեցու կողմից»:

Պետքարտուղարը նշում էր, որ արդարադատության նմանօրինակ սահմանազատում տեղի էր ունենում նաև ԱՄՆ-ում, երբ իշխող ժողովրդի կողմից որդեգրվել էր նույնանման քաղաքականություն Հյուսիսային Ամերիկայի հնդկացիների նկատմամբ: «Ինչպես որ հնդկացիներն էին անկարող ընդունել մեր հաստատությունները, - գրում էր Բայարդը, - այնպես էլ քրիստոնյա ազգությունները չէին կարող ընդունել և ճանաչել օտտոմանյան հաստատությունները, ... և մենք շարունակում ենք անել հնդկացիների հետ այն, ինչ օսմանցի զավթիչներն արեցին քրիստոնյա ժողովուրդների հետ...»: «Ինչպես որ օսմանցիներն ընդունակ չէին հասկանալու քրիստոնյա ազգերի օրենքները կամ գերակայող դարձնելու մահմեդական օրենքը և ստիպված եղան թողնելու դատարան ունենալու նրանց իրավունքը, - շարունակում էր պետքարտուղարը, - այդպես էլ մենք չուզեցինք որդեգրել հնդկացիների օրենքները կամ ստիպել նրանց ընդունել մերը՝ թողնելով հնդկացի ցեղերում ծագող խնդիրների կարգավորումը ցեղային օրենքի որոշումներին»:

Դռան «հրաժարումը» քրիստոնյա ազգությունների նկատմամբ օրենսդրական և իրավական հսկողություն սահմանելուց ոչ միայն բերեց նրան, որ քրիստոնյաներն ունեցան տեղական ինքնակառավարման զգալի հնարավորություն, շարունակում էր պետքարտուղարը, այլև այն հետզհետե ստացավ միջազգային վավերականություն, երբ Եվրոպայի մեծ տերությունները սկսեցին Օսմանյան կայսրություն գործուղել ոչ միայն իրենց դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցիչներին, այլև կայսրության քրիստոնյաների հետ առևտուր անող առևտրականների և նրանց հետ աշխատող միսիոներների: Թուրքիան չէր կարող դիմադրել քաղաքակիրթ աշխարհի առաջատար տերություններին և արգելել առևտրականների և միսիոներների մուտքը երկիր: Այս գործունյա և ազդեցիկ գործակալների նկատմամբ թուրքական օրենքը շատ ավելի քիչ պիտանի էր, քան քրիստոնյա ազգությունների համար: Նորեկները պաշտպանված էին տերությունների կողմից, որոնց Թուրքիան դիմադրելու ցանկություն չուներ:[1]

Օտարերկրյա մասնագետների ներկայությունը Թուրքիայում, շարունակում էր պետքարտուղարը, էական նշանակություն ուներ երկրի համար, քանի որ նրանք կարգավորում էին երկրի ֆինանսական խնդիրները, վարժեցնում զինվորներին, դպրոցներում սովորեցնում ազատական քաղաքակրթության հիմքերը, կարգավորում հարաբերությունները դրսի աշխարհի հետ: Ըստ Բայարդի՝ Թուրքիան չէր կարող և ներկայումս էլ չի կարող հրաժարվել այդ քաղաքականությունից, որն իրականում վտանգում էր թուրքերի իշխող լինելու հանգամանքը, այդ իսկ պատճառով էլ ընտրեց երկրի քաղաքական զարգացումն ու գոյատևումն ապահովելու նպատակով իր սահմանների ներսում արտասահմանցիներին իրենց բնորոշ ինստիտուտներից օգտվելու թույլտվություն տալու միակ ճանապարհը: Այսպիսով, գլում էր պետքարտուղարը, մի կողմից Դուռը չէր կարող գոյատևել առանց մահմեդականության բացառիկության, մյուս կողմից էլ նույնպես չէր կարող գոյատևել առանց արտասահմանցիների, որոնք առաջադիմություն և քաղաքակրթություն էին բերում երկրին: Դրա հետևանքով էլ ԱՄՆ-ի քաղաքացիներն Օսմանյան կայսրությունում օգտվում էին էքստերիտորիալ սկզբունքից, որն ամրագրված էր 1830 թ. ԱՄՆ-ի և Օսմանյան կայսրության միջև ստորագրված պայմանագրով: Համաձայն պայմանագրի դրույթների և օսմանյան օրենքի՝ օտարերկրյա դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչություններին իրավունք էր վերապահված ապահովելու իրենց քաղաքացու կամ կրոնակցի իրավունքների պաշտպանությունը՝ փաստորեն հավասարեցնելով նրանց իրավունքներն ու առավելությունները դիվանագետների հետ:[2]

Բայարդը գրում էր, որ միսիոներների իրավունքներն ամրագրված էին նաև 1878 թ. Բեռլինի պայմանագրի 72-րդ հոդվածում, ուր ասված էր. «Բոլոր ազգությունների կրոնականները, ուխտավորներն ու վանականները, որոնք ճամփորդում են Եվրոպական Թուրքիայում կամ Ասիական Թուրքիայում, պետք է օգտվեն բոլոր իրավունքներից, առավելություններից և արտոնություններից: Թուրքիայում տերությունների դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցիչների պաշտոնական հովանավորության իրավունքը ճանաչված է ինչպես հիշատակված անձանց, այնպես էլ նրանց կրոնական, բարեգործական և այլ հաստատությունների համար սրբավայրերում և այլուր»:[3] Բայարդը եզրակացնում էր, որ ԱՄՆ-ի բողոքական քաղաքացիների իրավունքը՝ ղեկավարելու իրենց առաքելությունները, մա-

[1] Նույն տեղում, էջ 1094-1095:
[2] Նույն տեղում, էջ 1095-1097:
[3] Նույն տեղում, էջ 1099-1100:

տուտները, հիվանդանոցներն ու դպրոցները, հիմնված է էքստերիտորիալ արտոնությունների վրա, որոնք տրված են Թուրքիայում քրիստոնյա օտարերկրացիներին:[1]

1889 թ. դեկտեմբերի 3-ին Կոնգրեսին ուղղված իր տարեկան ուղերձում ԱՄՆ-ի նախագահ Բենջամին Հարրիսոնը նշում էր, որ ներկայումս քննարկումներ են ընթանում Թուրքիայի հետ՝ այդ երկրում ԱՄՆ-ի իրավունքներին պայմանագրի ուժ տրամադրելու նպատակով: Նախագահը հույս էր հայտնում, որ երկու կառավարությունների կողմից լուրջ փորձ է արվելու այդ իրավունքների սահմանման հարցում:[2]

Դեկտեմբերի 7-ին պետքարտուղար Ջեյմս Բլեյնը գրում էր Կոստանդնուպոլսում արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարար Սոլոմոն Հիրշին (1889-1892), որ նամակ էր ստացել Ամերիկյան խորհուրդի ներկայացուցիչ Ջաղսոն Սմիթից առ այն, որ 1882 թ. ամերիկյան միսիոներներ Նեփի և Ռեյնոլդզի վրա հարձակման համար մեղադրվող Մուսսա բեյը ներկայումս դատվում էր Կոստանդնուպոլսում, սակայն վտանգ կար, որ նա կարող էր խուսափել պատժից և ազատ արձակվել: Պետքարտուղարը հանձնարարում էր հետևել դատավարության ընթացքին և զեկուցել պետքարտուղարությանը:[3] Դեկտեմբերի 19-ին ժամանակավոր հավատարմատար Փենդլտոն Քինգը զեկուցում էր Բլեյնին, որ դատարանի առաջին լսումն ավարտվել էր և Մուսսա բեյն արդարացվել էր: Քինգը գրում էր, որ զարմանալին այն էր, որ նույնիսկ մեծ վեզիրը Մուսսա բեյին ավազակ էր անվանում՝ հույս հայտնելով, որ նա կստանա արդարացի պատիժ:

Քինգը տեղեկացնում էր նաև, որ Հայաստանում տիրող իրավիճակն ու Մուսսա բեյի դատավարությունը մեծ արձագանք էր ստանում Անգլիայում և Եվրոպայում ընդհանրապես: Նույնիսկ թուրքական հասարակության շրջանում Մուսսա բեյն ուներ վատ համբավ, և հույս կա, որ նրան կաքսորեն մի հեռավոր շրջան: Քինգի կարծիքով՝ դատավարությունը դեռ կձգվի մի քանի ամիս: Ըստ հավատարմատարի՝ դատավարության հարցում մեծ ճնշում էր գործադրում իշխանությունների վրա բրիտանական դեսպան Ուիլյամ Ուայ-

[1] Նույն տեղում, էջ 1100:
[2] US Department of State. Papers Relating to the Foreign Relations of the United States, Transmitted to Congress, With the Annual Message of the President, December 3, 1889, Washington: Government Printing Office, 1890, p. XIII.
[3] US Department of State. Papers Relating to the Foreign Relations of the United States, Transmitted to Congress, With the Annual Message of the President, December 3, 1890, Washington: Government Printing Office, 1891, p. 721.

թը,[1] որը «զգալի դերակատարություն» էր ստանձնել Հայկական հարցի լուծման գործում:[2]

1890 թ. փետրվարի 22-ին Հիրշը հաղորդում էր Բլեյնին, որ դեռևս որևէ առաջընթաց չէր արձանագրվել Մուսսա բեյին պատժի ենթարկելու գործում: Մեծ վեզիրի հետ այս խնդիրը քննարկելու ժամանակ վերջինս խոստացել էր Հիրշին զեկուցել այդ մասին սուլթանին: Մի քանի օր անց ներկայացուցչության թարգման Գարգիուլոն հրավիրվել էր սուլթանական պալատ, ուր սուլթանի քարտուղար Սյուրեյա փաշան ընթերցել էր Աբդուլ Համիդի պաշտոնական պատասխանն ԱՄՆ-ի ներկայացուցչության հարցմանը: Ըստ Հիրշի՝ սուլթանի պատասխանից երևում էր, որ Մուսսա բեյի հարցում նրան ապատեղեկացրել էր հիմնականում արդարադատության նախարարը, որը հնարավոր բոլոր միջոցներով փորձում էր այս ընթացքում պաշտպանել մեղադրյալին:

Իր պատասխանում սուլթանը խոսում էր ԱՄՆ-ի և Թուրքիայի միջև գոյություն ունեցող բարեկամական հարաբերությունների, իր գահակալության ընթացքում ամերիկյան միսիոներներին ցուցաբերած բարյացակամ վերաբերմունքի մասին: Այնուհետև նա իր զարմանքն էր հայտնում առ այն, որ ԱՄՆ-ի ներկայացուցչությունն իր կասկածանքն էր հայտնել Մուսսա բեյի դատավարության արդարության կապակցությամբ: Զարմանալի է, շարունակում էր սուլթանը, որ իր անաչառության և արդարության սկզբունքներով հայտնի Միացյալ Նահանգները ցանկանում էր պատժի ենթարկել մի մարդու, որի անմեղությունն ապացուցել էր դատարանը: Ակնհայտ է, նշում էր Հիրշը, որ իր պատասխանում սուլթանը վկայակոչում էր Մուսսա բեյի գործի այն մասը, որը վերաբերում էր հայերի կողմից իրեն մեղադրվող հանցանքներին:

Հիրշը որևէ հնարավոր կապ չէր տեսնում այդ երկու գործերի միջև՝ նշելով, որ ամեն պարագայում ԱՄՆ-ը պետք է պահանջի նրա պատիժն ամերիկյան միսիոներների հանդեպ ցուցաբերած հանցանքի համար: Գարգիուլոն, համապատասխան ցուցումներ ստանալով Հիրշից, իր բողոքն էր հայտնել սուլթանի պատասխանի կապակցությամբ՝ նշելով, որ ներկայացուցչությունը շարունակելու էր պնդել Մուսսա բեյին արդարացի պատիժ տալու հա-

[1] Ուիլյամ Ուայթ (1824-1891) – Մեծ Բրիտանիայի դիվանագետ, աշխատել է Վարշավայում, Բելգրադում, Բուխարեստում, ժամանակավոր հավատարմատար (1885-1886), դեսպանորդ Օսմանյան կայսրությունում (1897-1891):
[2] US Department of State. Papers Relating to the Foreign Relations of the United States, Transmitted to Congress, With the Annual Message of the President, December 3, 1890, Washington: Government Printing Office, 1891, p. 724; Տե՛ս, Կիրակոսյան Արման, Բրիտանական դիվանագիտությունը և արևմտահայության խնդիրը..., էջ 201-222:

մար:[1] 1890 թ. մարտի 19-ին Բլեյնը գրում էր Հիրշին, որ հարկավոր է մեկ անգամ ևս պնդել Բարձր Դռան առջև, որ ԱՄՆ-ը որևէ առնչություն չունի Մուսսա բեյի կողմից հայերի հանդեպ գործած հանցանքների գործի հետ. ամերիկյան իշխանությունները պահանջում են պատժել նրան ամերիկյան միսիոներների հանդեպ իրագործված հանցագործության համար:[2]

1889 թ. դեկտեմբերի 10-ին ժամանակավոր հավատարմատար Քինգը հաղորդում էր Բլեյնին, որ Աստվածաշնչի տան կողմից հրատարակված Աստվածաշնչի բառարանները Էրզրումում և Սալոնիկում բռնագրավվել էին տեղական իշխանությունների կողմից: Ըստ Քինգի՝ նման դեպքեր հաճախակի էին տեղի ունենում Օսմանյան կայսրության տարածքում, թեև գրքերի տպագրության համար ստացվել էր հատուկ թույլտվություն հասարակական ուսուցման նախարարությունից: Բանն այն է, գրում էր Քինգը, որ հնարավոր չէ ամեն մի գրքի վրա նախարարության կնիքը դնել, սակայն ամեն հրատարակության համար համապատասխան թույլտվություն իշխանությունների կողմից ստացվել էր: Հավատարմատարն իր հայտագրում առաջարկել էր Բարձր Դռանը կնքել հրատարակվող գրքերի ողջ կատալոգը և այդ մասին հրահանգել բոլոր տեղական իշխանություններին: Միաժամանակ Քինգը եզրակացնում էր, որ, հաշվի առնելով հաճախակի կադրային փոփոխությունները երկրում, հստակ քաղաքականության բացակայությունը, երկու քաղաքակրթությունների և կրոնների տարբերություններն ու բախումը, հնարավոր չէր վերջնական լուծում տալ գրականությանը, դպրոցներին և եկեղեցիներին վերաբերող գոյություն ունեցող դժվարություններին:[3]

1890 թ. մարտի 31-ին Հիրշը զեկուցում էր Բլեյնին, որ վերջին երեք տարիների ընթացքում ամերիկյան միսիոներների գործունեության համար շատ կարևոր գրքերի հրատարակումն ու տարածումը հանդիպում էր զգալի դժվարությունների: Թեև միսիոներները հրատարակում էին միայն գրքեր, որոնք համապատասխան գրաքննություն էին անցել, դա չէր խանգարում տեղական իշխանություններին տարբեր տեսակի արգելքներ ստեղծել կամ էլ բռնագրավել գրականությունը: Համաձայն նամակին կից ներկայացվող միսիոներ Հենրի Դուայթի տեղեկանքի՝ Թուրքիայում գրքի վաճառքն իրականացնում էին հիմնականում «Աստվածաշնչի ամերիկյան ընկերությունը», «Ամերիկյան խորհուրդը» (Բոստոն), «Արտաքին առաքելությունների պրեսբիտերական խորհուրդը» (Նյու Յորք) և «Ամերիկյան տրակտատների ընկերությունը»: Գրքերի վաճառքը սկսվել էր 1834 թ., երբ նշված առաջին

[1] US Department of State. Papers Relating to the Foreign Relations of the United States, Transmitted to Congress, With the Annual Message of the President, December 3, 1890, Washington: Government Printing Office, 1891, p. 742-744.
[2] Նույն տեղում, էջ 745:
[3] Նույն տեղում, էջ 722-723:

երկու ընկերությունները 1822 թ. Մալթայում հիմնված տպարանը տեղափոխեցին Բեյրութ: «Աստվածաշնչի ամերիկյան ընկերությունը» հիմնականում տպագրում էր եվրոպական կայսրության հիմնական լեզուներով Աստվածաշնչի Հին և Նոր կտակարանները, իսկ «Ամերիկյան խորհուրդի» հրատարակչական հանձնաժողովը, որը հաստատված էր Կոստանդնուպոլսի Աստվածաշնչի տանը, տպագրում էր կրոնական գրականություն ու դպրոցական դասագրքեր՝ թուրքերենով, հայատառ թուրքերենով, հունատառ թուրքերենով, հայերենով, հունարենով և բուլղարերենով: «Պրեսբիտերական խորհուրդը» Բեյրութում արաբերենով տպագրում էր նաև կրոնական գրականություն և դասագրքեր:

1874 թ. օսմանյան հրատարակչական օրենքի համաձայն՝ բոլոր հրատարակվող գրքերը պետք է համապատասխան գրաքննության ենթարկվեն և թույլտվություն ստանան հասարակական ուսուցման նախարարության կողմից: Չնայած միսիոներների կողմից հրատարակվող գրականությունը տպագրվում էր գոյություն ունեցող օրենքի համապատասխան, գրում էր Դուայթը, այն, միևնույնն է, մասնավորապես վերջին երեք տարիների ընթացքում, ենթարկվում էր տարբեր տեսակի խոչընդոտների և բռնագրավման: Բռնագրավման էին ենթարկվել գրքեր և դասագրքեր, որոնցում կարելի էր կարդալ, օրինակ, «ես խաչի զինվոր եմ» (դա համարվում էր հեղափոխական կոչ) կամ «հայրենիք», որը հայերի պարագայում կարող էր նշանակել «Հայաստան» կամ հենց «Հայաստան» անվանումը, «Արարատ սուրբ լեռ» և այլն:[1]:

1891 թ. հոկտեմբերի 17-ին պետքարտուղարի պաշտոնակատար Ուիլյամ Վարտոնը[2] հանձնարարում էր ժամանակավոր հավատարմատար Ֆրենսիս Մակնաթին հաղորդել Բարձր Դռանը, որ ԱՄՆ-ի կառավարությունը դիտում է գրքերի հաճախակի բռնագրավման և փչացման դեպքերը՝ որպես լուրջ խնդիր երկու երկրների միջև գոյություն ունեցող հարաբերություններում: Նա հանձնարարում էր պահանջել Բարձր Դռնից ձեռք առնել հնարավոր բոլոր միջոցները՝ խնդիրը լուծելու, ապագայում Թուրքիայում ԱՄՆ-ի քաղաքացիների և հաստատությունների իրավունքների ոտնահարումը բացառելու նպատակով:[3]

1890 թ. մարտի 19-ին Հիրշը հաղորդում էր Բլեյնին, որ Յերուսաղեմում, ԱՄՆ-ի հյուպատոս Գիլլմանից ստացված տեղեկատվության համաձայն,

[1] Նույն տեղում, էջ 752-756:
[2] Ուիլյամ Վարտոն (1847-1919) - ԱՄՆ-ի իրավաբան և դիվանագետ, պետքարտուղարի տեղակալ:
[3] US Department of State. Papers Relating to the Foreign Relations of the United States, Transmitted to Congress, With the Annual Message of the President, December 9, 1891, Washington: Government Printing Office, 1892, pp. 758-760.

թուրք զինվորները ոչ օրինական բանտարկության.էին ենթարկել քաղաքում բնակվող ԱՄՆ-ի քաղաքացիներ Մոզես Էնջելին և Շալոմ Կանստորումին, քանի որ նրանք հրաժարվել էին վճարել անշարժ ունեցվածքի համար գանձվող հարկերը:[1]

Նույն թվականի դեկտեմբերի 22-ին պետքարտուղարը գրում էր Հիրշին ԱՄՆ-ի քաղաքացի Սերովփե Գյուրջյանի դեպքի մասին: Գյուրջյանը ծնվել էր 1848 թ. Կեսարիայում, 1865 թ. ժամանել էր ԱՄՆ և բնակվել Նյու Հեմփշիրում, 1874 թ. ստացել էր քաղաքացիություն, ընդունվել էր քոլեջ, որն ավարտել էր 1877 թ.: 1878 թ. մի շարք ԱՄՆ-ի քաղաքացիների հետ միասին նա ձեռնարկել էր Կոստանդնուպոլսի շրջակայքում համալսարանի հիմնադրում, որը ստացել էր օսմանյան իշխանությունների հավանությունը: Թեև այդ ծրագիրն այդպես էլ չիրականացվեց, նա, այնուամենայնիվ, մեկնեց Թուրքիա, գրանցվեց Կոստանդնուպոլսի հյուպատոսությունում որպես ԱՄՆ-ի քաղաքացի և աշխատում էր որպես քիմիկոս և լուսանկարիչ: 1889 թ. հոկտեմբերին նրան ձերբակալում են և տանում ոստիկանություն՝ չնայած այն հանգամանքին, որ նա ներկայացրել էր իր ամերիկյան անձնագիրը:

Դեսպանությունն այդ կապակցությամբ մի քանի անգամ հայտագրեր էր ներկայացրել արտաքին գործերի նախարարությանը՝ առանց հյուպատոսությանը տեղեկացնելու ԱՄՆ-ի քաղաքացուն ձերբակալելու մասին: Թեև իշխանություններն իրենց ներողամտությունն էին հայտնել այդ կապակցությամբ, այնուամենայնիվ, նրանք մեղադրել էին Գյուրջյանին՝ իր բնակարանում հայկական հեղափոխական կոմիտեի կնիքը պատրաստելու համար:

Պետքարտուղարն անդրադառնում էր իր նամակում 1830 թ. պայմանագրի 4-րդ հոդվածի թուրքական կողմի մեկնաբանությանը, համաձայն որի՝ Օսմանյան կայսրությունում բնակվող ԱՄՆ-ի քաղաքացիները չեն կարող մեղադրվել հանցագործությունների մեջ և ձերբակալվել տեղական իշխանությունների կողմից, նրանց գործերը կարող են քննվել միայն ԱՄՆ-ի դեսպանորդ-նախարարի կամ հյուպատոսի կողմից, նրանք կարող են պատժի ենթարկվել միմիայն վերջիններիս կողմից: Այս տեքստն ուժի մեջ էր մտել 1832 թ. և օսմանյան իշխանությունների կողմից գործել առանց որևէ առարկության մինչև 1868 թ., երբ օսմանյան կառավարությունը հայտարարել էր, որ անգլերեն տեքստը տարբերվում էր պայմանագրի թուրքական տեքստից, որը հանդիսանում է վավերական: Թուրքական տեքստի համաձայն՝ ԱՄՆ-ի քաղաքացիներին չի կարելի անհանգստացնել, եթե նրանք հանցանք չեն գործել, նույնիսկ նրանց հանցավորության պարագայում

[1] US Department of State. Papers Relating to the Foreign Relations of the United States, Transmitted to Congress, With the Annual Message of the President, December 3, 1890, Washington: Government Printing Office, 1891, pp. 745-746.

նրանք չեն կարող ձերբակալվել դատավորների և ոստիկանության կողմից, սակայն նրանք պետք է պատժվեն ԱՄՆ-ի դեսպանորդ-նախարարների և հյուպատոսների կողմից: Եթե անգլերեն տեքստում նշվում էր, որ նրանց գործերը պետք է քննվեն ԱՄՆ-ի ներկայացուցիչների կողմից, թուրքերեն տեքստում առկա էր «նրանք պետք է պատժվեն» ԱՄՆ-ի ներկայացուցիչների կողմից՝ վերապահելով գործի քննությունը տեղական իշխանություններին:

Պետքարտուղարը միաժամանակ նշում էր, որ ԱՄՆ-ի կառավարությունն արդար և ազնիվ քաղաքականություն էր իրականացնում օտարերկրյա պետությունների նկատմամբ և խուսափում նրանց ներքին գործերին միջամտելուց: Ամերիկյան կառավարությունը չի կարող խրախուսել, որ այլ երկրներից ԱՄՆ մուտք գործած և քաղաքացիություն ստացած անձինք վերադառնան իրենց ծննդավայր ու զբաղվեն քաղաքական հակակառավարական գործունեությամբ: Ըստ պետքարտուղարի՝ դա չի վերաբերում Գյուրջյանի գործին, քանի որ որևէ հիմք գոյություն չունի, որ նա զբաղվել էր նման գործունեությամբ: Պետքարտուղարը հրահանգում էր Հիրշին շարունակել հսկողություն սահմանել ԱՄՆ-ի քաղաքացիների ազնիվ գործելակերպի նկատմամբ Օսմանյան կայսրությունում՝ պաշտպանելով նրանց էքստերիտորիալ իրավունքները:[1]

1891 թ. հոկտեմբերի 13-ին ամերիկյան միսիոներ Դ. Ա. Ռիչարդսոնը գրում էր պետքարտուղար Բլեյնին Էրզրումից, որ Օսմանյան կայսրության արևելյան շրջաններում գործում են բազմաթիվ միսիոներներ, սակայն նրանց իրավունքները պաշտպանող ԱՄՆ-ի հյուպատոսություններ այստեղ գոյություն չունեն: Մինչև վերջին շրջանը, շարունակում էր միսիոները, դրա անհրաժեշտությունն այնքան էլ չէր զգացվում, քանի որ տեղի իշխանությունները չէին կարողանում տարանջատել ԱՄՆ-ի պաշտոնական ներկայացուցիչներին միսիոներներից և բացարձակ բարյացակամ վերաբերմունք էին ցուցաբերում նրանց նկատմամբ: Բացի այդ՝ այնտեղ, որտեղ ԱՄՆ-ը հյուպատոսական ներկայացուցչություններ չուներ, Մեծ Բրիտանիայի հյուպատոսություններն անպաշտոն կերպով աջակցում և պաշտպանում էին ամերիկացիների շահերն ու իրավունքները: Սակայն ներկայումս, ըստ միսիոների, նման կերպով այլևս հնարավոր չէ հատկապես շարունակել, համենայն դեպս Էրզրումի շրջանում, քանի որ Ռուսաստանի սահմանին մոտ լինելու հանգամանքը և «այսպես կոչված Հայկական հարցի առկայությունը» զգալի չափով փոխել են իրավիճակը, ստեղծել կառավարության մոտ անվստահություն արտասահմանցիների նկատմամբ: Բրիտանիայի հյուպատո-

[1] US Department of State. Papers relating to the Foreign Relations of the United States, with the Annual Message of the President transmitted to Congress, December 3, 1900, Washington: Government Printing Office, 1902, pp. 915-919.

սությունների միջամտությունն ամերիկյան միսիոներների իրավունքների պաշտպանության հարցում բավականին սահմանափակվել էր օսմանյան իշխանությունների կողմից:

Ըստ միսիոների՝ մեխանիզմը կարող էր գործել միմիայն հետևյալ կերպ. Միացյալ Նահանգները Լոնդոնում իր ներկայացուցչության միջոցով պետք է դիմի բրիտանական կառավարությանը՝ խնդրելով Օսմանյան կայսրության այս կամ այն շրջանում պաշտպանել ամերիկացիների իրավունքները: Բրիտանական կառավարության համաձայնությունը ստանալուն պես ԱՄՆ-ի ներկայացուցչությունը պետք է դիմեր Բարձր Դռանը, ստանար նրա համաձայնությունը, որից հետո միայն բրիտանական հյուպատոսությունները կարող էին իրականացնել ԱՄՆ-ի քաղաքացիների իրավունքների պաշտպանությունը: Ռիչարդսոնը գրում էր, որ իր անձնական փորձը նույնպես վկայում էր իրավիճակի փոփոխության և նոր միջոցների կիրառման անհրաժեշտության մասին: Նա նկարագրում էր, թե ինչպես էին թուրքական իշխանություններն իրեն ձերբակալել, թեև իր փաստաթղթերը գտնվում էին կարգին վիճակում, բռնագրավել նրա անձնագիրը և երկար ժամանակ թույլ չէին տալիս նրան հեռանալ քաղաքից:

Միսիոները խնդրում էր պետքարտուղարից միջոցներ ձեռնարկել, որպեսզի բրիտանական հյուպատոսը կարողանար պաշտոնապես պաշտպանել ԱՄՆ-ի շահերն Էրզրումում, կամ էլ ամերիկյան կառավարությունը հյուպատոս նշանակեր այդ քաղաքում: Նա տեղեկացնում էր, որ Էրզրումի, Վանի և Բիթլիսի շրջանում գործում էին շուրջ քսան միսիոներներ, որոնք 40 հազար դոլարի ունեցվածք ունեին և տարեկան 15 հազար դոլար էին ծախսում իրենց գործունեության համար, մինչդեռ Բրիտանիայի քաղաքացիների թիվը նույնիսկ տասի չէր հասնում, սակայն նրանք ունեին հյուպատոս, փոխհյուպատոս ու քարտուղար և տարեկան ծախսում էին 10 հազար դոլար:[1]

1892 թ. դեկտեմբերի 9-ին ԱՄՆ-ի պետքարտուղար Ջոն Ֆոստերը[2] գրում էր արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարար Դեյվիդ Թոմփսոնին[3], որ, «Ամերիկյան խորհուրդից» ստացված վերջին նամակի համաձայն, օսմանյան կառավարությունն անօրինական կերպով փակում էր միսիոներների կողմից հիմնադրված դպրոցներն ու բռնագրավում ունեցվածքը: Ըստ

[1] US Department of State. Papers Relating to the Foreign Relations of the United States, Transmitted to Congress, With the Annual Message of the President, December 9, 1891, Washington: Government Printing Office, 1892, pp. 762-764.

[2] Ջոն Ֆոստեր (1836-1917) - ԱՄՆ-ի պետական և ռազմական գործիչ, իրավաբան և դիվանագետ, լիազոր նախարար Մեքսիկայում (1873-1880), Ռուսաստանում (1880-1881), Իսպանիայում (1883-1885), պետքարտուղար (1892-1893):

[3] Դեյվիդ Թոմփսոն (1834-1901) - ԱՄՆ-ի քաղաքական գործիչ, գործարար, դիվանագետ, Այդահո տարածքի նահանգապետ (1875-1876), Պորտլենդի քաղաքապետ (1879-1882), արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարար Օսմանյան կայսրությունում (1892-1893):

պետքարտուղարի՝ ամերիկյան հաստատությունները պետք է առանց հետագա ձգձգման վերաբացվեն թուրքական կառավարության կարգադրությամբ կամ համապատասխան որոշմամբ: Նա հանձնարարում էր դեսպանորդին ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դրական արդյունքի հասնելու նպատակով:[1]

Պետքարտուղարությունը հաճախակի նամակներ էր ստանում հայերից, որոնք ժամանել էին ԱՄՆ Օսմանյան կայսրությունից և ստացել ամերիկյան քաղաքացիություն, սակայն թուրքական իշխանությունները թույլ չէին տալիս, որ նրանց ընտանիքները մեկնեն Միացյալ Նահանգներ: Նմանօրինակ նամակ էր գրել պետքարտուղար Ֆոստերին Բիթլիսի նախկին բնակիչ Խաչիկ Միքայելյանը Ֆրեզնոյից: Ընտանիքը Բիթլիսից մեծ դժվարություններով հասել էր Կոստանդնուպոլիս, սակայն թուրքական կառավարությունը թույլտվություն չէր տալիս նրանց մեկնելու երկրից:[2]

3. 1893 թ. Մարզվանի դեպքերը և ամերիկյան դիվանագիտությունը

Վախենալով բրիստոնյա փոքրամասնությունների շրջանում ապստամբության հնարավորությունից՝ օսմանյան ղեկավարները սկսեցին նյարդայնանալ ամերիկյան քոլեջների գործունեությունից, որոնց հիմնական «կլիենտուրան» հայերն էին: Դրա արդյունքում 1893 թ. թուրքերն այրեցին մի միսիոների տուն, իսկ օսմանյան ոստիկանությունը՝ Մարզվանի «Ամերիկյան խորհուրդի» դպրոցի, Անատոլիական քոլեջի անավարտ շինությունը: Ոստիկանությունը ցանկանում էր վախեցնել բողոքականներին և դուրս քշել նրանց հյուսիս-կենտրոնական Փոքր Ասիայից:

1893 թ. Անատոլիական քոլեջում 94 հայ, 23 հույն և 3 թուրք ուսանողներ էին սովորում: Թուրքերը պնդում էին, որ ուսուցիչների կազմում հեղափոխական կազմակերպության երկու անդամ կար, որոնք քոլեջի բազմացնող գործիքի վրա իբր բազմացրել էին «դավաճանական բնույթի պաստառներ», որոնք կոչ էին անում, որ Բրիտանիան գրավի Օսմանյան կայսրությունը: Միսիոներ Ջորջ Ուայթն իր հիշողություններում ժխտում էր, որ պաստառները բազմացվել էին քոլեջի մեքենաների վրա: Թուրքերը մեղադրեցին ուսուցիչներին դավաճանության մեջ և դատապարտեցին մահվան: Հետագայում երկու ուսուցիչներին ներում շնորհվեց, և նրանց աքսորեցին երկրից բրիտանացի ու ամերիկացի դիվանագետների միջնորդությամբ: ԱՄՆ-ն

[1] US Department of State. Papers Relating to the Foreign Relations of the United States, Transmitted to Congress, With the Annual Message of the President, December 3, 1893, Washington: Government Printing Office, 1894, p. 589.

[2] Նույն տեղում, էջ 592:

փոխհատուցում. պահանջեց Մարզվանում միսիոներների ունեցվածքի համար, և սուլթանը 2 200 դոլար վճարեց Անատոլիական քոլեջին:[1]

1893 թ. հունվարին կայսրության մի շարք խոշոր քաղաքներում՝ Ամասիայում, Մարզվանում, Չորումում, Թոխաթում, Յոզղատում, Անգորայում, Դիարբեքիրում և Սըվազում, կենտրոնական շինությունների պատերին և հասարակական վայրերում միաժամանակ փակցվեցին և տարածվեցին հակասուլթանական բովանդակություն պարունակող թռուցիկներ: Պարսավագրում մասնավորապես նշվում էր, որ սուլթան Աբդուլ Համիդն այլևս անկարող էր ղեկավարել կայսրությունը, լուծել երկրի առջև ծառացած խնդիրները, նրանից պահանջվում էր հրաժարվել գահից: Այդ իրադարձությունն անմիջապես օգտագործվեց իշխանությունների կողմից հայ բնակչության դեմ: Համարյա նշված բոլոր քաղաքներում սկսվեցին հայերի տների խուզարկություններ և համատարած ձերբակալություններ:[2]

Նույնիսկ այն ժամանակ արդեն ակնհայտ էր, որ այդ դեպքերը կազմակերպվել և իրագործվել էին կառավարության գործակալների կողմից՝ մահմեդական բնակչության շրջանում հակահայկական տրամադրություններ ստեղծելու և քրիստոնյաների համար արդարություն պահանջող եվրոպական տերությունների մոտ հայերի վարկը նսեմացնելու, նրանց դավադրության մեջ մեղադրելու նպատակով: [3]

Սըվազի վալին թռուցիկների տպագրման մեջ էր մեղադրել Մարզվանի ամերիկյան քոլեջի տնօրինությանը, ձերբակալել հայազգի ուսուցիչներ Թումայանին ու Գայայանին[4] և բանտարկել ընդհանուր առմամբ շուրջ 2 հազար հայերի: Մի քանի օր անց հրդեհվել էր քոլեջի օրիորդաց վարժարանի մասնաշենքը:

1893 թ. փետրվարի 5-ին Թոմփսոնը տեղեկացնում էր պետքարտուղար Ֆոստերին, որ, Ամասիայում Գերմանիայի և Սըվազում ԱՄՆ-ի հյուպատոսություններից ստացված տեղեկությունների համաձայն, Մարզվանում

[1] Grabill, Joseph L., նշվ. աշխ., էջ 41:
[2] Կիրակոսյան Արման, Բրիտանական դիվանագիտությունը և արևմտահայության խնդիրը..., էջ 230:
[3] Bliss, E.M., Turkey and Armenian Atrocities, Philadelphia, 1896, pp. 337-342; Gabrielian, M.S., Armenia: A Martyr Nation. A Historical Sketch of the Armenian People from Tradition Times to the Present Tragic Days, New York, 1918, pp. 225-230.
[4] Թումայանը և Գայայանը 1885 թ. Մարզվանի Անատոլիա քոլեջի ուսանողների կողմից ստեղծված «Փոքր Հայքի կազմակերպության» գաղափարական ղեկավարներն էին: Կազմակերպության հիմնական նպատակներն էին պատմական Փոքր Հայքի, Կիլիկիայի և Սև ծովի ափամերձ հայաբնակ վայրերում ազատագրական գաղափարների տարածումը, ժողովրդի ազգային ինքնագիտակցության արթնացումը, ինքնապաշտպանության նախապատրաստումը: Կազմակերպությունը մասնաճյուղեր ուներ Եվդոկիայում, Մալաթիայում և Կեսարիայում: Մարզվանի մասնաճյուղը ստեղծել էր մի քանի զինված խմբեր, որոնք պայքար էին մղում թուրք և քուրդ ավազակախմբերի դեմ՝ անկախ ազգությունից պաշտպանելով աշխատավոր ժողովրդի շահերը:

հրդեհվել էր ամերիկյան քոլեջի մասնաշենքերից մեկը, իշխանությունները ձերբակալել էին երկու տեղացի հայ ուսուցիչների: Թոմփսոնն անմիջապես հանդիպել էր արտաքին գործերի նախարար Մեհմեդ Սահդ փաշայի[1] հետ և բացատրություններ պահանջել այդ կապակցությամբ: Վերջինս կարծիք էր հայտնել, որ կատարվածը հայկական խժդժությունների արդյունք է: Թոմփսոնը հայտնել էր նախարարին, որ դպրոցն ամերիկյան միսիոներական ընկերության սեփականությունն էր, որը կառավարության կողմից պետք է պաշտպանվեր ամեն տեսակի վտանգներից: Այնուհետև Թոմփսոնը դիմել էր Գերմանիայի դեսպան Հյուգո Ռադոլինին՝ Ամասիայում հյուպատոս Կարլմանին Մարզվան ուղարկելու, անհրաժեշտ քննություն կատարելու և տեղի ունեցածի մասին տեղեկատվություն հաղորդելու խնդրանքով:[2] Միաժամանակ Թոմփսոնը հանձնարարում էր Սըվազում ԱՄՆ-ի հյուպատոս Ջուեթին նույնպես մեկնել Մարզվան՝ տեղի իշխանությունների հետ համապատասխան քննություն կատարելու և մանրամասն զեկուցագիր ներկայացնելու նպատակով:[3]

Հաջորդ օրը Թոմփսոնը հաղորդում էր Ֆոստերին, որ, հավաստի տեղեկությունների համաձայն, Կեսարիայում իրավիճակը նույնպես բավականին լարվել էր. մահմեդական բնակչությունը սպառնում էր բռնություններ սկսել բոլոր քրիստոնյաների նկատմամբ, հարձակումներ էին տեղի ունեցել հայ վաճառականների վրա, քրիստոնյաները փակել էին իրենց խանութները, փողոցում սպանվել էր հայ ուսուցիչ, որն ապրում էր միսիոներ Ֆարնսուորթի տանը, բանտարկվել էին մեծ թվով հայեր, իշխանությունները փնտրում էին Լոնդոնից ժամանած մի հայի, որն իբրև թե խառնակչությամբ էր զբաղվում այդ շրջանում, տեղի իշխանությունները փորձում էին հանգըստացնել մահմեդականներին:[4]

Մարտի 1-ին պետքարտուղարի պաշտոնակատար Ուիլյամ Վարտոնը գրում էր Թոմփսոնին, որ Մարզվանի Անատոլիական քոլեջի մասնաշենքի հրկիզումը, Հայաստանում տիրող ընդհանուր իրավիճակը, օտարերկրացիներին սպառնացող վտանգը պահանջում էր ԱՄՆ-ի կառավարությունից և Կոստանդնուպոլսում իր ներկայացուցչությունից անհապաղ միջոցներ ձեռնարկել ամերիկյան քաղաքացիների կյանքի և ունեցվածքի անվտանգությունն ապահովելու ուղղությամբ: Նա հանձնարարում էր Թոմփսոնին այս

[1] Մեհմեդ Սահդ փաշա (1830-1914) – Օսմանյան կայսրության պետական գործիչ, Կիպրոսի նահանգապետ, 1879-1912 թթ.՝ գլխավոր նախարար, արտաքին գործերի նախարար, մեծ վեզիր (ընդմիջումներով):
[2] US Department of State. Papers Relating to the Foreign Relations of the United States, Transmitted to Congress, With the Annual Message of the President, December 3, 1893, Washington: Government Printing Office, 1894, p. 594.
[3] Նույն տեղում, էջ 598:
[4] Նույն տեղում, էջ 596:

հարցով դիմել արտաքին գործերի նախարարին և մեծ վեզիրին՝ կիրառելու խիստ և անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ԱՄՆ-ի քաղաքացիների իրավունքները հարգելու ոչ միայն Հայաստանում, այլև Օսմանյան կայսրության ողջ տարածքում: Պետքարտուղարի պաշտոնակատարը նշում էր, որ վիճակն այնքան ծանր էր և անհանգիստ, որ ԱՄՆ-ի կառավարությունն արդեն սկսում էր մտածել, որ Բարձր Դուռն այլևս չէր տիրապետում իրավիճակին: Ըստ Վարտոնի՝ նման իրավիճակն այլևս շարունակվել չէր կարող, և այս ամենի ողջ պատասխանատվությունն ընկնելու էր օսմանյան կառավարության վրա:[1]

Նույն օրը Թոմփսոնը հաղորդում էր Ֆոստերին, որ Մարզվան գործուղված հյուպատոս Ջուեթի զեկուցագիրը ստանալուն պես հանդիպել էր արտաքին գործերի նախարարին և հանձնել նրան փաստաթղթի պատճենը: Նա բողոքել էր նախարարին Մարզվանում տեղի ունեցած քննության կազմակերպումից և արդյունքներից. հյուպատոս Ջուեթին թույլ չէին տվել նույնիսկ մասնակցել քննությանը: Հանդիպումից հետո Թոմփսոնը քննարկել էր խնդիրը Մեծ Բրիտանիայի և Գերմանիայի դեսպանների հետ, որոնք խոստացել էին համագործակցել այդ շրջաններում քրիստոնյա բնակչության և ամերիկյան դպրոցների ու ուսուցիչների պաշտպանության հարցում:[2]

Գլխավոր հյուպատոս Հեսսին ուղղված զեկուցագրում Ջուեթը նշում էր, որ իրավիճակը Մարզվանում կրիտիկական էր, և այդպես էին կարծում նաև քաղաքում բնակվող ԱՄՆ-ի քաղաքացիները: Հունվարի 5-ից հետո, երբ քաղաքի պատերին փակցվել էին զայրույթ առաջացրած պաստառները, քաղաքը կարծես դարձել էր պաշարված: Հարյուրավոր հայեր էին ձերբակալվել շրջանում, մարդիկ վախենում էին բացել իրենց խանութները, առևտուրը գրեթե կանգ էր առել, ոստիկանությունը խուզարկում էր տները, մեծ խմբերով շրջում փողոցներով օր ու գիշեր, հեռագրատան աշխատանքը դադարեցված էր, հնարավորություն չկար նամակներ ուղարկել նույնիսկ քաղաքից դուրս գնացող մարդկանց միջոցով: Այնպիսի տպավորություն էր, որ այս ամենը հատուկ նպատակով էր արվում իշխանությունների կողմից: Դեպքերի քննությունը կատարելու նպատակով վալիի կողմից նշանակված Հոսրեֆ փաշան պետք է պաշտպաներ ամերիկյան շահերն ու համագործակցեր ԱՄՆ-ի ներկայացուցիչների հետ, սակայն նա ամեն ինչ անում էր հակառակը: Բազմաթիվ վկայություններ կան այն մասին, որ նա թշնամական արտահայտություններ էր իրեն թույլ տվել քոլեջի հասցեին և անձամբ ցանկություն հայտնել վերացնելու այն: Փաստեր կան, որ հայերին ստիպում էին ստորագրել փաստաթուղթ, ուր անհանգստությունների մեղքն ամբողջապես բարդվում էր քոլեջի վրա, որտեղից տարածում էին ստանում հեղափոխական գաղափարները: Տեղի իշխանությունները ձեռնարկում էին բոլոր միջոցները՝ խեղաթյուրելու համար ճշմարտությունն ու ամբողջ մեղքը բարդում ձերբակալված ուսուցիչների վրա՝ մեղադրելով նրանց հեղափոխական գաղափարներ տարածելու և պաստառներ պատրաստելու մեջ:[1]

1893 թ. մարտի 7-ին Թոմփսոնը հաղորդում էր պետքարտուղար Ուոլթեր Գրեշամին[2] Օսմանյան կայսրության արտգործնախարարի հետ ունեցած իր հանդիպման մասին, որի ժամանակ վերջինս մտերմաբար ասել էր, որ Մարզվանի դպրոցի տարածքը խուզարկելու թույլտվությունը կարող էր փարատել գոյություն ունեցող այն կարծիքը, որ հունվարի 5-ին Փոքր Ասիայի զգալի մասում փակցված սադրիչ պաստառները տպագրվել էին հենց այդ դպրոցում: Արտգործնախարարը նույնպես փորձել էր պնդել, որ թույլտվություն տրվի նաև խուզարկելու դպրոցի շենքը՝ զենք և զինամթերք փնտրելու նպատակով: Թոմփսոնը մերժել էր այդ առաջարկը՝ միաժամանակ հանձնարարելով հյուպատոս Ջուեթին անձամբ քննել շենքի հրկիզման իրական պատճառները: Թոմփսոնը բողոքել էր նաև ոստիկանության ղեկավար Հոսրեֆ փաշայից, որը բազմիցս մեղադրվել էր տարբեր հանցանքների համար, և նրան չէր կարելի վստահել այդ գործի արդար քննությունը: Թոմփսոնը բողոքում էր նաև փոստի և հեռագրատան վատ աշխատանքից՝ նշելով, որ գրեթե անհնար էր կապ հաստատել Մարզվանում գտնվող հյուպատոս Ջուեթի հետ:[3]

Դեռևս փետրվարի 21-ի իր զեկուցագրում հյուպատոս Ջուեթը գրում էր, որ մեծ դժվարություններ կան մարդկանցից փաստեր և վկայություններ ստանալու գործում, քանի որ բոլորը վախենում են հայտնվել բանտում: Հյուպատոսն այն կարծիքին էր, որ պաստառների պատրաստումն ու փակցնելը կազմակերպել էին տեղի իշխանությունները, որոնք հակակրանքով և ատելությամբ էին լցված դպրոցի հանդեպ: Ըստ հյուպատոսի, երբ պաստառները ցույց էին տվել Հոսրեֆին, նա բացականչել էր. «Ուրիշ ճանապարհ չկա, մենք պետք է հրկիզենք, մենք պետք է ոչնչացնենք այդ տեղը»: Անմիջապես դրանից հետո նա սկսել էր հրացաններ բաժանել իր մերձավորներին: Ըստ հյուպատոսի՝ ինչպես թուրքերն, այնպես էլ հայերը հավատացած էին, որ հրկիզման հեղինակն ու կազմակերպիչը անձամբ Հոսրեֆ փաշան էր:[4]

[1] Նույն տեղում, էջ 604:
[2] Նույն տեղում, էջ 605:

[1] Նույն տեղում, էջ 605-606:
[2] Ուոլթեր Գրեշամ (1832-1895) - ԱՄՆ-ի պետական և ռազմական գործիչ, փոստի գլխավոր կառավարիչ (1883-1884), ֆինանսների քարտուղար (1884), պետքարտուղար (1893-1895):
[3] Նույն տեղում, էջ 608-609:
[4] Նույն տեղում, էջ 609-610:

Մարտի 11-ին հյուպատոս Ջուեթը հաղորդում էր Թոմփսոնին, որ որևէ այս ընթացքում նամակ չէր ստացել Կոստանդնուպոլսից. տեղական իշխանությունների կողմից ստեղծվել էր կասկածի և սարսափի մթնոլորտ, տեղի պաշտոնյաները բացահայտ կերպով հայհոյում, վիրավորում և սպառնում են սպանել բողոքական միսիոներներին և ընդհանրապես բոլոր քրիստոնյաներին:[1]

Մարտի 16-ին Թոմփսոնը գրում էր Գրեշամին, որ իշխանությունների բոլոր զրպարտությունները՝ Մարզվանի դպրոցում պաստառները տպագրելու, ուսուցիչների կողմից նրանց տարածելու մասին, նպատակ ունեն շեղելու ուշադրությունը շենքի հրկիզման իրական պատճառից:[2]

Մարտի 22-ին Թոմփսոնը տեղեկացնում էր, որ Մարզվանում գտնվող հյուպատոս Ջուեթի հետ կապն ընդհանրապես անհնարին է դարձել, քանի որ իր ուղարկած փոստը տեղ չէր հասնում: Թոմփսոնը կրկին բողոք էր ներկայացնում այդ մասին արտգործնախարարին և մեծ վեզիրին, ինչպես նաև տեղեկացնում նրանց, որ ներկայացուցչության քարտուղար Նյուբերրիին որոշել է Մարզվան ուղարկել:[3]

Ապրիլի 1-ին Գրեշամը գրում էր Թոմփսոնին, որ, ԱՄՆ-ի նախագահի կարծիքով, Մարզվանի միջադեպը «ճգնաժամային բնույթ» ունի, որի համար այն իրականացնողները պետք է պատիժ կրեն, իսկ ամերիկյան շինությունների հրկիզման համար Օսմանյան կայսրությունից պետք է ստանալ համապատասխան փոխհատուցում: Ըստ պետքարտուղարի՝ ունեցվածքի ոչնչացումն անբարոյական և անօրինական արարք է, իսկ ԱՄՆ-ի իրավունքները որևէ կերպ չեն կարող ենթարկվել ոտնձգությունների՝ ուսանողների կողմից իբր գործած արարքի համար: Պետքարտուղարը հանձնարարում էր Թոմփսոնին բողոքել Բարձր Դռանը հյուպատոս Ջուեթի իրավունքները խախտելու համար և պահանջել, որ փոստն անխափան կերպով հասնի նրան:[4]

Ապրիլի 12-ին պետքարտուղարը կրկին հանձնարարում էր խստորեն պահանջել օսմանյան կառավարությունից պատժել մեղավորներին, տրամադրել քոլեջին համապատասխան լիցենզիա և լիարժեք պաշտպանվածություն, անհապաղ վերակառուցել շենքը և տրամադրել փոխհատուցում:[5]

Նույն օրը Մարզվան հասած և հետաքննություն կատարած Նյուբերրին հաղորդում էր Թոմփսոնին, որ թուրքական կառավարությունը պաշտոնապես տեղեկացված էր դպրոցի շենքը հրկիզելու մտադրության մասին,

[1] Նույն տեղում, էջ 622:
[2] Նույն տեղում, էջ 618:
[3] Նույն տեղում, էջ 620:
[4] Նույն տեղում, էջ 624:
[5] Նույն տեղում, էջ 625-626:

սակայն որևէ միջոց չէր ձեռնարկել պաշտպանելու ամերիկյան շահերը: Դիվանագետը վկայություն էր բերում այն մասին, որ Հոսրեֆ փաշան բացահայտ կերպով հայտարարել էր, որ «այս ամերիկացիները պաշտպանված են, ու նրանց պատժելու միակ ճանապարհը հրկիզումն է, և դա պետք է արվի անմիջապես»: Մարզվանի 30 բնակչից ստացված վկայությունները ապացուցում են, որ Հոսրեֆ փաշան անձամբ էր նախապատրաստել շենքի հրկիզումն ու նույնիսկ չէր թաքցրել իր մտադրությունները: Նյուբերրին եզրակացնում էր, որ մասնաշենքի հրկիզման ուղղակի կազմակերպիչներն էին Հոսրեֆ փաշան և նրա *զափթիեները*, իսկ թուրքական կառավարությունը պատասխանատու էր նրանց գործողությունների համար:[1]

Ապրիլի 27-ին Թոմփսոնը հաղորդում էր Գրեշամին, որ Բարձր Դուռը վերջապես վճարեց ներկայացուցչությանը 500 թուրքական ֆունտ՝ որպես փոխհատուցում Մարզվանի դպրոցի շենքի հրկիզման դիմաց, ինչպես նաև որոշում ընդունեց դպրոցը վերակառուցելու համար: Ըստ Թոմփսոնի՝ թուրքական կառավարությունը նաև որոշում ընդունեց դպրոցին համապատասխան թույլտվություն տալու, անվտանգությունը երաշխավորելու և հարկերից ազատելու վերաբերյալ: Սրվազի նահանգի ժանդարմերիայի ղեկավար Հոսրեֆ փաշան ազատվեց պաշտոնից, իսկ Մարզվանի ոստիկանապետը բանտարկվեց: Այսպիսով՝ եզրակացնում էր Թոմփսոնը, այս երկու մարդիկ պատասխանատու էին մասնաշենքի հրկիզման համար:[2]

1893 թ. Օսմանյան կայսրությունում արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարար նշանակվեց Ալեքսանդր Տերրելը: Ամերիկայն հեղինակ Հենրի Մետտոքսը որպես ամերիկյան ոչ պրոֆեսիոնալ դիվանագետի օրինակ բերում էր Տեխասից գնդապետ Ալեքսանդր Տերրելի նշանակումը, որը զվարճանք էր առաջացրել այլ պետությունների փորձառու դիվանագետների շրջանում, երբ Կոստանդնուպոլիս ժամանելուն պես անխոհեմ կերպով սկսել էր դասախոսություն կարդալ Օսմանյան կայսրության սուլթանին սահմանադրական կառավարության արժանիքների մասին: Տեխասցի «խենթ» իրավաբան և քաղաքական գործիչը սովորել էր Միսսուրիի համալսարանում, ծառայել էր Կոնֆեդերացիայի բանակում որպես բրիգադայի հրամանատար, զբաղվել էր իրավաբանությամբ, մի քանի անգամ ընտրվել և աշխատել էր Տեխասի օրենսդրական մարմնում: Իր օրոք գլխավոր հյուպատոս էր աշխատում Լյութեր Շորտը, որն Ինդիանա նահանգի Ֆրանկլին քաղաքում խմբագրում էր իր սեփական թերթը: Շորտը սովորել էր Ինդիանայի համալսարանում և Միչիգանի համալսարանի իրավաբանական

[1] Նույն տեղում, էջ 628-629:
[2] Նույն տեղում, էջ 631:

դպրոցում: Նա նույնպես Քաղաքացիական պատերազմի վետերան էր, ընտրվել էր նահանգի օրենսդրական մարմնում:[1]

1893 թ. օգոստոսի 21-ին Տերրելը հաղորդում էր Գրեշամին, որ Մարզվանի իշխանությունները միսիոներներից պահանջում էին չօգտագործել դպրոցի տարածքը՝ որպես դպրոց կամ եկեղեցի մինչև համապատասխան թույլտվության ստացումը: Այս առիթով Տերրելը հատուկ հանդիպումներ էր ունեցել մեծ վեզիրի և արտաքին գործերի նախարարի հետ: Վերջիններս տեղեկացրել էին ԱՄՆ-ի ներկայացուցչին, որ համապատասխան որոշումը դպրոցի վերաբերյալ կարող էր ուշանալ Փոքր Ասիայում «հայերի շրջանում անկարգ իրավիճակի» հետևանքով: Ըստ թուրք պաշտոնյաների՝ հատուկ արտոնությունների տրամադրումը դպրոցին կարող էր ավելի մեծ դժգոհություններ առաջացնել մահմեդական բնակչության շրջանում: Այս փաստարկը, ըստ Տերրելի, հիմնված էր գոյություն ունեցող այն վարկածի վրա, որ դպրոցը համարվում էր գաղտնի հեղափոխական ծրագրերի կենտրոն, որի համար մեղադրվել էին դպրոցի մի քանի ուսուցիչներ և ուսանողներ:[2]

Օգոստոսի 23-ի իր տեղեկագրում Մարզվանի քոլեջի ուսուցիչ, ամերիկյան միսիոներ Էդվարդ Ռիգզը գրում էր, որ Յոզգատում, Չորումում, Վեզիր Քյոփրյուում և Ամասիայում պաշտոնյաները մասնավոր կերպով զգուշացնում էին բնակիչներին երեխաներին չուղարկել ամերիկյան դպրոցներ: Ըստ միսիոների՝ Մարզվանի շրջանում տեղի էին ունեցել ամերիկյան դպրոցների աշակերտների բանտարկություններ և հարցաքննություններ, միսիոներների ձերբակալություններ և այլն: Ռիգզի կարծիքով՝ այս ամենը վկայում էր այն մասին, որ կառավարության կասկածելի և ոչ բարեկամական վերաբերմունքն ապացուցում էր այն վարկածը, որ իշխանությունները հայերի խռովարար շարժումը միանշանակ կերպով կապում էին ամերիկյան միսիոներների գործունեության հետ:[3]

1893 թ. սեպտեմբերին հյուպատոս Ջուեթը զեկուցում էր գլխավոր հյուպատոս Հեսսին, որ Սըվազի նահանգի վալի Հալիլ բեյը «անտանելի վատ» էր տրամադրված ամերիկացիների հանդեպ: Վալին առանձնահատուկ դաժան և անարդար վերաբերմունք էր դրսևորում հայերի հանդեպ, նշում էր Ջուեթը: Նա տրամադրում էր նահանգի առանց այդ էլ մոլեռանդ մահմեդական բնակչությունն ամերիկացիների դեմ՝ ստիպելով նրանց հավատալ, որ օտարերկրյա քրիստոնյաները կայսրության թշնամիներն էին, որոնք պատասխանատու էին հայ հեղափոխականների գործողությունների համար:

[1] Mattox, Henry E., նշվ. աշխ., էջ 20, 98:
[2] US Department of State. Papers Relating to the Foreign Relations of the United States, Transmitted to Congress, With the Annual Message of the President, December 3, 1893, Washington: Government Printing Office, 1894, pp. 669-670.
[3] Նույն տեղում, էջ 675-676:

Ըստ հյուպատոսի՝ շատ վկայություններ կան այն մասին, որ վալին ընդունակ չէր անկողմնակալ վերաբերմունք ցուցաբերել Հայկական հարցի նկատմամբ: Նահանգում պարբերաբար տեղի էին ունենում անմեղ հայերի ձերբակալություններ, տների խուզարկումներ, ինչպես դա տեղի ունեցավ Մարզվանի ամերիկյան դպրոցի ուսուցիչներ Թումայանի, Գայայանի, քահանա Մարտիրոսի և այլ անմեղ հայերի պարագայում: Վալին թույլ չէր տալիս հայերին դիմել ամերիկացի հյուպատոսին:[1]

Սեպտեմբերի 16-ին Տերրելը գրում էր գլխավոր հյուպատոս Հեսսին, որ Բարձր Դուռն իրեն հավաստիացումներ էր տվել այն մասին, որ ամերիկյան միսիոներները Մարզվանում այլևս որևէ խնդիր չեն ունենալու: ԱՄՆ-ի քաղաքացիություն ունեցող նրանց հայ ընկերները խնդիր ունենալու պարագայում կարող էին դիմել Եվրոպայի մեծ տերությունների, մասնավորապես Մեծ Բրիտանիայի հյուպատոսներին: Տերրելը նշում էր, որ «մեր միսիոներ ընկերները, որոնց հայերի հանդեպ համակրանքը բավականին ցցուն կերպով էր արտահայտվում, միմիայն զայրույթ և կասկածանք են առաջացնում թուրքի մոտ»: «Նրանց հարկավոր է ընտրություն կատարել, - շարունակում էր Տերրելը, - մի կողմից, խուսափելով հեղափոխականների հետ որևիցե կապերից, խաղաղ կերպով իրականացնելով իրենց գործը և, մյուս կողմից, պաշտպանելով խռովության համար բանտարկվածների գործը, իրենց իսկ միսիոներական հաստատությունները քանդելու միջև»:[2]

1893 թ. սեպտեմբերի 30-ին Էդվարդ Ռիգզը գրում էր Տերրելին Մարզվանից, որ «ապստամբական շարժումը» քաղաքում վերջնականապես տապալվել էր, վերջին փախստականները կամ սպանվել էին, կամ ձերբակալվել: Թեև *կայմակամ* Բեքիր փաշան շարունակում էր գործել խելացի և արդարացի կերպով, ընդդիմադիր վերաբերմունքը դպրոցի նկատմամբ դեռևս շարունակվում էր: Վերջերս Ամասիայի *մյութեսարիֆը* կրկին վատ էր արտահայտվել հաստատության մասին՝ կոչ անելով չուղարկել երեխաներին Մարզվան: «Մենք հնարավորության սահմաններում, - գրում էր Ռիգզը, - աշխատում ենք չավելացնել հայ ուսուցիչների թիվը: Ներկայումս դասախոսական կազմը բաղկացած է չորս ամերիկացիներից, երկու հույնից, մեկ գերմանացուց և մեկ հայից»:[3]

1893 թ. հոկտեմբերի վերջին Տերրելը հայտագիր ներկայացրեց Օսմանյան կայսրության արտաքին գործերի նախարարությանն առ այն, որ դեռևս օգոստոսին Բարձր Դուռը խոստացել էր երկու ամիս անց, երբ վիճակը Մարզվանում կարգավորվի, պաշտոնապես թույլատրել, որ դպրոցը շարունակի իր գործունեությունը: Մարզվանից ստացված տեղեկատվության

[1] Նույն տեղում, էջ 681-682:
[2] Նույն տեղում, էջ 682-683:
[3] Նույն տեղում, էջ 691-692:

համաձայն՝ «ոմն ռուսահայի կողմից ղեկավարվող խռովարար շարժումը» ճնշված էր, իսկ խռովարարները սպանված կամ ձերբակալված էին: Ուստի գրված էր հայտագրում, որևէ խոչընդոտ այլևս չկար թույլտվությունն այսքան ուշացնելու համար: Նշվում էր, որ որոշումը նպաստելու էր երկու երկրների միջև գոյություն ունեցող հարաբերությունների էլ ավելի սերտացմանը:[1]

1893 թ. դեկտեմբերի 3-ին Կոնգրեսին ուղղված իր տարեկան ուղերձում ԱՄՆ-ի նախագահ Գրովեր Քլիվլենդը նշում էր. «Օտտոմանյան Դռան հետ մեր հարաբերություններում տեղի ունեցած կարևոր իրադարձությունները պահանջում են ուշադրություն: Մարզվանում Միացյալ Նահանգների քաղաքացիների կողմից հաստատված Անատոլիայի քոլեջի դպրոցական մասնաշենքերից մեկի հրկիզումն ու ավիրումը խուժան ամբոխի կողմից և ... թուրքական կառավարության ակնհայտ անտարբերությունը բռնության հանդեպ լրջագույն բողոքի առիթ ստեղծեցին, որին հետևեցին փոխհատուցման և հարձակվողներին պատժելու խոստումներ: Շենքերին հասցված վնասի փոխհատուցումն արդեն վճարված է, վերակառուցելու թույլտվությունը տրված է, դպրոցի սեփականության գրանցումն ամերիկացի սեփականատիրոջ անունով ապահովված է, ինչպես նաև երաշխավորված է էֆեկտիվ անվտանգությունը»:[2]

4. ԱՄՆ-ում հպատակություն ստացած և Օսմանյան կայսրություն վերադարձած հայերի խնդիրը

1893 թ. օգոստոսի 20-ին Վաշինգտոնում Օսմանյան կայսրության ներկայացուցչության ղեկավար Մավրոյենի բեյը գրում էր պետքարտուղար Գրեշամին, որ «բոլորին հայտնի է, որ հայերի զգալի մասը, որոնք գաղթել են ԱՄՆ, մնում են այս երկրում շատ կարճ ժամանակ, դիմում և ստանում են ԱՄՆ-ի քաղաքացիություն, այնուհետև վերադառնում են Թուրքիա և մասնակցում կայսրության դեմ ուղղված ապստամբ գործողություններին»: Մավրոյենի բեյը նշում էր, որ, ելնելով Մոնրոյի վարդապետության սկզբունքներից, ԱՄՆ-ի կառավարությունը պետք է թույլ չտա, որ այդ «ագիտատորները» մուտք գործեն ԱՄՆ՝ իրենց նպատակներն իրականացնելու համար: Դեպքերի նման զարգացումը ստիպում էր Բարձր Դռանը, շարունակում էր դիվանագետը, դիմել հնարավոր բոլոր օրինական միջոցներին՝ իր պաշտպանությունն ապահովելու նպատակով, այսինքն՝ թույլ չտալ հայերին վերադառնալ Թուրքիա նույնիսկ այն պարագայում, եթե նրանք ունեն ամերիկյան անձնագրեր:[1]

Օգոստոսի 24-ի իր պատասխան նամակում պետքարտուղարը նշում էր, որ Մոնրոյի դոկտրինը վերաբերում էր միմիայն եվրոպական որոշ պետությունների բացասական ազդեցության տարածմանն Ամերիկյան Հանրապետությունից հարավ գտնվող պետությունների նկատմամբ և որևէ կերպ չէր առնչվում Օսմանյան կայսրության ներկայացուցչի նամակում արծարծված հարցի հետ: Իսկ ինչ վերաբերում էր ԱՄՆ-ի հպատակության օրենքին, շարունակում էր պետքարտուղարը, այն իրավունք էր ընձեռում յուրաքանչյուր օտարերկրացուն դիմել հպատակություն ստանալու համար, և եթե դիմողը համապատասխանում էր բոլոր անհրաժեշտ չափանիշներին, նրան տրամադրվում էր ամերիկյան քաղաքացիություն: Գրեշամը նաև նշում էր, որ չէր կարող համաձայնել այն գաղափարների հետ, որ ամերիկյան կառավարությունը հպատակություն էր տրամադրում որոշակի ազգության ներկայացուցիչներին, որոնք այնուհետև «ապստամբ գործունեություն էին ծավալում Թուրքիայում», ոչ էլ պատրաստվում էր զրկել օսմանյան հպատակների որոշակի դասին ԱՄՆ-ի քաղաքացիություն ստանալու հնարավորությունից:[2]

Օգոստոսի 28-ին Գրեշամին ուղղված նոր նամակում Մավրոյենի բեյն արդարանում էր, որ նկատի ուներ ամերիկյան վարդապետության այն սկզբունքները, որոնք վերաբերում են մեկը մյուսի գործերին չմիջամտելուն և յուրաքանչյուր պետության սուվերեն իրավունքները հարգելուն: Ինչ վերաբերում է հայերին, նա «նկատի ուներ ոչ թե ազգը, այլ այդ ազգի ներկայացուցիչներին, որոնք լքում են կայսրությունը, ապահովում իրենց օտարերկրյա անձեռնմխելիությամբ և վերադառնում՝ խռովարարությամբ զբաղվելու համար»: Մավրոյենի բեյը խորհուրդ էր տալիս ամերիկյան կառավարությանը թարգմանել և կարդալ այն հոդվածները, որոնք տպագրվում են Լոնդոնում, Մարսելում, Աթենքում և Նյու Յորքում տպագրվող հայկական ամսագրերում, ուր կայսրությունից գաղթած և ԱՄՆ-ի քաղաքացիներ դարձած հայերը գրում են իրենց ծրագրերի և ցանկությունների մասին: Ինչ կաներ ԱՄՆ-ի կառավարությունը, շարունակում էր Օսմանյան կայսրության ներկայացուցիչը, եթե Ամերիկայի հնդկացիների մի մեծ խումբ մեկներ երկրից, ստանար այլ երկրի քաղաքացիություն, մտածեր անկախ և ազատ պետություն ստեղծելու մասին և այնուհետև վերադառնար Միացյալ Նահանգ-

[1] Նույն տեղում, էջ 694-695:
[2] Նույն տեղում, էջ X:

[1] Նույն տեղում, էջ 709:
[2] Նույն տեղում, էջ 710:

ներ՝ այդ ծրագիրն իրագործելու նպատակով: Ըստ Մավրոյենի բեյի՝ ԱՄՆ-ի կառավարությունը կաներ նույնը, ինչն այսօր անում է Բարձր Դուռը:[1]

Ի լրումն պետքարտուղարին ուղղված իր նամակներին՝ հոկտեմբերի 26-ին Մավրոյենի բեյը ներկայացնում էր Նյու Յորքում ամիսը երկու անգամ լույս տեսնող «*Հայք*» թերթի անգլերենի թարգմանված երկու հոդված: Առաջին հոդվածում (1 հոկտեմբերի, 1893) նշվում էր, որ «անհնար է հեղափոխության նպատակով երիտասարդների մեջ դաստիարակել ռազմական ոգի զուտ խոսքերով կամ հոդվածներով, անհրաժեշտ է, որ արտասահմանում ապրող երիտասարդները ստանան ռազմական ուսուցում»: «...Եթե անհրաժեշտ է, մենք կզոհենք ազգի կեսը՝ մյուս կեսը փրկելու նպատակով, - գրում էր թերթը, - քանի որ փորձը ցույց է տալիս, որ հնարավոր չէ պետություն ստեղծել դիվանագիտական միջոցներով. անհրաժեշտ է զենք ու զինամթերք, զինվոր և ֆինանսական միջոց, պետք է ստեղծել կազմակերպչական կենտրոններ Ռուսաստանում և ԱՄՆ-ում...»: Մյուս հոդվածում (15 հոկտեմբերի, 1893) գրված էր, որ «ժողովուրդը միանգամից ոտքի չի կանգնում, նախ և առաջ հարկավոր է սկսել ապստամբական շարժում, որին կհետևեն բռնությունները, իսկ այնուհետև՝ մեծ տերությունների միջամտությունը, հարկավոր է պարտիզանական պայքար սկսել արևելյան Թուրքիայի սարերում» և այլն:[2]

Անդրադառնալով այդ հարցին՝ դեկտեմբերի 3-ի իր տարեկան ուղերձում նախագահ Քլիվլենդը նշում էր. «Թուրքիան դժգոհում է, որ իր հայ հպատակները քաղաքացիություն են ձեռք բերում այս երկրում ոչ թե հավատարմորեն և բարեխղճորեն իր ինքնությունը հաստատելու մեր ժողովրդի հետ, այլ իրենց ծննդավայրը վերադառնալու և այնտեղ խռովության մեջ ներգրավվելու մտադրությամբ: Այս դժգոհությունն ամբողջությամբ անհիմն չէ: Այս երկրում հայերեն հրատարակվող մի պարբերական բացահայտ կերպով կոչ է անում իր ընթերցողներին զինվել, կազմակերպել և մասնակցել ասիական նահանգներում թուրքական իշխանության տապալման շարժմանը: Օտտոմանյան կառավարությունը հայտարարել էր 1869 թ.-ից սկսած Միացյալ Նահանգների քաղաքացիություն ձեռք բերած հայերին իր տարածքից վտարելու մտադրության մասին:

Որոշ կամ բոլոր օտարերկրացիներին արտաքսելու իրավունքն ինքնիշխանության հատկանիշներից մեկն է: Այդ իրավունքը հաստատված է նաև և իրականացվում է Միացյալ Նահանգներում, թեև սահմանափակ կարգով և մեր գերագույն դատարանի վավերացմամբ: Միացյալ Նահանգների և Թուրքիայի միջև հպատակության մասին պայմանագիր կնքված չէ,

[1] Նույն տեղում, էջ 710-711:
[2] Նույն տեղում, էջ 712:

մեր նախարարը Կոստանդնուպոլսում հրահանգ է ստացել այն մասին, որ, ճանաչելով այդ կառավարության իրավունքն իրագործելու հայերի հպատակագրման դեմ իր հայտարարված քաղաքականությունը, նա ակնկալելու է նրանց պաշտպանությունը ոչ անհրաժեշտ խիստ վերաբերմունքից»:[1]

Պատասխանելով այդ մեղադրանքներին՝ «*Հայք*» թերթի խմբագիր, հասարակական գործիչ Սմբատ Գաբրիելյանը[2] դեկտեմբերի 12-ին ԱՄՆ-ի նախագահին ուղղված իր նամակում գրում էր, որ հայերի գործողությունները ուղղված են ոչ թե սուլթանական կառավարության դեմ, այլ նպատակ են հետապնդում բարելավել հայ բնակչության վիճակը, իրականացնել անհրաժեշտ բարենորոգումներ Հայաստանում: Խմբագիրը հերքում էր, որ իր թերթի էջերում երբևիցե հրապարակվել են ապստամբության կոչեր: Նրա համոզմամբ՝ հայ ժողովրդի իրավիճակը բարելավելու միակ ճանապարհը տերությունների համատեղ դիվանագիտական գործողություններն են: Նա խնդրում էր նախագահին միջոցներ ձեռնարկել Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածի իրագործման ուղղությամբ, քանի որ, հակառակ «հայերի ձգտումներին», Բարձր Դուռն օգտագործում է բոլոր հնարավոր միջոցները՝ խոստացված բարենորոգումները չիրագործելու նպատակով:[3]

1893 թ. սեպտեմբերի 29-ին Տերրելը գրում էր պետքարտուղար Գրեշամին, որ հպատակության վերաբերյալ երկկողմ պայմանագրի բացակայությունը բավականին դժվարեցնում էր իրավիճակը: Թուրքական կողմը, ըստ Տերրելի, համոզված էր, որ ԱՄՆ-ում հպատակություն ստացած հայերը կայսրություն են վերադառնում միմիայն իշխանությունների դեմ խռովություն կազմակերպելու նպատակով: Տերրելը նշում էր, որ գրեթե ամեն օր նա զբաղվում էր վերադարձած հայերին ձերբակալելու գործերով: Տերրելը գրում էր, որ իրապես այնպիսի տպավորություն է ստեղծվել, որ ԱՄՆ-ի հպատակություն ստանալուն պես հայերը վերադառնում են Թուրքիա՝ այստեղ մնալու նպատակով:[4]

1893 թ. նոյեմբերի 14-ին Տերրելը հանդիպում է արտաքին գործերի նախարար Սաիդ փաշայի հետ և կրկին բարձրացնում մինչև 1869 թ. Օսմանյան կայսրությունից ԱՄՆ գաղթած, քաղաքացիություն ստացած, ետ վերադարձած և բանտարկված հայերի խնդիրը: Տերրելն առաջարկում էր ինչ-որ

[1] Նույն տեղում, էջ X:
[2] **Սմբատ Գաբրիելյան** (1856-1919) – հայ բանասեր, բժիշկ, հասարակական գործիչ, 1891-1898 թթ. Նյու Յորքում հրատարակել է «*Հայք*» կիսամյա հանդեսը, հիմնական աշխատությունները՝ «Արվեստ ատենախոսության» (1891), «Խրիմյան Հայրիկ» (1892), «Քրիստոնյա Հայաստանը և քրիստոնյա տերությունք» (1897), «Ակնա գավառաբարբառը և արդի հայերեն լեզուն» (1912):
[3] «*Հայք*», 1893, 15 դեկտեմբերի, էջ 361-362:
[4] US Department of State. Papers Relating to the Foreign Relations of the United States, Transmitted to Congress, With the Annual Message of the President, December 3, 1893, Washington: Government Printing Office, 1894, pp. 683-684.

լուծում տալ այդ հարցին, քանի որ Բարձր Դուռը նրանց դիտարկում էր որպես կայսրության հպատակներ, իսկ ամերիկյան կառավարությունը՝ ԱՄՆ-ի քաղաքացիներ: Դիվանագետն առաջարկում էր կասկածելի պարագաներում օգտագործել վտարելու իրավունքը, այլ ոչ թե պահել այդ մարդկանց բանտերում: Նա առաջարկում էր նման որոշման մասին տեղեկացնել ներկայացուցչությանը կամ հյուպատոսություններին, տալ նրանց դիցուք տասը օր ժամկետ՝ երկրից հեռանալու համար, իսկ եթե նրանք չենթարկվեն, բանտարկել նրանց ոչ թե պատժի, այլ երկրից վտարելու նպատակով:

Ինչպես Սաիդ փաշան, այնպես էլ մեծ վեզիր Ջևադ փաշան մեծ ուրախությամբ և հետաքրքրությամբ ընդունեցին այդ առաջարկը՝ նշելով, որ այն ԱՄՆ-ի կառավարության հերթական բարեկամական վերաբերմունքի արտահայտությունն էր: Մեծ վեզիրը ասում էր Տերրելին, որ մի քանի «վատ անձնավորություններ» էին ստեղծել այս անհանգիստ իրավիճակը Փոքր Ասիայում: Մինչև վերջերս, նշում էր մեծ վեզիրը, հայերը թողնում էին իրենց ընտանիքներն իրենց մահմեդական հարևանների խնամքի տակ և մեկնում Կոստանդնուպոլիս՝ «համբալություն անելու», դրամ վաստակելու համար, սակայն ներկայումս ամեն ինչ փոխվել է: «Խռովությունը թշնամանք է առաջացրել ժողովուրդների միջև»,- նշում էր մեծ վեզիրը: Հանդիպումներից հետո Տերրելն անմիջապես գրավոր կերպով է ներկայացնում Բարձր Դռանն իր առաջարկը:[1]

Սակայն այդ հարցն այդպես էլ լուծում չի ստանում: Մեկ տարի անց՝ 1894 թ. դեկտեմբերի 3-ին, Կոնգրեսին ուղղված իր ուղերձում նախագահ Քլիվլենդը նշում էր. «Անցյալ տարվա իմ տարեկան ուղերձում ես վկայակոչեցի Թուրքիայի կողմից առաջ քաշված պահանջը՝ վտարել երկրից Միացյալ Նահանգներում քաղաքացիություն ստացած և թուրքական իրավասության ներքո վերադարձող հայերին՝ որպես ոչ ցանկալի և վտանգավոր անձանց: Այս կապակցությամբ բազմաթիվ հարցեր ծագեցին: Մինչդեռ մեր կառավարությունը լուռ համաձայնություն է տալիս ճանաչում ստացած արտաքսման իրավունքին, սակայն չի կարող թույլ տալ, որ հայերը ենթարկվեն բանտարկության կամ այլ պատիժ կրեն՝ առանց կայսերական թույլտվություն ստանալու ամերիկյան քաղաքացիություն ձեռք բերելու համար»:[2]

1893 թ. նոյեմբերի 15-ին Տերրելը գրում էր Գրեշամին, որ, համաձայն մի շարք ամերիկյան միսիոներներից ստացված տեղեկատվության, Կոստանդնուպոլսի թուրքական թերթերից մեկը հաղորդագրություն էր տպագրել այն մասին, որ Բարձր Դուռը նոր կարգ է պատրաստում, ըստ որի՝

[1] Նույն տեղում, էջ 704:

[2] US Department of State. Papers Relating to the Foreign Relations of the United States, Transmitted to Congress, With the Annual Message of the President, December 3, 1894, Washington: Government Printing Office, 1895, p. XV.

հողն օտար քաղաքացիներին սեփականատիրության անցնելու ընթացքում փաստաթղթերում պարտադիր պետք է ներկա լինի դրույթ, որի համաձայն՝ սեփականությունը չի կարող օգտագործվել որպես դպրոց կամ եկեղեցի: Միսիոներները գրում էին, որ վերջին երեք տարիների ընթացքում Մարզվանի, Զմյուռնիայի, Վանի և այլ քաղաքների ու շրջանների տեղական իշխանություններն ամեն կերպ խոչընդոտում են միսիոներներին սեփականություն գնելու կամ իրենց տները նորոգելու հարցերում՝ պայման դնելով, որ նրանք չեն օգտագործվելու որպես դպրոցներ կամ աղոթավայրեր:

Տերրելի և Սաիդ փաշայի միջև տեղի ունեցած զրույցի ժամանակ վերջինս չի ժխտել այդ նորությունը՝ նշելով, որ կարգը դեռևս գտնվում է նախարարների խորհրդի քննարկման փուլում: Նշելով, որ նման կարգի ընդունումը խախտում է նախկինում օտարերկրյա քաղաքացիներին և մասնավորապես ամերիկյան միսիոներներին տրված իրավունքները, Տերրելն առաջարկում էր քննարկել մեծ տերությունների դեսպանների հետ այս որոշումը բողոքարկելու հարցը:[1]

1893 թ. դեկտեմբերի 26-ին «Ամերիկյան խորհուրդի» արտաքին հարցերի քարտուղար Ջաղսոն Սմիթը տեղեկացնում էր ԱՄՆ-ի պետքարտուղար Գրեշամին Խարբերդում աշխատող և բնակվող հնագույն և պատվավոր ամերիկյան միսիոներ, պատվելի Հ. Ն. Բարնըմի նամակի մասին, որում ներկայացված փաստերը «շատ անհանգստացնող են և կարևոր»: Սմիթը գրում էր պետքարտուղարին, որ Խարբերդում էր գտնվում այդ շրջանի ամենից կարևոր հաստատությունը՝ Վանա լճի, Միջագետքի, Սև ծովյան շրջանները սպասարկող Եփրատի քոլեջը, որն ուներ բաժանմունքներ տղաների և աղջիկների համար, աստվածաբանական սեմինարիա, ուր ուսում և փորձառություն էին ստանում տեղացի հոգևորականները: Ըստ Սմիթի՝ Եփրատի քոլեջն Օսմանյան կայսրությունում գործող ամերիկյան միսիոներների կարևորագույն հաստատություններից մեկն էր, ուր կրթություն էին ստանում 550 աշակերտ: Միսիոներ Բարնըմի նամակում բերված փաստերը հաստատում էին այն հանգամանքը, որ թուրքական կառավարությունը նպատակադրվել էր հսկողության տակ առնել կամ ընդհանրապես քայքայել քրիստոնյա միսիոներների կողմից երկրում տարվող բարեգործական աշխատանքը: Բողոքական մատուռների փակումը, միսիոներների ազատ ճամփորդությունների և գրականության տարածման արգելումը, նշվում էր Սմիթի նամակում, մեծ վնաս կարող էին հասցնել ոչ միայն թուրք-ամերիկյան հարաբերություններին, այլև կայսրության զարգացմանը, ինչպես նաև բնակիչների խաղաղությանն ու բարեկեցությանը:

[1] Նույն տեղում, էջ 702-705:

Ըստ Սմիթի՝ թուրքական իշխանությունների կասկածանքները միսիոներների գործունեության վերաբերյալ որևէ հիմք չունեն և դրանք անհրաժեշտ էր փարատել: Այդ իմաստով նա մեծ հույսեր էր կապում ԱՄՆ-ի իշխանությունների, մասնավորապես Կոստանդնուպոլսում ներկայացուցչության էլ ավելի ակտիվ աշխատանքի հետ: Բարնըմի նամակում նշվում էր նաև, որ միսիոներները չեզոք և զգույշ մարդիկ են և որևէ առնչություն ունենալ չեն կարող մի խումբ հայերի «խենթ հեղափոխական դավերի» հետ, որոնք, չնայած հայ բնակչության զգալի մեծամասնության դիմադրությանը, փորձում էին կազմակերպել ապստամբություն:[1]

Հետաքրքիր է, որ 1894 թ. հունվարի 18-ին այս առիթով Գրեշամին ուղղված իր պատասխան նամակում Տերրելը գրում էր, որ միսիոներների կողմից բարձրացված հարցերն իր համար նորություն չեն, իսկ եզրակացությունները որոշ չափով չափազանցված են: Ըստ Տերրելի՝ իրականում բողոքական մատուռների զգալի մասը գործելու իրավունք չունի, քանի որ միսիոներները համբերություն չունեն սպասելու մինչև իշխանությունները պաշտոնապես, օրենքի համաձայն, կվավերացնեն նրանց աշխատելու իրավունքը: Մյուս խնդիրն այն էր, շարունակում էր Տերրելը, որ նույն այդ մատուռներում միսիոներները դպրոցներ էին հիմնում, ինչը նույնպես չէր համապատասխանում գործող օրենսդրությանը: Ինչ վերաբերում էր գրականության արգելմանը, գրում էր ամերիկացի դիվանագետը, այն գոյություն ուներ բոլոր «դեսպոտիկ» երկրներում, և այդ հարցով Մեծ Բրիտանիայի դեսպանն ավելի զայրացած և սարսափած էր, քան միսիոներ Բարնըմը, որը հիշատակում էր միայն այն փաստը, որ երկրում արգելված էին Ջոն Միլթոնի և Ուիլյամ Շեքսպիրի գրքերը:

Բարնըմի նամակում փաստ էր բերվում, որ կայսրությունում 300 ամերիկացի ուսուցիչներ ապահովում էին 40 հազար երեխաների ուսուցումը, որը, ըստ Տերրելի, նույնպես իրականությանը չէր համապատասխանում, քանի որ այդ ուսուցիչների զգալի մասը կայսրության հպատակներ էին, որոնք իրոք դասավանդում էին քրիստոնյա միսիոներների հսկողության ներքո: Ըստ Տերրելի՝ ԱՄՆ-ի ներկայացուցչությունն իրավունք չուներ միջամտելու այն պարագաներում, երբ իշխանությունները խնդիրներ էին ունենում այդ ուսուցիչների հետ, քանի որ նրանք այս երկրի հպատակներն էին և չեն կարող պաշտպանված լինել որպես օտարերկրյա քաղաքացիներ: Նամակի վերջում Տերրելը նշում էր, որ հնարավոր չէր չհիանալ միսիոներների նվիրվածությամբ իրենց գործի նկատմամբ, որի հետևանքով նրանք իրենց աշխատանքում շատ ավելի առաջ էին անցնում, քան իշխանությունների կողմից թույլտվություն ստանալու դանդաղ ընթացքը, սակայն օսմանյան

[1] Նույն տեղում, էջ 706-708:

կառավարությանը պետք է հնարավորություն տալ կատարելու իր սուվերեն իրավունքը՝ կանոնակարգելու իր ներքին քաղաքականությունը:[1]

1894 թ. փետրվարի 9-ի Տերրելին ուղղված նամակում պետքարտուղար Գրեշամն անդրադառնում էր ԱՄՆ-ի քաղաքացիություն ստացած Օսմանյան կայսրության նախկին հպատակների խնդրին, որոնք վերադառնում էին Թուրքիա և իշխանությունների կողմից նրանց հանդեպ ցուցաբերվող վերաբերմունքին: Մասնավորապես նա անդրադառնում էր Կարապետ Գևորգյանի հարցին, որը հանդիսանում էր ԱՄՆ-ի Ցինցինատի քաղաքի «Արտասահմանյան միսիոներական ընկերության» ներկայացուցիչը Մարզվանում: Տերրելը ժամանակին գրել էր պետքարտուղարությանը, որ վերջինս հայտարարել էր ԱՄՆ-ի քաղաքացի դառնալու մասին 1869 թ., այսինքն՝ օսմանյան համապատասխան օրենքի կիրառման օրվանից առաջ, սակայն չէր ստացել սուլթանի թույլտվությունը: Գրեշամը հանձնարարում էր Տերրելին հայտնել այս դեպքի բոլոր մանրամասները: Մյուս դեպքը, որի մասին խոսվում էր նամակում, Սերովփե Գյուրջյանի հարցն էր: Պետքարտուղարը նշում էր, որ Գյուրջյանը ձերբակալվել էր առանց ԱՄՆ-ի իշխանություններին տեղյակ պահելու և առանց հյուպատոսական ներկայացուցչի մասնակցության:

Ինչ վերաբերում է այն հայերի դեպքերին, որոնք մեղադրվում էին հրահրիչ գործողությունների մեջ, գրում էր Գրեշամը, ԱՄՆ-ի իշխանությունները հաստատում էին իրենց այն դիրքորոշումը, որ այդ մարդկանց կողմից ԱՄՆ-ի քաղաքացի հանդիսանալու հանգամանքը չի կարող արգելք հանդիսանալ կայսրությունից նրանց վտարելու համար:[2]

1894 թ. մարտի 29-ին Գրեշամը գրում էր Տերրելին, որ ինչպես նախագահը նշել էր 1893 թ. դեկտեմբերին իր տարեկան ուղերձում, օտարերկրացիների արտաքսման հարցը սուվերենության հատկանիշներից մեկն էր, որը ԱՄՆ-ում տեղի էր ունենում գերագույն դատարանի որոշմամբ: Թեև նախագահը, շարունակում էր պետքարտուղարը, իր ելույթում ճանաչել էր թուրքական կառավարության իրավունքը հպատակություն ստացած հայերի նկատմամբ կիրառելու այդ քաղաքականությունը, նա ոչինչ չէր ասել այն մասին, որ վտարման ենթարկված հայերը՝ որպես ամերիկյան հպատակություն ստացած քաղաքացիներ, կարող էին պահանջել ԱՄՆ-ի կառավարության պաշտպանությունն ու հովանավորությունը: Ըստ Գրեշամի՝ թուրքական կառավարությունը չէր հասկացել ԱՄՆ-ի զիջումն այս հարցում և մասնավորապես այն հանգամանքը, որ ամերիկյան կառավարությունը

[1] Նույն տեղում, էջ 708-709:
[2] Նույն տեղում, էջ 753:

նման քայլով կասկածի տակ երբևիցե չէր առնում այդ անձանց ԱՄՆ-ի քաղաքացի հանդիսանալու հանգամանքը:

Գրեշամը շարունակում էր, որ Բարձր Դուռը ամենայն խստությամբ էր վերաբերվում ԱՄՆ-ի քաղաքացիներին՝ համարելով նրանց օսմանցի քաղաքացիներ: Ահավասիկ, չնայած ԱՄՆ-ի ներկայացուցչության ջանքերին, ներկայումս նման անհատներ ձերբակալվել և բանտեր էին նետվել օսմանյան կառավարության կողմից անորոշ մեղադրանքներով և ժամկետով: Որևէ արդյունք չէր տալիս նաև պետքարտուղարության աշխատանքը Վաշինգտոնում օսմանյան ներկայացուցչության հետ:

Ըստ Գրեշամի՝ բոլոր օսմանցի հպատակները, որոնք կամավոր կերպով մեկնել էին Օսմանյան կայսրությունից և հպատակություն ստացել ԱՄՆ-ում, ստանալով քաղաքացիության բոլոր իրավունքները, ենթակա էին ԱՄՆ-ի կառավարության պաշտպանությանը Թուրքիայում՝ չնայած Բարձր Դռան առարկություններին: Ճանաչելով Բարձր Դռան իրավունքն արտաքսելու բոլոր անցանկալի օտարերկրյա քաղաքացիներին՝ ԱՄՆ-ի կառավարությունը չէր կարող ընդունել այն հանգամանքը, որ իր քաղաքացիները ձերբակալվում և բանտարկվում էին Օսմանյան կայսրության տարածքում՝ որպես Օսմանյան կայսրության նախկին հպատակներ, որոնք ստացել էին ԱՄՆ-ի քաղաքացիություն՝ առանց սուլթանի թույլտվության: Գրեշամը հանձնարարում էր Տերրելին ԱՄՆ-ի դիրքորոշման մասին տեղյակ պահել Բարձր Դռանը:[1]

1894 թ. մարտի 30-ին Տերրելը պատասխանում էր հյուպատոս Ջուեթի հարցմանը՝ տեղական իշխանությունների կողմից բողոքական եկեղեցիների համընդհանուր փակման, ամերիկյան դպրոցների խուզարկման, միսիոներներին երկրում շրջագայելու արգելման, անձնական օգտագործման գրքեր պատվիրելու և օգտագործելու իրավունքի վերաբերյալ: Ինչ վերաբերում էր եկեղեցիների փակման խնդրին, Տերրելը նշում էր, որ ներկայացուցչությունն իր հնարավորությունների սահմաններում ամեն ինչ անում էր այդ ուղղությամբ: Շրջագայությունների համար Տերրելը գրում էր, որ ամերիկյան միսիոներներն անկասկած իրավունք ունեն այդ բանն անելու Օսմանյան կայսրության ողջ տարածքում, սակայն խորհուրդ էր տալիս հանդես բերել զգուշություն, քանի որ թուրք իշխանությունները, ելնելով Փոքր Ասիայում «ապստամբական շարժման» հանդեպ իրենց կասկածամտությունից, կասկածանքով էին վերաբերվում ուսուցիչներին և միսիոներներին: Տերրելի կարծիքով՝ այդ վերաբերմունքը հետզհետե անցնելու էր, և այդ իսկ պատճառով պետք էր հանդես բերել համապատասխան զգույշ և համբերատար պահվածք: Իսկ ինչ վերաբերում էր դպրոցների խուզարկմանն ու

[1] Նույն տեղում, էջ 755-756:

գրքերի օգտագործմանը, նշում էր Տերրելը, իշխանությունները, համաձայն գործող օրենքների, իրավունք չունեին հանդես բերելու նման պահվածք:[1]

1894 թ. մայիսին ԱՄՆ-ում բնակվող մի խումբ հայեր նախագահ Քլիվլենդին ուղղված իրենց նամակում գրում էին, որ երկրում բնակվում էին շուրջ տասը հազար հայեր, որոնք բոլորն էլ ունեին հպատակություն և հիմնականում զբաղվում էին արդյունաբերությամբ կամ առևտրով: Սակայն երբ նրանք ցանկանում են այցելել իրենց ծննդավայրը, բացառապես խաղաղ նպատակներով, ժամանելուն պես նրանց մերժում էին մուտք գործել երկիր կամ չնայած նրանք ունեին ամերիկյան անձնագրեր, ձերբակալվում և բանտարկվում էին: Զարմանալի է, նշվում էր նամակում, որ այլ երկրների քաղաքացիներ համարվող հայերը հանգիստ կերպով մուտք էին գործում երկիր, որը նվաստացուցիչ էր ԱՄՆ-ի կառավարության համար և հանդիսանում էր միջազգային նորմերի խախտում: Նամակի հեղինակները խնդրում էին նախագահին բողոքարկել նման վերաբերմունքի համար և ստորագրել օսմանյան կառավարության հետ փոխադարձ իրավունքների ու արտոնությունների մասին պայմանագիր, որը հնարավորություն կտար հայ ծագում ունեցող ամերիկացի քաղաքացիներին վերադառնալ Թուրքիա՝ ազգականներին այցելելու, առևտրով կամ միսիոներական աշխատանքով զբաղվելու նպատակներով:[2]

Այս նամակի կապակցությամբ Մավրոյենի բեյը մայիսի 8-ին պատասխանում էր Գրեշամին, որ նամակում բերված փաստերն իրականությանը չեն համապատասխանում: Մասնավորապես նա նշում էր, որ այս հարցում օսմանյան կառավարությունը կիրառում էր միմիայն գործող օսմանյան օրենքները, որոնց համաձայն՝ այլ երկրներում առանց համապատասխան թույլտվության հպատակություն ստացած օսմանյան հպատակներն իրավունք չունեն վերադառնալու Օսմանյան կայսրություն: Ինչ վերաբերում էր արտաքսմանը, այն տեղի էր ունենում միայն այն դեպքերում, երբ այդ անձը մասնակցել էր հեղափոխական շարժմանը կամ զբաղվել Բարձր Դռան դեմ ուղղված վնասակար գործունեությամբ:[3]

1894 թ. մայիսի 24-ին Մավրոյենի բեյը կրկին գրում էր պետքարտուղար Գրեշամին, որ Օսմանյան կայսրության որոշ ենթականեր, դուրս գալով կայսրության սահմաններից, հակակայսերական և հակաթուրքական քարոզչություն էին վարում տարբեր երկրներում, տպագրում հոդվածներ և հրատարակում թերթեր: Բարձր Դուռն այս կապակցությամբ դիմում էր ԱՄՆ-ի կառավարությանը խնդրանքով, որ վերջինս այդպիսի դեպքերի պա-

[1] Նույն տեղում, էջ 712:
[2] Նույն տեղում, էջ 758-759:
[3] Նույն տեղում, էջ 758:

ռագայում հանձնի նման մարդկանց Բարձր Դռանը:[1] Մայիսի 26-ին պետքարտուղարի պաշտոնակատարը պատասխանում էր, որ ԱՄՆ-ի նախագահն ու գործադիր մարմիններն ընդհանրապես օժտված չեն նման իշխանությամբ, ուստի, առանց իրավաբանական հաստատման, հնարավորություն չունեն օտարերկրյա պետությանը հանձնելու որևէ մեկին, որն օրինական կերպով բնակություն է հաստատել իրենց երկրում:[2]

Դեռևս 1894 թ. հունվարի 6-ին Գրեշամը գրում էր Տերրելին Ադամ Այվազյանի դեպքի մասին, որը ստացել էր ԱՄՆ-ի հպատակություն և ներկայումս գտնվում էր Յոզգատի բանտում՝ թուրքական կառավարության դեմ դավադրություն կազմակերպելու մեղադրանքով: Նա ապրել էր ԱՄՆ-ում տասը տարի, որից հետո 1891-1892 թթ. գործով վերադարձել Թուրքիա՝ ԱՄՆ վերադառնալու մտադրությամբ:[3] Հունվարի 27-ի իր պատասխան նամակում Տերրելը գրում էր, որ Ադամ Այվազյանը մեղադրվում էր «հայ հեղափոխականների» փախուստի կազմակերպման մեջ և երբևիցե պաշտպանություն չի պահանջել որպես ԱՄՆ-ի քաղաքացի:[4] Գրեշամին ուղղված մայիսի 19-ի նամակում ժամանակավոր հավատարմատար Ջ. Ռիդդլը գրում էր, որ հանդիպել էր Այվազյանին, որը դատապարտվել էր տասը տարվա բանտարկության: Իր խոսքերով՝ նա վերադարձել էր Թուրքիա՝ ամուսնանալու նպատակով, մնացել էր երկրում կնոջ խնդրանքով, գնել էր բնակելի տուն Յոզգատի մոտակայքում, զբաղվում էր ցորենի և անասունների առևտրով, սակայն ցանկանում էր հետագայում վերադառնալ Կալիֆոռնիա:[5]

Այվազյանի հարցի կապակցությամբ հավատարմատարը հանդիպել էր մեծ վեզիրի հետ, որը հաստատել էր, որ իբր Այվազյանն օգնել էր երկրից փախչել մի մարդասպանի և դատապարտվել էր տասը տարվա բանտարկության: Միաժամանակ մեծ վեզիրը տեղեկացնում էր, որ Այվազյանը հեղափոխական գործունեությամբ չէր զբաղվել: Հավատարմատարը պատասխանել էր, որ ներկայացնելու էր այս փաստերն իր կառավարությանը և հավանաբար հանձնարարություն էր ստանալու պաշտպանության տակ առնելու իր քաղաքացուն:[6]

Օգոստոսի 15-ին Գրեշամին ուղղված նամակում Մավրոյենի բեյը նշում էր, որ Այվազյանն ապրել էր ԱՄՆ-ում 8 տարի, վերադարձել էր Օսմանյան կայսրություն՝ թաքցնելով իր ԱՄՆ հպատակությունը, կանոնավոր կերպով վճարել էր բոլոր հարկերը, ուստի չէր կարող չհամարվել օսմանյան

[1] Նույն տեղում, էջ 729:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում, էջ 765:
[4] Նույն տեղում, էջ 765-766:
[5] Նույն տեղում, էջ 777:
[6] Նույն տեղում, էջ 778:

հպատակ:[1] Սեպտեմբերի 8-ին Տերրելը տեղեկացնում էր Գրեշամին, որ ԱՄՆ-ի ներկայացուցչության այդ ուղղությամբ տարված գործունեության արդյունքում օսմանյան իշխանությունները ներում են շնորհել Այվազյանին:[2]

[1] Նույն տեղում, էջ 779:
[2] Նույն տեղում, էջ 780:

ԳԼՈՒԽ IV

ԱՄՆ-Ի ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 1894-1896 ԹԹ. ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ

1. 1894 թ. Սասունի հայ բնակչության կոտորածն ու ամերիկյան դիվանագիտությունը

Թեև 19-րդ դարի 90-ական թթ. կեսերին ԱՄՆ-ի քաղաքականությունը Մերձավոր Արևելքում շարունակում էր սահմանափակված մնալ Մոնրոյի վարդապետության սկզբունքներով, ամերիկյան դիվանագիտությունը, որի գլխավոր նպատակն էր առևտրական շահերի, ԱՄՆ-ի քաղաքացիների, մասնավորապես միսիոներների անվտանգության պաշտպանությունը, անուղղակի կերպով ներգրավվեց Հայկական հարցում, դարձավ 1894-1896 թթ. հայկական կոտորածների ականատեսը: Ամերիկյան դիվանագետների և միսիոներների զեկուցագրերը կարևորագույն սկզբնաղբյուր են օսմանյան իշխանությունների կողմից կոտորածների կազմակերպման և իրականացման ուսումնասիրության հարցում:

Քանի որ ԱՄՆ-ն Օսմանյան կայսրությունում եվրոպական տերությունների նման զարգացած դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունների ցանց չուներ, շատ դեպքերում ամերիկյան կառավարությունը տեղեկատվություն էր ստանում անմիջապես միսիոներներից կամ եվրոպական ու ամերիկյան մամուլում տպագրված լուրերից: Մերձավորարևելյան հերթական ճգնաժամի սկիզբը հանդիսացող 1894 թ. Սասունի հայ բնակչության կոտորածի[1] մասին մամուլում տարածված լուրերը մեծ աղմուկ ստեղծեցին ամերիկյան հասարակայնության շրջանում:

1894 թ. նոյեմբերի 25-ին պետքարտուղար Գրեշամը գրում էր Տերրելին, որ, համաձայն մամուլից ստացված լուրերի, Սասունի շրջանում ընդհարում էր տեղի ունեցել հայերի և քրդերի միջև, որին միջամտել էր թուրքական

[1] Տե՛ս, Կիրակոսյան Արման, Սասունի 1893-1894 թթ. ինքնապաշտպանական մարտերը և հայերի զանգվածային կոտորածների սկիզբը // Հայոց պատմություն, հ. 3, Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես – 1918 թ.), Գիրք առաջին (XVII դարի երկրորդ կես – XIX դարի վերջ), Երևան: ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2010, էջ 515-521:

բանակը, և արդյունքում կան զգալի զոհեր: Պետքարտուղարը նշում էր, որ այդ մասին իրենց ձեռքի տակ կա միայն ԱՄՆ-ում Օսմանյան կայսրության դիվանագիտական ներկայացուցիչ Մավրոյենի բեյի կողմից արտաքին գործերի նախարար Սաիդ փաշայից ստացված հեռագիրը: Հեռագրում նշվում էր, որ հայկական հրոսակախմբերը, որոնք զինված են եղել արտասահմանից ստացված զենքով, միանալով քուրդ ապստամբներին, հարձակվել են Սասունի մոտակայքում գտնվող մահմեդական մեկ գյուղի վրա, հրդեհել և թալանել են այն, կենդանի այրել մեկ մահմեդականի: Ըստ Սաիդ փաշայի՝ կառավարության կողմից ուղարկված զորքը շրջանում կարգ ու կանոն էր հաստատել, պաշտպանել կանանց և երեխաների անվտանգությունը: Սաիդ փաշան հերքում էր *«Daily News»*-ում տպագրված բոլոր մանրամասները կատարվածի մասին: Պետքարտուղարը շարունակում էր, որ թեև իրադարձությունները տեղի էին ունեցել սեպտեմբերին, սակայն ո՛չ Տերրելը, ո՛չ էլ Ջուեքը Սրվազից որևէ տեղեկատվություն այդ մասին չեն հաղորդել Վաշինգտոն: Գրեշամը հանձնարարում էր պարզել և տեղեկատվություն տրամադրել պետքարտուղարությանը կատարվածի մասին:[1]

1894 թ. դեկտեմբերի 3-ին Սենատը դիմեց նախագահ Գրովեր Քլիվլենդին հարցապնդումով՝ տեղեկություններ տրամադրել Թուրքիայում հայերի նկատմամբ դաժանությունների իրագործման պնդումների մասին, մասնավորապես, եթե այդ դաժանությունները տեղի են ունեցել ամերիկյան քաղաքացիություն ստանալու մտադրություն ունեցող անձանց հանդեպ կամ էլ քրիստոնյա լինելու համար: Նախագահից պահանջում էին նաև տեղեկատվություն տրամադրել Սենատին այն մասին, թե արդյո՞ք կառավարությունը պահանջել է բացատրություններ օսմանյան իշխանություններից այս հարցերի պարզաբանման շուրջ կամ մտադիր է արդյո՞ք գործել այս հարցում մյուս քրիստոնյա տերությունների հետ:

Հիմք ընդունելով պետքարտուղար Գրեշամի զեկուցագիրը՝ դեկտեմբերի 11-ին նախագահ Քլիվլենդը պատասխանում էր, որ կառավարությունը որևէ տեղեկություններ չունի հայերի կամ քրիստոնյաների նկատմամբ Թուրքիայում տեղի ունեցած դաժանությունների վերաբերյալ՝ բացառությամբ այդ մասին մամուլում տարածված լուրերի, ինչպես նաև այդ լուրերը հերքող օսմանյան կառավարության հայտարարություններից և Կոստանդնուպոլսում ԱՄՆ-ի դիվանագիտական ներկայացուցչից ստացված երկու զեկուցագրերի: Ըստ նախագահի՝ նոյեմբերի 28-ի իր հեռագրում Տերրելը գրում էր, որ «ամերիկյան թերթերում հայտնված տեղեկությունները Սասունում տեղի ունեցած թուրքական ջարդերի մասին սենսացիոն բնույթ են

[1] US Department of State. Papers Relating to the Foreign Relations of the United States, Transmitted to Congress, With the Annual Message of the President, December 3, 1894, Washington: Government Printing Office, 1895, p. 718.

կրում և չափազանցված են: Կան զոհեր զինված հայերի և թուրք զինվորների բախման արդյունքում: Մեծ վեզիրը ասում է, որ անհրաժեշտ էր ճնշել խռովությունը, քանի որ սպանվել էր շուրջ հիսուն զինվոր: Նա պնդում է, որ 300-400 հրացաններ են առգրավվել հայերից մարտից հետո, ինչպես նաև սպանվել են նույն թվով հայեր»: Քլիվլենդը շարունակում էր, որ դեկտեմբերի 2-ի իր հաղորդագրության մեջ Տերրելն արդեն գրում էր, որ, Մեծ Բրիտանիայի դեսպանի տեղեկատվության համաձայն, ջարդի հետևանքով Հայաստանում արձանագրվել էր կյանքի շատ ավելի մեծ կորուստ: Ինչ վերաբերում էր ԱՄՆ-ի քաղաքացիություն ստանալու մտադրություն ունեցող և ամերիկյան կառավարության պաշտպանության տակ գտնվող մարդկանց նկատմամբ տեղի ունեցած դաժանություններին, նախագահը նշում էր, որ նման տեղեկատվություն չունի: Եվ քանի որ որևէ որոշակի փաստեր ԱՄՆ-ի կառավարության տրամադրության տակ չկան, թուրքական կառավարությունից դեռևս բացատրություններ չեն պահանջվել:

Այնուհետև նախագահը նշում էր, որ նոյեմբերի 30-ին Բարձր Դուռն առաջարկել էր, որ ԱՄՆ-ի հյուպատոսը մասնակցի Սասունի դեպքերը հետաքննող թուրքական հանձնաժողովի աշխատանքներին: Սակայն քանի որ այդ ժամանակ որոշակի տեղեկատվություն չկար դեպքերի մասին, իսկ Տերրելի առաջին հաղորդագրության համաձայն՝ լուրերը ջարդի մասին «սենսացիոն բնույթ են կրում և չափազանցված են», որոշվել էր չմասնակցել հետաքննության աշխատանքներին: Բացի դրանից՝ ԱՄՆ-ի կառավարությունը չէր ստորագրել Բեռլինի պայմանագիրը, համաձայն որի՝ Թուրքիան պարտավորվել էր ապահովել հայերի անվտանգությունը եվրոպական տերությունների հսկողության ներքո: Եվ քանի որ որևէ եվրոպական տերությունից հրավեր չէր ստացվել այդ հետաքննությանը մասնակցելու, շարունակում էր նախագահը, ԱՄՆ-ի մասնակցությունը կարող էր ընկալվել որպես միջամտություն տերությունների և Թուրքիայի միջև տեղի ունեցած պայմանավորվածություններին: Այդ իսկ պատճառով դեկտեմբերի 2-ին թուրքական առաջարկը մերժվեց ԱՄՆ-ի կողմից: Սակայն այնուհետև ստացվեց Տերրելի երկրորդ հեռագիրը, ինչպես նաև նման խնդրանքով ամերիկյան կառավարությանը դիմեց նաև Մեծ Բրիտանիան: Քլիվլենդը շարունակում էր, որ որոշում կայացվեց Սըվազում ԱՄՆ-ի հյուպատոս Ջուեթին ուղարկել դեպքի վայր, սակայն ոչ թե մյուս տերությունների ներկայացուցիչների հետ միասին հետաքննելու պատահածը, այլ իրական տեղեկատվություն հաղորդելու ամերիկյան կառավարությանը:[1]

Դեկտեմբերի 5-ին Գրեշամը տեղեկացնում էր Տերրելին, որ Թուրքիայի ներկայացուցիչը Վաշինգտոնում կրկնել էր սուլթանի առաջարկը, որպեսզի

[1] Նույն տեղում, էջ 714-717, 719:

ԱՄՆ-ի ներկայացուցիչը մասնակցի թուրքական հանձնաժողովի աշխատանքներին: Բրիտանական կառավարությունը նույնպես իր ցանկությունն էր հայտնել, որ ԱՄՆ-ի ներկայացուցիչը մասնակցի և իր առանձին զեկույցը ներկայացնի կատարվածի կապակցությամբ: Պետքարտուղարը պատասխանում էր, որ նախագահը որոշել է թուրքական հանձնաժողովի հետ միասին Սասուն ուղարկել հյուպատոս Ջուեթին: Նրան հանձնարարվել էր չստորագրել հանձնաժողովի կողմից պատրաստված որևէ փաստաթուղթ, անցկացնել հնարավորինս անկախ քննություն և զեկուցել արդյունքների մասին:[1]

Դեկտեմբերի 8-ին Մավրոյենի բեյը զայրույթով լի մի նամակ էր գրել ԱՄՆ-ի պետքարտուղար Գրեշամին, ուր նշում էր. «Միացյալ Նահանգներում բնակվող հայերի բանսարկությունները, նրանց լկտի զրպարտությունները, ինչպես նաև նրանց հրապարակային ջանքերը կայսերական կառավարությունը ստորացնելու ուղղությամբ, ...պետք է ...ինքնին վկայեն այն մասին, թե իրականում ինչ տեսակի մարդկանցից է կազմված Միացյալ Նահանգների հայկական համայնքը, մարդիկ, որոնք գրեթե բոլորն ամերիկյան քաղաքացիություն են ստանում, որպեսզի վերադառնան Թուրքիա, և ինչպես այդ մասին վկայում է անձամբ պարոն Տերրելը, օգտագործեն այն՝ իրենց հեղափոխական տեսությունները քարոզելու համար, որի մասին հաստատում են ոչ միայն իրենց անհիմն հայտարարությունները, այլև Միացյալ Նահանգների ողջ մամուլում հրապարակվող փաստաթղթերն ու փաստերը: Այդ իսկ պատճառով էլ կայսերական կառավարությունը ստիպված է եղել որդեգրել օրինավոր ինքնապաշտպանության ուղեգիծ, և, ինչպես բոլոր օրինավոր կառավարությունները, երբեք թույլ չի տալու, որ ապստամբություն կազմակերպվի և քարոզչություն կատարվի իր տարածքներից որևէ մեկում»:

Մավրոյենի բեյը հույս էր հայտնում, որ ԱՄՆ-ի կառավարությունը, որը հայտնի էր իր «անկողմնակալությամբ», անմիջապես նկատի կառնի այդ հանգամանքը: Օսմանյան կայսրության ներկայացուցիչը նշում էր նաև, որ ԱՄՆ-ի հայերը քաջալերվում են որոշ դյուրահավատ մարդկանց կողմից, որոնք, ղեկավարվելով կրոնական անհանդուրժողականության զգացումով, հավատացած են, որ հայերը պետք է ապստամբեն ոչ միայն «երևակայական հալածանքի» պատճառով, այլ միմիայն այն բանի համար, որ քրիստոնյա են:[2]

Ըստ թուրքական տեսակետի ժամանակակից պաշտպան, պատմաբան Ջերեմի Սոլթի՝ իրականում հայերն իրենք էին կազմակերպել մահմե-

[1] Նույն տեղում, էջ 719-720:
[2] Նույն տեղում, էջ 720:

դական գյուղերի բնակչության կոտորածը մինչև զորքի ժամանումը և իբր դրա մասին են վկայում օսմանյան և այլ աղբյուրներ: Հեղինակը մեջբերում էր Աբդուլ Համիդի խոսքերը Տերրելի հետ ունեցած զրույցի ժամանակ, երբ որ նա Սասունի դեպքերի ողջ մեղքը բարդում էր հայ հեղափոխական Մուրադի[1] վրա, որը Գում Գափուի «անկարգությունների» ղեկավարներից էր: Ըստ սուլթանի՝ նա փախել էր Աբենք, տեղափոխվել Ժենև, որտեղից էլ եկել էր Սասուն և կազմակերպել հայ բնակչության ապստամբությունն ու դիմադրությունը:[2]

Դեկտեմբերի 10-ին Տերրելը գրում էր Գրեշամին, որ Բարձր Դռան առաջարկի մերժումը բարդություններ էր առաջացրել և Դուռն իր հերթին մերժել էր ԱՄՆ-ի կողմից առաջարկած տարբերակը՝ հյուպատոս Ջուեթին թուրքական հանձնաժողովին զուգահեռ Սասուն ուղարկելու մասին:[3] Դեկտեմբերի 15-ի պատասխան նամակում Գրեշամը հանձնարարում էր Տերրելին հաղորդել սուլթանին, որ նախագահի առաջարկության մերժումը վրդովմունքի ալիք է բարձրացնելու ԱՄՆ-ում: Նա ակնկալում էր, որ Ջուեթը կատարելու էր իր հանձնարարությունը, և սուլթանական կառավարությունն ապահովելու էր նրա առաքելության անվտանգությունը:[4]

Դեկտեմբերի 23-ին Տերրելը զեկուցում էր Գրեշամին սուլթանի հետ երեք ժամ տևած հանդիպման մասին: Զրույցի ընթացքում Տերրելը հայտնել էր նրան ԱՄՆ-ի նախագահի առաջարկի, ինչպես նաև հասարակության շրջանում տիրող հուզմունքի մասին: Սուլթանը պատասխանել էր, որ նա դիմել էր չեզոք և բարեկամ ԱՄՆ-ի կառավարությանը և մերժում էր ստացել թուրքական հանձնաժողովի կազմում ամերիկյան ներկայացուցչի մասնակցության առաջարկի վերաբերյալ: Այդ բանից հետո սուլթանը նույն խնդրանքով դիմել էր Ռուսաստանին, Ֆրանսիային և Մեծ Բրիտանիային, որ նրանք Էրզրումում իրենց հյուպատոսներին նշանակեն հանձնաժողովի կազմում: Այդ պետությունները համաձայնվեցին ընդունել առաջարկը: Այդ ընթացքում ԱՄՆ-ի նախագահը պատասխան առաջարկ էր ներկայացրել՝ հանձնաժողովին զուգահեռ անկախ ամերիկացի հետաքննող ուղարկելու մասին: Սուլթանը նշում էր, որ չի կարող ընդունել այդ առաջարկը՝ միաժամանակ խնդրելով, որ Կոստանդնուպոլսի Առևտրական քոլեջի աշխատակիցներից մեկը, որն ԱՄՆ-ի նախագահի ներկայացուցիչն էր, ընդգրկվի թուրքական հանձնաժողովի կազմում: Տերրելը խուսափել էր հարցի քննարկումից՝ խոստանալով պատասխանել ավելի ուշ:

[1] **Մեծն Մուրադ (Համբարձում Պոյաճյան)** (1867-1915) – հայ ազգային ազատագրական շարժման գործիչ, Հնչակյան կուսակցության ղեկավարներից, 1890 թ. Գում Գափուի ցույցի կազմակերպիչներից, 1894 թ. Սասունի ինքնապաշտպանության ղեկավարներից, 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո ընտրվել է ազգային երեսփոխան և օսմանյան խորհրդարանի անդամ, 1915 թ. աքսորվել է Կեսարիա, ուր կախաղան է բարձրացվել:

[2] Salt, Jeremy, նշվ. աշխ., էջ 74:

[3] US Department of State. Papers Relating to the Foreign Relations of the United States, Transmitted to Congress, With the Annual Message of the President, December 3, 1894, Washington: Government Printing Office, 1895, p. 721.

[4] Նույն տեղում, էջ 721:

Նույն օրը Տերրելի հետ էին հանդիպել նաև մեծ վեզիրն ու արտաքին գործերի նախարարը: Նրանք նշում էին, որ թուրքական կառավարությունը հիասթափված էր ԱՄՆ-ի կողմից թուրքական առաջարկի մերժումից և խնդրում էին, որ ամերիկյան կառավարությունը հրաժարվի Ջուեթին նշանակելու գաղափարից: Նրանք մտահոգություն էին հայտնել, որ նման պահանջ կարող են նաև ներկայացնել Իտալիան և Գերմանիան, ինչը շատ ավելի կբարդացներ Բարձր Դռան հարաբերությունները եվրոպական տերությունների հետ: Տերրելի համոզմամբ՝ թուրքական կառավարության մտահոգությունը հիմնավորված էր, քանի որ Ջուեթի նշանակումը կարող էր Եռյակ դաշինքի կողմից նման պահանջների հանգեցնել: Ըստ Տերրելի՝ Ռուսաստանի դեսպանն արդեն իսկ արտահայտել էր իր բացասական վերաբերմունքն ԱՄՆ-ի առաջարկի կապակցությամբ:[1] Տերրելի այս նամակին անմիջապես մյուս օրը հետևեց Գրեշամի հեռագիրն այն մասին, որ քանի որ սուլթանը մերժում էր Ջուեթի նշանակման առաջարկը, այլևս պետք չէր ճնշում գործադրել այդ ուղղությամբ:[2]

Բարձր Դռան այդ մոտեցումը ներկայացված էր նաև դեկտեմբերի 25-ի պետքարտուղար Գրեշամին ուղղված Սաիդ փաշայի հեռագրում: Հեռագրում նշվում էր, որ Բարձր Դուռը չի կարող ընդունել ԱՄՆ-ի առաջարկը, քանի որ երբեք չէր դիմել տերություններին՝ կայսրության ներքին վիճակը քննության առնելու նպատակով արտասահմանյան հանձնաժողով կազմելու խնդրանքով:[3]

Դեկտեմբերի 31-ին Մավրոյենի բեյին ուղղված պատասխան նամակում Գրեշամը գրում էր այն մասին, թե ինչու է ամերիկյան ղեկավարությունը որոշում կայացրել Ջուեթի նշանակման վերաբերյալ: Առաջին պատճառն այն էր, որ ԱՄՆ-ի քաղաքացին չէր կարող նշանակվել թուրքական հանձնաժողովի անդամ: Երկրորդը՝ ԱՄՆ-ը չի ստորագրել Բեռլինի պայմանագիրը, ուստի չէր կարող եվրոպական տերությունների հետ միասին մասնակցել հանձնաժողովի աշխատանքներին: Այդ իսկ պատճառով առաջարկվել էր, որ հյուպատոս Ջուեթը դիտորդի կարգավիճակով հանձնաժողովի հետ մեկնի ուսումնասիրվող շրջան և զեկուցի իր կառավարությանը հանձնաժողովի աշխատանքի արդյունքների մասին: Գրեշամը նշում էր, որ հնարավոր է՝ տեղի էր ունեցել անհասկացողություն, և ԱՄՆ-ի կառավա-

[1] Նույն տեղում, էջ 722-723:

[2] Նույն տեղում, էջ 723:

[3] Նույն տեղում, էջ 723:

ռությունը երբեկիցե նպատակ չէր հետապնդել կայսրության ներքին իրավիճակը քննելու նպատակով ներկայացուցիչ ուղարկել Սասուն, ուստի նա եզրակացնում էր, որ պատահարը կարելի էր սպառված համարել:[1]

Սոլթը գրում է, որ Սասունի դեպքերը «թուրքատյացության տարափի սահմանադուռը բացեցին Եվրոպայում և Միացյալ Նահանգներում»: Ըստ հեղինակի՝ ԱՄՆ-ի ներկայացուցիչ Տերրելը վճռականորեն հերքել էր քրիստոնյաների նկատմամբ իրականացված հետապնդումների մասին պնդումները, թեև մինչ այդ նշել էր, որ, Սըվազում ամերիկյան հյուպատոսի տվյալներով, Սասունում կոտորվել էր 5-ից 10 հազար հայ: 1895 թ. հունվարի 4-ի Տերրելի կողմից պետքարտուղարություն ներկայացված զեկուցագրում նա գրում էր, որ հայերը շարունակում էին վայելել իրենց ամբողջական կրոնական ազատությունները, և այն հանգամանքը, որ հեղափոխական շարժումը կազմակերպված էր ոչ օսմանահպատակ հայերի կողմից, «անմտություն» կլիներ պնդել, ինչպես որ դա անում էր բրիտանական և ամերիկյան մամուլը, որ Սասունի «դաժանությունները» արդյունք էին քրիստոնյա հավատքի հանդեպ գոյություն ունեցող մահմեդական ատելության:[2]

1895 թ. հունվարի 30-ին Գրեշամը գրում էր Մավրոյենի բեյին, որ, Տերրելից ստացված տեղեկությունների համաձայն, Օսմանյան կայսրության ներկայացուցիչը Վաշինգտոնում իբր տեղեկացրել էր Բարձր Դռանն այն մասին, որ ԱՄՆ-ում բնակվող հայերը դիմել էին ամերիկյան կառավարությանը՝ Թուրքիայի հետ պայքարելու նպատակով իրենց զենքով և զինամթերքով ապահովելու պահանջով: Գրեշամը համարում էր այս տեղեկատվությունն իրականությունից զուրկ և անհեթեթ:[3]

Անմիջապես հաջորդ օրը Մավրոյենի բեյը պատասխանում էր պետքարտուղարին, որ Տերրելի տեղեկությունները ճշգրիտ չեն, քանի որ ինքն այդ մասին որևէ տեղեկատվություն չէր հաղորդել Բարձր Դռանը: Իր կարծիքով՝ դա գալիս էր նրանից, որ վերջերս Նյու Յորքում Օսմանյան կայսրության փոխիշխապատոս Ասսիմ բեյն իր միջոցով հաղորդագրություն էր ուղարկել Կոստանդնուպոլիս այն մասին, որ, Նյու Յորքում տպագրվող «*Հայք*» պարբերականի համաձայն, հայերը նպատակադրվել էին ռազմական զորավարժություններ կազմակերպել Նյու Յորքում, ինչի համար հարկավոր էր զենք հայթայթել: Այս խնդիրը ոչ թե վերաբերում էր ֆեդերալ իշխանություններին, այլ Նյու Յորք նահանգի իշխանություններին: Մավրոյենի բեյն իր զարմանքն էր արտահայտում առ այն, թե ինչպես էր Տերրելն ի-

[1] Նույն տեղում, էջ 724:
[2] Salt, Jeremy. նշվ. աշխ., էջ 75:
[3] US Department of State. Papers Relating to the Foreign Relations of the United States, Transmitted to Congress, With the Annual Message of the President, December 3, 1894, Washington: Government Printing Office, 1895, p. 725.

րականությանը չհամապատասխանող և չստուգված տեղեկատվություն տրամադրել պետքարտուղարությանը: Եթե նման բան լիներ, Մավրոյենի բեյն ինքը կդիմեր պետքարտուղարությանը:[1]

Իրականում դեռևս 1894 թ. հունվարի 16-ին Մավրոյենի բեյը նման տեղեկատվություն տրամադրել էր պետքարտուղարությանը, որին ի պատասխան՝ պետքարտուղարի պաշտոնակատար Էդվին Ուլը[2] գրել էր (1894, 19 փետրվարի), որ այդ տեղեկատվությունը փոխանցվել էր Նյու Յորքի նահանգապետին, որ նահանգային իշխանությունը տեղյակ լինի և գործի այդ հարցում օրենքի համաձայն:[3]

1895 թ. փետրվարի 11-ին պետքարտուղար Գրեշամը գրում էր Տերրելին, որ, պետքարտուղարության տեղեկությունների համաձայն, Բիթլիսում գտնվող ամերիկյան միսիոներների կյանքը գտնվում է վտանգի տակ: Պետքարտուղարի կարծիքով՝ Ջուեթին կարելի էր ուղարկել Բիթլիս: Փետրվարի 23-ին Տերրելը պատասխանում էր, որ այդ հանգամանքը հաստատում էին նաև Բրիտանիայի դեսպանի տեղեկությունները: Տերրելը պահանջել էր Բարձր Դռնից անհրաժեշտ միջոցների դիմել՝ միսիոներների անվտանգությունն ապահովելու նպատակով:[4]

Մարտի 13-ին Տերրելը հաղորդում էր Գրեշամին, որ, Բեյրութում հյուպատոս Թոմաս Գիբսոնից ստացված տեղեկատվության համաձայն, Մարաշում, Հաճնում, Այնթապում, Ուրֆայում ապրող ամերիկյան միսիոներներն իրապես գտնվում էին ջարդի վտանգի տակ: Միսիոներների նկատմամբ թշնամական վերաբերմունք գոյություն ուներ նաև Էրզրումում, Վանում և Բիթլիսում: Տերրելը գրում էր, որ պահանջել էր Բարձր դռնից հրահանգել այդ շրջանների քաղաքացիական և զինվորական իշխանություններին ապահովել ԱՄՆ-ի քաղաքացիների անվտանգությունը: Նա դիմել էր համապատասխան նամակով Սաիդ փաշային: Նույն օրը Տերրելը կրկին հեռագրում էր Գրեշամին, որ Հալեպի միսսիոներները նույնպես գտնվում էին բավականին անհանգիստ վիճակում, իսկ Ռոբերտ քոլեջի նախագահ, դոկտոր Ջորջ Ուոշբըրնը հավատացած էր, որ վտանգը բավականին իրական էր: Լուրեր էին շրջում, շարունակում էր Տերրելը, որ մոլեռանդների կողմից մեծ վտանգ էր սպառնում, մասնավորապես Սասունի հանձնաժողովի եվրոպացի ներկայացուցիչների զեկույցի ապրիլին սպասվող հրապարակումից անմիջապես հետո: Տերրելն առաջարկում էր ամերիկյան ռազմանա-

[1] Նույն տեղում, էջ 725-726:
[2] Էդվին Ուլ (1841-1901) - ԱՄՆ-ի պետական գործիչ, իրավաբան և դիվանագետ, պետքարտուղարի տեղակալ (1893-1895), դեսպան Գերմանիայում (1896-1897):
[3] Նույն տեղում, էջ 726:
[4] US Department of State. Papers Relating to the Foreign Relations of the United States, With the Annual Message of the President, Transmitted to Congress, December 2, 1895, Part 1, Washington: Government Printing Office, 1896, p. 1237.

վեր ուղարկել Միջերկրականի արևելյան ափը՝ հնարավոր վտանգը կասեցնելու նպատակով:[1]

Իր պատասխան նամակում Սաիդ փաշան գրում էր, որ բոլոր այդ տեղեկությունները զուրկ էին որևէ հիմքից, նման տեղեկություններ տարածվում էին նաև կայսրության քրիստոնյաներին սպառնացող վտանգի մասին, սակայն հերքվում էին նույնիսկ անկողմնակալ աղբյուրների կողմից: Ըստ նախարարի՝ կառավարության կողմից ձեռնարկված բոլոր միջոցները երաշխավորում են հասարակական կարգ ու կանոնը, այնպես որ ԱՄՆ-ի քաղաքացիներին որևէ վտանգ չի սպառնում: Բարձր դուռը, ըստ Սաիդ փաշայի, կատարում էր իր բոլոր պարտականությունները՝ տեղացի և արտասահմանցի բնակչության պաշտպանությունն ապահովելու ուղղությամբ: Եթե նույնիսկ ինչ-որ դեպքեր են գրանցվել միսիոներների գործունեության առնչությամբ, ապա դրանք համընդհանուր բնույթ չեն կրում, այլ առանձին պատահարներ են: Ըստ Սաիդ փաշայի՝ Բարձր Դուռը պատրաստ էր լուծում տալ միսիոներներին առնչվող յուրաքանչյուր հարցի: Նա նշում էր նաև, որ վստահում էր ամերիկյան միսիոներներին ու նրանց անկողմնակալությանը և հույս ունի, որ նրանք զերծ կմնան քայքայիչ գործունեություն վարող քարոզիչներին օժանդակելուց:[2]

Ապրիլի 4-ին Ուլը գրում էր Տերրելին, որ քննարկել էր ԱՄՆ-ի ռազմածովային քարտուղարի հետ քրիստոնյաների ջարդերի կազմակերպման վտանգի պարագայում ամերիկյան ներկայացուցիչներին, միսիոներներին և քաղաքացիներին օգնություն ցուցաբերելու նպատակով ներկայումս Ջիբրալթարում գտնվող «Մարբլհեդ» ռազմանավը Զմյուռնիա, Աթալիա, Ալեքսանդրեթ և Բեյրութ ուղարկելու հնարավորությունը:[3] Գրեթե միաժամանակ եվրոպական կենտրոնակայանի հրամանատար, փոխծովակալ Ու. Ա. Քոքբլենը հրաման էր ստացել «Սան Ֆրանցիսկո» ռազմանավով Պալերմոյից մեկնել Զմյուռնիա, ստանձնել երկու ռազմանավերի հրամանատարությունն ու մեկնել այնտեղից Ալեքսանդրեթ և Աթալիա:[4]

Ապրիլի 8-ին պետքարտուղարի պաշտոնակատարը հաղորդում էր Տերրելին, որ ռազմանավեր «Սան-Ֆրանցիսկոն» և «Մարբլհեդը» հրահանգ էին ստացել այցելել Բեյրութ, Զմյուռնիա և այլ նավահանգիստներ:[5] Հեռագրին կից Տերրելին ուղարկվել էր նաև ռազմածովային քարտուղարի պաշտոնակատար, ծովակալ Ֆ. Մ. Ռամսեյի նամակը, համաձայն որի՝ ռազմանավերի հրամանատարները հրահանգ էին ստացել նշված նավահանգիստները հասնելուն պես կապ հաստատել տեղի ամերիկյան հյուպատոսների հետ և հարկ եղած դեպքում պաշտպանության տակ առնել ԱՄՆ-ի բոլոր քաղաքացիներին:[1]

Ապրիլի 5-ին և 7-ին Վաշինգտոնում Օսմանյան կայսրության դիվանագիտական ներկայացուցիչ Մավրոյենի բեյը, հիմնվելով *«New York Herald»*-ում և այլ թերթերում հրապարակված տեղեկությունների վրա, որոնց համաձայն ԱՄՆ-ի կառավարությունը որոշում էր կայացրել ռազմանավեր ուղարկել թուրքական նավահանգիստներ՝ ԱՄՆ-ի քաղաքացիների անվտանգությունն ապահովելու նպատակով, մեկնաբանություններ ստանալու նպատակով դիմել էր պետքարտուղարություն: Եթե այդպես է, գրում էր Մավրոյենի բեյը, ապա դա կհամարվի որպես անվստահության և ոչ բարեկամական քայլ օսմանյան իշխանությունների հանդեպ, մասնավորապես, երբ այդ որոշման նման գնահատականներ են տալիս ամերիկյան մամուլը, միսիոներները ու հայ հեղափոխականները:[2]

Ապրիլի 8-ին պետքարտուղարի պաշտոնակատար Ուլը պատասխանում էր Մավրոյենի բեյին, որ ԱՄՆ-ի ռազմանավերի նախատեսվող այցելությունը թուրքական նավահանգիստներ «ոչ բարեկամական նպատակ» չի հետապնդում, այդ այցելությունը կարող է նաև կարծիք ձևավորել այն մասին, որ Օսմանյան կայսրությունում բնակվող ԱՄՆ-ի քաղաքացիների անվտանգությանը որևէ բան չի սպառնում, որ տարածում ստացած լուրերն անհիմն են, որ օսմանյան իշխանությունները երաշխավորում են միսիոներների և բոլոր ամերիկյան քաղաքացիների պաշտպանությունը:[3]

Ապրիլի 30-ի իր պատասխան նամակում Մավրոյենի բեյը գրում էր, որ, Սաիդ փաշայից ստացած նամակի համաձայն, ամերիկյան ռազմանավերի այցը դիտարկվելու է օսմանյան իշխանությունների կողմից որպես օսմանյան նավահանգիստներ եվրոպական տերությունների ռազմանավերի տարեկան այցելություն: Սաիդ փաշան ավելացնում էր նաև, որ ԱՄՆ-ի քաղաքացիների անվտանգությանն իրականում որևէ վտանգ չի սպառնում. այդ լուրերը տարածում են այն ուժերը, որոնք ցանկանում են ցույց տալ աշխարհին, որ Օսմանյան կայսրությունում գոյություն ունի անկայուն իրավիճակ:[4]

Ուշացումով պատասխանելով (6 հունիսի) Մավրոյենի բեյին՝ Ուլը գրում էր, որ չի հասկանում, թե ինչու է ԱՄՆ-ի ռազմանավերի ներկայությունը

[1] Նույն տեղում, էջ 1238; Howard, Harry N., նշվ. աշխ., էջ 21-22:
[2] US Department of State. Papers Relating to the Foreign Relations of the United States, With the Annual Message of the President, Transmitted to Congress, December 2, 1895, Part 1, Washington: Government Printing Office, 1896, pp. 1240-1241.
[3] Նույն տեղում, էջ 1242:
[4] Howard, Harry N., նշվ. աշխ., էջ 21-22:
[5] US Department of State. Papers Relating to the Foreign Relations of the United States, With the Annual Message of the President, Transmitted to Congress, December 2, 1895, Part 1, Washington: Government Printing Office, 1896, pp. 1242.

[1] Նույն տեղում, էջ 1243:
[2] Նույն տեղում, էջ 1248-1250:
[3] Նույն տեղում, էջ 1250:
[4] Նույն տեղում, էջ 1250-1251:

նը թուրքական ջրերում դիտարկվում եվրոպական տերությունների ռազմանավերի այցելության շրջանակներում, որոնք պայմանագրային որոշակի պարտավորություններ ունեն Թուրքիայի ներքին գործերի նկատմամբ: Չցանկանալով միջամտել այլ պետությունների գործերին՝ ԱՄՆ-ի կառավարությունը ցանկանում է օգտագործել ռազմանավերի այցելությունը միմիայն որպես սովորական քաղաքավարության և բարեկամական հարաբերությունների նշան, ինչպես նաև իր քաղաքացիների և շահերի պաշտպանության նպատակով: Նման իրավունք և պարտականություն, շարունակում էր պետքարտուղարի պաշտոնակատարը, վերապահված էր բոլոր ինքնիշխան պետություններին: Ներկայումս, նշում էր Ուլը, այդ առաքելությունը, որը ղեկավարում է ծովակալ Քըրքլենդը, հաջողությամբ ավարտվել է:[1] Իրոք, ԱՄՆ-ի ռազմանավերը մնացին թուրքական նավահանգիստներում շատ կարճ ժամանակ, սակայն կրկին վերադարձան աշնանը՝ հայկական կոտորածների ժամանակ, և մնացին այնտեղ մինչև տարվա վերջ:

Ապրիլի 15-ին Տերրելը գրում էր պետքարտուղար Գրեշամին, որ քանի որ Բարձր Դուռը խոստացել էր հրահանգել տեղական իշխանություններին ապահովել ԱՄՆ-ի քաղաքացիների անվտանգությունը, ամերիկյան դիվանագետը որոշել էր դեռևս չուղարկել Ջուեթին Բիթլիս: Տերրելի կողմից ստացվող տեղեկատվության համաձայն՝ Բարձր Դուռն իսկապես միջոցներ էր ձեռնարկել շրջաններում անվտանգությունն ապահովելու նպատակով:[2]

Մայիսի 1-ին Քըրքլենդը հաղորդում էր Նեապոլից ռազմածովային ուժերի քարտուղար Հիլարի Հերբերտին[3], որ թուրքական ջրեր ռազմանավերի այցելության արդյունքում ԱՄՆ-ի քաղաքացիների նկատմամբ որևէ բռնության դեպք չէր հայտնաբերվել: Ուստի փոխծովակալը նպատակահարմար չէր համարում ռազմանավերի հետագա ներկայությունը թուրքական նավահանգիստներում: Նա կարծում էր, որ վեց ամիսը մեկ ամերիկյան ռազմանավի այցելությունը թուրքական նավահանգիստներ բավարար կլինի իրավիճակը կայուն պահելու համար:[4]

Զմյուռնիայից ուղարկված իր նախորդ (17 ապրիլի) հեռագրերից մեկում Քըրքլենդը գրում էր, որ մոտ ապագայում քրիստոնյաների ջարդի վտանգ այդ նահանգում չի կարող տեղի ունենալ, քանի որ քրիստոնյաները մեծամասնություն էին կազմում: Նա հանդիպել էր այդտեղ նաև Զմյուռնիայի նահանգապետի հետ և համոզվել, որ «նա կարող էր այնքան պատասխանատվություն ունենալ քրդերի կողմից հայերի հնարավոր սպանությունների համար, ինչքան որ Մասաչուսետսի նահանգապետն ապաչիների կողմից նորաբնակների սպանության համար»: Քըրքլենդն այցելել էր Զմյուռնիա, Ալեքսանդրեթ և Մերսին «Սան Ֆրանցիսկո» նավով, իսկ «Մարբլհեդ» ռազմանավն այցելել էր Բեյրութ, Ալեքսանդրեթ, Մերսին և Զմյուռնիա: Ամենուրեք հանդիպելով թուրք նահանգապետերին և տեղական իշխանությունների ներկայացուցիչներին՝ Քըրքլենդը նրանցից խոստումներն էր ստացել այն մասին, որ ԱՄՆ-ի քաղաքացիների անվտանգությունն այդ շրջաններում ապահովված է: Որևէ տեղեկատվություն ռազմանավերի անձնակազմի կողմից քրիստոնյաների նկատմամբ բռնությունների մասին այդ ընթացքում նա այդպես էլ չէր ստացել:[1]

1895 թ. հուլիսի 1-ին Մարզվանի բանտում գտնվող ԱՄՆ-ի քաղաքացի Գրիգոր Առաքելյանը գրում էր Տերրելին, որ ձերբակալվել էր թուրքական իշխանությունների կողմից 150 այլ հայերի և բողոքականների հետ սպանության մեղադրանքով: Նա նշում էր, որ որևէ մասնակցություն չի ունեցել հեղափոխական գործունեության մեջ, սակայն բոլոր օտարներն այստեղ կասկածանքի տակ են: Բանտարկյալներից շատերը, ըստ Առաքելյանի, ենթարկվում են կոտանքների, և նա վախենում էր, որ իր հերթն էլ կարող է գալ: Նա խնդրում էր ամերիկյան ներկայացուցչությանը դիմել Բարձր Դռանը՝ իրեն ազատելու և իր պաշտպանությունն ապահովելու պահանջով[2]:

Հուլիսի 20-ին հյուպատոս Ջուեթը հաղորդում էր Սըվազից, որ իշխանություններն իրեն չէին տեղեկացրել ԱՄՆ-ի քաղաքացու բանտարկության մասին, իսկ Առաքելյանի նամակներն էլ հնարավոր է բանտից իրեն չեն հասել: Հյուպատոսը գրում էր, որ Առաքելյանը փոքր հասակում մեկնել էր ԱՄՆ իր ծնողների հետ, որոնք ներկայումս ապրում են Միացյալ Նահանգներում:

Ջուեթը բնութագրում էր քրիստոնյաների վիճակը նահանգում շատ «կրիտիկական»: Նա համոզված էր, որ թշնամության բռնկում է սպասվում մահմեդականների և հայերի միջև: Հայերը դարձել էին «ավելի համարձակ և հուսահատ», իսկ թուրքերը՝ «ավելի մռայլ»: Ամեն ինչ հանգիստ է ներկայումս, շարունակում էր հյուպատոսը, սակայն «չափազանց լարվածության» մթնոլորտ է տիրում: Թուրքերը զինված էին, Երզնկայի զինապահեստից վառոդ էր ստացվել, որը բաժանվում էր Սըվազի, Շապին Գարահիսարի և Զարայի քրդերին ու թուրքերին: Հուլիսի 13-ին հրդեհվել էին կառավարական նոր դպրոցի շենքը, կայմակամի տունը, շուրջ 30 տներ և 20 խանութներ: Մի հայ էր սպանվել հաջորդ օրը, որին մեղադրել էին դավաճանության

[1] Նույն տեղում, էջ 1251:
[2] Նույն տեղում, էջ 1243:
[3] Հիլարի Հերբերտ (1834-1919) - ԱՄՆ-ի պետական և քաղաքական գործիչ, ռազմածովային ուժերի քարտուղար (1893-1897):
[4] Նույն տեղում, էջ 1245:

[1] Նույն տեղում, էջ 1246-1247:
[2] Նույն տեղում, էջ 1296:

մեջ, ձերբակալվել էին բազմաթիվ հայեր: Թուրքերը տարածում էին, որ հրդեհը կազմակերպողը հայերն էին: Մահմեդականները հավաքվել էին մզկիթում և քննարկել կոտորած սկսելու հարցը: Ըստ հյուպատոսի՝ շատ անհանգիստ էր նաև Ամասիայում:[1]

Տերրելին ուղղված միսիոներ Դուայթի զեկույցի համաձայն՝ Գրիգոր Առաքելյանն ապրում էր ծնողների հետ Ֆրեզնոյում, ժամանել էր Մարզվան 1892 թ. օգոստոսին՝ ամերիկյան Անատոլիական քոլեջում հայ գրականություն ուսանելու նպատակով: Երբ 1895 թ. հունիսի վերջին նա պատրաստվում էր վերադառնալ Կալիֆոռնիա, հայ հեղափոխականները սպանել են Մարզվանի հայտնի հայերից մեկին՝ Կարապետ աղա Գույումջյանին, և իշխանությունները ձերբակալել են մոտակայքում բնակվող բոլոր երիտասարդ հայերին, այդ թվում՝ նաև Գրիգոր Առաքելյանին: Ըստ Դուայթի՝ Կարապետ Գույումջյանն ազդեցիկ բողոքական հայ էր, որը դեմ էր դուրս գալիս «ժողովրդական ապստամբություն» սկսելու հայ հեղափոխականների գաղափարներին: Ըստ միսիոների՝ նրան եկեղեցու մոտ երկու հոգի դաշույններով սպանել էին: Միսիոների կարծիքով՝ հայ հեղափոխականներն ակտիվացել էին Մեծ Բրիտանիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի կողմից Բարձր Դռանը մայիսին ներկայացված բարեփոխումների ծրագրի[2] կապակցությամբ, և շարժումն Ամասիայից ղեկավարում էր ռուսահպատակ ոմն Շմավոնը:[3]

Սեպտեմբերին ԱՄՆ-ի ներկայացուցչության բողոքարկման շնորհիվ թուրքական իշխանություններն ազատում են Գրիգոր Առաքելյանին:[4]

1895 թ. սեպտեմբերի 6-ին Տերրելը հաղորդում էր նորանշանակ պետքարտուղար Ռիչարդ Օլնիին, որ Կոստանդնուպոլիս ժամանելուն պես թուրքական իշխանությունները ձերբակալել էին 1894 թ. դեկտեմբերին ԱՄՆ-ի քաղաքացիություն ստացած Մարտիրոս Մուրադյանին, որի մոտ հայտնաբերել էին 41 նամակներ և փաստաթղթեր, որոնց վրա դրված էր Հայ հեղափոխական միության կնիքը: Ոստիկանության նախարարը մերժել էր ԱՄՆ-ի գլխավոր հյուպատոսի պահանջը նրան ազատելու վերաբերյալ՝ մեղադրելով նրան հեղափոխական լինելու մեջ: Տերրելը բարգմանել էր տվել այդ

[1] Նույն տեղում, էջ 1296-1297:
[2] Կիրակոսյան Արման, 1895 թ. մայիսյան բարենորոգումների ծրագիրը // Հայոց պատմություն, հ. 3, Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես – 1918 թ.), Գիրք առաջին (XVII դարի երկրորդ կես – XIX դարի վերջ), Երևան: ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2010, էջ 521-527:
[3] US Department of State. Papers Relating to the Foreign Relations of the United States, With the Annual Message of the President, Transmitted to Congress, December 2, 1895, Part 1, Washington: Government Printing Office, 1896, pp. 1299-1300.
[4] Նույն տեղում, էջ 1298:

փաստաթղթերը՝ համոզվելու համար, որ մեղադրանքը համապատասխանում է իրականությանը:[1]

Երկու օր անց Տերրելը հաղորդում էր Օլնիին, որ թարգմանությունն ապացուցում է Մուրադյանի հեղափոխական լինելու հանգամանքը, թեև նա զինված դիմադրություն ցույց չէր տվել ձերբակալության պահին: Տերրելը պահանջել էր արտաքին գործերի նախարարից ազատ արձակել Մուրադյանին՝ երկրից նրան արտաքսելու նպատակով: Արտաքին գործերի նախարար Թուրխան փաշան տեղեկացրել էր Տերրելին, որ հրահանգել է ոստիկանության նախարարին ազատ արձակել Մուրադյանին պայմանով, որ նա անմիջապես մեկնելու է երկրից: Տերրելը գրում էր, որ նա պատրաստվում էր նստեցնել Մուրադյանին շոգենավ և ուղարկել նրան Աթենք:[2] Սեպտեմբերի 12-ին Տերրելը հաղորդեց Օլնիին, որ Մուրադյանը բարեհաջող կերպով արտաքսվել է երկրից:[3]

1895 թ. սեպտեմբերի 24-ին Տերրելը հաղորդում էր Օլնիին, որ, համաձայն Հալեպում հյուպատոսական գործակալ Փոչից ստացված տեղեկատվության, տեղական իշխանությունները Հալեպի կենտրոնական բանտ են նստեցրել ութը տարի ԱՄՆ-ում ապրած, 1894 թ. դեկտեմբերին ամերիկյան քաղաքացիություն ստացած Մելքոն Գյուրջյանին, որը տուն ուներ Մասաչուսետս նահանգի Լինն քաղաքում: Ըստ Գյուրջյանի՝ նա մեկնել էր ԱՄՆ-ից տարվա սկզբին, հինգ ամիս մնացել էր Լոնդոնում, դարձել Հնչակյան կուսակցության անդամ, որի հիմնական նպատակներն էին «հայերի համար Օսմանյան կայսրությունում տնտեսական բարեփոխումների իրականացումը, մամուլի ազատությունը, ընդհանուր ընտրական իրավունքը» և այլն: Օսմանյան կայսրություն մեկնելուց առաջ կազմակերպությունը նրան տվել էր 760 ֆունտ ստեռլինգ, որը նա պետք է բաժաներ հյուսիսային Սիրիայի հայ աղքատներին: Ըստ Գյուրջյանի՝ այդ առաքելության նպատակն էր սատարել իշխանություններին, որպեսզի երկրում համընդհանուր ապստամբություն տեղի չունենա, քանի որ հնչակյանները համոզվել էին, որ սուլթանը հայտարարել էր ընդհանուր ամնիստիայի և բարեփոխումներ իրականացնելու մասին: Գյուրջյանը գիշերով ժամանել էր Ալեքսանդրեթ, խուսափել էր սահմանակետից մուտք գործել երկիր, նրա ունեցվածքն ամբողջությամբ գողացել էին, որից հետո նա դիմել էր իշխանություններին՝ ներկայանալով որպես Բրիտանիայի քաղաքացի: Իշխանությունները ձերբակալել էին նրան, քանի որ հայտնաբերել էին նրա ունեցվածքը, որի միջոցով և պարզել նրա հնչակյան լինելու հանգամանքը և դատապարտել 101 տարվա բան-

[1] Նույն տեղում, էջ 1300-1301:
[2] Նույն տեղում, էջ 1301-1302:
[3] Նույն տեղում, էջ 1303:

տարկության:[1] Տերրելն այդ կապակցությամբ դիմել էր մեծ վեզիրին՝ նշելով, որ իշխանությունները տեղյակ չէին պահել ԱՄՆ-ի հյուպատոսական գործակալին ամերիկյան քաղաքացու բանտարկության մասին:[2]

Այդ կապակցությամբ Օլնին գրում էր Տերրելին (26 սեպտեմբերի), որ, չնայած գործը քաղաքական բնույթ ունի, քանի որ Գյուջյանը կապվել էր Բրիտանիայում գործող Օսմանյան կայսրության հանդեպ թշնամական կեցվածք ունեցող կազմակերպության հետ, սակայն օսմանյան իշխանությունները խախտել են միջազգային օրենքը, բանտարկել այլ երկրի քաղաքացու՝ առանց տեղյակ պահելու այդ երկրի հյուպատոսական ներկայացուցչություններին: Նա հրահանգում էր Տերրելին պահանջել թուրքական իշխանություններից տեղափոխել Գյուջյանին Կոստանդնուպոլիս:[3] Հոկտեմբերի 24-ին Տերրելը զեկուցում էր Օլնիին, որ մեծ վեզիրը հրահանգել էր վալիին Գյուջյանին տեղափոխել Կոստանդնուպոլիս, որից հետո Տերրելը մտադրված էր պահանջել Բարձր Դռնից վտարել վերջինիս երկրից:[4] Չորս օր անց Տերրելը գրում էր Օլնիին, որ իշխանությունները դեռ չեն ազատել Գյուջյանին և թույլ չեն տալիս գործակալ Փոչին տեսակցել նրա հետ:[5] Բազմաթիվ բողոքի հայտագրերից հետո Գյուջյանին վերջապես տեղափոխում են Կոստանդնուպոլիս, իսկ Հալեպի վալիին ազատում աշխատանքից: Միաժամանակ ԱՄՆ-ի ներկայացուցչությունը Գյուջյանին երկրից արտաքսելու պահանջով դիմել էր Բարձր Դռանը՝:[6]

Օսմանյան կայսրություն վերադարձող ԱՄՆ-ի քաղաքացիների հարցի կապակցությամբ 1895 թ. հոկտեմբերի 26-ին ամերիկյան միսիոներ Դուայթը շրջաբերական նամակ է հղում Օսմանյան կայսրությունում գործող բոլոր միսիոներներին, ուր մասնավորապես նշվում էր, որ թեև ԱՄՆ-ի կառավարությունն արգելում էր իր ներկայացուցիչներին որևէ կերպ միջամտել օսմանյան հպատակների օգտին, ինչքան էլ բարեգործական նպատակ չունենա այդ միջամտությունը, սակայն ԱՄՆ-ում հպատակություն ստացած հային վերաբերող յուրաքանչյուր դեպքում Տերրելն անմիջապես արձագանքում և միջամտում էր՝ կանխելու նույնիսկ հեղափոխություն կազմակերպելու ու քարոզելու մեղադրանքներով ձերբակալվածների պատիժը:[7]

[1] Նույն տեղում, էջ 1305-1306:
[2] Նույն տեղում, էջ 1307:
[3] Նույն տեղում, էջ 1308:
[4] Նույն տեղում, էջ 1310:
[5] Նույն տեղում, էջ 1311-1312:
[6] Նույն տեղում, էջ 1317:
[7] Նույն տեղում, էջ 1329:

2. 1895-1896 թթ. արևմտահայության կոտորածները. ամերիկյան դիվանագետների և միսիոներների վկայությունները

1895 թ. հոկտեմբերի 2-ին Տերրելը հաղորդում էր պետքարտուղարին, որ երկուշաբթի օրը մի քանի հարյուր հայեր խաղաղ բողոքի ցույց էին[1] կազմակերպել Բարձր Դռան առջև: Ըստ Տերրելի՝ հայ պատրիարքը փորձել էր խանգարել ցույցի կազմակերպմանը: Հայերի և ոստիկանության միջև բախում էր տեղի ունեցել: Մոտավոր հաշվարկներով մահացել էին շուրջ 60 թուրքեր և հայեր, շատերը վիրավորվել էին: Հայերը ատրճանակներ էին կրում: Նախորդ գիշեր սպանվել էր 80 հոգի, հարյուրն էլ բանտարկվել էին: Բարձր Դռան հայտարարության համաձայն՝ ցույցը կազմակերպել էին Հնչակյան հեղափոխականների ղեկավարները, որոնք ձերբակալվել էին: Տերրելը համոզված էր, որ Բարձր Դուռը կկարողանա սանձել մահմեդականների մոլեռանդությունը:[2]

Սակայն հաջորդ օրն իսկ Տերրելը հաղորդում էր, որ երեք օր է, ինչ հայկական բնակչության շրջանում սարսափ է տիրում, կարծիք կա, որ մահմեդական մոլեռանդությունը սպառնում էր բոլոր քրիստոնյա ազգություններին: Սեպտեմբերի 30-ի առավոտյան եկեղեցում տեղի ունեցած պատարագի ժամանակ հայ պատրիարքը փորձել էր հանգստացնել ժողովրդին, սակայն մեկ երիտասարդ կշտամբել էր առաջնորդին, որից հետո նա փակվել էր իր տանը՝ պաշտպանվելով ամբոխի հարձակումից:

Ըստ Տերրելի՝ երբ ոստիկանությունը փորձել էր կանգնեցնել ցուցարարներին դեպի Բարձր Դուռ տեղի ունեցած քայլարշավի ընթացքում, սպանվել էին թուրք ոստիկանության մի սպա և մի քանի ոստիկաններ: Պաշտոնական վարկածն այն էր, որ առաջին կրակողը հայ էր եղել: Քաղաքի տարբեր շրջաններում ամբոխի կողմից սկսվել էին հարձակումներ հայերի վրա: Իշխանությունների կողմից բանտարկվել էին 800-1000 հայեր, որոնցից չորսը սպանվել էին ոստիկանությունում:

Չորեքշաբթի օրը Տերրելին տեղեկացրել էին, որ երկու ամերիկուհիներ՝ տիկին Նյուելը և տիկին Շիշմանյանը, որոնք դասավանդում էին Ստամբուլի հայկական թաղամասում, գտնվում են վտանգի մեջ: Նա անձամբ մեկնել էր հայկական թաղամաս և հայտնաբերել, որ բոլոր հայերի տները փակ են. ոչ ոք չկար փողոցներում՝ բացի քահանաներից և ոստիկաններից, նա միայն

[1] Տե՛ս, Կիրակոսյան Արման, Բաբը Ալիի ցույցը: Հայերի կոտորածները 1895 թ. // Հայոց պատմություն, հ. 3, Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես – 1918 թ.), Գիրք առաջին (XVII դարի երկրորդ կես – XIX դարի վերջ), Երևան: ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2010, էջ 527-534:
[2] US Department of State. Papers Relating to the Foreign Relations of the United States, With the Annual Message of the President, Transmitted to Congress, December 2, 1895, Part 1, Washington: Government Printing Office, 1896, p. 1318.

հայերի վախեցած դեմքերն էր նկատել պատուհաններում: Այն բանից հետո, երբ Տերրելը հավաստիացնում է կանանց, որ նրանք վախենալու բան չունեն, քանի որ գտնվում են դեսպանության պաշտպանության ներքո, նա մեկնել էր ներքին գործերի նախարարի մոտ և պահանջել պաշտպանություն ոչ միայն այդ կանանց, այլև քաղաքում և Սկյութարում բնակվող բոլոր ամերիկացիների համար: Նույն օրը Տերրելը պահանջել էր արտաքին գործերի նախարարից ապահովել ԱՄՆ-ի քաղաքացիների անվտանգությունն Օսմանյան կայսրության ողջ տարածքում: Տերրելին նաև տեղեկացրել էին, որ շուրջ 500 զինված հայ հեղափոխականներ փակվել էին Ստամբուլի հայկական եկեղեցում և արդեն երկու օր է, ինչ գտնվում են այնտեղ՝ առանց սննդի: Մի քանի հարյուր հոգի պատսպարվել էին այլ եկեղեցիներում: Բրիտանիայի դեսպանը ցույց էր տվել Տերրելին դեսպանների կողմից Բարձր Դռանը հասցեագրված հայտագրի պատճենը, ուր պահանջվում էր դադարեցնել արյունահեղությունը:[1]

Հոկտեմբերի 8-ին Տերրելը գրում էր, որ հազարավոր հայեր դեռևս գտնվում էին Բերայի և Ստամբուլի եկեղեցիներում, իսկ տներն ու խանութները դեռևս փակ էին: Ըստ Տերրելին հասած տեղեկությունների՝ նրանք սպասում էին հրամանի հեղափոխական ղեկավարներից, որոնք իրենց գործողություններով փորձում էին գրավել քրիստոնյա տերությունների դեսպանությունների ուշադրությունը: Խոսում էին, ըստ Տերրելի, թե իշխանությունները չեն համարձակվում բանտարկել հեղափոխականների գլխավոր ղեկավարներին՝ վախենալով հայկական շատ ավելի մեծ ցույցից և դրա հետևանքով ավելի մեծ ջարդի կազմակերպումից: Լարվածությունը մայրաքաղաքում դեռևս շարունակվում է. փողոցներում ձիակառքեր չկան: Նոր նշանակված մեծ վեզիր Քյամիլ փաշան[2] և արտաքին գործերի նախարար Սաիդ փաշան դեռևս աշխատանքի դուրս չեն եկել. հնարավոր է՝ պատըսպարված էին սուլթանի հետ: Մոլեռանդ մահմեդական քահանաները, որոնք գործուն կերպով ամբոխի հետ մասնակցում էին հայերի կոտորածներին, դեռևս երևում էին փողոցներում, թեև նրանցից 60-ը ձերբակալվել էին իշխանությունների կողմից:[3]

1895 թ. հոկտեմբերի 1-ին Բեյրութում հյուպատոս Գիբսոնը գրում էր գլխավոր հյուպատոս Շորտին, որ վստահելի աղբյուրներից չափազանց անհանգստացնող տեղեկություններ էր ստանում Հալեպի և Ադանայի վիլայեթների Հալեպ, Ալեքսանդրեթ, Մարաշ, Հաճըն, Տարսոն և Մերսին քաղաքներից: Մտահոգվելով ԱՄՆ-ի քաղաքացիների անվտանգությունը պաշտ-

[1] Նույն տեղում, էջ 1318-1319:
[2] Քյամիլ փաշա (1833-1913) – Օսմանյան կայսրության պետական գործիչ, մեծ վեզիր (1885-1991, 1895, 1908-1909, 1912-1913):
[3] Նույն տեղում, էջ 1320-1321:

պանելու հարցով՝ Գիբսոնն առաջարկում էր, որ Տերրելը ռազմանավ «Մարբլհեդը» կրկին թուրքական ջրեր ուղարկելու խնդրանքով դիմի ամերիկյան կառավարությանը: Ըստ ստացված տեղեկատվության՝ հայ հեղափոխականներն այդ վիլայեթներում իրը ապստամբություն էին նախապատրաստում, զինում էին բնակչությանը: Հյուպատոսը փորձել էր միսիոներների միջոցով համոզել նրանց թողնել այդ գաղափարը և մեկնել այդ վիլայեթներից, բայց դա դարձել էր անիմաստ: Ըստ Գիբսոնի, ինչպես մահմեդականները, այնպես էլ հայ հեղափոխականները բացասաբար էին տրամադրված միսիոներների և նրանց գործունեության նկատմամբ: Հեղափոխականները պատրաստվում էին մի քանի շաբաթից ապստամբություն սկսել և գրավել կառավարական բոլոր շենքերը: Ըստ հյուպատոսի՝ հեղափոխականների ղեկավարը ներկայումս մեկնել էր Կիպրոս՝ Փարիզից հետագա հրահանգներ ստանալու նպատակով: Գիբսոնը մասնավորապես անհանգստացած էր Հաճնում և Մարաշում բնակվող ամերիկացի ընտանիքների պաշտպանության հարցով և խորհուրդ էր հարցնում դրա համար:

Համաձայն Ալեքսանդրեթում հյուպատոսական գործակալ Ուոքերի տեղեկատվության՝ երեք շաբաթ է, ինչ այդտեղ էին ժամանել երկու հազար թուրք զինվորներ, որոնց անկազմակերպ պահվածքի, բռնությունների և քաղաքացիներին հասցվող վիրավորանքի հետևանքով քաղաքի բնակչությունը կարող էր հայտնվել իրական վտանգի առջև:[1] Այդ կապակցությամբ պետքարտուղար Օլնին հոկտեմբերի 9-ին հարցնում էր Տերրելին, թե արդյո՞ք անհրաժեշտ էր տեղափոխել միսիոներներին այդ վայրերից: Հաջորդ օրը Տերրելը պատասխանում էր, որ միսիոներների կարծիքով, տեղափոխման ընթացքում նրանք հնարավոր է՝ հայտնվեն շատ ավելի վատ վիճակում, քան մնան հանգիստ իրենց տեղերում: Բրիտանիայի դեսպանն իր պատրաստակամությունն էր հայտնել անհրաժեշտության դեպքում մինչև ամերիկյան նավերի ժամանումը ԱՄՆ-ի քաղաքացիներին էվակուացնել բրիտանական ռազմանավերի միջոցով: Հոկտեմբերի 11-ին Օլնին տեղեկացնում էր Տերրելին, որ «Մարբլհեդին» հրահանգվել էր ուղևորվել դեպի Ալեքսանդրեթի ծովախորշը:[2]

Հոկտեմբերի 12-ին Վաշինգտոնում Օսմանյան կայսրության դիվանագիտական ներկայացուցիչ Մավրոյենի բեյը բողոք էր ներկայացրել Օլնիին այն մասին, որ ամերիկյան մամուլի, մասնավորապես հայկական «*Հայք*» թերթի տեղեկատվության համաձայն, «Մարբլհեդին» հրահանգված էր մեկնել Թուրքիա, քանի որ ԱՄՆ-ի քաղաքացիներին վտանգ էր սպառնում: Ըստ Մավրոյենի բեյի՝ հայ հեղափոխականներն իրապես դավեր էին հյու-

[1] Նույն տեղում, էջ 1322-1323:
[2] Նույն տեղում, էջ 1323:

սում իշխանությունների նկատմամբ, սակայն ԱՄՆ-ի քաղաքացիների անվտանգությունը երկրում ապահովված էր. նրանց որևէ վտանգ չէր սպառնում:

Երեք օր անց Օլնին պատասխանում էր, որ «Մարբլհեդի» մեկնումը դեպի թուրքական տարածքային ջրեր պայմանավորված էր ԱՄՆ-ի կառավարության ավանդաբար հաստատված պրակտիկայով. երբ հասարակական կարգի խախտում էր նկատվում աշխարհի տարբեր երկրներում, որտեղ ամերիկացիներ էին բնակվում, կառավարությունն այնտեղ ռազմանավեր էր գործուղում՝ իր քաղաքացիների անվտանգությունն ապահովելու նպատակով: Այդ քաղաքականությունը, շարունակում էր Օլնին, որևէ կերպ չէր կարող ազդել երկու երկրների միջև գոյություն ունեցող բարեկամական հարաբերությունների վրա:[1]

Այդ օրերին Մեծ Բրիտանիայի պետական գործիչ Ջեյմս Բրայսը[2] գրում էր, որ «Ամերիկայի դիրքերը... շատ ուժեղ են», քանի որ ԱՄՆ-ը որդեգրել է «շատ խոհեմ» քաղաքականություն՝ չմիանալով որևէ եվրոպական պայմանագրի և չստանձնելով «բնիկ արևելյան քրիստոնյաների օրինական իրավունքների պաշտպանության նպատակով միջամտելու պարտավորություններ»: Նա գտնում էր, որ ամերիկյան ռազմանավերի հայտնվելն օսմանյան նավահանգիստներում՝ ԱՄՆ-ի քաղաքացիների իրավունքների պաշտպանության և կրթական հաստատությունների անվտանգությունն ապահովելու նպատակով, «օգտակար ազդեցություն է ունենում թուրքերի բանականության վրա»:[3]

Հոկտեմբերի 9-ին Էրզրումում նորանշանակ հյուպատոս Ռ. Ս. Չիլտոնը հաղորդում էր պետքարտուղարի տեղակալին Տրաբզոնից (Էրզրումում տիրող դեպքերի հետևանքով նա որոշ ժամանակ մնացել էր Տրաբզոնում), որ ժամանելուն պես պարզել էր, որ քաղաքի բնակչությունը «շատ լուրջ թուրքական ապստամբության» հետևանքով գտնվում է «գրգռված և անհանգիստ» վիճակում, բայց բարեբախտաբար այն ժամանակավորապես ճնշվել էր առանց լուրջ հետևանքների: Ապստամբության պատճառը, որին մասնակցում էին մի քանի հազար զինված թուրքեր, Վանի նահանգապետի նկատմամբ իրականացված մահափորձն էր: Նահանգապետը պատրաստ-

[1] Նույն տեղում, էջ 1324; Howard, Harry N., նշվ. աշխ., էջ 21-22:

[2] Ջեյմս Բրայս (1838-1922) – Մեծ Բրիտանիայի պետական և քաղաքական գործիչ, լիբերալ կուսակցության անդամ, իրավաբան, պատմաբան, արտգործնախարարի տեղակալ (1886), առևտրի նախարար (1894-1895), Իռլանդիայի գործերով քարտուղար (1905-1906), դեսպան ԱՄՆ-ում (1907-1913), 1876 թ. հիմնել է Անգլո-հայկական ընկերությունը, «Անդրկովկասն ու Արարատը» գրքի հեղինակ և «Հայերի վիճակը Օսմանյան կայսրությունում 1915-1916 թթ.» (Կապույտ գիրք) փաստաթղթերի ժողովածուի կազմող:

[3] Bryce, James, The Armenian Question // The Armenian Massacres, 1894-1896 (Edited by Arman J. Kirakossian)..., pp. 90-91.

վում էր մեկնել Կոստանդնուպոլիս: Թուրքերը պնդում էին, որ նրա վրա կրակել էին հայերը, և որ իրենք գտնվում էին հայերի համընդհանուր հարձակման վտանգի տակ:

Ըստ հյուպատոսի՝ նախորդ օրը ժամը 11-ին խժդժությունները նորից սկսվեցին և շարունակվեցին մինչև արևամուտը: Այդ ընթացքում «շատ հայեր գնդակահարվեցին, սվինահարվեցին և ծեծի ենթարկվելով՝ սպանվեցին, իսկ նրանց տներն ու խանութները քանդվեցին և թալանվեցին»: Իշխանությունները փորձում էին 300-400 զինվորների և ոստիկանների ուժերով վերականգնել կարգ ու կանոնը քաղաքում, բայց անզոր էին ամբոխի առջև: Հյուպատոսը գտնվում էր այդ ժամանակ հյուրանոցում, և պատուհանից ականատեսը դարձավ հայերի սպանությունների և թալանի տեսարաններին: Հյուպատոսի աշխատակից Սթանտերը քայլում էր քաղաքի արվարձանում, երբ խժդժությունները սկսվեցին: Նա դժվար և վտանգավոր ճանապարհ էր անցել, մինչև հասել էր բրիտանական հյուպատոսություն. նրան մի քանի անգամ սպառնացել էին հրացաններով և դաշույններով: Տրաբզոնում բրիտանական հյուպատոս Լոնգուորթը նրան էր տրամադրել իր *կավասին* (թիկնապահին), առանց որի նա անկարող էր անցնել ամբոխի միջով: Լոնգուորթի *կավասն* ուղեկցել էր ԱՄՆ-ի հյուպատոսին մինչև բրիտանական հյուպատոսություն: Ճանապարհին նա տեսել էր փողոցներում դաժանությամբ սպանված բազմաթիվ մարդկանց դիակներ:

Ըստ հյուպատոսի՝ քաղաքում տեղի ունեցածն «ուղղված էր միայն հայերի դեմ, իսկ հույներին, բացի մի քանի դեպքից, չէին անհանգստացրել»: Սակայն հյուպատոսն այն կարծիքին էր, որ եթե ամբոխը շատ ավելի գրգռվի, որևէ տարբերություն չի դրվի տարբեր ազգությունների քրիստոնյաների միջև:[1]

Հոկտեմբերի 11-ին Ռ. Ս. Չիլտոնը Տրաբզոնից գրում էր պետքարտուղարի տեղակալ Էդվին Ուլին, որ քաղաքում արտակարգ իրավիճակ էր հայտարարված, զինվորների թիվը հասել էր հազարի, ոստիկաններինը՝ 200-300-ի: Ըստ հյուպատոսի՝ քաղաքում ապրում էր 42 հազար մարդ, որոնցից 20 հազարը թուրքեր էին, 14 հազարը՝ հույներ, 8 հազարը՝ հայեր: Տարբեր հյուպատոսություններում, ինչպես նաև ամերիկյան միսիոներական առաքելության շենքում կուտակվել էին բազմաթիվ հայ փախստականներ: Բրիտանական հյուպատոսությունը պաշտպանում էին 10-12 զինվորներ, հյուպատոսն ու իր աշխատակիցները նույնպես զինված էին և կարող էին պաշտպանել շենքը հնարավոր հարձակումից: Ըստ հյուպատոսի՝ ներկայումս դժվար էր հաշվարկել, թե ինչքան հայ էր մահացել 5-ից 6 ժամ տևող

[1] The National Archives and Records Service. General Services Administration, Despatches from United States Consuls in Erzerum, 1895-1904, Roll 1, Vol. 1, August 5, 1895 – December 31, 1900, R. S. Chilton to Edwin Uhl, 1895, October 9, pp. 3-8.

ջարդի ընթացքում, սակայն, ըստ իր հաշվարկի, մի քանի հարյուր, հնարավոր է՝ 500-600: Հիմնականում սպանվածները տղամարդիկ էին, որոնք այդ ժամերին գտնվում էին իրենց աշխատավայրում: Դժվար էր ասել, թե ինչից էր սկսվել ջարդը, սակայն շատ հավանական է, որ այն սկսվել էր մի հայի «անխոհեմ» քայլից, որը, տեղեկություն ստանալով, որ Կոստանդնուպոլսի դեպքերի ժամանակ սպանվել էր իր բարեկամը, դուրս էր եկել փողոց և սկսել կրակել թուրքերի վրա: Իշխանությունները գործադրել էին հնարավոր ամեն ջանք սպանությունները կանխելու համար, թեև ամեն բան չէին արել կանգնեցնելու թալանը, որի միջոցով ամբոխը կարող էր բավարարել իր զայրույթն ու չսկսեր քրիստոնյաների համատարած կոտորած:

Ըստ հյուպատոսի՝ հյուրանոցի իր սենյակի պատուհանից նա ականատեսը դարձավ նրան, որ դեպքերի առաջին իսկ պահից ամբոխը խանութներ էր թալանում, և այնպիսի տպավորություն էր, որ «ջարդի հիմնական նպատակը թալանն էր»: ԱՄՆ-ի հյուպատոսը նշում էր, որ որևէ տեղեկություն կամ հանձնարարական չուներ Կոստանդնուպոլսում դիվանագիտական ներկայացուցչության ղեկավարից՝ օսմանյան կառավարությունից իր թույլտվությունը ստանալու կամ իր հետագա գործողությունների մասին: Սակայն քաղաքից դուրս գալն այս պահին անհնարին էր, քանի որ տեղեկություններ էին տարածվում, որ նման իրադարձություններ տեղի էին ունենում ամենուրեք, և մինչև իրավիճակը չբարելավվի, նա չէր կարող դուրս գալ Տրաբզոնից:[1]

Ըստ Չիլտոնի (13 հոկտեմբերի)՝ քաղաքի ամերիկյան միսիոներական առաքելության շենքում շարունակում էին մնալ 140-150 հայեր: Քաղաքի իշխանությունները տեղեկություններ էին հրապարակել, որ ընդհանուր առմամբ սպանվել էր 193 մարդ, որոնցից 182-ը հայեր էին, 11-ը՝ թուրքեր, վիրավորվել էին 46-ը, որոնցից 19-ը՝ հայեր, 26-ը՝ թուրքեր: Ըստ հյուպատոսի՝ իրական տվյալները շատ ավելի բարձր կարող էին լինել, և դա կպարզվի, երբ հայտնի կդառնան ոչ պաշտոնական, սակայն ավելի հավաստի աղբյուրների տվյալները:[2] Երկու օր անց հյուպատոսը գրում էր, որ քաղաք էր ժամանել ռուսական ռազմանավ, որը ինչը դրական էր ընդունվել արտասահմանցիների և քրիստոնյաների կողմից:[3]

[1] The National Archives and Records Service, Despatches from United States Consuls in Erzerum, 1895-1904, Roll 1, Vol. 1, August 5, 1895 – December 31, 1900, R.S. Chilton to Edwin Uhl, 1895, October 11, pp. 2-8.
[2] The National Archives and Records Service, Despatches from United States Consuls in Erzerum, 1895-1904, Roll 1, Vol. 1, August 5, 1895 – December 31, 1900, R.S. Chilton to Edwin Uhl, 1895, October 13, pp. 3-4.
[3] The National Archives and Records Service, Despatches from United States Consuls in Erzerum, 1895-1904, Roll 1, Vol. 1, August 5, 1895 – December 31, 1900, R.S. Chilton to Edwin Uhl, 1895, October 15, p. 1.

Հոկտեմբերի 16-ին Տերրելը գրում էր Օլնիին, որ հոկտեմբերի 9-ին Ակիսարում 50 հայ էր սպանվել, իսկ Տրաբզոնում տեղի ունեցած ջարդի ժամանակ՝ 500-ից ավելի:[1] Երկու օր անց նա տեղեկացնում էր, թե իբր Հայկական հարցը կարելի էր լուծված համարել, քանի որ սուլթանը *իրադե* է ստորագրել հայկական բարեփոխումներ իրականացնելու մասին:[2]

Հոկտեմբերի 21-ին Տերրելը նամակ էր հղել Սաիդ փաշային այն մասին, որ վստահելի աղբյուրից տեղեկացել էր Աղաբազարի շրջանի բնակավայրերից մեկում տեղի ունեցած անկարգությունների մասին, որտեղ երեք ամերիկուհիներ էին բնակվում: Նա խնդրում էր Սաիդ փաշային ապահովել նրանց անվտանգությունը:[3]

Նույն օրը Էրզրումում ԱՄՆ-ի հյուպատոսը գրում էր, որ իրավիճակը Տրաբզոնում դեռևս չի փոխվել, խանութները հիմնականում փակ են, պարեկները շարունակում են ապահովել հյուպատոսությունների անվտանգությունը, քաղաքում զինվորներ են շրջում: Այնպիսի տպավորություն է, գրում էր հյուպատոսը, որ ամեն վարկյան կարող էր սկսվել նոր ընդվզում: Ռուսական ռազմանավը շարունակում է մնալ նավահանգստում և լուրեր էին տարածվում, որ ևս մի քանի ռուսական ռազմանավեր են շրջում մոտակայքում: Հյուպատոսը ցավում էր, որ այլ երկրների ռազմանավերը չեն ժամանել Տրաբզոն, ինչը կարող էր կարգավորել և հանգստացնել իրավիճակը: Զինվորական իշխանությունները, որոնք շարունակում էին հսկողության տակ պահել իրավիճակը, ամեն ինչ անում էին, որպեսզի դեպքերի պատասխանատվությունը բարդեն հայերի վրա: Ըստ այդ վարկածի՝ ամբոխի և զինվորների կողմից հայերի սպանություններն արդարացված էին, քանի որ հայերն իբր ապստամբել են: Համաձայն հյուպատոսի ունեցած տվյալների՝ ներկա պահին կալանավորվել են 300-ից 400 հայեր, որոնց պետք է դատեն զինվորական դատարանները: Որևէ թուրք չէր ձերբակալվել: Հյուպատոսի կարծիքով՝ իրական մեղավորներին պատասխանատվության ենթարկելու միակ իրական հնարավորությունն օտարերկրյա ներկայացուցիչներից կազմված հանձնաժողովի ստեղծումն էր, որի գործունեությունը կարող էր ապահովվել միայն զինված ուժի միջոցով:[4]

Ըստ հյուպատոսի՝ օրեցօր նոր մանրամասներ էին ստացվում քաղաքում տեղի ունեցած կոտորածների մասին: Առաջին տեղեկություններն ամ-

[1] US Department of State. Papers Relating to the Foreign Relations of the United States, With the Annual Message of the President, Transmitted to Congress, December 2, 1895, Part 1, Washington: Government Printing Office, 1896, p. 1325.
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:
[4] The National Archives and Records Service, Despatches from United States Consuls in Erzerum, 1895-1904, Roll 1, Vol. 1, August 5, 1895 – December 31, 1900, R.S. Chilton to Edwin Uhl, 1895, October 21, p. 1-4.

բողջությամբ պատկերացում չէին տալիս դաժան դեպքերի մասին: Հավաստի աղբյուրների տվյալներով՝ քաղաքում սպանվել էր 500 հոգի, մի քանի հարյուրը՝ շրջակա գյուղերում: Ըստ հյուպատոսի՝ գյուղերում տները ոչ միայն թալանվել էին, այլև հրդեհվել բնակիչների կոտորածից հետո: Քաղաքում բնակվող եվրոպացիների գերակայող կարծիքի համաձայն՝ կոտորածը կազմակերպել և հրահանգել էին իշխանությունները, իսկ զինվորներն ակտիվ մասնակցել էին սպանություններին և թալանին:[1]

ԱՄՆ-ի հյուպատոսն անձամբ այնքան էլ համաձայն չէր այդ կարծիքի հետ՝ համարելով, որ տեղի իշխանություններն իրենց հնարավորությունների սահմաններում ամեն ինչ ձեռնարկել էին՝ ամբոխը ցրելու և կարգ ու կանոնը վերականգնելու համար: Նա չէր հավատում, որ իշխանություններն ու զինվորներն էին ձեռնարկել այդ դեպքերը:[2]

Հոկտեմբերի 24-ին Տերրելն իր տեսակետներն էր հայտնում Օլնիին հոկտեմբերի 21-ին Օսմանյան կայսրությունում հայտարարված բարեփոխումների էության և քաղաքական միտումների մասին: Նա նշում էր, որ հայտարարված որոշումը հրապարակված չէր *հաթթի* տեսքով և չէր համապատասխանում տերությունների, մասնավորապես Մեծ Բրիտանիայի վարչապետ Սոլսբերիի արմատական միջոցների իրականացման պահանջներին: Հրապարակված *իրադեն* դիտարկվում էր Տերրելի կողմից ոչ թե որպես նորույթ կամ բարեփոխում, այլ որպես գոյություն ունեցող օրենքները հստակեցնող հրահանգներ: Միաժամանակ այդ հրահանգները կիրառվելու էին ոչ թե երկրի ողջ տարածքում, այլ միայն այն վիլայեթներում, ուր համատեղելի և համահունչ էին լինելու 1856 թ. *Գյուլհանեի Հաթթի* հետ: Քրդերը զինաթափման չէին ենթարկվելու, ինչպես որ պահանջում էր Բրիտանիան. նրանց կողմից զենք կրելու իրավունքն ուղղակի կարգավորվելու էր համապատասխան օրենքով: Քրդական *համիդիե* ջոկատները շարունակելու էին մնալ օսմանյան բանակի հեծելազորի կազմում, սակայն նրանք համազգեստ և զենք էին կրելու միայն այն ժամանակ, երբ նրանց հրահանգելու էին հավաքվել զինվորական ճամբարներում՝ վարժանքներ իրականացնելու համար: Միաժամանակ որևէ արգելափակում չէր լինելու վարժանքները պարբերաբար կամ առանց դադարի անցկացնելու առումով: Կանոնավոր բանակը շարունակելու էր բաղկացած լինել միայն թուրքերից, քրիստոնյաները կարող էին ծառայել միայն ժանդարմերիայում և ոստիկանությունում՝ յուրաքանչյուր նահանգում նրանց թվաքանակին համաչափ: Դա նշանակում էր, ըստ Տերրելի, որ բոլոր նահանգներում այդ թիվը միջինում կազմելու

[1] Նույն տեղում, էջ 4-5:
[2] Նույն տեղում, էջ 6:

էր մեկ քրիստոնյա և հինգ մահմեդական: Սակայն ոչինչ չէր ասվում ժանդարմերիայի և ոստիկանության սպայական կազմի մասին:

Տերրելի համոզմամբ, թեև այս նախագիծը բացարձակապես որևէ նորություն կամ պրակտիկ արժեք իրենից չէր ներկայացնում ապագայում կյանքի և ունեցվածքի անվտանգության ապահովման իմաստով, սակայն նրա գործոնը կարող էր որոշակի դրական ազդեցություն ունենալ: Ըստ ամերիկյան դիվանագետի՝ հայկական բնակչությունը կարծես թե բավարարված էր այդ որոշմամբ, զինվորները շարունակում էին հսկել քաղաքը, իսկ Բրիտանիայի և շուտով նաև Ֆրանսիայի դեսպանները մեկնելու էին իրենց մայրաքաղաքները: Այսպիսով՝ Բարձր Դռան կողմից ներկայացված «նախագիծը» կարծես բավարարել էր տերություններին և վերականգնել վստահությունը:

Տերրելը շարունակում էր, որ երեք տերությունների ներկայացուցիչները չորս ամիս քննում էին Սասունում տեղի ունեցած կոտորածի փաստերը, հինգ ամիս էր անցել այն օրվանից, ինչ նրանք վերջացրել էին իրենց աշխատանքը, սակայն այդպես էլ այդ փաստերը դեռևս չէին հրապարակվել: Ըստ Տերրելի՝ պահանջվող բարեփոխումները հաստատում էին կոտորածի փաստը: Մեծ վեզիր Քյամիլ փաշան, որը բավականին լավ տիրապետում էր անգլերենին, ասել էր Տերրելին, որ կոտորած տեղի չէր ունեցել. գոյություն չունի որևէ փաստ այն մասին, որ իրադարձությունների ժամանակ սպանվել կամ բռնաբարվել էին կանայք, պղծվել էին եկեղեցիներ, փոսերը լցված էին սպանված բանտարկյալներով և այլն: Նա պնդում էր, որ բոլոր այս դաժան պատմությունները, որոնցով լցված էր քրիստոնյա մամուլը, իբր հորինվել են «հայ անարխիստների» կողմից և տարածվում էին «քրիստոնյա մամուլի» միջոցով՝ Եվրոպայի ձեռքով հայ ժողովրդի համար ինքնավարություն ապահովելու նպատակով: Մեծ վեզիրը համոզված էր, որ հայ բնակչության ընդհանուր թվաքանակից ընդամենը 4 հազարն էր ընդգրկված հեղափոխական գործունեության մեջ, և որ նրանցից սպանվել էր ընդամենը 500 մարդ: Նա շարունակում էր, որ «հայերը ծրագրում էին հեղափոխություն, օգտագործեցին քրդերի հետ ունեցած վեճն անասունների համար, սպանեցին քուրդ ղեկավարներից մեկին, մասնատեցին նրա մարմինը և կերակրեցին նրանով շներին»:

Ըստ Տերրելի՝ Կոստանդնուպոլսի տեղեկացված ամերիկացիներն կարծում էին՝ մայրաքաղաքում կատարված ցույցերը կազմակերպել և իրականացրել էին ռուսահայ էմիսարները: Պարզ է, գրում էր դիվանագետը, որ ցույցերը կազմակերպվել էին փորձված և մտածող մարդկանց կողմից և չէին պարունակում իրենց մեջ հեղափոխական ավյուն: Եկեղեցիները միանգամից լցվեցին մարդկանցով և նույնկերպ դատարկվեցին, 200 հազար հայերի գործատները միաժամանակ փակվեցին և ժամանակի ճշտությամբ

կրկին բացվեցին: Տարօրինակ մարդիկ էին շրջում քաղաքով՝ հրահանգելով հայերին փակել կամ բացել տներն ու խանութները: Ամեն ինչ տեղի էր ունենում բաց, ոչ գաղտնի կերպով: Քանի որ աղքատները կախված էին իրենց օրեական աշխատանքից, նրանց համար հատուկ հաց էր բաժանվում: Բրիտանական նավատորմը մնաց այդպես էլ Լեմնոսում, իսկ 25 հազարանոց թուրքական բանակը, որն ատելությամբ էր լցված հայերի հանդեպ, պահպանեց այդ ընթացքում կարգապահությունն ու ապահովեց պարեկությունը քաղաքում: Մինչև հայտնի *իրադեի* հրապարակումը լուրեր էին տարածվում հայերի համընդհանուր կոտորածներ կազմակերպելու մասին:

Բարձր Դուռը հավաստիացումներ էր տալիս Տերրելին, որ այսուհետ երկրում խաղաղություն էր հաստատվելու: ԱՄՆ-ի ներկայացուցչի համոզմամբ՝ դա լինելու էր ժամանակավոր: Ազգամիջյան թշնամության և կրոնական ատելության պատճառով մշտական անվտանգության և կարգ ու կանոնի ապահովումն Օսմանյան կայսրությունում Տերրելը համարում էր անհնարին: Բացի այդ՝ հայ հեղափոխականները չեն հանգստանալու, քանի դեռ գոյություն ունի քրիստոնյա աշխարհի համակրանքը հայերի հանդեպ: Հեղափոխականները սպասելու են մի քանի ամիս՝ հետևելով բարեփոխումների իրականացման գործընթացին, իսկ այնուհետև շարունակելու են հրահրել պայքարն ու գրգռել քրիստոնյա աշխարհը:

Տերրելն առաջարկում էր, որ ԱՄՆ-ի կառավարությունն ապահովի իրեն հպատակության մասին պայմանագրով և դրանով իսկ խուսափի ապագա կոնֆլիկտի մեջ ներքաշված լինելու վտանգից:[1]

Հոկտեմբերի 24-ին Էրզրումում ԱՄՆ-ի հյուպատոսը գրում էր պետքարտուղարի տեղակալին, որ հավաստի աղբյուրներից լուրեր են ստացվել Բաբերդում և Երզնկայում տեղի ունեցած կոտորածների մասին: Ըստ հյուպատոսի՝ հավանականություն կար, որ կոտորածներ էին տեղի ունեցել շրջանի բոլոր քաղաքներում և գյուղերում: Էրզրումում վիճակը նույնպես շատ լարված էր, սակայն դեռևս անկարգություններ տեղի չէին ունեցել: «Իրականում ներկայիս հուզումները կարծես թե տարածվել են Հայաստանի բոլոր շրջանների վրա և երբ կստացվեն մանրամասներ, հնարավոր է հայտնաբերվի, որ հազարավոր հայեր են սպանվել», - եզրակացնում էր հյուպատոսը:[2]

[1] US Department of State. Papers Relating to the Foreign Relations of the United States, With the Annual Message of the President, Transmitted to Congress, December 2, 1895, Part 1, Washington: Government Printing Office, 1896, pp. 1325-1327.
[2] The National Archives and Records Service, Despatches from United States Consuls in Erzerum, 1895-1904, Roll 1, Vol. 1, August 5, 1895 – December 31, 1900, R.S. Chilton to Edwin Uhl, 1895, October 24, p. 1-3.

Հյուպատոսը տեղեկացնում էր պետքարտուղարությանը, որ հոկտեմբերի 8-23-ը նա մնացել էր Տրաբզոնի բրիտանական հյուպատոսությունում, որից հետո վերադարձել էր հյուրանոց: Նա Կոստանդնուպոլսից դեռևս տեղեկություններ չէր ստացել իշխանությունների կողմից տրված թույլտվության մասին, և, բացի դրանից, Տրաբզոն-Էրզրում ճանապարհը շարունակում էր մնալ ոչ անվտանգ: Իրեն առաջարկել էին նաև Էրզրում մեկնել Բաթումի և Թիֆլիսի վրայով, բայց այդ ճանապարհը նույնպես վտանգավոր էր, քանի որ իշխանությունները զինվորներ չէին տրամադրելու:[1]

Հոկտեմբերի 29-ին Տերրելն Օլնիին Էրզրումի և Մարզվանի միսիոներներից ստացված երկու նամակ էր փոխանցել, որոնք վկայում էին երկրում տիրող անհանգիստ իրավիճակի մասին: Առաջին նամակում նշվում էր, որ կայսրության արևելյան տարածքներում տիրող իրավիճակը շատ ծանր էր, *համիդիե* քրդերը երկրի իրական ղեկավարներն էին և քրիստոնյաների բախտը գտնվում էր նրանց ձեռքում: Ըստ նամակի հեղինակի՝ քրդերը հայտարարում էին, որ պատրաստ են ամբողջ երկիրը հեղեղել արյունով, եթե հայերին շնորհվեն հատուկ իրավունքներ:

Երկրորդ նամակում նկարագրվում էր Մարզվանի և շրջանի հայության ծանր վիճակը, նշվում էր, որ հայ հեղափոխականները նույնպես իրենց մեղքի մասն ունեն, քանի որ նման գործողությունների միջոցով նրանք փորձում էին գրգռել միսիոներներին և օտարերկրացիներին, ստիպել նրանց անհանգստացնող իրավիճակի մասին նամակներ գրել մայրաքաղաք և տարածել ողջ աշխարհով: Հայ հեղափոխականների գործողությունների «վտանգն» այն էր, որ շարունակում էր նամակի հեղինակը, որ օտարերկրյա քաղաքացիներն այստեղ հայտնվել էին չափազանց բարդ իրավիճակում, և եթե տերությունները շուտափույթ և գործուն միջոցներ չձեռնարկեն լարվածությունը կանխելու նպատակով, վիճակը շատ ավելի էր վատթարանալու: Նամակում նշվում էր, որ «եվրոպական տերությունների պատասխանատվությունը շատ մեծ է՝ նման իրավիճակ ստեղծելու համար, և մարդկությունը պահանջում է շուտափույթ կերպով վերջ դնել այս ահավոր լարվածությանը, որը տիրում է ողջ երկրում»:[2]

Հոկտեմբերի 29-ին միսիոներ Նեփը Բիթլիսից հաղորդում էր Տերրելին, որ միսիոներներն այստեղ գտնվում են մեծ վտանգի առջև: Ջարդը սկսվել էր հոկտեմբերի 25-ին, երբ կեսօրին մահմեդականները սկսել էին մեծ խմբերով դուրս գալ մզկիթներից և սպանել բոլոր պատահած հայերին, թալանել նրանց խանութները: Այս անարխիան շարունակվում էր շուրջ մեկ օր: Ըստ

[1] Նույն տեղում, էջ 3-4:
[2] US Department of State. Papers Relating to the Foreign Relations of the United States, With the Annual Message of the President, Transmitted to Congress, December 2, 1895, Part 1, Washington: Government Printing Office, 1896, pp. 1330-1331.

Նեփի՝ քաղաքում սպանվել էր շուրջ 500 հոգի: Միսիոները գրում էր, որ իշխանությունները չէին կարող ապահովել իր և ընտանիքի անվտանգությունը: Նա նամակ էր գրել նահանգապետին՝ հայցելով պաշտպանություն, սակայն վերջինս որևէ բան չէր արել այդ ուղղությամբ: Նահանգապետը պաշտպանություն էր խոստացել և հանգստացրել նաև ջարդից մեկ օր առաջ իր մոտ գնացած հայերի ներկայացուցիչներին: Միսիոները գրում էր նաև, որ սպանվել էր բողոքական համայնքի ինը անդամ, որոնցից մեկն ամերիկյան դպրոցի ուսուցիչ էր:[1]

Հաջորդ օրը Տերրելը հաղորդում էր Օլնիին, որ Բիթլիսում 700 մարդ էր սպանվել, ինչը Բարձր Դուռը բացատրում էր այն հանգամանքով, որ հայերն իբր հարձակում էին գործել մզկիթում գտնվող մահմեդականների վրա: Հեռագրում նշվում էր նաև, որ Մուշում մահմեդականները հայտարարել էին՝ որ եթե միսիոներները երեք օրվա ընթացքում չհեռանան քաղաքից, տեղի կունենա այն, ինչ տեղի ունեցավ Բիթլիսում: Մահմեդականները համոզված էին, շարունակում էր Տերրելը, որ Սասունի հայությանն օգնություն բաժանող ամերիկացիներն իր զինում էին նրանց: Ըստ Տերրելի՝ իրականում ամենուրեք տեղի էր ունենում մահմեդական բնակչության զինում:[2]

Հոկտեմբերի 24 և 30-ին «Մարբլհեդի» հրամանատար Չարլզ Օ'Նիլը զեկուցում էր փոխծովակալ Թոմաս Սելֆրիջին Մերսին կատարած իր այցելության մասին: Նա հանդիպել էր տեղի իշխանությունների ներկայացուցիչների, Բեյրութում ԱՄՆ-ի հյուպատոսի հետ, մեկնել էր Տարսոն, այցելել Ս.Պողոս ամերիկյան հաստատության քոլեջը, որտեղ սովորում էին 70 ուսանողներ, այնուհետև մեկնել Ադանա, հանդիպել իշխանություններին և միսիոներներին, այցելել ամերիկյան դպրոց: Ադանայի հայ եպիսկոպոսը փորձել էր հանդիպել նրան, սակայն նա մերժել էր, որպեսզի չառաջացնի իշխանությունների մոտ որևէ կասկած:[3] Ադանայում իշխանությունները տեղեկացրել էին Օ'Նիլին, որ հայերը մի շարք անկարգություններ էին կազմակերպել, մասնավորապես Մարաշում: Ադանայում Օ'Նիլն առաջարկել էր միսիոներներին մեկնել ծովափնյա շրջան, որտեղ նրանք իրենց ավելի ապահով կարող են զգալ:[4]

Նոյեմբերի 2-ին Օլնին տեղեկացնում էր Տերրելին, որ Բեյրութում ԱՄՆ-ի հյուպատոս Գիբսոնի զեկույցում արտահայտված մտավախությունը քրիստոնյաների սպասվող ջարդի և միսիոներների անվտանգության կապակցությամբ հիմք էր հանդիսացել, որ ԱՄՆ-ի կառավարությունը Սիրիա ռազմանավ ուղարկելու որոշում կայացնի: Այդ առաքելությունը հանձնարարված էր փոխծովակալ Սելֆրիջին, որը պետք է ուսումնասիրեր իրավիճակը տեղում և զեկուցեր կառավարությանը:[1]

Նույն օրը Հալեպում հյուպատոսական գործակալ Ֆ. Փոչը հաղորդում էր Տերրելին, որ մի քանի աղբյուրից տեղեկացել էր այն մասին, որ Մարաշում, Զեյթունում և Ուրֆայում տեղի էին ունեցել լուրջ անկարգություններ, կան զոհվածներ և վիրավորներ, Մարաշի քրիստոնյաները չորս օր է, ինչ փակվել էին իրենց տներում, ԱՄՆ-ի քաղաքացիները պաշտպանված էին, պահեստի մոբիլիզացիան և մեկնումը դեպի Զեյթուն մեծ խուճապ էր առաջացրել Հալեպում: Շուկայում մեծ քանակությամբ վաճառքի հանված զենքը բռնագրավելուց հետո կրկին խուճապ էր առաջացել քաղաքում, հինգ հազար հոգուց բաղկացած ամբոխը փորձել էր հարձակվել քրիստոնյաների վրա, սակայն քաղաքի պարետ Էդհեմ փաշայի միջամտության շնորհիվ ամբոխը կանգնեցվել էր: Փոչը նշում էր, որ «Մարբլհեդի» ներկայությունն Ալեքսանդրեթում կարող էր մեծ ազդեցություն ունենալ ԱՄՆ-ի քաղաքացիների անվտանգությունն ապահովելու համար:

Դեռևս հոկտեմբերի 28-ին Փոչը տեղեկություն էր ստացել ոմն Ա. Ֆալլերից, որ քրիստոնյայի և մահմեդականի միջև ծագած վեճը, որի ընթացքում վերջինս մահացել էր, առաջացրել էր մահմեդականների զայրույթը, որի արդյունքում քրիստոնյաներին վտարել էին շուկայից, ծեծել էին շատերին, քրիստոնյաները չէին կարողանում դուրս գալ փողոց: Անկարգություններ էին տեղի ունեցել նաև Կարամանում, որի ժամանակ ծեծվել և վիրավորվել էին բազմաթիվ հայեր, սակայն որևէ մահմեդական չէր ձերբակալվել, Մարաշի և Այնթապի ճանապարհին գտնվող մահմեդական գյուղերի բնակիչներն այն համոզմանն էին, որ «գյավուրներին» սպանելու ժամանակը եկել է:[2] Նույն աղբյուրը հաղորդում էր, որ Ուրֆայի քրիստոնյաներն ամբողջությամբ ենթարկվել էին թալանի, իսկ Զեյթունի համար ասում էին, որ զեյթունցիները գրավել էին բերդը, զինվորները ոմբակոծում էին քաղաքը: Այնթապում նույնպես վիճակը լարված էր:[3]

Նոյեմբերի 7-ին Տերրելը տեղեկացնում էր Օլնիին, որ Հալիլ Ռիֆաթ փաշան[4] նշանակվել էր մեծ վեզիր, իսկ Ահմետ Թևֆիկ փաշան[5] արտաքին գործերի նախարար: Տերրելը գրում էր նաև, որ, իր տեղեկությունների համաձայն, Դիարբեքիրում սպանվել էր 5 հազար մարդ, որոնցից 2 300-ը մահ-

[1] Նույն տեղում, էջ 1338:
[2] Նույն տեղում, էջ 1331:
[3] Նույն տեղում, էջ 1353-1354:
[4] Նույն տեղում, էջ 1355:

[1] Նույն տեղում, էջ 1334-1335:
[2] Նույն տեղում, էջ 1347:
[3] Նույն տեղում, էջ 1348:
[4] **Հալիլ Ռիֆաթ փաշա** (1820-1901) – Օսմանյան կայսրության պետական գործիչ, ներքին գործերի նախարար (1893-1895), մեծ վեզիր (1895-1901):
[5] **Ահմետ Տևֆիկ փաշա** (1845-1936) – Օսմանյան կայսրության պետական գործիչ և դիվանագետ, դեսպան Հռոմում, Վիեննայում, Պետերբուրգում, Աթենքում, Բեռլինում, արտաքին գործերի նախարար (1899-1909), մեծ վեզիր (1909, 1918-1919, 1920-1922):

մեղականներ էին, թեև Բարձր Դռան այդ տվյալները չափազանցված էր համարում: Ըստ դիվանագետի՝ մեկ ամսվա ընթացքում երկրում ընդհանուր առմամբ սպանվել էր 10 հազար մարդ, կանանց և երեխաների սպանության մասին տեղեկություններ չկան, միսիոներների շարքերում դեռևս կորուստ արձանագրված չէր, սակայն եթե կենտրոնական իշխանությունները կորցնեին հսկողությունը իրավիճակի նկատմամբ, միսիոներների կյանքը կարող էր վտանգվել: Տերրելն առաջարկում էր ուժեղացնել ամերիկյան ռազմածովային ուժերի ներկայությունը Միջերկրականի արևելքում:[1] Օլնիի հարցումին ի պատասխան երկու օր անց Տերրելը գրում էր, որ ռազմանավեր էին անհրաժեշտ Բեյրութում, Ալեքսանդրեթում, Մերսինում և Կոստանդնուպոլսում, որտեղ բոլոր տերություններն ունեն մեկական ռազմանավ: Ըստ միսիոներներից ստացված տեղեկատվության՝ «Մարբլհեդ» ռազմանավի ներկայությունն Ադանայում կանխել էր նախապատրաստվող հայերի կոտորածը:[2]

Նոյեմբերի 12-ին Տերրելը տեղեկացնում էր Օլնիին, որ Մալաթիայում մեծ ջարդ էր տեղի ունեցել: Դիվանագետը համոզված էր, որ ներկայիս կառավարությունը, նույնիսկ եթե շատ ցանկանար, չէր կարող վերականգնել կարգ ու կանոնը երկրում: Համաձայն միսիոներներից ստացվող տեղեկատվության՝ շարունակվող կոտորածների արդյունքում շուրջ 100 հազար հայ կանայք և երեխաներ գտնվում էին չքավորության մեջ:[3]

Հաջորդ օրը Տերրելը գրում էր, որ Սրվազում հայերի կոտորած էր սկսվել և Բարձր Դռան այդ կապակցությամբ խոստում էր տվել ապահովել միսիոներների անվտանգությունը: Ըստ Տերրելի՝ Բարձր Դռան հրահանգով Հաճնում և Ուրֆայում տեղի ունեցած կոտորածների ընթացքում զինվորներն ապահովել էին միսիոներների պաշտպանությունը:[4]

Նոյեմբերի 14-ին Տերրելը նամակ էր հղել Օսմանյան կայսրության արտաքին գործերի նախարարին՝ տեղեկացնելով նրան, որ Հաճնի *կայմակամը* սպառնում էր քաղաքի ամերիկյան դպրոցում աշխատող երեք ամերիկացի կանանց: Շնորհակալություն հայտնելով կոտորածների ընթացքում միսիոներներին ցուցաբերած պաշտպանության համար՝ Տերրելը միաժամանակ նախազգուշացնում էր, որ եթե ամերիկացիները վնաս կրեն կամ վիրավորվեն ամբոխի կողմից, նա ԱՄՆ-ի կառավարության կողմից «պահանջելու է *կայմակամի* գլուխը»:[5]

[1] Նույն տեղում, էջ 1335-1336:
[2] Նույն տեղում, էջ 1336:
[3] Նույն տեղում, էջ 1337:
[4] Նույն տեղում, էջ 1339:
[5] Նույն տեղում, էջ 1339-1340:

Հաջորդ օրը Տերրելը հաղորդում էր, որ, Ջուեթի տեղեկատվության համաձայն, Սրվազում մի քանի օրվա ընթացքում սպանվել էր 800 հայ և 10 թուրք: Ֆրանսիայի հյուպատոսը հաղորդում էր, որ Գյուրունում սպանվել էր 4 հազար հոգի, իսկ միսիոներ Բարնըմը հեռագրում էր, որ Խարբերդում միսիոներների ութ տուն էր այրվել, մնացածը թալանվել էին, սակայն միսիոներները ողջ էին մնացել:[1] Անմիջապես նույն օրը Օլնին հանձնարարում էր Տերրելին դիմել Բարձր Դռանը՝ փոխհատուցում պահանջելու նպատակով: Պետքարտուղարը հարցնում էր Տերրելին, թե արդյո՞ք Ռուսաստանի կառավարությունը կհամաձայնի ռազմանավեր ուղարկել Տրաբզոն, Սամսուն և Սև ծովի մյուս նավահանգիստները՝ ամերիկյան միսիոներներին պաշտպանելու նպատակով:[2] Հաջորդ օրը Տերրելը պատասխանում էր, որ Ռուսաստանը միայն մեկ ռազմանավ ունի ներկայումս, որն արդեն գտնվում էր Տրաբզոնում: Ռուս դեսպանն ասել էր Տերրելին, որ պատրաստ է նոր ռազմանավեր ուղարկել, եթե ջարդերը վերսկսվեն:[3]

Ստանձնելով ամերիկյան նավատորմի եվրոպական կենտրոնակայանի հրամանատարի պաշտոնը Մարսելում՝ 1895 թ. նոյեմբերի 15-ին փոխծովակալ Թոմաս Սելֆրիջը նամակ էր հղել Տերրելին՝ առաջարկելով դիմել Օսմանյան կայսրության կառավարությանը, որպեսզի վերջինս, նկատի առնելով երկրում շարունակվող հուզումները, իր համաձայնությունը տա էսկադրոնի ամենափոքր ռազմանավի (2 հազար տոննա)՝ «Մարբլհեդի» մուտքը Կոստանդնուպոլիս ապահովելու համար:[4] Նոյեմբերի 20-ին Տերրելը պատասխանում էր Սելֆրիջին, որ դիմել էր Բարձր Դռանը՝ թույլտվություն ստանալու համար: Միաժամանակ նա նշում էր, որ իրավիճակը մայրաքաղաքում անհանգիստ էր, «Ասիայի ներքին շրջաններից ստացվող լուրերը սարսափելի են»: Ըստ Տերրելի՝ մինչև եվրոպական տերությունները որոշում կայացնեն ռազմանավերը Դարդանել մտցնելու վերաբերյալ, քրիստոնյաների վիճակը չափազանց ծանր կարող է դառնալ: Տերրելը, գրում էր, որ վստահաբար ծովափնյա շրջաններից հեռու գտնվող քաղաքներում սպանվել էր 20 հազարից ավելի մարդ, իսկ Սև ծովից դեպի Կասպից ծով ընկած շրջաններն ընդհանրապես ամայացած են:[5]

Հաջորդ օրը Տերրելը գրում էր Սելֆրիջին, որ Բարձր Դռան մերժել էր ամերիկյան կողմի խնդրանքը, քանի որ այն իբր կարող էր նախադեպ հանդիսանալ մյուս տերությունների համար: Տերրելն առաջարկում էր կապի մեջ մնալ ներկայացուցչության հետ և պարբերաբար տեղեկացնել Արևել-

[1] Նույն տեղում, էջ 1340:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում, էջ 1341:
[4] Նույն տեղում, էջ 1383:
[5] Նույն տեղում, էջ 1383-1384:

յան Միջերկրականում ռազմանավերի տեղակայման մասին: Նա հայտնում էր նաև օսմանյան իշխանությունների խնդրանքի մասին՝ չօժանդակել ԱՄՆ-ի անձնագրեր կրող հեղափոխականներին մուտք գործել Օսմանյան կայսրություն Կիպրոսից:

ԱՄՆ-ի պետքարտուղար Օլնին դեկտեմբերի 5-ին իր դժգոհությունն էր հայտնում Տերրելին, որ վերջինս, առանց պետքարտուղարությանը տեղեկացնելու, ռազմանավի մուտքի համար հայտագիր էր ներկայացրել Բարձր Դռանը: Տերրելը պատասխանում էր, որ ինքը դա արել էր փոխծովակալ Սելֆրիջի առաջարկով՝ համոզված լինելով, որ նա համապատասխան լիազորություններ ունի Վաշինգտոնից: Ավելի ուշ Տերրելը մեկ անգամ ևս դիմեց Բարձր Դռանը՝ ԱՄՆ-ի «Բենկրոֆտ» ռազմանավի համար նեղուցներ մուտք գործելու թույլտվություն ստանալու նպատակով: 1896 թ. հունվարի 16-ին Մավրոյենի բեյը տեղեկացնում էր պետքարտուղարությանը, որ Բարձր Դուռը մերժել էր նաև այդ խնդրանքը: Նա գրում էր, որ օսմանյան կառավարությունն ամեն ինչ անում էր ԱՄՆ-ի հետ հարաբերություններն ավելի ամրապնդելու համար, սակայն միայն Փարիզի պայմանագիրը ստորագրած տերություններն իրավունք ունեն համապատասխան դեսպանությունների խնդրանքով ռազմանավեր ուղարկել Կոստանդնուպոլիս:

Չնայած պաշտոնական մերժումներին՝ ամերիկյան ռազմանավերը հայկական ջարդերի ժամանակ շարունակում էին մուտք գործել օսմանյան տարածքային ջրեր, մասնավորապես 1895 թ. նոյեմբերի 27-ին «Մինեապոլիս» ռազմանավը մեկնեց Զմյուռնիա, որտեղ հանդիպեց «Մարբլհեդին» և «Սան Ֆրանցիսկոյին»:[1]

Նոյեմբերի 17-ին Տերրելը գրում էր Օլնիին, որ, համաձայն Ջուեթից ստացված տեղեկատվության, հայերի կոտորածներ էին սկսվել նաև Մարզվանում և Ամասիայում: Արյունալի ջարդ էր սկսվել Այնթապում, վտանգ էր սպառնում նաև Հալեպի քրիստոնյաներին:[2]

Նույն օրը Մավրոյենի բեյը գրում էր Օլնիին, որ հեռագիր էր ստացել Բարձր Դռնից այն մասին, որ ամերիկացիների պաշտպանությունը երկրի ողջ տարածքում ապահովված էր, և որ Բարձր Դռան ներկայացուցիչը հանձնարարություն էր ստացել անելու ամեն ինչ՝ ԱՄՆ-ի մամուլում տպագրվող նյութերը կանխելու կամ հերքելու համար:[3]

Նոյեմբերի 18-ին Տերրելը զեկուցում է պետքարտուղարին, որ, միսիոներ Բարնըմի տեղեկությունների համաձայն, Խարբերդում ամերիկյան ուղեցվածքի վնասը կազմում էր շուրջ 100 հազար դոլար: Ըստ Տերրելի՝ Բարձր Դուռը համաձայնել էր փոխհատուցել վնասը: Միաժամանակ Բարնըմը տեղեկացնում էր, որ միսիոներներից մեկի տանը ռումբ էր պայթել, զինվորներն օժանդակել էին հարձակվող ամբոխին և նույնիսկ մասնակցել թալանին, թեև միսիոներից ոչ մեկը չէր տուժել:[1] Պետքարտուղար Օլնիին այդ դեպքերի կապակցությամբ Բոստոնից նամակ էր գրել նաև «Ամերիկյան խորհուրդի» արտաքին գործերի քարտուղար Ջաքսոն Սմիթը: Ողջ պատասխանատվությունը կատարվածի համար տեղական իշխանությունների վրա դնելով, նա դիմում էր ԱՄՆ-ի կառավարությանը՝ օսմանյան կառավարությունից ամերիկյան միսիոներների շինությունների վերանորոգումը պահանջելու խնդրանքով:[2]

Տերրելն անմիջապես նամակ էր գրել Թևֆիկ փաշային, որում ավելի լուրջ պաշտպանություն էր պահանջում ամերիկացիների և նրանց շահերի համար: Թվարկելով Բարձր Դռանը ներկայացրած նման բազմաթիվ խնդրանքներն ու պահանջները՝ Տերրելը միաժամանակ նշում էր, որ թեև ԱՄՆ-ի կառավարությունը խուսափում էր որևէ միջամտությունից Օսմանյան կայսրության ներքին գործերին, սակայն մտահոգությամբ հետևում էր վերջին իրադարձությունների միտումներին: Բարեփոխումների իրագործման մասին հայտարարությունից անմիջապես հետո (21 հոկտեմբերի) Տերրելը դիմել էր Բարձր Դռանը կայսրության ողջ տարածքով մեկ ամերիկացիների պաշտպանությունն ապահովելու խնդրանքով, սակայն իշխանությունները չկարողացան ապահովել ամերիկյան ունեցվածքի պաշտպանությունը Խարբերդում տեղի ունեցած իրադարձությունների ընթացքում: Նա հույս էր հայտնում, որ սուլթանի բանակը դեռևս գտնվում էր կառավարության հսկողության տակ և պահանջում, որպեսզի թուրք զինվորներն ապահովեն յուրաքանչյուր ամերիկացու և իրեն ունեցվածքի պաշտպանությունը: Տերրելը պահանջում էր նաև փոխհատուցել Խարբերդում ամերիկյան ունեցվածքի վնասը:[3]

1895 թ. հոկտեմբերի 22-ին Տերրելը գրում էր Օլնիին, որ Բիթլիսի միսիոներները զինվորների ուղեկցություն էին խնդրում՝ Վան տեղափոխվելու նպատակով: Տերրելը այդ կապակցությամբ համապատասխան դիմում էր ներկայացրել Բարձր Դռանը: Միաժամանակ նա պետքարտուղարից ռազմանավ էր հայցում՝ Զմյուռնիա ուղարկելու համար:[4]

Նոյեմբերի 21-ին Օլնին պատասխանում էր Ջաքսոն Սմիթին, որ ԱՄՆ-ի կառավարությունն ու իր ներկայացուցիչը Կոստանդնուպոլսում ամեն ինչ

[1] Howard, Harry N., նշվ. աշխ., էջ 23-24:
[2] US Department of State. Papers Relating to the Foreign Relations of the United States, With the Annual Message of the President, Transmitted to Congress, December 2, 1895, Part 1, Washington: Government Printing Office, 1896, pp. 1341.
[3] Նույն տեղում:

[1] Նույն տեղում, էջ 1341-1342:
[2] Նույն տեղում, էջ 1349-1350:
[3] Նույն տեղում, էջ 1343:
[4] Նույն տեղում, էջ 1344:

անում են, որպեսզի սուլթանական կառավարությունն ապահովի միսիոներների անվտանգությունը, ռազմանավեր են ուղարկված թուրքական տարածքային ջրերը՝ խուսափելու համար որևէ միջադեպից:[1]

Հաջորդ օրը Մավրոյենի բեյը գրում էր Օլնիին, որ ստացել էր վերջինիս նամակը և կից նաև Տերրելի հեռագիրը, համաձայն որի՝ Խարբերդում ամերիկյան միսիոներներին պատկանող երկու շինություն էր թալանվել, ինչպես նաև տեղի էր ունեցել քրիստոնյաների ջարդ: Մավրոյենի բեյն այդ կապակցությամբ նշում էր, որ որևէ տեղեկություն չունի այդ մասին Բարձր Դռնից՝ ճշտելու համար Տերրելի փաստերը, մասնավորապես, երկրորդ կետի վերաբերյալ: Միաժամանակ նա նշում էր, որ չնայած «հայ կոմիտեների հեղափոխական ինտրիգներին», որոնց հաջողվել էր «կրակի մեջ առնել մի քանի նահանգ» և չնայած այս մի տարվա ընթացքում նրանց կողմից հրահրվող սադրանքներին, որևէ օտար քաղաքացի կամ ամերիկացի միսիոներ չէր տուժել այս ժամանակահատվածում: Ըստ Մավրոյենի բեյի՝ փաստն այն է, որ կայսերական իշխանությունները պարտավոր էին պաշտպանել նրանց անվտանգությունը հայ հանցագործներից:[2]

Նոյեմբերի 19-ին ամերիկացի միսիոներ, պատվելի Գեյթսը հաղորդում էր Խարբերդում տեղի ունեցած կոտորածների և թուրքերի ու մահմեդականների կողմից միսիոներական շինությունների թալանի ու հրկիզման մասին: Գեյթսը գրում էր, որ Կոստանդնուպոլսի դեպքերից հետո սկսվեց անհանգստություն և համատարած վախի մի ժամանակաշրջան: Քրիստոնյաները սարսափահար վիճակի մեջ էին, քանի որ մահմեդականները կոտորած էին պատրաստում, ինչի մասին վկայում էր այն փաստը, որ թուրք աղաներին կառավարական պահեստներից զենք էր բաժանվում: Վիճակն ավելի սրվեց հոկտեմբերի 24-ին. հայերը փակեցին իրենց խանութներն ու գնացին իրենց տները: Միսիոներ Բարնըմի միջամտության շնորհիվ զինվորներ ուղարկվեցին քաղաք՝ մահմեդականների կողմից անկարգությունները կանխելու նպատակով: Բարնըմը և բողոքականների ղեկավարները փորձում էին հանգստացնել քրիստոնյաներին, սակայն նրանք շարունակում էին վախենալ և դուրս չգալ տներից: Շուտով սկսեցին տեղեկություններ տարածվել Երզնկայում, Բիթլիսում և Դիարբեքիրում տեղի ունեցած կոտորածների մասին: Դիարբեքիրում և Մալաթիայում հայերը փորձել էին դիմադրել, բայց շատ տեղերում զինված չէին և նախընտրում էին լքել իրենց տներն ու փախչել:

1895 թ. նոյեմբերի սկզբին հավաստի տեղեկություններ ստացվեցին Դերսիմի քրդերի կողմից Խարբերդի շրջակայքի բոլոր գյուղերի հրկիզման

[1] Նույն տեղում, էջ 1350:
[2] Նույն տեղում, էջ 1346:

և թալանի մասին: Նոյեմբերի 5-ին զինվորները թույլ չտվեցին քրդերին մտնել քաղաք: Երբ թուրքերը կրակ բացեցին քրդերի վրա, նրանք սկսեցին բղավել, թե զինվորները պետք է պաշտպանեն իրենց, այլ ոչ թե կրակեն: Քրդերին միանում էին նաև թուրքերը, որոնք քրիստոնյաներին հնարավորություն էին տալիս պահպանելու կյանքը, եթե նրանք դառնան մահմեդականներ:

Նոյեմբերի 10-ին Խարբերդի մահմեդականների շրջանում լուրեր տարածվեցին, որ ամերիկացիների մոտ զենք կա, որը նրանք իբր բաժանում էին քրիստոնյաներին: Բարնըմն անձամբ գնացել էր քաղաքապետարան և հանձնել ունեցած զենքը՝ հինգ ատրճանակ: Մի քանի ղեկավար քրիստոնյաներ պաշտոնյաների ուղեկցությամբ այցելեցին քրիստոնյաների տներն ու նրանցից վերցրին եղած զենքը:[1]

Այսպիսով՝ քրիստոնյաները մնացին տեղական իշխանությունների հույսին: Գեյթսը նշում էր, որ չի լսել մի դեպք, որ քրիստոնյաները դիմադրեն կամ կրակեն մահմեդականների վրա: Նոյեմբերի 11-ին քրդերը հրկիզեցին Հուսեյնիկ մեծ գյուղը և կոտորեցին բնակիչներին: Այնուհետև դանակներով և փայտերով զինված շուրջ 800 քրդեր և թուրքեր մոտեցան քաղաքին ու սկսեցին բանակցել զինվորների հետ: Այնուհետև զինվորները, որոնք նաև թնդանոթ ունեին, նահանջեցին՝ թույլ տալով ամբոխին մոտենալ քրիստոնյաների թաղամասին: Ակնհայտ էր, որ զինվորները օդ էին կրակում, այլ ոչ թե իրապես դիմադրում: Ամբոխը սկզբից այրեց հայկական դպրոցն, ու թալանը սկսվեց: Թալանը կատարվում էր հիմնականում քաղաքում բնակվող թուրքերի կողմից: Թալանելուց հետո նրանք հրկիզում էին տները: Մեծ թվով քրիստոնյաներ պատսպարվեցին ամերիկյան շենքերում: Գեյթսը հետևում էր իրադարձություններին իր տան պատուհանից: Նա նաև նկատել էր, որ զինվորները ոչինչ չէին անում միսիոներների շինությունները պաշտպանելու համար: Շուտով ամբոխը ջարդեց միսիոներներ Բրաունի և Ալլենի տների դարպասները: Այնուհետև կրակոցներ սկսվեցին Գեյթսի տան վրա այնտեղից, որտեղ որ զինվորներն էին կանգնած: Դեպի շրջակա լեռները մի խումբ քրիստոնյաներ փորձեցին փախչել, որոնց թվում էին նաև Բրիտանիայի վերջերս մահացած փոխհյուպատոս Թոմաս Բոյաջյանի այրին, որդին և դուստրը: Այս փախստականներին զինվորները կանգնեցրեցին, ասելով, որ թույլ կտան գնալ, եթե նրանք ընդունեն մահմեդականություն: Նրանք ստիպված վերադառնում են ամերիկյան աղջիկների դպրոցի շենքը: «Մենք բոլորս հավաքվել էինք նույն դպրոցի բակում և պատրաստ էինք մահանալ», - գրում էր Գեյթսը:[2] Շուտով պատուհաններից սկսեց ծուխ գալ և մի-

[1] Նույն տեղում, էջ 1370-1371:
[2] Նույն տեղում, էջ 1372-1373:

սիոներները որոշեցին շարժվել դեպի տղաների քոլեջի շենքը: Մի քուրք մի. քանի անգամ կրակեց ատրճանակից նրանց վրա, բայց այդպես էլ չկարողացավ դիպչել: Նրանց աչքերի առջև թալանվեցին շենքերի ունեցվածքը: Այդ ընթացքում տասը զինվոր եկավ՝ նրանց իբր պաշտպանելու նպատակով: Շատ իրեր հաջողվեց տեղափոխել ծանոթ և վստահելի քուրքերի տները: Իրենց այցելեց քաղաքապետը՝ պնդելով, որ նրանք թողնեն գնան, քանի որ շենքը հրկիզվելու է: Միսիոներները հրաժարվեցին դա անել երկրորդ անգամ՝ ասելով, որ նախընտրում են մահանալ տեղում: Բացի դրանից՝ շենքում փախստականներ կային, և եթե միսիոներները հեռանային, նրանց կոտորելու էին: Ժխտական պատասխան ստանալուց հետո քուրք զինվորները հեռացան: Այնուհետև միսիոներներին մոտ եկավ չերքեզ, Մեհմետ Ալի բեյը, որը միակն էր, որ օգնեց նրանց՝ համոզելով իշխանություններին վերադարձնել զինվորներին: Նա հրկիզումից փրկեց շենքը, ինչպես նաև շուրջ 450 պատսպարված փախստականների կյանքը:

Նոյեմբերի 12-ին քրդերը կրկին երևացին, սակայն զինվորները կրակ բացեցին նրանց գլուխների վրայով, և նրանք ցրվեցին: Զինվորներն ամերիկացիներին ասում էին, որ իրենք իրավունք չունեն սպանելու մահմեդականներին: Սակայն ճգնաժամը չավարտվեց, քանի որ քաղաքի քուրքերը շարունակում էին սպառնալ, որ սպանելու են միսիոներներին, եթե նրանք դուրս չգան շենքից: Չերքեզ Մեհմետը կրկին փրկեց նրանց: Վիճակը շարունակում էր բարդ մնալ. չկար քնելու տեղ, սնունդ, հագուստ:

Գեյթսը շարունակում էր, որ քրիստոնյաները շատ տեղերում փրկվեցին միսիոներների ներկայության հետևանքով, քանի որ նրանց առջև պայման էր դրված՝ դառնալ մահմեդական:[1] Նա գրում էր, որ թալանի և հրկիզման հետևանքով միսիոներները կորցրին քառասուն տարվա ընթացքում կուտակած իրենց ունեցվածքն ու գույքը, և ամբողջ պատասխանատվությունն այդ հանցագործության համար ընկնում էր օսմանյան կառավարության վրա:

Իր նամակին Գեյթսը կցել էր միսիոներներին և քոլեջին հասցված վնասի մասին տեղեկատվություն: Ըստ այդ ցանկի՝ շինություններին հասցրված վնասը կազմել էր 43 700 դոլար, միսիոներները կորցրել էին 11 608 դոլարի սարքավորումներ և տարբեր օժանդակ նյութեր, միսիոներների անձնական կորուստը կազմել էր 32 677 դոլար: Ընդհանուր վնասը կազմում էր 87 985 դոլար:[2]

Ի լրումն Գեյթսի նամակի՝ նոյեմբերի 21-ին Բարնըմը նամակ էր գրել Տերրելին նույն դեպքերի մասին: Ականատեսների վկայությամբ՝ հարձակումը հիմնականում ուղղված էր Խարբերդի այն թաղամասի դեմ, որտեղ միսիոներներն էին ապրում և աշխատում: Մի կին լսել էր, որ հրամանատարը զինվորներին հրահանգել էր թնդանոթն ուղղել ոչ թե քրդերի դիրքերի, այլ քրիստոնյաների դեմ: Թնդանոթի մի քանի արկ հետագայում հայտնաբերվել էր հրկիզված շենքերում, զինվորները փաթաթում էին դրանք նավթով թրջված շորերով և կրակում շենքերի ուղղությամբ: Ականատեսների վկայությունների համաձայն քրդերին ղեկավարում էին քաղաքի ուլեմաները, որոնք հատուկ ուղղություն էին ցույց տալիս նրանց, մասնավորապես քրիստոնյաների տները հայտնաբերելու և թալանելու հարցում: Նահանգապետը ոչինչ չարեց միսիոներներին պաշտպանելու համար, մինչև նրանց չվտարեցին հրկիզված շենքերից: Զինվորները, փաստորեն, միայն հետևում էին, որ քրդերն ու թուրք բնակչությունը սահմանված չափը չանցնեն: Ըստ Բարնըմի՝ իշխանությունները հստակ ծրագրում էին հանել միսիոներներին տներից, որ թույլ տան դրանք հրկիզել:[1]

Նոյեմբերի 27-ին Տերրելը հաղորդում էր Օլնիին, որ նոյեմբերի 19-ին Մարաշում հրդեհել էին միսիոներների գիտության դպրոցը, սակայն միսիոներները չէին տուժել: Այնթապի քոլեջը պաշտպանված էր, իսկ ըստ միսիոներ Բարնըմի՝ Խարբերդում առանձին քրդերի և քաղաքացիների կողմից հրդեհվել էին միսիոներներ Ալլենի, Բրաունի, Ուիլլերի տները, կանանց տունը, մատուռը, կացարանը, աղջիկների աստվածաբանական դպրոցը, ճեմարանը՝ 44 000 դոլարի արժողությամբ: Անձնական ունեցվածքի վնասը կազմում էր 33 000, իսկ սարքավորումների՝ 11 000 դոլար: Ներկայումս միսիոներների մնացած շինությունները պաշտպանում էին 100 զինվորներ:[2] Նույն օրը Տերրելը դիմում էր արտգործնախարար Թևֆիկ փաշային՝ պահանջելով փոխհատուցել միսիոներների կրած կորուստը Խարբերդում և Մարաշում:[3]

Նոյեմբերի 27-ին միսիոներ Սոնդերսը գրում էր Տերրելին Այնթապից, որ ջարդն այստեղ սկսվել էր շաբաթ օրը՝ նոյեմբերի 16-ին: Փորձ էր արվել հարձակվելու դպրոցի վրա, սակայն զինվորներն այն պաշտպանել էին: Նշվում էր, որ մահմեդական բնակչությունը տրամադրված էր ամերիկացիների դեմ, սակայն տեղական իշխանությունները, մասնավորապես կայմակամը, չափազանց բարյացակամ գտնվեցին: Միսիոները գրում էր, որ թե ինչ արել են զինվորները քաղաքում, ամերիկացիների գործը չէ, սակայն կարևորը, որ նրանք իրենց պաշտպանել են: Նշում էր, թե ինչքան են ամերիկացիներին օգնել իրենց երկու մահմեդական հարևանները: Քաղաքում սպանվել էր 300 հոգի, տների մեկ չորրորդը՝ հիմնականում թալանվել էր:[4]

---

[1] Նույն տեղում, էջ 1373-1375:
[2] Նույն տեղում, էջ 1376-1379:

[1] Նույն տեղում, էջ 1380-1381:
[2] Նույն տեղում, էջ 1356:
[3] Նույն տեղում, էջ 1357-1358:
[4] Նույն տեղում, էջ 1388-1390:

Նոյեմբերի 29-ին Տերրելը փոխանցում էր Օլնիին պատվելի Լ. Օ. Լիից ստացված նամակը Մարաշից այն մասին, որ Զեյթունի հայերն ապստամբել էին. նրանք գրավել էին ամրոցը, որը գտնվում էր 15 հազարանոց քաղաքի դիմացը: Նրանց ղեկավարը ռուսահայ էր, գրում էր Լիին, ինչպես նաև տեղեկություն կար, որ հնչակյան կոմիտեից ցուցում էր եկել ավելին չձեռնարկել, մինչև իշխանությունները չընդունեն բարեփոխումների ծրագիրը: Ներկայումս 15-20 հազարանոց զորք էր շարժվում դեպի Զեյթուն, որը հրաման էր ստացել քանդել քաղաքը և հավասարեցնել այն հողին:[1]

Դեկտեմբերի 3-ին Տերրելը հաղորդում էր, որ, համաձայն Բարձր Դռնից ստացված տեղեկատվության, հայ հեղափոխականները հատուկ հագնում էին ուլեմաների՝ մահմեդական կրոնականների հագուստ, որպեսզի վնաս հասցնեն միսիոներներին: Նման վտանգ, ըստ Տերրելի, գոյություն ուներ Ադանայում և Հալեպում, սակայն Բիթլիսում այն գալիս էր թուրքերի կողմից:[2]

Նույն օրը Տերրելը գրում էր, որ Կեսարիայում և Մարզվանում բնակվող միսիոներներից հաղորդագրություններ էր ստացել ջարդի և անկարգությունների մասին: Նոյեմբերի 19-ին միսիոներ Դոդդը հաղորդում էր Տերրելին, որ քրդերի ու չերքեզների խմբերը հարձակում էին գործել Սըվազի նահանգի ամենամեծ հայկական գյուղերից մեկի՝ Գեմերեկի վրա՝ տանելով իրենց հետ բոլոր ձիերին և անասուններին: Գեմերեկի շուրջ գտնվող ևս 7 գյուղեր ենթարկվել էին հարձակման, սակայն տեղացի թուրքերը օգնել էին հայերին: Գյուղացիները մարդ էին ուղարկել կայմակամի մոտ՝ հայցելով օգնություն: Վերջինս ասել էր. «Պաշտպանվեք ինքներդ, քանի որ շրջանում զինվորներ չկան»:

Մարզվանից ստացված զեկույցում նշվում էր, որ քրիստոնյաները գտնվում էին սարսափահար վիճակում, քանի որ թուրքերն ամենուրեք հայտարարում էին, որ իրավունք են ստացել նոյեմբերի 15-ին չորս ժամվա ընթացքում սպանել հայերին: Հայերն օգնություն էին հայցում *կայմակամից*, սակայն նա համոզում էր նրանց, որ նրանց որևէ վտանգ չի սպառնում: Նույն օրը հայերին սկսեցին սպանել իրենց խանութներում, իսկ ունեցվածքը թալանել: Կեսօրին, երբ որ բոլոր մահմեդականները գտնվում էին մզկիթներում, լուր էր տարածվել, որ հայերը հարձակվել էին մզկիթներից մեկի վրա: Բոլոր մահմեդականները դուրս են վազել, զինվել և սկսել սպանել պատահած հայերին, թալանել նրանց խանութները: Գրեթե բոլոր խանութները թալանվել էին: Թալանին մասնակցում էին նաև շրջակա թուրքական գյուղերի բնակիչները: Նրանք, ովքեր եկան մյուս օրը, ոչինչ այլևս չկարողա-

[1] Նույն տեղում, էջ 1358-1359:
[2] Նույն տեղում, էջ 1360:

ցան տանել, քանի որ զորքերն արդեն շրջապատել էին քաղաքը: Զինվորները տեղափոխել էին դիակները հայկական գերեզմանատուն, որտեղ որ սկսվել էր նրանց հագուստի թալանը: Ի վերջո մի խումբ հայեր, հայ քահանայի գլխավորությամբ և զինվորների պաշտպանության ներքո, կազմակերպեցին 83 հայերի թաղումը: Ընդհանուր առմամբ սպանվել էր հարյուր հայ:[1]

Նոյեմբերի 30-ին Ջաղսոն Սմիթը գրում էր Օլնիին, որ, միսիոներ Դուայթից ստացված տեղեկատվության համաձայն, Խարբերդի, Բիթլիսի և Մարաշի միսիոներները պաշտպանված էին զինվորների կողմից, սակայն փողոցները անվտանգ չէին: Իշխանությունները դժվարություններ էին ստեղծել միսիոներներին ֆինանսական միջոցներ, նամակներ ուղարկելու հարցում: Սմիթը գրում էր Օլնիին, որ շուրջ 150 ամերիկացի միսիոներների կյանքն ու գործունեությունը Թուրքիայում վտանգված էր նման վերաբերմունքի պատճառով:[2]

Նույն օրը միսիոներ Լիին նամակ էր գրում Տերրելին Մարաշից, որ երկուշաբթի այնտեղ սարսափելի ջարդ էր տեղի ունեցել, սպանվել էին հարյուրավոր, հնարավոր է հազարավոր մարդիկ, տեղի էր ունեցել համընդհանուր թալան երեք քրիստոնյա թաղամասերում: Ամերիկյան ճեմարանն ու ակադեմիայի հանրակացարանը թալանվել էին, իսկ ճեմարանի շենքը հրկիզվել էր: Որևէ զինվոր չէր ուղարկվել ամերիկացիներին պաշտպանելու համար: Միսիոներները չէին տուժել, սակայն իրենց անվտանգ չէին զգում: Ներկայումս քրիստոնյաներին բռնի ուժով ստիպում էին դառնալ մահմեդական: Երբ իր լուծումը կստանա Զեյթունի հարցը, վախ կա, որ նոր ջարդեր էին սկսվելու: Ըստ Լիի՝ «որևէ ապստամբություն այստեղ տեղի չէր ունեցել, մարդկանց կոտորել էին ոչխարների պես»:[3]

Նոյեմբերի 30-ին և դեկտեմբերի 2-ին փոխծովակալ Սելֆրիջն Ալեքսանդրեթից նամակներ էր հղել Հալեպի վալի Մուստաֆա Զիհնի փաշային առ այն, որ, Հալեպում ԱՄՆ-ի հյուպատոսից և այլ վստահելի աղբյուրներից ստացված տեղեկատվության համաձայն, Մարաշում հրկիզվել էին ամերիկյան առաքելությանը պատկանող շինությունները: Նամակում նշվում էր, որ ամերիկյան միսիոներները խաղաղությանը նվիրված մարդիկ էին, և նրանց համամարդկային նպատակներին ուղղված գործունեությունը Թուրքիայում՝ պետք է որ ապահովեր նրանց անվտանգությունը թուրքական իշխանությունների կողմից: Բացի դրանից՝ ամերիկյան միսիոներների կայանները, նրանց անձի և ունեցվածքի անվտանգությունը երաշխավորված էր ԱՄՆ-ի և Թուրքիայի միջև գործող պայմանագրով: Որպես ամերիկյան ռազմածովային ուժերի հրամանատար՝ Սելֆրիջը հիշեցնում էր, որ թուրքական կա-

[1] Նույն տեղում, էջ 1361-1363:
[2] Նույն տեղում, էջ 1364-1365:
[3] Նույն տեղում, էջ 1387:

ռավարության վրա է դրվում ողջ պատասխանատվությունը պայմանագրի խախտման համար: Նա պահանջում էր իշխանություններից ձերբակալել և պատժել բոլոր մեղավորներին և ապահովել ամերիկացիների կյանքի և ունեցվածքի անվտանգությունը:[1]

Դեկտեմբերի 3-ին Օսմանյան կայսրության արտաքին գործերի նախարար Թևֆիկ փաշան գրում էր Տերրելին, որ Բարձր Դուռը հատուկ հրահանգներ էր իջեցրել նահանգային իշխանություններին՝ ամերիկացիների անվտանգությունն ապահովելու նպատակով: Խարբերդի վիլայեթի Մամուրեթ ուլ-Ազիզի իշխանություններից հեռագիր էր ստացվել, որ տեղի ունեցած «անկարգությունների» ժամանակ կայսերական զորքն ամեն ինչ արել էր՝ ամերիկացիների անվտանգությունն ապահովելու համար և ներկայումս նույնպես զինվորները շարունակում էին կատարել իրենց վրա դրված պարտականությունները: Ինչ վերաբերում է Խարբերդում և Մարաշում հրդեհված շինություններին, ապա դա արդյունք էր հայերի կողմից իրականացված հրկիզումների:[2]

Դեկտեմբերի 2-ին միսիոներ Հենրի Դուայթը գրում էր Տերրելին, որ Բարձր Դուռը կեղծ փաստաթղթեր էր պատրաստել, համաձայն որոնց՝ Խարբերդի միսիոներները մեղադրվում էին ապստամբություն քարոզելու մեջ, մասնավորապես, որ իբր պատվելի Ջորջ Նեփը Բիթլիսից կազմակերպել և զինել էր հայերին և հոկտեմբերի 25-ին նախապատրաստել նրանց հարձակումը քաղաքի մզկիթների վրա, որի արդյունքում տեղի էր ունեցել սարսափելի ջարդ: Նման անհիմն մեղադրանքները, ըստ Դուայթի, արդեն իսկ իրենց արտացոլումն էին գտել թուրքական մամուլում, մասնավորապես *«Ghairet»*-ում, ինչը վտանգում էր միսիոներների անվտանգությունը: Դուայթն առաջարկում էր Տերրելին դիմել Բարձր Դռանը՝ պահանջելով այդ փաստաթղթերը և այն պաշտոնյաների անունները, որոնք ներկայացրել էին այդ մեղադրանքները Բարձր Դռանը, ինչպես նաև իրականացնել քննություն և պատժել մեղավորներին:[3]

Այդ առիթով Տերրելն այցելել էր Բարձր Դուռ և բողոքել նման մեղադրանքների տարածման կապակցությամբ: Միաժամանակ նա խնդրում էր թուրքական զինվորների միջոցով ապահովել ամերիկացիների անվտանգությունը Մարզվանում, ինչպես մի քանի ամիս առաջ խնդրել էր Հալեպի և Ադանայի միսիոներների համար: Ըստ Տերրելի՝ նման մեղադրանքները պատրաստել էին տեղի պաշտոնյաները, որպեսզի պատասխանատվություն չկրեն տեղի ունեցած կոտորածների համար:[4]

[1] Նույն տեղում, էջ 1386, 1440:
[2] Նույն տեղում, էջ 1366:
[3] Նույն տեղում, էջ 1367:
[4] Նույն տեղում, էջ 1367-1368:

Դեկտեմբերի 4-ին Տերրելը գրում էր Թևֆիկ փաշային, որ, վստահելի աղբյուրից ստացված տեղեկությունների համաձայն, Մարաշում ամերիկյան ճեմարանն ու հանրակացարանը թալանվել էին թուրք զինվորների կողմից, իսկ ճեմարանի շենքը մահմեդական ամբոխը հրկիզել էր այն բանից հետո, երբ Տերրելը պաշտպանություն էր հայցել իշխանություններից Օսմանյան կայսրությունում բնակվող բոլոր ԱՄՆ-ի քաղաքացիների համար: Այդ հաստատությունների համար պատասխանատու միսիոները դեպքերից երկու շաբաթ առաջ հատուկ պահակներ էր հայցել, սակայն այդպես էլ զինվոր չէր ուղարկվել այդ նպատակով: Տերրելն իր զայրույթն էր հայտնել, որ ներկայացուցչության պահանջներից հետո Բարձր Դուռը չէր ապահովել համապատասխան պաշտպանություն միսիոներների ապահովության նպատակով: Տերրելն ամերիկյան կառավարության անունից պահանջում էր պատժել Մարաշում գտնվող զորքի հրամանատարին, ինչպես նաև բոլոր այն զինվորներին, որոնք մասնակցել էին դպրոցի թալանին:[1]

Հաջորդ օրը Տերրելը գրում էր Օլնիին, որ նամակ էր ստացել Օսմանյան կայսրությունում Մեծ Բրիտանիայի դեսպան Ֆիլիպ Քարրիից[2] այն մասին, որ, Էրզրումում իր հյուպատոսից ստացված տեղեկության համաձայն, Բիթլիսի ամերիկյան միսիոներները գտնվում էին շատ ծանր վիճակում: Նրանց առաջարկվել էր մեկնել Վան, սակայն նրանք հրաժարվել էին:[3]

Թևֆիկ փաշային ուղղված դեկտեմբերի 5-ի նամակում Տերրելը շնորհակալություն էր հայտնել այն պաշտոնյաներին, որոնց շնորհիվ հնարավոր դարձավ ապահովել ամերիկացիների անվտանգությունը երկրի տարբեր շրջաններում: Դիվանագետը հիշատակում էր Խարբերդի Մեհմետ Ալայի բեյի, Այնթապի կայմակամի, Ամասիայի մյութեսարիֆ Բեքիր փաշայի, Մարզվանի կայմակամի և Մարզվանում գործող զորքի հրամանատարի անունները:[4]

Դեկտեմբերի 5-ին միսիոներ Հենրի Վինգեյթը գրում էր Տերրելին Կեսարիայում տեղի ունեցած հայերի ջարդի մասին: Ըստ միսիոների՝ հայերը որևէ առիթ չէին տվել ջարդի համար: Ծուկայի մեծ մասը ավերվել էր, սպանվել էր շուրջ հազար մարդ:[5]

Դեկտեմբերի 9-ին միսիոներ Լ. Օ. Լին գրում էր Տերրելին Մարաշից, որ նոյեմբերի 18-ին զինվորները թալանել և հրդեհել էին աստվածաբանա-

[1] Նույն տեղում, էջ 1369-1370:
[2] **Ֆիլիպ Քարրի** (1834-1906) – Մեծ Բրիտանիայի դիվանագետ, դեսպան Օսմանյան կայսրությունում (1893-1898), Իտալիայում (1898-1902):
[3] Նույն տեղում, էջ 1379:
[4] Նույն տեղում, էջ 1382:
[5] Նույն տեղում, էջ 1400-1401:

կան ճեմարանը: Դա տեղի էր ունեցել այն ժամանակ, երբ միսիոներներին պաշտպանող զինվորները որոշ ժամանակով բացակայել էին՝ հայերի կոտորածներին և թալանին մասնակցելու նպատակով: Քաղաքում սպանվել էր 9-10 հազար հայ: Թալանն ու տների հրդեհումը, ըստ Լիի, տեղի էր ունեցել թուրք զինվորների կողմից՝ թուրք սպայի ղեկավարությամբ: Թալանվել և հրդեհվել էր նաև միսիոներների ամառանոցը: Վնասի ընդհանուր գումարը, ըստ Լիի, կազմել էր 2 400 թուրքական ֆունտ:[1]

Դեկտեմբերի 10-ին Օլնիին ուղղված նամակում Տերրելը գրում էր, որ «ծայրամասերի վայրագ մահմեդականների կրոնական մոլեռանդության խորհրդավոր իշխանությունը շատ ավելի ուժեղ է այստեղ, քան որևէ կենտրոնական իշխանություն»:[2]

Նույն օրը Բեյրութում ԱՄՆ-ի հյուպատոս Թոմաս Գիբսոնը հաղորդում էր Կոստանդնուպոլսում գլխավոր հյուպատոս Շորտին, որ փոխծովակալ Սելֆրիջը, պաշտոնական հանդիպումներ ունենալով Բեյրութի իշխանությունների հետ, վերադարձել էր «Սան Ֆրանցիսկո» ռազմանավի վրա, որը ամերիկյան Միջերկրական նավատորմի ֆլագմանն էր: Փոխծովակալը հնարավորություն էր ունեցել հանդիպելու Բեյրութում բնակվող ամերիկյան համայնքի ներկայացուցիչների հետ: Այնուհետև «Սան Ֆրանցիսկոն» մեկնել էր դեպի Լաթաքիա, Ալեքսանդրեթ, Մերսին և Զմյուռնիա: «Մարբլհեդ» նավը գտնվում էր Մերսինում, Սելֆրիջը նպատակ ուներ հանդիպել «Մինեապոլիս» ռազմանավը Զմյուռնիայում: Ըստ Գիբսոնի՝ «Սան Ֆրանցիսկոյի» ժամանումը շատ կարևոր նշանակություն ունեցավ տեղի ամերիկացիների համար, որոնք վախեցած էին կայսրության տարբեր շրջաններից ստացվող տեղեկությունների պատճառով:

Գիբսոնի համաձայն՝ անհանգիստ վիճակում էր գտնվում Դամասկոսի նահանգը, ուր չերքեզները, քրդերը, արաբներն ու թուրքերը, օգտվելով երկրում ստեղծված իրավիճակից, հարձակումներ էին գործել դրուզների վրա՝ կոտորելով նրանց և ավերելով նրանց գյուղերը, թալանելով ունեցվածքը:[3]

Սըվազում ԱՄՆ-ի հյուպատոս Ջուեթը գրում էր (10 դեկտեմբերի) Շորտին, որ Մարզվանում միսիոներները լավ պաշտպանված են եղել կոտորածի ընթացքում իշխանությունների կողմից տրամադրված զինվորների միջոցով, քաղաքում սպանվել էր շուրջ 150 հայ: Ըստ հյուպատոսի՝ Գյուրունում սպանվածների թիվը տատանվում էր 1200-ի և 3 000-ի միջև, ընդհանուր առմամբ հրկիզվել էր հազար տուն: Հրկիզվել էր նաև երեք բողոքական մատուռ և դպրոց, սակայն առաքելական և կաթոլիկ եկեղեցիները պաշտպանված

[1] Նույն տեղում, էջ 1446-1447:
[2] Նույն տեղում, էջ 1385:
[3] Նույն տեղում, էջ 1404:

են եղել զինվորների կողմից: Ըստ հյուպատոսի՝ Խարբերդում սպանվել և վիրավորվել էին ԱՄՆ-ի քաղաքացիություն ստացած մի քանի հայեր:[1]

Դեկտեմբերի 12-ին Տերրելը հաղորդում էր պետքարտուղարին Սըվազում տեղի ունեցած կոտորածի մանրամասների մասին: Այն սկսվել էր նոյեմբերի 12-ին և շարունակվել յոթ օր, սպանվել էր 1 200 հայ և 10 թուրք: Ուղիղ կեսօրին՝ հատուկ ազդանշանից հետո, տարբեր տեսակի գործիքներով, մահակներով և հրազեն զենքով զինված թուրք բանվորները, զինվորներն ու ոստիկանները՝ հրամանատարների ղեկավարությամբ և մահմեդական կանանց և երեխաների ուղեկցությամբ, ներխուժում են շուկա և սկսում սպանել հայերին և թալանել նրանց տները: Որևէ դիմադրություն հայերի կողմից տեղի չի ունեցել, քանի որ հարձակումն անսպասելի էր և հանկարծակի: Գրեթե բոլոր հայ առևտրականները սպանվել էին, իսկ խանութները ամբողջությամբ թալանվել էին: Թալանվել էին նաև շրջակա բոլոր հայկական գյուղերը, բնակչությունը մնացել էր սովի և ձմեռվա բախտին: Ջարդից հետո մնացած հայերը հավաքեցին բոլոր դիակները և տեղափոխեցին հայկական գերեզմանոց, որտեղ էլ թաղեցին քահանայի կարճ աղոտքի ներքո:[2]

Դեկտեմբերի 15-ին Տերրելը հաղորդում էր Օլնիին, որ բոլոր ամերիկյան միսիոներները Թուրքիայում ապահով են, և դեռևս որևէ դեպք չի արձանագրվել: Սակայն տարբեր շրջաններից ստացված հավաստի տեղեկատվությունը վկայում էր մեծ թվով հայկական գյուղերում և քաղաքներում տեղի ունեցած ջարդերի և թալանի մասին: Տերրելի տվյալների համաձայն՝ վերջին երկու ամսվա ընթացքում շրջաններում սպանվել էր 30-40 հազար հայ: Ինչ վերաբերում է Զեյթունին, ապա տեղեկատվություն էր հասնում այն մասին, թե իբր հայերն այնտեղ կարողացել էին ջարդել 3 հազարանոց թուրքական բանակը, և ներկայումս քաղաքը գտնվում էր շրջափակման մեջ:[3]

Նույն օրը Տերրելը փոխանցում է Օլնիին դեռևս 1895 թ. նոյեմբերի 25-ին միսիոներ Գեյթսի կողմից իրեն գրված նամակը, որը ևս մեկ անգամ վկայում էր այն մասին, որ վեց նահանգներում բնակվող հայերի հանդեպ «խորհրդավոր գաղտնիության» մթնոլորտում ծրագրվել և իրագործվել էր քրիստոնյաների սպանդ: Գեյթսը գրում էր, որ հավաստի աղբյուրից ստացված տեղեկության համաձայն՝ տեղացի բարձրաստիճան բոլոր պաշտոնյաները տեղեկացված էին հայերի վրա հարձակման ծրագրի և ճշգրիտ ժամի մասին: Նա գրում էր, որ հարձակվողները թուրքական բանակի պահեստայիններն էին, որոնք փոխել էին իրենց համազգեստը, հագնվել որպես քրդեր: Գեյթսը համոզված էր, որ կազմակերպելով հայերի ջարդերը՝ օսմանյան

[1] Նույն տեղում, էջ 1412-1413:
[2] Նույն տեղում, էջ 1390-1391:
[3] Նույն տեղում, էջ 1391-1392:

կառավարությունը ցանկանում էր մեկընդմիշտ փակել բարեփոխումների խնդիրը: Բոլոր նրանք, ովքեր ողջ էին մնացել գյուղերում, պաշտոնապես համարվելու էին մահմեդականներ: Ինչ վերաբերում էր միսիոներների կրած վնասին, նա գտնում էր, որ իշխանությունները ոչ միայն չէին ապահովել իրենց անվտանգությունը, այլև հենց իրենք էլ կազմակերպել էին բոլոր շինությունների հրկիզումը թուրք զինվորների ներկայությամբ և աջակցությամբ:[1]

Դեսպանորդը ներկայացնում էր պետքարտուղարին նաև Խարբերդի ամերիկյան միսիոներներից մեկի նամակը, որն, ըստ Տերրելի, մեկ անգամ ևս վկայում էր այն մասին, որ թուրք զինվորները համագործակցում էին ամբոխի հետ ամերիկյան ունեցվածքը ոչնչացնելու և միսիոներների նկատմամբ մահափորձ կազմակերպելու գործում: Միսիոները գրում էր, որ քաղաքում սպանվել էր երկու բողոքական և մեկ սիրիացի քահանա, Իզմե գյուղում մեծ թվով մարդիկ էին կուտակվել Հայ առաքելական եկեղեցում, որոնց հետ էր նաև բողոքական եկեղեցու քահանան: Թուրքերը մեկ մեկ հանում էին մարդկանց եկեղեցուց և սպանում, եթե նրանք անմիջապես կրոնափոխ չէին լինում: Սպանվել էին նրանցից 52-ը, որոնց թվում էր նաև պատվելի Գրիգորը: Լուրեր էին տարածվում, որ առաքելական եկեղեցին վերածվել էր մզկիթի, իսկ բողոքական եկեղեցին՝ ախոռի:

Ուզուն-օվայում հայերին տեղահանել էին և տարել թուրքական գյուղ, որտեղ նրանք պետք է կրոնափոխ լինեին: Նրանցից 55-ը ճանապարհին իրենց գետն էին նետել, որպեսզի կրոնափոխ չլինեն: Հոհ գյուղում հայերից շատերը սպանվել էին, իսկ կանանց և երեխաներին հանձնել էին մահմեդական ընտանիքներին:

Խարբերդի վրա հարձակման ժամանակ ակնհայտ կերպով երևում էր, որ զինվորներն իբր պաշտպանում էին քաղաքը, օդ կրակում քրդերի կամ իրենց ձևացնող քրդերի վրա, իսկական. «խարդախություն»: Թուրք զինվորները մասնակցում էին հայերի սպանությունների, նրանց տների թալանի մեջ: Միսիոները վկայում էր, որ միսիոներների շենքերի վրա թնդանոթից կրակ բացողները թուրք զինվորներն էին: Ո՛չ ամերիկացիները, ո՛չ էլ հայերը որևէ կասկած չունեին, որ այս ամենը հատուկ կազմակերպված էր իշխանությունների կողմից: Ըստ միսիոների՝ հայերից քչերն էին կարողանալու ողջ մնալ մինչև գարուն:[2]

Դեկտեմբերի 16-ին Տերրելն Օլնիին «Հարձակումներ քրիստոնեության վրա Թուրքիայում» վերնագրով շատ կարևոր մի տեղեկանք էր ներկայացրել, ուր հավաստի աղբյուրների հիման վրա ժամանակագրական տեղեկություններ էին ներկայացված տեղի ունեցած իրադարձությունների մասին: Ըստ Տերրելի՝ այս տեղեկատվությունը «վկայում է համակարգված կերպով գործի դրված շարժման մասին, որը նպատակաուղղված է Փոքր Ասիայից քրիստոնեության բնաջնջմանը»:[1]

Համաձայն ներկայացված տեղեկանքի՝ հոկտեմբեր-նոյեմբեր ամիսների ընթացքում արևելյան Թուրքիայի մահմեդական բնակչությունը, շատ դեպքերում աջակցություն ստանալով օսմանյան բանակի կողմից, սպանեց 30-40 հազար առաքելական և բողոքական հայերի: Սպանվածները հիմնականում տղամարդիկ էին, որոնցից զգալի մասը կազմում էին վեց հայկական նահանգների՝ Էրզրումի, Բիթլիսի, Վանի, Դիարբեքիրի, Խարբերդի և Սըվազի կրթված և ազդեցիկ դասակարգի ներկայացուցիչները: Որոշ մաս էլ սպանվել էր վեց նահանգներից դուրս գտնվող Տրաբզոն, Այնթապ, Մարաշ, Ուրֆա և Կեսարիա քաղաքներում: Կոտորածները զուգորդվում էին այնպիսի ծավալի թալանով, որ համարյա ամբողջ հայկական գյուղական բնակչությունը և նշված նահանգների քաղաքների հայ առևտրականների ու արհեստավորների մեծ մասը մեծապես տուժել էին՝ կորցնելով դրամ, ունեցվածք, սնունդ, հագուստ, գործիքներ, խոշոր և մանր եղջուրավոր անասուններ, նրանց տները թալանված և ավիրված էին: Շուրջ 60 հազար մղոն կազմող տարածքի վրա փորձ էր կատարվում բնաջնջել հայ քրիստոնյաներին, քանդել նրանց եկեղեցիները, սպանել կրոնական դասն ու բռնի ուժով տեղահանել մնացածներին այնպիսի վայրեր, ուր չկան արտասահմանյան հյուպատոսություններ, որպեսզի ստիպեն նրանց կրոնափոխ լինել: Հնարավոր է, որ մահացածների մեծ մասը մարտիրոսներ էին, որոնք հրաժարվել էին փոխել իրենց դավանանքը: Այրիների և որբ երեխաների զգալի մասը, հաշվի չառնելով նրանց կամքը, հանձնվել էին իրենց վրա հարձակվող մահմեդականների ընտանիքներին: Հազարավոր քրիստոնյաներ բռնի ուժի սպառնալիքի առջև կրոնափոխ էին եղել և դարձել մահմեդականներ, այդ քաղաքականությունը շարունակվում էր նաև ողջ մնացածների նկատմամբ: Ասիայի քրիստոնյա եկեղեցիներից ամենից ուժեղն ու կայունը՝ հայկական եկեղեցին, վերջին 50 տարիների ընթացքում զգալի առաջադիմություն էր արձանագրել բարոյական, մտավոր և հոգևոր կյանքի բնագավառներում: Այս հնագույն եկեղեցին ներկայումս գտնվում էր բնաջնջման եզրին: «Ներկայիս լուսավորության դարը, - գրված էր տեղեկանքում, - արձանագրվելու է պատմության էջերում որպես մի ժամանակաշրջան, երբ քրիստոնեության իմացությամբ և նրա աչքի առջև բնաջնջվեց քրիստոնյա մի ժողովուրդ, և ոչ

[1] Նույն տեղում, էջ 1392-1394:
[2] Նույն տեղում, էջ 1395-1397:

[1] Նույն տեղում, էջ 1398:

մի քրիստոնյա պետություն նույնիսկ ձեռքը չշարժեց կանգնեցնելու համար այդ արհավիրքը»:

Այնուհետև տեղեկանքում փաստեր էին բերվում տեղի ունեցած իրադարձությունների մասին: Տեղեկանքի հեղինակը նշում էր, որ ներկայացվածը շատ փոքր մի մաս էր կազմում այն իրադարձությունների, որոնք տեղի էին ունեցել կայսրության արևելյան շրջաններում: Հոկտեմբերի 1-24-ը ավերվել և թալանվել էին Կամախի շրջանի 8 վանքեր, հոկտեմբերի 21-24-ին կողոպտվել էին ևս 8 վանքեր և մեկ եկեղեցի Երզնկայի շրջանում: Վերջինիս քահանան և 30 ծխականները, որոնք պատսպարվել էին ներսում, սպանվել էին:

Հոկտեմբերի 14-ին Բաբերդում տեղի ունեցած կոտորածների ժամանակ մահվան սպառնալիքի տակ չորս հայկական գյուղերի բնակիչներ մահմեդականություն էին ընդունել, իսկ քաղաքում սպանվել էին եկեղեցու քահանան և բոլոր ուսուցիչները:

Հոկտեմբերի 24-ին Էրզրումի նահանգի Թերջան շրջանում սպանվել էր հազար քրիստոնյա, մնացածն ընդունել էին մահմեդականություն, իսկ կրոնափոխների կանանց տվել էին երիտասարդ մահմեդականներին: Հոկտեմբերի 27-31-ը ավերվել էին Էրզրումի հովտի 24 գյուղեր, պղծվել, թալանվել և հրկիզվել էին եկեղեցիներն ու վանքերը, սպանվել էին քահանաներն ու վանականները: Շապին Գարահիսարի շրջանում գրեթե բոլոր (27) հայկական գյուղերն ավերվել էին, կոտորվել էին մեծ թվով հայեր, իսկ զգալի թվով երիտասարդ կանանց և աղջիկներին բռնի կերպով հանձնել էին մահմեդական ընտանիքներին: Դեպի ծովեզերք շարժվող փախստականները ետ էին վերադարձվել օսմանյան զորքերի միջոցով: Թալանվել և պղծվել էին բազմաթիվ եկեղեցիներ, որոշ տեղերում եկեղեցիները հրկիզվել էին ներսում պատսպարված կանանց և երեխաների հետ:

Նոյեմբերի 5-14-ը Խարբերդի նահանգի 53 գյուղերի եկեղեցիներն ավերվել և թալանվել էին: Նոյեմբերի 11-ին Խարբերդի քրիստոնյա թաղամասերի հայկական տները թալանվել և հրկիզվել էին, սպանվել էր 500-ից ավելի հայ, շատերն ընդունել էին մահմեդականություն: Խարբերդի մոտ գտնվող Կոփ գյուղում սպանվել էր բողոքական քահանան, որը հրաժարվել էր ընդունել մահմեդականություն: Նահանգի չորս մեծ վանքերը պղծվել և հրկիզվել էին:

Երզնկայի գյուղերի հայ բնակիչները գտնվում էին սարսափահար վիճակում. ջարդի ենթարկվելու վտանգի առջև մահմեդականություն ընդունելու միտումը հետզհետե աճում էր:

Նոյեմբերի 18-ին Մարաշ քաղաքում թուրք զինվորների մասնակցությամբ հարյուրավոր առաքելական և բողոքական հայեր էին կոտորվել մահմեդականների կողմից: Քաղաքի բողոքական եկեղեցու գրեթե բոլոր ղեկավարները սպանվել, թալանվել էին, և հրկիզվել էր ամերիկյան առաքելության աստվածաբանական ճեմարանը:

Նոյեմբերի 11-ին Խարբերդի ամերիկյան առաքելության աստվածաբանական ճեմարանն ու մի շարք այլ ամերիկացիներին պատկանող շինությունները թալանվել և հրկիզվել էին թուրք զինվորների ներկայությամբ:

Նոյեմբերի 30-ին Կեսարիա քաղաքում մի քանի հարյուր առաքելական և բողոքական հայեր էին սպանվել՝ հիմնականում հրաժարվելով ընդունել մահմեդականություն, մեծ թվով կանայք և աղջիկներ բռնի կերպով հանձնվել էին մահմեդականներին:[1]

Դեկտեմբերի 12-ին Բրիտանիայի քաղաքացի, պատվելի Սանդերսը նամակ էր գրել Տերրելին Այնթապից, ուր նշում էր, որ քաղաք ժամանած հետաքննության հանձնաժողովը ոչինչ չարեց իրավիճակը փոխելու ուղղությամբ: Միսիոներներին, ըստ Սանդերսի, պաշտպանում էին կառավարական զինվորները, բայց նրանց թիվը գնալով պակասում էր: Ըստ միսիոների՝ կայմակամն ու մահմեդական հարևան Հաջի Հուսսեյն-աղան լավ մարդիկ էին և ամեն ինչ անում էին իրենց պաշտպանելու համար, սակայն այն օրը, երբ զինվորները հեռանան, միսիոներները նույնիսկ 24 ժամ չէին կարող դիմանալ:

Սանդերսն այն կարծիքին էր, որ հնչակյաններն Այնթապում և շրջանում հաջողություն չունեն, քանի որ ամերիկյան քոլեջի դասախոսների և ուսանողների կողմից ընդդիմություն կար նրանց գործողությունների հանդեպ: Համաձայն Սանդերսի, դեռևս մեկ տարի առաջ միսիոներները բացարձակ անվտանգության մեջ էին մահմեդականների շրջանում, իսկ ներկայումս նրանց մոլեռանդության աստիճանն ու հնչյակյանության գաղափարները վիճակը սարսափելի էին դարձրել:[2]

Դեկտեմբերի 18-ի իր հաջորդ նամակում Սանդերսը շնորհակալություն էր հայտնում Տերրելին այն բանի համար, որ իր ձեռնարկած միջոցների շնորհիվ զինվորները շարունակում էին պաշտպանել Այնթապի բոլոր միսիոներներին: Նա գրում էր, որ նոյեմբերի 16-ին սկսված ջարդի ժամանակ նույն այդ զինվորները պաշտպանել էին իրենց ամբոխից, թեև ոչինչ չէին արել կանգնեցնելու ջարդը, ավելին, մասնակցել էին տեղի ունեցած թալանին: Ըստ Սանդերսի՝ նորություններից մեկն այն էր, որ քոլեջի 11 տղա-ուսանողները փախել էին դասախոսի օգնականի և խոհարարի հետ միասին՝ հեղափոխական պայքարին մասնակցելու նպատակով: Սպանվածների թիվը հասնում էր 400-ի, իսկ վնասի կորուստը՝ 100 հազար թուրքական ֆունտի:[3]

---

[1] Նույն տեղում, էջ 1398-1400:
[2] Նույն տեղում, էջ 1442-1443:
[3] Նույն տեղում, էջ 1443:

Դեկտեմբերի 18-ին Տերրելը պետքարտուղարություն .էր փոխանցել դեկտեմբերի 2-ին Կեսարիայում գործող և բնակվող ամերիկյան միսիոներ Վինգեյթի նամակը, ուր նկարագրվում էր Կեսարիայում տեղի ունեցած հայերի ջարդը: Միսիոներն իր տան կտուրից հետևել էր երեք ժամ տևած կոտորածի և թալանի ընթացքին: Ըստ միսիոների՝ քաղաքի մահմեդականների կողմից իրականացվում էր իսկական որս հայերի վրա, որոնց սպանում էին, իսկ ունեցվածքը՝ թալանում: Զինվորները հիմնականում չէին միջամտում: Միսիոներն իր տան մեջ կարողացել էր պահել 109 հայի, որոնք մի քանի օր մնալուց հետո միայն գնացին իրենց տները: Նրա տվյալների համաձայն՝ քաղաքում սպանվել էր շուրջ հազար հայ: Սպանություններին և թալանին մասնակցում էին նաև մահմեդականներ հարևան գյուղերից:[1]

Այդ օրերին ԱՄՆ-ում հպատակություն ստացած շատ հայեր դիմում էին պետքարտուղարություն և Սպիտակ տուն՝ Օսմանյան կայսրությունում մնացած իրենց ընտանիքների անդամների և բարեկամների կյանքի և ունեցվածքի անվտանգությունն ապահովելու խնդրանքով: Օրինակ՝ 1895 թ. նոյեմբերի 18-ին պատվելի Ս. Յենովքյանը նամակ էր հղել ԱՄՆ-ի նախագահ Քլիվլենդին հետևյալ բովանդակությամբ. «Իմ կնոջ, չորս փոքր երեխաներիս կյանքը Մարաշում, Թուրքիայում, Ասիայում մեծ վտանգի տակ է: Ես պաշտպանություն եմ հայցում ամերիկյան քաղաքացիների համար»: Նոյեմբերի 28-ին Յենովքյանը պատասխան նամակ է ստանում պետքարտուղարությունից, որում ասվում էր, որ Կոստանդնուպոլսում ԱՄՆ-ի դեսպանորդ Տերրելը սովորաբար զեկուցագրեր չի ներկայացնում մասնավոր դեպքերի վերաբերյալ, սակայն, ստացված հրահանգների համաձայն, նա համապատասխան գործունեություն է ծավալում Թուրքիայում տեղի ունեցող վերջին հուզումների ժամանակ: ԱՄՆ-ի կառավարությունը, ասված էր նամակում, արել է, անում է և շարունակելու է ամեն ինչ անել, իր հնարավորությունների սահմաններում, կայսրությունում օրինական կերպով ժամանակավոր կեցություն հաստատած ամերիկյան քաղաքացիների կյանքի և ունեցվածքի լիարժեք պաշտպանությունն ապահովելու նպատակով: Նամակը ստորագրել էր պետքարտուղար Օլնին:[2]

1895 թ. դեկտեմբերի 2-ի Կոնգրեսին ուղղված իր տարեկան ուղերձում նախագահ Գրովեր Քլիվլենդն Օսմանյան կայսրությանը վերաբերող հատվածում նշում էր. «Թուրքիայում տեղի ունեցած իրադարձությունները շարունակում են մտահոգություն առաջացնել: Հայաստանում քրիստոնյաների ջարդերի վերաբերյալ հաղորդագրությունները, ինչպես նաև այնտեղ և այլ

[1] Նույն տեղում, էջ 1405-1407:

[2] Yenovkian, S. S., Martyred Armenia. A brief description of the recent horrible Massacres of the Christian Armenians in Turkey, Cleveland: The Britton PTG. Co., 1896, p. 43.

շրջաններում քրիստոնյաների հանդեպ զարգացում ապրող մոլեռանդ թշնամության տրամադրությունները, բնականոն ազդեցություն և մտահոգություն են առաջացնում նվիրյալ տղամարդկանց և կանանց անվտանգության համար, որոնք որպես Միացյալ Նահանգների արտասահմանյան միսիոներական ընկերությունների ներկայացուցիչներ բնակվում են Թուրքիայում օրենքի և պահանջարկի երաշխավորության ներքո՝ օրինապես կատարելով իրենց կրթական և կրոնական առաքելությունը: Որևէ ջանք չի խնայվել նրանց համար, և նրանց անձի ու ունեցվածքի պաշտպանությունը մեր իշխանության հնարավոր բոլոր միջոցներով լրջորեն և վճռական կերպով ուժեղացվել է:

Սակայն ես ցավում եմ, որ Օսմանյան կայսրության անհանգիստ շրջաններում տիրող իրավիճակի մասին ճշգրիտ տեղեկատվություն ստանալու մեր ձեռնարկումը՝ քննություն կատարելու և զեկուցելու նպատակով Սրվազում ԱՄՆ-ի հյուպատոսին այնտեղ ուղարկելու միջոցով, խափանվեց թուրքական կառավարության առարկությունների հետևանքով: Մեր կողմից նախաձեռնված այս գործողությունը որևէ կերպ չէր նշանակում Միացյալ Նահանգների ցանկությունը ներգրավվելու այսպես կոչված Արևելյան հարցի մեջ, ոչ էլ աներես կերպով միջամտելու եվրոպական որոշ տերություններին պայմանագրով պատկանող իրավունքներին և պարտականություններին, որոնք վերաբերում են սուլթանի ոչ մահմեդական հպատակների համար լավ կառավարում և կրոնական ազատություններ պահանջելու քաղաքական խնդիրներին, այլ գալիս էր ընդամենը մեր ցանկությունից՝ մեր պաշտպանության տակ գտնվող անհատներին օգնելու նպատակով ճշգրիտ տեղեկություններ ստանալ իրավիճակի մասին:

Մեր ռազմանավերի ներկայությունը, որոնք այժմ գտնվում են անհանգիստ վայրերի մերձակայքում, հնարավորություններ են ստեղծում մոտից տեղեկանալու գործերի իրավիճակի մասին, ինչպես նաև հնարավորություն ընձեռում համապատասխան քայլեր ձեռնարկելու, մեր նավերի հասանելիության սահմաններում, պաշտպանելու համար մեր հայրենակիցների շահերը, եթե նրանք հայտնաբերվեն վտանգված:

Օսմանյան կառավարությունը վերջերս կայսերական *իրադե* է հրապարակել, որն ընդմիշտ ազատում է հարկերից Սկութարիի Աղջկա ամերիկյան քոլեջը: Կոստանդնուպոլսում մեր ներկայացուցիչը շարունակական հավաստիացումներ է ստացել առ այն, որ մեր հայրենակիցների կողմից պահպանվող և կառավարվող նման հաստատությունները նույնպես ապահովված են լինելու բոլոր իրավունքներով, իսկ կայսրության ողջ տարածքում գտնվող մեր քաղաքացիները ենթակա են լինելու պաշտպանության:

Սակայն կառավարությունը, նկատի առնելով գոյություն ունեցող փաստերը, իր հույսերը չի կապում միմիայն այդ հավաստիացումների հետ՝ չհա-

մարելով դրանք որպես իր պարտականությունների սահմանակետ: Մեր նախարարը աչալուրջ և աշխույժ կերպով հնարավոր պաշտպանություն է տրամադրում մասնավոր դեպքերում, երբ սպառնալիքի կամ անվտանգության վտանգ է զգացվում: Մենք նավեր ենք ուղարկել որքան հնարավոր է մոտ իրական անհանգստության կենտրոններին, ուր նրանք ապաստան են տրամադրում փախստականներին, և մենք նաև խոստում ենք ստացել մյուս տերություններից, որոնք նավեր ունեն տեղակայված հարևանությամբ, որ մեր, ինչպես որ նրանց քաղաքացիներին այդ նավերի կողմից կտրամադրվի ապաստարան և պաշտպանություն: Մեր նախարարի պահանջով սուլթանը հրահանգներ է իջեցրել, որ թուրքական զինվորներն ուղեկցեն փախստականներին մինչև ծովեզերք:

Այդ հրահանգները իրականացվում են, և վերջին մեր տեղեկությունները վկայում ու հավաստիացնում են, որ ներկայումս մեր քաղաքացիների և միսիոներների անձնական անվտանգությունն ապահովված է: Թեպետ մինչև այժմ որևէ ամերիկյան քաղաքացու կյանք չի զոհաբերվել, սակայն կասկած չկա, որ վայրագ բախումների և կատաղի հարձակումների արդյունքում կան առաքելությունների ունեցվածքի լուրջ կորուստներ և ավերումներ:

Պայմանագրի համաձայն՝ մի քանի հզոր եվրոպական տերություններ իրավունքներ են իրենց վերապահել և պարտավորություններ ստանձնել ոչ միայն իրենց քաղաքացիների և սեփական շահերի առաջխաղացման համար, այլև որպես քրիստոնյա աշխարհի ներկայացուցիչներ: Իրենց իրավունքի մեջ է մտնում ստիպել թուրքական կառավարությանը՝ սանձելու մոլեռանդ վայրագությունը, իսկ եթե դա նրանց չհաջողվի, նրանց պարտավորությունն է միջամտել և ապահովել, որպեսզի Թուրքիայում այլևս տեղի չունենան այնպիսի զարհուրելի իրադարձություններ, որոնք վերջերս ցնցեցին քաղաքակրթությունը: Տերությունները հայտարարել են, որ այս իրավունքն ու պարտավորությունը միայն իրենցն է, և միանգամայն լուրջ հույս կա, որ արագ և էֆեկտիվ գործողությունները նրանց կողմից չեն ուշանալու:

Նոր հյուպատոսություններն Էրզրումում և Խարբերդում, որոնց համար հատկացումներ տրվեցին անցյալ նստաշրջանի ընթացքում, ներկայումս համալրված են Պետական դեպարտամենտի վստահելի աշխատակիցներով, սակայն, որոնք դեռևս չեն ստացել իրենց էկզեկվատուրաները»:[1]

Ի պատասխան 1895 թ. դեկտեմբերի 4-ին Սենատում ընդունված բանաձևի, որը խնդրում էր ԱՄՆ-ի նախագահից «...հաղորդել Սենատին ամեն տեսակի տեղեկատվություն, որը կստացվի իր կամ Պետական դեպարտամենտի կողմից Թուրքիայում ամերիկյան քաղաքացիներին կամ նրանց ունեցվածքին հասցված վնասի և այնտեղ տեղի ունեցող գործերի իրավիճակի մասին, որը վերաբերում է թուրքական կառավարության հայ հպատակների նկատմամբ իրականացվող ճնշումներին և դաժանություններին, ինչպես նաև հաղորդել Սենատին, թե Թուրքական կայսրությունում գործող բոլոր ամերիկյան հյուպատոսները արդյո՞ք կատարում են իրենց պարտականությունները, և եթե ոչ, մատնանշել բոլոր այն հանգամանքները, որոնք խոչընդոտում են նման հյուպատոսների պարտականությունների կատարմանը», դեկտեմբերի 19-ին նախագահ Քլիվլենդը Սենատին ներկայացրեց պետքարտուղարի զեկույցը:[1]

Իր զեկույցում պետքարտուղար Օլնին նշում էր, որ քանի որ Սենատի հարցման մեջ չէր նշվում որևէ ժամանակահատված, նա ենթադրաբար ներկայացնում էր տեղեկատվություն՝ սկսած 1894 թ. օգոստոսին տեղի ունեցած կոտորածներից: Այս ժամանակահատվածում, ըստ պետքարտուղարի, Կոստանդնուպոլսում դեսպանորդ-նախարարի միջոցով Բարձր Դռանը բազմիցս պահանջ էր ներկայացվել՝ կայսրության բոլոր անհագիստ շրջաններում ապահովել ԱՄՆ-ի քաղաքացիների և ունեցվածքի պաշտպանությունը: Սուլթանական կառավարությունը, իր հերթին հրահանգ էր իջեցրել տեղական քաղաքացիական և զինվորական իշխանություններին անհրաժեշտության դեպքում ապահովել ԱՄՆ-ի քաղաքացիների անվտանգությունը հնարավոր միջադեպերի պարագայում:

Ըստ Օլնիի՝ Օսմանյան կայսրությունում Միացյալ Նահանգների քաղաքացիների ճշգրիտ թիվը հայտնի չէ: Վերջին տվյալների համաձայն՝ Փոքր Ասիայի տարածքում ապրում և գործում էին տարբեր առաքելական խորհուրդների պատկանող 172 ամերիկացի միսիոներներ: Այդ երկրի տարբեր շրջաններում աշխատում էին նաև գործարարության մեջ և այլ մասնագիտությունների պատկանող ԱՄՆ-ի քաղաքացիներ: Բացի նրանցից՝ կայսրությունում ժամանակավոր բնակություն էին հաստատել Թուրքիայում ծնված, սակայն ԱՄՆ-ում քաղաքացիություն ստացած անհատներ: Նշված բոլոր քաղաքացիների թիվն իրենց ընտանիքներով, ըստ պետքարտուղարի, չէր գերազանցում 500-600-ը: Մայրաքաղաքից և մի քանի առևտրական նավահանգիստներից բացի՝ ԱՄՆ-ի քաղաքացիների հիմնական մասը ցրված էր Փոքր Ասիայի և Սիրիայի տարածքով, նույնիսկ այնպիսի տեղերում, որոնք չէին գտնվում ամերիկյան հյուպատոսությունների իրավասության շրջանում: Ըստ Օլնիի՝ ԱՄՆ-ի քաղաքացիները, որտեղ հնարավոր է՝ զգուշացված էին հեռու մնալ այն քարոզչությունից և գործողություններից, որոնք այս մեկ տարվա ընթացքում տեղ էին գտել Օսմանյան

[1] US Department of State. Papers Relating to the Foreign Relations of the United States, With the Annual Message of the President, Transmitted to Congress, December 2, 1895, Part 1, Washington: Government Printing Office, 1896, pp. XXXIV-XXXVI.

[1] Նույն տեղում, էջ 1255-1256:

կայսրության տարածքում: Ամերիկյան ներկայացուցչությունը Կոստանդնուպոլսում, իր հնարավորությունների սահմաններում, դիմում էր բոլոր հնարավոր միջոցների՝ պաշտպանելու իր քաղաքացիների շահերը: ԱՄՆ-ի դեսպանորդ-նախարարի գործունեությանը բարոյական օժանդակություն էին ցուցաբերում նաև ամերիկյան ռազմանավերը, մասնավորապես ռազմանավեր «Սան Ֆրանցիսկոն», «Մարբլհեդն» ու «Մինեապոլիսը»՝ փոխծովակալ Սելֆրիջի հրամանատարությամբ, որոնք մուտք էին գործել թուրքական նավահանգիստներ: Առ այսօր շարունակում էր պետքարտուղարը, ԱՄՆ-ի քաղաքացիների անվտանգությունը հիմնականում ապահովված է եղել՝ բացառությամբ երկու միջադեպի, որոնք տեղի էին ունեցել Խարբերդում և Մարաշում:

Ըստ Օլնիի, թեև Խարբերդի ավերածությունը տեղի էր ունեցել անցյալ դեկտեմբերին, դեռևս քիչ բան էր հայտնի մանրամասների մասին: Հայտնի էր, որ «հայկական ապստամբության» ժամանակ, թուրքական զինվորների ներկայությամբ քրդերն ու քաղաքացիներն այրել էին շինություններ: Կրակից տուժած մատուռի, աղջիկների աստվածաբանական դպրոցի, ճեմարանի, կանանց հանրակացարանի, պանսիոնի և երեք միսիոներների տների վնասը կազմել էր շուրջ 100 հազար դոլար: Կոստանդնուպոլսում ԱՄՆ-ի դեսպանորդ-նախարարը պահանջել էր թուրքական կառավարությունից անմիջապես և ամբողջությամբ փոխհատուցել ամերիկյան միսիոներների կրած վնասը:

Մարաշի ամերիկյան միսիոներական գիտության դպրոցն այրվել էր նոյեմբերի 19-ին՝ արյունալի իրադարձությունների ընթացքում: Ունեցվածքի վնասի չափը դեռևս չէր պարզվել, սակայն այն պարզելուց հետո ամերիկյան ներկայացուցիչը կրկին դիմելու է սուլթանական կառավարությանը՝ վնասի փոխհատուցման պահանջով:

Պետքարտուղարը շարունակում էր, որ, բացի ամբոխի կողմից ամերիկյան ունեցվածքին վնաս հասցված այս դեպքերից, ԱՄՆ-ի քաղաքացիների հետ տեղի էր ունեցել ևս մի քանի պատահար: 1894 թ. մայիսին՝ Պարսկաստանից դեպի Քրդստան հեծանիվով ճամփորդելիս, Ալաշկերտի մոտ թալանվել և սպանվել էր ԱՄՆ-ի քաղաքացի Ֆոենկ Լենցը: Մյուս դեպքը պատահել էր ԱՄՆ-ի 70-ամյա քաղաքացի Ջորջ Վերբերին, որին 1895 թ. մարտի 28-ին ծեծել և ձերբակալել էին առանց պատճառի, որը մահացել էր նույն գիշերը բանտում: Զեկույցում ամերիկացիների սպանության ևս երկու դեպք էր նկարագրվում, նշվում էր, որ ամերիկյան ներկայացուցչությունն ու սուլթանական իշխանություններն ամեն ինչ անում էին օրենքի սահմաններում մեղավորներին պատժելու ուղղությամբ:[1]

[1] Նույն տեղում, էջ 1256-1259:

Զեկույցում նշվում էր նաև, որ ԱՄՆ-ի օրենքով որևէ տարբերություն գոյություն չունի երկրում ծնվածի և այլ վայրում ծնված, բայց Միացյալ Նահանգներում քաղաքացիություն ստացածի միջև: Ուստի կառավարության իրավունքն ու պարտավորությունն էր ապահովել այն բոլոր քաղաքացիների պաշտպանությունը, որոնք օրենք էին խախտել կամ մասնակցել ապստամբ գործողությունների մեջ այլ երկրներում:

1830 թ. պայմանագրի 4-րդ հոդվածի համաձայն՝ Կոստանդնուպոլսում դեսպանորդ-նախարարը հրահանգ էր ստացել առաջարկել Բարձր Դռանը դատի ենթարկել բոլոր այն ԱՄՆ-ի քաղաքացիներին, որոնք մեղադրվել էին խռովություն, ապստամբություն կազմակերպելու կամ նման այլ գործողությունների մեջ, սակայն եթե այդ առաջարկը մերժվի, պահանջել մեղադրյալի ազատ արձակումը: Քանի որ ԱՄՆ-ի կառավարությունը չէր կարող միջամտել սուվերեն պետության իրավունքին՝ վտարել պետության անվտանգությանը սպառնացող անձերին, մեղադրյալների ազատ արձակումը երկրից հեռանալու պայմանով, մնում է դեռևս վիճելի խնդիր:[1]

Զեկույցում մի քանի օրինակ էր բերված, թե ինչ միջոցների էր դիմել Կոստանդնուպոլսում ամերիկյան ներկայացուցչությունը ապստամբության կամ սպանության մեջ մեղադրվող, ծագումով հայ և ԱՄՆ-ի քաղաքացիների իրավունքները պաշտպանելու հարցերում: 1895 թ. սեպտեմբերի 26-ին դեսպանորդ-նախարար Տերրելը կրկին հրահանգ էր ստացել, որ համաձայն ամերիկյան օրենքի, հյուպատոսները էքստերիտորիալ իրավունքներ ունեն՝ պաշտպանելու Օսմանյան կայսրությունում ապստամբություն կամ խռովություն կազմակերպելու մեջ մեղադրվող ԱՄՆ-ի քաղաքացիների իրավունքները:[2]

Ըստ զեկույցի՝ Օսմանյան կայսրությունում ԱՄՆ-ն ունի գլխավոր հյուպատոսություններ Կոստանդնուպոլսում ու Կահիրեում և 7 հյուպատոսություններ՝ Բաղդադում, Բեյրութում, Էրզրումում, Խարբերդում, Յերուսաղեմում, Սըվազում և Զմյուռնիայում: Այս հիմնական գրասենյակներին ենթարկվում էին 23 հյուպատոսական գործակալություններ, որոնցից միայն երեքում՝ Բասրայում, Ասուանում և Կանդիայում, չկար աշխատակից: Ներկայումս ազատ էր նաև Բաղդադում հյուպատոսի պաշտոնը, պարտականությունները դրված էին փոխհյուպատոսի վրա: Էրզրումում և Խարբերդում հյուպատոսությունների մասին որոշումը կայացվել էր 1895 թ. մարտի 2-ին, պետքարտուղարության երկու աշխատակից էին ժամանել Կոստանդնուպոլիս աշնանը, սակայն Բարձր Դուռը դեռևս իր թույլտվությունը չէր տվել այդ քաղաքներում հյուպատոսություններ հիմնելու վերաբերյալ՝ պատճա-

[1] Նույն տեղում, էջ 1259-1260:
[2] Նույն տեղում, էջ 1260:

ռաբանելով այն ԱՄՆ-ի կողմից այդ շրջաններում առևտրական շահեր չունենալու հանգամանքով, թեև Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան նման թույլտվություններ արդեն իսկ ստացել էին:[1]

Իրավունք և հնարավորություն չունենալով պահանջել Բարձր Դռնից Սասունում և այլուր տեղի ունեցած դեպքերի հետաքննություն, բացի իր քաղաքացիների պաշտպանությունն ապահովելու պարտավորությունից, ԱՄՆ-ի կառավարությունն իրական և անկողմնակալ տեղեկատվություն չուներ Թուրքիայում տիրող իրավիճակի մասին: Ամերիկյան ներկայացուցչությունը Կոստանդնուպոլսում պետական քարտուղարությանը համապատասխան տեղեկատվություն էր տրամադրել Կոստանդնուպոլսում, Սրվազում և Տրաբզոնում տեղի ունեցած դեպքերի մասին, որտեղ մեծ թվով մարդկային կորուստ էր գրանցվել: Պետքարտուղարությունը նաև տեղեկատվություն էր ստացել Խարբերդում և Մարաշում կատարված դեպքերի մասին՝ պահանջելով թուրքական կառավարությունից փոխհատուցել ամերիկյան ունեցվածքին հասցված վնասը: Սակայն ինչ վերաբերում է Փոքր Ասիայում և Սիրիայում կատարված իրադարձություններին, ապա կառավարությունը ոչ ամբողջական տեղեկություններ էր ստացել կառավարության համար չաշխատող անհատներից, հիմնականում միսիոներներից:[2]

Զեկույցում նշվում էր, որ հայերի քաղաքական ձգտումները հիմնականում ձևավորվել էին օտար երկրներում, ուր ստեղծվել էին հայկական կազմակերպություններ, որոնց նպատակն էր ինքնավարություն ձեռք բերել Հայաստանի համար: Ավանդական ազգամիջյան ատելությունն «ավազակաբարո» քրդերի և խաղաղ հայերի միջև, որի արդյունքում կայսրությունում տեղի էին ունենում դաժան իրադարձություններ, պարարտ հող էր ստեղծել հայ քաղաքական շարժման զարգացման համար, ինչը զգալի չափերի էր հասել դեռևս մինչև Սասունի կոտորածները: Այս կոտորածների վերաբերյալ պետքարտուղարությունը ճշմարիտ տեղեկություններ չունի: ԱՄՆ-ն իր մասնակցությունը չի ունեցել Մուշում կազմված խառը հանձնաժողովի աշխատանքներին, որի արդյունքները դեռ չեն հրապարակվել: «Այն, որ գիշատիչ քրդերը թալանել են Սասունի շրջանը, որ մեծ թվով գյուղեր են ավերվել, որ հազարավոր անպաշտպան հայեր են սպանվել մեծ ջարդի արդյունքում, և որ լուրջ ջանքեր չեն գործադրվել թուրքական իշխանության կողմից կանգնեցնելու արյունահեղությունը, կարծես թե հիմնականում հաստատվում է»:[3]

Ըստ զեկույցի՝ այդ ժամանակվանից սկսած հայերի դեմ ընդվզումներ տեղի ունեցան Փոքր Ասիայի տարբեր շրջաններում, ուր այդ «դժբախտ»

[1] Նույն տեղում, էջ 1262:
[2] Նույն տեղում, էջ 1263:
[3] Նույն տեղում, էջ 1263-1264:

ժողովուրդը կազմում էր փոքրամասնություն: Սկզբում դրանք տեղական բնույթի խռովություններ էին, ինչպես օրինակ՝ անցյալ տարի Թոխաթում, ուր թուրքական զինվորների կողմից սպանվել էր մեկ և վիրավորվել 30 հայ: Անցյալ տարվա հունիսին հայերի կողմից ապստամբության փորձ կատարվեց Հալեպի շրջանի Զեյթունի սարերում, որն ավարտվեց մի խումբ հեղափոխականների բանտարկությամբ, որոնց շարքում էր նաև ԱՄՆ-ի հպատակություն ստացած Մելքոն Գյուլյանը: Անցյալ հուլիսին Ռուսաստանից Էրզրումի վիլայեթ մի խումբ զինված հայեր էին ներխուժել, որոնց մի մասը սպանվել էր, իսկ մյուսը՝ ձերբակալվել իշխանությունների կողմից:

Զեկույցում նշվում էր, որ արդեն իսկ օգոստոսին մահմեդականների մոլեռանդությունն այնպիսի աստիճանի էր հասել, որ Խարբերդում, Մարզվանում և Բիթլիսում լուրեր էին տարածվել հայերի ջարդեր սկսելու մասին: Սեպտեմբերի 30-ին անկարգություններ տեղի ունեցան Կոստանդնուպոլսում, ուր մի քանի հարյուր հայեր փորձեցին բողոքի ցույց կազմակերպել սուլթանական պալատի առջև, սակայն ցրվեցին ոստիկանության կողմից, որի ժամանակ սպանվեցին և վիրավորվեցին թուրքեր և հայեր: Անմիջապես դրանից հետո ամբոխը սկսեց կոտորել հայերին: Կոտորածի ընթացքում սպանվեց շուրջ 50 հայ: Անկարգությունները շարունակվեցին նաև հաջորդ օրը, որի ժամանակ ձերբակալվեցին և բանտարկվեցին 800-ից մինչև հազար հայեր: Երրորդ օրը միայն մայրաքաղաքում հաստատվեց կարգ ու կանոն: Այս դեպքերն աղետալի արձագանք ունեցան կայսրության տարբեր շրջաններում: Ընդհանուր կոտորածի վտանգն Ադանայի և Հալեպի վիլայեթներում ստիպեց, որ ամերիկյան ներկայացուցչության պահանջով հատուկ հրահանգներ իջեցվեին տեղի իշխանություններին Բարձր Դռան կողմից՝ ԱՄՆ-ի քաղաքացիների անվտանգությունն ապահովելու ուղղությամբ: Այդ իսկ նպատակով Ալեքսանդրեթի նավահանգիստ այցելեց «Մարբլհեդ» ռազմանավը:

Հոկտեմբերի 8-ին թուրքական ապստամբություն սկսվեց Տրաբզոնում, որի համար պատճառ հանդիսացավ իբր թե հայերի կողմից կազմակերպած Վանի վալիի սպանության փորձը և հայերի հարձակման մասին տարածված լուրը: Մյուս օրը սկսվեց հայերի ջարդ և նրանց տների ու խանութների թալան: Տեղական իշխանությունները, ըստ զեկույցի, ունեին ընդամենը 400 ոստիկաններ և զինվորներ, որոնք չկարողացան կանխել հայերի ջարդը: Պաշտոնական տեղեկատվության համաձայն՝ սպանված հայերի թիվը կազմել էր 182, իսկ թուրքերինը՝ 11: Իրականում սպանվել էր 500 հոգի: ԱՄՆ-ի քաղաքացիներին որևէ վնաս չէր հասցվել:[1]

[1] Նույն տեղում, էջ 1264:

Ըստ զեկույցի՝ այդ ժամանակվանից սկսած թուրքերի և հայերի միջև բախումները, կյանքի մեծ կորուստը սկսում են կրել ավելի հաճախակի և անհանգստացնող բնույթ: Հոկտեմբերի 9-ին Ակիխսարում սպանվել էր 50 հայ: Թիֆլիսում սպանվել էր 500 հոգի, պաշտոնական թուրքական մեկնաբանությունն այն էր, որ հայերը հարձակվել էին մզկիթի վրա աղոթքի ժամին: Դիարբեքիրում մահացել էր 5 հազար, որից 2 հազար 300-ը մահմեդականներ էին, թեև թուրքական կառավարությունը հայտնում էր, որ այդ տվյալները չափազանցված են: Նոյեմբերից տեղեկություն ստացվեց Մալաթիայում «մեծ ջարդի» մասին, որի ժամանակ սպանվել էին գրեթե բոլոր քրիստոնյա մեծահասակ տղամարդիկ: Նոյեմբերին Սվազում սպանվել էր 800 հայ և 10 քուրդ: Մեծ ջարդ էր տեղի ունեցել նաև Ուրֆայում, ուր տեղական իշխանությունները ապահովել էին ԱՄՆ-ի քաղաքացիների անվտանգությունը:

Հաճնի կայմակամը սպառնացել էր ոչնչացնել ողջ քաղաքը, որտեղ որ կար ամերիկյան դպրոց: Կոստանդնուպոլսում դեսպանորդ-նախարարը զգուշացրել էր այդ կապակցությամբ Բարձր Դռանը, որ եթե ամերիկացի ուսուցչուհիներին մի բան պատահի, նա պահանջելու էր կայմակամի գլուխը: Սուլթանական իշխանությունները ազատել էին նրան զբաղեցրած պաշտոնից:

Վերջերս նաև լուրեր էին ստացվել Մարզվանում, Ամասիայում և Այնթապում տեղի ունեցած կոտորածների, Հալեպում տիրող անհանգստության մասին: Արյունալի ջարդի ընթացքում այրվել էին Խարբերդի ամերիկյան դպրոցի մասնաշենքերը: Գյուրունում գրանցվել էր 400 մահ: Նոյեմբերի 19-ին Մարաշում վնաս էր հասցվել ամերիկյան ունեցվածքին, սակայն դեռևս մանրամասներ չկան:

Զեկույցում նշվում էր, որ պետքարտուղարությունը հնարավորություն չունի ճշգրիտ տեղեկատվություն ստանալու կոտորածների մանրամասների մասին տարբեր տեղերում, սակայն Կոստանդնուպոլսում դեսպանորդ-նախարարի տվյալներով՝ մինչև դեկտեմբեր ամիսն ընկած ժամանակաշրջանը ջարդերի հետևանքով սպանվել էր 30 հազար մարդ:

Զեկույցում նշվում էր, որ թուրքական կառավարությունն իբր ամեն ինչ անում էր կարգ ու կանոնը վերականգնելու ուղղությամբ, շատ նահանգներում նշանակվել էին նոր նահանգապետեր, տարբեր շրջաններ զինվորներ էին ուղարկվել՝ կարգ ու կանոնը հաստատելու նպատակով:

Եվրոպական տերությունների փորձ՝ Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու և «լավ կառավարում» ապահովելու ուղղությամբ, կարծես թե տվել էր իր պտուղները. հոկտեմբերի 20-ին կայսերական *իրադեի* միջոցով սուլթանական կառավարությունը հայտարարեց որոշ կարևոր բարեփոխումների մասին, որոնք վերաբերում էին քրդական ռազմական կազմակերպությունների սահմանափակումներին, քրիստոնյաներին ոստիկանության կազմում ընդգրկելուն և այլն:

Ըստ զեկույցի՝ ներկայիս հանդարտությունը կայսրությունում ժամանակավոր էր, և քանի դեռ եվրոպական տերությունները վերջնականապես չեն կարողացել միասնաբար կանգնեցնել կոտորածները, դրանց վտանգը դեռևս մնում էր ռեալ: Դեկտեմբերի 16-ի իր վերջին հեռագրում ԱՄՆ-ի դեսպանորդ-նախարարը գրում էր, որ դեռևս հույսեր չկան, որ եվրոպական տերությունները հաջողության կհասնեն այս հարցում և առաջարկում էր, որ անհանգիստ շրջաններում գործող և ցանկություն հայտնած ամերիկյան միսիոներները լքեն Թուրքիան: Նա առաջարկում էր ապահովել նրանց անվտանգ տեղափոխումը դեպի նավահանգիստներ, որտեղից էլ նրանք նավերով դուրս կբերվեն Թուրքիայից: Նա նաև պարտադիր կերպով առաջարկել էր, որ կայսրությունում գտնվող ամերիկացի բոլոր կանայք և երեխաները հեռանան երկրից:[1]

«Ամերիկյան խորհուրդի» քարտուղար Ջաղսոն Սմիթին ուղղված 1895 թ. դեկտեմբերի 21-ի զեկուցագրում միսիոներ Հենրի Դուայթը նկարագրում էր Օսմանյան կայսրությունում միսիոներական կայանների ընդհանուր վիճակը: Ըստ Դուայթի՝ երկրի արևմուտքում գտնվող կայանները գտնվում են շատ ավելի լավ վիճակում, քան արևելյան շրջանների կայանները: Մասնավորապես շատ ավելի վատ էր այն կայանների վիճակը, որոնց շրջանում արտասահմանյան հյուպատոսություն չկա: Դուայթը համեմատում էր հյուպատոսին ոստիկանի հետ, որի ներկայությունը թույլ չի տալիս խաժամուժին ստեղծել անկարգություններ: Կոստանդնուպոլսում ողջ մահմեդական բնակչությունը զինված էր և ամեն վարկյան սուլթանից հրահանգ էր սպասում առ այն, որ «սպանությունը օրինական է»:

Դուայթը շարունակում էր, որ Աղաբազարում կարծես ամեն ինչ հանգիստ էր. և որևէ անկարգություն կարծես չէր նախատեսվում: Զմյուռնիայում վիճակը կայունացնող հանգամանքն օտարերկրյա ռազմանավերն էին, իսկ Բուրսայում՝ ուժեղ նահանգապետի առկայությունը: Մանիսայում ջարդի վտանգ կար, սակայն նահանգապետը Քյամիլ փաշան էր, նախկին մեծ վեզիրը, որը թույլ չէր տա որևէ անկարգություն: Տրաբզոնը սկսել էր խելքի գալ կոտորածներից հետո, միսիոներներ Պարմելին, Քրոուֆորդը և օրիորդ Չամբերսն ամեն ինչ ձեռնարկում էին՝ շուրջ 4 հազար տուժածներին օգնելու համար: Չնայած գոյություն ունեցող սպառնալիքներին՝ Աղանայում և Հաճնում ամեն ինչ հանգիստ էր, «Մարբլհեդի» ներկայությունը Մերսինում կարծես դրական ազդեցություն էր թողնում ողջ շրջանի վրա: Մարդինում ու Վանում կոտորած տեղի չէր ունեցել, սակայն այնտեղ բազմաթիվ փախս-

[1] Նույն տեղում, էջ 1265-1266:

տականներ էին կուտակվել շրջանի գյուղերից: Էրզրումն ու Սըվազը նույնպես «խելքի էին գալիս» սարսափելի ջարդերից հետո, միսիոներներն ազատորեն կատարում էին իրենց օգնության գործը: Խարբերդում միսիոներներին պաշտպանում էին հարյուր զինվորներ, նրանց թույլ էր տրվում դուրս գալ իրենց նստավայրից կարճ ժամանակով: Բիթլիսում նույնպես միսիոներները պաշտպանված էին զինվորների կողմից, նրանք հնարավորություն չունեին ազատորեն շրջելու: Այստեղ ատելություն էր նկատվում միսիոներների նկատմամբ Սասունում տեղի ունեցած ջարդի տուժածների հանդեպ համակրանքի համար: Մարաշում նույնպես միսիոներները գտնվում էին զինվորների պաշտպանության տակ և շրջում էին նրանց ուղեկցությամբ: Իշխանությունները կարծես թե կարողանում էին վերականգնել կայունությունը, սակայն միսիոներների բարեկամ թուրքերը զգուշացնում էին նրանց, որ հաջորդ անգամ բոլոր նրանք, ովքեր կհրաժարվեն ընդունել մահմեդականություն, կդատապարտվեն մահվան: Այնթապում նույնպես միսիոներները գտնվում էին իշխանությունների պաշտպանության ներքո, նրանց թույլ էր տրվում բացակայել միմիայն այն դեպքում, եթե պատճառն ընդունելի էր: Լուրեր էին շրջում այն մասին, որ միսիոներների հանդեպ անվստահություն գոյություն ունի: Նույն վիճակն էր տիրում Մարզվանում, միսիոներները գտնվում էին 35 զինվորների պաշտպանության ներքո, միսիոներների դեմ անընդհատ հերյուրանքներ էին տարածվում: Մարզվանում վիճակը շատ ավելի լարված էր, քանի որ այստեղ գործում էր «անարխիստական» մի խումբ, որի գործունեության հանդեպ համակրանք կար ուսանողության շրջանում:

Ամենուրեք միսիոներների գործունեության նկատմամբ հակակրանք էր զգացվում, ցանկություն կար քանդել նրանց կողմից հիմնած կրթական համակարգը: Դուայթը կարծիք էր հայտնում, որ միսիոներներին փրկում էր այն հանգամանքը, որ եվրոպական տերությունները չէին ցանկանում միջամտել կայսրության ներքին գործերին: Ըստ Դուայթի՝ թուրքական կառավարությունն ինքն էր կազմակերպել իր հպատակների ջարդը, ինչպես նաև որոշ չափով հարձակումները միսիոներական հաստատությունների նկատմամբ՝ ձև անելով, որ իշխանություններն ամեն ինչ անում էին միսիոներների կյանքի և ունեցվածքի անվտանգությունն ապահովելու ուղղությամբ: Օրինակ՝ Խարբերդում հարձակումը միսիոներական հաստատությունների դեմ ղեկավարում էր անձամբ զորքերի դիվիզիայի հրամանատար Մուստաֆա փաշան, իսկ Մարաշում զինվորները ղեկավարում էին հարձակումը ճեմարանի վրա: Ընդհանուր առմամբ հրկիզվել և թալանվել էր շուրջ հարյուր մատուռ և դպրոց, ամբողջությամբ առգրավվել և այրվել էին միսիոներների գրքերը: Դուայթը հույս էր հայտնում, որ ԱՄՆ-ի կառավարությունն ի վերջո միջոցներ կձեռնարկի պաշտպանելու իր քաղաքացիների իրավունքները

Օսմանյան կայսրությունում, կպահանջի Բարձր Դռնից փոխհատուցել ամբողջ վնասը:[1]

1895 թ. դեկտեմբերի 22-ին Տերրելը գրում էր Օլնիին, որ, համաձայն Աստվածաշնչի տան տվյալների, կոտորածների ընթացքում Խարբերդում ամերիկյան ունեցվածքի վնասը կազմել էր 87 985 դոլար, իսկ Մարաշում՝ 10 560 դոլար: Խարբերդում գործող միսիոներ Գեյթսից ստացված հեռագրերը վկայում էին, որ հարձակվողները հրամաններ էին ստացել անձամբ Մուստաֆա փաշայից, որը շրջանի բանակի հրամանատարն էր:[2]

Դեկտեմբերի 4-10-ը Այնթապում տեղի ունեցած իրադարձությունները մանրամասնորեն նկարագրում էր իր նամակում բժիշկ Քարոլայն Համիլտոնը:[3]

Դեկտեմբերի 26-ին Տերրելին ուղղված նամակում պատվելի Ջորջ Հերրիկը գրում էր, որ, համաձայն միսիոներ Դուայթից ստացված տեղեկությունների, Մարզվանում բնակվող շուրջ քսան ԱՄՆ-ի քաղաքացիները, որոնք հիմնականում աշխատում էին Անատոլիական քոլեջում, գտնվում էին ծայրաստիճան վախի պայմաններում և այլևս չէին վստահում իրենց անվտանգությունն ապահովող թուրք զինվորներին և տեղի իշխանություններին: Նամակում խնդրում էին, որ Սըվազում ամերիկյան հյուպատոս Ջուեթը շտապ մեկներ Մարզվան՝ իրենց անվտանգությունն ապահովելու նպատակով: Նամակում նշվում էր, որ քաղաքում տեղի ունեցած սարսափելի ջարդի ընթացքում միսիոներներին պատկանող շինություններում պատսպարվել էին շուրջ 250 ուսուցիչներ և աշակերտներ:[4] Տերրելն անմիջապես հրահանգում էր Ջուեթին մեկնել Մարզվան և ապահովել ամերիկյան համայնքի անվտանգությունը:[5]

Դեկտեմբերի 26-ին Դուայթը գրում էր Տերրելին, որ 65 տարվա գործունեության ընթացքում ամերիկյան միսիոներներն Օսմանյան կայսրությունում 6 մլն դոլարի շինություններ էին կառուցել և վերանորոգել, համապատասխան գործիքներ էին ձեռք բերել՝ իրենց գործունեությունը կազմակերպելու նպատակով: Ներկայումս ամերիկացիներն Ասիական Թուրքիայի տարբեր շրջաններում ունեին 435 դպրոց, ուր սովորում էին 19 795 ուսանողներ: Միսիոներների ու հրատարակչությունների աշխատանքը սատարում էին հազարավոր ԱՄՆ-ի քաղաքացիներ, որոնք տարեկան 150 հազար դո-

[1] Նույն տեղում, էջ 1457-1458:
[2] Նույն տեղում, էջ 1416:
[3] Aid for Armenia: An Appeal for Immediate Help // The Armenian Massacres, 1894-1896 (Edited by Arman J. Kirakossian)..., pp. 118-121.
[4] US Department of State. Papers Relating to the Foreign Relations of the United States, With the Annual Message of the President, Transmitted to Congress, December 2, 1895, Part 1, Washington: Government Printing Office, 1896, pp. 1420-1421.
[5] Նույն տեղում, էջ 1421-1422:

լարի օգնություն էին տրամադրում այդ նպատակով: 1895 թ. հոկտեմբեր և նոյեմբեր ամիսների ընթացքում ամերիկացի միսիոներներին պատկանող 100 շինություններ և եկեղեցիներ էին ավերվել և թալանվել մահմեդական բնակչության կողմից, 25 հազար դոլարի գիրք էր առգրավվել և ոչնչացվել իշխանությունների կողմից: Եթե ամերիկացիները հեռանան Օսմանյան կայսրությունից, ԱՄՆ-ը ոչ միայն կկորցնի իր ունեցվածքը, ազդեցության ոլորտն ու այս ողջ ընթացքում միսիոներների կատարած կարևոր գործը, այլև կթողնի հարյուր հազարավոր հետևորդների անհույս վիճակում: Դուայթը գրում էր, որ մեր միությունը Բոստոնում որոշում էր ընդունել ոչ միայն դուրս չգալ երկրից, այլև ամեն ինչ անել՝ միսիոներների շահերն ու անվտանգությունը պաշտպանելու համար: Դուայթը պահանջում էր Տերրելին ձեռնարկել բոլոր միջոցները՝ միսիոներների կյանքի և ունեցվածքի անվտանգությունն ապահովելու, մեղավորներին պատժելու և օսմանյան կառավարությունից համապատասխան փոխհատուցում ստանալու ուղղությամբ:[1]

Դուայթին ուղղված իր պատասխան նամակում (27 դեկտեմբերի) Տերրելը նշում էր, որ իր առաջարկությունը միսիոներներին դուրս բերելու մասին նշանակում էր, որ նրանք միայն ժամանակավորապես պետք է հեռանան վտանգ ներկայացնող շրջաններից, և ոչ մի պարագայում դա չէր նշանակում մշտապես թողնել իրենց գործունեությունն Օսմանյան կայսրությունում: Տերրելը նշում էր, որ չորս ամիս առաջ նա իր համոզմունքն էր հայտնել գլխավոր հյուպատոսին և միսիոներների ղեկավարությանը, որ երբ հայտարարություն կարվեր այսպես կոչված «բարենորոգումների» մասին, սկսվելու էին հայերի ջարդեր և ծանր ժամանակներ միսիոներների համար: Սակայն նրա կարծիքն անտեսվեց: Լինելով ԱՄՆ-ի հարավային շրջաններից՝ նա լավ գիտակցում էր, որ «հպարտ և դոմինանտ ազգը» դաժան կերպով կարող էր արձագանքել հպատակ ազգի համար հատուկ բարենորոգումներ իրականացնելու որոշմանը, ինչպես դա տեղի ունեցավ սևերի դեմ ուղղված Կու-կլուքս-կլանի դաժանությունների ժամանակ: Այստեղ արդեն պարզ էր, շարունակում էր Տերրելը, որ մեծ տերություններից ոչ մեկն ուժ չի կիրառելու հայկական բարենորոգումներն իրագործելու համար: Համոզված լինելով դրանում՝ Տերրելն ամեն պարագայում պահանջել էր Բարձր Դռնից միջոցներ ձեռնարկել միսիոներների անվտանգությունն ապահովելու ուղղությամբ: Վտանգը գալիս էր նրանից, որ եվրոպական տերությունները բարենորոգումներ էին պահանջել քրիստոնյաների համար, ինչն ընդունելի չէր և վտանգ էր ներկայացնում մահմեդականության համար: Օսմանյան կայսրության մահմեդականների համար իսլամը վիրավորելու կամ սպառնալու համար քրիստոնյաներին սպանելը սովորական երևույթ էր: Այս հանգամանքը, ըստ Տերրելի, պետք է պարտադիր կերպով հաշվի առնվեր միսիոներների ղեկավարության կողմից: Միսիոներներին պաշտպանելու ուղղությամբ ԱՄՆ-ի ձեռնարկած միջոցներն ակներև էին, և քանի որ ներկայումս երկու պետությունների միջև գոյություն ունեին լավ հարաբերություններ, ամերիկյան կառավարությունը չէր կարող պաշտպանել միսիոներական դպրոցներում աշխատող տեղացի ուսուցիչներին՝ առաջարկելով նրանց ժամանակավորապես հեռանալ Օսմանյան կայսրությունից:

Տերրելը նշում էր, որ լավ պատկերացում ունի միսիոներների բարոյական հատկանիշների ու շահերի մասին, որոնք եկել էին օտար երկիր՝ կրթելու և բարձրացնելու անտեսված մի ազգ, «պրիմիտիվ քրիստոնյաներին»: Այդ պատճառով էր Տերրելն առաջարկել միսիոներներին ժամանակավորապես լքել երկիրը: Նա համոզված էր, որ այդ ընթացքում օսմանյան կառավարությունը հեշտությամբ կկարողանար պաշտպանել նրանց ունեցվածքը: Ըստ Տերրելի՝ այժմ ժամանակը չէր ուսուցչության համար, քանի որ միսիոներները հնարավորություն չունեին պաշտպանելու իրենց աշակերտների անվտանգությունը:

Տերրելը շարունակում էր, որ միսիոներները շատ դժվար ժամանակներ էին ապրում, քանի որ պատուհաններից դիտում էին, թե ինչպես է քուրդ խուժանը դաժանորեն սպանում իրենց աշակերտներին: Հնարավոր է, գրում էր դիվանագետը, որ ջարդերի զոհ էր գնացել 50 հազար քրիստոնյա, իսկ Եվրոպան, որը բարենորոգումների իրականացման հարկադրանքով համբերությունից հանել էր թուրքերին, այժմ «ձեռքերը ծալած» դիտում էր այս ամենը և չէր կարողանում կանգնեցնել «արյունալի այս կառնավալը»: Ջարդը շարունակվում էր, և հնարավոր է, որ ներկայումս ամերիկացիներին պաշտպանող թուրքը կդառնա մոլեռանդ: Ըստ Տերրելի՝ ձմեռը մոտենում էր, և դժվար էր լինելու օգնություն հասցնել բոլոր միսիոներներին:

Դիվանագետը նշում էր, որ ամերիկյան կառավարությունն անում էր հնարավոր ամեն ինչ՝ իր քաղաքացիներին պաշտպանելու համար, իսկ եվրոպական տերությունները համապատասխան պարտավորություններ էին ստանձնել Օսմանյան կայսրության ներքին գործերի նկատմամբ, և այստեղ ԱՄՆ-ը ոչինչ անել չէր կարող: Տերրելը գրում էր. «Անհանդուրժողականությունը դեսպոտիզմի պայմանների նկատմամբ լուսավորության բնական արդյունքն է: Հայ ժողովրդի կրթությունը բնականորեն ցանկություն է առաջացնում ավելի մեծ ազատության համար»:

Տերրելը նշում էր, որ ԱՄՆ-ի կառավարությունը հարմար պահի փոխհատուցում էր պահանջելու միսիոներների կողմից կրած վնասի համար:[1]

[1] Նույն տեղում, էջ 1427-1430:

[1] Նույն տեղում, էջ 1430-1434:

Դեկտեմբերի 27-ին Օլնին տեղեկացնում էր Տերրելին, որ Եվրոպայում ռազմածովային ուժերի հրամանատար, փոխծովակալ Սելֆրիջը հրահանգ էր ստացել «Մինեապոլիս» ռազմանավն ուղարկել Ալեքսանդրեթ ու Մարաշ և անհրաժեշտության դեպքում նավ վերցնել ամերիկյան միսիոներներին:[1]

Դեկտեմբերի 29-ին Տերրելը տեղեկացնում էր Օլնիին Խարբերդից ստացված նամակի մասին, համաձայն որի՝ նահանգում սպանվել էր 11 682 մարդ: Միսիոների կողմից ստացված նամակում գրված էր, որ չնայած իշխանությունները խոստացել էին ապահովել նահանգում ապրող և գործող միսիոներների անվտանգությունը, սակայն դեկտեմբերի սկզբին խաժամուժն ամբողջությամբ վնասել էր իրենց այգին, կտրել շուրջ երեսուն ծառ, այրել չորս տուն: Միսիոներների դժգոհության արդյունքում իշխանությունները զինվորներ էին ուղարկել, որոնք ձերբակալել էին մի քանի հոգի: Տեղի ունեցած դատավարության ընթացքում պարզվել էր, որ հավաքված խաժամուժը չէր համարձակվում հարձակվել ամերիկացիների տների վրա մինչև այն պահը, երբ որոշ զինվորներ կրակ էին բացել տների ուղղությամբ՝ ոգևորելով խաժամուժին: Մինչև հարձակումը խաժամուժը հավաքվել էր մզկիթում, ուր քաղաքի ղեկավար ուլեմաներից մեկը հատուկ աղոթք էր ասում հարձակվողների հաջողության համար՝ բառացի ասելով հետևյալը. «Թող ձեր թրերը սուր մնան գործը հաջողությամբ ավարտելու համար»: Ավելին, պարզվեց, որ քաղաքում տեղակայված բանակի հրամանատար Մուստաֆա փաշան հեռադիտակով հետևել էր միսիոներների տների վրա իրագործվող հարձակումը, և երբ նկատել էր, որ մի քանի տուն դեռևս մնացել են անվնաս, կանչել էր գնդապետին և զայրացած հարցրել, թե ինչու՞ են դեռ կանգնած մնացել այդ շինությունները:

Ըստ նամակում բերված տեղեկատվության՝ նահանգի գյուղերում քրիստոնյաներին ստիպել էին ստորագրել փաստաթղթեր, համաձայն որոնց՝ անկարգությունները սկսվել էին քրիստոնյաների պատճառով, որոնք պատրաստվում էին հարձակվել մահմեդականների վրա: Պաշտոնական զեկույցում նշվում էր, որ հայերը նախահարձակ էին եղել, որի հետևանքով քաղաքում սպանվել էր 23 քրիստոնյա և 8 մահմեդական: Ըստ միսիոներների տեղեկությունների՝ քաղաքի իրենց թաղամասում սպանվել էր 45 քրիստոնյա, իսկ ամբողջ քաղաքում՝ 100 քրիստոնյա, թուրքերն ընդհանրապես չէին տուժել: Հուսեյնիկ գյուղում, պաշտոնական տվյալների համաձայն, սպանվել էր 120 քրիստոնյա և 80 թուրք, սակայն միսիոներների ստույգ տվյալների համաձայն՝ սպանվել էր 200 հայ, թուրքերը վնաս չէին կրել: Պատճառն այն էր, որ հայ բնակչությունը հանձնել էր իր ունեցած ամբողջ զենքը՝ վստահելով իր անվտանգությունն իշխանություններին:

[1] Նույն տեղում, էջ 1422:

Համաձայն միսիոների տեղեկատվության, անկարգությունների պահից սկսած, տարօրինակ բան էր կատարվում փոստի հետ, ամերիկացիները սովորականի նման ո՛չ թերթ էին ստանում, ո՛չ էլ նամակ: Դրա հետևանքով նրանք մնացել էին առանց միջոցների և չէին կարողանում օգնություն տրամադրել տուժածներին: Միսիոներները դիմում էին ԱՄՆ-ի կառավարությանը՝ Բարձր Դռնից փոխհատուցում և վնասված շինությունների վերականգնում պահանջելու խնդրանքով:

Նամակի հեղինակը շարունակում էր, որ որոշ գյուղերից տեղեկատվություն էր ստացվում այն մասին, որ հայերին համատարած ստիպում էին ընդունել մահմեդականություն: Շատերն ընդունում էին մահմեդականություն՝ իրենց կանանց և երեխաների կյանքը փրկելու համար: Գյուղերից մեկում բողոքական ուսուցիչը հատուկ ամուսնացել էր պատվելիի դստեր հետ, որպեսզի նրան չսպանեն: Մեկ ուրիշն ամուսնացել էր եղբոր կնոջ հետ: Ընդհանուր առմամբ, ըստ միսիոների, նահանգում սպանվել էր 13 բողոքական պատվելի:

Համաձայն միսիոներների գնահատականի՝ մահմեդականներն իսկական խաչակրաց արշավանք էին սկսել՝ նպատակադրվելով ոչնչացնել բոլոր քրիստոնյաներին: Քաղաքի մահմեդականները հայտարարում էին, որ եթե պատերազմ սկսվի իրենց երկրի դեմ, «եթե տեղի ունենա եվրոպական միջամտություն, մենք կվերջացնենք քրիստոնյաներին»:

Քաղաք այցելած պետական հանձնաժողովի անդամները հանդիպումներ էին ունեցել թուրքերի և հայերի ներկայացուցիչների հետ: Հանձնաժողովի անդամ Աբդուլլա փաշան ասում էր, որ հայերը մարդիկ էին ուղարկել Վաշինգտոն և Չիկագո՝ թերթեր տպագրելու և թուրքերի ու նրանց պետության դեմ քարոզելու նպատակով: Եթե հայերը շարունակեն նման գործողությունները, ապա այլևս դատ և ձերբակալություն չի լինելու, միայն մահապատիժ, որի հետևանքով երկրում այլևս հայ չի մնալու: Ամբողջ մեղքն ու պատասխանատվությունը կատարվածի համար հանձնաժողովի անդամները բարդում էին միմիայն հայերի վրա: Նրանց զեկույցի համաձայն՝ նահանգի տարբեր շրջաններում ավերվել էր 138 քաղաք և գյուղ, հրդեհվել 5 064 տուն, սպանվել 12 708 մարդ:[1]

Դեկտեմբերի 30-ին Օսմանյան կայսրության արտաքին գործերի նախարար Թևֆիկ փաշան պատասխանում էր Տերրելին Մարաշում տեղի ունեցած դեպքերի առնչությամբ: Նա ամբողջությամբ հերքում էր, որ կայսերական զինվորները մասնակցել էին թալանին և հրդեհել աստվածաբանական ճեմարանի շենքը: Հակառակը, ըստ նախարարի, զինվորները շարու-

[1] Նույն տեղում, էջ 1423-1426:

նակել էին այն պաշտպանել և օգնել էին հանգցնել հրդեհը, իսկ ընդհանուր վնասը բռնկված կրակից կազմել էր ընդամենը 150 թուրքական ֆունտ:[1]

1896 թ. հունվարի 3-ին Տերրելը զեկուցում էր Օլնիին, որ Ուրֆայի և Այնթապի միջև ընկած շրջանում սպանվել էր 900 հոգի:[2]

Ամերիկյան դիվանագետների և միսիոներների վկայություններն ու տեղեկությունները կարևորագույն սկզբնաղբյուր են 1895 թ. հայկական կոտորածների լուսաբանման գործում: Սակայն թուրքական տեսակետները պաշտպանող Ջերեմի Սոլթը գրում էր, որ շատ դեպքերում ամերիկյան հյուպատոսների հաղորդագրությունները չափազանցված էին, քանի որ նրանք ոչ թե ականատեսներ էին, այլ ուշացումով ներկայացված նրանց հեռագրերը կազմվել էին հայկական աղբյուրների և վկայությունների հիման վրա: Որպես օրինակ՝ նա բերում էր փոխհյուպատոս Ֆիցմորիսի Ուրֆայի հայկական եկեղեցու հրդեհման մասին գրած զեկուցագիրը, որը գրվել էր մի քանի ամիս անց, երբ վերջինս այցելել էր քաղաք օսմանյան հետաքննության հանձնաժողովի երկու անդամների հետ: Նույնը վերաբերում է ԱՄՆ-ի հյուպատոս Փոչի զեկուցագրին, որը նույնպես այդ ժամանակ այնտեղ չի եղել: Իր տեղեկատվությունը հիմնված էր եղել կամ հայերի կամ ամերիկյան միսիոներների նամակներում բերված փաստերի վրա: Ըստ Սոլթի, եթե դեպքերը տեղի էին ունեցել այնպես, ինչպես դա նկարագրում էր հյուպատոսը, ապա այնտեղ վկա մնացած չէր կարող լինել: Սոլթի համաձայն՝ նույնիսկ Կոստանդնուպոլսում ԱՄՆ-ի ներկայացուցիչ Տերրելը գրում էր պետքարտուղարությանը, որ միսիոներների կողմից ստացված տեղեկատվությանը պետք չէ ամբողջովին վստահել, քանի որ նրանց միջնորդությունը վտանգավոր է դառնում, նրանց դիրքորոշումը նույնիսկ «դառնում է վտանգավոր գործոն դիվանագիտության մեջ»:[3]

Սոլթը վստահ է, որ միսիոներների ասածների մեծ մասը դժվար կարելի էր խոհեմ համարել, մասնավորապես, երբ օսմանյան իշխանություններն արդեն իսկ կասկածում էին նրանց խռովության կոչեր տարածելու մեջ: Միսիոներները հրապարակայնորեն իրենց թշնամությունն էին արտահայտում հեղափոխականների մասին, շարունակում էր Սոլթը, սակայն վերջիններիս հետ շփումների ժամանակ դժվար էր խուսափել բարդություններից: 1895 թ. մայիսին Մարզվանի քոլեջի նախագահ Թրեյսին գրում էր միսիոներների դժվարությունների մասին այն բանից հետո, երբ երկու տարի առաջ քոլեջի երկու հայ ուսուցիչները մեղադրվել էին հեղափոխական պաստառներ տպագրելու մեջ: Նա գրում էր, որ «մեր թշնամի հեղափոխականները» մի կողմից լուրեր էին տարածում միսիոներներին համակրող բնակչության

[1] Նույն տեղում, էջ 1448:
[2] Նույն տեղում, էջ 1443-1444:
[3] **Salt, Jeremy**, նշվ. աշխ., էջ 97-98:

շրջանում այն մասին, որ միսիոներները դավաճանում էին հայերին, իսկ մյուս կողմից, մեղադրում միսիոներներին կառավարության առջև իրենց իսկ կողմից կատարված հանցանքների մեջ: Թրեյսին գրում էր, որ միսիոներները քաղաքականությամբ չէին զբաղվում, սակայն երբ միսիոներները սկսում էին կասկածել նրանց, հեղափոխականները փորձում էին վարկաբեկել և ձերբազատվել միսիոներներից: Թրեյսիի նամակից անմիջապես հետո քոլեջից վտարվեցին մի խումբ հայ ուսանողներ, որոնց կասկածում էին հեղափոխական շարժմանը համակրելու մեջ:

Մեկնաբանելով Թրեյսիի նամակը՝ Սոլթը նշում էր, որ Թրեյսիի հայտարարությունն այն մասին, որ միսիոներները քաղաքականությամբ չէին զբաղվում, հարաբերական է, քանի որ օսմանյան կառավարության տեսանկյունից միսիոներների հրապարակային հայտարարությունները Հայկական հարցի վերաբերյալ, այդ հարցի շուրջ նրանց նամակագրությունն ԱՄՆ-ի և այլ տերությունների դեսպանների հետ, գրքերի և մամուլում հոդվածների հրապարակումն ուժ էին հաղորդում Բարձր Դռան թշնամիներին:[1]

1896 թ. հունվարի 4-ին պետքարտուղար Օլնիին նամակ էր գրում Մասաչուսետսի գյուղատնտեսական քոլեջի նախագահ Հենրի Գուդելը: Նա գրում էր, որ Ուլիամ Գուդելի որդին է, որը 40 տարի ծառայել էր Օսմանյան կայսրությունում: Ինքը ծնվել և իր կյանքի 17 տարին ապրել էր Կոստանդնուպոլսում: Ներկայումս իր քույրը՝ տիկին Բարնըմը, իր ամուսինն ու դուստրը գտնվում էին ծանր վիճակում Խարբերդում, կորցրել էին իրենց ամբողջ ունեցվածքը: Հենրի Գուդելը նշում էր իր նամակում, որ քրիստոնեության և միսիոներների հիմնական նպատակը «ավետարանականացումն է», իսկ միսիոներների աշխատանքը վերջանալու էր այն ժամանակ, երբ մահանալու էր քրիստոնյա հավատքը: Միսիոներներին չի կարելի վտարել իրենց տեղերից Օսմանյան կայսրությունում, նրանց պետք էր պաշտպանել 1839 թ. *Գյուլհանեի Հաթթը Շերիֆի* և 1856 թ. *Հաթթը Հումայունի* և այլ օրենքներով, ինչպես նաև երկկողմ պայմանագրերով: Ըստ Գուդելի՝ միսիոներները պետք է շարունակեն իրենց աշխատանքն Օսմանյան կայսրությունում և պետք է պաշտպանված լինեն օրենքի ողջ ուժով: Նրանց գործունեությունն ուղղված չէ թուրքերի դեմ, այլ աշխատանք է քրիստոնյաների հետ, որոնց իրավունքները նույնպես պաշտպանված են վերոհիշյալ օրենքներով:[2]

Չորս օր անց Օլնին պատասխանում էր Գուդելին, որ նա սխալ էր հասկացել և պատկերացնում ԱՄՆ-ի կառավարության դիրքորոշումն այս

[1] Նույն տեղում, էջ 111-112
[2] US Department of State. Papers Relating to the Foreign Relations of the United States, With the Annual Message of the President, Transmitted to Congress, December 2, 1895, Part 1, Washington: Government Printing Office, 1896, pp. 1449-1451.

հարցում: Կառավարությունն իրավունք չունի հրահանգելու միսիոներներին. նրանք ազատ են շարունակելու իրենց աշխատանքը, միևնույն ժամանակ կառավարությունը պարտավոր է և ամեն ինչ անում է՝ ապահովելու իր քաղաքացիների անվտանգությունը: Կառավարության ներկայացուցիչ Տերրելը հայտարարել էր, որ ամեն ինչ կարվի ցանկացողներին դուրս բերելու երկրից կամ էլ ապահովելու նրանց ուղևորությունը դեպի ավելի ծովափնյա շրջաններ:[1]

Հունվարի 8-ին Մավրոյենի բեյը գրում էր Օլնիին, որ, Բարձր Դռնից ստացված տեղեկատվության համաձայն, կայսերական բանակը որևէ մասնակցություն չի ունեցել Խարբերդում ամերիկյան դպրոցի հրկիզման գործում և հայերի կողմից կազմակերպված անկարգությունների ժամանակ շարունակել է պաշտպանել ամերիկյան միսիոներների կյանքի և ունեցվածքի անվտանգությունը:[2]

Հունվարի 10-ին Տերրելը զեկուցում էր Օլնիին, որ, դեկտեմբերի 18-ին Խարբերդից ստացված վստահելի աղբյուրի համաձայն, վիլայեթում հրկիզվել էր 7 054 տուն և սպանվել 15 845 հայ, թեև նշվում էր, որ այդ թվերը նվազեցված էին: Տերրելին ուղղված նամակում միսիոները, որի անունը նշված չէր, գրում էր, որ ինչպես տեղի պաշտոնյաները, այնպես էլ հասարակ թուրքերը հայտարարում էին, որ եթե եվրոպական տերությունները փորձեն միջամտել երկրի ներքին գործերին, նրանք սպանելու են մնացած բոլոր քրիստոնյաներին:

Պաշտոնական տվյալների համաձայն՝ Խարբերդի շրջանում սպանվել էին 600 քրիստոնյաներ, 250 քրդեր և 30 թուրքեր: Տեղական իշխանությունները ստիպողաբար զինվորների ներկայությամբ քրիստոնյաներից ստորագրություններ էին հավաքում, թե իբր անկարգությունները հայերն էին սկսել: Քրիստոնյա կանանց ստիպողաբար ամուսնացնում էին թուրքերի հետ:[3] Այնուհետև միսիոները ներկայացնում էր հրկիզված տների և սպանվածների ցուցակն ըստ բնակավայրերի:[4]

Հունվարի 20-ին Տերրելը գրում էր Օլնիին, որ Բիթլիսում թուրքերը միսիոներ Նեփին էին համարում պատասխանատու այնտեղ տեղի ունեցած կոտորածների համար: Տերրելը հատուկ հանդիպում էր ունեցել մեծ վեզիրի հետ՝ խնդրելով նրան հանել մեղադրանքը միսիոների վրայից, քանի որ նա հիվանդ է և ապաքինվելու կարիք ունի: Բրիտանիայի դեսպանը տեղեկացրել էր Տերրելին, որ շատ դեպքերում ամերիկացի միսիոներները չէին կարողանում դուրս գալ իրենց տներից՝ վախենալով, որ պատժվելու էին ա-

[1] Նույն տեղում, էջ 1451:
[2] Նույն տեղում, էջ 1449:
[3] Նույն տեղում, էջ 1452-1453:
[4] Նույն տեղում, էջ 1453-1454:

ռաջին հերթին հայերի կողմից, որոնց ոգևորել էին ապստամբել, սակայն ավելին չէին կարողացել անել նրանց համար: Տերրելը մերժում էր այդ տեսակետը:[1]

Հունվարի 29-ին Տերրելին ուղղված նամակում Օլնին հրահանգում էր հյուպատոս Ջուեթի միջոցով անմիջապես կազմակերպել հետաքննություն՝ կապված կոտորածներ հրահրելու գործում Նեփին ներկայացված մեղադրանքի մեջ: Եթե հնարավոր չէր օգտագործել այդ նպատակով Ջուեթին, ըստ Օլնիի, հարկավոր էր դիմել շտապ Բրիտանիայի դեսպանին՝ Վանում իր հյուպատոսի միջոցով քննությունը կազմակերպելու համար:[2]

Հունվարի 27-ին Այնթապից Տերրելին ուղղված նամակում ամերիկացի Ա. Ֆալլերը շնորհակալություն էր հայտնում Տերրելին և Հալեպում փոխհյուպատոս Ֆ. Փոչին՝ ԱՄՆ-ի քաղաքացիներին բռնության վտանգից պաշտպանելու համար:[3]

1896 թ. փետրվարի 1-ին Տերրելը պահանջում էր Օսմանյան կայսրության արտաքին գործերի նախարար Թևֆիկ փաշայից, որ Փոքր Ասիայում գործող բոլոր ամերիկացի միսիոներներին տրամադրվեն բավարար քանակի զինվորներ՝ իրենց պաշտպանությունն ապահովելու նպատակով: Նա պահանջում էր նաև, որ որտեղ հնարավոր է՝ պահեստայինները փոխարինվեն կանոնավոր զինվորներով:[4]

Փետրվարի 5-ին Ջուեթը Սրվազից գրում էր Շորտին Մարզվանում տիրող իրավիճակի մասին: Տարիների ընթացքում, ըստ Ջուեթի, ամերիկյան միսիոներները դարձել էին թուրքերի կողմից քննադատության առարկա, քանի որ թուրքերն այն կարծիքին էին, որ նրանք էին հայերին դրդում ապստամբության: Միևնույն ժամանակ հայերը նույնպես վիրավորում և քննադատում էին միսիոներներին, քանի որ նրանք դեմ էին հեղափոխությանը, դիրքորոշվել էին ընդդեմ հեղափոխականների, քանի որ վերջիններս փորձում էին ներքաշել ԱՄՆ-ի կառավարությանը և տրամադրել նրան Թուրքիայի դեմ, որովհետև քոլեջին վնաս էին հասցրել թուրքերը:

Ըստ Ջուեթի՝ ամերիկացիներին ներկայումս հաջողվել էր խուսափել ծանր միջադեպերից, քանի որ նրանք զգուշորեն ազատվել էին հեղափոխական միտումներ կրող ուսուցիչներից և աշակերտներից՝ բացելով քոլեջի դռները տեղական իշխանությունների կողմից կատարվող ստուգումների

[1] Նույն տեղում, էջ 1463:
[2] Նույն տեղում, էջ 1469:
[3] US Department of State. Papers relating to the Foreign Relations of the United States, with the Annual Message of the President transmitted to Congress, December 7, 1896, and the Annual Report of the Secretary of State, Washington, 1897, p. 851.
[4] Նույն տեղում, էջ 848:

համար և պահպանելով իրենց ամփոփոխ կեցվածքը հեղափոխական շարժման դեմ:

Վերջերս, ըստ Ջուեթի, քոլեջի ղեկավարությունը հայտարարել էր, որ որևէ ուսուցիչ կամ ուսանող կարող էր օգտվել քոլեջի արտոնություններից, եթե խոստանար, որ հրաժարվելու է հեղափոխական բնույթ ունեցող որևէ գործունեությունից: Ժամանակ առ ժամանակ քոլեջի ղեկավարությունը հավաքում էր ուսանողներից նրանց մոտ հայտնաբերված զենքը: Հիմնականում նրանց այն պետք էր գալիս՝ հեռավոր գյուղերից քոլեջ հասնելու համար:

Այնուհետև Ջուեթը նկարագրում էր 1895 թ. նոյեմբերի 15-ին տեղի ունեցած ջարդին վերաբերող իրադարձությունը, երբ ամբոխը փորձ էր կատարել հարձակվելու քոլեջի շենքի վրա, սակայն ոստիկանությունն ու զինվորները կանգնեցրել էին նրանց: Այնուհետև անձամբ նահանգապետն էր ժամանել զինվորների հետ և ապահովել քոլեջի պաշտպանությունն ու անվտանգությունը: 30 զինվորներ էին պաշտպանում քոլեջը ջարդի ընթացքում, բայց ջարդից հետո նրանց թիվը կիսով չափ պակասեց:

Մարզվանում գտնվելու ընթացքում Ջուեթը նախազգուշացրել էր հայ հեղափոխականներին, որ յուրաքանչյուր փորձ նրանց կողմից ներքաշելու ուսանողությանը հեղափոխական գործունեության մեջ, խստագույն կերպով պատժվելու է: Մինչև Մարզվանից մեկնելը Ջուեթը տեղեկություններ էր ստանում, որ հայ բնակչության մեծամասնությունը դեմ է հեղափոխական շարժմանը և հեղափոխականներից շատերը ցանկանում էին փախչել երկրից:

Միաժամանակ հյուպատոսը նշում էր, թե ինչքան կարևոր էր ամերիկացի միսիոներների կողմից քրիստոնյա բնակչության շրջանում տարվող հոգևոր, կրթական, բարեգործական աշխատանքը, ինչը պետք էր միանշանակ խրախուսել:

Հյուպատոսն առաջարկում էր նաև, որ ցանկություն հայտնած ամերիկացի կանանց և երեխաներին հնարավորություն տրվի տեղափոխվելու Կոստանդնուպոլիս կամ ԱՄՆ, թեև միաժամանակ նշում էր, որ միսիոներների պաշտպանության հարցը պետք է միշտ մնա ամերիկյան կառավարության և Կոստանդնուպոլսում ներկայացուցչության ուշադրության կենտրոնում:[1]

Փետրվարի 22-ին արտգործնախարար Թևֆիկ փաշան պատասխանում էր Տերրելին, որ թեև կայսերական կառավարության կողմից ձեռնարկված միջոցառումների շնորհիվ ներկայումս կայսրության ասիական շրջաններում «տիրում է կատարյալ հանգստություն», Բարձր Դուռը հանձնարարականներ էր իջեցրել Վանի, Բիթլիսի, Էրզրումի, Մամուրեթ ուլ-Ազիզի, Սեբաստիայի և Դիարբեքիրի նահանգապետներին ձեռնարկելու բոլոր հնարավոր միջոցները՝ միսիոներների և օտարերկրացիների կյանքն ու ունեցվածքը պաշտպանելու ուղղությամբ:[1]

Ապրիլի 8-ին Վաշինգտոնում Օսմանյան կայսրության ներկայացուցիչ Մավրոյենի բեյը գրում էր պետքարտուղար Օլնիին, որ Բարձր Դուռը հեռագիր էր ստացել 60 հայի ստորագրությամբ, որոնց թվում էին հայտնի առևտրականներ և ազնվականներ Խարբերդից, որոնք բողոքում էին ամերիկյան միսիոներներից: Նրանք գրում էին մեծ վեզիրին, որ 30-40 տարի առաջ Խարբերդում հաստատված միսիոներները իրենց դպրոցների ազդեցության միջոցով շատ հայ երեխաների շրջել էին ճիշտ ուղուց՝ փոխելով նրանց միտքն ու պահելաձևը՝ ուղղելով նրանց օսմանյան իշխանությունների դեմ, որոնք հաստատվել էին այս երկրում 600 տարի առաջ: Նամակում նշվում էր, որ քանի ամերիկյան միսիոներների մնալը երկրում կարող էր վնասել խաղաղությանն ու կայունությանը երկրում, նրանք պահանջում էին, որ ամերիկացիները հեռանան Օսմանյան կայսրությունից:[2]

Ապրիլի 15-ի իր պատասխան նամակում Օլնին գրում էր, որ այս հեռագիրը կարելի էր բնութագրել որպես «միսիոներների գործունեության դեմ ուղղված սիստեմատիկ խեղաթյուրման և զրպարտության արշավ»: ԱՄՆ-ի կառավարությունը, ըստ Օլնիի, քննության էր առնելու հեռագրում տեղ գտած ամբաստանությունները:[3] Կոստանդնուպոլսում ժամանակավոր հավատարմատար Ջ. Ռիդդլիին ուղղված հեռագրում Օլնին իր համոզվածությունն էր հայտնում այն մասին, որ նամակը ստորագրող հայերը դա արել էին պարտադրաբար՝ իրենց կյանքի անվտանգությունն ապահովելու համար: Պետքարտուղարը նշում էր նաև, որ նամակում բացակայում էր ժամկետը:[4]

ԱՄՆ-ի կառավարությանն այնքան էր անհանգստացրել հայերի կողմից ստորագրված այդ նամակը, որ հավատարմատարը խնդրում էր Մեծ Բրիտանիայի դեսպան Քարրիին պարզել դրա իսկությունը Խարբերդում բրիտանացի փոխհյուպատոս Ռաֆայել Ֆոնտանայի միջոցով: Վերջինս գրում էր դեսպանին, որ հայերը գտնվում էին այնպիսի սարսափահար վիճակում, որ կարող էին ստորագրել տեղական իշխանությունների կողմից պատրաստված յուրաքանչյուր փաստաթուղթ: Ստորագրելուց հետո շատերը շտապել էին տեղեկացնել այդ մասին միսիոներ Բարնըմին: Փոխհյուպատոսն անձամբ խոսել էր 6-7 հայերի հետ, որոնք խոստովանել էին, որ ստո-

[1] Նույն տեղում, էջ 848-850:

[1] Նույն տեղում, էջ 852:
[2] Նույն տեղում, էջ 854-855:
[3] Նույն տեղում, էջ 855:
[4] Նույն տեղում, էջ 856:

բագրել էին վախի ներքո: Նրանցից երեքը հայտարարել էին, որ նույնիսկ չէին կարդացել փաստաթուղթը:[1]

Քրդական հրոսակախմբերի և իշխանությունների կեղեքումների դեմ պայքարի հերոսական փորձ հանդիսացան 1896 թ. հունիսին Արմենական, Հնչակյան և Դաշնակցություն կուսակցությունների կողմից կազմակերպված Վան քաղաքի և շրջակա գյուղերի հայ բնակչության ինքնապաշտպանական մարտերը: Հայերը հաջողությամբ կասեցնում էին բանակի և քրդական հրոսակախմբերի հարձակումները, սակայն զենքի և զինամթերքի պակասը ստիպեց նրանց ղեկավարներին համաձայնել Մեծ Բրիտանիայի փոխհյուպատոսի առաջարկությանը՝ դիմադրությունը դադարեցնելու մասին: Միջնորդության շնորհիվ հայ մարտիկները հեռանում են քաղաքից դեպի Պարսկաստան: Սակայն սուլթանական կառավարությունը չի կատարում հայ մարտիկների և բնակչության անվտանգությունն ապահովելու իր խոստումը, ճանապարհին թուրքերը հարձակվում են նրանց վրա: Ինչ վերաբերում է Վանին, ապա հունիսի 23-ին թուրք զինվորներն ու *համիդիե* խմբերն անարգել ներխուժում են քաղաքի հայկական թաղամասերը, թալանում և սպանում են հարյուրավոր հայերի: Բրիտանական միջնորդության շնորհիվ հաջողվեց փրկել շուրջ 15 հազար հայի կյանք:[2]

1896 թ. հուլիսի 21-ին Էրզրումում ԱՄՆ-ի հյուպատոս Լեո Բերգհոլցը գրում էր ԱՄՆ-ի պետքարտուղարի տեղակալ Ն. Ն. Ռոկհիլին, որ իրավիճակի «խաղաղեցումը» Վանի շրջանում ընթանում էր շատ դանդաղ: Նահանգապետի պաշտոնակատար Սաադ-եդ-դին փաշան կարծես սկսում էր համընդհանուր համակրանք ձեռք բերել, սակայն դեռևս ժամանակ էր պետք, որպեսզի վստահությունը վերականգնվի: Նրա հրահանգով զինվորներն ուղարկվել էին տարբեր ուղղություններով՝ քրդերի կողմից գողացված կովերը, ոչխարներն ու այծերը հավաքելու նպատակով: Դրա արդյունքում շուրջ 1 600-ը վերադարձվել էին իրենց տերերին: Վանի նահանգապետ Նազիմ փաշան հրաժարական էր տվել կամ ազատվել էր անմիջապես հունիսի 14-ին սկսված ընդվզումից հետո և փոխարինվել բարենորոգումների հանձնաժողովի անդամներից մեկով, որը ներկայումս նահանգապետի պաշտոնակատարն էր: Քրիստոնյա բնակչությունը համակրում և հարգում էր Նազիմ փաշային, սակայն հայերի հանդեպ իր «խաղաղասեր» քաղաքականությունը սուլթանական պալատի դուրը չէր գալիս:

Ըստ հյուպատոսի՝ ներկայումս որևէ հավաստի տվյալ հնարավոր չէր ունենալ տեղի ունեցած կորուստների մասին, սակայն քաղաքի մեծ մասը գտնվում էր «մոխիրների» մեջ: Հայկական թաղամասի լավագույն դասա-

[1] Նույն տեղում, էջ 856-857:

[2] Տե՛ս, Կիրակոսյան Արման, Բրիտանական դիվանագիտությունը և արևմտահայության խնդիրը..., էջ 349-350:

կարգի տների մեկ երրորդը գտնվում էր փլատակների մեջ, վեց եկեղեցիներից երեքը հրդեհվել էին: Հյուպատոսի տվյալների համաձայն՝ քաղաքում սպանվել էին 500 հայեր և 200-ից մինչև 300 մահմեդականներ: Գյուղերից հասած լուրերը շարունակում էին մնալ հակասական և դժվար էր ասել, թե քանի հոգի էր այնտեղ մահացել: Հայտնի էր, որ Մոկսի գավառն ամբողջությամբ փրկվել էր և Բաշկալեի գյուղերը ներկայումս պաշտպանվում էին զինվորների կողմից: Որոշ քաղաքներում տղամարդկանց սպանել էին, իսկ նրանց կանանց տարել: Գյուղերից դեպի քաղաք հասած փախստականների թիվը մեծ էր, սակայն չէր գերազանցում 15 հազարը: Շատ գյուղացիներ դարձել էին մահմեդական, թեև ներկայիս նահանգապետի պաշտոնակատարը խստորեն արգելել էր մահմեդականացումը սուրի տակ: Քաղաքից փախած հեղափոխականների մեծ մասը բռնվել էին զորքի կողմից պարսկական սահմանի մոտ, նրանց ղեկավարներից մի քանիսը ներկայումս գտնվում էին բանտում: Ներկայումս Վանում երեք ամերիկյան քաղաքացի կար՝ պատվելի Ռեյնոլդզը, իր կինը և տիկին Գրեյս Քիմբալը: Ամերիկյան սեփականությունը վնասվել էր:[1]

Օգոստոսի 8-ի իր հեռագրում Լեո Բերգհոլցը գրում էր, որ Վանա լճից հարավ գտնվող շրջանի գյուղերի մեծամասնությունը մեծապես տուժել էր հունիսին տեղի ունեցած դեպքերի արդյունքում: 25-30 գյուղերում, որտեղ որ կային 800-ից 850 տուն, սպանվել էր շուրջ 670 տղամարդ, տները քանդվել էին, կանանց և աղջիկներին տարել էին: Վանից փախած հեղափոխականների թիվը հասնում էր 1 400-ի, որոնցից միայն 400-ն էին անվտանգ անցել պարսկական սահմանը, մնացածին բռնել էին զինվորները: Դեռևս չէր հաստատվել Խարբերդից հյուսիս-արևմուտք գտնվող Ագին գյուղում իբր տեղի ունեցած հայերի կոտորածի փաստը, որոնց վրա հարձակվել էին իրենց մահմեդական հարևաններն ու քրդերը: Ագինի հայերի թիվը գերազանցում էր թուրք բնակչության թիվը, սակայն նրանք զինված չէին: 1895 թ. գյուղը ջարդի չէր ենթարկվել, քանի որ հայերը վճարել էին մահմեդականներին և քրդերին 1 800 լիրա (1 920 դոլար): Հնարավոր է, որ քրդերն էին գումար պահանջել հայերից:[2]

Օգոստոսի 5-ին Տերրելը գրում էր Օլնիին, որ Հալեպում թուրքական իշխանությունները ձերբակալել էին վեց հայերի, որոնք հիմնականում ԱՄՆ-ի քաղաքացիություն էին ստացել 1895 թ. Բոստոնում: Ըստ իշխանություննե-

[1] The National Archives and Records Service, Despatches from United States Consuls in Erzerum, 1895-1904, Roll 1, Vol. 1, August 5, 1895 – December 31, 1900, Leo Bergholz to N.N. Rockhill, 1896, July 21, No. 13, pp. 1-3.

[2] The National Archives and Records Service, Despatches from United States Consuls in Erzerum, 1895-1904, Roll 1, Vol. 1, August 5, 1895 – December 31, 1900, Leo Bergholz to N.N. Rockhill, 1896, August 8, No. 17, pp. 1-3.

րի՝ այս մարդիկ վերադարձել էին անկարգություններ կազմակերպելու նպատակով և պետք է պատիժ կրեին դրա համար: Դեսպանորդը գրում էր, որ իշխանությունը չէր ուզում կրկնել իր սխալները՝ Զեյթունի ապստամբության նման միջադեպ չստեղծելու համար:[1]

Այդ կապակցությամբ անմիջապես հաջորդ օրը Տերրելը նամակ էր գրել Թևֆիկ փաշային՝ բողոքելով է Հալեպի բանտում մի քանի շաբաթ վեց ԱՄՆ-ի քաղաքացիություն ստացած հայերին բանտում պահելու համար: Նրանց անունները էին՝ Պողոս Չերքիջյան, Նիկողոս Վանյան, Սենեքերիմ Բաջակլյան, Եփրեմ Գաջարյան, Սեդրակ Առաքելյան և Սարգիս Բալյան: Տերրելը պահանջում էր հանձնել այդ մարդկանց Կոստանդնուպոլսում ԱՄՆ-ի ներկայացուցչությանը կամ Ալեքսանդրեթում ԱՄՆ-ի հյուպատոսական գործակալին:[2] Սեպտեմբերի 23-ին Տերրելը գրում էր Օլնիին, որ, Հալեպում ԱՄՆ-ի հյուպատոսի պաշտոնակատար Փոչի համաձայն, ԱՄՆ-ի քաղաքացիները դեռ գտնվում էին բանտում: Ըստ Փոչի՝ նրանց ձերբակալել էին կառավարությանը զինված դիմադրություն ցուցաբերելու համար, և նրանք հանձնվել էին իշխանություններին՝ երկրից հեռանալու խոստումով:[3] Դեկտեմբերի 20-ին Տերրելը գրում էր Օլնիին, որ մեծ վեզիրը խոստացել էր, որ ազատ է արձակելու և վտարելու է երկրից Հալեպի բանտում գտնվող 9 հեղափոխականներին:[4]

Օգոստոսի 11-ին Տերրելը շրջաբերական էր հղում բոլոր ամերիկացի միսիոներներին առ այն, որ թեև կայսրության տարածքում գտնվող բոլոր ԱՄՆ-ի քաղաքացիների անվտանգությունն ապահովված է, սակայն վտանգը կարող է կրկին ի հայտ գալ, եթե վերսկսվեն ապստամբ գործողություններն օսմանյան կառավարության դեմ: Ամերիկյան կառավարությունը չէր կարող խորհուրդ տալ իր քաղաքացիներին մնալ անհանգիստ վայրերում: Տերրելի անձնական կարծիքը, որն անցյալ ամեռվա ընթացքում նա ներկայացրել էր միսիոներներին այն մասին, որ լավ կլիներ կանայք և երեխաները տեղափոխվեին ավելի անվտանգ վայրեր, իսկ տղամարդիկ, ցանկության դեպքում, կարող էին մնալ իրենց տեղերում, ճիշտ չէր ընկալվել և քննադատվել էր ԱՄՆ-ում: Ապագայում, նշում էր Տերրելը, նա խուսափելու է նման խորհուրդներից: Նա հիշեցնում էր, որ հարյուր տարի է, ինչ ԱՄՆ-ը խուսափում է այլ կառավարությունների ներքին գործերին միջամտելուց և նրանք, ովքեր ցանկանում են մնալ իրենց տեղերում, պետք է հաշվի առնեն

[1] US Department of State. Papers relating to the Foreign Relations of the United States, with the Annual Message of the President transmitted to Congress, December 7, 1896, and the Annual Report of the Secretary of State, Washington, 1897, pp. 914-915.
[2] Նույն տեղում, էջ 916:
[3] Նույն տեղում, էջ 922:
[4] Նույն տեղում, էջ 924:

այդ հանգամանքը: Նա նշում էր, որ իր կողմից ձեռնարկվել և ձեռնարկվելու են բոլոր հնարավոր միջոցներն ԱՄՆ-ի քաղաքացիների անվտանգությունն ապահովելու հարցում: Միաժամանակ Տերրելը համոզված էր, որ օսմանյան իշխանություններն ամեն ինչ անում են միսիոներների անվտանգությունն ապահովելու ուղղությամբ:[1]

Նույն օրը Տերրելը հայտագիր էր ներկայացրել Բարձր Դռանը՝ պահանջելով շարունակել ԱՄՆ-ի քաղաքացիների զինվորական պաշտպանությունը Խարբերդում, Մարաշում, Վանում, Կեսարիայում, Մարզվանում, Հալեպում, Հաճնում, Ուրֆայում, ինչպես նաև ամեն տեղ ասիական վեց նահանգներում, ուր բնակվում և աշխատում էին միսիոներները:[2]

Սեպտեմբերի 4-ին Էրզրումում հյուպատոս Լեո Բերգհոլցը գրում էր, որ, նույն թվականի մայիսին սուլթանի համաձայն, սուլթանի կողմից նշանակված Բարձր Դռան և Ֆրանսիայի, Ռուսաստանի ու Մեծ Բրիտանիայի միջև համաձայնեցված հայկական բարեփոխումների իրականացման հանձնաժողովի անդամ Շաքիր փաշան Էրզրումից մեկնել էր Էրզրումի, Սըվազի, Մամուրեթ ուլ-Ազիզի, Խարբերդի, Դիարբեքիրի, Բիթլիսի և Վանի նահանգներ տեսչական շրջագայության: Նրան ուղեկցում էին բազմաթիվ պաշտոնյաներ և սպաներ Էրզրումից և այլ քաղաքներից:

Շաքիր փաշայի մեկնելու պահին հյուպատոսական կորպուսը զարմանքով տեղեկացավ այն մասին, որ նրան ուղեկցելու էր ռուսական գլխավոր հյուպատոսության քարտուղար, գնդապետ Պրժեալսկին՝ որպես իր պատվիրակության անդամ: Այս ռուս սպան Էրզրումում էր գտնվում արդեն չորս տարի և հանդիսանում Մուշում ստեղծված Սասունի դեպքերի քննության հանձնաժողովի ռուս պատվիրակը: Ռուսական կառավարության այս քայլն այնպիսի նշանակություն էր ստացել Մեծ Բրիտանիայում, որ Ֆորին Օֆիսը հանձնարարել էր այդ նահանգների իր հյուպատոսական գործակալներին դիմավորել Շաքիր փաշային իրենց շրջանների սահմանին և ուղեկցել նրան այնքան ժամանակ, մինչև նա գտնվում էր տվյալ նահանգում: Ըստ հյուպատոսի՝ այստեղ որևէ մեկը պատկերացում չունի, թե ինչ լիազորություններով էր ռուսական ռազմական կցորդը մեկնել ուղևորության կայսերական հանձնաժողովի անդամի հետ: Սպասվում էր, որ գնդապետ Պրժեալսկին վերադառնալու էր ամսվա վերջին և իր ընտանիքի հետ մեկնելու էր երկարատև արձակուրդի: Սակայն բոլորը զարմացել էին, երբ իմացան, որ նա վերադարձել էր երեքշաբթի օրը և չեղյալ էր հայտարարել իր

[1] US Department of State. Papers relating to the Foreign Relations of the United States, with the Annual Message of the President transmitted to Congress, December 7, 1896, and the Annual Report of the Secretary of State, Washington, 1897, pp. 859-860:
[2] Նույն տեղում, էջ 861:

մեկնումը: Ըստ հյուպատոսի՝ Էրզրումում լուրեր էին տարածված Ռուսաստանի կողմից Էրզրումի գրավման մասին, որոնք ավելի ուժեղացան գնդապետ Պրժևալսկու կողմից իր մեկնումը չեղյալ հայտարարելու մասին: Գնդապետը լավ տիրապետում էր երկրի տեղագրությանը, և քանի որ Էրզրումը գտնվում էր 60 մղոն հեռավորության վրա ռուսական սահմանից, գրում էր Բերգհոլցը, և նրա ծառայությունները կարող էին անգնահատելի լինել, եթե Ռուսաստանը որոշեր հատել սահմանը:[1]

Սեպտեմբերի 11-ին Բերգհոլցը տեղեկացնում էր պետքարտուղարի տեղակալ Ռոկհիլին, որ հունիսին Ամերիկյան խորհուրդը ներկայացնող մի խումբ միսիոներներ պատվելի Մակալլումի գլխավորությամբ Հալեպի նահանգի Մարաշ քաղաքից մեկնել էր դեպի Զեյթուն և սահմանակից շրջանները: Իր «Զեյթունն ու սահմանակից շրջանները» զեկույցի համաձայն՝ Մակալլումն այցելել էր շրջանի 18 հայկական և թուրքական գյուղեր:[2]

Զեկույցի «Զեյթուն» ենթաբաժնում նշվում էր, որ գրեթե բոլոր փախստականները, որոնք պատսպարվել էին 1895 թ. Զեյթունի ապստամբության ընթացքում, ներկայումս վերադարձել էին իրենց գյուղերը՝ կառավարության պաշտպանության ներքո: Նրանց հաջողվել էր խույս տալ բծավոր տիֆի և դիզենտերիայի համաճարակից: Ըստ զեկույցի՝ երկիրը գտնվում էր «բացարձակ հանգիստ» վիճակում, և «կառավարությունն հնարավորինս ամեն ինչ անում էր կարգ ու կանոնն ու վստահությունը վերականգնելու ուղղությամբ»: «Բոլոր քրիստոնյաների հանդեպ վերաբերմունքը շատ բարյացակամ էր, և նրանք բոլորը երախտագիտությամբ էին արտահայտվում իրենց հանդեպ ցուցաբերված պաշտպանության համար», - գրում էր միսիոները:

Ալաբաշի շրջանն ընկած էր Զեյթունից հարավ և բնակեցված էր քրիստոնյաներով: Ըստ Մակալլումի՝ նրանք իբր առաջինն էին սկսել կրակել և դաժանորեն պատժվել էին: Նրանց գյուղերը փլատակների մեջ էին, և նրանք հացահատիկի որևէ պաշարից զուրկ էին: Ներկայումս նրանք ցրված էին շրջակա սարերի տարբեր վայրերում և գտնվում էին ծայրահեղ չքավորության վիճակում: Համաձայն միսիոների զեկույցի՝ այստեղ շուրջ 2 հազար բնակիչ կար, և նրանց հարկավոր էր ապահովել սննունդով և անասուններով:

Ըստ Մակալլումի զեկույցի՝ Մուխալ գյուղը տեղակայված էր լեռնային մասում և ամբողջությամբ փլատակների մեջ էր, բոլոր տներն ավերված էին: Լսելով, որ զինվորները մոտենում էին գյուղին, գյուղացիները փախել էին

[1] The National Archives and Records Service, Despatches from United States Consuls in Erzerum, 1895-1904, Roll 1, Vol. 1, August 5, 1895 – December 31, 1900, Leo Bergholz to N.N. Rockhill, 1896, September 4, No. 23, pp. 1-4.

[2] Մակալլումի բարեգործական աշխատանքի մասին տե՛ս հաջորդ գլխում:

Զեյթուն, նրանցից 75-ը մահացել էին հիվանդությունից, իսկ 355-ը՝ մնացել քաղաքում: Վերջիններս ապրում էին խցերում և վրաններում: Ճանապարհին ամերիկացները հանդիպել էին մի խումբ փախստականների, որոնք վերադառնում էին իրենց գյուղը:

Ըստ միսիոների զեկույցի՝ Ֆոռնոս գյուղի վրա հարձակում էին գործել զինվորները, գյուղը փլատակների մեջ էր, և միայն յոթ տուն էր մնացել չվնասված: Միակ նոր տունը, որը կառուցվել էր դեպքերից հետո, գյուղի ավագի տունն էր, կաթոլիկ միսիոներները վերակառուցել էին իրենց կրոնակիցների տները: Երբ զինվորները հարձակում էին գործել գյուղի վրա, այստեղ մեծ քանակությամբ փախստականներ կային այլ գյուղերից: Մակալլումը գրում էր, որ այստեղ տեղի էր ունեցել «մեծ կոտորած», և սպանվածների ոսկորները դեռ կարելի էր տեսնել սարի լանջին: Նրանք, ովքեր կարողացել էին փախչել, ձմեռն անց էին կացրել սարերում և քարանձավներում: Ֆոռնոսից ոչ հեռու գտնվում էր վանքը, որը ներկայումս ամբողջությամբ փլատակների մեջ էր, անվնաս էր մնացել միայն եկեղեցու շենքից:

Զեկույցի համաձայն՝ Թանուր գյուղը թուրքական էր, այն ենթարկվել էր հարձակման զեյթունցիների կողմից: Վերջիններս հրդեհել և ավերել էին տներ, սպանել 25 բնակիչ, մնացածը դիմել էին փախուստի: Գյուղացիների միայն մեկ մասն էր վերադարձել գյուղ, նրանք գտնվում էին ծայրահեղ աղքատության վիճակում և որևէ օգնություն կառավարությունից չէին ստացել:

Ըստ Մակալլումի՝ Ջոլ Պունար գյուղում ներկայումս 75 բնակիչ էր ապրում, գյուղացիներից շատերը մահացել էին Զեյթունում հիվանդությունից և սովից: Գյուղի տները հիմնականում հրդեհվել էին կամ ավերվել, «մեկ տուն էր գրեթե ամբողջությամբ փրկվել, քանի որ կտուրին կար արագիլի բույն, որը սուրբ կենդանի էր համարվում այս երկրում»: Այս գյուղն ավերվել էր մեկ ամիս անց այն բանից հետո, երբ Զեյթուն էին ժամանել հյուպատոսները՝ խաղաղության պայմանները քննարկելու նպատակով: Մահմեդական հարևանները քանդել էին գյուղը, որպեսզի հայերն այստեղ այլևս չվերադառնան: Համաձայն զեկույցի՝ հայերն այստեղ ապրում էին խուցերում:

Մակալլումը գրում էր, որ Դերենդե գյուղի մի մասում մահմեդականներ էին ապրում: Երբ չերքեզները հարձակվել էին գյուղի վրա, ինչպես հայերը, այնպես էլ թուրքերը հեռացել էին գյուղից, գյուղը վերածվել էր փլատակների: Ներկայումս գյուղում ապրում էին 200 քրիստոնյաներ: Ավելի շատ հայեր մահացել էին Զեյթունում հիվանդությունից և սովից:

Թաթկոլուկ գյուղում ապրում էին հայեր և թուրքեր, 500 բնակիչ էր այստեղ ապրում մինչև 1895 թ. դեպքերը, նրանցից շատերը մահացել էին Զեյթունում: Ըստ Մակալլումի զեկույցի՝ Զեյթունի ապստամբության ժամանակ հայերն ու թուրքերը եկել էին համաձայնության, որ եթե զեյթունցիները հարձակվեն գյուղի վրա, քրիստոնյաները պաշտպանելու էին թուրքերին, իսկ

եթե թուրքերը հարձակվեն՝ մահմեդականները կպաշտպանեն հայերին: Սակայն հարձակվեցին չերքեզները, և թուրքերն անկարող գտնվեցին պաշտպանել հայերին: Գյուղի հայերի տներն ավերվել էին:

Մակմալլումն այցելել էր Գյոկսուն գյուղի *մյուդիրի* (գյուղապետի) տուն, որը շատ ջերմ էր ընդունել միսիոներին: Շուրջ 60 հայեր, ասում էր գյուղապետը, որոնք չէին սպանվել կամ փախել գյուղից, դարձել էին մահմեդականներ և վերցրել թուրք անուններ: Գյուղապետի խոսքերով՝ նրանք ազատ էին կրկին դավանել քրիստոնեություն: Միսիոները կարողացավ ազատել նաև մի հայ տղայի և աղջկա, որոնց փախցրել էին հայկական եկեղեցուց: Միսիոները գրում էր, որ դժվար էր այլուր հանդիպել ավելի «դաժան ճիվաղի», քան այս շրջանի գլխավոր թուրք բեյն էր, որը հայտնի թալանչի էր և մարդասպան:

Ըստ Մակալլումի զեկույցի՝ Ջեբեն գյուղը մեծ և բարեկեցիկ բնակավայր էր՝ 1500 բնակչությամբ, որն ամբողջությամբ ավերված էր զինվորների կողմից: Ներկայումս այստեղ ապրում էին 871 բնակիչ: Շուրջ 700-ը մահացել էին մարտական գործողությունների ընթացքում, ժանտախտից և սովից: Ջեբենը կազմված էր երկու գյուղից, որոնք գտնվում էր մեկ և կես մղոն հեռավորության վրա. մեկը թուրքական գյուղ էր, մյուսը՝ հայկական: Շրջանը պաշտպանող զինվորները տեղակայված էին երկու գյուղերի միջև: Թուրքերը հրաժարվում էին հայերի հետ որևէ հարաբերություններ ունենալուց և թույլ չէին տալիս, որ նրանք վերադառնան Զեյթունից, քանի որ զեյթունցիները հարձակվել էին իրենց գյուղի վրա, ավերել 35 տուն և տարել մեծ քանակությամբ խոշոր եղջյուրավոր անասուններ:

Բունդուկ գյուղը նույնպես փլատակների մեջ էր, այն հայտնի էր իր խոշոր եղջյուրավոր անասուններով և ձիերով, ուներ «չքնաղ արոտավայրեր», սակայն ներկայումս այստեղ անասուններ չէին մնացել:

Թենիջե Կալա գյուղը նույնպես փլատակների մեջ էր: Անցյալ ձմռանն այստեղ զինվորները սպանել էին իտալացի կաթոլիկ միսիոներ, հայր Սալվատորին: Այստեղ շուրջ հարյուր կաթոլիկ էր ապրում: Այստեղից էլ Մակալլումը մեկնել էր Մարաշ:[1]

1899 թ. Բոստոնի «*Atlantic Monthly*» ամսագրում հրապարակված հոդվածում Օսմանյան կայսրությունում ԱՄՆ-ի ներկայացուցչությունում աշխատող դիվանագետ Չալմերս Ռոբերտսը հանգամանորեն նկարագրում էր 1896 թ. օգոստոսին Կոստանդնուպոլսի կոտորածի սարսափելի տեսարանները:

[1] The National Archives and Records Service, Despatches from United States Consuls in Erzerum, 1895-1904, Roll 1, Vol. 1, August 5, 1895 – December 31, 1900, Leo Bergholz to N.N. Rockhill, 1896, September 11, No. 24, pp. 1-21.

Նրա վկայությամբ՝ երեք օրվա ընթացքում Օսմանյան կայսրության մայրաքաղաքում սպանվել էր յոթից մինչև տասը հազար հայ: Ըստ դիվանագետի՝ կայսրության մայրաքաղաքի փողոցներում գործում էին փայտե մահակներով զինված մոլեռանդ ամբոխներ, որոնք հարձակվում էին հայերի վրա: Ոստիկանությունը ոչ միայն մնում էր տեղի ունեցող սարսափների անվրդով ականատեսը, այլև շատ դեպքերում մասնակցում էր սպանություններին ու կողոպուտներին: Բանակը նույնպես գրեթե ոչինչ չէր ձեռնարկում կոտորածների դադարեցման համար: Թեև զինվորականները փորձում էին ցրել ամբոխը, սակայն չէին համարձակվում կրակ բացել ջարդարարների ուղղությամբ: Դիակները քաղաքից դեպի գերեզմանատներ դուրս բերելու համար նախապատրաստվել էին մեծ քանակությամբ սայլեր ու սայլակներ: Երեկոյան Կոստանդնուպոլսի փողոցներում հայտնվում էին սպանվածների մարմիններով բեռնված հսկայական սայլեր:

Կոտորածը տարածվեց հիմնականում հայերի վրա. մայրաքաղաքի մնացած քրիստոնյա բնակչությունը գրեթե չէր տուժել: Ռոբերտսի կարծիքով՝ կոտորածի շարժառիթները ոչ թե կրոնական, այլ քաղաքական բնույթ էին կրում: Նրա խոսքերով՝ թուրքերը համոզված էին, որ հայերը դավադրություն էին նյութում «սրբազան» սուլթանական կառավարության դեմ: Հայերին թույլատրված էր սպանել, քանի որ թուրք իշխանությունները չէին ցանկանում ընդհարվել իրենց «գազազած» մահմեդական հպատակների հետ չցանկանալով կորցնել առանց այդ էլ երերված հեղինակությունը:

Ամերիկյան դիվանագետի վկայությամբ՝ տարբեր երկրների դեսպանությունների աշխատակիցները փորձում էին փրկել և օգնություն ցուցաբերել վիրավոր հայերին: Ամերիկյան ներկայացուցչությունում նույնպես ապաստան էին գտնում հիմնականում հարուստ բանկիրներ և առևտրականներ, որոնք պատմում էին իրենց մահացած ընտանիքների անդամների և հարազատների մասին: Ռոբերտսը վկայում էր, որ ներկայացուցչությունը հրահանգ էր ստացել Վաշինգտոնից օգնություն ցուցաբերել միմիայն ԱՄՆ-ի հպատակություն ունեցողներին և նրանց հարազատներին: Հարյուրավոր հայեր էին շրջապատում ներկայացուցչության շենքը՝ դիմելով իրենց անվտանգությունն ապահովելու և Միացյալ Նահանգներ մեկնելու խնդրանքով, սակայն մերժում էին ստանում ներկայացուցչությունից:[1]

1896 թ. սեպտեմբերի 12-ին Էրզրումում ԱՄՆ-ի հյուպատոս Բերգհոլցը գրում էր պետքարտուղարի տեղակալ Ռոկհիլին, որ այն բանից հետո, երբ հաստատվեց հայերի կողմից օգոստոսի 26-ին Օտտոմանյան բանկի վրա հարձակման լուրը, մահմեդականները սկսել էին բացահայտ սպառնալ տե-

[1] Roberts, Ch., A Mother of Martyrs // The Armenian Massacres, 1894-1896 (Edited by Arman J. Kirakossian)..., pp. 263-273.

ղի հայերին, մզկիթի վրա փակցվել էին պաստառներ, ուր կոչ էր արվում հավատացյալներին ոչնչացնել «անհավատներին», հայտարարվում էր նաև, որ վալին չէր կարող նրանց պաշտպանել: Սակայն շատ շուտով ոստիկանությունը հավաքել էր այդ պաստառները: Ըստ հյուպատոսի՝ նահանգապետը ձեռնարկել էր անհրաժեշտ և եռանդուն միջոցներ քաղաքում խաղաղությունը պահպանելու նպատակով. փողոցները հսկում էին հավելյալ ոստիկաններ, զորքը պատրաստ էր միջամտել անկարգությունների դեպքում: Նահանգապետը նաև հրավիրել էր իր մոտ ազդեցություն ունեցող հայերի ու թուրքերի և հայտարարել, որ չի հանդուրժելու և թույլ տալու հարձակում հայերի վրա: Հակառակ պարագայում նա հրամայելու էր զինվորներին կրակել ամբոխի ուղղությամբ: Միաժամանակ նա փորձել էր հանգստացնել հայերին և կոչ արել նրանց բաց պահել իրենց խանութները: Ըստ հյուպատոսի՝ նահանգապետ Ռաուֆ փաշայի շնորհիվ շաբաթն անցել էր հանգիստ, թեև հայերը շարունակում էին մնալ անհանգիստ վիճակում՝ վախենալով, որ անցյալ տարվա ջարդը կարող է կրկնվել: Նահանգապետը հավաստիացրել էր հյուպատոսին, որ չի հանդուրժելու որևէ անկարգություն:[1]

Սեպտեմբերի 18-ին Բերգհոլցը զեկուցում էր պետքարտուղարի օգնականին, որ հունիսին Վանում սպանվել էր 547 հոգի, որոնցից 519-ը տղամարդ էին, 520-ից ավելի հայեր փախել էին քաղաքից հեղափոխականների հետ, սակայն սպանվել էին զինվորների կողմից մինչև պարսկական սահմանին հասնելը: Կոտորածների արդյունքում սպանվել էր 1 215 հոգի: Հաշվի առնելով, որ հայ բնակչության թիվը քաղաքում կազմում էր 25 հազար, և այս թվից մեկ չորրորդը տղամարդիկ էին, հյուպատոսը գտնում էր, որ հայերի մեկ վեցերորդը կորցրել էր իր կյանքը: Հրդեհված տների թիվը 354-ն էր՝ 190 587 դոլար արժեքով: Ավերված տների թիվը՝ 1 514, իսկ ունեցվածքի ընդհանուր կորուստի արժեքը՝ 860 587 դոլար: Նահանգում մահացածների թիվը հասնում էր 5 600-ի, թեև այն նախնական էր, քանի որ հեռավոր վայրերից դեռևս որևէ տեղեկատվություն չէր ստացվել:[2]

Սեպտեմբերի 24-ին Տերրելը գրում էր Մերսինում գտնվող ԱՄՆ-ի ռազմանավի հրամանատար Թ. Ջուեթին, որ Սըվազում, Մոսուլում և Խարբերդում ամերիկյան միսիոներների և հայերի հանդեպ թշնամությունը դեռևս զգացվում էր, սակայն Բարձր Դուռը շարունակում էր կատարել իր խոստումը՝ անվտանգությունն ապահովելու ուղղությամբ: Նա առաջարկում էր տե-

[1] The National Archives and Records Service, Despatches from United States Consuls in Erzerum, 1895-1904, Roll 1, Vol. 1, August 5, 1895 – December 31, 1900, Leo Bergholz to N.N. Rockhill, 1896, September 12, No. 26, pp. 1-3.

[2] The National Archives and Records Service, Despatches from United States Consuls in Erzerum, 1895-1904, Roll 1, Vol. 1, August 5, 1895 – December 31, 1900, Leo Bergholz to N.N. Rockhill, 1896, September 18, No. 27, pp. 1-2.

դեկատվություն փոխանակել իրավիճակի վերաբերյալ Միջերկրականի արևելյան նավահանգիստներում կանգնելու պարագայում: Դժբախտաբար, գրում էր Տերրելը, իրավիճակը դեռ չէր հանգստացել մայրաքաղաքում, որտեղ օգոստոսի 26-27-ին կուտակվել էր 4-6 հազար մարդ: Հայտնաբերվել էին դինամիտային ռումբեր և դինամիտի գործարան, ինչը գրգռել էր մահմեդական բնակչությանը: Շարունակվում էր պարեկային հերթափոխությունը քաղաքում մեծ թվով զինվորների կողմից:[1]

Սեպտեմբերի 26-ին Բերգհոլցը գրում էր, որ տեղեկություններ է ստացել Ագին գյուղի հայերի վրա թուրքերի կողմից հարձակման մասին, որի արդյունքում կոտորվել էր 400 հոգի, որոնցից 40-ը թուրքեր էին: Ըստ հյուպատոսի՝ տեղեկություններ կան, որ քրդերը նույնպես մասնակցել էին ջարդին: Նրա կարծիքով՝ այս դեպքերն արդյունք են Կոստանդնուպոլսում տեղի ունեցած իրադարձությունների:[2]

Հոկտեմբերի 10-ին Բերգհոլցը զեկուցում էր, որ, մի թուրքից ստացված ճշմարիտ տեղեկատվության համաձայն, Ագինի հայերի վրա հարձակումը տեղի էր ունեցել սեպտեմբերի 15-ի գիշերը: Հրդեհել էին տներ, բնակիչներին սպանել, հարյուրավոր մարդիկ փորձել էին փախչել մոտակա սարերը, սակայն նրանց բոլորին սպանել էին: Տղամարդկանց մորթում էին, իսկ կանանց՝ բռնաբարում, կանանցից շատերը նետում էին իրենց Եփրատ գետը՝ անպատվության չենթարկվելու համար: 4 հազար հայերից սպանվել էին շուրջ 1 200-ը: Հազար տներից 800-ը հրդեհվել էին: Պաշտոնական հաղորդագրության համաձայն՝ հայերն իրը իրենք էին հրդեհել իրենց տները ու կրակել թուրքերի վրա, այնուհետև փախել մոտակա սարը, և երբ զինվորները փորձել էին համոզել նրանց վերադառնալ, նրանք հարձակվել էին զինվորների վրա, որի արդյունքում զորքի կողմից միջոցներ էին ձեռնարկվել ապստամբներին պատժելու և կարգ ու կանոնը հաստատելու նպատակով:[3]

Հոկտեմբերի 23-ին Բերգհոլցը նոր ճշտված տեղեկություններ էր հաղորդում պետքարտուղարությանը Ագինի ջարդի մասին: Ըստ հյուպատոսի՝ ջարդի էր ենթարկվել 2 հազար հայ, սպանվել էին շատ ավելի մեծ թվով կանայք և երեխաներ, քան անցյալ տարվա կոտորածի ժամանակ: Շատ դիակներ դեռ թաղված չէին, որոշ թվով դիակներ նետել էին Եփրատը, գյու-

[1] US Department of State, Papers relating to the Foreign Relations of the United States, with the Annual Message of the President transmitted to Congress, December 7, 1896, and the Annual Report of the Secretary of State, Washington, 1897, pp. 864.

[2] The National Archives and Records Service, Despatches from United States Consuls in Erzerum, 1895-1904, Roll 1, Vol. 1, August 5, 1895 – December 31, 1900, Leo Bergholz to N.N. Rockhill, 1896, September 26, No. 28, pp. 1-2.

[3] The National Archives and Records Service, Despatches from United States Consuls in Erzerum, 1895-1904, Roll 1, Vol. 1, August 5, 1895 – December 31, 1900, Leo Bergholz to N.N. Rockhill, 1896, October 10, No. 31, pp. 1-7.

.ղի 1 100 տներից 950-ն ավերվել էին և հրդեհվել: Ջարդն արտոնվել էր պաշտոնյաների կողմից, Ագինի իշխանությունները մեծ գումարներ էին պահանջել հայերից՝ իրենց անվտանգությունն ապահովելու համար: Քրդերը մասնակցություն չէին ունեցել, հայերն անզեն էին և չէին դիմադրել:[1]

1896 թ. հոկտեմբերի 10-ին Տերրելը հաղորդում էր Օլնիին, որ Բարձր Դուռը հրապարակել էր կայսերական հրովարտակ, համաձայն որի՝ որևէ հայի, որը մեկնել էր երկրից վերջին քսան տարիների ընթացքում, այլևս չէր թույլատրվելու բնակվել Օսմանյան կայսրությունում: Համաձայն այդ փաստաթղթի՝ հայ հպատակներին թույլատրվում էր բացակայել երկրից և վերադառնալ միայն երկու ամսվա ընթացքում: Նրանք, ովքեր կվերադառնան օտար անձնագրերով, չեն ճանաչվելու որպես արտասահմանյան քաղաքացիներ և նրանց չի թույլատրվելու մնալ երկրում: Նրանք, ովքեր կցանկանան մեկնել, պետք է իրենց վրա պատասխանատվություն վերցնեն, որ այլևս չեն վերադառնալու:[2] Օսմանյան կայսրությունում ծնված և ԱՄՆ-ում հպատակություն ստացած անհատներին վերաբերող իրավիճակը չափազանց տհաճ իրավիճակ ստեղծեց ամերիկյան քաղաքականության համար: Եվրոպական պետությունները, չունենալով ներգաղթի մեծ խնդիր Թուրքիայի հետ, լուռ համաձայնել էին այդ մոտեցմանը, իսկ Միացյալ Նահանգները ստիպված էր ընդունել այդ իրավիճակը:[3]

Օսմանյան իշխանությունների այդ որոշումը նոր բարդությունների առաջ կանգնեցրեց ամերիկյան դիվանագիտական ներկայացուցչությանն ու հյուպատոսություններին: Քանի որ ԱՄՆ-ում հպատակություն ստացած հայ տղամարդիկ չէին կարողանում վերադառնալ իրենց ծննդավայրը, ամերիկացի դիվանագետներն ու հյուպատոսները սկսեցին զբաղվել նրանց ընտանիքների անդամների հարցերով: 1896 թ. հոկտեմբերի 16-ին Տերրելը ստացավ օսմանյան կառավարության թույլտվությունը, որպեսզի հայ կանայք և երեխաները մեկնեին Միացյալ Նահանգներ՝ իրենց ամուսինների և հայրերի մոտ: Տերրելին ուղղված նամակում Օլնին որպես «մարդկային և նրբազգաց գործողություն» էր որակում սուլթանական կառավարության այդ որոշումը:[4] Նոյեմբերի 25-ին Տերրելը հաղորդում էր, որ, Խարբերդից

[1] The National Archives and Records Service, Despatches from United States Consuls in Erzerum, 1895-1904, Roll 1, Vol. 1, August 5, 1895 – December 31, 1900, Leo Bergholz to N.N. Rockhill, 1896, October 23, No. 35, p. 1.

[2] US Department of State. Papers relating to the Foreign Relations of the United States, with the Annual Message of the President transmitted to Congress, December 7, 1896, and the Annual Report of the Secretary of State, Washington, 1897, pp. 937-938.

[3] Fish, Carl Russell, American Diplomacy, New York: Henry Holt and Company, 1923, pp. 465-466.

[4] US Department of State. Papers relating to the Foreign Relations of the United States, with the Annual Message of the President transmitted to Congress, December 7, 1896, and the Annual Report of the Secretary of State, Washington, 1897, p. 924.

ստացված հեռագրի համաձայն, 26 կին և երեխա արդեն իսկ գտնվում էին ԱՄՆ-ի ճանապարհին, իսկ ևս 23-ը պետք է մեկնեին մի քանի օրից: 35 կանանցից և երեխաներից կազմված նոր խումբը մեկնեց նավով դեկտեմբերի վերջին:[1]

Նոյեմբերի 13-ին Օլնին գրում էր Տերրելին, որ ԱՄՆ-ում Օսմանյան կայսրության ներկայացուցիչ Մուստաֆա բեյը պետքարտուղարություն էր ներկայացրել արտաքին գործերի նախարարության հուշագիրը, ուր ասվում էր, որ օսմանյան կառավարությունը մտադիր էր համապատասխան ստուգումներ անցկացնել թուրքական նավահանգիստներ ժամանող օտարերկրյա նավերի վրա, որպեսզի կարողանար կանխել ոչ ցանկալի անձանց ժամանումը: Թուրքական կողմն առաջարկում էր համագործակցություն հաստատել այս հարցում: Օսմանյան կառավարությունը պահանջում էր նաև կանխել հեղափոխական բնույթի հրապարակումներն ու վտարել հայկական «ագիտատորներին» Միացյալ Նահանգներից:[2]

Նոյեմբերի 21-ին Բերգհոլցը գրում էր պետքարտուղարությանը, որ Օսմանյան կայսրությունում հավատարմագրված դեսպաններին ուղղված Բարձր Դռան հայտարարությունն այն մասին, որ Էրզրումում բանտարկված էր ընդամենը 37 հայ, իրականությանը չէր համապատասխանում: Ներկայումս բանտում 203 հայեր կային, որոնցից 130-ը դատապարտվել էին 5-ից մինչև 101 տարվա բանտարկության, իսկ 73-ը դեռ սպասում էին դատի: Ըստ հյուպատոսի՝ ձերբակալությունները կատարվել էին պարզունակ մեղադրանքների հիման վրա, բանտարկյալներին հաճախ տանջանքների էին ենթարկում:[3]

Իր հաջորդ զեկուցագրում Բերգհոլցը գրում էր, որ համաձայն նահանգապետից ստացված տեղեկատվության՝ Ալաշկերտի շրջանում ընդհարում էր տեղի ունեցել թուրքական զինվորների և հայ հեղափոխականների միջև:[4]

Նոյեմբերի 26-ին ամերիկյան Ռոբերտ քոլեջի նախագահ Ջորջ Ուոշբըրնն առաջարկում էր Տերրելին դիմել իշխանություններին, որպեսզի նրանք հանեն պարեկությունը քոլեջից, քանի որ իրավիճակը քաղաքում բարելավվել էր: Նոյեմբերի 27-ին Տերրելը գրում էր Օլնիին, որ ինքը մերժել էր Ուոշբըրնի առաջարկը, քանի որ տեղեկություններ էր ստացել Ալաշկերտում թուրքական զորքի և հայերի միջև տեղի ունեցած նոր բախումների

[1] Նույն տեղում, p. 925:

[2] Նույն տեղում, p. 928:

[3] The National Archives and Records Service, Despatches from United States Consuls in Erzerum, 1895-1904, Roll 1, Vol. 1, August 5, 1895 – December 31, 1900, Leo Bergholz to N.N. Rockhill, 1896, November 21, No. 43, p. 1.

[4] The National Archives and Records Service, Despatches from United States Consuls in Erzerum, 1895-1904, Roll 1, Vol. 1, August 5, 1895 – December 31, 1900, Leo Bergholz to N.N. Rockhill, 1896, November 27, No. 45, pp. 1-3.

մասին, որը դեռևս չէր ավարտվել: Եթե քաղաքում մի բան պատահի և ԱՄՆ-ի քաղաքացիներ կամ ուսանողներ մահանան թուրք զինվորների բացակայության դեպքում, իշխանություններին այլևս հնարավոր չէր լինելու մեղադրել այդ բանի համար:[1]

Դեռևս 1896 թ. փետրվարին ԱՄՆ-ի ներկայացուցչությունը դիմել էր Բարձր Դռանը 1895 թ. Խարբերդում տեղի ունեցած դեպքերի ընթացքում ամերիկյան ունեցվածքին հասցված 100 հազար դոլարի փոխհատուցման հարցով: Փետրվարի 24-ին արտգործնախարար Թևֆիկ փաշան պատասխանում էր Տերրելին, որ կայսերական բանակն ամեն ինչ արել էր միսիոներների կյանքն ու ունեցվածքը պաշտպանելու գործում, ուստի չէր պատրաստվում փոխհատուցել անկարգությունների ընթացքում տեղի ունեցած վնասը:[2] Պատասխան նամակում (փետրվարի 26) Տերրելը գրում էր, որ ամերիկյան կառավարությունը փոխհատուցում էր պահանջում օսմանյան հպատակների կողմից ԱՄՆ-ի ունեցվածքին հասցված վնասի համար: Եվ բացարձակ նշանակություն չունի, թե ով է հասցրել վնասը՝ թուրքերը, քրդերը, հայերը կամ կայսերական զինվորները: ԱՄՆ-ի կառավարությունը պաշտպանություն էր հայցել Բարձր Դռնից, բայց դա լիարժեք կերպով չէր ապահովվել: Տերրելը կրկին պահանջում էր, որ թուրքական կառավարությունը վճարի 21 870 ֆունտ և լրացուցիչ 2 730 ֆունտ Խարբերդում ու Մարաշում կատարված հրկիզումների ընթացքում: Սա փաստացի վնասի գումարն էր և իր մեջ չէր ներառնում թուրք հպատակների կողմից ոչնչացված գրքերի և ավետարանների արժեքը:[3] Հոկտեմբերի 8-ին Մավրոյենի բեյը գրում էր Օլնիին, որ Բարձր Դուռը հրաժարվում է վճարել փոխհատուցումը, քանի որ դեպքերը տեղի էին ունեցել ապստամբության ընթացքում, որը սատարում էին օտարերկրյա քաղաքացիները:[4] Հոկտեմբերի 17-ին Օլնին գրում էր Տերրելին, որ թուրքական կառավարության նման մոտեցումը ընդունելի չէ ԱՄՆ-ի համար: Նա հանձնարարում էր Տերրելին շարունակել վնասի փոխհատուցում պահանջել Բարձր Դռնից:[5]

Նոյեմբերի 16-ին Վաշինգտոնում Օսմանյան կայսրության նոր ներկայացուցիչ Մուստաֆա բեյը գրում էր Օլնիին, որ օսմանյան կառավարությունն իբր ամեն ինչ արել էր՝ պաշտպանելու համար ամերիկացիների անվտանգությունը և չէր կարող պատասխանատու լինել ոչ բնականոն իրավիճակի համար, որը ստեղծել էին հայ հեղափոխականները:[1]

Դեկտեմբերի 1-ին Տերրելը փոխհատուցման հարցի շուրջ հանդիպում էր ունեցել արտաքին գործերի նախարարի հետ, փաստարկներ էր բերել այն մասին, որ թուրք զինվորները նույնպես մասնակցել էին Խարբերդում և Մարաշում տեղի ունեցած հրկիզումներին՝ պահանջելով փոխհատուցում: Նման փոխհատուցում պահանջում էր նաև Ֆրանսիան և Իտալիան՝ եկեղեցիներ հրկիզելու, կաթոլիկ հայ Սալվատորին սպանելու համար: Իր հերթին Մեծ Բրիտանիան փոխհատուցում էր պահանջում օգոստոսի 26-27-ին Կոստանդնուպոլսում տեղի ունեցած բրիտանական ունեցվածքի կողոպուտի համար: ԱՄՆ-ի պահանջը համեմատաբար ավելի փոքր էր, սակայն տարբերվում էր նրանով, որ այդ երկրների դեսպանությունները, բարեգործական ծրագրի ներկայացումից անմիջապես հետո, նախօրոք պաշտպանություն չէին պահանջել օսմանյան իշխանություններից իրենց քաղաքացիների կյանքի և ունեցվածքի պաշտպանության համար:[2]

Դեռևս 1896 թ. մայիսի 12-ին ամերիկյան միսիոներ Ջորջ Նեփը գրում էր հավատարմատար Ջ. Ռիդդլին, որ փետրվարի չորսին Բիթլիսի իշխանությունները կանչել էին իրեն դատարան և մեղադրել «խաղաղությունը խանգարելու» մեջ: Նեփն անմիջապես հեռագրել էր ներկայացուցչություն և պատասխանել իշխանություններին, որ չի կարող ներկայանալ առանց ամերիկյան հյուպատոսի կամ առանց ներկայացուցչության հրահանգի: Ստանալով պատասխան ներկայացուցչությունից՝ նա առաջարկել էր իշխանություններին մեկնել Կոստանդնուպոլիս, ուր ԱՄՆ-ի ներկայացուցչի մասնակցությամբ կապացուցեր մեղադրանքի անհիմն լինելու հանգամանքը: Իշխանությունները որոշել էին իր ընտանիքի հետ միասին նրան ուղարկել Մուշ և հետո Կոստանդնուպոլիս: Նեփը որոշել էր սկսել իր ուղևորությունը մայիսի սկզբին, բայց մարտի մեկին, դեռևս ջարդից հետո, չորս ու կես ամիս բանտում գտնվող շուրջ 60 դեկավար հայերի բաց էին թողել բանտից: Այդ ընթացքում իշխանությունները փորձել էին ճնշում կիրառել նրանց վրա, որպեսզի վերջիններս ստորագրեն մի փաստաթուղթ, ուր ամբողջ մեղքն անկարգությունների համար դրված լիներ նաև ամերիկյան միսիոներների, մասնավորապես Նեփի վրա: Մինչ այդ իշխանություններն արդեն միսիոների դեմ մեղադրանքներ էին կորզել կաթոլիկներից և որոշ լուսավորչականներից: Բանտարկյալների ազատ արձակումը նույնպես այդ նպատակն էր հետապնդում: Բայրամի ժամանակ վալին ասել էր նրանց, որ ամերիկացիների վտարումը երկրից ամբողջությամբ համապատասխանում էր հայերի

[1] US Department of State, Papers relating to the Foreign Relations of the United States, with the Annual Message of the President transmitted to Congress, December 7, 1896, and the Annual Report of the Secretary of State, Washington, 1897, p. 874.
[2] Նույն տեղում, էջ 880-881:
[3] Նույն տեղում, էջ 881-882:
[4] Նույն տեղում, էջ 886:
[5] Նույն տեղում, էջ 892-893:

[1] Նույն տեղում, էջ 894:
[2] Նույն տեղում, էջ 899-900:

շահերին: Նա նաև հայտարարել էր, որ միսիոներների, մասնավորապես Քոլի և Ռեյնոլդզի ԱՄՆ ուղարկված նամակներում հակակառավարական տրամադրություններ կան, և որ նրանք այլևս չեն կարող մնալ երկրում:

Մարտի 19-ին մի քանի հայեր վարդապետի գլխավորությամբ և մի քանի ղեկավար մահմեդականներ կանչվում են վալիի մոտ, ուր փորձ էր արվել հաշտեցնել երկու համայնքները: Պայմաններից մեկն այն էր, որ հայերը պետք է միանան իրենց թուրք հայրենակիցներին և հեռագիր ուղարկեն կառավարությանը՝ վերջին անկարգությունների ամբողջ մեղքը ամերիկացիների վրա բարդելու նպատակով: Նամակը պետք է նաև պարունակեր երկրից ամերիկացիների արտաքսման պահանջ: Ղեկավար հայերը սպառնում էին մնացած հայերին, որ իրենց համար լավ չի լինի, եթե նրանք հրաժարվեն, քանի որ բնակչությունն այդ պարագայում կսկսի քննարկել նոր կոտորածներ կազմակերպելու հարցը: Հայերը երկու օր են խնդրում պատասխանի համար և ի վերջո հրաժարվում են առաջարկից, ասելով, որ ամերիկացիներին երկիր իրենք չեն հրավիրել: Նեփը եզրակացնում էր, որ հարցը միայն իրեն չի վերաբերում. այն ուղղված էր բոլոր ամերիկացիների դեմ:

Մարտի 20-ին Նեփը հեռագրում էր ներկայացուցչություն՝ առաջարկելով իրեն մոտ ուղարկել հյուպատոսին, որի ուղեկցությամբ նա կարող էր ուղևորվել Կոստանդնուպոլիս՝ դատավարությանը մասնակցելու և իր անմեղությունն ապացուցելու համար:

Մարտի 25-ին ոստիկանությունը շրջափակեց Նեփի տունը, իսկ վալիի ներկայացուցիչը պահանջեց, որպեսզի նա հեռանա քաղաքից երեք օրվա ընթացքում: Մարտի 28-ին վալին կրկին պահանջեց, որ միսիոները հեռանա երկրից Ալեքսանդրեթի վրայով:

Մարտի 29-ին ժանդարմների հրամանատարն է գալիս Նեփի տուն մի քանի զինվորների և ժանդարմներ ուղեկցությամբ և հայտարարում, որ եթե միսիոները հետաձգի իր մեկնումը, ապա «բարբարոս քրդերը» կմտածեն, թե նա դիմադրում է կառավարությանը, և այդ պարագայում շատ դժվար կլինի նրանց հանգիստ պահել: Նեփն անմիջապես սկսում է պատրաստվել, հրամանատարը թույլ է տալիս իր հետ վերցնել երկու ձի և մեկ ծառա: Երբ որ նրանք դուրս են գալիս քաղաքից, Նեփին թողնում են հինգ ուղեկցող *զապթիե*: Միսիոներից վերցնում են նաև իր ատրճանակը: Այնպիսի տպավորություն էր, որ նա իրական հանցագործ է: Նեփին այդպես դուրս բերեցին Բիթլիսից՝ չթողնելով իր հետ տանել իր ընտանիքը, որը մնաց միսիոներների խնամքի տակ:[1]

Միսիոները Դիարբեքիր հասավ ապրիլի 4-ին, որտեղ որ հանդիպեց Բրիտանիայի փոխհյուպատոս Հոլվորդին, թեև տեղական իշխանություն-

[1] Նույն տեղում, էջ 908-909:

ներն ամեն ինչ արեցին, որ իրենք չհանդիպեն: Սակայն Սևերեկում իշխանությունները թույլ չտվեցին նրան հանդիպել Բրիտանիայի հյուպատոս Ֆոնտանային:[1]

Ուրֆայում նա կարողացավ երկու խոսք փոխանակել ամերիկացի միսիոներ Սանդերսի հետ, որին խնդրում էր իր ողջության մասին հեռագիր ուղարկել Բիթլիս: Նեփը Հալեպ է հասնում ապրիլի 14-ին: Այստեղ նույնպես իշխանություններն արգելում են իրեն հանդիպել ԱՄՆ-ի հյուպատոս Փոչին: Նրան, փաստորեն, բանտարկում են, մինչև որ հյուպատոսը չի խոստանում, որ Նեփն այլևս Բիթլիս չի վերադառնալու:[2]

Ապրիլի 23-ին Նեփը ժամանեց Ալեքսանդրեթ, որտեղից էլ ֆրանսիական նավով մեկնեց Մերսին: Այստեղ նրա անձնագրում երկրից վտարելու կնիք են դնում, նստեցնում ամերիկյան «Մարբլհեդ» ռազմանավը: Մայիսի 6-ին նա հասնում է Կոստանդնուպոլիս:[3]

Հունիսի 6-ին Թևֆիկ փաշան նամակ էր գրել ԱՄՆ-ի հավատարմատար Ռիդդլին՝ կից ներկայացնելով Բիթլիսի նահանգապետի տեղեկատվությունն ամերիկյան միսիոներ Նեփի մասին: Թևֆիկ փաշան գրում էր, որ, այդ տեղեկատվության համաձայն, միսիոները ընդգրկված է եղել խառնակչության մեջ, և որի նպատակն էր խանգարել հասարակական կարգն ու անվտանգությունն Ասիական Թուրքիայի մի շարք շրջաններում, մասնավորապես Բիթլիսում:[4]

Բիթլիսի նահանգապետի հուշագրում գրված էր, որ Նեփը կապ էր ունեցել Բիթլիսում Հնչակյան կոմիտեի և ընդհանրապես հայերի ղեկավարների հետ՝ Փոքր Ասիայում հայկական իշխանապետություն ստեղծելու նպատակով: Նրա կողմից հրահրված «ագիտատոր» Հովսեփը, և նրա ընկերները, Բիթլիսի փողոցներից մեկում ուժ կիրառելով, առևանգել էին ծնողներից քուրդ մի աղջկա և հայհոյել կայսերական կառավարության և մահմեդական կրոնի հասցեին:

Ըստ նահանգապետի՝ Նեփն իր տանը ժողովներ էր կազմակերպել հայ «ագիտատորների» մասնակցությամբ՝ Բիթլիսի անկարգությունները կազմակերպելու նպատակով: Նա ապահովել էր նրանց զենքով և հրահանգել հարձակվել մզկիթների վրա, սպանել մահմեդական պաշտոնյաների, մի խոսքով՝ ամեն ինչ արել՝ կարգ ու կանոնը խախտելու համար: Նա տարածում էր հեղափոխական գաղափարներ և սենսացիոն բանբասանքներ, ինչպես նաև համոզում հայերին ընդունել բողոքականություն:

[1] Նույն տեղում, էջ 910:
[2] Նույն տեղում, էջ 911:
[3] Նույն տեղում, էջ 912:
[4] Նույն տեղում, էջ 913:

Մի քանի հայեր իբր խոստովանել էին, որ Նեփի կարգադրությամբ նրանք վիրավորել էին ոմն Գևորգ աղա Բաքալյանին, ինչի համար նրանց խոստացել էր հարյուր ոսկի, ինչպես նաև նրա կնոջն ու երեխաներին: Ըստ նրանց՝ Նեփն անձամբ զինել էր նրանց ատրճանակով:

Հուշագրում նշված էր նաև, որ Նեփը տեղյակ էր եղել հայերի հեղափոխական ծրագրերի մասին և իր նպատակն էր՝ սպանել տալ մի քանի հայ քրիստոնյաների մեղքը գցելով մահմեդականների վրա: Իբր 19 հայ փաստաթուղթ էին ստորագրել նրա դեմ:[1]

1896 թ. դեկտեմբերի 30-ին պատվելի Ա. Հաբբարդը գրում էր Տերրելին Սըվազից, որ 1893 թ.-ից ոչ մի դպրոց վիլայեթում չէր փակվել: Ամերիկացիների հսկողության տակ գտնվող դպրոցները, որոնք աջակցություն էին ստանում ամերիկյան հիմնադրամներից, և որտեղ աշխատում էին հիմնականում հայեր, ավերվել էին ջարդերի ժամանակ: Ամերիկացիները դասավանդում էին Սըվազի տղաների և աղջիկների դպրոցներում, որոնք բաղկացած էին տարրական, միջնակարգ և բարձրագույն դասարաններից՝ համապատասխանաբար 11 և 7 տարի ընդհանուր տևողությամբ: Ամեն դպրոցում ուսանում էին 300 աշակերտներ: Բացի այդ դպրոցներից՝ ամերիկացիները հիմնել էին Սըվազում երկու որբանոց 100-ից ավելի երեխաների համար:[2]

Դեկտեմբերի 1-ին միսիոներ Սանդերսը, Ուրֆայի աղջկա բարձրագույն դպրոցի տնօրեն, միսիոներուհի Շատթակի անունից գրում էր Տերրելին Ուրֆայից, որ քաղաքում տեղակայված զինվորական ստորաբաժանումները ջարդից անմիջապես հետո հեռացվել էին Ֆերիկ Ահմեդ Լուֆթի փաշայի հրահանգով երկու օրվա ընթացքում ցուցաբերած իրենց «ամոթալի» պահվածքի համար: Նրանց փոխարեն Ուրֆայում տեղակայվեցին երկու արաբական գունդ: Միսիոներներն իրենց գոհունակությունն էին հայտնում արաբական գնդերի գործողություններից, որոնք պաշտպանում էին հայկական թաղամասն ու ամբողջովին շահել էին քրիստոնյաների վստահությունը: Ըստ միսիոների՝ վերջերս լուրեր էին տարածվել, որ արաբական զորամիավորումները պետք է տուն մեկնեն, ինչն առաջացրել էր հայ բնակչության մտահոգությունը:[3]

1894-1896 թթ. ամերիկյան դիվանագիտության նամակագրությունը վկայում է այն մասին, որ նույնիսկ Օսմանյան կայսրությունում տեղի ունեցող հայ բնակչության համատարած կոտորածների ընթացքում պաշտոնական Վաշինգտոնը հավատարիմ մնաց Մոնրոյի վարդապետության դրույթներին, այն է՝ չփորձեց անգամ իսկ միջամտել, պահանջել սուլթանական իշխանություններից դադարեցնել ջարդը, շարունակեց պահպանել բարեկամական հարաբերություններ Օսմանյան կայսրության հետ՝ սահմանափակվելով միմիայն ԱՄՆ-ի շահերի, քաղաքացիների և ունեցվածքի պաշտպանության խնդիրների հետապնդումով:

[1] Նույն տեղում, էջ 913-914:
[2] US Department of State. Papers relating to the Foreign Relations of the United States with the Annual Message of the President transmitted to Congress, December 6, 1897, Washington: Government Printing Office, 1898, pp. 576-577.
[3] Նույն տեղում, էջ 570:

Այս տեսանկյունից մեծ հետաքրքրություն է ներկայացնում Օսմանյան կայսրությունում ԱՄՆ-ի դեսպանորդ Ալեքսանդր Տերրելի «Զրույց Աբդուլ Համիդի հետ» հոդվածը, որը տպագրվել էր Նյու Յորքի *«Century Magazine»* ամսագրում 1897 թ.:[1] 1896 թ. մարտի 19-ին կայացած հանդիպման ժամանակ ամերիկյան դեսպանորդի վերամբարձ և գովերգական կարծիքները օսմանյան սուլթանի և նրա կայսրության մասին լիակատար չափով բացատրվում էին ԱՄՆ-ի պաշտոնական դիրքորոշմամբ Հայկական հարցում: Չնայած հասարակական կարծիքի ճնշմանը՝ ամերիկյան կառավարող շրջաններն այդպես էլ որևէ գործնական քայլի չդիմեցին արևմտահայության պաշտպանության հարցում, նրանք ամեն կերպ գովաբանում և աջակցում էին սուլթանին՝ իրենց աճող կայսերապաշտական շահերն ապահովելու նպատակով:

Թուրքիայում առաջատար մի միսիոներին ուղղված իր նամակում Տերրելը զգուշացնում էր, որ սուլթանի «հայտարարությունը բարենորոգումներ ... իրականացնելու մասին հայերի ջարդի կբերի և վտանգ կստեղծի մեր հայրենակիցների համար»: Այնուհետև նա տեղեկացնում էր, որ ինքն «անհապաղ կերպով միջոցներ է ձեռնարկել մեր հայրենակիցների կյանքն ապահովելու ուղղությամբ»:[2] Իհարկե, չի կարելի նախատել դիվանագիտական առաքելության ղեկավարին այն բանի համար, որ նա պաշտպանում էր իր հայրենակիցների շահերը, սակայն նա կարող էր և պետք է օգտագործեր ԱՄՆ-ի ազդեցությունը՝ կանխելու համար քրիստոնյաների ջարդը, որոնց հետ «աշխատում էին» միսիոներները:

Թեև Տերրելը գովասանքով էր արտահայտվում հայկական «անկարգությունների» (այսպես էր սուլթանն անվանում հայ բնակչության կոտորածները՝ Ա.Կ.) ժամանակ ամերիկյան քաղաքացիների անվտանգությունն ապահովելու ուղղությամբ սուլթանի կողմից կազմակերպված միջոցառումների մասին,[3] 1895 թ. դեկտեմբերի 4-ին, երբ հայտնի դարձավ, որ թուրքական իշխանությունների վայրագ քաղաքականությունից վնաս են կրել նաև ամերիկյան միսիոներները, ԱՄՆ-ի Սենատը բանաձև ընդունեց՝ անհապաղ

[1] Terrel, A.W., An Interview with Sultan Hamid // The Armenian Massacres, 1894-1896 (Edited by Arman J. Kirakossian)..., pp. 252-262.
[2] Նույն տեղում, էջ 255:
[3] Նույն տեղում:

պահանջելով Բարձր Դռնից վնասի փոխհատուցում:[1] Գործի դրվեցին և՛ սպառնալիքը, և՛ ռազմանավերը, և՛ դիվանագիտական խորամանկությունը: Ի վերջո, ԱՄՆ-ի կառավարությունը 95 հազար դոլար կորզեց Բարձր Դռնից:[2]

Չնայած այն բանին, որ ԱՄՆ-ի կառավարությունն իր շահերի պաշտպանության և օգուտ քաղելու քաղաքականություն էր վարում Թուրքիայի նկատմամբ, հայերի ջարդը բողոքի ալիք բարձրացրեց երկրում: Մինչև իսկ Տերրելն էր գրում, որ սուլթանը «...որոշ չափով պատասխանատու է ջարդի համար, որն ավերեց նրա կայսրությունը», և որ իր անձնական կարծիքն այդ մասին գտնվում է ԱՄՆ-ի պետական քարտուղարի մոտ, սակայն մինչև այժմ մնում է անպատասխան»:[3]

Օսմանյան կայսրության հանդեպ եվրոպական տերությունների քաղաքականության վերաբերյալ ամերիկացի դիվանագետը իրավացիորեն նշում էր, որ «նրանք բոլորը ոչ միայն ձգտում են պահպանել կայսրության-...ամբողջականությունն, այլև սպանում են Կրետեի հույն-քրիստոնյաներին՝ ապացուցելու համար սուլթանին իրենց հավատարմությունը»:[4] Իր հերթին Աբդուլ Համիդն ուշադիր հետևում էր եվրոպական մամուլի և պետությունների դիրքորոշմանը՝ համապատասխանաբար գնահատելով իր շանսերը նրանց կողմից առաջ քաշված պահանջներին ընդդիմանալու նպատակով և այդ իսկ պատճառով հանգիստ պատասխանում էր Տերրելին, որ «իմ բնական ցանկությունն է զգուշանալ նրանց միջև ծագած կոնֆլիկտից»:[5]

Աբդուլ Համիդի կողմից առաջ քաշված դրույթներն ու տեսակետները՝ հպատակ քրիստոնյա ժողովուրդների հանգիստ և ապահով կյանքի, սուլթանական տիրակալների՝ հայերի հանդեպ վարած հանդուրժողական և բարյացակամ վերաբերմունքի մասին, շատ նման են ժամանակակից թուրք հեղինակների պատմության խեղաթյուրված լուսաբանմանը: Տերրելի հետ ունեցած զրույցի ժամանակ սուլթանն ասում էր. «Փոքր Ասիայում վաղ օսմանյան նվաճումների շրջանում, թաթարների ու պարսիկների հաճախակի ասպատակություններից նեղված, հայերը մեծ քանակությամբ գաղթեցին և ապաստան գտան օսմանյան տիրակալների մոտ: Նրանք ջերմորեն ընդունվեցին, նրանց խոսք տրվեց կյանքի ու ունեցվածքի անվտանգության ապահովում»:[6] Արդարացնելով նվաճողների վայրագությունները՝ ժամանակակից թուրք պատմաբանները նույնպես փորձում են ներկայացնել թուրք-

[1] Gordon, Leland James, նշվ. աշխ., էջ 26:
[2] Шпилькова, В.И., Империалистическая политика США в отношении Турции (1914-1920), М., 1960, с. 29.
[3] Terrell A.W., նշվ. աշխ., էջ 254.
[4] Նույն տեղում, էջ 259:
[5] Նույն տեղում:
[6] Նույն տեղում, էջ 255-256:

օսմաններին որպես հայ ժողովրդի «փրկարարներ»: Իրականում թուրքական ցեղերի ներխուժումը Փոքր Ասիա անուղղելի հարված հասցրեց այդ շրջանի ժողովուրդների քաղաքական, տնտեսական և մշակութային զարգացմանը:[1]

Աբդուլ Համիդն ամենևին էլ չէր թաքցնում այն փաստը, որ կայսրության ամբողջ արդյունաբերությունն ու առևտուրը գտնվում էին քրիստոնյա ժողովուրդների և մասնավորապես հայերի ձեռքին:[2] Այս հանգամանքը, սակայն, պայմանավորված էր ոչ թե քրիստոնյա հպատակների նկատմամբ սուլթանական կառավարության բարյացակամությամբ կամ հոգատարությամբ, ինչպես տվյալ դեպքում փորձում է ներկայացնել սուլթանը, այլ կարևորագույն անհրաժեշտություն էր Օսմանյան կայսրության գոյության համար:

Սուլթանը Տերրելին բազմաթիվ վկայություններ էր բերում իր վարած բարյացակամ քաղաքականության մասին Կոստանդնուպոլսի հարուստ և ազդեցիկ հայերի նկատմամբ, որոնք ամբողջությամբ իրենց նվիրել էին Բարձր Դռանը ծառայելուն և իրականում հեռացել էին արևմտահայկական աշխատավոր բնակչության կենսական շահերից:[3] Աբդուլ Համիդի այս դրույթները հաճախակի կրկնվում են ժամանակակից թուրք հեղինակների հրապարակումներում: Ինչպես սուլթանը, այնպես էլ նրա հետևորդները ձգտում էին ներկայացնել Կոստանդնուպոլսի և նրա բնակիչների կյանքը որպես ամբողջ կայսրության ընդհանուր կացության չափանիշ: Կոստանդնուպոլիսն իր շքեղ պալատներով, խայտաբղետ շուկաներով, հարուստ վերնախավի մեծաշուք կյանքով միշտ էլ ցուցափեղկ էր հանդիսացել Եվրոպայի առջև:

Սուլթան Աբդուլ Համիդի հանձնարարությամբ հայկական ծագում ունեցող հպատակների «բարեկեցությունը», բարձր դիրքը ցույց տալու նպատակով ԱՄՆ-ի դիվանագիտական ներկայացուցչության դեկավարին հանձնվեց հայ աստիճանավորների և նրանց միամսյա աշխատավարձի ցուցակը: Ցուցակում ներկայացված էին զանազան Սիքայելներ, Արթիններ, Հակոբներ, Մարգարներ սկսած նախարարից, բարձրաստիճան չինովնիկներից և վերջացրած խոհարարներով, բաղնեպաններով, ժամագործներով, այգեպաններով և այլն:[4] Սակայն այս ամենը բնավ չէր կարող թեթևացնել Օսմանյան կայսրության ներքին շրջաններում, բուն Արևմտյան Հայաստանում գտնվող հայ աշխատավոր գյուղացիության վիճակը, որը ենթարկվում

[1] Зулалян, М.К., Вопросы древней и средневековой истории Армении в освещении современной турецкой историографии, Ереван, 1970, с. 61.
[2] Terrell, A.W., նշվ. աշխ., էջ 256.
[3] Նույն տեղում.
[4] Նույն տեղում, էջ 256-258.

էր ճնշման և հալածանքների տեղական թուրք իշխանությունների և քոչվոր ցեղերի կողմից:

Աբդուլ Համիդի կարծիքով՝ ամբողջ մեղքն այսպես կոչված «անկարգությունների» համար ընկնում էր հայության վրա, որը «ի նշան երախտագիտության՝ կառավարության կողմից...տրված արտոնությունների համար..., դավադրություններ է կազմակերպում՝ Օսմանյան կայսրությունը կործանելու նպատակով»:[1] Ամերիկյան միսիոներ Սայրուս Համլինը գրում էր, որ սուլթանը միշտ էլ կեղծ վկայություն կարող է գտնել՝ ապացուցելու համար երկրում տիրող բռնության վերաբերյալ կարծիքների անհիմն լինելը:[2]

Խաղաղ ժամանակ դաժանության արգելման և բոլոր հավատացյալների պաշտպանության վերաբերյալ Ղուրանի դրույթների մեկնաբանումները սուլթանի կողմից ոչ մի առնչություն չունեին պատմական իրողության, օսմանյան տիրակալների դաժան, հակաժողովրդական քաղաքականության հետ:[3] Չնայած Ղուրանի «խաղաղասիրությանը»՝ դարերի ընթացքում ոչնչացվում էին սերբերը, չեռնոգորցիները, բուլղարները, հույները, հայերը, ինչպես նաև արաբ մահմեդականները: Այսպես, Էդվին Փիրսի վկայությամբ, Աբդուլ Համիդի տիրակալության օրոք Պարսից ծոցի ափին ոչնչացվեց արմավենիների մի ամբողջ անտառ՝ ոչ միայն զրկելու համար արաբ բնակչությանը եկամուտի աղբյուրից, այլև սովի միջոցով հնազանդեցնելու նրան թուրքական իշխանություններին:[4]

Օսմանյան կայսրությունում տիրող ներքին ծանր վիճակը, ժողովուրդների ճնշումը, կաշառակերությունն ու գանձագողությունը չէին հակասում Ղուրանին, որովհետև իշխանությունների տրամադրության տակ էին գտնվում սոֆթաներն ու շեյխուլիսլամը, որոնք այն քարոզում էին գոյություն ունեցող կարգերին համապատասխան: Իհարկե, քրիստոնյա ժողովուրդների ճնշման, հալածանքների և ջարդի քաղաքականության հիմքում ընկած էին սոցիալ-քաղաքական և ազգային-տնտեսական խորը պատճառներ: Սակայն ամեն անգամ սուլթանական իշխանությունը դիմում էր կրոնական մոլեռանդության օգտագործմանը՝ մասնավորապես գործի դնելով մոլեռանդ խաժամուժի կենդանական բնազդները: Ռուս պատմաբան Երեմեևը գրում է. «Քրիստոնյա փոքրամասնությունների նկատմամբ Աբդուլ Համիդը վարում էր կատաղի շովինիստական քաղաքականություն: Լինելով մոլի պանիսլամիստ՝ նա չէր վստահում անգամ թուրքերին և իրեն շրջապատում էր

[1] Նույն տեղում, էջ 258:
[2] Hamlin, C., The Armenian Massacres // The Armenian Massacres, 1894-1896: US Media Testimony (Edited by Arman J. Kirakossian)..., p. 96.
[3] Terrell, A.W., նշվ. աշխ., էջ 256:
[4] Pears, E., Life of Abdul Hamid, New York, 1917, p. 105.

չերքեզական, քրդական, լազական, աջարական ծագում ունեցող մերձավորներով: Դրանցով էլ համալրվում էր նաև սպայական կազմը»:[1]

Սուլթան Աբդուլ Համիդի մտքերն ու դրույթները՝ հայ ժողովրդի պատմության, հայերի նկատմամբ Բարձր Դռան քաղաքականության, Օսմանյան կայսրության հայ բնակչության ջարդերի վերաբերյալ ամբողջովին փոխառված են և զինել են ժամանակակից Թուրքիայի քարոզչությունը, հետադիմական պատմագիտությունն ու ղեկավար շրջանները:

[1] Երեմեև Դ. Ե., Թուրքերի ծագումը, Երևան, 1975, էջ 261:

Գ Լ ՈՒ Խ V

ԱՄԵՐԻԿՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔԸ ԵՎ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻՑ ՏՈՒԺԱԾ ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆԸ

1. Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ համայնքի համառոտ պատմությունը

Չնայած ԱՄՆ-ի կառավարության Հայկական հարցին չմիջամտելու դիրքորոշմանը՝ 1894-1896 թթ. հայկական կոտորածները բողոքի մեծ ալիք բարձրացրին Միացյալ Նահանգներում: Ինչպես նշում է Ռիչարդ Հովհաննիսյանը, «հայկական ողբերգությունը, ավելի քան որևէ այլ իրադարձություն արտասահմանում, արթնացրեց ամերիկյան հանրային խիղճը և ծնունդ տվեց երկրում մասնավոր բարեգործության հզոր շարժման»:[1]

Առաջինն արձագանքեցին Միացյալ Նահանգների բորբոքված հայ համայնքները: Բոստոնի և Նյու Յորքի հայկական մամուլում հրապարակվեցին սուլթանական կառավարության կողմից կազմակերպված հայկական կոտորածները լուսաբանող նյութեր և հոդվածներ: Հայկական բոլոր կազմակերպությունները միավորվել էին բողոքի ցույցեր և հասարակական հավաքներ կազմակերպելու, Կոնգրեսին ուղղված հայտարարություններ և խնդրագրեր ներկայացնելու գործում: Սակայն մինչև բուն թեմային անցնելը հարկ ենք համարում ընթերցողին ներկայացնել ամերիկահայության համառոտ պատմությունը:[2]

[1] Հովհաննիսյան, Ռիչարդ, Ամերիկայի Միացյալ Նահանգները և Հայկական հարցը // Հայկական հարց. Հանրագիտարան, Երևան: Հայկական Հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, 1996, էջ 30:

[2] ԱՄՆ-ի հայ համայնքի պատմության և գործունեության մասին տե՛ս Avakian, A.S.. The Armenians in America, Minneapolis, 1977; Bakalian, Anny, Armenian-Americans: From Being to Feeling Armenian, New Brunswick, 1993; Deranian, Hakob Martin, Worcester is America: The Story of Worcester's Armenians, the Early Years, Worcester, 1998; Kulhanjian, Gary A., The Historical and Sociological Aspects of Armenian Immigration to the United States, 1890-1930, San Francisco, 1975; Malcolm, M. Vartan, Armenians in America. Boston and Chicago, 1919; Mirak, Robert, Torn Between Two Lands: Armenians in America. From 1890 to World War I, Cambridge, 1983; Takooshian, Harold, Armenian Immigration to the United States Today from the Middle East // *«Journal of Armenian Studies»*, 1987, No. 3, pp. 133-155; Tashijian, James H., The Armenians of

Ամերիկայի առաջին նորաբնակների մեջ կային հայեր: Լոնդոնի «Virginia» ընկերության գրանցամատյաններում հետաքրքիր տեղեկություններ կան Հայ Մարտինի մասին, որը Վիրջինիա նահանգի Ջեյմսթաունի համայնքի անդամ էր դեռևս 1618 կամ 1619 թթ.: Նրա Ամերիկա ժամանելու հանգամանքներն անհայտ են: Հայտնի է միայն այն, որ նա ժամանել էր որպես նահանգապետ Ջորջ Յիրդլիի ծառայող: Վիրջինիայում եղած ժամանակ նա ստացել էր Բրիտանիայի քաղաքացիություն, ինչը նրան հնարավորություն էր տվել ստանալու նաև ամերիկյան հպատակություն:[1] «Virginia» ընկերության գրառումների համաձայն՝ Հայ Մարտինը դարձել էր ընկերության մշտական կոմիտեի անդամ և 1623-1624 թթ. մասնակցել կոմիտեի ժողովներին:[2]

1653 թ. ևս երկու հայ էին ժամանել Ամերիկա: Այդ ժամանակ Վիրջինիայում մեծ հետաքրքրություն կար մետաքսի արտադրության նկատմամբ, սակայն բոլոր փորձերը շերամի որդ և թթենի աճեցնելու ուղղությամբ անհաջող էին անցել: Համայնքի ղեկավար անդամներից Էդվարդ Դիջիսը տեղեկացել էր իր հորից, որը Մեծ Բրիտանիայի դեսպանն էր Ռուսաստանում, որ հայերը շերամի որդի աճեցման ճանաչված մասնագետներ են: Արդյունքում Դիջիսն իր անձնական ծախսերով Ամերիկա էր հրավիրել երկու հայ մասնագետի, որոնք մեծ հեղինակություն էին ձեռք բերել նահանգում: Այդ հայերից մեկի անունն էր Հայ Ջորջ:[3]

17-18-րդ դարերի ընթացքում որևէ տեղեկություն չկա Ամերիկա հայերի բնակության մասին, սակայն հավանականությունը մեծ է, որ Վիրջինիայում ապրող հայերի ազդեցության ներքո այստեղ հայեր ժամանած լինեին, մասնավորապես Հոլանդիայից և Հնդկաստանից, քանի որ հայ առևտրականները մշտական կապեր են ունեցել Անգլիայի հետ:

Հայ առաջին ներգաղթողները սկսեցին Միացյալ Նահանգներ ժամանել երեք տարի անց այն բանից հետո, երբ 1831 թ. ամերիկյան միսիոներները հաստատվեցին Կոստանդնուպոլսի Բեբեկ արվարձանում: Նրանք հիմնականում մեկնում էին ուսանելու՝ քաջալերված ամերիկյան բողոքական առաքելությունների կողմից:[4] Համաձայն որոշ տվյալների՝ առաջիններից մեկը Խաչատուր Օսկանյանն էր, միսիոներական դպրոցի աշակերտներից մեկը, որը և հանդիսացավ դեպի Ամերիկա ներգաղթելու շարժման առաջնեկներից մեկը: Նա ժամանել էր Նյու Յորք 1834 թ.: 1837 թ. Ամերիկա էր ե-

the United States and Canada: A Brief Study, Boston, 1970; Waldstreicher, D., The Armenian Americans, New York, 1989; Wertsman,Vladimir, The Armenians in America, 1616-1976: A Chronology and Fact Book, Dobbs Ferry, N.Y., 1978.

[1] Malcom, M. Vartan, նշվ. աշխ., էջ 51-52:

[2] Նույն տեղում, էջ 54:

[3] Նույն տեղում, էջ 55-56:

[4] Mirak Robert, նշվ. աշխ., էջ 37:

կել մի այլ շրջանավարտ, որը բժշկական աստիճան էր ստացել Պրինստոնի համալսարանից և որոշ ժամանակ աշխատել Կոստանդնուպոլսում: 1841 թ. Բրուկլինում բնակություն էր հաստատել միսիոներ Դուայթի ծառայողներից մեկը: Նույն տարվա ընթացքում Հարություն Վահապետյանը, որը հետագայում դարձավ Հայ առաքելական եկեղեցու Կոստանդնուպոլսի և Երուսաղեմի պատրիարքը, իր ուսումն էր սկսել Յունիոն աստվածաբանական դպրոցում: Միսիոներների ազդեցության արդյունքում 1843 թ. երկու նոր ուսանողներ էին ժամանել՝ Յեյլի համալսարանում ուսանելու: Նրանցից Քրիստափոր Տեր-Սերոբյանը հայտնաբերել էր ԱՄՆ-ի թղթադրամի վրա մինչ օրս օգտագործվող սև և կանաչ ներկը: 1845 թ. Ամերիկա էր եկել հայտնի հայ գիտնական և բանաստեղծ Ղևոնդ Ալիշանի եղբայրը՝ Սերոբը: 1848-1849 թթ. ընթացքում ԱՄՆ էին ժամանել ևս չորս հայեր՝ առևտրական և ուսանողներ:[1]

1850-1870-ական թթ. ընթացքում ԱՄՆ էր ներգաղթել 55 հայ: Նրանց մեծամասնությունը եկել էին առևտուր սովորելու: Ըստ Վարդան Մալկոմի՝ այդ հանգամանքը Կոստանդնուպոլսի Ռոբերտ քոլեջի հիմնադիր Սայրուս Համլինի գործունեության արդյունքն էր, որն Օսմանյան կայսրության քրիստոնյա հպատակներին արդյունաբերության նոր մեթոդներին սովորեցնելու մեծ ջատագով էր:

Ամերիկայի քաղաքացիական պատերազմի ժամանակ աչքի ընկած Ռոբերտ քոլեջում բժշկություն և ատամնաբուժություն սովորած և Ֆիլադելֆիայի հիվանդանոցներում աշխատող բժիշկներ Սիմոն Մինասյանը, Գալստյանը, Մաքնոսյանը: Գրավոր վկայություններ կան նաև այն մասին, որ պատերազմի ընթացքում Հյուսիսի բանակում կամավոր հայ զինվորներ կային:

1875 թ. Նյու Յորքում և շրջակա քաղաքներում՝ Ջերսի Սիթիում, Վուստերում, Բոստոնում, Պրովիդենսում, Տրոյում, Սպրինգֆիլդում, Լովելլում և Ռոչեստերում, ապրում էին շուրջ 70 հայեր:[2]

1870-1894 թթ. ընթացքում հայերի թիվն ԱՄՆ-ում զգալիորեն աճեց, ինչը հիմնականում Թուրքիայում միսիոներական գործունեության զգալի ակտիվության արդյունքն էր: Այս ընթացքում շուրջ 40 հայ ուսանողներ կային Յեյլի, Պրինստոնի, Յունիոնի, Անդովերի, Ամհերստի, Վիսկոնսինի, Նյու Յորքի և Կլարկի համալսարաններում: Միացյալ Նահանգները դառնում էր նաև ապաստարան հայ քաղաքական փախստականների համար: Հայ հեղափոխական շատ ղեկավարներ, փախչելով հետապնդումից, ապաստան էին գտել Ամերիկայում:[1]

1890 թ. հայերի թիվն ԱՄՆ-ում հասավ 2 հազարի: Մինչև 1894 թ. ԱՄՆ-ում ապրում էին երեք հազարից ոչ ավելի հայեր, որոնք փոքրաթիվ համայնքներ էին կազմել Նյու Յորքում, Վուստերում, Բոստոնում, Պրովիդենսում, Հարթֆորդում, Ֆիլադելֆիայում, Հոբոկենում, Տրոյում, Չիկագոյում և Ֆրեզնոյում: Այս քաղաքները դարձան հայկական համայնքների հիմնական կենտրոնները:[2]

1894-1896 թթ. կոտորածների արդյունքում արևմտահայերը գաղթում էին Ամերիկա, Աֆրիկա, Եվրոպա, հատկապես Ռուսաստան: Արտագաղթող հայերի շուրջ 45%-ը մեկնում էր Ամերիկա, 40%-ը՝ Ռուսաստան և 15%-ը՝ Եգիպտոս ու եվրոպական երկրներ:[3] Միացյալ Նահանգներ էին մեկնում գերազանցապես Խարբերդի, Դիարբեքիրի և Սըվազի վիլայեթներից,[4] որն անկասկած ամերիկյան միսիոներների գործունեության և ազդեցության հետևանքն էր:

ԱՄՆ-ի ներգաղթի դեպարտամենտը ներգաղթյալներին դասակարգում էր ըստ ծննդավայր երկրի, ոչ թե ըստ իրենց ազգի կամ լեզվի: Օրինակ՝ թուրքը, հայը, հույնը, հրեան կամ բուլղարացին, որոնք ներգաղթում էին Օսմանյան կայսրությունից, արձանագրվում էին որպես ներգաղթյալներ Թուրքիայից: Սկսած 1898 թ.՝ ԱՄՆ-ի ներգաղթի դեպարտամենտը, Կոնգրեսի համապատասխան որոշմամբ, հաստատեց ներգաղթյալներին ըստ ազգության գրանցելու համակարգ:[5]

Համաձայն ԱՄՆ-ի պաշտոնական տվյալների՝ 1834-1894 թթ. ընթացքում Թուրքիայից Միացյալ Նահանգներ էր գաղթել 9 472 հոգի, որոնցից 4 777-ը՝ Ասիական Թուրքիայից, իսկ 4 695-ը՝ Եվրոպական Թուրքիայից: Ըստ Արփիի՝ նրանցից 1894 թ. ներգաղթյալների շուրջ 4 հազարը հայեր էին, որոնցից հազարը կրկին վերադարձել էին Թուրքիա՝ թողնելով ԱՄՆ-ում շուրջ 3 000 հայեր:[6]

Սկսած 1895 թ.-ից՝ ԱՄՆ էին գաղթում տարեկան շուրջ 4 հազար հայեր: 1914 թ. այդ թիվը հասավ 8 հազարի: 1910 թ. սեպտեմբերի 11-ին «*Chicago Herald*»-ի թղթակից Ուիլյամ Կարտիսը գրում էր Թուրքիայից, որ դեպի ԱՄՆ շարունակվող արտագաղթի հետևանքով Թուրքիայում միսիո-

[1] **Malcom, M. Vartan**, նշվ. աշխ., էջ 57-58:
[2] Նույն տեղում, էջ 58-59; **Avakian A. S.**, նշվ. աշխ., էջ 40:

[1] Նույն տեղում, էջ 60:
[2] Նույն տեղում, էջ 61; **Avakian A. S.**, նշվ. աշխ., էջ 40:
[3] *«Մշակ»*, 1913, 7 օգոստոսի:
[4] Համբարյան Ա., Երիտթուրքերի ազգային ու հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1908-1914), Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1979, էջ 44:
[5] **Arpee, Leon**, նշվ. աշխ., էջ 63.
[6] Նույն տեղում, էջ 64-65:

ներական դպրոցների աշակերտների թիվը տարեկան նվազում էր 25-30%-ով: Կարտիսը նշում էր, որ միսիոներների կողմից հայերին տրված ԱՄՆ-ի մասին գիտելիքների և անգլերենի իմացության շնորհիվ հայերը դարձան «ամենագնահատված ներգաղթյալները»:[1]

Համաձայն պաշտոնական տվյալների՝ 1895-1917 թթ. ընթացքում Թուրքիայից Միացյալ Նահանգներ էր ներգաղթել 70 980 հոգի, որոնց գերակշիռ մասը տղամարդիկ էին (53 073):[2] Ներգաղթյալների մեծամասնությունը հայեր էին, որոնք փախչում էին օսմանյան իշխանությունների հակահայկական քաղաքականությունից. 1895 (2 767), 1896 (4 139), 1897 (4 732), 1898 (4 275), 1908 (3 299), 1910 (5 508), 1912 (5 222), 1913 (9 353), 1914 (7 785): Ինչպես նշվեց, սկսած 1899 թ.-ից, ԱՄՆ-ում ներգաղթյալներին սկսեցին գրանցել ըստ իրենց ազգության: Համաձայն այդ տվյալների՝ 1899-1917 թթ. Թուրքիայից ԱՄՆ էին ներգաղթել 55 057 հայեր: Ընդ որում՝ նրանցից 46 474-ը գաղթել էին Եվրոպական (2 806) և Ասիական (43 668) Թուրքիայից, իսկ մնացածը ժամանել էին տարբեր երկրներից՝ Բուլղարիայից (158), Ֆրանսիայից (377), Հունաստանից (275), Ռուսաստանից (3 034), Մեծ Բրիտանիայից (914), Եգիպտոսից (894), Կանադայից (1 577), Հարավային Ամերիկայից (322):[3] Այդ նույն ժամանակահատվածում 2 477 հայերի համար մուտքն արգելվել էր, նրանք արտաքսվել էին հիվանդությունների, հիմնականում տրախոմայի՝ աչքի հիվանդության պատճառով:[4] 1914 թ. հայերի թիվն ԱՄՆ-ում հասնում էր արդեն շուրջ 100 հազարի:[5] 1905-1914 թթ. Թուրքիայից Միացյալ Նահանգներ էին գաղթել 367 հազար մարդ, որոնցից 75%-ը հույներ էին, արաբներ և հայեր:[6]

Հետաքրքիր է նաև, թե հայ ներգաղթյալներն ԱՄՆ-ի որ նահանգներ էին ցանկություն հայտնում մեկնել՝ բնակություն հաստատելու նպատակով: Համաձայն պաշտոնական տվյալների՝ հայերի կողմից ամենաշատ նշված նահանգներից էին Կալիֆորնիան (2 564), Իլինոյսը (3 313), Մասաչուսետսը (14 192), Նյու Ջերսին (2 115), Նյու Յորքը (17 391), Պենսիլվանիան (2 002), Ռոդ Այլենդը (4 923):[7]

Հայերի հաջողություններն ԱՄՆ-ում բացատրվում էին նաև նրանով, որ հազարավոր հայերի կոտորածը Թուրքիայում այնպիսի համակրանք էր առաջացրել ԱՄՆ-ի հասարակայնության շրջանում, որ հայ փախստական-

[1] Malcom, M. Vartan, նշվ. աշխ., էջ 76-77:
[2] 1908 թ. սկսած իրավիճակը փոխվեց՝ ԱՄՆ գաղթած 3209-ից 1202-ը կամ ավելի քան 35%-ը կանայք էին (*«Հորիզոն»*, 1910, 18 փետրվարի):
[3] Arpee, Leon, նշվ. աշխ., էջ 65-67:
[4] Նույն տեղում, էջ 70:
[5] Avakian, A. S., նշվ. աշխ., էջ 45.
[6] Grabill, Joseph L., նշվ. աշխ., էջ 31:
[7] Arpee, Leon, նշվ. աշխ., էջ 71:

ները գրկաբաց կերպով էին ընդունվում եկեղեցիների, ակումբների և բարեգործական հաստատությունների կողմից, նրանց հեշտությամբ տրամադրվում էր հագուստ, սնունդ, ապրելատեղ և աշխատանք: Նրանց նամակները հայրենիքում ապրող իրենց բարեկամներին և հարազատներին նույնպես իր դրական ազդեցությունն էր ունենում «ոսկու և մեղրի» երկիր գաղթելու համար: 1908 թ. երիտթուրքական հեղափոխությունից հետո քրիստոնյաների վրա բանակում ծառայելու պարտավորություն դրվեց, որը նույնպես նպաստեց, որ հայ երիտասարդները օսմանյան բանակում ծառայելուց խուսափելու նպատակով սկսեն գաղթել Միացյալ Նահանգներ:[1]

Հայերն ԱՄՆ բերեցին նաև իրենց կրոնական հաստատությունները՝ Հայ առաքելական և Հայ ավետարանական եկեղեցիները: Վերջինս հետագայում բաժանվեց միաբանների և պրեսբիտերականների: Ամերիկահայերի 80%-ը պատկանում էր Հայ առաքելական, 15%-ը՝ ավետարանական, իսկ մնացածը՝ կաթոլիկ եկեղեցուն:[2]

Միաժամանակ իրենց ճյուղավորումներն ԱՄՆ-ում ստեղծեցին հայկական քաղաքական կազմակերպությունները՝ Օսմանյան կայսրության իրենց հայրենակիցներին քաղաքական աջակցություն ցուցաբերելու նպատակով: ԱՄՆ-ում հաստատված հիմնական քաղաքական կազմակերպություններն էին Դաշնակցությունը, Հնչակյան և Վերակազմյալ հնչակյան կուսակցությունները: Չնայած սոցիալական և տնտեսական դժվարություններին, ինչպես նաև ԱՄՆ-ի քաղաքական մշակույթի և սովորությունների չիմացությանը՝ նրանք կարողացան համայնքներ ձևավորել, հայրենակցական միությունների միջոցով օգնություն կազմակերպել Օսմանյան կայսրության իրենց հայրենակիցներին, ինչպես նաև սկսել լոբբիստական գործունեություն Վաշինգտոնում և տարբեր նահանգներում: Նրանք կազմակերպում էին հանրահավաքներ, տպագրում օրաթերթեր և ամսագրեր, հրատարակում և տարածում հայանպաստ գրականություն: Սակայն իրենց ջանքերը շատ չնչին հաջողություն արձանագրեցին ԱՄՆ-ի կառավարության դիրքորոշումը Հայկական հարցում բարենպաստ դարձնելու գործում: Պետքարտուղարությունն ու գանձապետարանը շատ լավ տեղեկացված էին հայկական կազմակերպությունների գործունեության մասին: 1906 թ. գանձապետարանի գաղտնի ծառայությունը նույնիսկ տեղեկատվություն էր տրամադրել Վաշինգտոնում թուրք դեսպանորդ-նախարարին ԱՄՆ-ում հայկական կազմակերպությունների հանդիպումների, Օսմանյան կայս-

[1] Malcom, M. Vartan, նշվ. աշխ., էջ 77-78:
[2] Նույն տեղում, էջ 99:

ռությունում իրենց հայրենակիցներին փոխանցված ֆինանսական միջոցների և Օսմանյան կայսրությունում ծավալած գործունեության մասին:[1]

2. Ամերիկյան հասարակայնության արձագանքը

Ամերիկահայ կազմակերպությունների և Օսմանյան կայսրությունում գործող միսիոներների կողմից տեղեկատվություն ստացող բողոքական եկեղեցու կառույցների գործունեության արդյունքում ԱՄՆ-ում բողոքի ալիքը զգալի թափ հավաքեց: *«New York Herald»*, *«New York Times»*, *«Washington Post»*, *«Christian Register»*, *«Daily News»*, *«Boston Herald»*, *«Chicago Tribune»* օրաթերթերը սկսեցին հրատարակել, խմբագրականներ, հասարակական գործիչների հոդվածներ Հայկական հարցի, արևմտահայության ծանր իրավիճակի մասին, Հայաստանի քարտեզներ, լուսանկարներ և այլն:[2]

ԱՄՆ-ի *«Catholic World»*, *«Nation»*, *«Outlook»*, *«Century Magazine»*, *«Review of Reviews»*, *«Forum»*, *«Arena»*, *«Atlantic Monthly»* ամսագրերի էջերում տպագրված հասարակական-քաղաքական գործիչների բազմաթիվ հոդվածները, նյութերն ու նամակները վկայում էին ամերիկյան հասարակայնության զայրույթի մասին՝ սուլթանական կառավարության հակահայկական քաղաքականության նկատմամբ: Հայաստանի և Հայկական հարցի վերաբերյալ բազմաթիվ հոդվածներով հանդես էին գալիս ճանապարհորդներ, առևտրականներ, ԱՄՆ-ի համալսարանների դասախոսներ, ամերիկյան միսիոներներ, լրագրողներ, եկեղեցական գործիչներ: Նրանք ծանոթացնում էին ընթերցողին հայ ժողովրդի, հայ եկեղեցու պատմությանը, նկարագրում 1894-1896 թթ. արյունալի ջարդերը, մյուսները վերլուծում էին Հայկական հարցի շուրջ ստեղծված դիվանագիտական բարդությունները:[3]

[1] **Payaslian, Simon**, նշվ. աշխ., էջ 16-17:

[2] Տե՛ս, օրինակ՝ The Erzeroum Massacre // *«The New York Times»*, 1890, July 26; Brutality of the Turks // *«The New York Times»*, 1890, August 4; Massacre of Armenians // *«The New York Times»*, 1894, November 17; Armenia and the Sultan // *«The New York Times»*, 1894, December 17; Bribing the Armenians // *«The New York Times»*, 1895, February 23; Tales of Horror Retold // *«The New York Times»*, 1895, May 20; Another Armenian Holocaust // *«The New York Times»*, September 10; Reform for Armenia // *«The Washington Post»*, 1895, October 17; Hundreds Killed at Trebizond // *«The New York Times»*, 1895, October 18; Prompt Relief for Armenians // *«The New York Times»*, 1895, December 1; Aid for the Armenians // *«The New York Times»*, 1895, December 20; Armenians Homes Burned // *«The New York Times»*, 1896, January 13; Sultan Bars the Way // *«The Washington Post»*, 1896, January 14; Turkish Persecution // *«The Washington Post»*, 1896, February 24.

[3] Տե՛ս, Կիրակոսյան Ա., Հայկական հարցը ԱՄՆ-ի ամսագրերի էջերում (19-րդ դարի 90-ական թվականների կեսեր), ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1980, No.3, էջ

Գրեթե բոլոր հեղինակները դատապարտում էին ԱՄՆ-ի դիվանագիտության անգործությունը, մասնավորապես Օսմանյան կայսրությունում դիվանագիտական ներկայացուցիչ, դեսպանորդ-նախարար Ալեքսանդր Տերրելին՝ օսմանյան սուլթանի հանդեպ ունեցած իր «հարգալից» վերաբերմունքի համար:[1] Նրան հիմնականում քննադատում էին նրա համար, որ հաճախակի էր ճաշում սուլթանի հետ, ջանքեր չէր գործադրում կարևոր քաղաքներում հյուպատոսություններ բացելու ուղղությամբ, չէր ապահովում Օսմանյան կայսրությունում ապրող և աշխատող ԱՄՆ-ի քաղաքացիների անվտանգությունը: Տերրելն այնքան էր վիրավորվել միսիոներների մշտական քննադատությունից, որ հետագայում հրաժարական ներկայացրեց նախագահ Քլիվլենդին: Որպես պատճառ՝ նա նշում էր միսիոներների միջամտությունը՝ նախազգուշացնելով, որ «միսիոներների ղեկավարները հրահրում են լուրջ հուզումներ և բարդում պատասխանատվությունը նախարարի ուսերին»:[2]

1894 թ. նոյեմբերի 25-ին՝ Սասունի կոտորածի մասին լուրերը հաստատվելուն պես, Մասաչուսետս նահանգի Վուստեր քաղաքում կազմակերպվել էր մեծ հանրահավաք, որին մասնակցում էին նաև քաղաքապետը, հայտնի պետական և հասարակական գործիչներ, բանկիրներ և իրավաբաններ, ուր ԱՄՆ-ի նախագահին ուղղված խնդրագիր ստորագրվեց: Կոնգրեսին ուղղված նույնանման մի խնդրագիր էր ստորագրվել Նյու Հեմփշիր նահանգի Մարլբորո քաղաքի միաբան և մեթոդիստ եկեղեցիների կողմից, ուր կոչ էր արվում «...կառավարության հավատարմագրված ներկայացուցչի կողմից կազմակերպել քրիստոնյա հայերի նկատմամբ իրագործված վերջին կոտորածների քննություն..., ապահովել փոխհատուցում և կանխել նման բռնությունները»: 1895 թ. հունվարին Բոստոնի «Բապտիստական միությունը» բողոքում էր «քրիստոնյա հայերի վերջին գազան հանցագործության դեմ»: Նույնիսկ Դելավեր նահանգի «Ֆերմերների միությունն» էր դիմել Կոնգրեսին «բանաձև ընդունել թուրք զինվորների կողմից հայ քրիստոնյաների նկատմամբ դաժան և գազանային վերաբերմունքը կանխելու» մասին:[3]

1894 թ. դեկտեմբերի 18-ին Սասունի կոտորածի առիթով բողոքի մեծ հանրավաք էր կազմակերպվել Նյու Յորքում: Հանրահավաքի գլխավոր

37-48; The Armenian Massacres, 1894-1896: US Media Testimony (Edited and with an Introduction by **Arman J. Kirakossian**)..., 317 p.

[1] The Armenian Massacres, 1894-1896: US Media Testimony (Edited and with an Introduction by **Arman J. Kirakossian**)..., p. 40.

[2] **Salt, Jeremy**, նշվ. աշխ., էջ 133-134:

[3] **Mirak, Robert**, նշվ. աշխ., էջ 213-214:

բանախոս, հայտնի ամերիկացի արևելագետ Ուիլյամ Ուորդը[1] մեղադրում էր սուլթանական կառավարությանը հայերի կոտորածներ կազմակերպելու հարցում, իսկ միսիոներ և լրագրող Էդվին Բլիսը պահանջում էր ԱՄՆ-ի կառավարության միջամտությունը՝ Օսմանյան կայրության հայ բնակչությանը օգնություն ցուցաբերելու և փրկելու նպատակով:[2]

Հայկական կոտորածների դեմ ուղղված բողոքին միացավ նաև 1893 թ. Բոստոնում հիմնված ազդեցիկ «Հայաստանի բարեկամներ» մշակութային և գրական ուղղվածություն ունեցող ընկերությունը, որի հիմնադիր դեկավարներն էին Լյուսի Սթոնի[3] և Հենրի Բլեկվելի[4] դուստր Ալիս Սթոն Բլեկվելը[5], Սամյուել Բարրոուզը[6], Էդվարդ Էվերեթ Հեյլը[7] և Ջուլիա Ուորդ Հաուն[8]: Հայ գործարարներ Հակոբ Պողիկյանի և Մովսես Գյուլեսյանի[9] աջակցությամբ 1894 թ. վերջին նրանք բառացիորեն ողողել էին Վաշինգտոնն ու ամերիկյան մամուլն արևմտահայությանն օգնելուն և փրկելուն ուղղված նամակներով և խնդրագրերով:[10]

1894 թ. դեկտեմբերին Սամյուլ Բարրոուզն ու Հենրի Բլեկվելը հանդիպում են պետքարտուղար Ուոլթեր Գրեշամի հետ և ընկերության անունից խնդրում կառավարության աջակցությունը Հայկական հարցի լուծման գործում: Պետքարտուղարը պատասխանում է, որ ԱՄՆ-ի կողմից որդեգրած չմիջամտության քաղաքականության հետևանքով ամերիկյան կողմը չի

[1] Ուիլյամ Ուորդ (1835-1916) - ԱՄՆ-ի եկեղեցական գործիչ, լրագրող, արևելագետ, Նյու Յորքի *«The Independent»* պարբերականի (1848-1928) խմբագիր (1896-1913), «Ամերիկյան արևելյան ընկերության» նախագահ (1890-1894, 1909-1910):

[2] *«Հայք»*, 1894, 30 դեկտեմբերի, էջ 236-238:

[3] Լյուսի Սթոն (1818-1893) - ԱՄՆ-ում ստրկության վերացման, կանանց իրավունքների և, մասնավորապես, ընտրական իրավունքներ տրամադրելու հանրահայտ պաշտպան:

[4] Հենրի Բրաուն Բլեկվել (1825-1909) - ԱՄՆ-ի քաղաքական և հասարակական գործիչ, սոցիալական և տնտեսական բարեփոխումների իրականացման պաշտպան, հանրապետական կուսակցության և «Ամերիկյան կանանց ընտրական իրավունքների ընկերակցության» հիմնադիրներից, *«Woman` Journal»* (1870-1917) պարբերականի խմբագիր, Լյուսի Սթոնի ամուսինը:

[5] Ալիս Սթոն Բլեկվել (1857-1950) - ԱՄՆ-ի ֆեմինիստական շարժման գործիչ, կանանց ընտրական իրավունքներ տրամադրելու պաշտպան, լրագրող, *«Woman`Journal»* պարբերականի խմբագիր, Լյուսի Սթոնի և Հենրի Բրաուն Բլեկվելի դուստրը:

[6] Սամյուել Բարրոուզ (1845-1909) - ԱՄՆ-ի կրոնական, քաղաքական և հասարակական գործիչ, լրագրող, Կոնգրեսի ներկայացուցիչների պալատի անդամ, *«Christian Register»* օրաթերթի խմբագիր:

[7] Էդվարդ Էվերեթ Հեյլ (1822-1909) - ԱՄՆ-ի կրոնական և հասարակական գործիչ, գրող, պատմաբան:

[8] Ջուլիա Ուորդ Հաու (1819-1910) - ԱՄՆ-ի հասարակական գործիչ, ստրկության վերացման և մարդու իրավունքների պաշտպան, բանաստեղծ, «Հանրապետության մարտական հիմնի» հեղինակ, «Ամերիկյան կանանց ընկերակցության» հիմնադիր և նախագահ (1876-1897):

[9] Հայկական հարցին վերաբերող մի շարք հոդվածների հեղինակ՝ Gulesian, M.H., England`s Hand in Turkish Massacres // *«The Arena»*, 1897, No. 17, pp. 271-282; The Armenian Refugees // *«The Arena»*,1897, No. 77, pp. 652-662.

[10] Mirak, Robert, նշվ. աշխ., էջ 214:

հանդիսանում 1878 թ. Բեռլինի պայմանագրի մասնակից և չի կարող միջամտել Եվրոպային վերաբերող խնդիրների կարգավորմանը:[1] «Հայաստանի բարեկամների» պատվիրակությունն այցելեց նաև Սպիտակ տուն և նույն խնդիրները բարձրացրեց նախագահ Գրովեր Քլիվլենդի առջև:[2]

Ընկերության գործունեությունը հետզհետե ավելի կազմակերպվեց և ընդլայնվեց: 1895 թ. փետրվարի 24-ին կայացած ընկերության հերթական հավաքին նախագահ ընտրվեց Ջուլիա Ուորդ Հաուն, իսկ քարտուղար՝ Մովսես Գյուլեսյանը: 1895 թ. ամռանը «Հայաստանի բարեկամներ» ընկերությունը միավորվեց Միացյալ Նահանգներում գործող մի շարք այլ խմբերի հետ՝ ձևավորելով «Հայաստանի միացյալ բարեկամներ» կազմակերպությունը, որը սկսեց համադրել բողոքների ցույցերն ու հայանպաստ գործունեությունը երկրի տարբեր քաղաքներում:[3]

1895 թ. Նյու Յորքում հիմնադրվեց «Հայերի հայրենասիրական ֆեդերացիա» կազմակերպությունը, որի նախագահն էր Սմբատ Գաբրիելյանը: Կազմակերպության նպատակն էր «բոլոր ջանքերի միաղրումը»՝ «Եվրոպայի օժանդակության միջոցով» Արևմտյան Հայաստանի ազատագրման պայքարի կազմակերպման ուղղությամբ: Կազմակերպությունը հանրահավաքներ էր անցկացնում Նյու Յորքում, կրթական և քարոզչական աշխատանք իրականացնում ամերիկացիների լայն շրջաններում, նրա անդամները հանդես էին գալիս Հայաստանի մասին դասախոսություններով:[4] Հայ ժողովրդի պատմությունն ու մշակույթն ամերիկյան հասարակայնության շրջանում քարոզելու ուղղությամբ տարվող գործունեությամբ աչքի էր ընկել նաև 1895 թ. գարնանը Բոստոնում ստեղծված հայ ուսանողների ակումբը:[5]

Միաժամանակ Միացյալ Նահանգներում գործող Օսմանյան կայսրության դիվանագիտական ներկայացուցչությունն ու որոշ թուրքամետ ուժեր հրապարակայնորեն փորձում էին արդարացնել և պաշտպանել սուլթանական կառավարությանը՝ վարկաբեկելով հայամետ քարոզչությունը: 1894 թ. նոյեմբերի կեսերին ԱՄՆ-ում Օսմանյան կայսրության ներկայացուցիչ, դեսպանորդ-նախարար, ծագումով հույն Մավրոյենի բեյը *«New York Herald»*-ին ուղղված նամակում փորձում էր հերքել Սասունում տեղի ունեցած կոտորածի փաստը, սպանությունների համար մեղքն ամբողջությամբ բարդելով «հայկական ավազակախմբերի հանցավոր գործողությունների վրա»: Իր փաստարկներն ամրապնդելու նպատակով Մավրոյենի բեյը վկայակոչում էր դեռևս կոտորածից առաջ Սայրուս Համլինի վկայությունն այն

[1] *«Նոր դար»*, 1895, 6 հունվարի:

[2] *«Նոր դար»*, 1895, 13 հունվարի:

[3] *«Նոր դար»*, 1895, 3 հունիսի:

[4] *«Հայք»*, 1895, 15 մարտի. - էջ 197-199:

[5] *«Նոր դար»*, 1895, 8 ապրիլի:

մասին, որ «հնչակները պատրաստվում են հրահրել արյունահեղություն՝ Թուրքիայում հայկական պետություն ստեղծելու նպատակով»: Անմիջապես հաջորդ օրը Սայրուս Համլինը պատասխանում էր օսմանյան ներկայացուցչին, որ վերջինս աղավաղել է իր ասածները: Ըստ Համլինի՝ մի քանի երիտասարդ «հեղափոխականների դավերը անվնաս էին», և այդ հանգամանքը չէր կարող արդարացնել տեղի ունեցած «սոսկալի դաժանությունները»:[1]

Բոստոնի *«Daily Advertizer»* թերթին գրած Համլինի նամակի առնչությամբ Մավրոյենի բեյը գրում էր պետքարտուղարությանը, որ ինքը զարմացած է, որ, հեղինակի համաձայն, Օսմանյան կայսրությունը հարստահարող է, իսկ միսիոներները արդեն «կես դար է, ինչ կանգնած են հարստահարողների և հարստահարվողների միջև»: Օսմանյան դիվանագետը շարունակում էր, որ Թուրքիայի պատմության համար վճռական շրջանում, երբ Թուրքիան կարիք ուներ իր բարեկամների աջակցությանը, ամերիկյան միսիոներները փորձում էին ներազդել Եվրոպայի վրա՝ «մեր օրինական իշխանությունների դեմ»: Ըստ Համլինի՝ դեռևս Բեռլինի համաժողովի նախօրյակին «Ամերիկյան խորհուրդի» քարտուղարներից մեկը և երկու միսիոներներ, որոնք ծանոթ էին Բեռլինում աշխատող Ջ. Թոմփսոնի հետ, որը հայտնի էր Բիսմարկի հետ իր մտերիմ հարաբերություններով, և փորձում էին ներազդել Բիսմարկի վրա հայերի օգտին: Համլինը համարում էր, որ «հեղափոխության իրավունքը հարցականի տակ չի կարելի առնել»:[2]

Հայերին վարկաբեկելու քարոզարշավին է միանում նաև Օսմանյան կայսրությունում ԱՄՆ-ի նախկին դեսպանորդ-նախարար, «Բեն Հուր» գրքի հեղինակ գեներալ Լյու Ուոլլեսը: Վերջինս համոզված էր, որ սուլթանը Աբդուլ Համիդը չէր կարող հայերի կոտորած կազմակերպել, քանի որ «հումանիստ» էր, օգնություն էր ուղարկել 1893 թ. Վիրջինիա նահանգի Ջեյմսթաուն քաղաքի ջրհեղեղից տուժածներին, շատ էր նման Աբրահամ Լինկոլնին: Մամուլի էջերում Ուոլլեսին հուժկու հակահարված է տալիս Ալիս Սթոն Բլեկվելը:[3]

1895 թ. սկզբին Միացյալ Նահանգներում լույս է տեսնում և տարածվում է «Հայկական հուզմունքները, և ում վրա է ընկնում պատասխանատվությունը» բրոշյուրը, որի հնարավոր հեղինակը Օսմանյան կայսրության դիվանագիտական ներկայացուցիչն էր: Հեղինակը ոչ միայն արդարացնում էր սուլթանի գործողությունները, այլև քննադատում էր «քրիստոնեամետ և հայամետ ամերիկյան ժուրնալիզմը»: Ամբողջ պատասխանատվությունը Սասունի դեպքերի համար բարդելով հնչակյանների վրա՝ հեղինակը նշում

[1] Mirak, Robert, նշվ. աշխ., էջ 215:
[2] Salt, Jeremy, նշվ. աշխ., էջ 113:
[3] Mirak, Robert, նշվ. աշխ., էջ 215:

էր, որ ապստամբությունը ճնշելու համար սուլթանը ուրիշ որևէ հնարավորություն չուներ:[1]

Միացյալ Նահանգների հասարակական կարծիքը չափազանց գրգռված էր Օսմանյան կայսրության արևելյան շրջաններում ապրող և գործող բազմաթիվ ամերիկյան միսիոներներին և նրանց ընտանիքներին սպառնացող վտանգի մասին տեղեկություններով: Ինչպես նշում է նույնիսկ այն ժամանակվա թուրքական տեսակետը պաշտպանող Ջերեմի Սոլթը, ամերիկյան արձագանքը Բրիտանիայում «հայկական քարոզչության հայելու մեջ արտացոլված պատկերն էր», ԱՄՆ-ի հասարակական կարծիքը զինվել էր «կրոնական զգացմունքներով և հայրենասիրությամբ» հայերին պաշտպանելու հարցում: 1895 թ. նոյեմբերի 8-ի ԱՄՆ-ի պետքարտուղարին ուղղված նամակում Մավրոյենի բեյը գրում էր, որ ամերիկացիներն ամենուրեք աղոթում էին «իսլամի մահվան և թուրքերի կործանման» համար: Որոշ ամերիկյան հասարակական գործիչների համար Ղուրանն Օսմանյան կայսրությունում տիրող դաժանությունների հիմնական աղբյուրն էր, քանի որ իշխանությունները հրամայում էին իրենց հետևորդներին պայքարել անհավատների դեմ: Նույնիսկ Տերրելն էր գրում իր զեկուցագրերում, որ մահմեդականների շրջանում քրիստոնյաներին սպանելը դարձել էր «առաքինություն», երբ խոսքը գնում էր իսլամը պաշտպանելու հարցի մասին: ԱՄՆ վերադարձող միսիոներները հրապարակում էին գրքեր, որոնք, ըստ Մավրոյենի բեյի, «կատաղի զրպարտություններ էին մահմեդական հավատքի, թուրք ազգի և կայսերական կառավարության դեմ»: Որպես օրինակներ էին բերվում Ֆրեդերիկ Գրինի[2], Էդվին Բլիսի[3] և Սայրուս Համլինի[4] գրքերը: Մավրոյենի բեյը պետքարտուղարությանն էր ներկայացնում այն միսիոներների ցանկը, որոնք իրենց նամակներն էին հրապարակում ամերիկյան մամուլում, և որոնք վիրավորում էին իսլամը: Այս ամենի մասին Մավրոյենի բեյը մանրամասնորեն զեկուցում էր օսմանյան կառավարությանը:[5]

[1] Նույն տեղում, էջ 216:
[2] Greene, F.D., The Armenian Massacres; Or the Sword of Mohammed, Containing a Complete and Thrilling Account of the Terrible Atrocities and Wholesale Murders Committed in Armenia by Mohammedan Fanatics (The Mohammedan Reign of Terror in Armenia), Philadelphia: National Publishing Co., 1896; The Armenian Crisis in Turkey; The Massacre of 1894, Its Antecedents and Significance, with a Consideration of Some of the Factors which Enter into Solution of this Phase of the Eastern Question, New York: Putnam's Sons, 1895.
[3] Bliss, E.M., Turkey and the Armenian Atrocities. A Reign of Terror. Centuries of Oppression, London: Unwin, 1896.
[4] Hamlin, C., The Armenian Massacres // *«The Outlook»*, 1895, 7 December; The Martyrdom of Armenia // *«The Missionary Review of the World»*, 1896, No. 9; The Genesis and Evolution of the Turkish Massacre of Armenian Subjects // *«American Antiquarian Society Proceedings»*, 1899, No. XIII.
[5] Salt Jeremy, նշվ. աշխ., էջ 131-132:

ԱՄՆ-ի նախագահի տարեկան ուղերձում Թուրքիայում տիրող իրավիճակին և միսիոներների վիճակին վերաբերող դրույթների առնչությամբ դեկտեմբերի 21-ին Մավրոյենի բեյը գրում էր պետքարտուղար Օլնիին, որ, բարեբախտաբար, չնայած ոչ միայն Թուրքիայում, այլև Անգլիայում և Ամերիկայում գործող կոմիտեները կազմակերպել էին հայկական հեղափոխություն, այդ շարժումը պատճառ էր հանդիսացել համատարած անկարգությունների, ամերիկյան քաղաքացիների շահերն առանձնապես չէին տուժել: Դա տեղի էր ունեցել, համաձայն Մավրոյենի բեյի, Բարձր Դռան կողմից ձեռնարկած համապատասխան միջոցների և տեղական իշխանությունների ցուցաբերած զգոնության շնորհիվ: Սակայն միևնույն ժամանակ, չնայած այդ միջոցներին, Մարաշում և Խարբերդում իրոք տեղի էր ունեցել ամերիկյան ունեցվածքի ավերում, ինչն արդյունք էր հայերի կողմից հրահրված անկարգությունների: Մավրոյենի բեյը նշում էր, որ ներկայումս սուլթանական կառավարությունը համապատասխան հետաքննություն է անցկացնում այդ փաստերի առնչությամբ: Ինչ վերաբերում է Օսմանյան կայսրությունում ԱՄՆ-ի քաղաքացիներ Լենցի, որը կորել էր երկրի հեռավոր շրջաններից մեկում, Ստյուպի, որը սպանվել էր խելագարի կողմից, Ջորջ Վեբբերի, որը մահացել էր բանտում, պարոն Քրիստիի, որի վրա հարձակում էր կատարվել, և նման այլ դեպքերի կապակցությամբ Մավրոյենի բեյը նշում էր՝ նման դեպքեր տեղի են ունենում բոլոր երկրներում, և նրանք ոչ այլ ինչ են, քան հասարակ հանցագործություններ: Որպես օրինակ՝ նա մատնանշում էր 1891 թ. Կալիֆոռնիայի նահանգում տեղի ունեցած Օսմանյան կայսրության քաղաքացի Գալեբ Աբդուլլայի սպանության դեպքը, որը մինչև օրս բացահայտված չէր ամերիկյան իշխանությունների կողմից:

Մավրոյենի բեյը հերքում էր, որ Օսմանյան կայսրությունում տեղի էին ունենում հայ բնակչության կոտորածներ, իսկ Տերրելի կողմից ներկայացված սպանվածների թվաքանակի տվյալները համարում էր չափազանցություն: Նա կրկնում էր այն միտքը, որ կայսրությունում տեղի ունեցածը հայերի կողմից կազմակերպված հեղափոխության փորձ էր, և քանի որ հայերի կողմից օգտագործված միջոցները դաժան բնույթ էին կրում, օսմանյան կառավարությունը ստիպված էր համապատասխան դաժանությամբ ճնշել այդ անկարգությունները: Որպես ապացույց՝ նա իր նամակին էր կրկին կցում ամերիկյան միսիոներ Սայրուս Համլինի նամակը, որը ստորագրված էր 1893 թ. դեկտեմբերի 23-ին, սակայն պարզ չէ, թե այն ում էր հասցեագրված:[1]

Համլինի նամակում գրված էր, որ հայ հեղափոխական կուսակցությունը մեծ վտանգ և սպառնալիք է ներկայացնում ինչպես միսիոներների գործունեության, այնպես էլ կայսրության քրիստոնյա բնակչության համար: Սա գաղտնի կազմակերպություն է և օգտագործում է այնպիսի մեթոդներ, որոնք հայտնի էին միայն Արևելքում: Համլինը որպես օրինակ էր բերում իր լայն տարածում ստացած այդ գաղտնի կազմակերպության հայտարարության թարգմանությունը, ուր ասվում էր, որ «սա միակ հայկական կուսակցությունն է, որը ղեկավարում է հեղափոխական շարժումը Հայաստանում: Նրա կենտրոնը գտնվում է Աթենքում, և այն մասնաճյուղեր ունի Հայաստանի բոլոր քաղաքներում և գյուղերում, ինչպես նաև գաղութներում: Կուսակցության հիմնադիրներից մեկը՝ Նշան Կարապետյանը, գտնվում է Ամերիկայում և հավելյալ տեղեկատվություն ստանալու համար բոլոր ցանկացողները կարող են դիմել Նշան Կարապետյանին, որը բնակվում է Հ. 15 Ֆաուլնտեն փողոց, Վուստեր, Մասաչուսետս հասցեով կամ կապվել կենտրոնի հետ՝ պարոն Բենիարդ, Պոստ Ռեստանտ, Աթենք, Հունաստան»:

Համլինը շարունակում էր, որ մտավորական մի հայ, որը խոսում էր անգլերեն, ասում էր նրան, որ երկրում գործող հնչակյան խմբերն իրենց գործողություններով նախապատրաստում են Ռուսաստանի մուտքը Փոքր Ասիա: Ծրագիրը կայանում է անկարգություններ հրահրելու, թուրք և քուրդ սպանելու մեջ, որին կհետևի հայ խաղաղ բնակչության ջարդը, որից հետո Ռուսաստանը, օգտագործելով մարդկայնության և քրիստոնյա քաղաքակրթության պաշտպանության կարգախոսները, կներխուժի Թուրքիա:

Ըստ Համլինի հեղափոխականները նաև նպատակ են հետապնդում հրահրել թուրքերին բողոքական միսիոներների և բողոքական հայերի նկատմամբ՝ գտնելով, որ 1893 թ. Մարզվանի դեպքերն արդյունք են այդ շարժման: Նա համարում էր, որ այդ մարդիկ անսկզբունքային են և դաժան, նրանք ահաբեկում են նաև սեփական ժողովրդին, դրամ կորզում իրենց նպատակների համար: Նա կոչ էր անում բոլոր միսիոներներին զգոն լինել, ինչպես նաև կոչ էր անում հայերին չենթարկվել այդ կուսակցության քաղաքականությանը, որը ղեկավարվում և ֆինանսավորվում էր Ռուսաստանի կողմից:[1]

Միաժամանակ Համլինը պատասխանում էր Մավրոյենի բեյին, որ մի քանի երիտասարդ «հեղափոխականների դավերն անվնաս էին» և չէին կարող արդարացնել տեղի ունեցած «սոսկալի դաժանությունները»:[2]

1895-1896 թթ. տեղի ունեցած կոտորածներն էլ ավելի ամրապնդեցին ամերիկյան հասարակայնության համոզվածությունը սուլթանական կառավարության մեղսակցության մեջ: ԱՄՆ-ի բողոքական եկեղեցին և եկեղեցական կազմակերպությունները եռանդուն կերպով ընդդիմացան օսմանյան

[1] US Department of State. Papers Relating to the Foreign Relations of the United States, With the Annual Message of the President, Transmitted to Congress, December 2, 1895, Part 1, Washington: Government Printing Office, 1896, pp. 1413-1414.

[1] Նույն տեղում, էջ 1415-1416:
[2] Mirak, Robert, նշվ. աշխ., էջ 215:

կառավարության դեմ կազմակերպվող բողոքի ցույցերին: Շատ եկեղեցիներ «Հայկական կիրակի» էին հռչակել: 1895 թ. սեպտեմբերից սկսած՝ շաբաթական եկեղեցական քարոզներում դատապարտվում էր թուրքերի կողմից իրականացվող հակահայկական քաղաքականությունը, կոչ էր արվում համընդհանուր դատապարտման ենթարկել «կարմիր մարդասպանին»: *«Independent», «Outlook», «Christian Register», «Congregationalist», «Baptist Philadelphian», «Commonwealth», «Christian Herald»* և *«Lend a Hand»* կրոնական հրատարակությունները կոչ էին անում նման իրավիճակում «գործով, այլ ոչ թե խոսքով» հանդես գալ:[1]

Ամերիկացի հեղինակ Կլայդ Բակինգեմը գրում է, որ 1895 թ. աշնանը «թուրք մահմեդականները կազմակերպեցին հայ բնակչության վայրագ և դաժան կոտորած»: «Թեև դրա հիմքում որոշ չափով ընկած էին հպատակ ժողովրդի ազգային ձգտումները, ինչպես նաև այն գագաթնակետը դարձավ դարավոր անողոք թշնամության, - նշում է հեղինակը, - այնուամենայնիվ, այս երկրում (ԱՄՆ-ում՝ Ա.Կ.) այն մեկնաբանվեց էապես որպես թուրք մեծամասնության կողմից հրահրված կրոնական պատերազմ «արհամարհված քրիստոնյա» փոքրամասնության նկատմամբ»:[2]

1895 թ. նոյեմբերի կեսերին Միչիգանի նահանգի Կալամազու քաղաքի 18 հազար բնակիչներից երկու հազարը հավաքվել էին միաբանական եկեղեցում՝ Օսմանյան կայսրությունում տեղի ունեցող հայերի կոտորածների մասին Կոստանդնուպոլսի միսիոներական քոլեջի շրջանավարտից տեղեկություններ ստանալու համար: Ժողովականների կողմից ընդունվել էր բանաձև, որում կոչ էր արվում բոլոր քրիստոնյաներին իրենց բողոքի ձայնը բարձրացնել՝ հայերի հետագա սպանությունները կանխելու և նրանց քաղաքացիական և կրոնական ազատություններն ապահովելու նպատակով: Մեկ շաբաթ անց Նյու Յորք նահանգի Օլբանի քաղաքում տեղի ունեցած մեկ այլ հանրահավաքի ընթացքում ընդունված բանաձևում նշվում էր, որ «արյունալի մահմեդական կեղեքումը շարունակում է բնաջնջել հազարավոր քրիստոնյաների Հայաստանում»:[3]

1895 թ. նոյեմբերի 28-ին ամերիկյան *«The Nation»* ամսագիրն իր «Բանական համակրանք» խմբագրականում գրում էր, որ ԱՄՆ-ի նախագահին ուղղված նամակում սենատոր Հորն առաջարկում էր, որ Սենատը կանգնելու է իր կողքին, եթե նա որոշում կայացնի «հայերին կոտորող անձանց պատժել որպես ծովահենների և մարդկության ընդհանուր թշնամիների»:

[1] Նույն տեղում, էջ 219-220, 223.
[2] Buckingham, Clyde E., Clara Barton. A Broad Humanity. Philantropic Efforts on Behalf of the Armed Forces and Disaster Victims. 1860-1900, Alexandria, VA., 1980, p. 259.
[3] Jones, Marian Moser, The American Red Cross. From Clara Barton to the New Deal, Baltimore: The Johns Hopkins University Press, 2013, pp. 69-70

Համարելով սենատորի «դեղամիջոցը պարզապես որպես ոչ արդեկվատ» խմբագրականի հեղինակն առաջարկում էր երկու տարբերակ. կամ Տերերը պետք է շարունակեր «վճռականորեն» պահանջել Բարձր Դռնից ապահովել ԱՄՆ-ի քաղաքացիների անվտանգությունը, կամ էլ ամերիկյան կառավարությունն ու ժողովուրդը պետք է դիմեն շատ ավելի «բանական» միջոցի. խնդրեին Ռուսաստանից զորք ուղարկել Հայաստան: Սուլթանին ուպմանավերով սպառնալն անիմաստ է, շարունակում էր ամսագիրը, քանի որ նա չի վախենում նույնիսկ եվրոպական տերությունների համատեղ նավատորմից:[1]

1895 թ. դեկտեմբերին *«Outlook»* ամսագրում հրատարակված «Հայկական կոտորածներ» հոդվածում Սայրուս Համլինը գրում էր, որ «հեղափոխական շարժումը ճիշտ այն էր, ինչ Աբդուլ Համիդը ցանկանում է», քանի որ «նա ողջունում է այն որպես հայերին բնաջնջելու իր ծրագրի արդարացում՝ բացառությամբ, եթե նրանք գոյան և ընդունեն Իսլամ»: Համլինը շարունակում էր, որ ներկայումս սուլթանն «ընդարձակել է իր գործողությունները կայսրության ողջ տարածքով, որը վերածվել է սպանդանոցի»: Ըստ հեղինակի՝ սուլթանը չի վախենում Եվրոպայի մեծ տերություններից, քանի որ նրանք որևէ հարցում համաձայնության չեն կարող գալ: Նա համոզված էր, որ սուլթանը կարող է վախենալ միմիայն Միացյալ Նահանգներից, որն ունի միայնակ գործելու հնարավորություն:[2]

Միևնույն ժամանակ լրագրող Ուիլյամ Ստիլմանը[3] քննադատում էր ԱՄՆ-ի վարչակազմին այն բանի համար, որ երբ Թուրքիայում միլիոնավոր քրիստոնյաների գոյության խնդիր գոյություն ուներ, նախագահ Քլիվլենդը «վեճ սադրեց» Վենեսուելայի հարցով Մեծ Բրիտանիայի հետ, որը հայերի փրկության միակ հույսն էր:[4]

1896 թ. հունվարի 15-ին Նյու Ջերսի նահանգի Հադդոնֆիլդ քաղաքում բազմամարդ ցույց տեղի ունեցավ, որի ժամանակ ընդունված հայտարարության մեջ ասվում էր, որ «Թուրքիայի սուլթանը զրկվել է հայ ժողովրդի վրա իշխելու բոլոր իրավունքներից»:[5]

[1] Rational Sympathy // The Armenian Massacres, 1894-1896. US Media Testimony (Edited by Arman J. Kirakossian) ..., p. 93.
[2] Hamlin, Cyrus, The Armenian Massacres // The Armenian Massacres, 1894-1896 (Edited by Arman J. Kirakossian) ..., pp. 98-99.
[3] Ուիլյամ Ստիլմանը (1828-1901) - ամերիկացի լրագրող, լուսանկարիչ, վիպասան, պատմաբան, հնագետ, աշխատել է որպես ԱՄՆ-ի հյուպատոս Հռոմում, Կրետեում, խմբագրել է Լոնդոնի *«Scribner's Magazine»* պարբերականը, եղել է *«The Times»*-ի թղթակիցը Բալկաններում, Լիբիայում, Հռոմում.
[4] Stillman W. J., The Eastern Question // The Armenian Massacres, 1894-1896 (Edited by Arman J. Kirakossian) ..., p. 113.
[5] Նույն տեղում, էջ 220.

Պարսավելով հայ տղամարդկանց՝ կանանց և երեխաների «գազանաբարո սպանությունները» «մահմեդական վայրենիների» կողմից, որոնց պատճառ է հանդիսացել միմիայն նրանց «նվիրումը քրիստոնյա կրոնին», 1896 թ. փետրվարին Օհայո նահանգի գլխավոր ասամբլեան դիմում էր ԱՄՆ-ի կոնգրեսին «ընդունել այնպիսի միջոցներ, որոնք ցույց կտան ամբողջ աշխարհին մեր ատելությունը Հայաստանում կազմակերպված նման գազանությունների հանդեպ և կիրառել ներկա կառավարության ողջ ուժը՝ նրանց համար համապատասխան պաշտպանություն ու նյութական օգնություն ապահովելու նպատակով»:[1] Նույն օրերին Կոնեկտիկուտից ընտրված ներկայացուցիչը հայտարարում էր Կոնգրեսում, որ իր ընտրողները պահանջում են իրականացնել բոլոր հնարավոր «իրավական, պատշաճ և բարոյական» միջոցները՝ «թուրքերի և քրդերի կողմից» հայերի նկատմամբ կիրառվող բռնությունը դադարեցնելու նպատակով:[2]

Հունվարի 22-ին Սենատի արտաքին հարաբերությունների կոմիտեում տեղի ունեցած հատուկ քննարկումների արդյունքում բանաձևի նախագիծ մշակվեց, որի համաձայն՝ «ամերիկացիները պետք է բողոքեն Բեռլինի պայմանագիրն ամբողջությամբ արհամարհելու դեմ» և պահանջեն նախագահ Քլիվլենդից հարկադրել «Եվրոպական համերգին» «կանգնեցնել մոլեռանդության և սանձարձակ բռնության ձեռքը», որն ուղղված է անպաշտպան հայերի դեմ: Փաստաթուղթը Կոնգրեսի աջակցությունն էր առաջարկում նախագահին «ամենագործուն գործողությունը ձեռնարկել Թուրքիայում ամերիկյան քաղաքացիների պաշտպանության և անվտանգության համար և փոխհատուցում պահանջել այն վնասների համար, որոնք իրագործվել են այդ անհատների կամ այդ քաղաքացիների ունեցվածքի նկատմամբ»: Բանաձևի նախաձեռնող, Իլինոյսից սենատոր Շելբի Քուլլմն այն համոզմանն էր, որ Եվրոպան այնպիսի իշխանություն ուներ Թուրքիայում, որ կարող էր վեց օրվա ընթացքում «կատարյալ կերպով և ամբողջապես կանգնեցնել տեռորի իշխանությունը»:[3] Մեյն նահանգի սենատոր Ուիլյամ Ֆոայն իր հերթին հայտարարում էր, որ Ռուսաստանը պետք է վերցնի Հայաստանն իր հովանու ներքո և պաշտպանի քրիստոնյաների կյանքը: Իսկ Ֆլորիդայի սենատոր Ուիլկինսոն Քոլը նախընտրում էր «խաղաղ բանակցությունների կամ անհրաժեշտ ուժի կիրառման» միջոցով սատարել անկախ Հայաստանի կայացմանը: Թեև մյուս սենատորները նույնպես պնդում էին «ավելի ուժեղ գործողությունների կիրառում», բանաձևը սատարեց միայն նախագահի «վճռական գործողությունը» «ամերիկյան քաղաքացիներին պաշտպանելու և վնասների համար փոխհատուցում ստանալու» ուղղությամբ:[1]

Ներկայացուցիչների պալատի քննարկումները տևեցին չորս օր և բուռն ընդունեցին Օսմանյան կայսրության հանդեպ «թշնամական» բնույթ: Օհայո նահանգի ներկայացուցիչ Չարլզ Հենրի Գրոսվենորը հայտարարում էր, որ Օսմանյան կայսրությունում կատարվող իրադարձություններին վերաբերող բանաձևերը «արժանի չեն Միացյալ Նահանգներին», իսկ Այովա նահանգի ներկայացուցիչ Ուիլյամ Հեպբրնը գայրացած կերպով բղավում էր. «Հայերը ոչ թե համակրանք են ուզում, ...նրանք փրկություն են սպասում: Նրանք մեզնից ոչ թե սոսկ խոսքեր են ուզում, նրանք ուզում են, որ քրիստոնյա ժողովուրդը գա իրենց օգնության»: Նա պահանջում էր Ամերիկայից արտահայտել իր «նողկանքը» տեղի ունեցող կոտորածների նկատմամբ «վոնդելով» թուրք դիվանագիտական ներկայացուցչին Վաշինգտոնից և խզելով դիվանագիտական հարաբերությունները Թուրքիայի կառավարության հետ: Թեև մի քանի տարի անց ԱՄՆ-ը պատերազմ սկսեց Թուրքիայում նման դեպքերի համար, Օսմանյան կայսրությունը ոչ միայն աշխարհագրորեն հեռու էր, այլև գտնվում էր եվրոպական տերությունների ազդեցության ոլորտում, ինչը հակասում էր օրվա ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության սկզբունքներին: Արդյունքում Ներկայացուցիչների պալատի բանաձևը (1896 թ., 24 հունվարի) նույնությամբ կրկնեց Սենատի բանաձևը (1896 թ., 27 հունվարի) լեզուն:[2]

«Հայկական բռնություններ» կոչվող բանաձևում հստակ հայտնվում է, որ եվրոպական տերությունները որպես 1878 թ. Բեռլինի պայմանագրի ստորագրող կողմեր, և «մարդկության շահերից» ելնելով «վերանգնեցնեն մոլեռանդության և սանձարձակ բռնության ձեռքը» և «հարգանքն Թուրքական կայսրության անմեղ քրիստոնյաների բոլոր իրավունքների» համար: Հանձնարարական ընդունված բանաձևի ԱՄՆ-ի Սենատը և Ներկայացուցիչների պալատը կոչ էին անում նախագահի կողմից ընդունել «անհրաժեշտ միջոցներ» «ապագա դեպքերը կանխելու» Թուրքիայում ԱՄՆ-ի քաղաքացիներին պաշտպանելու և անվտանգությունն ապահովելու, ինչպես նաև նրանց ունեցվածքի ոտնձգված վնասի համար փոխհատուցում ստանալու նպատակով:[3]

---

[1] US Congressional Record, Senate, 1896, February 12.
[2] US Congressional Record, House, 1896, January 27.
[3] US Congressional Record, House, 1896, January 24; Grabill, Joseph L., նշվ. աշխ., էջ 43.

[1] US Congressional Record, House, 1896, January 24.
[2] Մեջբերված աղբ., էջ 77-77.
[3] The Statutes at Large of the United States of America from December 1895 to March 1897 and Recent Treaties, Conventions and Executive Proclamations of the Two Houses of Congress, Vol. XXIX, Washington, Government Printing Office, 1897, p.

. Քննադատելով ընդունված բանաձևերը՝ ամերիկյան ճանաչված լրագրող Էդվին Գոդկինը[1] գրում էր *«The Nation»* պարբերականում, որ դրանք չեն համապատասխանում «նոր վերանայված վարդապետությանը», համաձայն որի՝ ԱՄՆ-ը կարող է միջամտել եվրոպական գործերին, եթե Եվրոպայի տերությունները «բացահայտորեն արհամարհում են» իրենց պարտավորությունները, և երբ Եվրոպայի որևէ հատվածում քրիստոնյաները «զրկված են պատշաճ իրավական պաշտպանությունից»:[2]

Ամերիկյան կրոնական գործիչ Լայմըն Էբբոթը[3] նույնպես քննադատում էր ԱՄՆ-ի քաղաքականությունն Օսմանյան կայսրության հանդեպ՝ նշելով, որ Վենեսուելայի պարագայում, երբ խոսքը գնում է չնչին շահերի մասին, կառավարությունն ուժ գտնում է սպառնալու պատերազմով, բայց երբ Թուրքիայում կոտորում են քրիստոնյաներին, երբ ԱՄՆ-ի քաղաքացիների անվտանգությունը վտանգված է, երբ ավերվում է նրանց ունեցվածքն ու կրթական հաստատությունները, այն սահմանափակվում է միմիայն «նուրբ բողոքով»:[4] «Եթե ես լինեի միաժամանակ կառավարություն և եկեղեցի, ես կգնեի յուրաքանչյուր տուն Հայկական Թուրքիայում, որը հնարավոր կլիներ գնել, - շարունակում էր Էբբոթը, - ես կպատեի դրանք ամերիկյան դրոշով կամ ամերիկյան դրոշ կբարձրացնեի նրանց վրա. ես կհավաքեի այդ տներում որքան հնարավոր է շատ որբ երեխաներ ու որքան հնարավոր է շատ այրի կանանց, և ես կասեի ջարդարար թուրքին՝ չփորձվես այլևս քո մատը բարձրացնել նրանցից որևէ մեկի վրա»:[5]

1896 թ. փետրվարի 1-ին Լոնդոնի *«The Spectator»* պարբերականն իր «Ամերիկացիները և հայերը» խմբագրական հոդվածում գրում էր. «Մենք վախենում ենք, որ Հայաստանը փրկելու հույսի այն ճառագայթը, որը մեր որոշ ժամանակակիցներ փորձում են գտնել Կոնգրեսի վերջին բանաձևերում, ուղղակի չափազանց թույլ է»: Հոդվածագիրը շարունակում էր, որ միայն արևմտյան կիսագնդում իրենց շահերը պաշտպանելու ամերիկացիների ավանդույթն անսասան է, և ուստի «նրանք ավելի կնախընտրեն ռմբակոծել Նագասակին՝ ճապոնացիների կողմից Պորտ Արտուրի բնակիչներին ջարդելու համար, քան թե կոմբակոծեն Կոստանդնուպոլիսը՝ հայերին կոտորելու համար»:[1]

Այն պահից, երբ հայկական կոտորածների մասին տեղեկությունները դարձան ԱՄՆ-ի հասարակայնության քննարկման առարկա, միսիոներների կարծիքը հայերի մասին սկսեց զգալի փոփոխություններ կրել: Հասարակական և քաղաքական գործիչներն իրենց ցասումն էին արտահայտում կոտորածների վերաբերյալ, մասնավորապես այն բանից հետո, երբ հայտնի դարձավ, որ իրադարձությունների հետևանքով տուժել են նաև ամերիկյան միսիոներների հաստատությունները: Ամերիկյան միսիոներները սկսեցին կազմակերպել հայասիրական կազմակերպություններ և մեծագույն ջանքեր գործադրել հայերի հասարակայնության աջակցությունն ուղղելու պաշտպանության գործին: Հայերն այլևս չէին դիտարկվում որպես «նոմինալ քրիստոնյաներ», այլ սկսեցին համարվել «քրիստոնյա մարտիրոսներ»: Թեև այս փոփոխությունը հայերի հանդեպ ամերիկյան համակրանքի մթնոլորտ ստեղծեց, սակայն այդպես էլ չվերածվեց կոտորածների ժամանակ հայերի ֆիզիկական պաշտպանության նպատակով ԱՄՆ-ի կողմից մարդասիրական ռազմական միջամտության համար: Այն նպաստեց ամերիկյան միսիոներների մրցակցային առավելությունների հզորացմանը եվրոպացի և ռուս միսիոներների համեմատ, ինչպես նաև ամերիկյան բիզնեսի զարգացմանը: Հայկական ճգնաժամը նպաստեց ԱՄՆ-ում և այլ երկրներում միսիոներների վարկի բարձրացմանը, ինչպես նաև նրանց բյուջեի ավելացմանը:[2]

3. Օգնության կազմակերպումը կոտորածներից տուժած արևմտահայությանը

Հայ համայնքները, ԱՄՆ-ի բազմապիսի բարեգործական, եկեղեցական կազմակերպությունները և միսիոներները սկսեցին օգնություն կազմակերպել հայ որբերի և այրիների համար: Միացյալ Նահանգների տարբեր քաղաքներում հիմնվեցին հայ-ամերիկյան բարեգործական միություններ և կոմիտեներ՝ Օսմանյան կայսրության հայ բնակչության համար նյութական

---

[1] **Էդվին Գոդկին** (1831-1901) – Իռլանդիայում ծնված ամերիկացի հայտնի լրագրող և խմբագիր, Նյու Յորքում հիմնել է *«The Nation»* պարբերականը, խմբագրել է *«New York Evening Post»* օրաթերթը:

[2] **Godkin, E. L.**, The Armenian Resolutions // The Armenian Massacres, 1894-1896: US Media Testimony (Edited by **Arman J. Kirakossian**)..., p. 123.

[3] **Լայմըն Էբբոթ** (1835-1922) - ամերիկյան կրոնական գործիչ, աստվածաբան, խմբագիր և հեղինակ, 1853-1869 թթ.՝ բողոքական քահանա մի շարք եկեղեցիներում, խմբագրել է *«Harper's Magazine»*, *«Illustrated Christian Weekly»*, *«The Outlook»* պարբերականները, ուր բազմաթիվ հոդվածներ են տպագրվել 1894-1896 թթ. հայկական կոտորածների մասին, իր «Հայկական հարցը» հոդվածում (*«The Outlook»*, 1896, December 5, pp. 1036-1038) գտնում էր, որ ջարդերը ոչ թե մոլեռանդ ամբոխի հատուկենտ քայլեր են, այլ սուլթանական կառավարության կողմից իրագործվող հայատյաց քաղաքականության հետևանք, հիմնական աշխատությունները՝ «Քրիստոնեության էվոլյուցիան», «Էվոլյուցիոնիստի աստվածաբանությունը»:

[4] **Abbott, Lyman**, The Armenian Question // The Armenian Massacres, 1894-1896: US Media Testimony (Edited by **Arman J. Kirakossian**)..., p. 231.

[5] Նույն տեղում, էջ 234-235:

[1] Americans and Armenians // The Armenian Massacres, 1894-1896: British Media Testimony (Edited by **Arman J. Kirakossian**). – Dearborn, Michigan: The Armenian Research Center of the University of Michigan-Dearborn, 2007, p. 372.

[2] **Payaslian, Simon**, նշվ. աշխ., էջ 14-15:

և ֆինանսական օգնություն հավաքելու նպատակով: Առաջին հայ օգնության կոմիտեն ստեղծվեց Նյու Յորքում՝ եպիսկոպոս Ալոնզո Պոտտերի և արքեպիսկոպոս Մայքլ Կորրիգանի կողմից:[1] Օժանդակության գործը կազմակերպելու համար այդ միությունները հանրավաքներ և ժողովներ էին հրավիրում Բոստոնում, Նյու Յորքում, Ֆիլադելֆիայում, Չիկագոյում, Պրովիդենսում և այլ քաղաքներում: Միաժամանակ *«Christian Herald»*-ի խմբագիր Լուիս Կլոպշը և Հայաստանի բարեկամներ կազմակերպության անդամ, պատվելի Էդվարդ Էվերեթ Հեյլն ազգային դրամահավաք սկսեցին *«Outlook»* և *«Lend a Hand»* կրոնական պարբերականների միջոցով:[2]

1895 թ. դեկտեմբերին Նյու Յորքում կազմավորվեց «Ազգային հայկական օգնության կոմիտեն» (National Armenian Relief Committee), որի նախագահ ընտրվեց Գերագույն դատարանի դատավոր Դեյվիդ Բրյուերը, իսկ միսիոներ Ֆրեդերիկ Գրինը դարձավ քարտուղարը: «Ամերիկյան կարմիր խաչի» նախագահ Կլարա Բարտոնը սկսեց համագործակցել կոմիտեի հետ: Միսիոների որդի Էդվին Բլիսը Սայրուս Համլինի օգնությամբ գիրք գրեց Հայկական հարցի պատմության և կոտորածների մասին:[3] «Ազգային հայկական օգնության կոմիտեն» իր տեղական մարմինները հիմնեց Սպրինգֆիլդում, Վուստերում, Սիրակուզում, Հարրիսբուրգում, Բալտիմորում, Վաշինգտոնում, Դետրոյտում, Քլիվլենդում, Կոլումբուսում, Ինդիանապոլիսում, Չիկագոյում, Սենտ Փոլում և այլ քաղաքներում:[4] Բոստոնում այն ղեկավարում էր «Ամերիկյան խորհուրդի» քարտուղար, պատվելի Ջադսոն Սմիթը:[5]

Թեև Սայրուս Համլինը նպատակադրվել էր հավաքել 1 մլն դոլար, «Ազգային հայկական օգնության կոմիտեի» գործունեության արդյունքում 1894-1896 թթ. ընթացքում ամերիկացիները կարողացան նվիրաբերել 300 հազար դոլար: Մոտավորապես նույն չափի գումար նվիրաբերել էր ԱՄՆ-ի հայկական համայնքը: Ռոբերտ Միրաքը բացատրում է դրամահավաքի ցածր արդյունքն ԱՄՆ-ում տիրող տնտեսական ճգնաժամով, ինչպես նաև թուրքական իշխանությունների նկատմամբ ամերիկացիների մոտ գոյություն ունեցող անվստահությամբ: Շատերը վախենում էին, որ հավաքված գումարն իր նպատակին չի ծառայելու:[6]

Այդ ընթացքում «Կարմիր խաչն» ու «Ամերիկյան խորհուրդը» հիմնեցին օգնության կայաններ Փոքր Ասիայում, հիմնադրեցին որբանոցներ և

[1] Mirak, Robert, նշվ. աշխ., էջ 223:
[2] Stu' Aid for Armenia: An Appeal for Immediate Help // The Armenian Massacres, 1894-1896: US Media Testimony (Edited by Arman J. Kirakossian)..., pp. 116-121.
[3] Bliss, E.M., Turkey and the Armenian Atrocities, Philadelphia, 1896.
[4] Grabill, Joseph L., նշվ. աշխ., էջ 41-42; Mirak, Robert, նշվ. աշխ., էջ 223:
[5] Jones, Marian Moser, նշվ. աշխ., էջ 70:
[6] Mirak, Robert, նշվ. աշխ., էջ 224:

տներ այրիների համար, որտեղ նրանց տարբեր արհեստներ էին սովորեցնում:

1896 սեպտեմբերի 11-ին Էրզրումում ԱՄՆ-ի հյուպատոս Բերգհոլցը տեղեկացնում էր պետքարտուղարի տեղակալ Ռոկհիլլին, որ հունիսին «Ամերիկյան խորհուրդը» ներկայացնող մի խումբ միսիոներներ պատվելի Մակալլմի գլխավորությամբ Հալեպի նահանգի Մարաշ քաղաքից մեկնել էին Զեյթուն և սահմանակից շրջանները՝ գյուղերի բնակչությանն օգնություն ցուցաբերելու նպատակով: Ըստ հյուպատոսի՝ սա առաջին օտարերկրացիների խումբն էր, որն այցելել էր այդ շրջաններն անցյալ տարվա հոկտեմբերին տեղի ունեցած դեպքերից հետո: Իր «Զեյթունն ու սահմանակից շրջանները» զեկույցի համաձայն՝ Մակալլմն այցելել էր հարձակումների ենթարկված շրջանի 18 հայկական և թուրքական գյուղեր: Պատվելին օգնություն էր ցուցաբերել հավասարապես մահմեդականներին ու քրիստոնյաներին և հավատացած էր, որ դրանով նպաստել էր հայերի և թուրքերի միջև վստահության ամրապնդմանը: Միսիոներներն ապահովել էին նրանց սնունդով և հագուստով, վերանորոգել նրանց տները, գնել անասուններ:[1]

1896 թ. նոյեմբերի 21-ին Բերգհոլցը գրում էր, որ 1895 թ. կոտորածների արդյունքում Օսմանյան կայսրությունում շուրջ 50 հազար հայ որբ երեխա կար, որոնց տարիքը 12-ից ցածր էր: Ըստ հյուպատոսի՝ նրանց օգնության հարցը քննարկվում էր ամերիկյան միսիոներների խորհրդի կողմից, առաջարկություններ կան որբանոցներ, հագուստի ֆաբրիկաներ և արտադրական հիմնարկություններ կառուցելու մասին: Գերմանական «Kaizerswerth Deaconessess of Germany» բարեգործական հաստատությունը ծրագիր էր մշակել որբերին Զմյուռնիա փոխադրելու վերաբերյալ, Էրզրումից այստեղ արդեն իսկ տեղափոխվել էին 33 հայ որբեր: Բրիտանական կառավարությունը նպատակադրվել էր Կիպրոս տեղափոխել և բնակեցնել այրիներին և որբերին, մասնավորապես Էրզրումի նահանգից: Միայն Էրզրում, Երզնկա և Բաբերդ քաղաքներում 2 049 որբ երեխա կար, որոնք գտնվում էին ծայրահեղ վատ վիճակում: Մասնավորապես Էրզրումում այրիների թիվը 180-ն էր, իսկ որբ երեխաներինը՝ 700, Երզնկայում՝ համապատասխանաբար 100 և 450, Բաբերդում՝ 119 և 500: Բաբերդի այրիները գտնվում էին շատ ծանր վիճակում: Ըստ հյուպատոսի՝ Բաբերդում հայ տղամարդ գրեթե չէր մնացել:[2]

[1] The National Archives and Records Service, Despatches from United States Consuls in Erzerum, 1895-1904, Roll 1, Vol. 1, August 5, 1895 – December 31, 1900, Leo Bergholz to N.N. Rockhill, 1896, September 11, No. 24, pp. 1-21.
[2] The National Archives and Records Service, Despatches from United States Consuls in Erzerum, 1895-1904, Roll 1, Vol. 1, August 5, 1895 – December 31, 1900, Leo Bergholz to N.N. Rockhill, 1896, November 21, No. 44, pp. 1-3.

1897 մայիսի 28-ին Բերգհոլցը զեկուցում էր պետքարտուղարի.օգնականին, որ ամերիկյան միսիոներները մեծ աշխատանք էին կատարում Էրզրումի նահանգում հազարավոր սովյալ որբ երեխաներին և այրիներին օգնություն ցուցաբերելու և փրկելու ուղղությամբ: Ըստ հյուպատոսի՝ ձմեռվա ընթացքում միսիոներներն օգնություն էին ցուցաբերել կոտորածներից տուժած 60 000 մարդու: 1895 թ. հոկտեմբեր և նոյեմբեր ամիսների ընթացքում, համաձայն նահանգի յուրաքանչյուր գյուղում և քաղաքում կատարված ճշգրիտ հաշվարկների, մահացել էր 3 000 հոգի, ավերվել էր 11 200 տուն և խանութ, 3 000 որբ մնացել էր բարեգործության հույսին: Մասնավորապես Էրզրումում «Ամերիկյան խորհուրդի» շինություններում պատսպարվել էին 60 որբ երեխաներ: Եվս 50 երեխա ժամանելու էր այդտեղ Բաբերդից: Դա հնարավոր էր դարձել միսիոներներ Չամբերսի և Գրեյս Նեփի նվիրվածության շնորհիվ: Երկու շինություն օգտագործվում էր որպես դպրոց աղջիկների և տղաների համար: Միսիոներներն առաջին հերթին նախընտրում էին ընդունել ծնողազուրկ երեխաներին և հետո նոր այն երեխաներին, որոնք կորցրել էին իրենց հայրերին, իսկ մայրերը գտնվում էին ծայրագույն աղքատության վիճակում: Այդ դպրոցները հաճախող 97 տղաները և 105 աղջիկները միանգամից ընդունեցին որբ երեխաներին իրենց շարքերը՝ ընդգրկելով նրանց սպորտի և խաղերի մեջ: Բոլոր որբ աղջիկները սկսեցին մասնակցել կարի և խոհարարական դասընթացներին, որպեսզի մոտ ապագայում կարողանան ապահովել իրենց գոյությունը: Նրանք բոլորը ստանալու էին ընդհանուր կրթություն և բարոյականության դասընթացներ, որպեսզի «կարողանան դպրոցից դուրս գալուն պես պայքարել կյանքի դժվարությունների դեմ, ինչպես նաև դառնալ լավ կանայք, լավ ամուսիններ, լավ մայրեր և շնորհակալ լինել ամերիկյան ժողովրդին, որն օգնության է հասել իրենց»: Ամեն մի երեխան այստեղ ուներ իր մահճակալն ու անկողինը և սնվում էր օրը երեք անգամ: Տղաների համար կազմակերպվել էին առևտրի, կոշկակարության, կարի և ատաղձագործության դասընթացներ: Նրանք, ովքեր սեր էին ցուցաբերում ուսանելու հանդեպ, շարունակելու էին իրենց դասերը, իսկ մյուսները պետք է կյանք մտնեին և զբաղվեին իրենց ընտրած մասնագիտություններով:

Ըստ հյուպատոսի՝ այն որբերը, որոնց ծնողներն առաքելական քրիստոնյաներ էին, շաբաթը երկու անգամ այցելում էին առաքելական եկեղեցի, որտեղ ուսանում էին իրենց կրոնի ավանդույթներն ու դոկտրինը: Նահանգապետը, որը երբևիցե չէր այցելել հայկական դպրոց, դիմել էր հյուպատոսություն և ցանկություն հայտնել այցելել հայ որբերին: Հյուպատոսն ու միսիոներ Չամբերսն ուղեկցել էին նահանգապետին դպրոցում, ցույց տվել նրան հանրակացարանային հատվածը և դասասենյակները: Նա շատ գոհ

էր մնացել դպրոցի պայմաններից և շնորհակալություն հայտնել միսիոներների բարեգործության համար:

Ըստ Բերգհոլցի՝ միսիոներ Չամբերսը փորձում էր հավաքել անհրաժեշտ միջոցներ՝ որբերին ամառվա և ձմեռվա ամիսների ընթացքում խնամելու համար: Տարեկան ամեն մի որբի խնամքի գինը հասնում էր 30 դոլարի: Այսպիսով՝ ներկայումս դպրոցում գտնվող 60 և Բաբերդից ժամանող 50 որբերի համար հարկավոր էր հավաքել 3600 դոլար:[1]

Հյուպատոսի նամակին կցված էր նաև միսիոներ Չամբերսի հաշվետվությունը Բաբերդ կատարած իր այցելության մասին: Ըստ Չամբերսի՝ քաղաքում պատսպարվել են 1-ից 12 տարեկան տարիքի 232 որբեր, շրջակա գյուղերում՝ 1 400 որբեր: Էրզրումի նահանգում որբերի ընդհանուր թիվը կազմում է 3 000, մեծամասնությունը գտնվում են շատ վատ վիճակում: Չամբերսը նպատակ ուներ այստեղից հինգ տարվա համար վերցնել ընդհանուր առմամբ 200 որբ երեխա:[2]

Իրապես այդ օրերին ամերիկյան միսիոներներն ու ամերիկյան օգնության կազմակերպիչները հրաշքներ գործեցին կոտորածներից տուժած արևմտահայերին օժանդակություն ցուցաբերելու գործում՝ վտանգի տակ դնելով իրենց անձնական անվտանգությունը: Այսպես՝ Խարբերդի Եփրատ քոլեջի նախագահ Քեյլբ Գեյթսի ջանքերի շնորհիվ հնարավոր դարձավ հայկական և ամերիկյան բարեգործական միություններից ստացված օգնությունը բաշխել 160 գյուղերում պատսպարված 50 հազար չքավոր փախստականների միջև:[3] Կոտորածների ընթացքում հարյուրավոր վիրավորված հայերին բժշկական զգալի օգնություն էր ցուցաբերել Այնթապի ամերիկյան առաքելության հիվանդանոցում աշխատող բժիշկ Քարոլայն Համիլտոնը:[4]

Չնսեմացնելով շատ և շատ միսիոներների կատարած աշխատանքը՝ ցանկանում ենք ավելի մանրամասնորեն կանգ առնել երկու ամերիկուհիների՝ միսիոներ Գրեյս Քիմբալի և «Ամերիկյան կարմիր խաչի» նախագահ Կլարա Բարտոնի գործունեության վրա:

Գրեյս Քիմբալը ծնվել էր Նյու Հեմպշիր նահանգում, կրթությունը ստացել Մեյն նահանգի Բանգոր քաղաքում: 1882 թ. նա մեկնել էր Վան՝ «Ամերիկյան խորհուրդի» առաքելության ամենօրյա դպրոցում և օրիորդաց գիշերօթիկում աշխատելու նպատակով: Մեծապես ազդվելով Օսմանյան կայս-

[1] The National Archives and Records Service, Despatches from United States Consuls in Erzerum, 1895-1904, Roll 1, Vol. 1, August 5, 1895 – December 31, 1900, Leo Bergholz to N.N. Rockhill, 1897, November 27, No. 68, pp. 2-5.
[2] Նույն տեղում, էջ 7-8.
[3] Mirak Robert, նշվ. աշխ., էջ 224:
[4] Aid for Armenia: An Appeal for Immediate Help // The Armenian Massacres, 1894-1896: US Media Testimony (Edited by Arman J. Kirakossian)..., pp. 118-121.

րությունում առողջապահական համակարգի իսպառ բացակայությունից և գիտակցելով շրջանում որակյալ բժիշկներ ունենալու կարիքը՝ 1888 թ. Գրեյս Քիմբալը վերադառնում է Միացյալ Նահանգներ և ընդունվում Նյու Յորքի հիվանդանոցի Կանանց բժշկական քոլեջը: 1892 թ. հուլիսին նա կրկին վերադառնում է Վան և երեք տարի անընդմեջ կազմակերպում քաղաքում և նահանգում տիրող խոլերայի, դիֆտերիտի և կարմրախտի համաճարակների դեմ պայքարը: Կատարած մեծածավալ աշխատանքի և բազմաթիվ մարդկանց կյանքը փրկելու համար նա ձեռք է բերում համընդհանուր ճանաչում ինչպես քաղաքում, այնպես էլ նահանգի գյուղերում: Թեև Վան քաղաքում կատորած տեղի չէր ունեցել, սակայն 1895 թ. աշնանը նահանգում ավերվել և թալանվել էին հարյուրավոր հայկական գյուղեր, որի արդյունքում գյուղացիները մնացել էին անօթևան և քաղցած, շատերը պատսպարվել էին քաղաքում: Օգտագործելով իր համբավը և ծանոթությունները տեղական իշխանությունների հետ՝ Գրեյս Քիմբալը ոչ միայն կարողացավ կազմակերպել ամերիկյան օգնության բաշխումը, օրական կերակրել շուրջ 16 հազար մարդու, փրկել հարյուրավոր մարդկանց կյանքը բծավոր տիֆի համաճարակից, այլև ստեղծել արդյունաբերական և գյուղատնտեսական արհեստանոցներ, որոնք պետք է նպաստեին նահանգի տնտեսությունը ճգնաժամից դուրս բերելու և գյուղացիներին աշխատանքով ապահովելու նպատակին:[1]

Գրեյս Քիմբալը վերադարձավ Միացյալ Նահանգներ և շարունակեց օգտակար լինել արևմտահայությանը՝ ծանոթացնելով ամերիկյան հասարակայնությանը Հայաստանում տիրող իրավիճակի մասին և կոչ անելով օգնության ձեռք մեկնել ու փրկել քրիստոնյա հայերին: 1896 թ. նոյեմբերի 21-ին «*The Outlook*» պարբերականում հրատարակված «Իրավիճակը Հայաստանում» հոդվածում նա առաջարկում էր, որ ԱՄՆ-ի կառավարությունն իր «սրտով, հոգով և նավատորմով» պետք է կանգնի Մեծ Բրիտանիայի կողքին՝ «մարդկության պաշտպանության» նպատակով: Քաղաքական օգնության զուգահեռ, շարունակում էր Քիմբալը, ամերիկացիները միաժամանակ պետք է անմիջապես «թեթևացնեն» հայերի «բարոյական վիշտը»: Նա գրում էր. «Շատ վստահելի կերպով կարելի է ասել, որ Կոստանդնուպոլսից մինչև Պարսկաստան, Կովկասից մինչև Միջագետք յուրաքանչյուր քաղաքի և գյուղի քրիստոնյա բնակիչների 9/10-ը հայտնվել են դրսի աշխարհի օգնությունից կախյալ՝ օրվա հացի, հագուստի և վառելիքի կարոտ: Տասնյակ հազարավոր որբեր մնացել են անտուն և անօգնական»: Քիմբալը կոչ

[1] Thelberg Elizabeth B. An American Heroine in the Heart of Armenia: Dr. Grace Kimball and Her Relief Work at Van // The Armenian Massacres, 1894-1896: US Media Testimony (Edited by Arman J. Kirakossian)..., pp. 155-163; The Massacres at Van // The Armenian Massacres, 1894-1896: US Media Testimony (Edited by Arman J. Kirakossian)... – pp. 185-188.

էր անում ամերիկացիներին «մարդկային և քրիստոնեական համակրանք» հանդես բերել, դրամ հավաքել և ուղարկել Կոստանդնուպոլիս և օգնության տարբեր կենտրոններ, ինչպես դա տեղի էր ունեցել 1895 թ. ձմռան ընթացքում: Նկատի առնելով Հայաստանի քրիստոնյաների ծանրագույն վիճակը՝ նա դիմում էր բարեգործական բոլոր կազմակերպություններին կրկնապատկել իրենց ջանքերը՝ հայ որբերի և այրի կանանց օգնելու նպատակով դրամահավաք կազմակերպելու համար:[1]

1896 թ. փետրվարին Ամերիկայի Միացյալ Նահանգների հանրահայտ հասարակական գործիչ, «Ամերիկյան կարմիր խաչի» հիմնադիր և նախագահ, մեծ մարդասեր Կլարա Բարտոնը ժամանեց Օսմանյան կայսրության մայրաքաղաք Կոստանդնուպոլիս՝ տեղում կազմակերպելու և ղեկավարելու 1894-1896 թթ. կոտորածներից տուժած հայ բնակչությանը օգնություն ցուցաբերելու աշխատանքները: Թեև «Ամերիկյան կարմիր խաչի» այս առաքելության մանրամասները ժամանակին լայնորեն լուսաբանվել էին ամերիկյան և հայկական մամուլում, պատմագիտական աշխատություններում, դրանք դեռևս չեն դարձել մասնագետների հատուկ ուսումնասիրության առարկա:

1922 թ. հայ հասարակական-քաղաքական գործիչ և դիվանագետ Գարեգին Բաստերմաջյանը ճշմարտացիորեն գրում էր. «1895 թ. մեծ կոտորածից հետո Կլարա Բարտոնի անձնական օրինակի շնորհիվ մենք հայտնաբերեցինք ևս մեկ քրիստոնյա տերություն և ազգ, որը նվիրված է մեր ընդհանուր կրոնի վսեմ սկզբունքներին, ազատության և արդարության չեմպիոն է, բոլոր ճնշված և տառապյալ ժողովուրդներին օգնության ձեռք մեկնող բարեկամ: Մենք երախտապարտ ենք Կլարա Բարտոնին այն բանի համար, որ նա առաջինն էր այն ամերիկացիներից, որոնք ոգեշնչեցին մեզ այդ հավատով:»[2]

Կլարիսա (Կլարա) Հարլոու Բարտոնը ծնվել է 1821 թ. դեկտեմբերի 25-ին ԱՄՆ Մասաչուսետս նահանգի Նորդ Օքսֆորդ քաղաքում՝ բարեկեցիկ ֆերմեր Ստեֆանի և տան տնտեսուհի Սառայի ընտանիքում: Նրանք ունեին հինգ երեխա, որոնցից ամենակրտսերը Կլարան էր: Նա այնքան խելացի և ուշիմ երեխա էր, որ իր ավագ եղբայրների և քույրերի օգնությամբ ոչ միայն կարողացել էր ինքնուրույն ուսում ստանալ, այլև 17 տարեկան հասակում սկսել էր դասավանդել դպրոցում: 1850 թ. նա ընդունվում է Նյու Յորք նահանգի Կլինտոն քաղաքի Լիբերալ ինստիտուտը, իսկ երկու տարի անց հիմնում Նյու Ջերսի նահանգի առաջին հանրային դպրոցը Բորդենթաուն քաղաքում: 1854 թ. նա մեկնում է ԱՄՆ-ի մայրաքաղաք Վաշինգտոն,

[1] Kimball, Grace, N. The Situation in Armenia // The Armenian Massacres, 1894-1896 (Edited by Arman J. Kirakossian)..., pp. 208-210.
[2] Young, Charles Sumner, Clara Barton. A Centenary Tribute, Boston, 1923, p. 342.

ուր աշխատանքի է ընդունվում Արտոնագրային գրասենյակում: Սա բացառիկ դեպք էր այդ ժամանակ ԱՄՆ-ում, երբ կինն աշխատանքի էր նշանակվում ֆեդերալ կառավարության գրասենյակներից մեկում: Քաղաքացիական պատերազմի (1861-1865 թթ.) ընթացքում Կլարա Բարտոնը մի խումբ ընկերների հետ իրեն նվիրում է վիրավորված զինվորներին օգնություն ցուցաբերելու և կազմակերպելու գործին: Մինչ այդ ԱՄՆ-ում ընդհանրապես արգելված էր, որ կինն այցելեր դաշտային հոսպիտալ, զինվորական ճամբար կամ հայտնվեր մարտադաշտում: Սակայն Կլարա Բարտոնին հաջողվեց իր նվիրումով և խիզախությամբ վստահություն ձեռք բերել պետական պաշտոնյաների ու սպայական կազմի շրջանում, և շատ շուտով «մարտադաշտի հրեշտակին» ճանաչեց ողջ երկիրը: 1864 թ. նա պաշտոնապես ստանձնեց ԱՄՆ-ի «Բուժքույրերի միության» ղեկավարի պարտականությունները և սկսեց դրամահավաքի միջոցով կազմակերպել հոսպիտալների մատակարարման, ինչպես նաև բուժքույրերի պատրաստման աշխատանքները: Պատերազմի ավարտից հետո ԱՄՆ-ի նախագահ Աբրահամ Լինկոլնի հանձնարարությամբ նա ղեկավարեց մարտադաշտերում կորած զինվորների մասին տեղեկատվություն հավաքելու, ցուցակների տպագրության և մահացածների ինքնությունը պարզելու աշխատանքը: 1869 թ. Կլարա Բարտոնը մեկնեց Եվրոպա: Շվեյցարիայում նա ծանոթացավ «Միջազգային կարմիր խաչի կոմիտեի» գործունեությանը և Ժնևի կոնվենցիայի հիմնադրույթներին, ինչպես նաև 1870-1871 թթ. Ֆրանկո-պրուսական պատերազմի ընթացքում որպես կամավոր մասնակցեց «Կարմիր խաչի» փրկարար աշխատանքներին: 1873 թ. Կլարա Բարտոնը վերադարձավ ԱՄՆ և մեծ ծավալի քարոզչական գործունեություն ծավալեց «Կարմիր խաչի» գաղափարները տարածելու ուղղությամբ: 1881 թ. մայիսին նա հիմնեց «Ամերիկյան ազգային կարմիր խաչ» կազմակերպությունը և հասավ նրան, որ մեկ տարի անց ԱՄՆ-ը միացավ Ժնևի կոնվենցիային: Կլարա Բարտոնի գործունեության շնորհիվ 1884 թ. Ժնևի կոնվենցիայի տեքստում ԱՄՆ-ի առաջարկով լրացում կատարվեց, համաձայն որի՝ «Միջազգային կարմիր խաչը» պետք է զբաղվի մարդասիրական գործունեությամբ ոչ միայն պատերազմի, այլև բնական աղետների դեպքում: Կլարա Բարտոնը ղեկավարեց «Ամերիկյան կարմիր խաչը» մինչև 1904 թ.: Կազմակերպությունը մեծ ծավալի մարդասիրական աշխատանք տարավ Միացյալ Նահանգներում, մասնավորապես 1882, 1884 թթ. Միսսիսիպի և Օհայո գետերի ջրհեղեղների, 1886 թ. Տեխասի սովի, 1887 թ. Ֆլորիդայի դեղնախտի համաճարակի, 1888 թ. Իլինոյսի երկրաշարժի, 1889 թ. Պենսիլվանիայի ջրհեղեղի, 1898 թ. իսպանա-ամերիկյան պատերազմի ընթացքում: Կլարա Բարտոնը զգալի դերակատարություն ունեցավ նաև կանանց իրավունքների պաշտպանության գործում, կանանց ընտրական իրավունքներ տրամադրելու օգտին ԱՄՆ-ում

ծավալված շարժման մեջ, սերտորեն համագործակցեց ամերիկյան կանանց իրավունքների հայտնի պաշտպաններ Սյուզըն Էնթոնիի և Լյուսի Սթոնի հետ: Կլարա Բարտոնը մահացել է 1912 թ. ապրիլի 12-ին Մերիլենդ նահանգի Գլեն Էքո գյուղաքաղաքում 91 տարեկան հասակում: Իր գրչին են պատկանում «Կարմիր խաչի պատմությունը», «Կարմիր խաչը խաղաղության և պատերազմի մեջ», «Իմ մանկության պատմությունը» և այլ գրքեր:

Կլարա Բարտոնը գրեթե նոր էր ամփոփել Հարավային Կարոլինայի կղզիներում «Ամերիկյան կարմիր խաչի» կողմից կատարած աշխատանքը և զբաղված էր Կարմիր խաչի պատմության գրքի խմբագրությամբ, երբ նամակներ սկսեց ստանալ 1894-1895 թթ. ընթացքում Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած կոտորածների ընթացքում տուժած հայերին օգնություն ցուցաբերելու խնդրանքով: Սա մի անսովոր խնդիր էր նրա համար, քանի որ այն ոչ բնական աղետ էր, ոչ էլ պատերազմական գործողությունների արդյունքում տեղի ունեցած դժբախտություն: Խոսքը գնում էր «մարդու կողմից իրականացված կոտորածի մասին, որն իր մեջ պարունակում էր քաղաքական նուրբ տարրեր:»[1]

Այդ օրերին Նյու Յորքում հիմնադրվել էր «Ազգային հայկական օգնության կոմիտեն», որի կազմում ընդգրկվել էին ազդեցիկ հասարակական գործիչներ: 1895 թ. վերջին կոմիտեն և ամերիկյան միսիոներական խորհուրդները միասնաբար դիմեցին Կլարա Բարտոնին և «Կարմիր խաչին»՝ օգնության և փրկարար աշխատանքները կազմակերպելու, սննդի և պարենի մատակարարումն ապահովելու նպատակով: Օգնության հայթայթման աշխատանքներն արդեն իսկ սկսված էին Մեծ Բրիտանիայում և Միացյալ Նահանգներում, սակայն Թուրքիա այն հասցնելու և տեղում գործը կազմակերպելու համար որևէ այլ կազմակերպություն համապատասխան փորձ ու միջոց չուներ: Օսմանյան կայսրությունում ապրող ու գործող հարյուրավոր ամերիկացի միսիոներները նույնպես տուժել էին կոտորածների հետևանքով, փաստորեն՝ բանտարկված էին մնացել իրենց տներում և որևէ օգնության ծրագիր իրականացնելու հնարավորություն չունեին:[2] Ինչպես հետագայում նշում էր Կլարա Բարտոնը, կոտորածներից տուժած հայ բնակչությանը օգնություն ցուցաբերելու հարցում «Ամերիկյան կարմիր խաչի» ընդգրկման գաղափարը պատկանում էր Կոստանդնուպոլսում գործող միսիոներ, պատվելի Հենրի Օ. Դուայթին:[3]

[1] Fishwick, Marshall W., Illustrious Americans: Clara Barton, Morristown, New Jersey, 1966, p. 222.
[2] Epler, Percy H., The Life of Clara Barton, New York, 1915, p. 276; Barton, David H., Clara Barton. In the Service of Humanity, Westwood, Connecticut and London, 1995, p. 128.
[3] America's Relief Expedition to Asia Minor under the Red Cross, Washington, D.C., 1896, pp. 3, 27.

Թեև Կլարա Բարտոնը 74 տարեկան էր և խուսափում էր նոր պատասխանատվություն ստանձնելուց, նա համաձայնեց մասնակցել ծրագրին այն պայմանով, որ «Կարմիր խաչը» հանդես է գալու ամերիկյան ժողովրդի անունից և ապահովված է լինելու համապատասխան ֆինանսական միջոցներով: 1895 թ. դեկտեմբերի 14-ին նա հայտարարեց, որ համապատասխան ֆինանսական միջոցների ձեռքբերումից անմիջապես հետո «Ամերիկյան կարմիր խաչը» օգնության արշավախումբ է ուղարկելու Հայաստան՝ օժանդակություն ցուցաբերելու 350 հազար չքավոր և սովյալ մարդկանց: Նա առաջարկեց հատկացնել «Կարմիր խաչին» 5 մլն դոլար և 20 հոգանոց աշխատախումբ, սակայն հետագայում այդ թիվը կրճատվեց՝ հասնելով մինչև 500 հազարի, այնուհետև 100 հազարի, և վերջում թիվը հասավ ընդամենը 50 000-ի: Ի վերջո ամերիկյան և բրիտանական տարբեր բարեգործական կազմակերպությունների միջոցով ստացվեց 116 000 դոլարից ավելի գումար, որից 15 400 դոլարը առաքելության ավարտից հետո որպես արտակարգ անհրաժեշտության հիմնադրամ մնաց ամերիկյան միսիոներական առաքելության տրամադրության տակ: Պետք է նշել, որ գումարները հիմնականում հավաքվել էին Միացյալ Նահանգների բողոքական և ավետարանական եկեղեցիների միջոցով:[1]

«Մարդ արարածներ էին սովամահ լինում, - հետագայում գրում էր Կլարա Բարտոնը, - և նրանց հնարավոր չէր հասնել: Առաջին կոտորածներից ի վեր որևէ լուր չկար հազարավոր քաղաքներից ու գյուղերից, որոնց վրայով կրակ ու սուր էր անցել, և միայն «Կարմիր խաչն» էր, որ կարող էր նրանց հասնելու ինչ-որ հույս տածել: Ուրիշ որևէ մեկը դաշտային աշխատանքի պատրաստ չէր. այն ուներ փորձված դաշտային աշխատողներ, և Թուրքիան «Կարմիր խաչի» պայմանագրի ստորագրող պետություններից էր:»[2] Բացի այդ՝ ստեղծված առիթը հնարավորություն էր տալիս Կլարա Բարտոնին լռեցնելու վերջերս իրեն և «Կարմիր խաչին» քննադատողներին՝ ապացուցելու, որ մարդկանց օգնությունն իր կյանքի և իր ղեկավարած կազմակերպության առաքելությունն է, և որ միայն «Ամերիկյան կարմիր խաչը» կարող էր իրականացնել նման բարդ խնդիր:[3]

Կլարա Բարտոնին ուղղված նամակներում պատվելի Ջադսոն Սմիթը Բոստոնից և Սպենսեր Թրասկը[4] Նյու Յորքի «Ամերիկյան օգնության կոմիտեից» նշում էին, որ թեև կոտորածների ընթացքում սպանվածներին հնարավոր չէր այլևս կյանքի կոչել, սակայն միայն «Ամերիկյան կարմիր խաչը» կարող էր օգնության ձեռք մեկնել տասնյակ հազարավոր քաղցած, որբ և անօգնական մարդկանց: Նրանք հավատացած էին, որ որպես ոչ քաղաքական և ոչ աղանդավորական կազմակերպություն՝ «Կարմիր Խաչը» կարող էր հայտնվել այնպիսի վայրերում, ուր նույնիսկ բանակը չէր կարող հասնել:[1]

Օսմանյան կայսրության կառավարությունը կասկածանքով էր վերաբերվում յուրաքանչյուր օգնության ծրագրերին արտասահմանից՝ տեսնելով դրանցում քաղաքական բանսարկություն կամ միջամտություն իր ներքին գործերի մեջ: Թուրք իշխանությունները հայտարարում էին, որ օգնության նպատակով երկիր թույլ չեն տալու մուտք գործել «նույնիսկ այնպիսի համբավ ունեցող կազմակերպությանը, ինչպիսին է «Կարմիր խաչը»: Մասնավորապես Օսմանյան կայսրության դեսպանությունը Վաշինգտոնում, փաստորեն, մերժել էր մուտքի արտոնագիր տրամադրել «Ամերիկյան կարմիր խաչի» ներկայացուցիչներին: Սակայն, հավատալով միջազգային պայմանագրի ուժին, Կլարա Բարտոնը, չնայած իր հասակին և վատառողջ վիճակին, որոշեց անձամբ մեկնել Կոստանդնուպոլիս և բանակցել Բարձր Դռան հետ: Վերջնական որոշումը նա կայացրեց 1896 թ. հունվարի սկզբին՝ Նյու Յորքի «Ուոլդորֆ Աստորիա» հյուրանոցում օգնության կոմիտեների ներկայացուցիչների և գործարարների հետ կայացած հանդիպումից հետո:

Կլարա Բարտոնը սկսեց իր ճամփորդությունը 1896 թ. հունվարի 22-ին անորոշության զգացումով, քանի որ վստահ չէր, թե արդյոք Բարձր Դուռը թույլ տալու է «Կարմիր խաչի» պատվիրակությանը մուտք գործել երկիր, թե ոչ: Փետրվարի 6-ին «Ամերիկյան կարմիր խաչի» պատվիրակությունը ժամանեց Լոնդոն, որտեղ Կլարա Բարտոնը Կոստանդնուպոլսից լուր ստացավ այն մասին, որ Միացյալ Նահանգների դիվանագիտական ներկայացուցիչ, դեսպանորդ-նախարար Ալեքսանդր Տերրելը կարողացել է համոզել Բարձր Դռանը թույլ տալ «Ամերիկյան կարմիր խաչի» պատվիրակությանը մուտք գործել Թուրքիա: Այստեղից էլ՝ Վիեննայի ճանապարհով, պատվիրակությունը մեկնեց Թուրքիա և Կոստանդնուպոլիս հասավ փետրվարի 16-ին: Կլարա Բարտոնին ուղեկցում էին Ջուլիան Բ. Հաբբելը, պ-ն Փուլմանը, Չարլզ Կինգ Վոտը և հատուկ դաշտային գործակալ Էդուարդ Մ. Վիստարը: Հետագայում պատվիրակությանը միացան լեզվաբան Եռնեստ Մեյսոնն ու իր մայրը, ինչպես նաև ամերիկացի բժիշկ Այրա Հարրիսը:[2]

---

[1] Williams, Blanche Colton, Clara Barton. Daughter of Destiny, Philadelphia, New York, London, 1941, pp. 338-339; Buckingham, Clyde E., նշվ. աշխ., էջ 259-260; Pullman, George H., American Relief Expedition to Asia Minor Under the Red Cross, Washington, D.C., 1896, pp. 50-51.

[2] America's Relief Expedition to Asia Minor under the Red Cross..., էջ 4; Epler, Percy H., նշվ. աշխ., էջ 277; Barton, William E., Clara Barton. Founder of the American Red Cross, Vol. II, Boston and New York, 1922, p. 245.

[3] Barton, David H., Clara Barton. In the Service of Humanity..., էջ 129:

[4] Սպենսեր Թրասկ (1844-1909) - ԱՄՆ-ի խոշոր ֆինանսիստ, գործարար և բարեգործ:

[1] Epler, Percy H., նշվ. աշխ., էջ 277:

[2] Epler, Percy H., նշվ. աշխ., էջ 277; Williams, Blanche Colton, նշվ. աշխ., էջ 339; Barton, William E., նշվ. աշխ., էջ 247-248; Jones, Marian Moser, նշվ. աշխ., էջ 72-73:

Կոստանդնուպոլիս ժամանելուն պես Կլարա Բարտոնը հանդիպումներ ունեցավ Ամերիկյան խորհուրդի անդամների, Ռոբերտ քոլեջի տնօրեն Ջորջ Ուոշբրրնի հետ: Այնուհետև Ալեքսանդր Տերրելի և նրա թարգմանիչ, փորձված դիվանագետ Գարգիուլոյի ուղեկցությամբ Կլարա Բարտոնը հանդիպում ունեցավ Օսմանյան կայսրության արտաքին գործերի նախարար Թևֆիկ փաշայի հետ: Հանդիպման սկզբում Տերրելը Միացյալ Նահանգների կառավարության անունից իր համակրանքն ու մտահոգությունը հայտնեց կոտորածների արդյունքում երկրի ներքին շրջաններում տառապյալ ժողովրդի կացության առնչությամբ՝ միաժամանակ հավաստիացնելով, որ օգնության խնդիրը բացառապես մարդասիրական բնույթ ունի և չի հետապնդում քաղաքական, ազգային կամ կրոնական նպատակներ: Իր խոսքում Կլարա Բարտոնը նշեց. «Մենք բերել ենք միմիայն ինքներս մեզ, մեզ չի ուղեկցելու թղթակից, և ...մենք տուն հասնելուն պես գիրք չենք գրելու Թուրքիայի մասին: Մենք դրա համար չենք այստեղ: Քողարկված ոչինչ չի արվելու: Մեր կողմից ուղարկվելիք բոլոր հաղորդագրությունները գնալու են բաց, ձեր հեռագրատան միջոցով, և ես ուրախ կլինեմ, եթե մեր բոլոր գրվածները տեսանելի լինեն ձեր կառավարության համար: Իհարկե ես այժմ չեմ կարող ասել նրանց բովանդակության մասին, բայց կարող եմ երաշխավորել նրանց ճշմարտության, անկեղծության և ազնվության համար, և թե ինչպես են դրանք օգտագործվելու յուրաքանչյուր պատասխանատու մարդու կողմից: Ես երբեք չեմ քննարկելու կամ թույլատրելու ծածուկ կամ գաղտնի գործողություն ձեր կառավարության նկատմամբ, և պետք է ներեք ինձ, փաշա՛, եթե ասեմ, որ փոխադարձաբար նույն վերաբերմունքն էլ Ձեզնից եմ սպասելու»: Այս խոսքերից անմիջապես հետո Թևֆիկ փաշան պատասխանում է. «Եվ դա Դուք կունենաք: Մենք հարգում ենք Ձեր դիրքը և Ձեր աշխատանքը»:[1]

Նկատի առնելով «Ամերիկյան կարմիր խաչի» և նրա ղեկավար Կլարա Բարտոնի միջազգային համբավն ու հեղինակությունը, Բարձր Դուռն իր համաձայնությունն է տալիս ամերիկյան կազմակերպության կողմից հայկական կոտորածների արդյունքում տուժած բնակչության և շրջանների համար առաջարկվող օգնության և գյուղատնտեսության վերականգնման ծրագրերին:[2] Միաժամանակ կառավարության նախապայմանն այն էր, որ ծրագիրը չի կարող իրականացվել «Կարմիր խաչի» նշանաբանով, այլ պետք է ձևակերպվի որպես Կլարա Բարտոնի անձնական արշավախումբ: Բարձր Դուռը մտահոգ էր, որ մահմեդական բնակչությունը խաչն ընկալում

[1] America's Relief Expedition to Asia Minor under the Red Cross..., էջ 7-8; Epler, Percy H., նշվ. աշխ., էջ 277-278; Fishwick, Marshall W., նշվ. աշխ., էջ 76; Barton, William E., նշվ. աշխ., էջ 249-250; Jones, Marian Moser, նշվ. աշխ., էջ 73-74:
[2] Nolan, Jeannette Covert, The Story of Clara Barton of the Red Cross, New York, 1941, p. 268.

է որպես քրիստոնեության խորհրդանիշ, ինչը կարող էր էլ ավելի խորացնել արդեն իսկ պայթյունավտանգ կրոնական թշնամությունը: Արշավախմբերի անվտանգությունն ապահովելու նպատակով կառավարությունը յուրաքանչյուրին կցեց զինվորական հատուկ ուղեկցորդներ:[1] Կլարա Բարտոնը հետագայում նշում էր, որ Օսմանյան կայսրության արտաքին գործերի նախարարի հետ իր զրույցն առաջին և վերջին հանդիպումն էր թուրք պաշտոնյայի հետ Կոստանդնուպոլիս այցելության ընթացքում: Բարձր Դուռն ու տեղական իշխանությունները այլևս որևէ դժվարություն չհարուցեցին առաքելության ողջ ընթացքում:[2]

Նախնական ծրագրի համաձայն՝ արշավախումբը պետք է ճամփորդեր Սև ծովի երկայնքով դեպի արևելք և այնուհետև ցամաքային ճանապարհով հասներ Հայաստան: Սակայն Օսմանյան կայսրությունում Մեծ Բրիտանիայի դեսպան Ֆիլիպ Քարրին խորհուրդ տվեց առաջին հերթին օգնություն ցուցաբերել Մարաշի և Զեյթունի բնակչությանը, որը ենթարկված էր վտանգավոր համաճարակների:[3] Արդեն իսկ մարտի 18-ին Կլարա Բարտոնի գլխավոր օգնական, Թուրքիայում «Ամերիկյան ազգային կարմիր խաչի» կողմից գլխավոր դաշտային գործակալ նշանակված Ջուլիան Հաբբելը մեկնեց Ալեքսանդրեթ, որտեղ սկսեց քարավաններ պատրաստել դեպի Այնթապ, ուր որոշված էր հիմնել հարավային դաշտի կենտրոնակայանը: Այստեղից էլ նրանք ուղևորվեցին հյուսիս-արևելք՝ դեպի Խարբերդ, Մարաշ՝ օգնություն հասցնելով քաղաքներում պատսպարված հազարավոր փախստականներին: Կլարա Բարտոնը մնաց Կոստանդնուպոլսում իր ֆինանսական քարտուղար Փուլմանի հետ, որպեսզի տեղում համադրի ծրագրի իրականացման գործընթացը: Կոտորածներին հետևեցին բծավոր տիֆի, դիզենտերիայի և ծաղկի համաճարակները: Մասնավորապես Զեյթունում և Մարաշում ծագած համաճարակի առաջն առնելու նպատակով հրավիրվեց Արևելքում ժանտախտի և համաճարակների հայտնի մասնագետ Այրա Հարրիսը, որի կենտրոնակայանը գտնվում էր Սիրիայի Տրիպոլի քաղաքում: Հիվանդների թիվը երկու քաղաքներում հասնում էր շուրջ 10 հազարի, իսկ մահացողների թիվն օրըստօրե մեծանում էր: Սակայն ամերիկացի մասնագետների գործունեության շնորհիվ շատ շուտով հիվանդների թիվն ու մահացու դեպքերը կտրուկ նվազեցին:[4]

«Կարմիր խաչը» չորս արշավախումբ գործուղեց «Հայկական Թուրքիա», Միջերկրականից Սև ծով ընկած տարածաշրջանները՝ հասցնելով անհրաժեշտ օգնություն, վերանորոգելով տներ և վերաբնակեցնելով ողջ

[1] Buckingham, Clyde E., նշվ. աշխ. - էջ 260; Barton, William E., նշվ. աշխ., էջ 250-251:
[2] America's Relief Expedition to Asia Minor under the Red Cross..., էջ 10, 29:
[3] Նույն տեղում, էջ 16:
[4] Fishwick, Marshall W., նշվ. աշխ., էջ 223:

մնացածներին: Առաջին արշավախումբը ղեկավարում էր Ջուլիան Բ. Հաբբելը, երկրորդը՝ Էդուրդ Մ. Վիստարը, երրորդը՝ Չարլզ Կինգ Վուդը, չորրորդը՝ Այրա Հարրիսը: Արշավախմբերն այցելեցին Քիլիս, Այնթապ, Մարաշ, Զեյթուն, Բիրեջիկ, Ուրֆա, Դիարբեքիր, Ֆարկին, Խարբերդ, Բալու, Մալաթիա, Արաբկիր, Ագին, Սըվազ, Թոխաթ և Սամսուն: Երբ փախստականները կրկին վերահաստատվեցին իրենց տներում և գյուղերում, նրանք ապահովվեցին սննդամթերքով, դեղամիջոցներով, հագուստով, սերմնահատիկով, մանգաղներով, ջուլհակահաստոցներով և անիվներով: Նույնիսկ քրդերի կողմից գողացված անասունները գնվեցին և վերադարձվեցին տերերին: Սրան գումարած՝ գյուղացիներին տրվեց շուրջ երկու հազար գութան քաշող եզ և զանազան գյուղատնտեսական գործիքներ, մասնավորապես շուրջ 500 գութաններ: Տեղերում, գյուղերում և շրջաններում «Կարմիր խաչի» ֆինանսական քարտուղարին հանձնարարվել էր նաև ուղարկել 5 հազար լիրա (22 հազար դոլար) պատվելի Գեյթսին, որը պետք է բաժանվեր արշավախմբերի միջև անասուն գնելու և 1897 թ. բերքահավաքն ապահովելու համար:[1]

Կլարա Բարտոնի հրահանգով օգնության բաշխումը տեղերում իրականացվում էր գյուղական կամ շրջանային հանձնախմբերի միջոցով, որոնց կազմում ընդգրկված էին հիմնականում տեղական եկեղեցու առաջնորդներ և ճանաչված առևտրականներ, որոնք քաջատեղյակ էին ժողովրդի կարիքներին և սովորություններին: Ըստ Բարտոնի՝ ամենից դժվար խնդիրը կոտորածներից փրկվածների անտարբերությունն էր աշխատանքի և ապագայի նկատմամբ, ինչը սարսափելի վշտի և վախի հետևանք էր: «Կարմիր խաչի» ներկայացուցիչները մտահոգ էին, որ շարունակական օգնությունը կարող է էլ ավելի խորացնել այդ իրավիճակը, ինչի արդյունքում մարդիկ կհայտնվեն ծայրահեղ չքավորության վիճակում: Այդ իսկ պատճառով ամերիկացիները զգալի աշխատանք տարան նաև մարդկանց աշխատանքով ապահովելու և համայնքների տնտեսական կյանքը վերականգնելու ուղղությամբ:[2]

Թուրքիայում «Ամերիկյան կարմիր խաչի» գործունեության ողջ ընթացքում առաքելությանը մեծ օգնություն և օժանդակություն ցուցաբերեցին ամերիկյան միսիոներները: Մասնավորապես Կլարա Բարտոնն իր զեկույցում հիշատակում էր Հենրի Դուայթի, Ջոզեֆ Գրինի, Ջորջ Նեփի, Ջորջ Ռոշբրընի, Գրեյս Քիմբալի, տիկին Լիի, Ռոբերտ քոլեջի հիմնադիր, վետերան միսիոներ Սայրուս Համլինի դուստրերի և այլոց անունները:[3]

Սակայն այս ընթացքում ամեն ինչ չէ, որ կատարվեց Կլարա Բարտոնի ցանկությամբ: Միացյալ Նահանգներից բազմաթիվ հոռետեսական հեռագրեր և նամակներ էին ստացվում իր հասցեով առ այն, թե իբր օգնության առաքելությունը պետք է դադարեցնել, քանի որ օսմանյան կառավարությունը խոչընդոտում է «Կարմիր խաչի» գործունեությունը, արշավախմբերի երթուղիները ընտրված են սխալ, ֆինանսական միջոցները հարկավոր են «Կարմիր խաչին» ԱՄՆ-ում կարիքները հոգալու համար և այլն: Ծրագրի նվիրատուները դժգոհ էին այն բանից, որ առաքելության հաջողությունը կապվում էր ամբողջությամբ Կլարա Բարտոնի, այլ ոչ թե «Ամերիկյան կարմիր խաչի» կամ նվիրատուների անվան հետ: Վիրավորված և զայրացած նման վերաբերմունքից՝ Կլարա Բարտոնը հեռագիր հղեց ամերիկյան օգնության կոմիտեներին՝ «ազատելով նրանց հետագա նվիրատվություններ կատարելու անհրաժեշտությունից»: «Մենք կավարտենք մեր աշխատանքն առանց հետագա օժանդակության», - գրում էր նա:[1]

Կլարա Բարտոնի գործունեությունը քննադատության ենթարկվեց նաև ԱՄՆ-ի հայ համայնքի որոշ ներկայացուցիչների կողմից, որոնք գտնում էին, որ թեև «Ամերիկյան կարմիր խաչի» առաքելությունը պետք է սահմանափակվեր միմիայն Օսմանյան կայսրության հայ բնակչությանն ուղղված օգնությամբ, արշավախմբի անդամներն օժանդակում էին նաև թուրք մահմեդականներին: Այդ կապակցությամբ Կլարա Բարտոնին խիստ քննադատական նամակ էր գրել Բոստոնի օգնության կոմիտեի անդամ, ամերիկահայ հայտնի գորգավաճառ Հակոբ Պողիկյանը: Նման քննադատությամբ աչքի ընկավ այդ օրերին նաև *"The Christian Herald"* օրաթերթը, որը 50 182 դոլար էր հավաքել՝ կոտորածներից տուժած հայերին օգնություն տրամադրելու նպատակով: Հետագայում Կլարա Բարտոնի կյանքի ու գործունեության մասին ուսումնասիրություններ կատարած որոշ հեղինակներ գնահատում էին առաքելության կողմից թուրք բնակչությանը ցուցաբերած օգնության հանգամանքը «Կարմիր խաչի» բոլոր կարիքավորներին հասնելու սկզբունքով, ինչպես նաև ոչ միայն հայերին օժանդակելու թուրք պաշտոնյաների հետ հնարավոր պայմանավորվածությամբ:[2]

ԱՄՆ վերադառնալուց մի քանի ամիս անց պետքարտուղարությունը Կլարա Բարտոնին հանձնեց սուլթան Աբդուլ Համիդի կողմից իրեն շնորհված Շեֆակետի երկրորդ աստիճանի շքանշանը իր կատարած աշխատանքի համար:[3] Որոշ հեղինակներ համարում են, որ Կլարա Բարտոնի առաքելության անսպասելի արդյունքներից մեկն այն էր, որ ինքը ակամա

[1] Epler, Percy H., նշվ. աշխ., էջ 279-280:
[2] Buckingham, Clyde E., նշվ. աշխ., էջ 261:
[3] Barton, William E., նշվ. աշխ., էջ 252-253:

[1] Williams, Blanche Colton, նշվ. աշխ., էջ 340-341; Barton, David H., Clara Barton. In the Service of Humanity… - էջ 130; Barton, William E., նշվ. աշխ., էջ 254:
[2] Buckingham, Clyde E., նշվ. աշխ., էջ 262-263; Jones, Marian Moser, նշվ. աշխ., էջ 75-76:
[3] Williams, Blanche Colton, նշվ. աշխ., էջ 340-341; Barton, David H., Clara Barton. In the Service of Humanity…, էջ 130; Barton, William E., նշվ. աշխ., էջ 254:

դարձավ բարի կամքի դեսպան և մեծապես նպաստեց թուրք-ամերիկյան հարաբերությունների բարելավմանը:[1]

Չնայած քննադատությանը և տարբեր խոսակցություններին՝ Կլարա Բարտոնը բարձր էր գնահատում «Ամերիկյան կարմիր խաչի» կողմից իրականացված առաքելությունը, որի արդյունքում հնարավորությունների սահմաններում ամեն ինչ արվեց հազարավոր կյանքեր փրկելու համար: Իր «Կարմիր խաչի պատմությունը» գրքում նա մեծ երախտագիտությամբ էր արտահայտվում «Ամերիկյան կարմիր խաչի» իր աշխատակիցների մասին, որոնք հինգ ամիսների ընթացքում չափազանց ծանր և վտանգավոր պայմաններում նվիրումով կատարեցին իրենց պարտքը 1894-1896 թթ. հայկական կոտորածներից տուժածներին օգնություն ցուցաբերելու գործում: Կլարա Բարտոնը մեծ ակնածանքով էր արտահայտվում նաև Կոստանդնուպոլսում ԱՄՆ-ի դիվանագիտական ներկայացուցիչ Ալեքսանդր Տերրելի մասին, որն արեց հնարավոր ամեն ինչ՝ «Ամերիկյան կարմիր խաչի» առաքելությունը հաջողությամբ իրականացնելու համար:[2]

Կլարա Բարտոնը վերադարձավ Լոնդոն սեպտեմբերի 2-ին: Այստեղ նա տեղեկացավ Օտտոմանյան բանկի միջադեպի և դրան հետևած Կոստանդնուպոլսի հայ բնակչության նոր ջարդի մասին: Նա հետաձգեց իր հետագա ուղևորությունը դեպի ԱՄՆ, անմիջապես հեռագրեր հղեց Վաշինգտոն և Կոստանդնուպոլիս առաջարկելով՝ հարկ եղած դեպքում վերադառնալ Թուրքիա և շարունակել «Ամերիկյան կարմիր խաչի» գործունեությունը: Սակայն այս անգամ նրան խորհուրդ չտրվեց վերադառնալ Կոստանդնուպոլիս:[3] Վաշինգտոնում նրա պատվին տրվեց շքեղ ընդունելություն «Shoreham» հյուրանոցում, որը կազմակերպել էին այն անհատները, որոնք նվիրատվություններ էին կատարել «Կարմիր խաչի» համար՝ այդ դժվարին առաքելությունն իրագործելու նպատակով:[4]

Կլարա Բարտոնն ամենևին էլ ավարտված չէր համարում Օսմանյան կայսրության հայ բնակչության օգնության գործը: Նա գտնում էր, որ Հիսուս Քրիստոսի դավանանքին պատկանող հայերը թողնված են կիսավայրագ քաղաքակրթության քմահաճույքին, նրանցից 100-200 հազարը դեռևս կարիք ունեն ապաստանի, սննդի, դեղամիջոցի և ընդհանրապես քաղաքակիրթ աշխարհի կարեկցանքին ևու բարերարությանը: Ըստ Կլարա Բարտոնի, եթե այդ մարդկանց շուտափույթ կերպով օժանդակություն չցուցաբերվի, մինչև մյուս տարվա մայիսը նրանցից շուրջ 50 հազարը կկնքեն իրենց մահկանացուն սովի և զրկանքների պատճառով:[1]

Կլարա Բարտոնի և նրա գործակիցների Օսմանյան կայսրություն կատարած մարդասիրական առաքելությանը վերաբերող զեկույցները հրատարակվել են մեկ գրքով Վաշինգտոնում 1896 թ. վերջին («America's Relief Expedition to Asia Minor under the Red Cross», Washington, DC, 1896):[2] Այդ զեկույցները մեծ հետաքրքրություն են ներկայացնում, քանի որ մանրամասն նկարագրում են կոտորածներից տուժած հայ բնակչության վիճակը և ամերիկյան արշավախմբերի կողմից հայերին ցուցաբերած օգնությունը:

[1] Barton, David H., Clara Barton. In the Service of Humanity..., էջ 130:
[2] Epler, Percy H., նշվ. աշխ., էջ 280-281:
[3] America's Relief Expedition to Asia Minor under the Red Cross..., էջ 31-32:
[4] Epler, Percy H., նշվ. աշխ., էջ 280-281:

[1] America's Relief Expedition to Asia Minor under the Red Cross..., էջ 44:
[2] 2012 թ. Կլարա Բարտոնի զեկույցների գիրքը վերահրատարակվել է անգլերեն և հայերեն ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի կողմից՝ Barton Clara, Expedition in Asia Minor and Relief Operation, Yerevan: Armenian Genocide Museum-Institute, 2012; Բարտոն Կլարա, «Ամերիկյան կարմիր խաչի» նպաստամատույց առաքելությունը Փոքր Ասիայում, Երևան: ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2012:

ԳԼՈՒԽ VI

ԱՄԵՐԻԿՅԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 1897-1914 ԹԹ.

1. ԱՄՆ-Օսմանյան կայսրություն հարաբերությունները 1894-1896 թթ. հայկական կոտորածներից հետո

ԱՄՆ-ի և Օսմանյան կայսրության միջև առևտրական հարաբերությունների համար 20-րդ դարի սկիզբը դարձավ «ամբողջովին նոր դարաշրջան»: ԱՄՆ-ի նախագահներ Մակ Քինլիի, Ռուզվելտի և Թաֆտի[1] «առևտրական դիվանագիտության քաղաքականության» շնորհիվ ամերիկյան ապրանքի արտահանումը զգալի աճ արձանագրեց աշխարհի հեռավոր անկյուններում, մասնավորապես Մերձավոր Արևելքում: ԱՄՆ-ի դիվանագիտական ներկայացուցչության ջանքերի շնորհիվ հնարավոր դարձավ հաղթահարել Մեծ Բրիտանիայի ծովային փոխադրումների մենաշնորհը, երբ 1899 թ. Նյու Յորքի և Կոստանդնուպոլսի միջև բացվեց շոգենավային ուղիղ գիծը: Այն ստեղծեց շատ ավելի էժան պայմաններ դեպի Մերձավոր Արևելք ամերիկյան ապրանքի արտահանման համար:[2] Դարավերջին Միացյալ Նահանգները դարձավ Օսմանյան կայսրություն գյուղատնտեսական մեքենաների առաջին ներկրողը: Զմյուռնիայում ամերիկյան հյուպատոսի 1900 թ. հաշվետվության մեջ նշվում էր, որ տարեկան ԱՄՆ-ից Թուրքիա էր ներկրվում ժամանակակից 2 հազար գութան և 300 բերքահավաք մեքենա: 1901 թ. Խարբերդում հիմնադրվեց ամերիկյան գյուղատնտեսական գործիքների վաճառքի գործակալություն: Նույն ժամանակաշրջանում Օսմանյան կայսրությունում առևտրի ծավալներով ԱՄՆ-ը զբաղեցնում էր երկրորդ տեղը (21,0%) Մեծ Բրիտանիայից հետո (41,2%):[3] Եթե 1892 թ. երկու պետությունների միջև առևտրի ծավալը կազմում էր ընդամենը 1,3 մլն դոլար, ապա 1897-1899 թթ. այն հասավ շուրջ 6 մլն դոլարի:[1] 1902 թ. սկսած թուրքունը դարձավ դեպի ԱՄՆ արտահանման երկրորդ, ապա այնուհետև առաջին կարևորագույն ապրանքատեսակը:[2]

1894-1896 թթ. հայկական կոտորածներից հետո ԱՄՆ-ի դիվանագետները շարունակեցին հետևել իրադարձությունների զարգացմանն Օսմանյան կայսրությունում, պաշտպանել միսիոներների, առևտրականների և ԱՄՆ-ի մյուս քաղաքացիների շահերը, պահանջել օսմանյան իշխանություններից փոխհատուցում վնասված ամերիկյան ունեցվածքի համար:

1897 թ. հունվարի 25-ին ԱՄՆ-ի քաղաքացի Ա. Ֆալլերը գրում էր ԱՄՆ-ի դեսպանորդ Տերրելին Այնթապից, որ Այնթապի, Ուրֆայի, Սեբաստիայի, Աղջամանի, Բիրեջիկի, Հալեպի, Քիլիսի, Անտիոքի, Բեյլանում և Ալեքսանդրեթի ամերիկյան դպրոցներից միայն երկուսում էին դասավանդում ամերիկացի միսիոներները. դրանք էին Այնթապի քոլեջը և աղջիկների ճեմարանը: Ըստ Ֆալլերի, թեև ուսուցիչները չէին մասնակցել տեղի ունեցած դեպքերին, կառավարության պաշտոնյաները շարունակաբար փորձում էին նախապաշարված դիրքորոշում որդեգրել նրանց նկատմամբ, բնակչությունից դիմումներ էին կորզում նրանց մեղադրելու համար: Այն դպրոցներում, ուր դասավանդում էին հայերը, տեղի էին ունեցել հետևյալ իրադարձությունները.

1) 1896 թ. նոյեմբերի 16-ին ամբոխը թալանել և կողոպտել էր Այնթապի դպրոցի շենքը, բնակելի շինություններն ու եկեղեցին,

2) Բիրեջիկում կողոպտվել և թալանվել էին դպրոցը, բնակելի տունն ու եկեղեցին, թալանվել էր ուսուցչուհիների ունեցվածքը,

3) Ուրֆայում սպանել էին ուսուցչին և ավերել դպրոցը,

4) Սեբաստիայում կողոպտել և քանդել էին դպրոցը, թալանել եկեղեցին և մեկ շինություն, սպանվել էր հոգևորական, վիրավորվել էր ուսուցիչ,

5) Աղջամանում ամեն ինչ ավերվել էր և միսիոներների գործունեությունն ամբողջովին դադարել էր,

6) Բեյլանում իշխանությունները փակել էին դպրոցի շենքը:

Ըստ Ֆալլերի՝ այս բնակավայրերի միսիոներների ունեցվածքի արժեքը կազմում էր 150 հազար ԱՄՆ-ի դոլար, դպրոցներում ուսանում էին 135 աշակերտ, որոնցից 3-ը մահմեդականներ էին, մնացածը՝ հայեր:[3]

Փետրվարի 3-ին Ջ. Ռեյնոլդզը գրում էր Տերրելին Վանից, որ ամերիկյան դպրոցներից երկուսը տեղակայված էին մեկ շինության մեջ՝ մեկը տղա-

[1] Ուիլյամ Թաֆտ (1857-1930) - ԱՄՆ-ի պետական գործիչ, Ֆիլիպինների գլխավոր նահանգապետ (1901-1903), ռազմական քարտուղար (1904-1908), 27-րդ նախագահ՝ Հանրապետական կուսակցությունից (1909-1913), գլխավոր դատարանի նախագահ (1921-1930):
[2] Gordon, Leland James, նշվ. աշխ., էջ 57:
[3] Инджикян О. Г., Буржуазия Османской империи, Ереван: Издательство АН Армянской ССР, 1977, с. 77, 205.

[1] Gordon, Leland James, նշվ. աշխ., էջ 45, 48; Payaslian, Simon, նշվ. աշխ., էջ 2:
[2] Gordon, Leland James, նշվ. աշխ., էջ 64:
[3] US Department of State. Papers relating to the Foreign Relations of the United States with the Annual Message of the President transmitted to Congress, December 6, 1897, Washington: Government Printing Office, 1898, p. 575.

ների և մյուսը աղջիկների համար: Աղջկաց մյուս դպրոցը գտնվում էր քաղաքի պարիսպապատ մասում: Աշակերտների թիվը դպրոցներում համապատասխանաբար կազմում էր 250, 200 և 50: Ռեյնոլդզը տեղեկացնում էր, որ հայկական ջարդերի ընթացքում ԱՄՆ-ի քաղաքացիներն ու իրենց ունեցվածքը չէին վնասվել:[1]

Փետրվարի 24-ին Չարլզ Թրեյսին գրում էր Տերրելին Մարզվանից, որ միսիոներներն այստեղ ունեին 15 դպրոց, որոնք ղեկավարվում էին ամերիկացիների և ֆինանսավորվում ամերիկյան հիմնադրամի կողմից: Ընդհանուր աշակերտների թիվը հասնում էր 1 200-ի, որոնցից 4/5 հայեր էին, իսկ մնացածը՝ հույներ, մի քանի գերմանացիներ: Ըստ Թրեյսիի՝ հետևյալ միջադեպերն էին տեղի ունեցել միսիոներների հետ.

1) մաքսատունն ամիսներով կամ մեկ տարուց ավելի պահել էր դպրոցներին անհրաժեշտ գրականությունը, որի մի մասն այդպես էլ տեղ չէր հասել.

2) իշխանությունները խոչընդոտել էին, որ երեխաները չայցելեն դպրոց.

3) աշակերտները ձերբակալված էին մնացել օրերով, շաբաթներով կամ ամիսներով, թեև ոչ մեկի դեմ որևէ գործ չէր հարուցվել.

4) իշխանությունները բացում էին միսիոներների նամակները, տեղի էր ունեցել պարբերականների կորուստ:[2]

Մարտի 12-ին Տերրելը տեղեկացնում էր պետքարտուղար Օլնիին Բիթլիսից ստացված պատվելի Քոլի նամակի մասին, համաձայն որի՝ որևէ ամերիկյան դպրոց շրջանում չէր փակվել, ոչ մի մահմեդական չէր հաճախում միսիոներական դպրոց, ջարդերից հետո որևիցե մեկը չէր ձերբակալվել ամերիկյան կրոնական ընկերությունների գրականության վաճառքի համար:[3]

Համաձայն Օսմանյան կայսրության արտաքին գործերի նախարար Թևֆիկ փաշայի Տերրելին ուղղված նամակի՝ տեղական իշխանությունները տեղեկացնում էին կառավարությանը, որ ամերիկյան միսիոներները դիմում էին իրենց պաշտպանությունն ապահովող պահակախմբերը հանելու խնդրանքով: Այդ կապակցությամբ Տերրելն ապրիլի 24-ին զեկուցում էր նորանշանակ պետքարտուղար Ջոն Շերմանին[4], որ կայսրությունում գոյություն ունեցող իրավիճակից ելնելով՝ նա առաջարկել էր ներքին գործերի նախարարին ապահովել անխտիր բոլոր միսիոներական կայանները պահակախմբերով: Ըստ Տերրելի՝ նման կարգը փոփոխության չի ենթարկվելու

[1] Նույն տեղում, էջ 577-578:
[2] Նույն տեղում, էջ 580-581:
[3] Նույն տեղում, էջ 581:
[4] **Ջոն Շերման** (1823-1900) - ԱՄՆ-ի քաղաքական և պետական գործիչ, սենատոր Օհայո նահանգից, ֆինանսների քարտուղար (1877-1881), պետքարտուղար (1897-1898):

այնքան ժամանակ, մինչև որ ինքը կամ իր հետնորդը համապատասխան հրահանգ չտա պահակախմբերը հանելու վերաբերյալ:[1]

Տերրելը հաճախակի էր տեղեկացնում պետքարտուղարությանն (8 ապրիլի, 1897) այն դեպքերի մասին, երբ օսմանյան քաղաքացիներ հանդիսացող հայերը ստանում էին ԱՄՆ-ի հպատակություն, վերադառնում Թուրքիա և տարիներով ապրում այստեղ՝ չունենալով սեփականություն Միացյալ Նահանգներում և չկատարելով իրենց ԱՄՆ-ի քաղաքացու պարտականությունները: Դեսպանորդը դժգոհում էր, որ նրանք դիմում էին հյուպատոսություն՝ ամերիկյան անձնագրի ժամկետը երկարաձգելու նպատակով: Պատասխան նամակում պետքարտուղարի պաշտոնակատար Ուիլյամ Ռոկհիլը[2] գրում էր Տերրելին, որ պետքարտուղարությունը ամեն պարագայում խուսափելու է հայտարարելուց, որ ԱՄՆ-ի քաղաքացին՝ բնիկ կամ հպատակություն ստացած, կորցրել է իր քաղաքացիությունը: Սակայն, շարունակում էր Ռոկհիլը, նման դեպքերում հյուպատոսությունը պետք է բավարարի նման քաղաքացիների խնդրանքն այն պարագայում, եթե նրանք իրապես ցանկանում են վերադառնալ Միացյալ Նահանգներ և կատարել քաղաքացու իրենց պարտականությունները:[3]

Ապրիլի 15-ին պետքարտուղար Շերմանը գրում էր Տերրելին, որ պետքարտուղարությունն էին դիմել Սերոբյան եղբայրները Ֆրեզնոյից՝ տեղեկացնելով, որ ունեն կալվածք Մարզվանում, սակայն օսմանյան իշխանություններն այն չեն ճանաչում այն պատճառաբանությամբ, որ «Միացյալ Նահանգների որևէ քաղաքացի իրավունք չունի ժառանգելու կամ ունենալու կալվածք Թուրքիայում»: Ապրիլի 30-ին Տերրելն պատասխանում էր, որ 1858 թ. օսմանյան օրենքի համաձայն, եթե օսմանյան քաղաքացին կորցրել է իր քաղաքացիությունը, ապա նա չի կարող ժառանգել ունեցվածք: Համաձայն մեկ այլ օրենքի, եթե 1869 թ. հետո օսմանյան քաղաքացին առանց սուլթանի թույլտվության ստանում էր այլ երկրի քաղաքացիություն, նա շարունակում էր մնալ օսմանյան քաղաքացի և չէր կարող օգտվել օտարերկրացու իրավունքներից: Իսկ այն քաղաքացիները, որոնք մինչև 1869 թ. ձեռք էին բերել այլ պետության քաղաքացիություն կամ 1869 թ. հետո ստացել նման թույլտվություն սուլթանից, համարվում էին օտարերկրացիներ: Այսպիսով՝ նման անձինք չէին կարող այլևս տնօրինել իրենց ունեցվածքը Թուրքիայում:[4]

[1] Նույն տեղում, էջ 582:
[2] Ուիլյամ Ռոկհիլ (1854-1914) - ԱՄՆ-ի դիվանագետ, պետքարտուղարի տեղակալ (1894-1897), դեսպան Հունաստանում (1897-1899), Չինաստանում (1905-1909), Ռուսաստանում (1910-1911), Օսմանյան կայսրությունում (1911-1913):
[3] Նույն տեղում, էջ 584-585:
[4] Նույն տեղում, էջ 588-589:

Դեռևս մարտի 22-ին Շերմանը տեղեկացրել էր Տերրելին, որ ԱՄՆ-ի քաղաքացի Լևոն Սեյրանյանը պահանջել էր օսմանյան կառավարությունից 1 190 դոլարի փոխհատուցում Հուսեյնիկ գյուղում գտնվող իր ունեցվածքի ավերման համար: Շերմանը հանձնարարել էր դիմել այդ հարցով Բարձր Դռանը: Մայիսի 7-ին արտաքին գործերի նախարար Թևֆիկ փաշան գրում էր Տերրելին, որ օսմանյան կառավարությունը պաշտպանել է այն ամերիկացիների ունեցվածքը, որոնք գտնվել են այն շրջաններում, որտեղ տեղի էին ունեցել անկարգություններ: Ըստ նախարարի, քանի որ նման դեպքերը տեղի էին ունեցել «քաղաքացիական անկարգությունների» ընթացքում, օսմանյան կառավարությունը չի կարող բավարարել այդ պահանջը:[1]

Հունիսի 4-ին Շերմանը գրում էր Տերրելին, որ Գյուրունի ջարդի ժամանակ մահացած ԱՄՆ-ի քաղաքացի Նահապետ Աբդալյանի այրի Հայկանուշ Աբդալյանը փոխհատուցում էր պահանջում օսմանյան կառավարությունից: Նա պահանջում էր 50 հազար դոլար ամուսնու սպանության, 10 հազար դոլար՝ իշխանությունների կողմից իր բանտարկության, սովի ու տանջանքի հետևանքով իր անչափահաս երեխայի մահվան և 1 312 դոլար՝ ունեցվածքի ավերման և թալանման համար, ընդամենը՝ 61 312 դոլար: ԱՄՆ-ի գործերի ժամանակավոր հավատարմատարը ներկայացրել էր պահանջը Բարձր Դռանը, սակայն հուլիսի 27-ին ստացել էր Օսմանյան կայսրության արտաքին գործերի նախարարի նամակն առ այն, որ օսմանյան կառավարությունը որևէ բացառություն չի կարող անել, քանի որ մերժում է փոխհատուցման տրամադրումը կայսրության տարածքում տեղի ունեցած «անկարգությունների» ժամանակ:[2] Օգոստոսի 27-ին Շերմանը գրում էր, որ ԱՄՆ-ի կառավարությունը բավարարված չէ Բարձր Դռան պատասխանով Աբդալյանի փոխհատուցման հարցի առնչությամբ և հանձնարարում էր շարունակել ճնշում գործադրել օսմանյան կառավարության վրա՝ խնդիրը կարգավորելու նպատակով:[3]

Հուլիսի 12-ին Էրզրումում ԱՄՆ-ի հյուպատոս Բերգհոլցը գրում էր պետքարտուղարի տեղակալ Ուիլյամ Դեյին[4], որ ներկայումս քրդերը գտնվում են «կայսերական պաշտպանության» ներքո և հանդիսանում սուլթանի «զավակները»: Քրդերը, ինչպես և օսմանյան բանակը, շատ կարևոր նշանակություն ունեն կառավարության համար, քանի որ «վստահություն և խիզախություն» են ձեռք բերել բանակի «անկարողության» պայմաններում,

[1] Նույն տեղում, էջ 591:
[2] Նույն տեղում, էջ 590:
[3] Նույն տեղում, էջ 592:
[4] Ուիլյամ Դեյ (1849-1923) - ԱՄՆ-ի պետական գործիչ, դիվանագետ, իրավաբան, պետքարտուղարի տեղակալ (1897-1898), պետքարտուղար (1898), Գերագույն դատարանի անդամ (1903-1922):

որի հետևանքով «ամեն վայրկյան կարող է բախում տեղի ունենալ»: Տեղական իշխանությունները նույնպես ցանկանում էին «դաս տալ քրդերին» և վերահաստատել իրենց իշխանությունը զինվորականների միջոցով, սակայն Կոստանդնուպոլիսն այդ հարցում «մերժում է օգնել նահանգային իշխանությանը»: Նույնիսկ Էրզրումի նահանգում, որն «ամենից լավն է կառավարվում կայսրությունում», քրդերն անպատիժ կերպով թալանում էին շրջակա գյուղերը:

Ըստ հյուպատոսի՝ Դիարբեքիրի նահանգում իրադրությունը նույնպես վատ էր: Քրդերը գողացել էին գյուղերից մեկի հայերի խոշոր եղջյուրավոր անասուններին, որոնց գլխաքանակը հետագայում վերականգնվել էր կառավարության կողմից: Քրդերը տարել էին նաև գյուղի 70-ի հասնող ոչխարների հոտը: Նրանք հարձակվել և թալանել էին Սղերդից ճանապարհ ընկած քարավանը, իսկ Մարդինից ցորեն և այլուր տեղափոխող առևտրականներին թալանում էին գրեթե ամեն օր: Անկանոն քրդական հեծելազորի զինվորները հարձակվել էին հայկական գյուղի վրա և տարել ոչխարների հոտը: Այդ գյուղը գտնվում էր քրդական մեկ այլ ցեղախմբի հովանու տակ, որը կարողացել էր ետ բերել ոչխարներին՝ վիրավորելով հեծելազորի զինվորներին: *Համիդիե* զինվորները կարող էին Դիարբեքիրում մտնել յուրաքանչյուր հայի խանութ և անվճար վերցնել ցանկացած ապրանք:

Հյուպատոսը շարունակում էր, որ նախորդ տարվա համեմատ Վանի, Բիթլիսի և Դիարբեքիրի քրդերը շատ ավելի անպատիժ էին իրենց պահում 1897 թ. ընթացքում: Նրանք չէին ճանաչում որևէ իշխանություն՝ բացի իրենց ղեկավարներից՝ «աղաներից», անկախ էին որևէ քաղաքացիական կամ զինվորական իշխանություններից: Սովորաբար ձմռան ամիսների ընթացքում նրանք ապրում էին հայերի հաշվին, իսկ ամռանը վերադառնում սարերը՝ թալանելով գյուղերը, տանելով անասուններին, կանանց և աղջիկներին: Որոշ հայկական գյուղեր գտնվում էին քրդական ցեղերի պաշտպանության ներքո, ինչի համար աղան նրանցից տարեկան հասույթ էր ստանում: Նման համակարգի պայմաններում այդ գյուղերը խուսափում էին անկանոն քրդական ջոկատների հարձակումներից: Եթե «Լավ հնդկացին մահացած հնդկացին է» ասացվածքը համապատասխանում էր իրականությանը, գրում էր Բերգհոլցը, այն ամբողջությամբ կիրառելի էր նաև քրդերի համար: Ըստ հյուպատոսի, թեև քրդերը յուրահատուկ «հեղափոխության և ապստամբության» գործընթացի մեջ էին, սակայն ոչ միայն չէին պատժվում կառավարության կողմից, այլև հանդիսանում էին սուլթանի «ընտրյալ պահապանները»: Բերգհոլցի համոզմամբ՝ հայերի հիմնական դժգոհությունը շարունակվող քրդերի «թալանի և հարստահարությունների» մեջ էր, և եթե դրան վերջ դրվեր, որևէ «բարենորոգման» կարիք այլևս չէր լինի: Կայսրության օրենքները շնորհում էին պաշտպանություն սուլթանի քրիստոնյա

հպատակների համար: Եվ եթե կառավարությունը կիրառեր գոյություն ունեցող օրենքը, նշվում էր զեկուցագրում, ապա բարենորոգումներն ինքնըստինքյան տեղի կունենային:[1]

Օգոստոսի 16-ին Բերգհոլցը հաղորդում էր Էրզրումից, որ հայ հեղափոխականների ջոկատը հարձակում էր գործել Վանում գտնվող քուրդ ղեկավարի ճամբարի վրա: Հարձակումը սկսվել էր օգոստոսի 6-ին և շարունակվել մեկ օր, մինչև որ քրդերին օգնության էր հասել թուրքական բանակը: Հեղափոխականները քաշվել էին դեպի պարսկական սահմանը՝ սպանված թողնելով 63 հոգու, այդ թվում՝ մի ռուս սպայի և մի քանի քրդի՝ պարսկական զինվորական համազգեստով: Քուրդ ղեկավարը կորցրել էր 171 հոգի: Այդ քրդերը պատկանում էին Շակակ ցեղախմբին, որը բաժանված էր երկու թշնամական խմբի, որոնցից մեկն ապրում էր Օսմանյան կայսրությունում, մյուսը՝ Պարսկաստանում: Երկրորդ հայկական ջոկատը նույնպես փորձել էր հասնել Վան, սակայն բանակը կարողացել էր կանխել նրա առաջխաղացումն ու հետապնդել դեպի սահմանը:

Նույն զեկուցագրում հյուպատոսը գրում էր, որ տեղական իշխանությունները ապացուցել էին, որ Վանում միսիոներների կողմից հովանավորվող և որբանոցում աշխատող մի հայ կին իբր զբաղվել էր հեղափոխական գործունեությամբ: Պարետը հայտնաբերել էր նրա մոտ զինամթերքով լի պայուսակ:[2]

Օգոստոսի 30-ի զեկուցագրում Բերգհոլցը գրում էր, որ Վանում գտնվող ամերիկյան միսիոներները հայտնվել էին բավականին ծանր վիճակում: Ըստ ամերիկյան միսիոներներից ստացված տեղեկատվության՝ Վանի գրեթե ողջ հայ բնակչությունը կապված էր հեղափոխական շարժման հետ, քաղաքում ներկայումս դժվար էր գտնել հայ, որը չէր համակրում հեղափոխականներին: Վտանգ գոյություն ուներ, որ ամերիկյան միսիոներները կարող էին հայտնվել «երկու քարի արանքում», նրանց գործունեությունը կարող էր առաջացնել ինչպես հեղափոխականների «թշնամանքը», այնպես էլ տեղական իշխանությունների «կասկածանքները»:[3]

Պետքարտուղարի տեղակալին ուղղված սեպտեմբերի 7-ի զեկուցագրում Բերգհոլցը գրում էր, որ Վանի նահանգապետ Շեմսի փաշան խնդրել

[1] The National Archives and Records Service, Despatches from United States Consuls in Erzerum, 1895-1904, Roll 1, Vol. 1, August 5, 1895, December 31, 1900, Leo Bergholz to William R. Day, 1897, July 12, No. 72, pp. 1-3.
[2] The National Archives and Records Service, Despatches from United States Consuls in Erzerum, 1895-1904, Roll 1, Vol. 1, August 5, 1895, December 31, 1900, Leo Bergholz to William R. Day, 1897, August 16, No. 76, p. 1.
[3] The National Archives and Records Service, Despatches from United States Consuls in Erzerum, 1895-1904, Roll 1, Vol. 1, August 5, 1895, December 31, 1900, Leo Bergholz to William R. Day, 1897, August 30, No. 80, p. 1.

էր Բրիտանիայի հյուպատոս, կապիտան Էլիոտին համոզել հեղափոխականների ղեկավարներին հանձնվել՝ խոստանալով ներում շնորհել նրանց: Բրիտանացի հյուպատոսը հեղափոխականների հետ կապի մեջ էր գտնվում ամերիկյան միսիոներ, «Ամերիկյան խորհուրդի» անդամ Ալլենի միջոցով, սակայն նրանք որևէ հաջողության չէին հասել: ԱՄՆ-ի հյուպատոսն իր համոզմունքն էր հայտնում, որ Օսմանյան կայսրությունում աշխատող որևէ միսիոներ նույնիսկ «թեթև համակրանք» չի տածում հայ հեղափոխական շարժման նկատմամբ...»:[1]

1898 թ. հունվարի 11-ին Ջոն Շերմանը գրում էր Օսմանյան կայսրությունում արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարար Ջեյմս Էնջելին[2] մորմոն միսիոներների իրավունքների պաշտպանության մասին: Նա նշում էր, որ ինչպես և ԱՄՆ-ում իրավական գրանցում ունեցող յուրաքանչյուր կրոնական կազմակերպություն, Օսմանյան կայսրությունում աշխատող մորմոնական միսիոներները նույնպես իրավունք ունեն օգտվելու ամերիկյան կառավարության հովանավորությունից: Սակայն եթե նրանք քարոզում են օտար երկրի օրենքներին հակասող կրոնական տեսություններ, նրանց պաշտպանությունն անհնարին էր ապահովել: Եթե որևէ ամերիկյան կրոնական հաստատության ուսմունք հակասում էր ԱՄՆ-ի օրենքներին, ամերիկյան ներկայացուցչությունների օժանդակությունը նույնպես անհնարին էր դառնում: Շերմանը հանձնարարում էր Կոստանդնուպոլսում ԱՄՆ-ի գլխավոր հյուպատոսի միջոցով տեղեկացնել Օսմանյան կայսրությունում տեղակայված բոլոր հյուպատոսներին կառավարության դիրքորոշման մասին:[3]

Հունիսի 11-ին Էնջելը գրում էր պետքարտուղարությանը, որ կարդացել էր *«Associated Press»*-ի կողմից տարածած լուրերն այն մասին, որ ինքը բողոքել էր օսմանյան կառավարության որոշման դեմ, համաձայն որի՝ ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի քաղաքացիներին արգելվել էր ճամփորդել երկրի ներքին շրջաններ, իսկ Օսմանյան կայսրության դեսպանորդը Վաշինգտոնում

[1] The National Archives and Records Service, Despatches from United States Consuls in Erzerum, 1895-1904, Roll 1, Vol. 1, August 5, 1895, December 31, 1900, Leo Bergholz to William R. Day, 1897, September 7, No. 83, pp. 1-2.
[2] Ջեյմս Էնջել (1829-1916) - ԱՄՆ-ի կրթական գործիչ և դիվանագետ, Վերմոնտի (1866-1871) և Միչիգանի (1871-1909) համալսարանների նախագահ, արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարար Չինաստանում (1880-1881) և Օսմանյան կայսրությունում (1897-1898): Ի տարբերություն իր նախորդի՝ երեք ամսվա ընթացքում Էնջելը դրական տպավորություն էր թողել և հեղինակություն էր վայելում ինչպես իշխանությունների, այնպես էլ ամերիկյան համայնքի և դիվանագետների շրջանում, լավ թուրքերեն էր խոսում (Mattox, Henry E., նշվ. աշխ., էջ 107-108):
[3] US Department of State. Papers relating to the Foreign Relations of the United States, with the Annual Message of the President transmitted to Congress on December 5, 1898. Washington: Government Printing Office, 1901, p. 1112.

ժխտել էր նման որոշման գոյությունը: ԱՄՆ-ի ներկայացուցիչն այդ մասին չէր հայտնել պետքարտուղարությանը՝ փորձելով պարզել և հասկանալ խնդրի իսկությունը: Ամեն ինչ սկսվել էր նրանից, որ իշխանությունները մերժել էին մի քանի ԱՄՆ-ի քաղաքացիներին այցելել օսմանյան առաջին մայրաքաղաք Բուրսա: Իսկությունը պարզելու նպատակով Էնջելը դեռևս մայիսին հանդիպել էր մեծ վեզիրի հետ, որը հայտնել էր, որ հատուկ *իրադե* է ընդունվել այն մասին, որ առանց սուլթանական պալատի կողմից տրվող հատուկ թույլտվության օտարերկրացիներին արգելվում էր ճամփորդել երկրում: Այդ հարցերով զբաղվով համապատասխան գրասենյակն այլևս այդ իրավասությունը կորցրել էր: Նման որոշման նպատակն էր թույլ չտալ, որ «ստոր և վնասակար» մարդիկ ճամփորդեն երկրով և «առաջացնեն անկարգություններ»: Էնջելը բողոքել էր, որ դրանով ամերիկացիների նկատմամբ խտրականություն էր հանդես բերվել, քանի որ այլ երկրների քաղաքացիներն ազատորեն ճամփորդում էին երկրի տարբեր շրջաններով: Էնջելն օրինակներ ուներ, որ իշխանությունները մերժել էին նաև Բրիտանիայի քաղաքացիներին, մասնավորապես դեսպանության քարտուղարներին:[1]

Այդ կապակցությամբ մայիսի 21-ին Էնջելը բողոքի հայտագիր էր ներկայացրել մեծ վեզիր Թևֆիկ փաշային: «Այդպիսի խտրականությունը վիրավորական է և անհանդուրժելի», ասվում էր հայտագրի մեջ: Նա պահանջում էր, որ ամերիկացիները պետք է իրավունք ունենան ազատորեն ճամփորդելու երկրով՝ համաձայն գոյություն ունեցող պայմանագրերի:[2]

Հոկտեմբերի 26-ին երկրորդ անգամ Կոստանդնուպոլսում արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարար նշանակված Օսկար Ս. Շտրաուսը տեղեկացնում էր պետքարտուղար Ջոն Հեյին Օսմանյան կայսրությունում օտարերկրացիների ճամփորդության թույլտվության հարցի նոր զարգացումների մասին: Նա նշում էր, որ Գերմանիայի կայսրի այցելության կապակցությամբ հնարավոր չէր որևէ խնդիր լուծել Բարձր Դռան հետ: Հոկտեմբերի 22-ին նա կրկին հայտագիր էր ներկայացրել հարցի կապակցությամբ: Միաժամանակ դեսպանորդը զգուշացրել էր բոլոր միսիոներներին չճամփորդել առանց համապատասխան թույլտվության: Նա հույս էր հայտնել, որ իր բողոքները կստիպեն քննարկել հարցը նախարարների խորհրդում և վերանայել ընդունված որոշումը:[3]

Չորս օր անց Շտրաուսը նոր հայտագիր ներկայացրեց Թևֆիկ փաշային, ուր նշվում էր, որ արդեն երեք շաբաթից ավելի է, ինչ մի քանի միսիոներներ սպասում են իրենց թույլտվություններին, որպեսզի վերադառնան իրենց տներն Էրզրումում և Խարբերդում: «...Այս իրավիճակը լուրջ խնդիր է

[1] Նույն տեղում, էջ 1095-1096:
[2] Նույն տեղում, էջ 1096-1097:
[3] Նույն տեղում, էջ 1097:

ստեղծելու մեր երկու կառավարությունների հարաբերությունների համար և իմ կառավարությունը ողջ պատասխանատվությունը դնելու է Ձեր կառավարության վրա, եթե արգելքների խնդիրն իր լուծումը չստանա», - ասվում էր հայտագրում:[1]

Իր հաջորդ զեկուցագրում Շտրաուսը գրում էր Հեյին, որ վերջապես սուլթանի հանձնարարությամբ նոյեմբերի 15-ին խնդիրը քննարկվել էր նախարարների խորհրդում, կայացվել էր որոշում, որի համաձայն՝ երկրում ճամփորդելու համար պետք էր լինելու միայն ստանալ ճամփորդական թույլտվություն հյուպատոսական դիմումի հիման վրա, որը հաստատում էր համապատասխան գրասենյակը, ինչպես որ դա ընդունված էր «հայկական անհանգստություններից» առաջ:[2]

Արդեն իսկ հաջորդ օրը Բարձր Դուռը շրջաբերական հայտագիր ներկայացրեց Կոստանդնուպոլսում հավատարմագրված դեսպանություններին, համաձայն որի՝ օտարերկրացիները կարող են ձեռք բերել տեղական անցագրեր ճամփորդելու նպատակով: Նրանք պետք է դիմեն իշխանություններին հյուպատոսությունների միջոցով՝ պարտադիր նշելով մեկնելու վայրը, այցի նպատակը և ժամկետը: Բարձր Դուռը նշում էր նաև, որ այդ անձինք քաղաքականությամբ զբաղվելու իրավունք չունեն և խնդրում էր, որ դեսպանություններն աջակցեն իշխանություններին այդ հարցում:[3]

1898 թ. հոկտեմբերի 20-ին Վաշինգտոնում Օսմանյան կայսրության ներկայացուցիչ Ալի Ֆեռռուի բեյը գրում էր Ջոն Հեյին, որ դեռևս վեց տարի առաջ օսմանյան կառավարությունը որոշում էր կայացրել, որ Օսմանյան կայսրության այն քաղաքացիները, որոնք ցանկանում են ընդունել օտար քաղաքացիություն, այլևս դադարելու են օսմանյան քաղաքացի լինելուց: Սակայն ներկայումս, ըստ դիվանագետի, նման կարգի օսմանցի հպատակները, որոնք ձեռք էին բերել օտար քաղաքացիություն, վերադառնում են Թուրքիա և փորձում օգտվել արտասահմանցու կարգավիճակից՝ ստեղծելով դժվարություններ Բարձր Դռան և օտարերկրյա ներկայացուցչությունների հարաբերությունների համար: Նա շեշտում էր, որ օտար քաղաքացիություն ընդունած օսմանցի քաղաքացիները Թուրքիա վերադառնալուն պես չեն կարող օգտվել արտասահմանցու կարգավիճակից: Նա խնդրում էր պետքարտուղարությանը միջոցներ ձեռնարկել այդ ուղղությամբ՝ դժվարություններից խուսափելու նպատակով: Ֆեռռուի բեյը շարունակում էր, որ որոշ անձինք գաղտագողի աշխատում են համոզել օսմանցի քաղաքացիներին դիմել՝ ամերիկյան քաղաքացիություն ստանալու համար՝ առանց հա-

[1] Նույն տեղում, էջ 1098-1099:
[2] Նույն տեղում, էջ 1099:
[3] Նույն տեղում, էջ 1100:

մապատասխան թույլտվություն ստանալու օսմանյան կառավարության կողմից:[1]

Հոկտեմբերի 24-ին Ֆեռոուի բեյին ուղղված պատասխան նամակում Ջոն Հեյը նշում էր, որ ինչպես ԱՄՆ-ի սահմանադրությունը, այնպես էլ քաղաքացիությանը վերաբերող համապատասխան օրենքները չեն նախատեսում, որ ԱՄՆ-ի քաղաքացիության դիմած օտարերկրացին պետք է հրաժարվի կամ ստանա այդ երկրի թույլտվությունն այդ կապակցությամբ: Ամերիկյան օրենքով սահմանված է, որ ԱՄՆ-ի քաղաքացիություն տրամադրող ֆեդերալ կամ նահանգային դատարանները չեն կարող պահանջել անհատից փաստաթղթեր այն մասին, որ օտարերկրյա պետությունը թույլ է տվել տվյալ անձին ստանալ ԱՄՆ-ի քաղաքացիություն: Հեյը եզրակացնում էր, որ որևէ ճանապարհ չի տեսնում նման պահանջը բավարարելու համար, քանի որ քաղաքացիության ձեռքբերումն ԱՄՆ-ում իրավական ակտ է, որը գտնվում է գործադիր իշխանության հսկողությունից դուրս:[2]

Դեկտեմբերի 5-ին Կոնգրեսին ներկայացված իր ամենամյա ուղերձում ԱՄՆ-ի նախագահ Ուիլյամ Մակ Քինլին նշում էր, որ Բարձր Դռան մոտ հավատարմագրված իր ներկայացուցիչը հրահանգ էր ստացել լուծել տարիներ շարունակվող հակասական խնդիրները Թուրքիայի հետ: Մասնավորապես նա հանձնարարություն էր ստացել ճնշում գործադրել փոխհատուցմանը վերաբերող հարցում, որն առաջացել էր 1895 թ. «հայկական տագնապի» ընթացքում այդ երկրում ամերիկացի միսիոներների ունեցվածքի ավերման հետևանքով: ԱՄՆ-ի ներկայացուցչին հանձնարարվել էր նաև կանոնակարգել շարունակվող անհամաձայնությունն այն մասին, որ Բարձր Դուռը հրաժարվում է ճանաչել Օսմանյան կայսրությունում ծնված և 1869 թ.-ից սկսած ԱՄՆ մեկնած անձանց քաղաքացիությունը: Նա պետք է լուծում գտներ նաև դեռևս 1869 թ. ծագած խնդիրներին, որոնք վերաբերում էին 1830 թ. պայմանագրի 4-րդ հոդվածի քրեական գործընթացի և պատժի հարցերին, ինչը հակասում էր ԱՄՆ-ի քաղաքացիների իրավունքներին: Վերջին խնդիրը ծագել էր պայմանագրի բնօրինակի և թարգմանության տարբերությունից: Ըստ նախագահի՝ երկու տարուց ավելի տևած ձգձգումից հետո ԱՄՆ-ի հյուպատոսն Էրզրումում վերջապես ստացել էր իր էկզեկվատուրան:[3]

Դեկտեմբերի 8-ին Էրզրումում ԱՄՆ-ի հյուպատոս Բերգհոլցը գրում էր ԱՄՆ-ի պետքարտուղարի տեղակալ Դեյվիդ Հիլլին, որ արևելյան Փոքր Ասիայում իրավիճակը շարունակում է մնալ ոչ կայուն և անհանգիստ. շարունակվում են քրդերի հարձակումները հայկական գյուղերի վրա, աճել է

[1] Նույն տեղում, էջ 1108:
[2] Նույն տեղում, էջ 1109:
[3] Նույն տեղում, էջ LXXXIII:

ցածր դասակարգի, մասնավորապես ամենամոլեռանդ տարրի դժգոհությունը, Էրզրումի նահանգում գրեթե բացահայտ թշնամություն գոյություն ունի քաղաքացիական և զինվորական իշխանությունների միջև: Ըստ հյուպատոսի, ինչպես նահանգապետը, այնպես էլ բանակի հրամանատարը խոսում են 1895-1896 թթ. դեպքերի կրկնության մասին: Նկատի առնելով նման հնարավորությունը՝ հյուպատոսը դիմում էր պետքարտուղարությանը՝ հյուպատոսությանը զենք տրամադրելու համար, ինչը կապահովեր ոչ միայն հյուպատոսության, այլև միսիոներների և նրանց դպրոցներում գտնվող աշակերտների և որբերի անվտանգությունը:[1]

Դեկտեմբերի 12-ին Շտրաուսը զեկուցում էր Հեյին, որ փոխհատուցման վճարման հարցն իր շարունակական ուշադրության կենտրոնում էր գտնվում այն պահից, երբ իրենց լուծումը ստացան Էրզրումում հյուպատոսության բացման և կայսրության ներքին շրջաններում ճամփորդելուն ուղղված արգելքներին առնչվող խնդիրները: Դեսպանորդը տեղեկացնում էր, որ հայտագիր էր ներկայացրել Բարձր Դռանն ամերիկյան միսիոներների վնասի փոխհատուցման հարցով՝ որպես օրինակ բերելով ԱՄՆ-ի կառավարության կողմից վճարած փոխհատուցումը, երբ Նոր Օռլեանում ամբոխի կողմից Լինչի դատաստանի էին ենթարկել իտալացիներին, և երբ Վայոմինգ նահանգի Ռոկ Սպրինգզում տեղի էր ունեցել չինացիների կոտորած: Դեկտեմբերի 9-ին սուլթանի հետ կայացած հանդիպման ժամանակ Շտրաուսը նշել էր, որ նշանակվել է այս պաշտոնում ոչ թե խնդիրներ ստեղծելու, այլ լուծելու համար, որպեսզի երկու երկրների միջև հարաբերությունները շարունակեն մնալ բարեկամական: Սուլթանը պատասխանել էր, որ ԱՄՆ-ի կառավարության պահանջի հարցն արդեն իսկ ներկայացվել է նախարարների խորհրդի քննարկմանը: Հաջորդ օրը դեսպանն այցելել էր արտաքին գործերի նախարարին, որը նույնպես վստահեցրել էր, որ համապատասխան քայլեր են ձեռնարկված ԱՄՆ-ի պահանջը բավարարելու համար:[2]

1899 թ. նախագահ Մակ Քինլիի հանձնարարությամբ Շտրաուսը բանակցություններ սկսեց 1893 թ. մարտի 3-ի օրենքի հիման վրա՝ ԱՄՆ-ի ներկայացուցչությունը դեսպանության մակարդակի բարձրացնելու նպատակով: Մինչ այդ օրենքը ԱՄՆ-ը դեսպաններ չուներ, քանի որ համարվում էր, որ դեսպանները սովորաբար միապետների անձնական ներկայացուցիչ-

[1] The National Archives and Records Service, Despatches from United States Consuls in Erzerum, 1895-1904, Roll 1, Vol. 1, August 5, 1895, December 31, 1900, Leo Bergholz to David J. Hill, 1898, December 8, pp. 1-3.
[2] US Department of State. Papers relating to the Foreign Relations of the United States, with the Annual Message of the President transmitted to Congress, December 5, 1899, Washington: Government Printing Office, 1901, pp. 765-766.

ներն էին օտար պետություններում: Թեև սկզբնական շրջանում սուլթան Աբդուլ Համիդը սառը վերաբերմունք էր ցուցաբերում այդ առաջարկին, սակայն հետագայում բանակցություններն ավարտվեցին հաջողությամբ և 1906 թ. հունիսի 18-ին Օսմանյան կայսրությունում ԱՄՆ-ի առաջին դեսպան նշանակվեց Ջոն Լայշմանը:[1]

1899 թ. փետրվարի 28-ին Շտրաուսը զեկուցում էր Հեյին, որ օգտագործում է բոլոր հնարավոր միջոցները՝ Բարձր Դռնից փոխհատուցում ստանալու համար: Դեսպանորդը հանձնարարել էր թարգման Գարգիուլոյին հայտնել սուլթանի քարտուղարին, որ սուլթանը խոստացել էր լուծում տալ հարցին, սակայն խնդիրը դեռևս ձգձգվում էր: Քարտուղարը հայտնել էր սուլթանի մտադրության մասին՝ ԱՄՆ-ից հածանավ գնելու վերաբերյալ: Միաժամանակ նա տեղեկացնում էր, որ համապատասխան աշխատանք էր տարվել Փարիզում՝ ապահովելու համար գումարի փոխանցումները բանկիրների միջոցով՝ մինչև համապատասխան պայմանագրի ստորագրումը: Սուլթանը ցանկություն էր հայտնել նաև ԱՄՆ-ի կառավարությունից տեղեկություններ ստանալ նոր ուժանակային թնդանոթների փորձարկումների մասին, որոնցով կարելի էր զինել ռազմանավը:[2]

Մարտի 25-ին Հեյը հանձնարարում էր Շտրաուսին բանակցել Բարձր Դռան հետ ոչ թե ԱՄՆ-ի քաղաքացիների հետ կապված առանձին փոխհատուցման գումարների, այլ ընդհանուր մեկ գումարի մասին, որից հետո ամերիկյան կառավարությունը համապատասխան բաշխում կկատարի տուժած կողմերի միջև: Հեյը հույս էր հայտնում, որ օսմանյան կառավարությունը ողջամիտ գումար կառաջարկի որպես փոխհատուցում:[3]

Սեպտեմբերի 23-ին Շտրաուսը զեկուցում էր Հեյին նախորդ օրը սուլթան Աբդուլ Համիդի հետ ունեցած իր հանդիպման մասին: Հանդիպման սկզբին սուլթանը տեղեկացրել էր դեսպանորդին, որ *իրադեն* է ստորագրել ԱՄՆ-ից ռազմանավ գնելու վերաբերյալ, այն ուղարկել էր ծովային նախարարին, և այդ գործարքը կնքելով՝ կվճարվեն կամ, բառացի թարգմանված, «կմաքրվեն» նաև ամերիկյան պահանջները: Դեսպանորդը հարցրել էր սուլթանին, թե հստակ ինչ կարող է փոխանցել ԱՄՆ-ի կառավարությա, երբ է ստորագրվելու Խարբերդի դպրոցի շինությունների վերակառուցմանը վերաբերող իրադեն: Նա պատասխանել էր, որ շատ շուտով՝ ռազմանավի գործարքի ավարտից անմիջապես հետո: Այնուհետև սուլթանն իր երախտագիտությունն էր հայտնել դեսպանի ջանքերի համար, որոնք միտված

[1] Gordon, Leland James, նշվ. աշխ., էջ 57:
[2] US Department of State. Papers relating to the Foreign Relations of the United States, with the Annual Message of the President transmitted to Congress, December 5, 1899, Washington: Government Printing Office, 1901, p. 766:
[3] Նույն տեղում, էջ 766-767:

էին ապահովելու երկու պետությունների միջև գոյություն ունեցող լավ հարաբերությունների մակարդակը: Շտրաուսը պատասխանել էր, որ դա իր նպատակն է, բայց նա սուլթանի հետ համագործակցության խիստ կարիքն ունի: Սուլթանը պատասխանել էր, որ միանշանակ կերպով ամեն ինչ անելու է այդ ուղղությամբ: Նա ասում էր, որ չլուծված երկու հարց է մնում. մեկը պահանջների խնդիրն է, որը շուտով «մաքրվելու է», իսկ մյուսը՝ «այստեղ վերադարձող և իրեն դեմ դավադրություն հյուսող հայերին պաշտպանությունն ապահովող պայմանագիրն է, որին նա չի կարող համաձայնել»: Սուլթանը շարունակում էր, որ «որևէ առարկություն չունի, եթե բոլոր հայերը մեկնեն Ամերիկա, և եթե նույնիսկ գումար չունենան վճարելու իրենց ուղևորությունը, նա պատրաստ է վճարել նրանց ծախսերը, սակայն միայն այն պայմանով, որպեսզի նրանք այլևս Թուրքիա չվերադառնան», որ «նա նրանց մեկնումն Ամերիկա, վերադարձն այստեղ և ամերիկյան պաշտպանություն ապահովելու պահանջը համարում է որպես սրիկայություն իր երկրի նկատմամբ», և որ «եթե իր որևէ նախարարներից մեկն այնքան թույլ գտնվի, որ տեղի տա այդ հանգամանքին, նա նրանց բոլորին պաշտոններից կազատի»: Այնուհետև նա ասում էր, որ հանդիպումից հետո անմիջապես հեռագրելու է Մեքքա, ուր ներկայումս տեղի է ունենում մահմեդականների ուխտագնացությունը, որպեսզի Ֆիլիպիններում մահմեդականները պատերազմ չսկսեն ամերիկացիների հետ և ապստամբների կողմը չբռնեն՝ հույս հայտնելով, որ ամերիկացիները չեն միջամտելու իրենց «կրոնական հարցերին» և հանդես են բերելու այնպիսի հանդուրժողականություն, որն ինքն է ցուցաբերում իր կայսրության քրիստոնյաների նկատմամբ:

Դիվանագետը նշում էր, որ մեծ հույսեր ունի, որ հատուցման պահանջները բավարարվելու են, մասնավորապես, երբ սուլթանը խոստացել էր դա անել: «Դա կպահանջի ժամանակ, համբերություն և տակտով ճնշում», եզրակացնում էր դեսպանորդը: Ըստ Շտրաուսի՝ «հայկական անկարգությունների» արդյունքում ԱՄՆ-ի փոխհատուցման պահանջը կազմում էր 19 209 թուրքական ֆունտ: Միաժամանակ դեսպանը նշում էր, որ թուրքական ֆինանսների ներկայիս վիճակը ողբալի է. քաղաքացիական և զինվորական պաշտոնյաների աշխատավարձը չի վճարվել 9-12 ամիս: Ըստ Շտրաուսի՝ սուլթանը ոչ միայն չի խոստացել, այլև չի ճանաչում Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի և Իտալիայի կողմից ներկայացված փոխհատուցման պահանջները: Արտաքին գործերի նախարարը տեղեկացրել էր նրան, որ երկու ամսվա ընթացքում կառավարությունը մեկ և կես միլիոն լիրա կամ դրա համարժեք ֆունտ է ստանալու փոխառության սպասարկումից և վճարելու է ռազմանավի գումարը:[1]

[1] Նույն տեղում, էջ 770-771:

Նոյեմբերի 10-ին Էրզրումում ԱՄՆ-ի հյուպատոս Բերգհոլցը գրում էր պետքարտուղարի տեղակալ Դեյվիդ Հիլլին, որ, Բիթլիսի բրիտանական հյուպատոս Լեմբից ստացված հեռագրի համաձայն, Սասունի շրջանում տեղի էր ունեցել ընդհարում բանակի և Խլաթի Սերոբի[1] ապստամբ ջոկատի միջև: Արդյունքում Սերոբն ու իր ջոկատից ևս 10 հոգի մահացել էին: Ըստ հյուպատոսի՝ Սերոբը հայտնի հեղափոխական էր, և նրա մահը պետք է «հանգստություն բերի ինչպես հայ բնակչությանը, այնպես էլ օսմանյան կառավարությանը»:[2]

Նոյեմբերի 13-ին Բերգհոլցը գրում էր Հիլլին, որ նոյեմբերի 7-ին հայ հեղափոխականների 50 հոգանոց ջոկատ էր անցել Ռուսաստանի սահմանը դեպի Էրզրումի նահանգի Ալաշկերտի շրջանը: Քուրդ ղեկավար Դերվիշ-աղան օգնություն էր կանչել իշխանություններից, սակայն մինչև զինվորների ժամանումը հեղափոխականները սպանել էին Դերվիշ-աղային, նրա որդուն, եղբորը և նրա չորս քուրդ ծառաներին: Զինվորների և հեղափոխականների միջև տեղի ունեցած ընդհարման արդյունքում մի կողմից մահացել էին 15 հեղափոխականներ և 35 զինված գյուղացիներ, և մյուս կողմից՝ քուրդ սպա ու երեք զինվոր: Այստեղ ժամանած հեծելազորը ստիպել էր հեղափոխականներին փախչել դեպի սարերը կամ անցնել Ռուսաստանի սահմանը:[3]

Նոյեմբերի 20-ին Բերգհոլցը զեկուցում էր Հիլլին, որ, հայկական աղբյուրից ստացված տեղեկատվության համաձայն, Դերվիշ աղայի սպանությանը հետևել էր քրդերի վրեժը. նրանք կոտորել էին մի քանի գյուղերի հայ բնակչությունը:

Ըստ հյուպատոսի՝ հայտնի էր, թե ինչպիսի խստությամբ է Ռուսաստանը պաշտպանում իր սահմանները, և պարզ է, որ 50 հոգանոց հեղափոխականների ջոկատը կարող էր սահմանն անցնել միայն ռուսական իշխանությունների թողտվությամբ: Ինչպես թուրքական, այնպես էլ հայկական աղբյուրները վկայում էին, որ «հայ հեղափոխականները զինված են եղել

[1] Աղբյուր Սերոբ (Վարդանյան Սերոբ) (1864-1899) – հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ, ֆիդայի, ՀՀԴ կուսակցության անդամ, 1895 թ. Խլաթում կազմակերպել է տեղի ինքնապաշտպանությունը, 1897-1898 թթ. կռվել է Թեղուտում, Սոխորդում և Բաբշենում, հետագայում թուրքերին հաջողվել է մատնությամբ թունավորել նրան, սակայն մինչև իր վերահաս մահը նա իր զինակիցների հետ պաշտպանվել է Սասունի Գելիեզուզան գյուղում:

[2] The National Archives and Records Service, Despatches from United States Consuls in Erzerum, 1895-1904, Roll 1, Vol. 1, August 5, 1895, December 31, 1900, Leo Bergholz to David J. Hill, 1899, November 10, No. 126, p. 1.

[3] The National Archives and Records Service, Despatches from United States Consuls in Erzerum, 1895-1904, Roll 1, Vol. 1, August 5, 1895, December 31, 1900, Leo Bergholz to David J. Hill, 1899, November 13, No. 127, pp. 1-2.

ռուսական զենքով և զինամթերքով, ինչը հնարավոր չէ իրականացնել առանց ռուսական իշխանությունների իմացության և օժանդակության»:[1]

1899 թ. դեկտեմբերի 5-ին Կոնգրեսին ներկայացված ամենամյա ուղերձում նախագահ Մակ Քինլին նշում էր, որ «Միացյալ Նահանգների նախարարը, հրահանգների համաձայն, Թուրքիայում շարունակում է ճնշում գործադրել փոխհատուցման վճարման արդար պահանջների համար՝ բավարարելու մի քանի տարի առաջ տեղի ունեցած անկարգությունների ընթացքում ամերիկյան քաղաքացիների կրած վնասներն ու օսմանյան իշխանությունների կողմից նրանց նկատմամբ գործած սխալները: Այդ պահանջներից մի քանիսը շատ տարիների պատմություն ունեն: Այս կառավարությունը հույս ունի ընդհանուր պայմանավորվածության հասնել այս կապակցությամբ:

Մեր քաղաքացիների իրավիճակը Թուրքական կայսրությունում շարունակում է մնալ անբավարար: Մեր շուրջ 40 տարիների ջանքերը ստորագրել հպատակությանը վերաբերող համաձայնություն կարծես թե գտնվում են վերջնական տապալման եզրին, քանի որ Օսմանյան Բարձր Դուռը հրաժարվում է ճանաչել բնիկ թուրք հպատակների օտարերկրացու կարգավիճակը, որոնք հպատակություն են ստացել արտասահմանում 1867 թ. (պետք է լինի 1869 թ. - Ա.Կ.) հետո: Մեր օրենքները թույլ չեն տալիս այս կառավարությանն ընդունել վերաբերմունքի որևէ տարբերություն արտասահմանում գտնվող բնիկ և նոր հպատակություն ստացած ամերիկացիների միջև, որն անդադար հակասություններ է ստեղծում այն դեպքերում, երբ միջազգային օրենքի համաձայն՝ երկակի քաղաքացիություն ունեցող անձանց թույլ չեն տալիս մուտք գործել Թուրքիա կամ վտարում են մուտք գործելուց հետո»:[2]

Իր ուղերձում նախագահը նաև նշում էր, որ որոշ դեպքերում ամերիկյան արտաքրանքի նկատմամբ Թուրքիայում ցուցաբերվում է քմահաճ վերաբերմունք: Ըստ նախագահի՝ խոսքը վերաբերում էր որակյալ ալյուրի մեծ քանակի՝ Թուրքիա ներմուծման մասին, որը մուտք չէր գործել «անբավարար առաձգականության» պատճառաբանությամբ: Թեև ԱՄՆ-ի դեսպանության ճնշման շնորհիվ այդ հարցն իր լուծումը ստացել էր, սակայն նախագահը որակում էր օսմանյան իշխանությունների գործողությունները որպես խտրականություն ամերիկյան արտադրատեսակի նկատմամբ: Ըստ

[1] The National Archives and Records Service, Despatches from United States Consuls in Erzerum, 1895-1904, Roll 1, Vol. 1, August 5, 1895, December 31, 1900, Leo Bergholz to David J. Hill, 1899, November 20, No. 129, pp. 1-2.

[2] US Department of State. Papers relating to the Foreign Relations of the United States, with the Annual Message of the President transmitted to Congress, December 5, 1899, Washington: Government Printing Office, 1901, p. XXXI.

նախագահի՝ կառավարությունը պետք է օգտագործի բոլոր իր հնարավորություններն ու ջանքերը՝ իր քաղաքացիների և արտադրանքի նկատմամբ արդար և հավասար վերաբերմունք ապահովելու ուղղությամբ:[1]

Դեկտեմբերի 20-ին Շտրաուսը զեկուցում էր Հեյին փոխհատուցման հետ առնչվող խնդիրների մասին: Չորս օր առաջ նա հերթական հայտագիրն էր ներկայացրել արտաքին գործերի նախարարին, ուր նշվում էր, որ «ԱՄՆ-ի կառավարությունը շարունակում է համառորեն պահանջել սուլթանի կողմից խոստացված փոխհատուցումն ու երկկողմ հարաբերություններում դրա հետ կապված ստեղծված լուրջ իրավիճակը»: Պետքարտուղարին ուղղված նամակում դեսպանորդը նշում էր, որ Անգլիայի փոխհատուցման պահանջը երեք անգամ ավելի էր, Իտալիան, Ֆրանսիան և Գերմանիան նույնպես ունեին նման պահանջներ, սակայն Բարձր Դուռը ոչ միայն որևէ վճարում չէր կատարել, այլև նույնիսկ խոստում չէր կատարել այդ պետություններին: Արդեն մի քանի ամիս էր, ըստ Շտրաուսի, որ իր պաշտոնակիցները դադարել էին այլևս պահանջելուց կամ կորցրել էին հույսը, սակայն, մյուս կողմից, ուշադրությամբ հետևում էին թուրք-ամերիկյան բանակցություններին՝ հույս ունենալով, որ եթե ԱՄՆ-ի պահանջները բավարարվեն, իրենք նույնպես կստանան իրենց փոխհատուցումը: Համաձայն դեսպանորդի տեղեկության՝ Բրիտանիայի դեսպանը փորձում էր ստանալ փոխհատուցումը Կիպրոսի պարտքի դիմաց փոխառության վերահաշվարկից գոյացած գումարներից, սակայն բանակցությունները տապալվել էին, քանի որ սուլթանը հրաժարվել էր վճարել բրիտանական կառավարությանը: Ֆրանսիացիները, իտալացիներն ու գերմանացիները որևէ փորձ այդ ուղղությամբ այլևս չէին ձեռնարկում: Գերմանիայի պահանջը կազմում էր ընդամենը 2 կամ 3 հազար ֆունտ, սակայն դեսպանը վերջերս ակնարկել էր Շտրաուսին, որ ընդհանրապես փորձում էր խուսափել հայկական գործերին կամ դրանց հետ առնչվող որևէ հարցի քննարկումներից:[2]

Դեսպանը շարունակում էր, որ քանի որ Օսմանյան կառավարության մոտ այն համոզմունքն էր տիրում, որ «ամերիկյան միսիոներներն են հանդիսացել հայկական անկարգությունների պատճառը կամ անուղղակի կերպով կապված են եղել այն խլրտումների հետ, որոնք հիմք են հանդիսացել հուզումների համար», իր առջև դրված խնդիրը շատ դժվար իրականանալի էր: Ըստ դեսպանորդի՝ նա անընդմեջ փորձել էր աշխատել սուլթանի և իր շրջապատի հետ այդ համոզմունքը փոխելու համար, ինչպես նաև աշխատել այդ ուղղությամբ միսիոներների հետ: Շտրաուսը գրում էր, որ ներկայումս ինչպես սուլթանի քարտուղարի, այնպես էլ մեծ վեզիրի կարծիքը որոշակի փոփոխության էր ենթարկվել. նրանք խոստովանում էին, որ ամերիկյան միսիոներներին մեղավոր կամ թշնամի չէին համարում և համոզված էին, որ ԱՄՆ-ի կառավարությունը թույլ չէր տա նրանց թշնամաբար գործել Թուրքիայի դեմ, սակայն նրանք իրենց մոտ աշխատող շատ հայ ուսուցիչներ ունեն, որոնք դավադրություն էին հյուսում Թուրքիայի դեմ:

Շտրաուսը նշում էր, որ «մեծ հիասթափություն է» ապրում այն բանի համար, որ, ավարտելով բանակցությունները սուլթանի կողմից փոխհատուցման խոստման խնդրով, նա չէր կարողացել լուծել այն մինչև իր ԱՄՆ մեկնումը: Խնդիրը ոչ թե միջազգային օրենքի շրջանակներում էր, շարունակում էր նա, այլ երկրի միապետի՝ փոխհատուցումը վճարելու խոստումի մեջ: Դեկտեմբերի 16-ին արտգործնախարարին ուղղված հայտագրում դեսպանորդը մասնավորապես կրկին բարձրացնում էր Խարբերդում ավերված շինությունների վերականգնման հարցը: Ըստ դիվանագետի՝ վերջին տասը ամիսների ընթացքում նա զբաղվել էր այս հարցով, որն անցել էր իր բոլոր փուլերը՝ սկսված վալիի զեկույցից, պետական խորհրդի, նախարարների խորհրդի քննարկումներից մինչև սուլթանը: Երեք շաբաթ առաջ սուլթանը *իրադե* էր ստորագրել՝ նախարարների խորհրդից հավելյալ տեղեկատվություն ստանալու նպատակով: Տասը օր առաջ սուլթանի քարտուղարը տեղեկացրել էր, որ սուլթանը պատրաստվում էր ստորագրել համապատասխան *իրադե*, սակայն առ այսօր այն չէր ստորագրվել: Շտրաուսը հավանական էր համարում, որ *իրադեն* կտրվի կամ իր մեկնումից հետո, կամ էլ իր վերադարձից հետո: Նա հերթական անգամ ստացել էր Բարձր Դռան հավաստիացումն այն մասին, որ ռազմանավը գնվելու է, իսկ փոխհատուցումը վճարվելու է:[1]

Պետքարտուղարին ուղղված նամակին կից Շտրաուսը լրացուցիչ տեղեկություն էր հայտնում առ այն, որ իր թարգմանը վերադարձել էր արտաքին գործերի նախարարությունից, որտեղ իրեն ասվել էր, որ սուլթանի Խարբերդի շինությունների վերականգնման *իրադեն* արդեն իսկ ստորագրվել է և շուտով փոխանցվելու է մեծ վեզիրին: Սուլթանը, ըստ թարգմանին տրված տեղեկատվության, հանձնարարել էր լուծում տալ ամերիկյան դպրոցներին վերաբերող բոլոր գոյություն ունեցող խնդիրներին:[2]

Թնֆիկ փաշային ուղղված իր հայտագրում Շտրաուսը գրում էր, որ 1895 թ. նոյեմբերին Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած բախումների ընթացքում Խարբերդի ամերիկյան դպրոցի ութ մասնաշենքեր տուժել էին հրկիզման և ավերման հետևանքով: Այս հարցը շարունակաբար բարձրացվել էր Բարձր Դռան առջև իր նախորդների՝ Տերրելի և Էնջելի կողմից:

[1] Նույն տեղում, էջ XXXI-XXXII:
[2] Նույն տեղում, էջ 772-773:

[1] Նույն տեղում, էջ 773-774:
[2] Նույն տեղում, էջ 774:

1898 թ. հոկտեմբերին՝ Շտրաուսի երկիր ժամանելուն պես, նա բարձրացրել էր այդ հարցը և նույն թվականի դեկտեմբերին ստացել էր սուլթանի խոստումը: Նույն խոստումը սուլթանը տվել էր 1899 թ. սեպտեմբերի 22-ին կայացած հանդիպման ժամանակ: Թարգման Գարգիուլոյի միջոցով սուլթանի քարտուղարը տեղեկացրել էր, որ Բարձր Դուռը պատրաստվում է ռազմանավ գնել ԱՄՆ-ի կառավարությունից: Շտրաուսը կրկին հայտնում էր արտգործնախարարին, ինչը նա արել էր նույնպես իր թարգմանի միջոցով, որ ԱՄՆ-ի կառավարությունը որևէ առարկություն չունի նման գնումների հետ կապված, սակայն շարունակելու է պնդել փոխհատուցում ստանալու համար: Ըստ դիվանագետի՝ դպրոցի ավերումները տեղի էին ունեցել կայսերական բանակի աչքի առաջ կամ նրա օգնությամբ: Նա տեղեկացնում էր արտգործնախարարին, որ դեկտեմբերի 20-ին մեկնելու էր ԱՄՆ՝ խորհրդատվությունների համար: Նա դժգոհություն էր հայտնում նաև, որ իր թարգմանին պաշտոնապես ասվել էր կառավարության կողմից, որ սուլթանը չէր կարող համաձայնվել դպրոցի փոխհատուցման վճարման հետ, քանի որ հայկական հուզումների պատճառն ամերիկյան միսիոներներն էին: Շտրաուսն իր բողոքն էր հայտնում արտգործնախարարին նման մեղադրանքների համար՝ նշելով, որ իր կառավարությունն ավանդաբար իրեն հեռու է պահել օտար երկրներում քաղաքական խնդիրներից և խստորեն հետևում էր, որ իր քաղաքացիները չներգրավվեն նման հարցերի մեջ: Նա այդ կապակցությամբ նշում էր, որ սուլթանն այս հարցում «մեծապես ապատեղեկացված է», եթե համոզված է, որ ԱՄՆ-ի կառավարությունը կարող է խրախուսել իր քաղաքացիներին «թշնամանքի ոգով» գործել կայսրության իշխանությունների հանդեպ:

Հայտագրի վերջում դեսպանորդը եզրակացնում էր, որ, հաշվի առնելով իր կողմից նշված բոլոր փաստարկները, երկկողմ հարաբերություններում ստեղծված իրավիճակը «շատ լուրջ է», և նա հույս էր հայտնում, որ մինչև իր մեկնումը սուլթանը *իրապես* կարձակի դպրոցի վերականգնման և մյուս փոխհատուցման վճարումները կատարելու մասին՝ խուսափելու համար այնպիսի իրավիճակի ստեղծումից, որը կարող էր լուրջ հետևանքներ ունենալ երկու երկրների միջև գոյություն ունեցող լավ հարաբերությունների վրա:[1]

1899 թ. դեկտեմբերի 26-ին Էրզրումում ԱՄՆ-ի հյուպատոս Բերգհոլցը գրում էր պետքարտուղարի տեղակալ Դեյվիդ Հիլլին, որ նահանգապետը տեղեկացրել էր, որ 20 հոգանոց հայ հեղափոխականների ջոկատ էր անցել սահմանը Պարսկաստանից և ընդհարվել կայսերական բանակի հետ, որի ընթացքում ջոկատն ամբողջությամբ ոչնչացվել էր, մահացել էր ընդամենը 7

[1] Նույն տեղում, էջ 774-775:

զինվոր: Ըստ հյուպատոսի՝ իշխանությունների նման քայլերը միայն հանգստություն կարող էին բերել երկրին, քանի որ դրանից առաջին հերթին տուժում էին հայ գյուղացիները, նրանք կամ կոտորվում էին զինվորների կողմից հեղափոխականներին թաքցնելու համար, կամ էլ սպանվում հեղափոխականների կողմից որպես դավաճաններ, եթե հրաժարվում էին «հյուրընկալել» նրանց:[1]

1900 թ. հունվարի 11-ին Հեյը գրում էր Շտրաուսին, որ ԱՄՆ-ի կառավարությունը «մեծ համբերությամբ» սպասել էր, որ Բարձր Դուռը կկատարի իր պարտավորությունները՝ «հայկական հուզումների» ընթացքում ամերիկյան միսիոներների ավերված ունեցվածքի, ինչպես նաև Ֆոռենկ Լենցի սպանության փոխհատուցման ուղղությամբ: Լենցը սպանվել էր 1894 թ. մայիսին, և թեև Էրզրումի նահանգապետը տեղեկացվել էր բրիտանական հյուպատոս Գոռեյզի կողմից նույն թվականի սեպտեմբերին, որ մայիսի 5-ին Բայազետի մոտ Պարսկաստանից Թուրքիա սահման անցած Լենցից որևէ տեղեկություն չկա, թուրքական իշխանությունների կողմից որևէ լուրջ քայլ չէր ձեռնարկվել այդ ուղղությամբ մինչև 1895 թ. սեպտեմբերը: Հետագայում այդ սպանության մեջ մեղադրվել և բանտարկվել էր Չիլկանի գյուղի քրդերի ղեկավար Մուստանեսսեհը, որին հետագայում հաջողվել էր փախչել բանտից: Միայն 1897 թ. դեկտեմբերին Մուստանեսսեհն ու երեք հայեր դատապարտվեցին 15 տարվա բանտարկության, թեև վկայություններից պարզ էր դարձել, որ սպանությունը կանխամտածված բնույթ էր կրում: Սակայն դատապարտյալներին կրկին հաջողվել էր փախչել: Ըստ Հեյի՝ սա վկայում էր այն մասին, որ կայսրությունում իրականում որևէ արդարադատություն գոյություն չուներ: Հեյը հանձնարարում էր շարունակել պահանջել Բարձր Դռնից փոխհատուցել բոլոր դեպքերի համար, և ԱՄՆ-ի կառավարությունն այդ հարցում աջակցելու էր դեսպանությանը բոլոր հնարավոր միջոցներով:[2]

1900 թ. հունվարի 27-ին գործերի ժամանակավոր հավատարմատար Լլոյդ Գրիսկոմը[3] հերթական հայտագիրն էր ներկայացրել Օսմանյան կայսրության արտաքին գործերի նախարարին՝ կրկին պահանջելով լուծել փոխհատուցման խնդիրը:[4]

[1] The National Archives and Records Service, Despatches from United States Consuls in Erzerum, 1895-1904, Roll 1, Vol. 1, August 5, 1895, December 31, 1900, Leo Bergholz to David J. Hill, 1899, December 26, No. 136, p. 1.

[2] US Department of State. Papers relating to the Foreign Relations of the United States, with the Annual Message of the President transmitted to Congress, December 3, 1900, Washington: Government Printing Office, 1902, p. 906.

[3] Լլոյդ Գրիսկոմ (1872-1959) - ԱՄՆ-ի դիվանագետ, աշխատել է Օսմանյան կայսրությունում, Պարսկաստանում, Ճապոնիայում, դեսպան Բրազիլիայում (1906-1907) և Իտալիայում (1907-1911):

[4] Նույն տեղում, էջ 907-908:

Ապրիլի 23-ին և մայիսի 19-ին Հեյը հանձնարարում էր Գրիսկոմին ԱՄՆ-ի նախագահի անունից պահանջել արտգործնախարարությունից և սուլթանից անհապաղ վճարել փոխհատուցման գումարը, որը կազմում էր 20 հազար ֆունտ, ինչը կբարելավեր երկու երկրների միջև գոյություն ունեցող բարեկամական հարաբերությունները:[1]

Հունիսի 15-ին Գրիսկոմը հաղորդում էր Հեյին, որ սուլթանի քարտուղարը հայտնել էր, որ փոխհատուցման պահանջի խնդիրն իր լուծումը ստանալու է երեքից չորս ամսվա ընթացքում:[2]

Երեք օր անց Հեյը հեռագրում էր Գրիսկոմին, որ այդ խնդրի լուծումից է կախված երկկողմ հարաբերությունների ապագան, այն ունի «մեծ նշանակություն մեր և Թուրքիայի համար», դրանից է կախված «մեր բարեկամական հարաբերությունների շարունակությունն ու ամրապնդումը»:[3]

Դեռևս դեկտեմբերի 26-ին Օսմանյան կայսրության արտաքին գործերի նախարարությունը հայտագիր էր ներկայացրել Կոստանդնուպոլսում ԱՄՆ-ի ներկայացուցչությանը, ուր նշվում էր, որ օսմանյան կողմը հերթական անգամ ամերիկյան կառավարության ուշադրությունն էր հրավիրում երկար ժամանակ արդեն իր լուծումը չստացած հարցի վրա, որը վերաբերում էր ԱՄՆ-ի քաղաքացիներին դատական քննության ենթարկելուն, որոնք մեղադրվում էին օսմանյան քաղաքացիների և նրանց ունեցվածքի նկատմամբ ոտնձգությունների համար, ինչը 1830 թ. պայմանագրի 4-րդ հոդվածի տարբեր մեկնաբանությունների արդյունք էր: Ըստ հայտագրի՝ իրավական ուժ ունի պայմանագրի թուրքական տեքստը, որը ճանաչվել էր ԱՄՆ-ի հավատարմատարի կողմից վավերացման գործիքները փոխանակելու պահին և իրականում տարբերվում էր ֆրանսերեն տեքստից: Հոդվածը սահմանափակում էր ԱՄՆ-ի քաղաքացու արտոնությունները միմիայն «առավելապես արտոնյալ պետություն» դրույթով: Ըստ հայտագրի՝ Վաշինգտոնն իր համաձայնությունն էր հայտնել օսմանյան տեսակետի հետ առ այն, որ օսմանյան դատարաններն իրավունք ունեն քննելու օսմանյան հպատակներին և ԱՄՆ-ի քաղաքացիներին առնչվող խառը գործեր, որն արձանագրվել էր երկկողմ արձանագրության մեջ, և որն օտարերկրացիներին անշարժ ունեցվածք ունենալու օսմանյան օրենքին հավելող փաստաթուղթ էր: Արձանագրության համաձայն՝ ամերիկյան հյուպատոսական կետից ինը ժամ հեռավորության վրա գտնվող դեպքերի համար օտարերկրացուն վերաբերող գործը ավագների խորհրդի և կապայի դատարանի կողմից պետք է քննվի առանց հյուպատոսական աշխատակցի օգնության: Օտարերկրացիներն իրավունք ունեն հյուպատոսի պահանջով դիմելու սանջակի դատարան և վերանայելու ընդունված որոշումը:

Նախարարությունն ափսոսանք էր հայտնում, որ ներկայիս բանավեճն իր բացասական ազդեցությունն էր ունենում՝ առաջացնելով կայսրության հասարակական կարգի լուրջ խանգարումներ: Ամեն անգամ, ըստ հայտագրի, երբ ԱՄՆ-ի քաղաքացին ոտնձգություն կամ հանցագործություն էր գործում, նա համոզված էր իր անպատժելիության մեջ: Հյուպատոսությունը համարում էր, որ ինքը պետք է զբաղվի նրա գործով, իսկ տեղական արդարադատության իշխանությունները պահանջում էին հակառակը: Օգտվելով այդ իրավիճակից՝ ԱՄՆ-ի քաղաքացիները մնում էին անպատիժ, ինչը վտանգ էր ներկայացնում հասարակական կարգ ու կանոնի, կայունության և խաղաղության համար: Նախկինում այս հարցը խնդրահարույց չէր, քանի որ Օսմանյան կայսրությունում բնակվող ԱՄՆ-ի քաղաքացիների թիվը մեծ չէր: Ըստ հայտագրի՝ ներկայումս իրավիճակը փոխվել էր, քանի որ նրանց թիվն այնքան մեծ էր, որ նրանց անպատժելիության հարցն իրական խնդիրներ էր առաջացնում, նրանք հանգիստ կերպով շարունակում էին շրջել երկրի տարածքով: Օսմանյան կառավարությունը չէր ցանկանում օգտագործել երկրից վտարելու իր իրավունքը՝ հույս ունենալով, որ այս խնդիրն իր համապատասխան լուծումը կգտնի կողմերի միջև «անկեղծ և արդար» համաձայնության միջոցով:

Համաձայն հայտագրի՝ Վաշինգտոնում տեղի ունեցող բանակցությունների ժամանակ ԱՄՆ-ի պետքարտուղարը մի առաջարկ էր արել, որը մասամբ համապատասխանում էր Օսմանյան տեսակետին և կարող էր զգալիորեն մեղմել գոյություն ունեցող մոտեցումների տարբերությունը: Այդ փոխզիջումային առաջարկը կայանում էր նրանում, որ ԱՄՆ-ի քաղաքացիների գործերը դատական քննության ենթարկելու օսմանյան դատարանների իրավունքն անառարկելի էր դառնում, սակայն միաժամանակ հյուպատոսություններին իրավունք էր վերապահվում պատժի ենթարկել ամերիկյան քաղաքացուն, եթե նա մեղավոր էր ճանաչվել: Արտաքին գործերի նախարարությունը խնդրում էր ԱՄՆ-ի ներկայացուցչությանը քննարկել այս խնդիրը, քանի որ Բարձր Դուռը ցանկանում էր շուտափույթ կերպով լուծում տալ այս հարցին՝ «անաչառության հիմքի» վրա:[1]

1900 թ. ապրիլի 26-ին Բարձր Դուռը նոր հայտագիր ներկայացրեց ԱՄՆ-ի ներկայացուցչությանը, ուր նշվում էր, որ Բարձր Դուռը դեռևս չի ստացել նախորդ հայտագրի պատասխանը, ինչն իր ազդեցությունն էր ունենում կայսրության ներքին գործերի վրա, մասնավորապես ԱՄՆ-ի քաղաքացիները շարունակում են անպատիժ մնալ իրենց հանցանքների համար:

[1] Նույն տեղում, էջ 908:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում, էջ 909:

[1] Նույն տեղում, էջ 909-910:

Որպես օրինակ՝ բերվում էր ԱՄՆ-ի քաղաքացի Անտոնիո Պոռոսսենի գործը, համաձայն որի՝ վերջինս զրպարտել էր օսմանյան հպատակի, սակայն դատարան չէր ներկայացել, իսկ Զմյուռնիայում ամերիկյան հյուպատոսը հրաժարվել էր զբաղվել հարցով:[1]

Գրիսկոմին ուղղված բացատրական նամակում Զմյուռնիայում հյուպատոս Ռուֆուս Լեյնը գրում էր, որ Պոռոսսենը վեճ էր ունեցել իր աներոջ հետ, որը նրան դատի էր տվել: «Քանի որ մենք չենք ճանաչում թուրքական քրեական դատարանի իրավունքն ամերիկացիներին դատելու համար, ես վերադարձրել եմ դատարան կանչի թղթերը և տեղեկացրել իշխանություններին, որ որևէ քրեական գործողություն Պոռոսսենի դեմ այս հյուպատոսությունում չի կարող իրագործվել», - զեկուցում էր հյուպատոսը:[2]

1900 թ. հունվարի 8-ին Գրիսկոմը զեկուցում էր Հեյին նախորդ տարվա դեկտեմբերին տեղի ունեցած դեպքի մասին, երբ օսմանյան իշխանությունները Մանիսա քաղաքում առգրավել էին Զմյուռնիայում հյուպատոսության երրորդ թարգման Ավետիս Ավետիկյանին պատկանող ապրանքը՝ մեծ քանակությամբ մատուտակի արմատ, որը գտնվում էր իր կողմից վարձած շինությունում: Ամերիկյան հյուպատոսը մեծ աղմուկ էր բարձրացրել այդ հարցի կապակցությամբ, նամակով դիմել էր վալիին՝ պահանջելով վերադարձնել առգրավված ապրանքը, քանի որ իշխանությունները չէին զգուշացրել հյուպատոսությանը նման գործողություն իրականացնելու մասին: Թուրքական իշխանությունները ոչ միայն չէին բավարարել պահանջը, այլև դատարանի կանչի փաստաթղթեր էին ուղարկել Ավետիկյանին: Հյուպատոս Լեյնը Մանիսա էր ուղարկել իր կավասին, որը պատասխանում էր հյուպատոսության և աշխատակիցների անվտանգության համար: Վերջինս բացել էր թուրքական կնիքով փակված, Ավետիկյանի կողմից վարձված շինության դուռը և վերականգնել հյուպատոսության հսկողությունը տարածքի նկատմամբ: Սակայն թուրք զինվորները ձերբակալում են կավասին և բռնագրավում նրա զենքը: 24 ժամ բանտում պահելուց հետո նրան վերադարձնում են Զմյուռնիա, ևս չորս ժամ պահում բանտում, սակայն հետո ազատ արձակում:

Այդ կապակցությամբ արտաքին գործերի նախարարությունից ստացված հայտագրի համաձայն՝ Ավետիկյանն ու նրա գործակիցները գողացել էին ոմն Հաջի Դաուդին պատկանող մեծ քանակության մատուտակի արմատ և պահեստավորել այն: Գրիսկոմը տեղեկացնում էր Հեյին, որ ապրանքի առգրավումը տեղի էր ունեցել երկկողմ պայմանագրի դրույթներին հակառակ, քանի որ ամերիկյան հյուպատոսությունների թարգմանները, օսմանյան օրենքի համաձայն, ունեն ԱՄՆ-ի քաղաքացուն հավասար արտոնություններ: Այդ կապակցությամբ Գրիսկոմը հայտագիր էր ներկայացրել Բարձր Դռանը, ուր երեք պահանջ էր ներկայացրել.

1) Մանիսայի դատարանը պետք է չեղյալ համարի բռնագրավման մասին իր որոշումը.

2) Ավետիկյանի կողմից վարձած տունը պետք է նրան վերադարձվի.

3) կավասից առգրավված զենքը պետք է վերադարձվի Զմյուռնիայում ԱՄՆ-ի հյուպատոսությանը:

Ներկայացնելով խնդիրը՝ Գրիսկոմը պետքարտուղարության հրահանգն էր ակնկալում թարգմանների իրավունքների պաշտպանության կամ նման դեպքերի կապակցությամբ, քանի որ ամերիկյան հյուպատոսություններում մեծ թվով թարգմաններ էին աշխատում, որոնք կարող էին ունենալ իրենց մասնավոր բիզնեսը: Ինչ վերաբերում է զենքի առգրավմանը, Գրիսկոմն այդ դեպքը համարում էր շատ լուրջ և վիրավորական ԱՄՆ-ի կառավարության համար: Կավասներն արտոնյալ իրավունքներ ունեին օսմանյան օրենքի համաձայն, որոնց չէր կարելի ձերբակալել, քանի որ նրանք ապահովում էին օտարերկրյա դիվանագետների անվտանգությունը:[1]

Նույն հարցի կապակցությամբ հունվարի 13-ին Գրիսկոմը գրում էր Հեյին, որ, օսմանյան կառավարության կողմից ստացված տեղեկության համաձայն, Ավետիկյանը փորձել էր տիրանալ անգլիացի առևտրական Ֆորբզին պատկանող ապրանքին, նրա մարդիկ ծեծի էին ենթարկել Ֆորբզի աշխատողներին, տիրացել ապրանքին և պահեստավորել այն: Գրիսկոմը պետքարտուղարության ուշադրությունն էր հրավիրում այն հանգամանքի վրա, որ եթե պատվո թարգմանները տեղական օրենքի լուրջ խախտում կատարեին, նրանք կարող էին զրկվել իրեց պաշտոններից և բնականաբար զրկվել ամերիկյան ներկայացուցչությունների պաշտպանությունից:[2]

Նույն օրը Հեյին հասցեագրված մեկ այլ նամակում Գրիսկոմը գրում էր, որ այս հարցի կապակցությամբ վալիի և ԱՄՆ-ի հյուպատոսի միջև հարաբերություններն այնքան են սրվել, որ ինքը որոշել էր Զմյուռնիա գործուղել գլխավոր հյուպատոս Չարլզ Դիկինսոնին՝ հարցը կարգավորելու նպատակով: Փետրվարի 9-ին Գրիսկոմը զեկուցում էր Հեյին, որ Դիկինսոնը կարողացել էր կարգավորել բոլոր հարցերը, ապահովել ամերիկյան կողմի երեք հիմնական պահանջները և վերականգնել բարեկամական հարաբերությունները վալիի և հյուպատոս Ռուֆուս Լեյնի միջև:[3]

1900 թ. հունվարի 11-ին Հեյը գրում էր Գրիսկոմին, որ բավականին շատ դեպքեր էին արձանագրված, երբ ԱՄՆ-ում հպատակություն ստացած,

[1] Նույն տեղում, էջ 911:
[2] Նույն տեղում, էջ 911-912:

[1] Նույն տեղում, էջ 921-924:
[2] Նույն տեղում, էջ 928-930:
[3] Նույն տեղում, էջ 931-932:

Թուրքիայում ծնված և նախկինում քաղաքացի հանդիսացող անհատները կրկին օսմանյան անձնագրեր էին ձեռք բերում, քանի որ օսմանյան իշխանությունները չէին ճանաչում նրանց նոր քաղաքացիությունը: Սակայն ժամանելով Թուրքիա՝ նրանք ներկայանում էին ամերիկյան հյուպատոսություններ՝ որպես ԱՄՆ-ի քաղաքացիներ և դիմում անձնագրեր ստանալու համար: Հեյը գրում էր այդ կապակցությամբ, որ Թուրքիայի անձնագիր կրկին ստացած անձը չի կարող այլևս ստանալ ամերիկյան անձնագիր:[1]

Փետրվարի 9-ին Չիկագոյից Հ. Դ. Կարապետյանը նամակ էր գրում պետքարտուղար Հեյին, որ Թուրքիայում ԱՄՆ-ի ներկայացուցիչ Օսկար Շտրաուսի հարցազրույցն էր կարդացել թերթում այն մասին, որ ամերիկյան քաղաքացիները կարող էին ամենուրեք ճամփորդել Թուրքիայում: Որպես տասը տարվա ԱՄՆ-ի քաղաքացի՝ նա հարցնում էր պետքարտուղարին, թե արդյոք կարող է մեկնել Հայաստան և զբաղվել իր հոր ունեցվածքի հարցով, որը կոտորածների ընթացքում առգրավվել էր: Իր՝ փետրվարի 19-ի պատասխան նամակում Հեյը գրում էր Կարապետյանին, որ դեսպանի ասածը վերաբերում էր միայն ութ ամիս առաջ օսմանյան իշխանությունների կողմից Թուրքիայում ԱՄՆ-ի քաղաքացիների ճամփորդելու իրավունքը վերականգնելու հարցին: Ինչ վերաբերում է ԱՄՆ-ում հպատակություն ստացած հայերի կամ օսմանյան այլ ծագում ունեցող անձանց իրավունքներին, ապա խնդիրը դեռ լուծում չէր ստացել: Օսմանյան կառավարությունը շարունակում էր չճանաչել օսմանյան հպատակների այլ երկրներում հպատակություն ստանալու հանգամանքը: ԱՄՆ-ի կառավարությունը երկար ժամանակ վիճարկում էր օսմանյան կողմի հետ այս հարցը, սակայն առանց հաջողության: Միջազգային ընդունված կարգի համաձայն՝ պետությունները սովորաբար նման դեպքերում ընդունում էին երկակի քաղաքացիություն և երկկողմ համապատասխան պայմանագրերով կարգավորում քաղաքացիների խնդիրները: ԱՄՆ-ը նման պայմանավորվածություններ ուներ տարբեր երկրների հետ: Սակայն նման պայմանագրի ստորագրումն Օսմանյան կայսրության հետ դեռևս անհավանական էր: Օսմանյան կառավարությունը թույլ էր տալիս իր հպատակին դուրս գալ իր քաղաքացիությունից և այլ երկրում հպատակություն ստանալ միայն այն դեպքում, եթե վերջինս խոստանար այլևս չվերադառնալ Օսմանյան կայսրություն, իսկ վերադառնալուն պես ճանաչվեր որպես իր հպատակ՝ իրավունք չտալով նրան օգտվելու իր՝ ԱՄՆ-ի քաղաքացիներին հասնող արտոնություններից: Թեև, ըստ պետքարտուղարի, Օսմանյան կայսրությունում գտնվող բոլոր դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցիչները բոլոր միջոցները ձեռնարկել էին՝ ամերիկյան հպատակություն ստացած և Թուրքիա վերադարձած անձանց իրավունքները պաշտպանելու ուղղությամբ, սակայն չէին կարող վստահեցնել, որ Կարապետյանին թույլ կտրվի մուտք գործել կայսրություն, և որ իր իրավունքները չեն ոտնահարվի օսմանյան իշխանությունների կողմից:[1]

[1] Նույն տեղում, էջ 937-938:

Փետրվարի 16-ին Կարապետյանին պատասխանեց նաև Շտրաուսը, որը գտնվում էր այդ ժամանակ Վաշինգտոնում: Ըստ դիվանագետի, քանի որ օսմանյան իշխանություններն օտար երկրներում նոր հպատակություն ստացած և Օսմանյան կայսրություն վերադարձած անձանց շարունակում էին համարել իրենց հպատակները, նման անհատներին խորհուրդ չէր տրվում մեկնել իրենց ծննդավայրը: Դա առաջին հերթին վերաբերում էր հայերին, որոնք անմիջապես դառնալու էին կասկածի առարկա օսմանյան իշխանությունների համար:[2]

Պետքարտուղարի տեղակալին ուղղված 1900 թ. հուլիսի 31-ի, սեպտեմբերի 20-ի և հոկտեմբերի 1-ի զեկուցագրերում Բերգհոլցը տեղեկացնում էր, որ հուլիսի 17-ին Սասունի շրջանի Սպաղանք, Եղգարթ և Չորեր հայկական գյուղերը ենթարկվել էին հարձակման քրդական և թուրքական կանոնավոր բանակի կողմից՝ Բիթլիսի պարետ Ալի փաշայի հրամանատարությամբ: Հարձակման արդյունքում կոտորածի էին ենթարկվել առնվազն 220 հայեր, այդ թվում՝ կանայք և երեխաներ: Ալի փաշան ինքն էր հայտարարել այն մասին, որ հայերին ոչնչացնելու հրամանն արձակվել էր անմիջապես սուլթանական պալատից, իսկ Բիթլիսի նահանգապետը ոչինչ այդ մասին չէր իմացել: Առաջին գյուղը, որը ենթարկվել էր հարձակման, Սպաղանքն էր, որտեղ, ըստ իշխանությունների, թաքնված էին հեղափոխականները: Սակայն պարզվել էր, որ նրանք երկուսն են եղել, որոնք մինչև հարձակումը փախել էին գյուղից: Հայկական երեք գյուղերը թալանվել էին և ավերվել, ողջ մնացած գյուղերի բնակիչները փախել էին մոտակա լեռները:

ԱՄՆ-ի հյուպատոսի կարծիքով՝ կոտորածի համար պատասխանատվությունն ընկնում էր Կոստանդնուպոլսի վրա, քանի որ երկիրը կառավարելու սուլթանի ոճն այնպիսին էր, որ նա միջամտում էր նույնիսկ ամենաչնչին հարցին: Այդ առիթով հյուպատոսը հետևյալ օրինակն էր բերում. երբ Էրզրումում ռուսական գլխավոր հյուպատոսությունը դիմել էր քաղաքի պարետին՝ մահացած ռուսական գլխավոր հյուպատոսի թաղման արարողությունը զինվորական նվագախմբի ուղեկցությամբ կատարելու խնդրանքով, պարետն իր վրա այդ պատասխանատվությունը չէր վերցրել, թույլտվություն էր հարցրել և մերժում ստացել Բարձր Դռնից: ԱՄՆ-ի հյուպատոսը եզրակացնում էր, որ եթե նահանգներում զինվորական նվագախմբերի մաս-

[1] Նույն տեղում, էջ 939-939:
[2] Նույն տեղում, էջ 938-940:

նակցությունը նման միջոցառումներին գտնվում էր կենտրոնական կառավարության անմիջական հսկողության տակ, ապա բնական էր եզրակացնել, որ 200 հպատակների կոտորածը նույնպես չէր կարող կատարվել առանց սուլթանի հրահանգների:

Ըստ հյուպատոսի՝ եվրոպական որոշ տերությունների պահանջով Սասունի դեպքերի քննության համար ստեղծված հանձնաժողովի կազմում ընդգրկվել էին արդարադատության նախարարության անդամ Էնվեր փաշան և սուլթանի նորանշանակ քարտուղարը: Նրանք ժամանել էին Սասուն և սկսել իրենց աշխատանքը, սակայն, ըստ ԱՄՆ-ի հյուպատոսի, ճշգրիտ տեղեկությունների համաձայն, սուլթանը բարձրաստիճան պաշտոնյա էր ուղարկել պալատից Սասուն, որպեսզի համոզվի, որ իր հրահանգները լիարժեք կերպով կատարվելու են:

Բիթլիսի պարետ Ալի փաշան հայտարարություն էր արել «միջադեպի» ժամանակ մահացածների թվի մասին, որն իբր կազմել էր 16 հոգի՝ «բոլորն էլ հայ հեղափոխականներ»: Ըստ ԱՄՆ-ի հյուպատոսի՝ այդ թիվը բացարձակապես իրականությանը չէր համապատասխանում: Նա պնդում էր, որ իր տեղեկությունները ճշմարիտ էին:[1]

1901 թ. մայիսի 18-ին Էրզրումում ԱՄՆ-ի փոխհյուպատոս Վիտալ Օջալվոն հաղորդում էր ԱՄՆ-ի պետքարտուղարի տեղակալ Դեյվիդ Հիլլին, որ հայ հեղափոխականների վերջին գործողությունները, մասնավորապես ռուս-թուրքական սահմանի նրանց անցումները բավականին անհանգստացնում էին տեղական իշխանություններին: Սահմանապահներին օգնելու նպատակով իշխանությունները տրամադրել էին երեք հետևակային գումարտակ: Ըստ փոխհյուպատոսի՝ նահանգապետի կողմից իրականացված գործուն միջոցների շնորհիվ ներկայումս որևէ վտանգ այլևս չէր սպառնում:[2]

Հուլիսի 20-ին Օջալվոն հաղորդում էր Հիլլին, որ, համաձայն հավաստի տեղեկությունների, հուլիսի 10-ին Մուշում ընդհարում էր տեղի ունեցել զինվորների և հայ հեղափոխականների միջև, որի արդյունքում երկու կողմից կան զոհեր: Մուշի շուկան փակ էր այդ օրվանից, սակայն Էրզրումից Մուշ հասած զինվորների գումարտակը կարողացել էր հանգստացնել իրավիճակը:[3]

[1] The National Archives and Records Service, Despatches from United States Consuls in Erzerum, 1895-1904, Roll 1, Vol. 1, August 5, 1895 – December 31, 1900, Leo Bergholz to David J. Hill, 1900, July 31, No. 144, p. 1; 1900, September 20, pp. 1-2; 1900, October 1, pp. 1-2.
[2] The National Archives and Records Service, Despatches from United States Consuls in Erzerum, 1895-1904, Roll 2, Vol. 2, January 26, 1901 – May 13, 1904, Vital Ojalvo to David J. Hill, 1901, May 18, No. 159, p. 1.
[3] The National Archives and Records Service, Despatches from United States Consuls in Erzerum, 1895-1904, Roll 2, Vol. 2, January 26, 1901 – May 13, 1904, Vital Ojalvo to David J. Hill, 1901, July 20, No. 163, p. 1.

Իր հաջորդ զեկուցագրում (3 սեպտեմբերի) Օջալվոն հաղորդում էր, որ տեղի զինվորական հրամանատարը հեռագիր էր ստացել Կոստանդնուպոլսից՝ առանց հապաղելու իր գումարտակով Սասուն մեկնելու մասին: Սասուն էին շտապում ևս վեց գումարտակներ Վանից, Բիթլիսից, Երզնկայից և Խարբերդից: Նահանգապետի խոսքերի համաձայն՝ «քանի որ հայ հեղափոխականները շատ ակտիվ են երկրի այդ մասում, քրդերին դժվար է պահել այդ իրավիճակում, և այդ պատճառով մենք պարտավոր ենք մեծ ուժ ուղարկել՝ պատահարի դեպքում բնակչությունը պաշտպանելու նպատակով»: Սասունից ստացված վերջին տեղեկությունների համաձայն՝ քրդերն արդեն իսկ հարձակվել էին հայկական գյուղերի վրա, թալանել և սպանել բնակիչներին, որից հետո այրել տները:[1]

Ըստ Օջալվոյի տեղեկությունների, սեպտեմբերի 1-ին հայ հեղափոխականների մի մեծ խումբ փորձել էր անցնել սահմանը Ռուսաստանից, սակայն զինվորականները ետ էին մղել հարձակումը՝ սպանելով և ձերբակալելով նրանցից մի քանիսին: Սահմանապահ զորքերի հրամանատար Ահմեդ փաշան հրաման էր ստացել ուժեղացնել իր սահմանակետը, իսկ Էրզրումում գնդապետ Ջաբար բեյը հրաման էր ստացել 100 հեծյալ հավաքել և մեկնել սահման: Հեղափոխականներին սահմանից մաքրելուց հետո գնդապետը պետք է մեկներ Բայազետ, քանի որ նման հարձակում սպասվում էր նաև Պարսկաստանից:[2]

Նոյեմբերի 16-ին հյուպատոս Բերգհոլցը գրում էր Հիլլին Էրզրումից, որ ութ օր տևած երկրաշարժն Էրզրումում քանդել էր 1000 տուն, ցնցումները դեռ շարունակվում էին: Ըստ հյուպատոսի՝ 15 հազար հոգի օգնության կարիք ունեին: Թեև նահանգապետը հանձնաժողով էր ստեղծել այդ կապակցությամբ, սակայն միջոց չկար տուժածներին օգնելու համար, և դժվար էր պատկերացնել, թե ինչպես են այդ մարդիկ անցկացնելու ձմեռվա ամիսները: Հյուպատոսը դիմում էր պետքարտուղարությանը հնարավոր օժանդակության համար:[3]

1902 թ. հունվարի 17-ին Բերգհոլցը զեկուցում էր Բիթլիսի ամերիկյան առաքելության աշխատակից Սոսի Համբարձումյանի գործի մասին, որը դատապարտվել էր հինգ տարի բանտարկության՝ կառավարության դեմ

[1] The National Archives and Records Service, Despatches from United States Consuls in Erzerum, 1895-1904, Roll 2, Vol. 2, January 26, 1901 – May 13, 1904, Vital Ojalvo to David J. Hill, 1901, September 3, No. 166, p. 1.
[2] The National Archives and Records Service, Despatches from United States Consuls in Erzerum, 1895-1904, Roll 2, Vol. 2, January 26, 1901 – May 13, 1904, Vital Ojalvo to David J. Hill, 1901, September 3, No. 167, p. 1.
[3] The National Archives and Records Service, Despatches from United States Consuls in Erzerum, 1895-1904, Roll 2, Vol. 2, January 26, 1901 – May 13, 1904, Leo Bergholz to David J. Hill, 1901, November 16, No. 173, p. 1.

դավադրություն գործելու մեղադրանքով: Կինն ութը տարի աշխատել էր Մուշի ամերիկյան դպրոցում, երբ 1898 թ. մարտին ոստիկանությունը խուզարկել էր իր տունը և հայտնաբերել իր մոտ ներկայիս Էջմիածնի կաթողիկոսի կողմից շուրջ երեսուն տարի առաջ գրված Հայաստանի մասին մի բանաստեղծություն: Նրան բանտարկել էին չորս ամիս ժամկետով և ազատել վճռաբեկ դատարանի որոշմամբ, սակայն 1901 թ. մարտին Կոստանդնուպոլսի իշխանությունները նորից վերաբացել էին գործը, ազատել աշխատանքից դատավորին և նրա պաշտպանին՝ կնոջը ազատելու համար և նոր դատ բացել նրա դեմ: Այս անգամ նա մեղադրվում էր քրեական օրենքի 54-րդ հոդվածով, որի արդյունքում նա դատապարտվել էր հինգը տարի բանտարկության: Ըստ հյուպատոսի՝ իշխանությունները սխալմամբ խառնել էին նրա կամ նրա ամուսնու՝ եկեղեցական Գաբրիելյանի անունը հայ հեղափոխականի անվան հետ: Հյուպատոսը դիմում էր պետքարտուղարությանը հետևյալ առաջարկով՝ հանձնարարել Կոստանդնուպոլսում ԱՄՆ-ի ներկայացուցչությանը դիմել Բարձր Դռանը կամ անձամբ սուլթանին՝ գործը կարճելու նպատակով:[1]

1902 թ. ապրիլի 12-ին Բերգհոլցը զեկուցում էր Հիլլին, որ նամակ էր ստացել Բիթլիսի ամերիկյան առաքելության պատվելի Ռ. Մ. Քոլից, որում վերջինս բողոքում էր Բիթլիսի իշխանություններից, որոնք թույլտվություն չէին տալիս, որպեսզի միսիոներներն օգնություն ցուցաբերեն Մուշի դաշտավայրի Մոկունք գյուղի բնակիչներին: Ըստ հյուպատոսի՝ գյուղի պատմությունը հետևյալն էր. 1901 թ. մայիսին Մոկունքի գյուղացիները սպանել էին Մուշի երկու թուրք կլաններից մեկի ղեկավար Շերիֆ-աղային՝ գյուղի երիտասարդ աղջիկներին բռնաբարելու համար: Դրա արդյունքում գյուղի գրեթե ամբողջ տղամարդ բնակչությունը՝ շուրջ 60 հոգի, ձերբակալվել էին: Նրանցից 15-ը սպանվել էին բանտում, իսկ մնացածը՝ դատապարտվել 10-15 տարվա բանտարկության: Կլանի անդամներն ավերեցին և հրդեհեցին 30 տուն: Քանի որ գյուղացիների մեծամասնությունը բողոքական էին, պատվելի Քոլը դիմել էր Բիթլիսի նահանգապետին՝ բնակչությանը օգնություն տրամադրելու համար: Կոստանդնուպոլսից պատասխան էր ստացվել, որ գյուղացիներին օգնություն կարող են տրամադրել միայն տեղական իշխանությունները, այն էլ որպես վարկ՝ հացահատիկի տեսքով մյուս տարվա բերքի հաշվին: Քոլը դիմում էր հյուպատոսությանը, որպեսզի վերջինս դիմի

[1] The National Archives and Records Service, Despatches from United States Consuls in Erzerum, 1895-1904, Roll 2, Vol. 2, January 26, 1901 – May 13, 1904, Leo Bergholz to David J. Hill, 1902, January 17, No. 176, pp. 1-3.

իշխանություններին՝ գյուղում մնացած կանանց և երեխաներին օգնություն տրամադրելու թույլտվություն ստանալու համար:[1]

Ապրիլի 12-ին Բերգհոլցը հաղորդում էր Հիլլին, որ պատվելի Քոլը դիմել էր «Ամերիկյան խորհուրդի» քարտուղար Ջեյմս Բարտոնին, որպեսզի վերջինս դիմի պետքարտուղարությանը՝ Բիթլիսի և Վանի նահանգների համար Բիթլիսում ԱՄՆ-ի հյուպատոս նշանակելու խնդրանքով: Ըստ Բերգհոլցի՝ դա պայմանավորված էր նրանով, որ Բիթլիսում Մեծ Բրիտանիայի փոխհյուպատոս Ֆրիմանը նշանակվել էր նույն պաշտոնին Դիարբեքիրում, իսկ բրիտանական կառավարությունն այլևս մտադրություն չուներ այդ քաղաքում պահել հյուպատոսական գործակալ: Քոլը նման բովանդակությամբ նամակ էր գրել Բերգհոլցին՝ հայցելով նաև հյուպատոսության միջամտությունն այդ հարցում:[2]

Բերգհոլցը զեկուցում էր պետքարտուղարի տեղակալ Հիլլին, որ Էրզրումի, Վանի և Տրաբզոնի նահանգներում գործող 35 ամերիկյան դպրոցներից միայն 7-ը կարելի էր իրավական առումով համարել որպես միսիոներական դպրոցներ, քանի որ նրանք ունեին տեղական իշխանությունների կողմից «Ամերիկյան խորհուրդի» անդամին տրված հատուկ թույլտվություն: Մնացած 28 դպրոցների թույլտվությունը տրվել էր օսմանյան հպատակներին՝ տեղի բողոքական համայնքի անդամների անունով: Այսպիսով՝ այդ դպրոցները համարվում էին օսմանյան դպրոցներ, թեև մասամբ ֆինանսավորվում էին միսիոներական միջոցներով:

Նամակին կից ներկայացվում էր տեղեկատվություն՝ նշված նահանգներում գործող միսիոներական առաքելությունների և դպրոցների մասին:

Ըստ այդ տեղեկանքի՝ Էրզրումում գործում էր «Ամերիկյան խորհուրդի» գլխակայանը և երկու դպրոց, Երզնկայում՝ երկու դպրոց, ևս ութ դպրոցներ՝ տարբեր գյուղերում: Էրզրումում ուսուցիչներն ամերիկացիներ և հայեր էին, իսկ մյուս դպրոցներում՝ միայն հայեր:

Վանում գործում էր երկու կազմակերպություն՝ «Ամերիկյան խորհուրդի» առաքելությունը և «Ամերիկյան պրեսբիտերական առաքելությունը» (American Presbyterian Mission): Նահանգում գործում էր հինգ դպրոց, որոնցից չորսը՝ Վան քաղաքում:

Տրաբզոնում գործում էր մեկ կազմակերպություն՝ «Ամերիկյան խորհուրդի» առաքելությունը՝ իր 16 կայաններով և 17 դպրոցներով: Տրաբզո-

[1] The National Archives and Records Service, Despatches from United States Consuls in Erzerum, 1895-1904, Roll 2, Vol. 2, January 26, 1901 – May 13, 1904, Leo Bergholz to David J. Hill, 1902, April 12, pp. 1-3.
[2] Նույն տեղում, էջ 1:

նում ուսուցանում էին ամերիկացիներ և հայեր, իսկ մյուս տեղերում՝ հույներ և հայեր:[1]

Օգոստոսի 8-ին Բերգհոլցը հաղորդում էր Հիլլին, որ, Բոստոնից ստացված Սամյուել Բարրոուզի և Հայկական համայքային խորհրդի տեղեկատվության համաձայն, Մուշի հայերին նոր կոտորածների վտանգ էր սպառնում: Հյուպատոսն այդ առիթով հարցումներ էր արել Մուշի շրջանի հայ բոլորքաններից և ստացված տեղեկությունների հիման վրա եզրակացրել, որ թեև Բոստոնից ստացված նամակներում նշված փաստերը հիմնականում համապատասխանում էին իրականությանը, սակայն նման վտանգ հայ բնակչությանը չէր սպառնում: Նա ճշմարիտ էր համարում այն փաստը, որ շուրջ երեք հազար մահմեդական ընտանիքների, այդ թվում՝ մեծ թվով չերքեզների, որոնք վերջերս տեղափոխվել կամ արտաքսվել են Ռուսաստանից, օսմանյան կառավարությունը ցանկանում էր բնակեցնել Մուշի հարթավայրի հայկական գյուղերում կամ տրամադրել նրանց հողատարածքներ՝ գյուղեր կառուցելու նպատակով: Ներկայումս այդ մարդիկ գտնվում էին Բասենի հարթավայրում: Ճշմարտություն էր նաև, որ մեծ թվով քոչվոր քրդեր ամեն տարի գաղթում էին հարավից իրենց հոտերով, «որոնց ձեռքում հայերն անկասկած տառապում էին»: Սակայն տարեվերջին նրանք կրկին վերադառնում էին իրենց ձմեռվա արոտավայրերը: Նույնպես ճշմարտություն էր, որ այս շրջանի կայազորներն ուժեղացվել էին 1895 թ. ջարդերից հետո, որի նպատակն էր, ըստ հյուպատոսի, կանխարգելել քրդերի ապստամբությունը կառավարության դեմ: Դրա մյուս նպատակը Ռուսաստանի կողմից ռուսահայերից կազմված հեղափոխական ջոկատների հնարավոր ներխուժումներից պաշտպանությունն էր, ինչպես նաև հայկական գյուղերի թալանի կանխարգելումը:

Ըստ հյուպատոսի՝ ներկայումս Մուշի շրջանում խաղաղություն էր տիրում: Դրա մասին վկայում էին նաև միսիոներներն ու բրիտանական փոխհյուպատոսը Բիթլիսում: Հնարավոր է, որ կառավարության որոշումը մահմեդականներին այստեղ բնակեցնելու վերաբերյալ կարող էր դիմադրություն ստեղծել հայերի շրջանում: Հյուպատոսը շարունակում էր, որ քիչ հավանական էր ներկայիս պայմաններում «հայերի համատարած ջարդը Քրդստանում» կամ երկրի այլ շրջաններում, քանի որ կառավարությունը «եկամուտի հսկայական կորուստ էր» ունեցել 1895 թ.-ին՝ այն ժամանակ, երբ սպանվել էր 100 հազար հայ, իսկ 50 հազարը գաղթել էին երկրից: Բերգհոլցը գրում էր, որ Բիթլիսում և Վանում գտնվող ամերիկյան առաքելություններին որևէ վտանգ չէր սպառնում: Հյուպատոսն առաջարկել էր միսիոներներին վտանգի պարագայում անմիջապես հայտնել հյուպատոսությանը՝ իշխանություններին դիմելու համար: Ինչպես Բիթլիսում, այնպես էլ Վանում գործում էին բրիտանական փոխհյուպատոսներ, որոնց ներկայությունը նույնպես կարևոր երաշխիք էր ամերիկացիների և ամերիկյան շահերի անվտանգության ապահովման համար:[1]

Սեպտեմբերի 9-ին Բերգհոլցը գրում էր Հիլլին, որ նախորդ իր զեկուցագրում սխալվել էր Օսմանյան կայսրություն գաղթած չերքեզների թվաքանակի վերաբերյալ: Իրականում դրանց թիվը 3 հազար էր, շուրջ 500 ընտանիք, այլ ոչ թե 300 ընտանիք: Նահանգապետը տեղեկացրել էր հյուպատոսին, որ նրանցից 50 ընտանիքներ ուղարկվել էին Բիթլիս, որի նահանգապետը գրել էր, որ կարող է ևս 100 ընտանիք ապահովել հողատարածքով, որտեղ նրանք կարող են կառուցել տներ: Մնացյալ 350 ընտանիքների բախտը ներկայումս կախված էր Կոստանդնուպոլսի որոշումից: Ըստ նահանգապետի՝ ո՛չ Էրզրումում, ո՛չ էլ Վանում նրանց տեղավորելու հնարավորություն չկար: Նա հնարավոր էր համարում, որ նրանց կբնակեցնեն Սիրիայում՝ Դամասկոս-Մեքքա երկաթգծի երկայնքով:[2]

1903 թ. փետրվարի 2-ին պետքարտուղար Հեյը գրում էր Օսմանյան կայսրությունում նորանշանակ արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարար Ջոն Լայշմանին[3], որ վերջերս մի շարք հայտնի քաղաքացիներից կազմված պատվիրակություններ են այցելել նախագահ Թեոդոր Ռուզվելտին և իրենց մտահոգությունը հայտնել Օսմանյան կայսրությունում գործող ամերիկյան կրթական և կրոնական կազմակերպությունների դժվարությունների մասին: Նախագահի ցուցումով Հեյը հանձնարարում էր հանդիպել սուլթանի հետ, հայտնել իր «անկեղծ ցանկությունը, զարգացնել և պահպանել բարեկամության ամենաջերմ հարաբերությունները», որից հետո սուլթանի ուշադրությունը հրավիրել ամերիկյան կազմակերպությունների դժվարություններին՝ հույս հայտնելով, որ վերջինս քայլեր կձեռնարկի խնդիրների լուծման ուղղությամբ: Բացի դրանից՝ նախագահն ակնկալում էր, որ սուլթանն ԱՄՆ-ի քաղաքացիներին և հաստատություններին կշնորհի նույն երաշխիքներն ու արտոնությունները, որոնք տրվել էին Ֆրանսիային 1901 թ. նոյեմբերին: Նույնպիսի իրավունքներ էին ստացել դրանից հետո

[1] The National Archives and Records Service, Despatches from United States Consuls in Erzerum, 1895-1904, Roll 2, Vol. 2, January 26, 1901 – May 13, 1904, Leo Bergholz to David J. Hill, 1902, April 21, pp. 1-6.

[1] The National Archives and Records Service, Despatches from United States Consuls in Erzerum, 1895-1904, Roll 2, Vol. 2, January 26, 1901 – May 13, 1904, Leo Bergholz to David J. Hill, 1902, August 8, No. 199, pp. 1-5.

[2] The National Archives and Records Service, Despatches from United States Consuls in Erzerum, 1895-1904, Roll 2, Vol. 2, January 26, 1901 – May 13, 1904, Leo Bergholz to David J. Hill, 1902, September 9, p. 1.

[3] Ջոն Լայշման (1857-1924) - ԱՄՆ-ի գործարար և դիվանագետ, դեսպան Շվեյցարիայում (1897-1901), արտակարգ դեսպանորդ և նախարար (1901-1906), այնուհետև դեսպան Օսմանյան կայսրությունում (1906-1909), Գերմանիայում (1911-1913):

նաև Ռուսաստանը, Գերմանիան և Իտալիան: Նախագահ Ռուզվելտը չէր կարող նույնիսկ պատկերացնել, որ սուլթանը կարող էր «հրաժարվել» ԱՄՆ-ին նույնպիսի վերաբերմունքի արժանացնելուց: Հեյը հանձնարարում էր նաև պահանջել սուլթանից Բեյրութի բողոքական բժշկական քոլեջին տրամադրել նույն իրավունքները (կապված քննությունների և շրջանավարտների աշխատանքի ընդունման հետ), որոնք տրվել էին Բեյրութի ֆրանսիական բժշկական դպրոցին:[1]

Փետվարի 3-ին Լայշմանը հեռագրում էր Հեյին, որ պետքարտուղարի բարձրացված հարցերը քննարկել էր արտաքին գործերի նախարարի հետ, որը զրույցի ընթացքում նշել էր, որ «ամբողջությամբ ընդունում է պահանջների արդարությունն ու պատճառները» և խոստանում մեկ շաբաթվա ընթացքում տալ պատասխան բարձրացված հարցին:[2]

Փետրվարի 10-ին Լայշմանը գրում էր Հեյին, որ չի կարողացել կատարել պետքարտուղարության հանձնարարականը, քանի որ մի քանի անգամ դիմել էր արտաքին գործերի նախարարությանը սուլթանի հետ հանդիպում կազմակերպելու համար, սակայն որևէ պատասխան դեռևս չէր ստացել: Ըստ դիվանագետի՝ նախարարը չէր կարողացել ապահովել իր հանդիպումը սուլթանի հետ, քանի որ վերջինս զբաղված էր ներքին խնդիրներով՝ կայսրությունում տիրող ծանր իրավիճակով և հեղափոխական տրամադրություններով, մասնավորապես Մակեդոնիայում, որտեղ իրավիճակն իրապես կրիտիկական էր: Լայշմանին պատասխանել էին, որ սուլթանն իրականում այլ խնդիրներով զբաղվելու ժամանակ չունի. նա նույնիսկ չի կարողանում ժամանակ գտնել զբոսանքի համար: Նրա կարծիքով՝ օսմանյան կառավարությունը համարում էր Միացյալ Նահանգները «մեծ և ուժեղ երկիր», որը հնարավորություններ ունի հասնելու իր առջև դրված նպատակներին և խուսափելու է ԱՄՆ-ի կառավարության հետ որևէ «լուրջ բախումից»:[3]

Փետրվարի 13-ին Լայշմանը հեռագրում էր Հեյին, որ Բարձր Դռան կողմից տեղեկություն էր ստացել առ այն, որ Բեյրութի դպրոցի խնդիրը լուծված է, քանի որ ֆիրմանն ուղարկվել էր սուլթանական պալատ ստորագրման, սակայն քանի որ սովորաբար խոստումները նախկինում երկար ժամանակ մնում էին անկատար, նա երաշխավորված չէր տեղեկացնելու, որ հարցն ամբողջությամբ լուծվել էր, քանի դեռ ձեռքի տակ դեռևս չուներ համապատասխան պաշտոնական փաստաթուղթն այդ մասին: Արտաքին գործերի նախարարն ասել էր Լայշմանին, որ «ընդհանուր դպրոցական

[1] US Department of State. Papers relating to the Foreign Relations of the United States, with the Annual Message of the President transmitted to Congress, December 7, 1903, Washington: Government Printing Office, 1904, p. 735.
[2] Նույն տեղում, էջ 736:
[3] Նույն տեղում, էջ 738:

խնդիրը» քննարկվել էր պետական խորհրդի կողմից, և ամերիկացի դիվանագետից հայցել էր դպրոցների մանրամասն ցանկը: Համարելով, որ նման ցանկի առկայությունը կարող էր էլ ավելի ձգձգել հարցի վերջնական լուծումը՝ վերջինս նման ցուցակ չէր պատրաստել և ասել էր նախարարին, որ ամերիկյան կառավարությունը ցանկանում և սպասում էր, որ ամերիկյան կրթական, բարեգործական ու կրոնական բոլոր հաստատություններին Օսմանյան կայսրությունում կշնորհվեն նույն իրավունքները, արտոնություններն ու իմունիտետները, որոնք արդեն իսկ շնորհված էին այլ պետությունների նման հաստատություններին: Ընդհանուր սկզբունքի կիրառումը Լայշմանը համարել էր շատ ավելի կարևոր, քան մասնավոր ֆիրմանների ստորագրումն այս կամ այն հաստատության համար:[1]

Նույն օրը Լայշմանը գրում էր Հեյին, որ, ստացված տեղեկությունների համաձայն, բրիտանական կառավարությունը մեծ ճնշում չէր գործադրել Բարձր Դռան վրա՝ դպրոցների իրավունքների և արտոնությունների հարցը լուծելու համար: Բրիտանական դեսպանությունը ութ ամիս էր սպասել, մինչև որ Բարձր Դուռը պատասխանել էր հայտագրին, որին կցված էր բրիտանական կրթական և կրոնական հաստատությունների ցանկը, որը շատ ավելի կարճ էր, քան ամերիկյան նման հաստատությունների թիվը: Բրիտանացիները, ըստ Լայշմանի, ներկայացրել էին իրենց հայտագիրը 1902 թ. հունիսի սկզբին և ստացել պատասխանը 1903 թ. հունվարի վերջին, երբ ամերիկյան ներկայացուցչության հայտագիրը ներկայացվել էր 1902 թ. սեպտեմբերի 2-ին, այսինքն՝ մոտ հինգ ամիս առաջ, որն այնքան էլ երկար ժամանակ չէր՝ հաշվի առնելով խնդրի կարևորությունը: Լայշմանն առաջարկում էր մեծ ճնշում չգործադրել Բարձր Դռան վրա և չփորձել հարցը լուծել սուլթանի ուղիղ միջամտության ճանապարհով, որը կարող էր հնարավոր բարդությունների պատճառ հանդիսանալ:

Նույն զեկուցագրում Լայշմանը գրում էր, որ իրավիճակը Մակեդոնիայում ճգնաժամային էր, սակայն այնքան էլ տագնապալի չէր: Օսմանյան բանակը Մակեդոնիայում գտնվում էր բարձր կարգի պատրաստվածության կարգավիճակում, սակայն այն տեղեկատվությունը, թե իբր ընդհանուր զորահավաք էր հայտարարված, և բանակը գտնվում էր նախապատերազմական պատրաստվածության մեջ, իրականությանը չէր համապատասխանում: Հնարավոր է, որ գարնանը մարտական գործողություններ սկսվեն Մակեդոնիայի հեղափոխականների և նրանց բուլղարացի համակրողների հետ, որը կարող էր բախման առիթ դառնալ Բուլղարիայի և Թուրքիայի միջև:[2]

[1] Նույն տեղում, էջ 739:
[2] Նույն տեղում, էջ 740-741:

Մարտի 1-ին Լայշմանը հեռագրում էր Հեյին, որ փետրվարի 16-ին հանդիպում էր խնդրել սուլթանի հետ, սակայն որևէ լուր այդպես էր չէր ստացել: Նա հանդիպել էր արտաքին գործերի նախարարի հետ և ասել նրան, որ ԱՄՆ-ի նախագահի ուղերձը սուլթանին փոխանցելու համար հանդիպման ձգձգումն անհասկանալի էր ամերիկյան կողմի համար և ստեղծել էր բավականին լուրջ իրավիճակ: Սակայն, մյուս կողմից, Լայշմանը հասկանալի էր համարում օսմանյան կողմի նման պահվածքը, որը կարող էր կապված լինել Մակեդոնական հարցի բարդությունների հետ: Այդ օրերին տերությունները Բարձր Դռանը պահանջ էին ներկայացրել Մակեդոնիայում բարեփոխումներ իրագործելու վերաբերյալ: Դեսպանորդը գրում էր, որ սուլթանի հետ հանդիպումը շատ հազվադեպ էր կազմակերպվում նույնիսկ դեսպանի համար, այն էլ միայն ուրբաթ օրերը՝ Սելամլիկի արարողությունից անմիջապես հետո:[1]

Երկու օր անց Հեյը հանձնարարում էր Լայշմանին անմիջապես հանդիպել արտաքին գործերի նախարարի հետ և պահանջել հանդիպում սուլթանի հետ՝ ԱՄՆ-ի նախագահի ուղերձը փոխանցելու նպատակով: Եթե երեք օրվա ընթացքում հանդիպում չնշանակվի, շարունակում էր Հեյը, դեսպանորդն այդ մասին պետք է տեղեկացնի իր կառավարությանը և արդեն գործի որոշակի հրահանգների համաձայն: Անմիջապես հաջորդ օրը Լայշմանը հանդիպել էր արտաքին գործերի նախարարի հետ և փոխանցել պետքարտուղարության դիրքորոշումը: Դիվանագետը հեռագրում էր Հեյին, որ, հավաստի աղբյուրների համաձայն, դպրոցական խնդիրն արդեն ստացել էր իր լուծումը, և որ մի քանի օրվա ընթացքում համապատասխան պաշտոնական փաստաթղթերը պատրաստ կլինեն:[2]

Մարտի 21-ին Էրզրումում փոխհյուպատոս՝ Վիտալ Օջալվոն գրում էր պետքարտուղարի տեղակալ Ֆրենսիս Լումիսին, որ, Վանից ստացված տեղեկությունների համաձայն, հայ հեղափոխականները շատ ակտիվ են այդ շրջանում, և գնալով շարժումը զգալի տարածում է գտնում: Ըստ փոխհյուպատոսի, կասկած չկար, որ «մակեդոնացիների հանդեպ Եվրոպայում գոյություն ունեցող համակրանքի և Հայկական հարցի լուծման մասին ոչինչ չխոսվելու արդյունքում այս տարվա ընթացքում յուրաքանչյուր պահի կարող է ծագել ընդհանուր բախում»: Մի քանի օր առաջ Վանի նահանգապետը տեղեկություն էր ստացել այն մասին, որ մի խումբ հայ հեղափոխականներ են թաքնվել մեկ տան մեջ: Տունը շրջապատած ոստիկանները կարողացել էին ձերբակալել մեկ հոգու, մնացած 6-9 հոգուն հաջողվել էր փոխհրաձգությունից հետո փախչել: Դեպքից հետո հեղափոխականներից մեկը շու-

[1] Նույն տեղում, էջ 744:
[2] Նույն տեղում, էջ 745:

կայում դաշույնով սպանել էր մատնիչին: Մեծ թվով ձերբակալություններ էին տեղի ունեցել քաղաքում, ինչն անհագստություն էր առաջացրել բնակչության շրջանում: Ոստիկանությունը խուզարկել էր նաև Վանի ամերիկյան միսիոներների առաքելության շենքը՝ նպատակ ունենալով ձերբակալել միսիոներ Ռեյնոլդզի աշխատողներին, որոնք կասկածվում էին հեղափոխական շարժման հետ կապեր ունենալու մեջ:

Այդ կապակցությամբ Օջալվոն նամակ էր գրել Վանում Մեծ Բրիտանիայի փոխհյուպատոս Ջ. Ի. Թայրելին՝ խնդրելով նրան «բարեկամաբար» դիմել նահանգապետին՝ ամերիկյան առաքելության շենքում անօրինական խուզարկություններ անցկացնելու համար ոստիկանության ղեկավարին պատժելու պահանջով:[1]

1903 թ. ապրիլի 18-ին Օջալվոն զեկուցում էր Լումիսին, որ հեղափոխական շարժումը Վանում գնալով ավելի վատ հետևանքներ էր սկսել ունենալ: Մի քանի օր առաջ, ըստ փոխհյուպատոսի, հեղափոխական մի ջոկատ էր հայտնվել քաղաքում և մարտի բռնվել ոստիկանության հետ: Արդյունքում սպանվել էին ոստիկանության ղեկավարն ու երկու հեղափոխական: Բնակչությունը փակել էր խանութները, սակայն երեք օր անց բացել, քանի որ ստացել էր նահանգապետի խոստումները նրանց պաշտպանությունն ապահովելու համար: Շրջանի մի շարք միսիոներական կայանների ներկայացուցիչներ որոշել էին հավաք կազմակերպել Վանում, սակայն փոխհյուպատոսը գտնում էր, որ ներկայումս ապահով չէ որևէ հանդիպում կազմակերպել քաղաքում և խորհուրդ էր տալիս պետքարտուղարությանը զգուշացնել Բոստոնի միսիոներական խորհրդին խուսափել նման հանդիպման կազմակերպումից:[2]

Ապրիլի 21-ին Օջալվոն գրում էր Լումիսին, որ, ստացված տեղեկությունների համաձայն, հեղափոխականները մտադրվել էին հարձակվել և գրավել Վանի ամերիկյան միսիոներական առաքելության շենքը՝ օսմանյան կառավարության ուշադրությունը հրավիրելու նպատակով: Ըստ փոխհյուպատոսի՝ վալին համապատասխան միջոցներ էր ձեռնարկել ամերիկյան ունեցվածքի հանդեպ ոտնձգությունը կանխելու նպատակով: Ռուսաստանից ժամանած մարդիկ տեղեկացրել էին փոխհյուպատոսին, որ այնտեղ գործող «կոմիտեն» մարդկանց էր ցուցակագրում՝ Թուրքիայի սահմանն անցնելու և Հայկական հարցի համար պայքարելու նպատակով՝ վճարելով

[1] The National Archives and Records Service, Despatches from United States Consuls in Erzerum, 1895-1904, Roll 2, Vol. 2, January 26, 1901 – May 13, 1904, Vital Ojalvo to Francis B. Loomis, 1903, March 21, No. 211, pp. 1-2.
[2] The National Archives and Records Service, Despatches from United States Consuls in Erzerum, 1895-1904, Roll 2, Vol. 2, January 26, 1901 – May 13, 1904, Vital Ojalvo to Francis B. Loomis, 1903, April 18, No. 213, p. 1.

նրանց ամսական 50 ռուբլի: Ըստ նույն աղբյուրի՝ շատ ռուսներ էին ցուցակագրվել այդ գործի համար: Փոխհյուպատոսն առաջարկել էր պետքարտուղարությանը դիմել տեղի իշխանություններին՝ ամերիկյան շինությունների պաշտպանության նպատակով պահակակետեր տեղադրելու համար:[1]

Մայիսի 2-ին Օջալվոն զեկուցում էր ապրիլի 29-ին Բիթլիսի շրջանի Մանազկերտ գավառում տեղի ունեցած ուժեղ երկրաշարժի մասին, որի արդյունքում մահացել էր 520 բնակիչ: Մանազկերտ քաղաքը գտնվում էր փլատակների մեջ: Գավառում կար 500 տուն՝ 1700 բնակչությամբ: Ըստ փոխհյուպատոսի՝ երկրաշարժը զգացվել էր նաև Էրզրումում:[2]

Հունիսի 10-ին Լայշմանը հայտագիր էր ներկայացրել Բարձր Դռանը երեք անհապաղ լուծում պահանջող խնդիրների շուրջ: Առաջին խնդիրը վերաբերում էր պատվելի Շիշմանյանի գործին: Շիշմանյանն օսմանյան ծագում ունեցող, մինչև 1869 թ. ամերիկյան հպատակություն ստացած, օսմանյան կառավարության կողմից ճանաչված ԱՄՆ-ի քաղաքացի էր: Չնայած այս հանգամանքին՝ Շիշմանյանի քաղաքացիությունը մի քանի անգամ կասկածի տակ էր առնվել Խարբերդի և Դիարբեքիրի վիլայեթներում: Շուրջ վեց շաբաթ առաջ, երբ Շիշմանյանը մեկնել էր շրջանի եկեղեցիներն ու դպրոցները ստուգելու, Դիարբեքիրում նրան թույլ չէին տվել շարունակել իր առաքելությունն ու պահել էին կալանքի տակ: Չնայած նրան, գրում էր Լայշմանը, որ ինքն անմիջապես դիմել էր այդ հարցով արտաքին գործերի նախարարին, որը խոստացել էր համապատասխան հրահանգ տալ Դիարբեքիրի վալիին այդ կապակցությամբ, հարցն իր լուծումն առայժմ չէր ստացել: Ավելին, վալին հայտարարել էր, որ հրահանգ էր ստացել ներքին գործերի նախարարությունից այն մասին, որ Շիշմանյանը կապված է եղել Գում Գափույում ունեցած դեպքերի հետ և նրան արգելվում էր շարունակել իր ճանապարհը: Շիշմանյանը բացառել էր նման կապը: Եթե ապացուցվի, որ Շիշմանյանն ինչ-որ կերպ կապված է հայ հեղափոխական շարժման հետ, և որ իր ներկայությունը վնասակար է օսմանյան կառավարության շահերին, ներկայացուցչությունը կառաջարկի նրան մեկնել երկրից: Սակայն մինչև նրա մեղավորությունն ապացուցված չէր, նրան պետք է հնարավորություն տրվեր շարունակել իր առաքելությունը:

Երկրորդ դեպքն օսմանյան ծագում ունեցող, ԱՄՆ-ում հպատակություն ստացած Աբդուլ Կադեր Մեթանիի գործն էր, որը ժամանակին բան-

[1] The National Archives and Records Service, Despatches from United States Consuls in Erzerum, 1895-1904, Roll 2, Vol. 2, January 26, 1901 – May 13, 1904, Vital Ojalvo to Francis B. Loomis, 1903, April 21, No. 214, p. 1

[2] The National Archives and Records Service, Despatches from United States Consuls in Erzerum, 1895-1904, Roll 2, Vol. 2, January 26, 1901 – May 13, 1904, Vital Ojalvo to Francis B. Loomis, 1903, May 7, p. 1

տարկվել էր Զմյուռնիայի ամերիկյան հյուպատոսի կողմից՝ Տրիպոլիում ոմն կնոջ վիրավորանք հասցնելու համար, սակայն դուրս գալուն պես ձերբակալվել էր թուրքական իշխանությունների կողմից և երեք տարի ժամկետով տարվել թուրքական բանտ: Չնայած Զմյուռնիայում ԱՄՆ-ի հյուպատոսի բազմաթիվ բողոքներին՝ տեղական իշխանությունները հրաժարվում էին ազատել նրան բանտից:

Երրորդը տիկին Սուլուկջյանի դեպքն էր: Նրա ամուսինն ամերիկյան հպատակություն էր ստացել և բնակվում էր ԱՄՆ-ում: Սուլթանը թույլտվություն էր տվել, որպեսզի տիկին Սուլուկջյանը մեկնի ԱՄՆ՝ իր ամուսնու մոտ, սակայն, չնայած արտաքին գործերի նախարարության հավաստիացումներին, որ համապատասխան փաստաթղթեր են ներկայացվել տեղական իշխանություններին, Սամսունի վալին արգելում էր նրա ճամփորդությունը:

Լայշմանը պահանջում էր արտաքին գործերի նախարարությունից անհապաղ լուծում տալ ներկայացված հարցերին:[1]

Հունիսի 25-ին Լայշմանը գրում էր Հեյին, որ սուլթանի հետ վերջապես տեղի ունեցած հանդիպումից մի քանի օրից հետո արտաքին գործերի նախարարը տեղեկացնում էր, որ սուլթանը իրադե է ստորագրել, որի համաձայն՝ նա հրահանգել էր Բարձր Դռանը շուտափույթ կերպով լուծում տալ դպրոցների խնդրին: Ըստ դեսպանորդի՝ որևէ առարկություն կամ հարց չէր բարձրացվել այս ընթացքում մեծ վեզիրի կամ արտաքին գործերի նախարարի կողմից: Նրանք միայն հավաստիացնում էին, որ ուշացման պատճառն այն էր, որ մինչև հարցի վերջնական լուծումը կառավարության կողմից հսկայածավալ աշխատանք պետք է տարվեր կայսրության ողջ տարածքով ցրված ամերիկյան հաստատությունների ուսումնասիրության ուղղությամբ:[2]

Օգոստոսի 15-ին Լայշմանը գրում էր, որ քաղաքական իրավիճակը Մակեդոնիայում ավելի էր վատթարացել հեղափոխական շարժման ծավալման հետևանքով: Հեղափոխականների կողմից կատարվող բռնությունները շատ ավելի «բարբարոսական» էին դարձել, հեղափոխական խմբավորումների քանակը շարունակում էր աճել: Դեսպանորդը չէր բացառում ջարդերի և դրա հետևանքով եվրոպական տերությունների միջամտությունը:

Այդ կապակցությամբ նա նշում էր, որ Հայաստանից ստացվող զեկույցներն անհանգստացնող էին, սակայն եթե այնտեղ համակրանքի ընդվզում սկսվեր, նա չէր կարծում, որ այն ստանալու էր համատարած բնույթ ունեցող ապստամբություն, այլ կսահմափակվեր առանձին տեղե-

[1] US Department of State. Papers relating to the Foreign Relations of the United States, with the Annual Message of the President transmitted to Congress, December 7, 1903, Washington: Government Printing Office, 1904, pp. 755-756.

[2] Նույն տեղում, էջ 757.

ռում տեղի ունեցող դեպքերով: Ըստ Լայշմանի՝ այդ դեպքերին,. առանց կասկածի, հետևելու էին թուրքական պատժամիջոցները, սակայն նա համամիտ չէր շատերի հետ, որ 1896 թ. կոտորածների կրկնությունն անխուսափելի էր: Դեսպանորդի կարծիքով, թեև ԱՄՆ-ի քաղաքացիներին ներկայումս վտանգ չէր սպառնում, սակայն նա համարում էր, որ միսիոներները պետք է զգուշություն հանդես բերեն ինչպես Մակեդոնիայում, այնպես էլ Հայաստանում:[1]

Հոկտեմբերի 3-ին Վիտալ Օջալվոն գրում էր, որ հեղափոխական շարժումը բավականին ակտիվացել էր Մուշի շրջանում, հաճախակի էին դարձել Ռուսաստանից Թուրքիա ջոկատների անցումները: Հոկտեմբերի 1-ին տեղեկություն էր ստացվել, որ 90 հեղափոխականներից բաղկացած ջոկատ էր անցել սահմանը և մարտի բռնվել թուրք սահմանապահների հետ, որոնք սպանել էին նրանցից 30-ին: Թուրքերը կորցրել էին 6 զինվոր: Ըստ փոխհյուպատոսի՝ նահանգապետն իրեն տեղեկացրել էր, որ ջոկատը բաժանվել էր երեք մասի և գտնվում էր Թահիր Խոջայի մոտ ու մտադրված էր սպանել գյուղի բոլոր թուրք բնակիչներին, սակայն իշխանություններին հաջողվել էր կանխել կոտորածը: Ըստ նահանգապետի՝ հեղափոխականները շատ լավ զինված էին և նույնիսկ դինամիտ ունեին իրենց մոտ: Փոխհյուպատոսը տեղեկացվել էր նաև, որ ջոկատում կային նաև մի քանի ԱՄՆ-ի քաղաքացիներ:[2]

Համաձայն հոկտեմբերի 6-ի զեկուցագրի՝ հեղափոխականների հետ մարտի էին բռնվել Էրզրումից ժամանած երկու գումարտակներ: Արդյունքում հեղափոխականներից 23-ը սպանվել էին, 3-ը՝ բռնվել, 10-ն անցել էին ռուսական սահմանը, իսկ 20-ը՝ թաքնվել գյուղերում:[3]

Հոկտեմբերի 6-ին Լայշմանը նկարագրում էր Հեյին Մակեդոնիայում տեղի ունեցող իրադարձությունները: Նրա կարծիքով, քանի որ մոտալուտ ձմեռն ավելի էր բարդացնելու մարդկանց վիճակը շրջանում, նա առաջարկում էր քննարկել ամերիկյան ժողովրդի կողմից բարեգործական քայլերի ձեռնարկումը: Սակայն միևնույն ժամանակ նա առաջարկում էր հաշվի առնել այն հանգամանքը, որ քանի որ պատերազմական վիճակ դեռևս չկար, դժվար էր լինելու ապահովել ամերիկյան Կարմիր խաչի մասնակցությունը: Նա գրում էր, որ Մակեդոնիայում տիրող վիճակը տարբերվում էր 1896 թ. Հայաստանում տեղի ունեցած դեպքերից, երբ անմիջապես կոտորածներից

[1] Նույն տեղում, էջ 762:
[2] The National Archives and Records Service, Despatches from United States Consuls in Erzerum, 1895-1904, Roll 2, Vol 2, January 26, 1901 – May 13, 1904, Vital Ojalvo to Francis B. Loomis, 1903, October 3, No 221, p 1.
[3] The National Archives and Records Service, Despatches from United States Consuls in Erzerum, 1895-1904, Roll 2, Vol 2, January 26, 1901 – May 13, 1904, Vital Ojalvo to Francis B. Loomis, 1903, October 6, No 222, p 1.

հետո, երբ տուժել էր միայն մեկ կողմը, բրիտանական կառավարության պնդմամբ օսմանյան կառավարությունը թույլ էր տվել «Ամերիկյան կարմիր խաչին» մուտք գործել Օսմանյան կայսրություն: Ըստ Լայշմանի՝ Մակեդոնիայում տուժել էին հավասարապես բոլորը՝ բուլղարները, մահմեդականները, հույները, իսկ ապստամբական շարժումը դեռևս շարունակվում էր:[1]

Դեկտեմբերի 7-ին նախագահ Թեոդոր Ռուզվելտը Կոնգրեսին ներկայացված իր տարեկան ելույթում նշում էր, որ «մեր հարաբերությունները թուրքական կառավարության հետ շարունակում են մնալ բարեկամական. որոշ մեր դպրոցների և առաքելությունների նկատմամբ անարդար վերաբերմունքի վրա հիմնված մեր պահանջները ներկայումս գտնվում են բարյացակամ կարգավորման ընթացքում»:[2]

1904 թ. փետրվարի 4-ին Էրզրումում ԱՄՆ-ի հյուպատոսը զեկուցում էր պետքարտուղարի տեղակալ Ֆրենսիս Լումիսին, որ 1903 թ. ընթացքում օրինականությունն ու կարգ ու կանոնը վիլայեթում գտնվում էին «չափազանց անբավարար վիճակում»: 1902 թ. նախկին նահանգապետի հրաժարականից հետո վիլայեթում տիրում էր անօրինականություն: Ներկայիս նահանգապետ Մեհմեդ Ռեշադ բեյը շատ թույլ և անվճռական մի մարդ էր, որը զբաղեցնում էր նույն պաշտոնն Ալբանիայի Կոսովոյում, և որին հեռացրել էին այդ պաշտոնից Կոստանդնուպոլսում Ավստրիայի դեսպանության պահանջով: Նա շատ էր զիջում իր որակներով նախկին նահանգապետին, որն արժանացել էր բնակչության հարգանքին. իր վճռականության շնորհիվ նրանից վախենում էին հանցագործ տարրերը: Նրան հարգում էին նաև քրիստոնյաները: Նա կարողանում էր արդար որոշումներ ընդունել և խիզախություն ուներ նաև հակառակվելու Բարձր Դռանը: Ներկայիս նահանգապետը սիրված չէր նաև Բարձր Դռան կողմից: Դա ավելի էր դժվարեցրել իրավիճակը: Նա կոռումպացված էր, ինչը լավ պայմաններ էր ստեղծում հանցագործ տարրերի համար: Ըստ հյուպատոսի՝ «խաղաղությանն ու կայունությանը փոխարինել էին սպանությունները, բռնությունները, թալանն ու անարգանքն իշխանությունների հանդեպ»: 200-300-ի հասնող հանցագործների խումբ էր գործում նահանգում, որոնք անվախորեն հարձակվում էին գյուղերի և քաղաքների վրա: Ոստիկանությունը թույլ և անկարող էր պայքարելու հանցագործների դեմ, մանավանդ, որ ոստիկանության ղեկավարն ինքը հայտնի հանցագործ էր: Նույն վիճակում էր գտնվում նաև բանակը, որի հրամանատարը՝ գեներալ Համդի փաշան, հայտնի էր իր «մոլեռանդ գաղափարներով»:

[1] US Department of State. Papers relating to the Foreign Relations of the United States, with the Annual Message of the President transmitted to Congress, December 7, 1903, Washington: Government Printing Office, 1904, p. 766.
[2] Նույն տեղում, էջ XXI:

. Հյուպատոսը շարունակում էր, որ Բարձր դուռն արգելել էր հայերին ճամփորդել: Լուրեր էին շրջում, որ օսմանյան զորքերը մտադրված էին հարձակվել Սասունում գտնվող շուրջ հազար հեղափոխականների վրա, ինչը մեծ անհագստություն էր առաջացրել քրիստոնյա բնակչության շրջանում. նրանք վախենում էին՝ 1895 թ. կոտորածները կկրկնվեն: Թահսին փաշան, որը սուլթանի առաջին քարտուղարն էր, և որը որպես Բիթլիսի վալի ինքն էր կազմակերպել կոտորածը, մի քանի օր առաջ ուղարկվել էր սուլթանի կողմից քննություն անցկացնելու նպատակով և զեկուցելու շրջանում տիրող իրավիճակի մասին: Հյուպատոսի կարծիքով, որին համամիտ էին նաև մյուս պետությունների ներկայացուցիչները, Թահսին փաշան մտերիմ հարաբերություններ ուներ և ամեն կերպ աջակցում էր ներկայիս վալիին, ինչն անհնարին էր դարձնում բարենորոգումների իրականացումը նահանգում:[1]

Փետրվարի 29-ին միսիոներ Աշերը Վանից գրում էր Տրաբզոնում ԱՄՆ-ի հյուպատոս Սալլիվանին, որ իրավիճակը շրջանում շարունակում էր մնալ բարդ և այնպիսի տպավորություն էր, որ կարծես թե «մենք գտնվում ենք ակտիվ հրաբուխի գագաթին»: Ըստ Աշերի՝ որևէ կասկած չկար, որ Սասունի և Մուշի հայերի հանդեպ հարձակում էր նախապատրաստվում: Գոյություն ուներ զորքի մեծ կուտակում շրջանում, և Բիթլիսից ստացված գաղտնի հեռագրի համաձայն՝ «Մուշի հարթավայրում մեծ կոտորածի վտանգ գոյություն ունի»: Վանում իրավիճակը վերջերս խաղաղ և հանգիստ էր, սակայն մի քանի ամիս է, ինչ մտավախություն կար, որ գարնանն այստեղ «բավականին անհանգիստ ժամանակ է սպասվում»: Իշխանություններն այնպիսի «դաժան եռանդով» էին հարկ հավաքում, որ բանտերը լեցուն էին մարդկանցով, որոնք հրաժարվում էին տուրքեր վճարելուց: Զինվորները մարդկանցից վերջին հագուստն ու օրվա հացն էին առնում: Ընտանիքների հայրերին բանտ էին նետում և թողնում ընտանիքի անդամներին սովամահ լինել, քանի որ նրանք չէին կարողանում վճարել հարկերը: Իշխանությունները հարկ էին հավաքում նաև կոտորածների ժամանակ սպանվածների ազգականներից: Քանի որ զինվորները չէին վճարվում, նրանք նույնպես գտնվում էին ծանր վիճակում և ստիպված էին զբաղվել թալանով: Վերջերս 30 զինվոր փախել էին և անցել պարսկական սահմանը: 200 հոգանոց դասալիք զինվորների մի խումբ թալանում էր քաղաքը, վերջերս նրանք հարձակվել էին նույնիսկ զորքերի հրամանատարի տան վրա և ծեծի ենթարկել նրան ու նրա որդուն: Բոլոր քրդերը զինված էին, նրանց մոլեռանդությունն անցել էր ամեն չափը: Վալին շատ լավ մարդ էր և ամեն ինչ փորձում էր ա-

[1] The National Archives and Records Service, Despatches from United States Consuls in Erzerum, 1895-1904, Roll 2, Vol. 2, January 26, 1901 – May 13, 1904, US Consul to Francis B. Loomis, 1904, February 4, No. 5, pp. 1-5.

նել՝ իր հնարավորությունների սահմաններում հայերին օգնելու համար և դժվարությամբ էր դիմադրում Կոստանդնուպոլսի ու զինվորականության ցանկությունները: Համաձայն Աշերի տեղեկությունների՝ վալին հրահանգ էր ստացել Կոստանդնուպոլսից այն մասին, որ եթե հայերի հետ մի բան պատահի, որևէ արտասահմանցու չէր թույլատրվելու նրանց օգնել: Քանի որ միսիոներների մոտ, ըստ Աշերի, շուրջ 500 հայ էր աշխատում, ինչպես նաև որք երեխաներ, նրանց և միսիոներների անվտանգությունը կենսական նշանակություն ուներ: Ըստ միսիոների՝ իրենք բավականաչափ ցորենի պաշար ունեին, սակայն մարդիկ այստեղ անզեն էին և կարող չէին պաշտպանվել հարձակման դեպքում:[1]

1905 թ. սեպտեմբերի 26-ին Մամուրեթ ուլ-Ազիզում ամերիկյան փոխհյուպատոսի պաշտոնակատար Էռնեստ Ռիգզը գրում էր Կոստանդնուպոլսում գլխավոր հյուպատոս Չարլզ Դիկինսոնին, որ հայերի շրջանում վախի և անհանգստության տրամադրություններ էին տիրում, տեղեկություններ էին տարածվել Կեսարիայի և Սըվազի վիլայեթներում իբր տեղի ունեցած կոտորածների մասին: Մամուրեթ ուլ-Ազիզի վալին ասել էր ամերիկացի միսիոներ Հ. Ն. Բարնըմին, որ վախենում էր ոչ այնքան հայերից, որքան թուրքերից, որոնց կողմից անկարգությունների ստեղծման դեպքում չի կարողանալու վիճակը կարգավորել իր մոտ եղած ոստիկանների ուժերով: Ըստ Ռիգզի՝ վստահ կերպով կարելի էր սակայն ասել, որ վիլայեթում որևէ հեղափոխական գործունեություն գոյություն չուներ:[2]

Իր հաջորդ զեկուցագրում (4 հոկտեմբերի) Ռիգզը գրում էր, որ իրավիճակը շրջանում մնում էր անհանգիստ, միսիոներների տարբեր կայաններում աշխատող հայերը դիմում էին հյուպատոսություն՝ իրենց անվտանգությունն ապահովելու դիմումներով: Ոստիկանները շրջում էին գյուղերով, հավաքում այն հայերին, որոնք վերադարձել էին Միացյալ Նահանգներից և վտարում նրանց երկրից: Հյուպատոսությունը մշտապես տեղեկություններ էր ստանում գյուղերի վրա հարձակումների և թալանի մասին, զինվորների թիվն աճել էր երկու անգամ, թուրքերը նույնպես անհանգիստ էին, շատերը զինվում էին, մյուսները զգուշացնում էին իրենց հայ հարևաններին, որ վերջիններս նախապատրաստվեն գալիք իրադարձություններին դիմակայելու համար: Ըստ փոխհյուպատոսի՝ իրավիճակից օգտվում էին հարկահավաքները, որոնք հարկեր էին հավաքում ոչ միայն առկա հայերից, այլև պահան-

[1] The National Archives and Records Service, Despatches from United States Consuls in Constantinople, 1820-1906, Roll 24, Vol. 24, January 20, 1904 – August 11, 1906, Mr. Usser to Consul Sullivan, Van, Turkey, 1904, February 4, pp. 1-4.

[2] The National Archives and Records Service, Despatches from United States Consuls in Constantinople, 1820-1906, Roll 24, Vol. 24, January 20, 1904 – August 11, 1906, Ernest W. Riggs to Charles M. Dickinson, 1905, September 26, p. 1.

ջում էին վճարել նրանց բարեկամների համար, որոնց արգելվում էր վերադառնալ երկիր Միացյալ Նահանգներից, կամ որոնց վտարել էին երկրից:[1]

Հոկտեմբերի 7-ին Ռիգզը գրում էր, որ վերջին երկու շաբաթների ընթացքում շատ հայտնի հայեր զգուշացվել էին իրենց բարեկամ թուրքերի կողմից կոտորածների վտանգի մասին, շատերն առաջարկում էին թաքնվել իրենց տներում: Ծուկայում նույնպես անհանգստություն էր տիրում, լուրեր էին տարածվել, որ շրջանում գործում էին հայ հեղափոխականներ, և որ վալին անկարող կլինի որևէ բան անել, եթե նրանց կողմից գործողություններ սկսվեն: Թուրքերը լուրեր էին տարածում, որ հայ հեղափոխականներն իբր ռումբեր են նետել մզկիթների վրա Կեսարիայում, Սըվազում, Էրզրումում և արդեն իսկ հայտնվել էին շրջակա գյուղերում: Ըստ փոխհյուպատոսի՝ այդ լուրերը տարածվում էին մոլեռանդ թուրքերի կողմից:[2]

Նոյեմբերի 15-ին ԱՄՆ-ի պետքարտուղար Իլիհու Ռուտը[3] հանձնարարում էր Լայշմանին ճնշում գործադրել օսմանյան կառավարության վրա՝ Բեյրութում ամերիկյան հաստատությունների արտոնություններն ապահովող իրադրե ընդունելու համար: Ըստ Բեյրութում գլխավոր հյուպատոս Լեո Բերգհոլցի տեղեկատվության՝ Բեյրութի մաքսատան տնօրենը հրաժարվում էր ամերիկյան կրոնական, կրթական և բարեգործական կազմակերպություններին շնորհել նույնպիսի արտոնություններ, ինչպիսիք ունեին Ֆրանսիայի, Իտալիայի, Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի և Գերմանիայի նույնանման հաստատությունները, ինչպես նաև ամերիկյան հաստատությունները Զմյուռնիայում, Կոստանդնուպոլսում, Էրզրումում, Տրաբզոնում և այլուր:[4]

1905 թ. վերջին ԱՄՆ-ի հայտնի գործարար և բարեգործ, հրեական համայքի ղեկավարներից Ջեկոբ Շիֆը[5] պահանջել էր նախագահ Թեոդոր Ռուզվելտից միջամտել և գործողություններ դիմել Ռուսաստանում հրեաների ջարդը դադարեցնելու նպատակով: Դեկտեմբերի 14-ին Ռուզվելտը

[1] The National Archives and Records Service, Despatches from United States Consuls in Constantinople, 1820-1906, Roll 24, Vol. 24, January 20, 1904 – August 11, 1906, Ernest W. Riggs to Charles M. Dickinson, 1905, October 4, p. 1.

[2] The National Archives and Records Service, Despatches from United States Consuls in Constantinople, 1820-1906, Roll 24, Vol. 24, January 20, 1904 – August 11, 1906, Ernest W. Riggs to Charles M. Dickinson, 1905, October 7, p. 1.

[3] **Իլիհու Ռուտ** (1845-1937) - ԱՄՆ-ի քաղաքական և պետական գործիչ, ռազմական քարտուղար (1899-1904), պետքարտուղար (1905-1909), սենատոր Նյու Յորքից (1909-1915), Խաղաղության Նոբելյան մրցանակի դափնեկիր (1912):

[4] US Department of State. Papers relating to the Foreign Relations of the United States, with the Annual Message of the President Transmitted to Congress, December 3, 1906, Part 2, Washington: Government Printing Office, 1909, p. 1372.

[5] **Ջեկոբ Շիֆ** (1847-1920) - ԱՄՆ-ի բանկիր, գործարար և բարեգործ, հրեական համայքի ղեկավարներից:

պատասխանում էր, որ անխոհեմ է համարում նման միջամտությունը, քանի որ ռուսական իշխանություններն իրենք են գտնվում շատ ծանր վիճակում կայսրության տարբեր անկյուններում տեղի ունեցող հեղափոխության հետևանքով և հրեաների պաշտպանությանն ուղղված յուրաքանչյուր գործողություն կարող է շատ ավելի վատթարացնել նրանց իրավիճակը: Նախագահը գրում էր. «Մենք երբեք չենք ձեռնարկել, և քանի դեռ ես եմ նախագահը, չենք ձեռնարկելու որևէ գործողություն, որն օգտակար չի կարող լինել: Ինչո՞ւ, իմ սիրելի պարոն Շիֆ, քանի որ մի քանի տարի առաջ հայերին վերաբերող գործը շատ ավելի պարզ էր: Այնտեղ թուրքական կառավարությունը պատասխանատու էր և կարողացավ իրագործել այն, ինչ ցանկանում էր: ... Բայց մենք պատերազմի չգնացինք Թուրքիայի հետ»:[1] Իսկ 1907 թ. հունվարի 3-ին, պատասխանելով Լայմըն Էբբոթին, նա գրում էր. «Ինձ մշտապես խնդրում են միջամտել Ռուսաստանի հրեաների, Թուրքիայի հայերի, Կոնգոյի Ազատ Պետության բնիկների համար: Անձնապես ես գերադասում եմ արդարությունը խաղաղությունից և լիովին բավարարված կլինեի, եթե խաչակրած արշավանք ղեկավարեի հայերի համար»:[2]

1906 թ. հունվարի 19-ին նախկին դեսպանորդ Օսկար Շտրաուսը նամակ էր գրել ԱՄՆ-ի նախագահին՝ առաջարկելով «հնարավորություն գտնել իր բարի ծառայությունները մատուցելու Հայաստանի ճնշված ժողովրդին»: Նախագահը պետքարտուղարության քննարկմանն էր ներկայացրել նաև հունվարի 18-ին իրեն ուղղված Ջեյմս Ռեյնոլդզի[3] նամակը, որին կցված էր Ֆրանսիայի, Իտալիայի, Բելգիայի, Շվեդիայի, Դանիայի, Մեծ Բրիտանիայի, Հոլանդիայի, Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի ազդեցիկ ներկայացուցիչների կողմից ստորագրված և ԱՄՆ-ի նախագահին ուղղված խնդրագիրը, ուր նրանք խնդրում էին միջոցներ ձեռնարկել՝ Թուրքիայի հայ հպատակների հանդեպ դաժանությունները դադարեցնելու նպատակով:

Հունվարի 25-ին դեսպան Լայշմանին ուղղված նամակում պետքարտուղար Ռուտը գրում էր, որ նման հեղինակավոր ներկայացուցիչների դիմումը շատ ավելի մեծ հետաքրքրություն էր առաջացրել այդ հարցի նկատմամբ, որը տարիների ընթացքում նախագահի ուշադրության կենտրոնում էր գտնվում: Ըստ պետքարտուղարի՝ ամերիկյան ժողովրդի համակրանքը տարբեր երկրների ճնշվածների նկատմամբ միշտ էլ իր արտահայտությունն էր գտել կառավարության տարբեր ճյուղերի կողմից, իսկ «դժբախտ հայերի պարագայում պերճախոս կերպով հնչեցվել էր ամերիկյան ազգի

[1] The Letters of Theodore Roosevelt (Selected and edited by Eltong E. Morison), Cambridge, MA: Harvard University Press, 1952, p. 3761.

[2] Նույն տեղում, էջ 4184:

[3] Հավանաբար խոսքը գնում է ԱՄՆ-ի Հանրապետական կուսակցության գործիչ, ֆինանսների քարտուղարի տեղակալ Ջեյմս Բարտոն Ռեյնոլդզի (1870-1948) մասին:

կողմից»: Կասկած չկա, շարունակում էր պետքարտուղարը, որ նախագահի ցանկությունն այն էր, որ հայերը ունենան կյանքի և ունեցվածքի անվտանգություն, ինչը եվրոպական տերությունների համատեղ նպատակն էր հանդիսանում: Ըստ պետքարտուղարի՝ նամակը ստորագրողները ներկայացնում էին 1878 թ. Բեռլինի պայմանագրի մասնակից տերություններին, բացի Թուրքիայից, ինչպես նաև եվրոպական այն պետությունները, որոնք շահագրգռված էին Եվրոպայում քաղաքական հավասարակշռության պահպանման հարցով:[1]

Ըստ պետքարտուղարի՝ ԱՄՆ-ը չի հանդիսանում Բեռլինի պայմանագրի մասնակից, ինչպես նաև շուրջ մեկ դար է, ինչ, չգրված օրենքի համաձայն, զրկված էր Եվրոպայի քաղաքական նպատակներին, շահերին և պատասխանատվություններին միջամտելու իրավունքից: Եվրոպան, իր հերթին, համաձայն գոյություն ունեցող հավասարազոր դոկտրինի, իրավունք չուներ միջամտելու արևմտյան կիսագնդի սուվերեն պետությունների գործերին: Եվրոպական պետությունների միջև ստորագրված պայմանագրի պարտականությունների կատարումը քաղաքական հարց էր, որին արևմտյան կիսագունդը որևէ ձայն կամ մասնակցություն ունենալ չէր կարող, շարունակում էր պետքարտուղար Ռուտը՝ բացի իր համակրանքի արտահայտումից: Ըստ պետքարտուղարի՝ Միացյալ Նահանգները կարող էր պաշտպանել իր իրավունքները միայն այն դեպքում, երբ կխախտվեն իր շահերը կամ եվրոպական պետության հետ երկկողմ պայմանագրի պայմանները:

Իսկ ինչ վերաբերում է Ջեյմս Ռեյնոլդզի այն առաջարկին, որ ԱՄՆ-ը միջազգային համաժողով հրավիրի և հանդես գա միջազգային անկախ միջնորդի դերում, պետքարտուղարը համարում էր շատ դժվար կամ գրեթե անհնար իրականացվող քայլ: Ըստ պետքարտուղարի՝ Ռեյնոլդզը հնարավոր է՝ նկատի ուներ Հաագայի գալիք խաղաղության համաժողովը, երբ նա խնդրում էր նախագահին «քննարկման առարկա դարձնել Հայաստանի կարիքները Հաագայի դատարանի հաջորդ նստաշրջանի ժամանակ»: Պետքարտուղարը միաժամանակ նշում էր, որ Հաագայի դատարանը պարբերական նստաշրջաններ չունի և չի հանդիսանում իրավական կազմակերպություն: Եթե մտադրություն կա ընդգրկել Հայկական հարցը Հաագայի երկրորդ համաժողովի օրակարգում, դա պետք է անի միայն պայմանագրի մասնակիցը, այլ ոչ թե պայմանագրի կողմ չհանդիսացող պետությունը: Պետքարտուղարը եզրակացնում էր, որ Հայկական հարցի քննարկման միջազգային համաժողովի նախաձեռնությունը չէր կարող տեղի ունենալ

[1] US Department of State. Papers relating to the Foreign Relations of the United States, with the Annual Message of the President Transmitted to Congress, December 3, 1906, Part 2, Washington: Government Printing Office, 1909, p. 1417.

ԱՄՆ-ի կողմից, մինչև որ եվրոպական տերություններից մեկը չառաջարկի, որպեսզի նման համաժողով կազմակերպվի ամերիկյան հանրապետության կողմից:

Ըստ պետքարտուղարի՝ Թուրքիայի հայ հպատակների տանջանքները բացահայտ պահանջում են փոխհատուցում: «Նրանք ցնցել են ողջ մարդկության մարդասիրական զգացումը, և աշխարհը միավորված է ցավելու և դատապարտելու թուրք բնակչության անհամատեղելի տարրերի միջև գոյություն ունեցող ռասայական անտագոնիզմը», - նշում էր պետքարտուղարը: Նա գրում էր, որ սրտանց կցանկանար, որ Միացյալ Նահանգները այդ իրավունքն ունենար նման երևույթը կանխելու համար: Նա համոզված էր, որ ԱՄՆ-ի ջանքերը որևէ արդյունքի չեն կարող բերել, այլ հակառակը, ավելի կվատթարացնեն «դժբախտ էակների» վիճակը:[1]

Փետրվարի 15-ին Լայշմանը գրում էր պետքարտուղարին, որ, ի հավելումն պետքարտուղարության դիրքորոշմանը Հայկական հարցում, նա այն կարծիքին էր, որ «որևէ միջամտության մերժումը նախագահի կողմից անկասկած մեծ բավարարվածություն է բերելու ոչ միայն սուլթանին, այլև եվրոպական տերություններին, որոնք Թուրքական հարցը համարում են որպես ամենադժվար լուծելի խնդիր»: «Նույնիսկ համաժողովի անցկացման առաջարկությունը»,- շարունակում էր դեսպանորդը,- «հուզմունք և անհանգստություն կարող է առաջացնել»:[2]

Մարտի 5-ին պետքարտուղարի պաշտոնակատար Ռոբերտ Բեյկոնը[3] պատասխանում էր Լայշմանին, որ ԱՄՆ-ի դիրքորոշումը միաժամանակ չպետք է սխալ հասկացվի: Ամերիկյան կառավարությունը դեմ չէր Բեռլինի պայմանագիրը ստորագրած տերությունների համաժողովի գաղափարին, այն ուղղակի չէր կարող նախաձեռնել նման համաժողով, քանի որ չի ստորագրել պայմանագիրը: Կառավարությունը, շարունակում էր Բեյկոնը, իրավասություն չուներ կարծիք հայտնելու տերությունների ստանձնած պարտավորությունների էության մասին՝ բացառությամբ, եթե խախտված լինեին ԱՄՆ-ի շահերը որևէ պետության հետ երկկողմ պայմանագրի չկատարման հետևանքով:[4]

Դեռևս 1906 թ. փետրվարի 2-ին Լայշմանը գրել էր պետքարտուղարին, որ Բեյրութում ամերիկյան հաստատությունների արտոնությունների խնդիրը շարժվել էր տեղից, քանի որ կառավարությունն արդեն իսկ ճանաչել էր ամերիկյան բժշկական քոլեջի արտոնությունները: Ըստ դեսպանի՝ դրան

[1] Նույն տեղում, էջ 1418:
[2] Նույն տեղում, էջ 1418-1419:
[3] Ռոբերտ Բեյկոն (1860-1919) - ԱՄՆ-ի քաղաքական և պետական գործիչ, պետքարտուղարի տեղակալ (1905-1909), պետքարտուղար (1909):
[4] Նույն տեղում, էջ 1419:

հետևելու էր նաև մյուս հաստատությունների արտոնությունների ճանաչման գործընթացը:[1]

Շարունակելով նույն թեման՝ փետրվարի 7-ին Լայշմանը գրում էր պետքարտուղարին, որ ամերիկյան հաստատությունների արտոնություններ հարցի ձգձգումը կախված էր ոչ միայն օսմանյան կառավարությունից, այլև միսիոներների կողմից ամերիկյան կրոնական, բարեգործական և կրթական հաստատությունների ամբողջական ցանկն չներկայացնելու պատճառով: Շուրջ 18 ամիս առաջ ԱՄՆ-ի ներկայացուցչությունը հանձնարարել էր միսիոներական առաքելություններին ներկայացնել հաստատությունների ցանկը, որում պետք է ներկայացված լինեին տվյալներ սեփականության և հաստատությունների բնույթի մասին՝ օսմանյան կառավարությանը ներկայացնելու նպատակով: Ստացված և Բարձր Դռանը ներկայացրած ցանկում ընդգրկված էին Օսմանյան կայսրության ողջ տարածքով մեկ ցրված շուրջ 300 հաստատություններ, սակայն միայն 7-ի կամ 8-ի մասին կար պահանջվող մանրամասն տեղեկություն: Ներկայացուցչությունը, ժամանակ չունենալով ճշտել այդ տվյալները, ներկայացրել էր ցանկը Բարձր Դռանը՝ միաժամանակ լրացուցիչ տեղեկատվություն հայցելով միսիոներական առաքելություններից:[2]

Միացյալ Նահանգները հաջողությամբ իրականացնում և պաշտպանում էր իր տնտեսական, աշխարհաքաղաքական և միսիոներական շահերն Օսմանյան կայսրությունում: Ո՛չ քրիստոնյա հայերի կոտորածները, ո՛չ էլ ժամանակ առ ժամանակ որոշակի լարվածությունն ԱՄՆ-Օսմանյան կայսրություն հարաբերություններում լուրջ քաղաքական վնաս չէին հասցրել երկկողմ հարաբերություններին: «Հայկական հարցն ու կոտորածների փաստն ապացուցեցին իրենց ոչ էական լինելու հանգամանքն օսմանյան կառավարության հետ լավ հարաբերություններ պահպանելու դիմաց»,- գրում է ամերիկահայ պատմաբան Սիմոն Պայասլյանը:[3] Ծովային, տնտեսական և միսիոներական շահերի ընդլայնման արդյունքում ԱՄՆ-ի կառավարությունը բարձրացրեց Կոստանդնուպոլսում դիվանագիտական ներկայացուցչի մակարդակը: 1906 թ. հունիսի 18-ին Լայշմանը նշանակվեց Օսմանյան կայսրությունում արտակարգ և լիազոր դեսպան՝ հանձնելով իր հավատարմագրերը սուլթանին նույն թվականի հոկտեմբերի 5-ին:

1906 թ. հոկտեմբերի 18-ին դեսպան Լայշմանը գրում էր պետքարտուղարին, որ ամերիկյան միսիոներները Փոքր Ասիայով ճամփորդելու դժվարություններ են ունենում, նրանց հաճախ արգելվում էր ճամփորդել նույնիսկ իրենց առաքելության տարածքով՝ մի քաղաքից կամ գյուղից մյուսը: Դեսպանը դա բացատրում էր նրանով, որ միսիոներներն աշխատում էին տեղացի քրիստոնյա բնակչության շրջանում, և քանի որ այդ բնակչությունը հիմնականում կազմված էր հայերից, միշտ էլ միսիոներների հանդեպ կասկածն անխուսափելի էր դառնում: «Թուրքական կառավարումն էապես ռազմական բնույթի իշխանություն էր, և դա գրեթե անհրաժեշտություն էր, քանի որ թուրքերն ամենուրեք, բացառությամբ երկու վիլայեթի, կազմում են թվային փոքրամասնություն», - գրում էր դեսպանը:[1]

1907 թ. փետրվարի 22-ին Լայշմանը հանդիպել էր սուլթան Աբդուլ Համիդի հետ և բարձրացրել Օսմանյան կայսրությունում ամերիկյան կրթական, կրոնական և բարեգործական հաստատությունների կարգավիճակի և իրավունքների հարցը՝ ներկայացնելով նրան վերջին տարիների ընթացքում Բարձր Դռանն ուղղված ներկայացուցչության հայտագրերի պատճենները: Նա կրկին պահանջել էր սուլթանից հավասար իրավունքներ մյուս պետությունների հետ:

ԱՄՆ-ի կառավարության մյուս խնդիրները վերաբերում էին ամերիկյան քաղաքացիների իրավունքներին և գյուղատնտեսական ապրանքի, մասնավորապես բամբակի յուղի ներկրմանն առնչվող հարցին: Բամբակի յուղը նոր ապրանքատեսակ էր, որն օգտագործվում էր ձկան պահածոների պատրաստման համար: Ըստ դեսպանի՝ սուլթանն ուշադրությամբ լսել էր Լայշմանին, որից հետո հավաստիացրել, որ անմիջապես հաջորդ օրը քննարկելու է խնդիրը մեծ վեզիրի հետ:[2]

Մարտի 4-ին դեսպանը գրում էր պետքարտուղարին, որ օսմանյան կառավարությունը շարունակում էր ձգձգել առկա խնդիրների լուծումը՝ շարունակաբար տեղափոխելով հարցերի քննարկման և վերջնական լուծումներ տալու ժամկետները:[3] Մայիսի 17-ին Լայշմանը կրկին դիմում էր Օսմանյան կայսրության արտաքին գործերի նախարարին՝ ներկայացնելով նրան ԱՄՆ-ի կողմից բարձրացված, սակայն լուծում չստացած խնդիրները: Հայտագրին կից ներկայացվում էր 140-ից ավելի ամերիկյան կրթական, կրոնական և բարեգործական կազմակերպությունների ցանկը, որոնք իրենց իրավունքներով պետք է հավասարեցվեին կայսրությունում գործող եվրոպական հաստատությունների իրավունքների հետ: Դեսպանը պահանջում էր նաև լուծում տալ բամբակի յուղի մաքսային գանձումների հարցին՝ հավա-

[1] Նույն տեղում, էջ 1378:
[2] Նույն տեղում, էջ 1380-1381:
[3] **Payaslian, Simon**, նշվ. աշխ., էջ 17:

[1] US Department of State. Papers relating to the Foreign Relations of the United States, with the Annual Message of the President Transmitted to Congress, December 3, 1906, Part 2, Washington: Government Printing Office, 1909, p. 1396.
[2] US Department of State. Papers relating to the Foreign Relations of the United States, with the Annual Message of the President Transmitted to Congress, December 3, 1907, Part 2, Washington: Government Printing Office, 1910, pp. 1047, 1047-1049.
[3] Նույն տեղում, էջ 1047:

սարեցնելով այն բուսական մյուս յուղերին: Հայտագրում հիշեցվում էր նաև ԱՄՆ-ի քաղաքացիների սեփականության խնդրի մասին:[1]

Մայիսի 30-ին Զմյուռնիայում բնակվող և աշխատող մի շարք ԱՄՆ-ի քաղաքացիներ գրում էին հյուպատոս Հարրիսին շրջանում գործող ավազակախմբերի կողմից սպանությունների և հարձակումների մասին: Այդ գործողությունները սարսափ էին տարածում և անհարին դարձնում ոչ միայն օտարերկրացիների, այլև քաղաքի և գյուղերի խաղաղ բնակչության կյանքը: Ամերիկյան քաղաքացիները խնդրում էին իրենց դիմումի մասին տեղյակ պահել ԱՄՆ-ի դեսպանին և նախագահին՝ օսմանյան իշխանությունների նկատմամբ համապատասխան միջոցներ ձեռնարկելու և իրավիճակը փոխելու նպատակով:[2]

Հունիսի 12-ին դեսպանն այդ կապակցությամբ հայտագիր էր ներկայացրել արտաքին գործերի նախարարին՝ պահանջելով, որ իշխանությունները միջոցներ ձեռնարկեն ինչպես օսմանյան հպատակներին, այնպես էլ օտարերկրացիներին վիլայեթում գործող ավազակային խմբերի գործողություններից պաշտպանելու, ավազակներին ձերբակալելու և պատժելու համար:[3]

1908 թ. ապրիլի 21-ին Զմյուռնիայում բնակվող, ամերիկյան հպատակություն ստացած ԱՄՆ-ի 22 քաղաքացիներ (մեծամասամբ հույներ) նամակ էին հղել նախագահ Ռուզվելտին առ այն, որ 1907 թ. մարտի 2-ին հաստատված արտագաղթած քաղաքացիների և արտասահմանում նրանց պաշտպանությանը վերաբերող օրենքի մեկնաբանությունը պետքարտուղարության կողմից դժվար կացության մեջ էր դրել Օսմանյան կայսրությունում բնակվող ԱՄՆ-ի քաղաքացիներին: Պետքարտուղարությունը համապատասխան շրջաբերական էր ուղարկել Օսմանյան կայսրությունում ամերիկյան բոլոր հյուպատոսություններին, համաձայն որի՝ ԱՄՆ-ի քաղաքացիությունը դադարեցվում էր այն դեպքերում, եթե ա) ժամանակին թուրք հպատակներ հանդիսացող և ԱՄՆ-ում հպատակություն ստացած քաղաքացիները երկու տարի անընդմեջ ապրում էին Օսմանյան կայսրությունում և բ) ժամանակին թուրք հպատակներ չհանդիսացող և ԱՄՆ-ում հպատակություն ստացած քաղաքացիներն ապրում էին Օսմանյան կայսրությունում հինգ տարի:

Նամակը ստորագրած ԱՄՆ-ի քաղաքացիների համոզմամբ՝ նման մոտեցումը սխալ էր և չէր կարող վերաբերել Օսմանյան կայսրությունում բնակվող ամերիկյան քաղաքացիներին: Նրանք վկայակոչում էին հայտնի

[1] Նույն տեղում, էջ 1058-1059:
[2] Նույն տեղում, էջ 1071-1072:
[3] Նույն տեղում, էջ 1072:

փաստաբան Էդվին Փիրսին[1], որի կարծիքով՝ Օսմանյան կայսրությունում բնակվող ԱՄՆ-ի քաղաքացիների կարգավիճակն էապես տարբերվում էր Մեծ Բրիտանիայում, Գերմանիայում կամ այլ պետություններում բնակվող քաղաքացիներից, քանի որ նրանց իրականում պետք էր համարել ԱՄՆ-ում բնակվող, քանի որ նրանք ներկայացնում էին ամերիկյան համայնքը, ապրում էին համայնքային կյանքով, խոսում անգլերեն: Նրանք ժամանել էին Օսմանյան կայսրություն որպես ԱՄՆ-ում հպատակություն ստացած քաղաքացիներ՝ համոզված լինելով, որ գտնվում են ամերիկյան օրենսդրության ներքո և իրավական առումով ապրելու են ամերիկյան գաղութում: Ամերիկյան օրենքի համաձայն՝ ստորագրյալները դարձել էին ԱՄՆ-ի քաղաքացիներ իրավասու դատարանի որոշմամբ, ինչը նշանակում էր, որ պետքարտուղարության օրենքի մեկնաբանությունն ու կիրառումը հանդիսանում էր հակասահմանադրական: Այն հակասահմանադրական էր նաև այն պատճառով, որ խտրականություն էր դնում ԱՄՆ-ում ծնված և հպատակություն ստացած քաղաքացիների իրավունքների միջև: Դա նաև նշանակում էր, որ ԱՄՆ-ի քաղաքացիները կհայտնվեն ասիական պետության օրենսդրական դաշտում, ինչին նրանք չէին կարող համաձայնվել, քանի որ որևէ ցանկություն չունեին դառնալու Թուրքիայի քաղաքացիներ: Ըստ նամակը ստորագրողների, եթե նրանք դառնան Թուրքիայի քաղաքացիներ, ԱՄՆ-ում բնակվող իրենց երեխաները չեն կարողանալու սեփականություն ժառանգել նրանցից: Նամակը ստորագրողները խնդրում էին ԱՄՆ-ի նախագահից ուշադրությամբ քննել իրենց կողմից ներկայացված խնդիրը և արդարացի լուծում տալ այդ հարցին:[2]

1908 թ. հունիսի 18-ին պետքարտուղարի տեղակալ Ռոբերտ Բեյկոնն իր պատասխան նամակում գրում էր, որ իրականում օրենքն ու հյուպատոսություններին ուղղված շրջաբերական-ցուցումն (1907 թ., 11 դեկտեմբերի) իրավական առումով վերաբերում են Օսմանյան կայսրությունում բնակվող ԱՄՆ-ի քաղաքացիներին և որևէ փոփոխության ենթակա չեն: Ըստ պետքարտուղարի՝ այս կարգը մշակված էր այն դեպքերի համար, երբ ԱՄՆ-ում հպատակություն ստացած որոշ անհատներ օգտագործում են ամերիկյան քաղաքացիությունը խաբեության և խարդախության նպատակով՝ որևէ

[1] Էդվին Փիրս (1835-1919) - բրիտանացի փաստաբան, հրապարակախոս, պատմաբան, 1873-1915 թթ. ապրել է Կոստանդնուպոլսում, համարվել է թուրքական իրականության լավագույն գիտակներից, մասնակցել է արևմտահայությանը օգնություն ցուցաբերելու աշխատանքներին, ինչպես 1890-ական թթ., այնպես էլ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ, հիմնական աշխատությունները՝ «Թուրքիան և նրա ժողովուրդը» (1911), «Քառասուն տարի Կոստանդնուպոլսում» (1916), «Արդուլ Համիդի կյանքը» (1917):
[2] US Department of State. Papers relating to the Foreign Relations of the United States, with the Annual Message of the President Transmitted to Congress, December 8, 1908, Washington: Government Printing Office, 1912, pp. 739-740.

ցանկություն չունենալով ներգրավվել ամերիկյան կյանքին և միավորվել ամերիկյան հասարակությանը, ինչպես նաև օգտագործելով ԱՄՆ-ի հպատակությունը՝ Օսմանյան կայսրությունում իրենց ապահովությունն ապահովելու նպատակով և չկատարելով քաղաքացու իրենց պարտավորությունները: Նոր կարգը հնարավորություն էր տալիս նաև ԱՄՆ-ում հպատակություն ստացած անհատներին ապացուցելու քաղաքացիություն ստանալու իրենց իրական նպատակն ու քաղաքացու պարտավորությունները ստանձնելու իրենց իրական ցանկությունը: Օրինակ, եթե քաղաքացին ապացուցեց դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցիչներին, որ բնակվում է Թուրքիայում որպես ամերիկյան առևտրական ներկայացուցիչ և վերադառնալու է ԱՄՆ, եթե ապրում է ամերիկյան համայնքում, որը ճանաչված է օսմանյան կառավարության կողմից կամ եթե բնակվում է Օսմանյան կայսրության տարբեր շրջաններում որպես ամերիկյան ճանաչված կրոնական կազմակերպության միսիոներ:[1]

2. Երիտթուրքական հեղափոխությունը և Ադանայի կոտորածը

1908 թ. երիտթուրքական հեղափոխությունը մեծ ոգևորությամբ ընդունվեց պաշտոնական Վաշինգտոնի կողմից: Ամերիկյան ղեկավարությունը համոզված էր, որ իրավիճակի փոփոխությունը նպաստելու է ԱՄՆ-ի և Օսմանյան կայսրության միջև առևտրական հարաբերությունների զարգացմանը: Պետքարտուղարության հեռագրում այդ օրերին ասվում էր, որ նախագահ Թեոդոր Ռուզվելտը սրտանց հույս ունի, որ այդ «կարևոր քայլը օգնելու է օսմանյան մեծ ազգի մշտական խաղաղության և բարեկեցության հաստատմանը»:[2]

Հուլիսի 24-ին դեսպան Լայշմանը հեռագրում էր պետքարտուղարին, որ, տեղի տալով բարեփոխումների պահանջին, սուլթանը հռչակել էր սահմանադրության հաստատման մասին, որը սառեցված էր 30 տարի: Միաժամանակ սուլթանը հրահանգներ էր իջեցրել կայսրության բոլոր նահանգապետերին սկսել խորհրդարանական ներկայացուցիչների ընտրության գործընթացը: Ըստ դեսպանի՝ երկրում համեմատական հանգստություն էր տիրում, սակայն գոյություն ուներ նաև զգալի մտահոգություն վերջնական արդյունքի վերաբերյալ:[3]

[1] Նույն տեղում, էջ 744-745:
[2] Gordon, Leland James, նշվ. աշխ., էջ 57:
[3] US Department of State. Papers relating to the Foreign Relations of the United States, with the Annual Message of the President Transmitted to Congress, December 8, 1908, Washington: Government Printing Office, 1912, p. 745.

ԱՄՆ-ի պետքարտուղարին ուղղված հուլիսի 28-ի հեռագրում Լայշմանը տեղեկացնում էր, որ Օսմանյան կայսրությունում ներում էր շնորհված բոլոր քաղբանտարկյալներին: Ըստ դեսպանի՝ հին ռեժիմի հանդեպ անբավարարվածությունն այնքան համատարած էր, որ փոփոխությունը տեղի ունեցավ համեմատաբար փոքր արյան գնով, սակայն քանի որ ազատագրված ժողովրդի պահանջները օրական աճում էին, լուրջ հուզումները կարծես թե անխուսափելի էին: Դեսպանի կարծիքով՝ սահմանադրությունն իրականում շատ սահմանափակ էր և կարող էր հանգեցնել իշխանության բախման սահմանադրական կառավարության և միապետի միջև: Ըստ դեսպանի՝ նախարարությունում արագորեն փոփոխություններ էին տեղի ունենում, իսկ պալատական վերնախավից ձերբազատվելու վերաբերյալ սուլթանի վրա գործադրվող ճնշումն ավելի էր մեծանում, քանի որ երկրի ողբալի վիճակը կապվում էր պալատականների հետ, ինչն ի վերջո և հանգեցրեց հեղափոխության:[1]

Օգոստոսի 3-ին պետքարտուղարը գրում էր Լայշմանին, որ ԱՄՆ-ի նախագահն ուշադրությամբ հետևում էր Օսմանյան կայսրությունում տեղի ունեցող զարգացումներին և հույս հայտնում, որ կատարված փոփոխություններն օգնելու են «մնայուն խաղաղության և բարեկեցության հաստատմանը օսմանյան մեծ ազգի համար»:[2]

Նույն օրը դեսպանը գրում էր պետքարտուղարին, որ օգոստոսի 2-ին հայտարարվել էր նոր կառավարություն կազմը: Ըստ դեսպանի՝ կառավարության անդամների մեծամասնությունը նախկին ռեժիմի օրոք աշխատող պաշտոնյաներ էին և շատ չէին տարբերվում իրենց նախորդներից, թեև նրանցից մի քանիսը նվիրված և կարող մարդիկ էին: Ամեն օր մայրաքաղաքում ցույցեր էին տեղի ունենում, որոնք գնալով ավելի սուր բնույթ էին ստանում: Ըստ Լայշմանի՝ նախորդ օրը մասնավորապես ամբոխի կողմից սպանվել էր Ահմեդ Իզզետ փաշայի[3] համախոհներից մեկը: Երիտթուրքական կուսակցության ղեկավարները դեռևս խուսափում էին ժամանել մայրաքաղաք, նախընտրելով՝ մնալ Մոնաստիրում, Սալոնիկում և Ադրիանապոլսում, ուր նրանց ձեռքում էր մնում բանակը: Դեսպանը շարունակում էր, որ թեև Ստամբուլի կայազորն անցել էր բարեփոխումների կողմնակիցների կողմը, սակայն պալատի պահակազորը, որը, տարբեր աղբյուրների համա-

[1] Նույն տեղում, էջ 746:
[2] Նույն տեղում:
[3] **Ահմեդ Իզզետ փաշա** (1864-1937) – Օսմանյան կայսրության ռազմական և պետական գործիչ, բանակի սպայակույտի պետ (1908-1911), ռազմական նախարար (1913-1914, 1918), մեծ վեզիր (1918), արտաքին գործերի նախարար (1921-1922):

ձայն, կազմում էր 10-ից 20 հազար, ինչպես և քաղաքի խաժամուժը, համակրում էր սուլթանին:[1]

Օգոստոսի 8-ին Լայշմանը հաղորդում էր պետքարտուղարին, որ անցած շաբաթվա ընթացքում երիտթուրքերի իշխանությունն ավելի էր ուժեղացել, մասնավորապես, երբ նրանք ներկայացուցիչներ էին ուղարկել Կոստանդնուպոլիս՝ սուլթանի հետ բանակցություններ վարելու համար: Այդ բանակցությունների արդյունքում սուլթանը ստիպված էր եղել ազատել պաշտոններից իր մոտակա խորհրդականներին, որոնցից մի քանիսը ներկայումս գտնվում էին բանտում նախկին ռեժիմի պաշտոնյաների և մի քանի նախարարների հետ: Սուլթանը պարտավորություն էր ստանձնել սահմանադրական բարեփոխումները շարունակելու ուղղությամբ, ինչպես նաև ազատել պաշտոնից մեծ վեզիր Մեհմեդ Սահիդ փաշային[2] և նշանակել Քյամիլ փաշային, որն ավելի ազատական գաղափարներ ուներ և մոտ էր կանգնած երիտթուրքերին: Ըստ դեսպանի՝ նոր կառավարությունը կամուրջի դեր պետք է կատարեր մինչև ընտրություններն ու խորհրդարանի ձևավորումը: Ամեն օր, ըստ Լայշմանի, տեղի էին ունենում ցույցեր, որոնք պահանջում էին նախկին պաշտոնյաների բանտարկությունը, «նույնիսկ հայերն էին բողոքում իրենց պատրիարքի դեմ փողոցներում»: Նախկին ոստիկանության ղեկավար հանդիսացող Ֆեհիմ բեյին գյուղացիները սպանել էին Բուրսայում:[3]

Սեպտեմբերի 19-ին Լայշմանը գրում էր պետքարտուղարին, որ սահմանադրական կառավարության հաստատման կարևոր արդյունքներից մեկն այն էր, որ թուրք-ամերիկյան երկկողմ հարաբերությունների համար լուծում ստացան այնպիսի հարցեր, ինչպիսիք էին Աստվածաշնչի տարածման, գրքերի վաճառքի, երկրի տարածքով ճամփորդության և տպագրական մեքենաների վաճառքի արգելքի անմիջական հանումը: Հայկական կոտորածներից անմիջապես հետո օսմանյան իշխանություններն արգելել էին արաբերեն և հայերեն տպագրական մեքենաների վաճառքը երկրում: «Remington» տպագրական մեքենաների ընկերության քարտուղարը սեպտեմբերի 25-ին նամակ էր գրել պետքարտուղարին՝ նշելով, որ թեև տպագրական մեքենաների վաճառքի արգելքը ձևականորեն հանվել էր, սակայն իշխանությունները շարունակում էին արգելել արաբերեն և հայերեն մեքենաների վաճառքը: Քարտուղարը դիմում էր պետքարտուղարությանը միջոցներ ձեռնարկել՝ արգելքն ամբողջությամբ հանելու համար:[1]

Անմիջապես երիտթուրքական հեղափոխությունից հետո ԱՄՆ-ի վարչակազմն օժանդակեց մի խումբ նավթի և երկաթուղիների կառուցման բնագավառների գործարարների այցն Օսմանյան կայսրություն, որը ղեկավարում էր ծովակալ Քոլբի Չեսթերը[2]: Առաքելության նպատակն էր կոնցեսիաներ ստանալ Թուրքիայի կառավարությունից: Չեսթերը եղել էր Կոստանդնուպոլսում դեռևս 1899 թ., սակայն այն ժամանակ նա քննարկում էր ջարդերի ընթացքում ամերիկյան միսիոներների կրած կորուստների փոխհատուցման խնդիրը: Բարձր Դուռն առաջարկել էր երկաթուղային և հանքային (Արղանայի պղնձի, ինչպես նաև ոսկու, արծաթի, նավթի հանքերը) կոնցեսիաներ Հայաստանում և Միջագետքում: Թեև ներքին և արտաքին (Գերմանիայի տնտեսական ակտիվությունն Օսմանյան կայսրությունում) պատճառների բերումով Չեսթերի ծրագիրն ամբողջությամբ չիրականացավ, սակայն պետք է նշել, որ այդ բանակցություններին մասնակցում էին ամերիկյան հայտնի ընկերություններ: Ամերիկյան ընկերությունների ակտիվացումն Օսմանյան կայսրությունում մրցակցություն առաջացրեց Գերմանիայի, Անգլիայի և Ֆրանսիայի հետ, որոնք կիսել էին միմիանց միջև իրենց տնտեսական ազդեցությունը: Թեև բալկանյան պատերազմները բացասական ազդեցություն ունեցան Օսմանյան կայսրության հետ առևտրական հարաբերությունների զարգացման վրա, սակայն ամերիկյան առևտրականները նախապատերազմյան շրջանում արդեն զբաղեցրել էին ղեկավար դիրքեր: Երիտթուրքական հեղափոխությունից հետո ԱՄՆ-Օսմանյան կայսրություն առևտրական հաշվեկշիռը զգալի աճ արձանագրեց: Այն 12,7 մլն դոլարից 1908 թ. աճեց մինչև 25,5 մլն դոլար 1913 թ.: Երիտթուրքական կառավարությունն ԱՄՆ-ի մեջ մեծ ներուժ ունեցող հզոր դաշնակից էր գտել, որը կարող էր դառնալ եվրոպական տերությունների դեմ ուղղված կարևոր հակակշռող լծակ:[3]

1908 թ. սեպտեմբերի 28-ին Լայշմանը գրում էր պետքարտուղարին, որ «խիստ համոզված է, որ Թուրքիան հաղթահարելու է բոլոր դժվարությունները, ամբողջապես բարեփոխվելու և մաքրվելու է՝ առաջադիմական ազգերի հետ շարքում իր տեղը գտնելու համար»: Դեսպանը համոզված էր, որ «կայսրության անկումը վերջին զարգացումների շնորհիվ կասեցվել էր, և բարեփոխված Թուրքիան կդառնա բարձրակարգ քաղաքակիրթ և առաջադիմական պետություն և իր բնական ռեսուրսների շնորհիվ կառաջադիմի

[1] Նույն տեղում, էջ 746-747:
[2] Մեհմեդ Սահիդ փաշա (1830-1914) – Օսմանյան կայսրության պետական գործիչ, ներքին գործերի նախարար, Բրուսայի նահանգապետ, մեծ վեզիր (1879-1880, 1880-1882, 1882, 1882-1885, 1895, 1901-1903, 1908, 1911-1913):
[3] Նույն տեղում, էջ 747:

[1] Նույն տեղում, էջ 755, 756:
[2] Քոլբի Չեսթեր (1844-1932) - ԱՄՆ-ի ռազմական գործիչ, ծովակալ, մասնակցել է ամերիկյան քաղաքացիական, իսպանա-ամերիկյան և Առաջին համաշխարհային պատերազմներին:
[3] **Payaslian, Simon**, նշվ. աշխ., էջ 24; **Gordon, Leland James**, նշվ. աշխ., էջ 58-59:

շատ ավելի արագ, քան Ճապոնիան»: Լայշմանը նշում էր, որ ինչ եվրոպական դիվանագիտությանը չհաջողվեց անել տասնամյակներ շարունակ, Թուրքիան արեց մեկ գիշերվա ընթացքում: Դեսպանը հույս էր հայտնում, որ «երկրում տեղի ունեցող բարեփոխումների շնորհիվ մի կողմ են դրվելու բոլոր ռասայական և կրոնական խտրականությունները և այն պահից, երբ երկիրը կունենա իր խորհրդարանը, երկրում հաստատվելու է խաղաղություն և բարեկեցություն»:[1]

Հոկտեմբերի 20-ին պետքարտուղարը նամակ էր հղել նավատորմի քարտուղարին այն մասին, որ, Լայշմանի առաջարկով, ԱՄՆ-ի կառավարությունը դիմել էր թուրքական կառավարությանը, որպեսզի վերջինս համաձայնություն տա, որ ամերիկյան ռազմանավն անցնի Դարդանելի նեղուցով, կանգնի Կոստանդնուպոլսում և անցնի դեսպանի հրամանատարության տակ որպես «ստացիոնար», ինչպես որ դա արել էին եվրոպական տերությունները: Հոկտեմբերի 21-ին ԱՄՆ-ի դեսպանությունը ստացավ արտաքին գործերի նախարարության թույլտվությունն այդ կապակցությամբ, և դեկտեմբերի 4-ին «Սկորպիոն» ռազմանավը ժամանեց Կոստանդնուպոլիս:[2] Նախագահ Ռուզվելտը հատուկ շնորհակալություն էր հայտնել սուլթանին թույլտվության համար, ինչը վկայում էր ԱՄՆ-ի և Օսմանյան կայսրության միջև գոյություն ունեցող բարեկամական հարաբերությունների մասին:[3]

Թուրքական խորհրդարանի բացման կապակցությամբ Սենատը դեկտեմբերի 17-ին իր շնորհավորանքներն ու բարի ցանկությունն էր հղել Թուրքիայի խորհրդարանին: Նույն օրն իր շնորհավորանքներն էր հղում Թուրքիայի խորհրդարանին նաև Ներկայացուցիչների պալատը: Դեսպանն անձնապես հանձնել էր շնորհավորանքներն արտաքին գործերի նախարարին:[4]

Դեկտեմբերի 17-ին Լայշմանը գրում էր պետքարտուղարին, որ Թուրքիայի խորհրդարանի բացման արարողության կապակցությամբ խորհրդարան էր այցելել նաև սուլթանն ու դիվանագիտական ներկայացուցիչները: Դեսպանը նշում էր, որ որևէ արտառոց բան տեղի չունեցավ՝ բացի նրանից,

[1] US Department of State. Papers relating to the Foreign Relations of the United States, with the Annual Message of the President Transmitted to Congress, December 8, 1908, Washington: Government Printing Office, 1912, pp. 749-750.
[2] Նույն տեղում, էջ 752-753:
[3] Howard, Harry N., նշվ. աշխ., էջ 25-26:
[4] US Department of State. Papers relating to the Foreign Relations of the United States, with the Annual Message of the President Transmitted to Congress, December 8, 1908, Washington: Government Printing Office, 1912, pp. 753-754:

որ սուլթանին դիմավորեցին առանց ոգևորության ինչպես խորհրդարանում, այնպես էլ փողոցում, երբ որ իր կառքն անցնում էր բազմության միջով:[1]

1909 թ. փետրվարի 20-ին պետքարտուղար Ռոբերտ Բեյկոնը հայտագիր էր ներկայացրել Վաշինգտոնում Թուրքիայի դեսպանությանն առ այն, որ Նյու Յորքում Օսմանյան կայսրության գլխավոր հյուպատոսը մերժել էր անցագիր տրամադրել նախկինում օսմանյան հպատակ, ԱՄՆ-ի քաղաքացի Ջոզեֆ Բոյաջյանին: Փետրվարի 24-ի իր պատասխան նամակում ԱՄՆ-ում դեսպան Հ. Քյազիմը գրում էր, որ, համաձայն գործող օրենքի, մինչև այլ երկրի քաղաքացիություն ստանալը, օսմանյան հպատակները պետք է առաջին հերթին դիմեն այլ հպատակություն ստանալու թույլտվության համար, պարտավորվեն նոր կարգավիճակով այլևս կայսրություն չվերադառնալ: Սակայն եթե նրանք նույնիսկ ժամանեն Թուրքիա, նրանք չեն ճանաչվելու որպես օտարերկրացիներ, նրանց վերաբերվելու են որպես օսմանյան հպատակներ:[2]

Մարտի 19-ին ԱՄՆ-ի նորանշանակ պետքարտուղար Ֆիլանդեր Նոքսն[3] այդ կապակցությամբ իր զարմանքն էր հայտնում Լայշմանին առ այն, որ անցյալ տարվա սեպտեմբերի 28-ի նամակում վերջինս հաղորդել էր, որ Թուրքիայում սահմանադրական կառավարության ձևավորման հետ մեկտեղ հանվել էին բոլոր սահմանափակումները՝ կապված ազատ ճամփորդության, արտագաղթի կամ ներգաղթի հետ: Պետքարտուղարը հանձնարարում էր դեսպանին համապատասխան պարզաբանումներ ներկայացնել պետքարտուղարությանն այդ հարցի կապակցությամբ:[4]

Ապրիլի 3-ին Լայշմանը պատասխանում էր, որ այս դեպքում խոսքը գնում էր երկու տարբեր հարցերի մասին՝ ազատ ճամփորդության իրավունքի, որն արգելված էր նախկին ռեժիմի կողմից, և ազգության օրենքի մասին, որը դեռևս մնում էր անփոփոխ: Դեսպանը շարունակում էր, որ նախկինում անհնարին էր ճամփորդել Օսմանյան կայսրությունում առանց օսմանյան անցագրի, որը սովորաբար առանց դժվարության տրվում էր օտարերկրացիներին, սակայն օսմանյան հպատակները հաճախակի մերժում էին ստանում: Ներկայումս վիճակը փոխվել էր՝ ըստ դեսպանի: Բոլոր օսմանյան հպատակներն իրավունք ունեին ազատ ճամփորդել ինչպես երկրում, այնպես էլ արտասահման: Թուրք հյուպատոսի մերժման հիմքը 1869 թ. ազ-

[1] Նույն տեղում, էջ 754.
[2] US Department of State, Papers relating to the Foreign Relations of the United States, with the Annual Message of the President Transmitted to Congress, December 7, 1909, Washington: Government Printing Office, 1914, pp. 558-559:
[3] Ֆիլանդեր Նոքս (1853-1921) - ԱՄՆ-ի քաղաքական և պետական գործիչ, իրավաբան, գլխավոր դատախազ (1901-1904), սենատոր Պենսիլվանիայից (1904-1909, 1917-1921), պետքարտուղար (1909-1913):
[4] Նույն տեղում, էջ 559:

գության օրենքն էր, համաձայն որի՝ օսմանյան իշխանությունները չէին ճանաչում այդ թվականից հետո այլ երկրներում օսմանյան հպատակների ստացած քաղաքացիությունը: Նրանք կարող էին ժամանել Օսմանյան կայսրություն, սակայն իշխանությունները չէին ճանաչում իրենց օտար քաղաքացիությունը: Համաձայն այդ օրենքի՝ առանց օսմանյան կառավարության թույլտվության օտար հպատակություն ստացած անձանց մուտքը երկիր արգելվում էր: Ըստ դեսպանի, սակայն, ըստ դեսպանի՝ սահմանադրության հռչակումից հետո շատ բաներ հեշտացվել էին, և հազարավոր նման կարգավիճակ ունեցող մարդիկ ժամանել էին և բնակվում էին Օսմանյան կայսրությունում:[1]

Հուլիսի 7-ին պետքարտուղարի պաշտոնակատար Էլվի Էյդին[2] կից նամակով Օսմանյան կայսրությունում ժամանակավոր հավատարմատար Լյուիս Այնշտայնին էր փոխանցում հունիսի 28-ին պետքարտուղարի պաշտոնակատար Հանտինգտոն Վիլսոնի[3] պատվելի Ուիլյամ Բեննետին ուղղված նամակը՝ ի պատասխան «Ամերիկայի հայկական ավետարանական միության» կողմից ԱՄՆ-ի նախագահին հունիսի 18-ին ներկայացված խնդրագրի: Միությունը խնդրում էր օգտագործել ԱՄՆ-ի ազդեցությունը հայերի վիճակը բարելավելու համար: Պետքարտուղար Վիլսոնի նամակում նշվում էր, որ խնդրագիրն ընթերցվել էր «ուշադրությամբ և հետաքրքրությամբ»: Այս հարցը, շարունակում էր Վիլսոնը, շատ տարիներ ի վեր ժամանակ առ ժամանակ դարձել էր ԱՄՆ-ի կառավարության «լուրջ քննարկումների» առարկա, իսկ «Փոքր Ասիայում վերջերս տեղի ունեցած սարսափելի դեպքերը հանդիսացան ամերիկյան ժողովրդի խորին համակրանքի լրացուցիչ դրսևորում և նախագահի նողկանքի վերաբերմունքը կազմակերպված կոտորածների նկատմամբ»: Վիլսոնը շարունակում էր, որ թեև Միացյալ Նահանգները Եվրոպայի մեծ տերությունների պես միջամտության պայմանագրային պարտավորություններ չունեն, այդուհանդերձ ԱՄՆ-ի կառավարության «լուրջ ցանկությունն է, որ հայերն ունենան կյանքի և ունեցվածքի բացարձակ անվտանգություն»: «Յուրաքանչյուր մտածող ամերիկացի,- շարունակում էր Վիլսոնը,- դատապարտում է անտագոնիզմը, տարբերությունները ու հակադիր ամբիցիաները, որոնք հանդիսանում են թուրք բնակչության ռասայական և կրոնական տարրերի մեկը մյուսի դեմ լարելու պատճառը»: «Վերջին բռնությունների ժամանակ տեղի ունեցած անմեղ զոհերի տանջանքները խորը ազդեցություն ունեցան ամերիկյան համակրանքի ձևավորման վրա»: Վիլսոնը նշում էր, որ ոչ վերջին դեպքերի ժամանակ, ոչ էլ անցյալում ԱՄՆ-ի կառավարությունն անտարբեր չի մնացել: «Այն միշտ էլ ցանկացել է ուժ ունենալ այդ տանջանքները կանխելու համար, սակայն այն համոզված է, որ միջամտության ակնհայտ անհնարինության պայմաններում, այն անզոր է»:

[1] Նույն տեղում, էջ 560.

[2] **Էլվի Էյդի** (1842-1924) - ԱՄՆ-ի պետական գործիչ, պետքարտուղարի երկրորդ տեղակալ (1886-1924):

[3] **Հանտինգտոն Վիլսոն** (1875-1946) - ԱՄՆ-ի դիվանագետ, պետքարտուղարի տեղակալ (1909-1913):

Ներկա պայմաններում, շարունակում էր Վիլսոնը, ամենակարևոր հարցը «դժբախտ ժողովրդի» նոր ձևավորված սահմանադրական կառավարության հանդեպ վստահության ամրապնդումն է: Ըստ Վիլսոնի՝ սուլթանն արդեն իսկ իր «գարշանքն է» արտահայտել խորհրդարանի առջև իր հպատակների ջարդի հանդեպ, իր մտադրությունն էր հայտնել պատժել մեղավորներին, խոստացել իր ողջ հնարավորություններն օգտագործել՝ պահպանելու խաղաղությունը, արդարությունն ու հանգստությունը երկրի բոլոր շրջաններում, բոլոր ազգերի և կրոնների միջև: Վիլսոնը վստահություն էր հայտնում, որ սահմանադրական կառավարությունը համապատասխան բարեփոխումներ կիրականացնի և կձեռնարկի բոլոր միջոցները Փոքր Ասիայում վիճակն «ամբողջությամբ վերականգնելու», կոտորածների պատճառների քննություն կազմակերպելու և «անհանգիստ» շրջանների էֆեկտիվ ռազմական պաշտպանությունն ապահովելու ուղղությամբ:[1]

Պետքարտուղարությանն ուղղված օգոստոսի 11-ի նամակում Այնշտայնը գրում էր, որ նախկին օսմանյան հպատակները, որոնք ունեին ԱՄՆ-ի քաղաքացիություն, Օսմանյան կայսրության իշխանությունների կողմից չէին ճանաչվելու որպես օտարերկրացիներ, և եթե դատական որոշակի խնդիրներ ծագեն, նրանք դիտվելու են որպես օսմանյան քաղաքացիներ:[2]

Թեոդոր Ռուզվելտի պաշտոնավարության վերջին շրջանում վարչակազմը փորձում էր հնարավորինս մոտ հարաբերություններ հաստատել օսմանյան պաշտոնյաների և թուրք ազգայնականների հետ՝ ամերիկյան բիզնեսի մուտքը դեպի Թուրքիայի բնական ռեսուրսներն ու շուկաներն ապահովելու համար: Ուիլյամ Թաֆտի վարչակազմը նույնպես, կիրառելով «դոլարի դիվանագիտություն» և Օսմանյան կայսրությունում ԱՄՆ-ի առևտրական շահերի պաշտպանության քաղաքականություն, շատ ավելի մեծ նշանակություն էր տալիս առևտրին, քան հումանիտար մտահոգություններին: Միաժամանակ Վաշինգտոնում մտահոգություն կար Թուրքիայում տիրող քաղաքական իրավիճակի վերաբերյալ:[3]

[1] US Department of State, Papers relating to the Foreign Relations of the United States, with the Annual Message of the President Transmitted to Congress, December 7, 1909, Washington: Government Printing Office, 1914, pp. 557-558.

[2] Նույն տեղում, էջ 562:

[3] **Payaslian, Simon**, նշվ. աշխ., էջ 20:

. 1909 թ. ապրիլի 14-ին Լայշմանը հաղորդում էր պետքարտուղարին, որ հետադիմական դաժան շարժման արդյունքում տեղի էր ունեցել կառավարության տապալում և Ներկայացուցիչների պալատի նախագահի հրաժարական: Քաղաքը, ըստ դեսպանի, գտնվում էր զինված ամբոխի ձեռքին, Կոստանդնուպոլսի զորքն ապստամբել էր և անցել հետադիմական ուժերի կողմը: Սպանվածների թիվը, հնարավոր է, հասնում էր մի քանի հարյուրի, այդ թվում՝ երկու կառավարական պաշտոնյա, հայտնի պատգամավոր և զինվորական սպաներ: Լայշմանի կարծիքով՝ օտարերկրացիներին մեծ վտանգ չէր սպառնում:[1]

Ապրիլի 16-ին դեսպանը հաղորդում էր պետքարտուղարին, որ Կոստանդնուպոլսում տեղի ունեցող դեպքերն իրենց արձագանքն էին ունենում կայսրության տարբեր շրջաններում: Հայերի կոտորած էր տեղի ունեցել Ադանայում, որտեղ գտնվում էր ամերիկյան միսիոներական հաստատություն: Տեղեկություններ կան, որ երկու ԱՄՆ-ի քաղաքացի էր սպանվել կոտորածների ընթացքում, սակայն այդ տեղեկատվությունը դեռևս հաստատված չէր:[2] Հաջորդ օրը դեսպանը հաղորդում էր, որ Մերսինում ԱՄՆ-ի փոխհյուպատոսը հանձնարարություն էր ստացել մեկնելու Ադանա, սակայն նրանից դեռևս տեղեկություններ չէին ստացվել: Ըստ դեսպանի՝ լուրերն Ադանայում կոտորածների մասին հաստատվում են. ներկայումս ջարդը տարածվում է նաև դեպի շրջակա քաղաքները, ներառյալ Տարսոնը: Դեսպանը նշում էր, որ համապատասխան ճնշում էր գործադրում այդ կապակցությամբ կառավարության վրա, իսկ Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի կառավարությունները որոշում էին կայացրել ռազմանավեր ուղարկել Մերսին:[3]

Ապրիլի 19-ին Լայշմանը գրում էր պետքարտուղարին, որ Թուրքիայում բնակվող ամերիկացիների կյանքը վտանգված էր երկրում տեղի ունեցող իրադարձությունների պատճառով: Ըստ դեսպանի՝ երկու ամերիկացի էին սպանվել Ադանայում տեղի ունեցած անկարգությունների ժամանակ: Նրանց վրա կրակել էին, երբ նրանք փորձում էին փրկել մի ծեր թուրք այրի կնոջ բռնկված տունը: Ըստ դեսպանի՝ կենտրոնական կառավարությունը չէր տիրապետում իրավիճակին Ադանայում, իսկ Ալեքսանդրեթի և Ադանայի շրջանների տեղական իշխանությունները շատ թույլ էին իրավիճակը վերահսկելու համար: Դեսպանի կարծիքով՝ իտալական, ֆրանսիական և անգլիական ռազմանավերի ժամանումը կարող էր շատ դրական ազդեցություն ունենալ: Ամերիկյան ռազմանավի ներկայությունը Կոստանդնուպոլսում նույնպես կարող էր հոգեբանական նշանակություն ունենալ:[1] Երկու օր անց պետքարտուղարը տեղեկացնում էր Լայշմանին, որ ԱՄՆ-ի ռազմանավեր «Մոնտանան» և «Նորդ Կարոլայնան» հրաման էին՝ ստացել դուրս գալու Գուանտանամոյից և ուղևորվելու դեպի Միջերկրական:[2]

Ապրիլի 23-ին դեսպան Լայշմանը հաղորդում էր պետքարտուղարին, որ Ադանայում և Հալեպում իրավիճակը շարունակում էր ծանր մնալ, կոտորածները շարունակվում էին շատ քաղաքներում: Հաճընի միսիոներները, ըստ դեսպանի, գտնվում էին սարսափահար վիճակում, թեև տեղի ունեցող շարժումը կարծես թե ուղղված չէր օտարերկրացիների դեմ, միայն եթե նրանք իրենց մոտ փախստականներ չթաքցնեին:[3]

Նույն օրը, նկատի առնելով նախագահի մարդասիրական մտահոգությունները ու ԱՄՆ-ում հպատակություն ստացած հայերի անհանգստությունը, պետքարտուղարը հանձնարարում էր Մեծ Բրիտանիայում դեսպան Ուայթլոու Ռայդին[4] պարզել, թե Թուրքիայում հայերի կոտորածների առնչությամբ ինչ է արվում Բեռլինի պայմանագրի կատարման իմաստով:[5] Իր պատասխան նամակում (25 ապրիլի) դեսպան Ռայդը գրում էր, որ հայերի կոտորածների հետ կապված Մեծ Բրիտանիայի կողմից բողոքներ են ներկայացվել օսմանյան կառավարությանը, որն էլ խոստացել էր իր ուժերի ներածին չափով ամեն ինչ անել կանխելու հետագա ջարդը և զորք էր ուղարկել անհանգիստ շրջանները:[6]

Ապրիլի 27-ին Լայշմանն առաջարկում էր պետքարտուղարին, որ ռազմանավերը Ջիբրալթարն անցնելուն պես ուղևորվեն դեպի Մերսին և Ալեքսանդրեթ:[7]

Ապրիլի 29-ին Պենսիլվանիայի նահանգից ընտրված կոնգրեսմեն Իրվինգ Վանգերը[8] համատեղ բանաձև էր ներկայացրել Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատ, որում ողջունվում էր սահմանադրական կառավարության վերադարձը Թուրքիայում և սուլթան Մեհմեդ 5-րդ գահին բարձրանալը: Միաժամանակ հույս էր հայտնվում, որ նոր կառավարությունը կկարողանա վերացնել «քրիստոնյա միսիոներների և մնացած ոչ մահմեդականների նկատմամբ տեղի ունեցող զարհուրելի ջարդերը, որոնք սարսափեցնում են

---

[1] US Department of State. Papers relating to the Foreign Relations of the United States, with the Annual Message of the President Transmitted to Congress, December 7, 1909, Washington: Government Printing Office, 1914, pp. 562-563.
[2] Նույն տեղում, էջ 565.
[3] Նույն տեղում, էջ 565-566.

[1] Նույն տեղում, էջ 567:
[2] Նույն տեղում, էջ 568:
[3] Նույն տեղում:
[4] Ուայթլոու Ռայդ (1837-1912) - ԱՄՆ-ի դիվանագետ, *«New York Tribune»* թերթի խմբագիր, դեսպան Ֆրանսիայում (1889-1902), Մեծ Բրիտանիայում (1905-1912):
[5] Նույն տեղում:
[6] Նույն տեղում, էջ 569:
[7] Նույն տեղում:
[8] **Իրվինգ Վանգեր** (1852-1940) - ԱՄՆ-ի քաղաքական գործիչ, հանրապետական կոնգրեսմեն Պենսիլվանիայից:

քաղաքակիրթ աշխարհն իրենց դաժանությամբ»: Սակայն Ադանայի ջարդն այդպես էլ չստացավ այնպիսի արձագանք, ինչպիսին էր 1890-ականների թթ. ընթացքում ամերիկյան հասարակայնության զայրույթը: Հնարավոր է, որ դա նոր օսմանյան իշխանությունների հետ տնտեսական աճող համագործակցության արդյունքն էր: Այսպես՝ 1909 թ. ընթացքում ԱՄՆ-ից Թուրքիա էր արտահանվել 84 574 դոլարի հրազեն և 38 466 դոլարի փամփուշտ, իսկ 1910 թ.՝ 105 950 դոլարի փամփուշտ:[1]

Մայիսի 20-ին Լայշմանը տեղեկացնում էր պետքարտուղարին, որ Ադանայի և Հալեպի շրջանների վիճակն արագորեն բնականոն հունի մեջ էր մտնում: Շրջանի գյուղերից Ադանայում կուտակված փախստականները սկսում էին վերադառնալ իրենց տները: Ըստ դեսպանի՝ շուտով ոչինչ չէր վկայելու սարսափելի իրադարձությունների մասին՝ բացի ջախջախված և այրված տներից ու հազարավոր այրիներից և որբ երեխաներից, որոնք զրկվել էին իրենց հարազատներից և օջախներից, մնացել էին միմիայն բարեգործության հույսին: Ադանայի իրադարձությունները կարելի էր դիտարկել նույն տեսանկյունից, ինչ 1895-1896 թթ. կոտորածները՝ բացառությամբ այն հանգամանքի, որ այս անգամ երկու կողմերն էլ լավ զինված են եղել: Ըստ դեսպանի՝ կոնֆլիկտն իրանից ավելի շատ քաղաքացիական բախում էր երկու հակառակորդ ազգությունների միջև, քանի որ մինչև սահմանադրության հռչակումը հայերը զինվելու իրավունք չունեին, իսկ այժմ սահմանադրության առջև բոլոր ազգությունները հավասար էին և նույն արտոնություններն ունեին:

Ամերիկացի և այլ հյուպատոսների հաշվարկով՝ սպանվել էր 20-30 հազար հայ, թեև դեսպանի անձնական կարծիքով՝ այդ թիվը մեծապես չափազանցված էր. սպանվածների թիվն ընդամենը 6-7 հազար կարող էր լինել, որոնցից զգալի թիվ էին կազմում նաև մահմեդականները: Որոշակի բռնություններ երկուստեք կատարվել էին, սակայն կանանց, երեխաների և օտարերկրացիների նկատմամբ հատուկ բռնություններ չէին կատարվել: Ըստ դեսպանի՝ նոր կառավարությունը գործել էր «շատ պատշաճ կերպով, զորք էր ուղարկել Ադանա, ինչը վերականգնել էր վստահությունը բնակչության մոտ»: Ըստ դեսպանի՝ «Նորդ Քարոլայնան» ժամանել էր Մերսին մայիսի 13-ին, իսկ «Մոնտանան» Ալեքսանդրեթ՝ մայիսի 16-ին:

Ըստ դեսպանի՝ օսմանյան կառավարությունը խառը հանձնաժողով էր գործուղել Ադանա, որի կազմում ընդգրկված էին երկու պատգամավորներ, երկու հայեր, որոնց թեկնածությունները ներկայացրել էր պատրիարքարանը, ինչպես նաև երկու պաշտոնյա նախարարների խորհրդից:

[1] **Payaslian Simon**, նշվ. աշխ., էջ 20:

Դեսպանը դեռևս չէր ստացել ԱՄՆ-ի քաղաքացիներ Ռոջերսի և Մորերի սպանության հետաքննության վերջնական հաշվետվությունը: Դեսպանը հատուկ նշում էր իր նամակում Մերսինում Մեծ Բրիտանիայի փոխհյուպատոս, մայոր Դագթի-Ուայլիի կատարած աշխատանքն Ադանայում՝ ԱՄՆ-ի քաղաքացիների անվտանգությունն ապահովելու հարցում: Դեսպանն առաջարկում էր այդ կապակցությամբ պետքարտուղարության կողմից շնորհակալական նամակ հղել Ֆորին Օֆիսին:

Ըստ Լայշմանի՝ Ադանա քաղաքի արվարձաններում հայերը ցույց էին տվել «համառ դիմադրություն» և շատ դեպքերում բավականին հաջող: Հաճնում, որը պաշարված էր եղել շուրջ երկու շաբաթ, նրանք դիմադրել էին այնքան, մինչև որ զորքերն իրենց չէին ազատել, իսկ Ֆեկկայում նրանք ոչ միայն կարողացել էին հաջողությամբ պաշտպանվել, այլև զինաթափել էին անկանոն բանակայինների, որոնք փորձում էին մտնել քաղաք և անկարգություններ կազմակերպել: Շատ դեպքերում անկանոն բանակայիններն ամբոխի հետ միասին մասնակցել էին հայերի դեմ գործողություններին, սակայն որևէ փաստ չկար, որ կանոնավոր բանակը մասնակցել էր կոտորածներին: Որոշ դեպքերում այն նույնիսկ պաշտպանել էր հայկական թաղամասը:

Ըստ դեսպանի, բացի երկու ամերիկացիների սպանության դեպքից, ԱՄՆ-ի քաղաքացիները մասնավոր վնաս չեն կրել՝ բացառությամբ Քեսապի դպրոցի շինությանը պատճառված վնասին, այն էլ այն պատճառով, որ այնտեղ հայեր էին թաքնվել:[1]

3. Ամերիկյան դիվանագիտության գործունեությունն Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին

1909 թ. մայիսին, երբ Օսկար Շտրաուսը երրորդ անգամ ստանձնեց ԱՄՆ-ի դիվանագիտական ներկայացուցչության ղեկավարի պաշտոնը Կոստանդնուպոլսում, Թեոդոր Ռուզվելտը գրում էր նրան Աֆրիկայից. «Հեղափոխությունն ամբողջությամբ փոխել է իրավիճակը, և այս պահին, կարծում եմ, որ Կոստանդնուպոլիսը ամենից կարևոր և ամենից հետաքրքիր դիվանագիտական պաշտոնն է աշխարհում»:[2]

Նորանշանակ դեսպան գրում էր պետքարտուղարին, որ 1907 թ. դեսպանությունը քարտուղարության իմացությամբ համաձայնվել էր, որ օս-

[1] US Department of State. Papers relating to the Foreign Relations of the United States, with the Annual Message of the President Transmitted to Congress, December 7, 1909, Washington: Government Printing Office, 1914, pp. 575-577.
[2] Gordon, Leland James, նշվ. աշխ., էջ 58:

մանյան իշխանությունները բարձրացնեն մաքսատուրքը 8%-ից մինչև 11%-ը: Միաժամանակ նախկին դեսպան Լայշմանն ու արտաքին գործերի նախարարը համաձայնության էին եկել 1904 թ. ամերիկյան կրոնական, կրթական և բարեգործական հաստատությունների իրավական ճանաչման մասին: Հետագայում կողմերը համաձայնության էին եկել, որ օսմանյան կառավարությունը համապատասխան փոփոխությունների է ենթարկելու սեփականության գրանցամատյանը, որպեսզի անհատ սեփականատիրոջ անունով գրանցված սեփականությունը գրանցվի որպես ամերիկյան հաստատությունների սեփականություն և օգտվի համապատասխան բոլոր արտոնություններից: Հետագայում շուրջ 30 նման ամերիկյան հաստատություններ ավելացվել էին գրանցամատյանում: Սակայն, ըստ դեսպանի, երբ որ նա կրկին ժամանել էր Կոստանդնուպոլիս 1908 թ. սեպտեմբերին, պարզվել էր, որ օսմանյան կառավարությունն ամեն կերպ խոչընդոտել էր այդ համաձայնության իրագործմանը: Ըստ դեսպանի՝ ամերիկյան հաստատությունները գտնվում էին Օսմանյան կայսրության 140 տարբեր վայրերում, և շատ տեղերում ամեն մի վայրում կային 3-4 տարբեր հաստատություններ՝ դպրոցներ, եկեղեցիներ, մանկատներ և հիվանդանոցներ: Երեք դեպքում օսմանյան իշխանությունները չէին գրանցում սեփականությունը, քանի որ այն գրանցված էր թուրք հպատակների անունով, իսկ մյուս դեպքերի պարագայում համարվում էր, որ «Ամերիկյան խորհուրդն» ու «Ամերիկյան Պրեսբիտերական խորհուրդը» կորպորացիաներ էին, բաժնետիրական ընկերություններ, այլ ոչ թե կրոնական, կրթական կամ բարեգործական հաստատություններ: Այնուհետև դեսպանը զեկուցում էր այն բոլոր հանդիպումների և Բարձր Դռանը ներկայացված հայտագրերի մասին՝ խնդրին դրական լուծում տալու նպատակով:[1]

Սեպտեմբերի 1-ին Շտրաուսը հեռագրում էր պետքարտուղարին, որ ինքը կարողացել էր լուծում տալ ամերիկյան հաստատությունների կարգավիճակին վերաբերող հարցին:[2]

Թավտի վարչակազմը հիմնականում ուշադրություն չէր դարձնում Թուրքիայում տեղի ունեցող ազգայնականության և քրիստոնյաներին, մասնավորապես հայերին ուղղված երիտթուրքերի քաղաքականությանը: Պետքարտուղար Նոքսը 1911 թ. հունիսի 1-ին Թուրքիայում դեսպան նշանակված Ուիլյամ Ռոկհիլին հրահանգում էր առաջ տանել «Մերձավոր Արևելքում Միացյալ Նահանգների ավելի իրական և առևտրական, քան ակադեմիական շահերը»: Նույն տարվա ընթացքում պետդեպարտամենտի աջակցությամբ Կոստանդնուպոլսում հիմնադրվեց «Ամերիկյան առևտրի պալատը», որն ուներ գրասենյակներ Թուրքիայի խոշոր քաղաքներում: Պալատն ուներ նաև իր հրատարակությունը՝ *«Levant Trade Review»* պարբերականը, որը ներկայացնում էր երիտթուրքերի իշխանությունը որպես ժողովրդավարության հաստատմանն ուղղված կառավարություն, որի նպատակն էր առաջադիմությունն ու տնտեսական զարգացումը:[1]

Չնայած միսիոներական առաքելությունների խնդիրներին և օսմանյան կառավարության դժգոհություններին՝ ԱՄՆ-ի կառավարությունը փորձում էր որպես մեծ տերություն ներգրավվել Թուրքիայի թուլացող տնտեսության մեջ: Աբդուլ Համիդն արտահայտեց իր դժգոհությունը ամերիկացիներից, երբ ժամանակավորապես արգելեց հեռախոսների և գրամեքենաների ներկրումը ԱՄՆ-ից: Սուլթանը նաև վախենում էր, որ այդ միջոցները վնասակար դեր կարող էին ունենալ իր երկրի համար: Երիտթուրքերի իշխանության գալուց անմիջապես հետո նախագահ Ուիլյամ Թաֆտը առաջարկեց Դոլար-Դիվանագիտություն Չեսթեր նախագիծը, որը խոշոր ներդրում էր նախատեսում երկաթգծի և տնտեսության մեջ: Սակայն հետագայում՝ 1913 թ., ծրագիրը կանգնեցվեց: 1911-1912 թթ. իտալա-թուրքական պատերազմի ժամանակ «Ամերիկյան խորհուրդը» և մի շարք խաղաղասեր ամերիկյան կազմակերպություններ համոզեցին Սպիտակ տանը միջնորդել կողմերի միջև, սակայն նախագահը ձեռնպահ մնաց այդ քայլից: Բալկանյան պատերազմների ժամանակ Թաֆտը նույնպես մերժեց միջնորդությունը, սակայն որոշում կայացրեց օգնության ծրագրեր իրականացնել և ռազմանավեր ուղարկել Միջերկրական ծով:[2]

1911 թ. դեկտեմբերի 12-ին Ռոկհիլը գրում էր պետքարտուղարին, որ «եթե երկու ամիս առաջ Օսմանյան կայսրության ներքին իրավիճակը խաղաղության պահպանման հույսեր էր ներշնչում, որն այդքան կենսական էր կառավարության համար Իտալիայի հետ պատերազմի պայմաններում, ապա ներկայումս կրկին լուրջ անհանգստության պատճառներ կան, որոնք ամեն վարկյան կարող են հեռու գնացող բարդություններ առաջացնել»: Դեսպանը շարունակում էր, որ «պատճառները պետք է գտնել Թուրքիայում ներկայիս ռեժիմի անվճռականության մեջ»:[3]

Դեսպանը գրում էր, որ ստացված տեղեկությունների համաձայն, իրավիճակը Հայաստանում շարունակում էր մնալ նույնքան ծանր, ինչպես որ

[1] US Department of State. Papers relating to the Foreign Relations of the United States, with the Annual Message of the President Transmitted to Congress, December 6, 1910, Washington: Government Printing Office, 1915, pp. 857-858.
[2] Նույն տեղում, էջ 860:

[1] Payaslian, Simon, նշվ. աշխ., էջ 22:
[2] Grabill, Joseph L., նշվ. աշխ., էջ 45-46:
[3] The National Archives and Records Service, National Archives Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 4, 867.00 Political Affairs, 867.00/282a-477, William Woodville Rockhill to Philander Chase Knox, 1911, December 12, No. 89, p. 1.

Մակեդոնիայում. հայերի և քրդերի սպանությունները քուրդ ավազակների կողմից տեղի էին ունենում գրեթե ամեն օր, աճել էր ավազակային գործողությունների թիվը, միաժամանակ իշխանությունները ցուցաբերում էին նույն անտարբերությունն ինչպես և ամենուրեք: Հայ պատգամավորները վերջին շաբաթվա ընթացքում անհրաժեշտ էին համարել օսմանյան կառավարության ուշադրությունը հրավիրել Անատոլիայում իրավիճակի լրջության վրա և առաջարկել էին միջոցներ ձեռնարկել, սակայն, ըստ դեսպանի, նման քայլերը որևէ ազդեցություն չէին կարող ունենալ:[1]

1912 թ. օգոստոսի 30-ին Օսմանյան կայսրությունում դեսպան Ռոկհիլը գրում էր պետքարտուղարին, որ իրավիճակը Հայաստանում օրեցօր ավելի էր վատթարանում, սակայն Կոստանդնուպոլսում կարծես թե որևէ ուշադրություն դրան չէր դարձվում, թեև տեղի մամուլում շատ էր գրվում այն մասին, որ կառավարությունը խոստումներ էր տվել հայոց պատրիարքին և հայ պատգամավորներին կարգ ու կանոնը վերականգնելու մասին: Դեսպանը կից ներկայացնում էր Կոստանդնուպոլսի հայկական *«Ազատամարտ»* թերթում օգոստոսի 29-ին տպագրված հոդվածի թարգմանությունը, որում գրված էր. «Հայկական նահանգներից ստացվող նորությունները այնքան ցավալի և անհանգստացնող են, որ որևէ դյուրազգաց հայի սրտում ուրախության նույնիսկ շողք չի մնացել»: «Մենք միայն արդարություն ենք ուզում,- շարունակում էր հոդվածագիրը: - Հաստատե՛ք կարգ ու կանոն և անվտանգություն հայկական նահանգներում: Թո՛ւյլ տվեք աշխատասեր և հարկ վճարող ժողովրդին ապրել ազատորեն: Մի քանի հանցագործի մահապատիժը, մի քանի տասնյակ ավազակախմբերի անողորմ պատիժը բավարար կլինեն, որպեսզի ավազակները խորությամբ համոզվեն, որ նրանք այսքանից հետո չեն կարող մնալ անպատիժ: Դրան կհետևի կարգ ու կանոնը: Մենք արդարություն և կարգ ու կանոն ենք ուզում: Սա մեր համեստ պահանջն է: Մենք դրական քայլեր ենք սպասում այս ուղղությամբ ներկայիս կառավարությունից: Գործ և ոչ թե խոսքեր»:[2]

1912 թ. սեպտեմբերի 13-ին Ռոկհիլը կրկին գրում էր պետքարտուղարին «արևելյան Անատոլիայի հայ բնակչության անհանգստացնող իրավիճակի և նրանց դրության աճող ծանրության մասին»: Սեպտեմբերի 6-ին, ըստ դեսպանի, պատրիարքի նախագահությամբ տեղի էր ունեցել Հայոց ազգային ժողովի հանդիպում, որի ընթացքում քննարկվել էր հայ բնակչության իրավիճակը: Որոշվել էր պահանջել կառավարությունից «ձեռնարկել ե-

[1] Նույն տեղում, էջ 4:

[2] The National Archives and Records Service, National Archives Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 4, 867.00 Political Affairs, 867.00/282a-477, William Woodville Rockhill to Philander Chase Knox, 1912, August 30, No. 271, pp. 2, 5.

ռանդում միջոցներ Վանում, Բիթլիսում և ամենուրեք, ուր քրդերը սպանում են հայերին, անմիջապես կարգ ու կանոնը վերականգնելու ուղղությամբ և իրականացնել այն բարենորոգումները, որոնք ընդունվել էին տարիներ առաջ, սակայն երբևիցե չէին իրագործվել»: «Եթե Ազգային ժողովը չհամաձայնվեր դիմել այդ քայլին, - շարունակում էր դեսպանը, - պատրիարքն արդեն իսկ պատրաստվում էր փակել եկեղեցիները ու դպրոցները և տալ հրաժարական, մի քայլ, որը կարող էր առաջացնել օսմանյան կառավարության մտահոգությունը»:[1]

Նոյեմբերի 5-ին Բաղդադում ԱՄՆ-ի հյուպատոսը տեղեկացնում էր դեսպանին, որ շաբաթվա վերջին իր ընտանիքով քաղաք էր ժամանելու Բաղդադի նոր վալի Զեքքի փաշան: Ըստ հյուպատոսի, նա բանակի երրորդ կորպուսի հրամանատարն էր Հայաստանում հայկական կոտորածների ժամանակ, և դա նրա առաջին կարևոր քաղաքացիական նշանակումն էր: Նա խոսում էր միայն թուրքերեն, ուներ հինգը կին և իր էությամբ «հնաոճ թուրք էր»: Հյուպատոսի համաձայն՝ քաղաքի օտարերկրյա ներկայացուցիչները «մտավախություն» ունեին օտարերկրացիների հանդեպ նրա վերաբերմունքի մասին:[2]

Բալկանյան պատերազմի ընթացքում, երբ բուլղարական բանակը մոտենում էր Կոստանդնուպոլսին, Թաֆտի վարչակազմը դեսպան Ռոկհիլի առաջարկով և դիվանագիտական կորպուսի խնդրանքով, որոշակի վերապահությամբ հանձնարարեց «Սկորպիոն» ռազմանավին ուղևորվել դեպի Թուրքիայի ափերը՝ ԱՄՆ-ի քաղաքացիների կյանքի և սեփականության պաշտպանությունն ապահովելու նպատակով: Պետքարտուղար Նոքսը տեղեկացնում էր դեսպանին, որ զրահապատ երկու ռազմանավերին՝ «Թենեսիին» և «Մոնտանային» հրահանգ էր տրված ուղղվել դեպի Զմյուռնիա ու Բեյրութ և սպասել դեսպանության լրացուցիչ հրահանգների: Օսմանյան արտաքին գործերի նախարարությունն այդ օրերին հավաստիացնում էր ԱՄՆ-ի դեսպանությանը, որ իշխանությունները պատրաստ էին համապատասխան անվտանգություն ապահովել Սկյութարի ամերիկյան դպրոցների և Ռոբերտ քոլեջի համար: «Սկորպիոնը» Կոստանդնուպոլիս հասավ 1912 թ. նոյեմբերի 18-ին և ռազմական գործողությունների ավարտից և զինադադարի կնքումից հետո՝ դեկտեմբերի 3-ին, մեկնեց Օսմանյան կայսրության

[1] The National Archives and Records Service, National Archives Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 4, 867.00 Political Affairs, 867.00/282a-477, William Woodville Rockhill to Philander Chase Knox, 1912, September 13, No. 275, pp. 2-3.

[2] The National Archives and Records Service, National Archives Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 4, 867.00 Political Affairs, 867.00/282a-477, American Consul in Bagdad to American Ambassador, 1912, November 5, p. 1.

մայրաքաղաքից:[1] Նոյեմբերի 20-ին ռազմանավ «Բրուտուսին» հանձնարարվեց Նորֆոլկից շարժվել դեպի Զմյուռնիա: Միաժամանակ բրիտանական, ֆրանսիական և ռուսական կառավարությունները, որոնք ռազմանավեր ունեին նեղուցներում, խոստացան պաշտպանել ամերիկացիներին: Այսպիսով՝ «Սկորպիոնի» ներկայությունը Կոստանդնուպոլսում և մյուս նավերի առկայությունը Միջերկրականում ամբողջովին ապահովում էին ամերիկյան շահերը և ԱՄՆ-ի քաղաքացիների անվտանգության պաշտպանությունը Օսմանյան կայսրությունում:[2]

1913 հունվարի 21–ին Ռոկհիլը գրում էր պետքարտուղարին, որ անցյալ տարվա սեպտեմբերից հաճախակի էին դարձել Կոստանդնուպոլիս հասնող նորությունները հայերի «հալածանքի» մասին: Ըստ դեսպանի՝ հայկական նահանգների ներկայիս դժվարությունների հիմքում ընկած էր «ագրարային» հարցը: «Մեծ կոտորածների» տարիներին հազարավոր հայեր սպանությունների և բռնի տեղահանության արդյունքում լքեցին իրենց հողերը, որոնք գրավվեցին քրդերի կողմից: Այդ ժամանակներից սկսած, օսմանյան օրենքի համաձայն, լքված հողերը գրաված նոր տերերը որոշակի ժամանակահատվածից հետո, ստանում էին սեփականության իրավունք: Իսկ այն հայերը, որոնք վերջին շրջանում վերադարձել էին Անատոլիա, իրավաբանորեն չէին կարողանում վերականգնել իրենց սեփականության իրավունքը: Օսմանյան կառավարության կողմից այդ նպատակով նշանակված հանձնաժողովները նույնպես անկարող էին բավարարել կողմերի շահերը: Ըստ դեսպանի՝ «ագրարային» հարցը հանդիսանում էր քրդերի և հայերի միջև ներկայումս գոյություն ունեցող թշնամության հիմքը: Կառավարությունն անկարող էր դիմակայել համատարած զինված քրդերի գործողություններին, որոնք հանցանքներ էին գործում հայ կանանց հանդեպ, թալանում և ավերում էին հայերի ունեցվածքը: ԱՄՆ-ի դեսպանության տրամադրության տակ կային բազմաթիվ հանցագործությունների մանրամասն արձանագրություններ, որոնք ստացվել էին պատրիարքարանի կողմից: Սեպտեմբերին հանդիպում գումարած Հայ ազգային ժողովը հանգել էր այն եզրակացության, որ այլևս ի վիճակի չէր ոչինչ ձեռնարկել այս պայմաններում, և որպես «բողոք անտարբերության և տեղի պաշտոնյաների գաղտնի մասնակցության և մեղսակցության»՝ հայ պատրիարքը հրաժարական էր տվել: Թեև, ըստ դեսպանի, օսմանյան կառավարությունը «փորձում էր» լուծել «ագրարային» հարցը՝ կազմելով հանձնաժողովներ և իրականացնելով «հետաքննություններ», ծախսելով 20 հազար թուրքական լիրա «հողային դժվարությունները լուծելու նպատակով», սակայն իրականում «զարմանալի էր», որ կառավարությունն անկարող էր «արմատախիլ անել վարչական քաղցկեղը», որը դարերի ընթացքում այս կամ այլ կերպ թուլացնում էր կայսրության հզորությունը: Ըստ դեսպանի՝ այս պայմաններում, երբ աշխարհը չի կարողանում լուծում գտնել Հայկական հարցի համար, հայերը դիմում էին տարբեր միջոցների: Ժամանակին շարժում էր սկսվել հայերի ինքնավարության համար, սակայն նման լուծումը «պետք է լրջորեն անտեսել, քանի որ հայ ժողովրդի աշխարհագրական ցրվածությունն անհնարին է դարձնում նման զարգացումը»: «Ռուսական կայսրության հետ միավորման շարժումը հնարավոր է ամենից պատճառաբանվածն է, - գրում էր դեսպանը, - քանի որ ներկայումս Ռուսաստանում ապրում են շուրջ երկու միլիոն հայեր, որոնք շատ ավելի լավ վիճակում են, քան Թուրքիայում ապրող իրենց հայրենակիցները»: Միևնույն ժամանակ, ըստ դեսպանի, լավ տեղեկացված շատ հայեր բացահայտ կերպով ասում էին, որ եթե Անատոլիայում ապրող հայերը կարողանան ձերբազատվել ներկայիս «դաժան տանջանքներից», ապա նրանք կգերադասեն մնալ սուլթանի ենթակայության տակ, քան ընկնեն ռուսական ցարի իշխանության ներքո: Դեսպանի կարծիքով՝ Հայկական հարցը թուրքական կառավարության համար ոչ միայն ներքին, այլև լուրջ արտաքին խնդիր էր, քանի որ Ռուսաստանը կարող էր օգտագործել իրավիճակն ու միջամտել: Ըստ դեսպանի՝ այս խնդիրը վկայում էր այն մասին, որ «օսմանյան թուրքերն իրականում այդպես էլ չէին կարողացել գրավել Քրդստանը և ստեղծել այստեղ էֆեկտիվ կառավարման համակարգ»:[1]

Փետրվարի 7-ին Մերսինում ԱՄՆ-ի հյուպատոս Էդվարդ Նաթանը զեկուցում էր պետքարտուղարին, որ անցյալ շաբաթ Հաճընն քաղաքում տեղի էին ունեցել հուզումներ: Կառավարությունը որոշել էր ձերբակալել հինգ հայ «հանցագործների», որոնք «սարսափի» մեջ էին պահում քաղաքը: Տեղի էր ունեցել փողոցային հրաձգություն, որի արդյունքում սպանվել էին հինգ զինվոր, վիրավորվել ևս հինգը, «հանցագործներից» մեկը վիրավորվել էր: Կրակոցները տեղի էին ունեցել ամերիկյան որբանոցի և առաքելության շրջակայքում: «Հանցագործները» կարողացել էին պատսպարվել միսիոներական առաքելության մոտ գտնվող մի մեծ շենքում, որը շրջապատել էին զինվորները: Ուրբաթ օրը զինվորները կրակ էին բացել շրջապատված շենքի վրա, որի արդյունքում «հանցագործները» սպանվել էին: Ըստ հյուպատոսի՝ միսիոներները վախենում էին, որ զինվորները կարող էին վրեժխնդիր լինել հայ բնակչությունից, որը մեծամասնություն էր կազմում քաղաքում, և կազ-

[1] **Payaslian, Simon,** նշվ. աշխ., էջ 23:
[2] **Howard, Harry N.,** նշվ. աշխ., էջ 25-26:

[1] The National Archives and Records Service, National Archives Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 4, 867.00 Political Affairs, 867.00/282a-477, William Woodville Rockhill to Philander Chase Knox, 1913, January 21, pp. 1-4.

մակերպել համատարած հայկական կոտորած, որի արդյունքում հնարավոր էին նաև հրդեհներ: Հյուպատոսի կարծիքով՝ արդեն անցել էր մի քանի օր, և նման վտանգ կարծես թե քաղաքին այլևս չէր սպառնում:

Հյուպատոսը զեկուցում էր, որ երեկ այդ առիթով մեկնել էր Ադանա և հանդիպել նահանգապետ Էմին բեյի հետ: Նա ասել էր հյուպատոսին, որ իրավիճակը Հաճընում վերածվել էր «անարխիայի» և պետք էր կիրառել խիստ միջոցներ: Նահանգապետը նշում էր, որ պատրաստ էր դա անել, եթե իրավիճակն ավելի բարդանար, ինչպես նաև դիմել էր կառավարությանը՝ «երրորդ կողմերի» հնարավոր կորուստները հատուցելու համար: Բարեբախտաբար ամերիկյան միսիոներների ունեցվածքը չէր տուժել: Նահանգապետը հավաստիացրել էր հյուպատոսին, որ ամերիկացիները վախենալու ոչինչ չունեին, և ընդհանուր իրավիճակը վիլայեթում հանգիստ էր: Հյուպատոսի կարծիքով՝ «հանցագործների» նկատմամբ իրականացված գործողությունն անհրաժեշտություն էր, թեև այն կարող էր հայերի դեմ հարձակման պատճառ հանդիսանալ: Նահանգապետը նշում էր նաև, որ թուրք գյուղացիները հիմնականում խաղաղասեր էին, բայց քաղաքներում կան տարրեր, որոնք «ուրախ» կլինեն կազմակերպել նման անկարգություններ քաղաքում: Սակայն նահանգապետը հավաստիացրել էր, որ ոստիկանությունն անհրաժեշտ կարողություններ ուներ ճնշելու հնարավոր հուզումները: Այս ամենի մասին հյուպատոսը տեղեկացրել էր նաև ԱՄՆ-ի դեսպանությանն ու Բեյրութում տեղակայված ամերիկյան «Մոնտանա» ռազմանավի նավապետ Ուիլյամ Ֆլետչերին:[1]

Փետրվարի 21-ին ԱՄՆ-ի Ռոկհիլը գրում էր պետքարտուղարին, որ Մակեդոնիայում բուլղարները նպատակադրվել են կազմակերպել մահմեդականների տեղահանություն, ինչը շուտ թե ուշ հանգեցնելու է քրիստոնյա բնակչության ճնշումների կայսրության անատոլիական նահանգներում:[2]

Ապրիլի 18-ին հյուպատոս Նաթանը հաղորդում էր Բեյրութում գտնվող «Մոնտանա» ռազմանավի նավապետին, որ, Հաճնի Սիացյալ որբանոցի և առաքելության տնօրենից ստացված հեռագրի համաձայն, քաղաքում տեղի էին ունեցել անկարգություններ, որոնց համար առիթ էին հանդիսացել ժանդարմների կողմից շուկայում մարդկանց նկատմամբ կատարված «անազնիվ» գործողությունները: Նահանգապետի և կրոնական ղեկավարների

[1] The National Archives and Records Service, National Archives Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 5, 867.00 Political Affairs, 867.00/478-704, Edward Nathan to Philander Chase Knox, 1913, January 21, pp. 1-4.

[2] The National Archives and Records Service, National Archives Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 5, 867.00 Political Affairs, 867.00/478-704, William Woodville Rockhill to Philander Chase Knox, 1913, February 21, p. 3.

ջանքերի շնորհիվ ժողովրդի մեջ ստեղծված խուճապը հանդարտվել էր: Անկարգությունների արդյունքում սպանվել և վիրավորվել էին մի քանի ժանդարմներ, ինչը առաջացրել էր վրեժխնդրության ցանկություն տեղական ժանդարմերիայի շրջանում: Ժանդարմներից շատերը Սալոնիկից էին, որոնք «բարի զգացմունքներ չէին տածում քրիստոնյաների հանդեպ»:[1]

Ապրիլի 29-ին Ռոկհիլը գրում էր պետքարտուղարին, որ վիլայեթների վարչակարգի մասին օրենքը ընդունվել էր մարտի 26-ին և ուժի մեջ մտել մարտի 28-ին: Օրենքը, որը բաղկացած էր 149 հոդվածներից, դեսպանը համարում էր մեծ քայլ առաջ տեղական իշխանությունների վարչական և ֆինանսական անկախության, վիլայեթների ապակենտրոնացման ուղղությամբ: Վալիի կամ գլխավոր նահանգապետի իշխանությունը մեծացել էր և միաժամանակ կարգավորվել: Վալին հանդիսանում էր բոլոր նախարարությունների ներկայացուցիչը և պատասխանատու էր վիլայեթի ընդհանուր վարչակարգի և կարգ ու կանոնի պահպանման համար: Նրա հրամաններին էին ենթարկվում նահանգի ոստիկանությունն ու տեղակայված զինվորական ուժերը: Վարչական խորհրդի ոչ ընտրովի անդամներ էին ոչ մահմեդական կրոնական ղեկավարներն ու մահմեդական կրոնական ղեկավարները՝ մուֆտիները: Քննարկման ընթացքում էր գտնվում նաև նահանգների վարչական գործերում օտարերկրյա խորհրդականների մասնակցությունը:

Միաժամանակ դեսպանը տեղեկացնում էր, որ դեռևս չէր լուծվել Սըվազ, Խարբերդ, Էրզրում, Վան, Բիթլիս և Դիարբեքիր բարեփոխումների հանձնաժողով գործուղելու ժամկետը, որը պետք է քննության առնեն հայերի և քրդերի հողերի սեփականության հարցը:[2]

Ապրիլի 30-ին Նաթանը հաղորդում էր Բեյրութում գտնվող «Մոնտանայի» նավապետ Ֆլետչերին, որ Հաճընի-Ադանա ճանապարհին երկու հայեր հարձակման էին ենթարկվել թուրքերի կողմից և լրջորեն վիրավորվել: Կասկած չկար, շարունակում էր հյուպատոսը, որ բնակչության ցածր խավի մոտ սանձարձակության և անօրինության տրամադրություններ էին տիրում, սակայն, իր կարծիքով, կոտորածի կամ մեծ անկարգության վտանգ գոյություն չուներ: Մյուս կողմից, հայերն իրենց գաղտնի կազմակերպությունների հավաքներով և գործողություններով ավելացնում էին իշխանութ-

[1] The National Archives and Records Service, National Archives Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 5, 867.00 Political Affairs, 867.00/478-704, Edward I. Nathan to Captain William B. Fletcher, 1913, April 18, p. 1

[2] The National Archives and Records Service, National Archives Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 5, 867.00 Political Affairs, 867.00/478-704, William Woodville Rockhill to Philander Chase Knox, No. 480, 1913, April 29, pp. 1-3.

յունների կասկածամտությունը: Ըստ հյուպատոսի՝ այդ օրերին Բեյրութում էին գտնվում գերմանական «Ստրասբուրգ» և իտալական «Ետրուրիա» ռազմանավերը:[1]

Մայիսի 15-ին Ռոկհիլը գրում էր պետքարտուղարին, որ մայիսի 12-ին հայկական համայնքը ներկայացնող պատվիրակություն էր այցելել մեծ վեզիրին և ներկայացրել նրան հուշագիր, ուր ներկայացված էր Օսմանյան կայսրության ծանր վիճակը: Հուշագրում պահանջ էր ներկայացված հայերի անվտանգությունը կառավարության կողմից ապահովելու համար: Մեծ վեզիրին ներկայացված հուշագիրը հայկական պատրիարքարանի կողմից բնութագրվում էր որպես «վերջին իրավական քայլը», որն առաջարկվել էր Հայոց Ազգային ժողովի կողմից՝ Արևելյան Անատոլիայի վիլայեթների հայ բնակչության վիճակը բարելավելու ուղղությամբ: Ըստ դեսպանի՝ հայ համայնքի կողմից անցյալում այդ ուղղությամբ ձեռնարկված սահմանադրական և օրինական բոլոր քայլերն ավարտվել էին անհաջողությամբ և դժվար էր պատկերացնել, թե այլևս ինչ էր հնարավոր ձեռնարկել: Հուշագրում նշվում էր, որ հայ համայնքը հիասթափվել էր սահմանադրական կարգերից, քանի որ հայերի հանդեպ կիրառվող դաժան ճնշումը ոչ միայն չէր դադարել և շարունակվում էր, այլև ավելի էր սաստկացել վերջին չորս կամ հինգ տարիների ընթացքում՝ վերածվելով «անհանգստացնող սիմպտոմների՝ ջարդերի և աղետի նախակարապետի, որը կարող էր իր դաժանությամբ ստվերի մեջ թողնել անցյալի սարսափելի ողբերգությունները»: Հուշագրում նաև բողոք էր ներկայացվում որոշ ժամանակ առաջ ներքին գործերի նախարարի կողմից պատրիարքարանի պատվիրակությունն ընդունելուց հրաժարվելու կապակցությամբ, որի պատճառով Ազգային ժողովը պատրաստվում էր հրաժարական տալ, սակայն հետագայում որոշում կայացվեց մեկ անգամ ևս հուշագիր ներկայացնել իշխանություններին:[2]

Հուշագրում նշվում էր, որ կայսրության «դժբախտությունների» պատասխանատվությունը սովորաբար ընդունված էր դնել քրիստոնյաների վրա, իսկ մահմեդական բնակչության շրջանում տարածված կարծիքն այն էր, որ «մնացյալ օսմանյան տարածքների պաշտպանությունը եվրոպական ներխուժումից հնարավոր չէ առանց հայկական տարրի ոչնչացման»:[3] Քանի որ մահմեդականների շրջանում նման կարծիք էր տարածված, հայերի նկատմամբ սպանությունների, թալանի և ուժի միջոցով մահմեդականացման դեպքերը ոչ միայն շարունակվում էին, այլև բազմապատկվել էին, իսկ տեղական իշխանությունները շարունակում էին հերքել նման փաստերը և կեղծ տեղեկատվություն տրամադրել կենտրոնական իշխանություններին: Հուշագրում նշվում էր նաև, որ հայ բնակչությունն այդպես էլ ոչինչ չէր ստացել սահմանադրական իշխանությունից, քանի դեռ նախկինում իր հանդեպ գործած հանցագործությունների հեղինակներն իրենց պատիժը չէին ստացել: Նահանգներում թշնամական վերաբերմունք էր տիրում հայերի հանդեպ. ձերբակալվում էին անմեղ հայեր, հայերից առգրավվում էր զենքը, այն պարագայում, երբ մահմեդականներն իրավունք էին ստացել անսահման կերպով զինվել: Հուշագրում նշվում էր նաև, որ նահանգների պաշտոնյաները հիմնականում նախկին ռեժիմին բնորոշ մտածելակերպով էին շարժվում, անկարող էին մտածել և գործել նորովի: «Այդ պաշտոնյաները քրիստոնյաներին համարում են երկրի անհաջողությունների հիմնական պատճառը և հավատացած են, որ այդ դժբախտությունների վերացման համար անհրաժեշտ է ոչնչացնել քրիստոնյաներին»,- գրված էր փաստաթղթում:[1]

Հուշագրում առաջարկվում էր, որ կառավարությունը ցուցում տար տեղական իշխանություններին խստորեն պատժել քրիստոնյաների հանդեպ նման քաղաքականություն իրագործող պաշտոնյաներին, ինչպես նաև պաշտոնական հայտարարություն հրապարակեր՝ քրիստոնյաների հանդեպ նման մոտեցումները հերքելու մասին: Այն մեղադրանքները, թե իբր հայերը պատասխանատու էին Բալկանյան պատերազմի անհաջողության համար, հուշագրում համարվում էին որպես «անհեթեթություն»: Ըստ հուշագրի հեղինակների՝ հայ սպաներն ու զինվորները դրսևորել էին «քաջություն և հայրենասիրություն» պատերազմի ընթացքում:[2]

Իր զեկուցագրի վերջում դեսպանը հույս էր հայտնում, որ կառավարությունը ճիշտ որոշումներ կընդունի, սակայն անձնապես վստահ չէր, որ դա երբևիցե տեղի կունենա:[3]

Մայիսի 24-ին դեսպան Ռոկհիլը գրում էր պետքարտուղարին, որ վերջին հինգ տարիների ընթացքում վարած իր ներքին քաղաքականության հետևանքով, մասնավորապես Ասիական Թուրքիայում, կառավարությունը կորցրել էր իր «բարոյական իշխանությունը», չէր կարողացել բավարարել

[1] The National Archives and Records Service, National Archives Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 5, 867.00 Political Affairs, 867.00/478-704, Edward I. Nathan to Captain William B. Fletcher, 1913, April 30, p. 1.
[2] The National Archives and Records Service, National Archives Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 5, 867.00 Political Affairs, 867.00/478-704, William Woodville Rockhill to Philander Chase Knox, 1913, May 15, p. 2.
[3] Նույն տեղում, էջ 3:

[1] Նույն տեղում, էջ 3-4:
[2] Նույն տեղում, էջ 4:
[3] Նույն տեղում, էջ 5:

նահանգների պահանջները, հաղթարարել գոյություն ունեցող թշնամությունն ու վերականգնել վստահությունն իր հանդեպ:[1]

Տարբեր իրավունքներ և կոնցեսիաներ տրամադրելով եվրոպական տերություններին և փորձելով բավարարել նրանց հետաքրքրություններն ու շահերը՝ երիտթուրքական կառավարությունը նման քաղաքականությամբ ուժեղացրել էր նրանց ազդեցությունն Ասիական Թուրքիայում: Դեսպանը գրում էր, որ միջազգային հսկողությունից և վատագույն դեպքում կայսրության մնացած տարածքները նրանց միջև բաժանումից խուսափելու նպատակով երիտթուրքական կառավարությունը պետք է կարողանար առանց հապաղումների ապահովել էֆեկտիվ կառավարում, սակայն դա ներկայումս գրեթե անհնարին էր իրականացնել թուրքերի կողմից, քանի որ թուրքերը, ինչպես այդ շրջաններում, այնպես էլ Եվրոպական Թուրքիայում, փոքրամասնություն էին կազմում գրեթե բոլոր նահանգներում: Ինչպես տնտեսական, այնպես էլ մտավորական տեսակետից թուրքերը շատ ավելի ցածր մակարդակի վրա էին գտնվում այլ ազգությունների համեմատությամբ, իսկ լավ կառավարման ապահովման դեպքում, որը նշանակում էր կրթության տարածում և տնտեսական աճ, թուրքերը կարող էին հայտնվել ոչ նպաստավոր դիրքում, ինչն էլ ավելի կխորացներ նրանց հարաբերությունների խզումը հայերի, արաբների և հույների միջև, և կնվազեցներ կայսրության տարածքների հանդեպ նրանց հսկողության հնարավորությունները:[2]

ԱՄՆ-ի դեսպանը եզրակացնում էր, որ եվրոպական տերությունները շատ լավ գիտակցում էին, որ թուրքերը՝ իրենց «սահմանափակ և հոռետեսական մտայնությամբ», ինչպես նաև զանազան էթնիկ տարրերի առկայությունը, չէին կարող նպաստել իրենց տնտեսական շահերի ապահովմանն Ասիական Թուրքիայում: Եվ եթե թուրքական կառավարությունը չկարողանար լուծել իր առջև դրված խնդիրն Ասիական Թուրքիայում, եվրոպական տերությունները կդառնան այս պարագայում միակ դատավորները, ինչը կնշանակեր թուրքական կառավարման վերջը:[3]

Մայիսի 24-ին Ռոկհիլը գրում էր պետքարտուղարին, որ թեև թուրքական կառավարությունը դեռևս վերջնական որոշում չէր կայացրել ներքին բարենորոգումների իրականացման մասին, սակայն արդեն իսկ փոխել էր իր վերաբերմունքը նախկին քաղաքականության նկատմամբ: Մասնավորապես կառավարությունը փոխել էր իր քաղաքականությունը ստուգման հանձնաժողովների նախկին համակարգի նկատմամբ: Նոր համակարգը շատ ավելի ճկուն էր լինելու, այն նախատեսում էր գլխավոր տեսուչների նշանակում կայսրության վեց գոտիների համար: «Սիրիական գոտու» մեջ մտնելու էին Սիրիայի, Բեյրութի և Հալեպի վիլայեթները, «Միջագետքի գոտին» կազմվելու էր Բաղդադի, Բասրայի և Մոսուլի վիլայեթներից, «Արևելյան Անատոլիայի գոտում» ընդգրկվելու էին հայկական հինգ վիլայեթները, իսկ կայսրության մնացած տարածքները կազմելու էին մնացած երեք գոտիները: Յուրաքանչյուր տեսչություն կազմված էր լինելու գլխավոր տեսուչից և մի քանի մշտական հանձնաժողովներից ու տեխնիկական կցորդներից, որոնք զբաղվելու էին հասարակական աշխատանքների, գյուղատնտեսության, առևտրի և այլ ոլորտներով: Եթե որոշ շրջաններում գլխավոր տեսուչները թուրքեր էին լինելու, որոշ գոտիներում նախատեսված էր նշանակել օտարերկրացի տեսուչներ, մասնավորապես «Արևելյան Անատոլիայի» և արաբական երկու գոտիներում գլխավոր տեսուչները վստահաբար օտարերկրացիներ էին լինելու:[1]

Նախագահ Վուդրո Վիլսոնի վարչակազմը դերակատարություն չուներ Հայկական հարցում քաղաքականություն մշակելու մեջ: Թուրքիայի հանդեպ քաղաքականությունն իրականացնում էին պետքարտուղար Ուիլյամ Բրայանը[2], նրա աշխատակազմն ու Օսմանյան կայսրությունում նորանշանակ դեսպան Հենրի Մորգենթաուն:[3] Վերջինս նշանակվել էր 1913 թ. սեպտեմբերի 4-ին, և այդ պահին նա որևէ պատկերացում չուներ Թուրքիայի մասին: Երիտասարդ ժամանակ նա ֆինանսական հաջողությունների էր հասել և աջակցել Նյու Յորքի տարբեր կազմակերպություններին, մասնավորապես *«Նյու Յորք Թայմս»*-ի խմբագրության նոր շենքի շինարարությանը: Նյու Յորքում նա մասնակցել էր նաև Դեմոկրատական կուսակցության նախընտրական քարոզարշավին և որևէ փորձառություն արտաքին հարաբերությունների ասպարեզում չուներ: Դեմոկրատական կուսակցությանը և Վիլսոնի ընտրարշավին նրա նվիրվածությունը պատճառ դարձավ

[1] The National Archives and Records Service, National Archives Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 5, 867.00 Political Affairs, 867.00/478-704, William Woodville Rockhill to Philander Chase Knox, No. 490, 1913, May 24, p. 2.
[2] Նույն տեղում, էջ 4:
[3] Նույն տեղում, էջ 5:

[1] Նույն տեղում:
[2] Ուիլյամ Բրայան (1860-1925) - ԱՄՆ-ի քաղաքական և պետական գործիչ, Դեմոկրատական կուսակցության ղեկավարներից, կոնգրեսմեն Նեբրասկայից, պետքարտուղար (1913-1915):
[3] Հենրի Մորգենթաու (1856-1946) - ԱՄՆ-ի դիվանագետ, իրավաբան, դեսպան Օսմանյան կայսրությունում (1913-1916), պատերազմի ընթացքում ներկայացնում էր նաև Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի, Իտալիայի և Բելգիայի շահերը, Մերձավոր Արևելքում Ամերիկյան օգնության կոմիտեի (Ամերկոմ) փոխնախագահ, փորձում էր կանխել հայերի արտաքսումն ու կոտորածը, նրա «Հայկական ջարդերի առթիվ» (1918), «Ինչո՞ւ պետք է կործանել Օսմանյան կայսրությունը» (1918), «Հայաստանը կանչում է» (1918), «Հայերի կոտորածները 1915-ին» (1922) հոդվածները, «Հայաստանի ողբերգությունը» (1918), «Բոսֆորի գաղտնիքները. 1913-1916» (1918), «Դեսպան Մորգենթաուի հուշերը» (1919) գրքերը կարևոր վկայություններ են պարունակում Մեծ եղեռնի մասին:

նոր նախագահի կողմից նրա հանդեպ ձևավորված «մեծ վստահության» համար: Մորգենթաուն սկզբից հրաժարվել էր այդ պաշտոնից: 1913 թ. հունիսի 12-ին նա գրում էր Վիլսոնին, որ «որևէ նշանակում չի կարող դիտարկվել որպես հրեական», և որ «հրեաների դեսպանական նշանակումները չպետք է սահմանափակվեն միմիայն թուրքական ներկայացուցչությունում աշխատանքով»: Սակայն շուտով Մորգենթաուն համաձայնում է ընդունել նախագահի առաջարկը՝ մեծապես ռաբբի Ստեֆեն Վայզի դրդմամբ: Վիլսոնի ֆինանսների քարտուղար Ուիլյամ Մակ Ադու[1] գրում էր Մորգենթաուին, որ, չնայած Թուրքիայի ներգրավվածությանը Բալկանյան պատերազմում, այդ երկրի կարևորությունն Արևելքում շարունակում էր մեծ մնալ, և «մենք այնտեղ կարիք ունենք Ձեր նման ուժեղ, խելացի և նրբազգաց մարդու, մասնավորապես ներկա ժամանակաշրջանում»:

Մեկնելուց առաջ Մորգենթաուն հանդիպումներ էր ունեցել պետքարտուղար Ուիլյամ Բրայանի և Նյու Յորքում «Ամերիկյան խորհուրդի» անդամների հետ: Վերջին հանդիպման և խորհրդի անդամ Ռոբերտ Սպիրի նամակում նշվում էր դարեր շարունակ կայսրության քրիստոնյաների ծանր վիճակի մասին և միսիոներների առաքելության մասին, որն ուղղված էր տարածաշրջանում խաղաղություն ապահովելու, դպրոցներ բացելու, առաջադեմ աշխարհից կտրված ազգություններին լուսավորություն բերելու գործին:

1913 թ. նոյեմբերի 1-ի առավոտյան Մորգենթաուն Ջեյմս Բարտոնի ուղեկցությամբ «Ջորջ Վաշինգտոն» ռազմանավով Նյու Յորքից մեկնեց Լոնդոն և այնտեղից էլ նոյեմբերի 27-ին ժամանեց Կոստանդնուպոլիս: Նրան դիմավորում էին ժամանակավոր հավատարմատար Հոֆման Ֆիլիպը, դեսպանության անձնակազմն ու Մերձավոր Արևելքում «Standard Oil» ընկերության ներկայացուցիչ Օսկար Գյունկելը: Մեկ շաբաթվա ընթացքում դեսպանը հանդիպումներ էր ունեցել մեծ վեզիրի, արտաքին գործերի նախարար Սաիդ Հալիմ փաշայի[2] հետ և դեկտեմբերի 11-ին իր հավատարմագրերն էր հանձնել սուլթանին:[3]

Շատ շուտով թուրք պաշտոնյաները սկսում են հաճախակի դեսպանությանը դիմել թուրք-ամերիկյան տնտեսական հարաբերությունները խո-

[1] **Ուիլյամ Մակ Ադու** (1863-1941) - ԱՄՆ-ի քաղաքական և պետական գործիչ, իրավաբան, ֆինանսների քարտուղար (1913-1918), սենատոր Կալիֆոռնիայից (1933-1938):

[2] **Սաիդ Հալիմ փաշա** (1865-1921) – Օսմանյան կայսրության պետական գործիչ, մեծ վեզիր (1913-1917), երիտթուրքերի պարագլուխներից և հայերի ցեղասպանության գլխավոր հանցագործներից, Առաջին համաշխարհային պատերազմից հետո ձերբակալվել էր և պատասխանատվության ենթարկվել իբրև պատերազմի հանցագործ և հայերի տեղահանության ու ցեղասպանության կազմակերպման մասնակից, աքսորվել էր Մալթա և 1921 թ. ազատ արձակվել, նույն թվականին սպանվել էր Հռոմում հայ վրիժառու Արշավիր Շիրակյանի կողմից:

[3] **Payaslian, Simon**, նշվ. աշխ., էջ 36-37:

րացնելու առաջարկներով: Դեկտեմբերի 22-ին դեսպանը հանդիպել էր Թալեաթ փաշայի[1] հետ, որի հետ քննարկել էր Թուրքիային ֆինանսական վարկ տրամադրելու հարցը: Թալեաթը ծանոթացրել էր Մորգենթաուին կայսրության տնտեսական վիճակի հետ և առաջարկել շրջայց կազմակերպել երկրով: Անմիջապես մյուս օրը դեսպանը համոզել էր «Standard Oil»-ին 500 հազար թուրքական ֆունտի չափով վարկ տրամադրել Օսմանյան կայսրությանը: Թուրք պաշտոնյաների հետ հանդիպումների ժամանակ Մորգենթաուն տեղեկացվել էր, որ թուրքական ռազմական նավատորմը, որը բաղկացած էր 32 նավից, կարիք ուներ լրացուցիչ ռազմանավերի ձեռքբերմանը, իսկ Օսմանյան կայսրության առևտրի և գյուղատնտեսության նախարար Սուլեյման Ալ-Բուստանին առաջարկել էր ԱՄՆ-ին մասնակցել թուրքական ֆինանսական համակարգի բարեփոխման ծրագրերին: Հետագայում Թալեաթը խնդրել էր դեսպանից 5 մլն դոլարի չափով վարկ տրամադրել կառավարությանը: Կոստանդնուպոլսի Ամերիկյան առևտրի պալատում ունեցած իր ելույթի ժամանակ Մորգենթաուն առաջարկել էր ներկա գտնվող Թալեաթին և կառավարության մյուս անդամներին Թուրքիա գործուղել Նյու Յորքի ֆինանսիստ Հենրի Բրյուերին՝ կայսրության ֆինանսական իրավիճակն ուսումնասիրելու նպատակով: Բրյուերի փոխարեն ամերիկացի միլիոնատեր Բիլլինգզն այցելեց Կոստանդնուպոլիս:[2]

Դեկտեմբերի 27-ին Մորգենթաուն կարճատև հանդիպում էր ունեցել մի խումբ հայերի հետ, որոնց թվում էին պատրիարք Զավեն Եղիայանը և Ռոբերտ քոլեջի պրոֆեսոր Աբրահամ Հակոբյանը: Նրանք բողոքում էին, որ արևելյան նահանգներում ապրող հայերը դարձել էին քրդերի «վասալները», նրանք իջնում էին սարերից, երբ որ իրենց որևէ բան էր պետք, մասնավորապես, երբ քուրդ ղեկավարներին հայ աղջիկ կամ հարս էր դուր գալիս և փախցնում էին նրանց: Նրանք տեղեկացնում էին Մորգենթաուին, որ արևելյան շրջանների հայ բնակչության թիվը կազմում էր չորս միլիոն՝ երկու միլիոն Թուրքիայում և երկու միլիոն Ռուսաստանում: Ըստ Կոստանդնուպոլսի պատրիարքարանի 1912 թ. տվյալներով՝ Օսմանյան կայսրության 2 100 000 հայերից 1 018 000-ը (48.5%) ապրում էին հայկական վեց (Վան,

[1] **Մեհմեդ Թալեաթ փաշա** (1874-1921) – թուրք պետական գործիչ, «Միություն և առաջադիմություն» կուսակցության պարագլուխներից, երիտթուրքական «եռապետության» անդամ, 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո՝ մեջլիսի պատգամավոր, եղել է ներքին գործերի, փոստի և հեռագրատան նախարար, 1913 թ. պետական հեղաշրջման գլխավոր կազմակերպիչներից, դարձյալ ներքին գործերի նախարար և կուսակցության Կենտկոմի նախագահ, հայերի զանգվածային տեղահանության և կոտորածների գլխավոր կազմակերպիչներից, փախել է Գերմանիա, 1919-ին Կ.Պոլսի ռազմական ատյանի կողմից հեռակա կարգով մահվան է դատապարտվել իբրև պատերազմի հանցագործ և հայերի տեղահանման ու ջարդերի կազմակերպիչ, սպանվել է Բեռլինում Սողոմոն Թեհլերյանի կողմից:

[2] **Ambassador Morgenthau's Story: A Personal Account of the Armenian Genocide, New York: Cosimo, Inc., 2010, pp. 25-26; Payaslian, Simon**, նշվ. աշխ., էջ 37-38:

Բիթլիս, Էրզրում, Սըվազ, Խարբերդ և Դիարբեքիր) վիլայեթներում: Թեև Մորգենթաուն համակրում էր հայերին և նրանց ղեկավարներին, ինչպես և այլ փոքրամասնություններին՝ ելնելով նրա հրեա լինելու հանգամանքից, սակայն իր պաշտոնավարման առաջին շրջանում նա առանձնահատուկ ուշադրություն չէր դարձնում հայերի դիմումներին:[1]

Դեսպան Մորգենթաուի հայերի հետ առաջին շփումներից էր նաև Կոստանդնուպոլսում մի գործարանի այցելությունը, որի վիճակը նա բնութագրել էր որպես «մի սոսկալի բան»: Այստեղ աշխատում էին հիմնականում տասը տարեկան հայ երեխաներ և կանայք, որոնք ստանում էին համապատասխանաբար 8 ու 20-24 ցենտ՝ 14 ժամ օրեկան աշխատելու համար և ոտքի վրա նույնիսկ չէին կարողանում կանգնել: 1914 թ. փետրվարի սկզբին և մյուս անգամ փետրվարի 22-ին Մորգենթաուն Թալեաթի և թուրք ու հայ ներկայացուցիչների հետ միասին ներկա էր գտնվել հայկական համերգների: Վերջինից հետո նա հանդիպում էր ունեցել Կոմիտաս վարդապետի հետ, որի երգչախումբը մարտի 4-ին համերգ էր տվել թուրք պաշտոնյաների և Թուրքիայում հավատարմագրված դիվանագետների համար: Այս հանդիպումների շնորհիվ Մորգենթաուի համակրանքն էլ ավելի էր աճել հայերի նկատմամբ:[2]

Մինչև պատերազմի սկիզբը Մորգենթաուն մշտապես հանդիպումներ էր ունենում ամերիկյան բիզնեսի, մասնավորապես «Thomson», «McAndrews & Forbs», «Smyrna Ice Company», «Overland», «Warwick Iron Company» ընկերությունների ներկայացուցիչների հետ: Մորգենթաուն նշում էր Օսմանյան կայսրությունում ԱՄՆ-ի չորս հիմնական տնտեսական շահերի մասին՝ «Standard Oil», «Singer Sewing Mashine», թութուն և մատուտակ: Այլապես, ըստ դեսպանի, «մեր հետաքրքրություններն այնտեղ ամբողջապես ալտրուիստական են», Ամերիկայի իրական առաքելությունը Թուրքիայում քրիստոնյա առաքելությունների գործունեությունը քաջալերելու մեջ էր: 1912 թ. հունիսից մինչև 1914 թ. հունիս ընկած ժամանակահատվածում, համաձայն ԱՄՆ-ի առևտրի դեպարտամենտի զեկույցի, ԱՄՆ-Օսմանյան կայսրություն առևտրական հաշվեկշիռը կազմել էր 50 մլն դոլար:[3]

1908-1913 թթ. ընթացքում իրագործվող հաջողությունների շարքում կարելի է նշել երկաթգծի և հանքարդյունաբերության ոլորտում Չեսթեր նախագիծը, ինչպես նաև 1911 թ. Մերձավոր Արևելքում Ամերիկյան առևտրական պալատի բացումը: Սակայն ամերիկյան բոլոր ծրագրերը գրեթե ոչինչ էին Գերմանիայի ռազմավարական Բերլին-Բաղդադ երկաթգծի, ինչպես նաև բրիտանական, ֆրանսիական, իտալական և ռուսական ներդրումների

[1] **Payaslian, Simon**, նշվ. աշխ., էջ 38-39:
[2] Նույն տեղում, էջ 40-41:
[3] Նույն տեղում, էջ 42:

հետ համեմատած: Մինչև Առաջին համաշխարհային պատերազմի սկիզբն ԱՄՆ-ի արտահանումը Թուրքիա կազմում էր իր ընդհանուր ծավալի 17%-ը, իսկ արտահանումը՝ 23%, ինչը կազմում էր ԱՄՆ ներկրվող ապրանքի 1%-ը:[1]

Չնայած գոյություն ունեցող այն կարծիքին, որ Առաջին համաշխարհային պատերազմից առաջ ԱՄՆ-ի առևտրական շահերն Օսմանյան կայսրությունում նշանակալից չէին, այդուհանդերձ, 19-րդ դարի վերջին ամերիկյան առևտրական ներկայությունը զգալի առաջընթաց էր ապրել: Այս ուղղությամբ զգալի ակտիվություն էին հանդես բերում և լոբբիստական աշխատանք իրականացնում Թուրքիայում գործող առաջատար «Standard Oil», «Singer Sewing Machine», «International Harvester», «American Tobacco Company», «National City Bank of New York», «New York Life Insurance», «Western Electric Company» ընկերությունները, ինչպես նաև «Արդյուբերողների ազգային ասոցիացիան» (1895), «Ամերիկյան ասիական ասոցիացիան» (1898), «ԱՄՆ-ի առևտրի պալատը» (1912), «Ամերիկյան արդյունաբերողների արտահանման ասոցիացիան» (1913): Ինչպես առևտրական, այնպես էլ աշխարհաքաղաքական շահերից ելնելով՝ Ուիլյամ Մակ Քինլիի, Թեոդոր Ռուզվելտի, Ուիլյամ Թաֆտի և Վուդրո Վիլսոնի վարչակազմերը նպատակադրված կերպով ընդլայնում էին հարաբերությունները Օսմանյան կայսրության հետ:[2]

Միաժամանակ Մորգենթաուն փորձում էր շահել Օսմանյան կայսրության ղեկավարների վստահությունը. գոհունակությամբ զեկուցում էր Վաշինգտոն, որ Թալեաթն ու մյուս ղեկավարներն արտահայտում էին իրենց բարեկամությունն իր հանդեպ և հավատացած էին, որ ինքը թուրքամետ է: Սակայն 1914 թ. հունվարի կեսերից սկսած՝ Մորգենթաուն սկսել էր իր մտահոգությունը հայտնել երկրի քաղաքական իրավիճակի վերաբերյալ: Հունվարի 20-ին՝ երիտթուրքերի ղեկավարների հետ ունեցած ճաշի ժամանակ, իր ելույթում նա շեշտում էր «Ամերիկայի մեծ համակրանքի», Օսմանյան կայսրության ղեկավարներին օգնելու առևտրական ինֆրակառույցները զարգացնելու իր երկրի պատրաստակամության մասին: Դեսպանի կողքին նստած Էնվեր փաշան[3] ասում էր, որ «հայրենասիրությունը ստիպում է մեզ

[1] **Grabill, Joseph L.**, նշվ. աշխ., էջ 37-38:
[2] **Payaslian, Simon**, նշվ. աշխ., էջ 3:
[3] Էնվեր փաշա (1881-1922) – թուրք պետական և ռազմական գործիչ, «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնի անդամ, 1908 թ. երիտթուրքական հեղաշրջման կազմակերպիչներից և իրականացնողներից, 1913 թ.-ից՝ ռազմական նախարար, գլխավոր սպայակույտի պետ, երիտթուրքական «եռապետության» անդամ, հայերի ցեղասպանության գլխավոր կազմակերպիչներից, փախել է Գերմանիա, 1919 թ. Կ.Պոլսի ռազմական ատյանի կողմից հեռակա կարգով մահվան է դատապարտվել իբրև պատերազմի հանցագործ և հայերի

փորձել ամեն ինչ՝ փրկելու երկիրը կազմալուծումից...»: Ըստ դեսպանի՝ Էնվերը համոզված էր, որ իթթիհադականները կարող են կառավարել և ստեղծել տնտեսապես և քաղաքականապես կարող համակարգ: Թալեաթը, ըստ դեսպանի, պակաս լավատես էր և շեշտում էր անհապաղ արտաքին ֆինանսական օժանդակության անհրաժեշտությունը:[1]

Իր հուշերում դեսպան Մորգենթաուն գրում էր, որ «Թուրքիայի վերածննդի նպատակները, որոնք ոգևորել էին հեղափոխությունը, ակնհայտորեն ձախողվել էին, և ես շուտով հայտնաբերեցի, որ ...Թալեաթը, Էնվերն ու Ջեմալը[2] վաղուց ի վեր հրաժարվել էին պետությունը բարեկարգելու մտադրությունից, սակայն միաժամանակ ձեռք էին բերել անձնական իշխանության անկուշտ մի տենչ»:[3] 1913 թ. հունվարին կայացած հեղաշրջման արդյունքում «երիտթուրքերը ոչնչացրեցին Աբդուլ Համիդի ռեժիմը՝ միմիայն սուլթանի՝ ընդդիմությունը լռեցնելու սիրելի մեթոդները յուրացնելու նպատակով», և «փոխարենը մեկ Աբդուլ Համիդ ունենալու՝ Թուրքիան ներկայումս ունեցավ մի քանիսը»:[4]

Մորգենթաուն հետզհետե ականատես էր դառնում, թե ինչպես էր սկսում իրականանալ Թալեաթի «Թուրքիան թուրքերի համար» գաղափարը, երբ վերջինս պնդում էր, որ ամերիկյան բիզնեսի մեջ ներգրավվածները պետք է միայն թուրքեր լինեն: Թուրք-ամերիկյան հարաբերությունները սրվում են, երբ երիտթուրքերը 40 հազար հույներ են տեղահանում Զմյուռնիայից և նրանց փոխարեն բնակեցնում Մակեդոնիայից գաղթած թուրք փախստականների: Ճգնաժամն էլ ավելի սրվեց, երբ երիտթուրքերը փակեցին Զմյուռնիայի նավահանգիստն ու որոշեցին ականապատել թուրքական տարածքային ջրերը: Թուրքիայի և Հունաստանի միջև պատերազմը կարծես անխուսափելի էր դառնում, ինչի մասին Մորգենթաուն գրում էր. «Ես հուսով եմ, որ կկարողանամ օգտակար լինել պատերազմը կանխելու հարցում»: ԱՄՆ-ի ծովային դեպարտամենտը հրահանգում էր «Սկորպիոն» ռազմանավին մեկնել Թուրքիա: Այն ժամանեց Զմյուռնիա հունիսի 26-ին:

տեղահանման ու ջարդերի կազմակերպիչ, Միջին Ասիայում ղեկավարել է բասմաչների գործողությունները, սպանվել է խորհրդային զորքերի հետ բախման ժամանակ:

[1] Նույն տեղում. - էջ 41-42:

[2] Ահմեդ Ջեմալ փաշա (1872-1922) – թուրք պետական գործիչ, «Միություն և առաջադիմություն» կուսակցության պարագլուխներից, երիտթուրքական «եռապետության» անդամ, ծովային նախարար, Սիրիայում գործող 4-րդ բանակի հրամանատար (1914-1918), գործուն մասնակցություն էր ունեցել հայերի զանգվածային տեղահանությանն ու կոտորածին, ճնշել Ուրֆայի հայերի ինքնապաշտպանությունը, արաբների ազգային-ազատագրական շարժումները, 1919 թ. Կ.Պոլսի ռազմական ատյանի կողմից հեռակա կարգով մահվան է դատապարտվել իբրև պատերազմի հանցագործ և հայերի տեղահանման ու ջարդերի կազմակերպիչ, սպանվել է Թբիլիսում հայ վրիժառուների կողմից:

[3] Ambassador Morgenthau's Story: A Personal Account of the Armenian Genocide..., էջ 9-10:

[4] Նույն տեղում, էջ 12:

Ճգնաժամն ավելի խորացավ, երբ Վիլսոնի վարչակազմը որոշում կայացրեց վաճառել Հունաստանին «Այդահո» և «Միսսիսիպի» ռազմանավերը, իսկ Թուրքիայի կողմից պատվիրված «Ռեշադիե» և «Սուլթան Օսման» ռազմանավերը գտնվում էին դեռևս կառուցման փուլում Մեծ Բրիտանիայում:

1914 թ. հունիսի 15-ին Մորգենթաուի և ծովային նախարար Ջեմալ փաշայի միջև կայացած հանդիպման ժամանակ վերջինս թուրք կառավարության բողոքն էր հայտնում Հունաստանին երկու ռազմանավ վաճառելու փաստի վերաբերյալ՝ համարելով այն որպես «ոչ չեզոք գործողության դրսևորում»: Մորգենթաուն նախազգուշացնում էր պետդեպարտամենտին, որ ռազմանավերի վաճառքը կարող էր շատ բացասական ազդեցություն ունենալ թուրք-ամերիկյան հարաբերությունների վրա և սրել հակաամերիկյան զգացմունքները Կոստանդնուպոլսում:[1] Իրականում երիտթուրքական կառավարությունը չէր ուզում փչացնել իր հարաբերությունները ԱՄՆ-ի հետ, քանի որ ԱՄՆ-ը չէր միացել Անտանտային և չեզոք դիրքորոշում էր որդեգրել:[2]

Մորգենթաուի համաձայն՝ «բոլոր քրիստոնյաների նկատմամբ պաշտոնական բոյկոտ էր հաստատված ոչ միայն Փոքր Ասիայում, այլև Կոստանդնուպոլսում, սակայն այդ խտրականությունը չէր վերաբերում հրեաներին, որոնք միշտ էլ ավելի ժողովրդականություն էին վայելում թուրքերի շրջանում, քան քրիստոնյաները»: Երիտթուրքական իշխանությունների նման քաղաքականությունն ԱՄՆ-ի դեսպանը գնահատում էր որպես «իր իսկ հպատակների դեմ ուղղված առևտրային խտրականություն»: Երբ Մորգենթաուն բողոքեց հույների հանդեպ կիրառվող տեղահանությունների և խտրականության քաղաքականության դեմ, Թալեաթը պատասխանեց. «...Թուրքական կայսրության այս տարբեր հատվածները միշտ էլ դավեր են հյուսել Թուրքիայի դեմ, և այս բնիկ ազգերի թշնամության պատճառով Թուրքիան կորցրել է նահանգ նահանգի ետևից՝ Հունաստանը, Սերբիան, Ռումինիան, Բուլղարիան, Բոսնիան, Հերցեգովինան, Եգիպտոսը և Տրիպոլին»: Թալեաթը շարունակում էր, որ «պետք է ազատվի այդ օտար ժողովուրդներից, որպեսզի պահպանի այն, ինչ մնացել է Թուրքիայից»:[3]

Հուլիսի վերջին՝ իր ծառայության վեց ամիսներից հետո, Մորգենթաուն հիասթափվել էր երիտթուրքերի ղեկավարներից և այլևս հաճույք չէր ստանում ոչ իր աշխատանքից, ոչ էլ Կոստանդնուպոլսում տեղի ունեցող տարբեր միջոցառումներին մասնակցելուց:

[1] Payaslian, Simon, նշվ. աշխ., էջ 44:

[2] Նույն տեղում, էջ 45:

[3] Ambassador Morgenthau's Story: A Personal Account of the Armenian Genocide..., էջ 35:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ամերիկյան հեղափոխությունից և անկախության ձեռքբերումից մինչև Առաջին համաշխարհային պատերազմն ընկած ժամանակաշրջանի ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության հիմնական սկզբունքն համաշխարհային խնդիրներին և մասնավորապես Եվրոպայի մեծ տերությունների գործերին չմիջամտելու ուղեգիծն էր: Թեև Միացյալ Նահանգները խուսափում էր դաշինքների մեջ մտնելուց և արտաքին քաղաքականության ոլորտում իր վրա որևէ պարտականություններ վերցնելուց, սակայն միաժամանակ իրականացնում էր բավականին գործուն արտաքին քաղաքականություն արևմտյան կիսագնդում, իսկ հետագայում նաև խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում և Հեռավոր Արևելքում, սատարում արտաքին առևտրին ու տնտեսական համագործակցության զարգացմանը, պաշտպանում իր քաղաքացիների և առևտրի շահերն աշխարհի տարբեր անկյուններում:

ԱՄՆ-ի ավանդական արտաքին քաղաքականության ձևակերպումն առաջին անգամ իր արտահայտությունը գտավ նախագահ Ջորջ Վաշինգտոնի՝ 1793 թ. Չեզոքության հռչակագրում և 1796 թ. իր Հրաժեշտի ուղերձում: Այդ քաղաքականության համար հիմք էին հանդիսացել դեռևս Ամերիկյան հեղափոխության շրջանում (1776 թ.) հրապարակված և մեծ ժողովրդականություն ստացած Թոմաս Փեյնի գաղափարները:

Ամերիկյան անկախ քաղաքականությունը ձևավորվեց երկու կիսագնդերի խաղաղ գոյակցության հիմնարար սկզբունքի վրա: Ամերիկյան քաղաքական գործիչները խուսափում էին եվրոպական միջամտությունից Ամերիկայի մայրցամաքում և միաժամանակ չէին ցանկանում ներգրավվել Եվրոպայի դաշինքների և պատերազմների մեջ: ԱՄՆ-ի քաղաքական գործիչները կարողացան օգտվել միջազգային հարաբերություններում գոյություն ունեցող մրցակցային իրավիճակից և ապահովել բարենպաստ պայմաններ երկրի համար: Իսկ այն պարագաներում, երբ դիվանագիտությամբ հնարավոր չէր լինում լուծել վիճելի տարածքային հարցերն Ամերիկայի մայրցամաքում, նրանք օգտագործում էին այս կամ այն եվրոպական տերության հետ դաշինք կնքելու սպառնալիքը, ինչը մեծ հնարավորություններ էր տալիս բարենպաստ լուծումների համար, քանի որ քաղաքական դաշինքն ԱՄՆ-ի հետ կարող էր բախտորոշ դառնալ յուրաքանչյուր եվրոպական տերության համար:

Եվրոպական գործերին չմիջամտելու քաղաքականությունը, երկրի հզորացումն ու զարգացումը, ինչպես նաև ամերիկյան մյուս ազգերի անկախացման գործընթացը ստեղծեցին այն բոլոր նպաստավոր պայմանները, որի արդյունքում 1823 թ. ԱՄՆ-ի նախագահ Ջեյմս Մոնրոն հայտարարություն արեց ամերիկյան նոր արտաքին քաղաքական սկզբունքի մասին: Մոնրոյի վարդապետության հիմնական գաղափարն այն էր, որ Ամերիկայի մայրցամաքում ԱՄՆ-ն իրեն իրավունք էր վերապահում միջամտելու ամեն պարագայում, նույնիսկ եթե իր հանդեպ ագրեսիա տեղի չէր ունեցել, իսկ Եվրոպայում ԱՄՆ-ը միջամտելու էր միայն այն դեպքում, երբ դա պահանջեր իր շահը: Եվրոպական տերությունները պետք է հեռու պահեն իրենց Ամերիկայի մայրցամաքի քաղաքական խնդիրներից, թեև կարող են պահպանել իրենց գաղութներն արևմտյան կիսագնդում: Նրանք պետք է հրաժարվեն նոր գաղութների ձեռքբերումից և եղածների ընդլայնումից: Մոնրոյի վարդապետությունը դարձավ ԱՄՆ-ի քաղաքականության ամենաերկարատև և հիմնարար վարդապետությունը:

Կարիբյան ավազանի նկատմամբ իր հսկողությունն ապահովելուց հետո ԱՄՆ-ը սկսեց տարածել իր ազդեցությունը Խաղաղ օվկիանոսի կղզիների վրա՝ դեպի Ճապոնիա և Կորեա տանող առևտրական ճանապարհների անվտանգությունն ապահովելու նպատակով: Արևելյան Ասիայում իր քաղաքականությունն իրականացնելիս ձևավորվեց «բաց դռների» սկզբունքը, որն ապահովում էր հավասար պայմաններ ամերիկյան առևտրի համար Չինաստանում:

Սակայն այն սկզբունքները, որոնք ԱՄՆ-ն օգտագործում էր Լատինական Ամերիկայում և Արևելյան Ասիայում, անհնարին էր կիրառել Եվրոպայի նկատմամբ: Եվրոպական ռազմական հզորությունը դեռևս արգելափակում էր ամերիկյան արտաքին քաղաքականության սկզբունքների և գաղափարների տարածումը եվրոպական մայրցամաքում:

«Ծովերի ազատության» սկզբունքն արտահայտում էր Եվրոպայի կարևորությունն ամերիկյան տնտեսական կյանքի համար: Այն ապահովում էր ԱՄՆ-ի անխափան մուտքը դեպի եվրոպական շուկաները եվրոպական տերությունների միջև գոյություն ունեցող հակասությունների պայմաններում: Որպես չեզոք պետություն՝ ԱՄՆ-ն օգտվում էր մինիմալ սահմանափակումների և պատասխանատվության իրավունքից՝ ծովով անվտանգորեն բեռներ տեղափոխելու համար: Այն ապահովում էր ամերիկյան առևտրական հարաբերությունների զարգացումն ու մուտքը դեպի այնպիսի շուկաներ, որոնք սովորաբար փակ էին ԱՄՆ-ի համար խաղաղ պայմաններում: Դա նաև հնարավորություն ստեղծեց ԱՄՆ-ին հզորացնելու իր ռազ-

մածովային ուժը՝ ամերիկյան առևտրական շահերը պաշտպանելու և այլ պետությունների առևտրի նկատմամբ հսկողություն սահմանելու նպատակով:

1890-ական թթ. Միացյալ Նահանգները հաստատեց իր տիրապետությունն ամերիկյան կիսագնդում և մրցակցության մեջ մտավ մյուս տերությունների հետ համաշխարհային տերություն դառնալու ճանապարհին: ԱՄՆ-ի նախագահ Ուիլյամ Մակ Քինլին պահանջեց իր երկրի համար գաղութներ ունենալու իրավունք և «ճնշված ժողովուրդներին» օգնելու պատասխանատվություն՝ աշխարհում իր հզորությունն ու ազդեցությունը տարածելու նպատակով:

1895-1899 թթ. ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի միջև ծագած Վենեսուելայի սահմանային ճգնաժամի հաղթահարումը շրջադարձային կետ հանդիսացավ դիվանագիտական պատմության մեջ, երբ Մեծ Բրիտանիան վերջնականապես ճանաչեց Միացյալ Նահանգների գերիշխանությունն արևմտյան կիսագնդում: Մեծ Բրիտանիան նաև սկսեց հետզհետե աջակցել Միացյալ Նահանգների՝ համաշխարհային հավակնություններ ձեռք բերելու ուղղությամբ իրականացվող քաղաքականությանը:

ԱՄՆ-ը շատ կարճ պատմական ժամանակահատվածում կարողացավ դառնալ հզոր գերտերություն երկրի բնակչության նյութական բարեկեցության ապահովման և արտաքին քաղաքականության բնագավառում կիրառվող սկզբունքների հիման վրա: Օգտագործելով միջազգային առևտրում բրիտանական տիրապետության հնարավորությունները՝ ամերիկացիները մեծ շահույթներ էին ստանում գյուղատնտեսական արտադրանքի և հումքի վաճառքից: Առևտրից կուտակված կապիտալը ներդրվեց տեղական արտադրության մեջ, որի աճի արդյունքում 1830 թ. Միացյալ Նահանգներն իր արդյունաբերական հզորությամբ գրավեց 6-րդ, իսկ 1890 թ. հետո ընկած ժամանակաշրջանում՝ 2-րդ և նույնիսկ 1-ին տեղերն արդյունաբերական տերությունների շարքում: 1900 թ. տվյալներով՝ ԱՄՆ-ը արտադրում էր այնքան երկաթ և մետաղ, ինչքան Մեծ Բրիտանիան և Գերմանիան միասին վերցրած:

Թեև ԱՄՆ-ն ու Օսմանյան կայսրությունը ճանաչեցին միմիանց 1830 թ., իսկ դիվանագիտական հարաբերությունները հաստատվեցին 1831 թ., քաղաքական և առևտրական առնչություններն այդ երկրների միջև սկիզբ էին առել ավելի վաղ շրջանում: Անկախությունից ի վեր ԱՄՆ-ի քաղաքական գործիչները մեծ հետաքրքրություն էին հանդես բերում Օսմանյան կայսրության հետ առևտրական հարաբերություններ հաստատելու և զարգացնելու հարցում: 1774 թ., երբ Ջոն Ադամսը, Բենջամին Ֆրանկլինն ու Թոմաս Ջեֆերսոնը նշանակվեցին լիազոր ներկայացուցիչներ՝ օտարերկրյա պետությունների հետ պայմանագրեր ստորագրելու նպատակով,

Կոնտինենտալ Կոնգրեսն ընդգրկեց Օսմանյան կայսրությունն այն երկրների ցանկում, որոնց հետ պետք էր բանակցություններ սկսել:

1785 թ. համարվում է Օսմանյան կայսրության հետ ամերիկյան առևտրի սկիզբը: Հիմնական նավահանգիստը, ուր այցելում էին ամերիկյան առևտրական նավերը, Զմյուռնիան էր: Այստեղից նավերն ապրանք էին տեղափոխում Բոստոն, Նյու Յորք և Ֆիլադելֆիա: Թեև ամերիկյան առևտրի շրջանառության ծավալն Օսմանյան կայսրության հետ շատ մեծ չէր, սակայն այն արագորեն աճում էր: 1811-1820 թթ. տարեկան կտրվածքով միջինը 13 ամերիկյան նավ էր մտնում Զմյուռնիայի նավահանգիստ՝ վաճառելով բամբակյա իրեր, թութուն, վառոդ և ռոմ: ԱՄՆ-ը երաշխիքներ էր ստացել, որ թուրքական նավահանգիստներում իր առևտուրը ստանալու է «ամենից արտոնյալ պետության» կարգավիճակ, ազատ մուտքի իրավունք դեպի Սև ծով, ինչպես նաև թույլտվություն՝ թուրքական ծովափնյա քաղաքներում հյուպատոսներ նշանակելու համար:

1829 թ. ԱՄՆ-ի նախագահ Էնդրյու Ջեկսոնը լիազոր ներկայացուցիչներ նշանակեց նավապետ Ջեյմս Բիդդլին և առևտրականներ Դեյվիդ Օֆֆլիին և Չարլզ Ռինդին՝ Օսմանյան կայսրության հետ պայմանագիր բանակցելու նպատակով: Պայմանագիրը ստորագրվեց 1830 թ. մայիսի 10-ին: Այն նշանավորեց Միացյալ Նահանգների և Օսմանյան կայսրության միջև պաշտոնական հարաբերությունների սկիզբը: Պայմանագիրը հնարավորություն էր տալիս կատարելու դիվանագիտական և հյուպատոսական հիմնարկությունների փոխանակություն երկու երկրների միջև: 1831 թ. մարտին ԱՄՆ-ի կոնգրեսը հատկացրեց 36 500 դոլար՝ Կոստանդնուպոլսում դիվանագիտական առաքելություն հիմնելու նպատակով, իսկ ապրիլին նախագահը Ալժիրում գլխավոր հյուպատոս Դեյվիդ Պորտերին նշանակեց որպես հավատարմատար Օսմանյան կայսրությունում:

Պայմանագրի ստորագրումից հետո առևտրի ծավալն երկու երկրների միջև աճեց. 1850 թ. այն հասավ մեկ միլիոն, իսկ 1862-ին՝ մեկ և կես միլիոն դոլարի: Այդ տարիներին Թուրքիայից ԱՄՆ ներմուծվող հիմնական ապրանքատեսակներն էին ափիոնը, մրգերն ու ընկույզը, արծաթը, մորքը, կաշին և չմշակված բուրդը, իսկ ԱՄՆ-ից Թուրքիա էր արտահանվում մշակված բուրդ և ալկոհոլային խմիչք: Միաժամանակ ամերիկյան առևտուրն Օսմանյան կայսրության հետ զգալի աճ չէր կարողանում ապահովել, որի պատճառներն էին Կոնգրեսի կողմից 1850-ական թթ. բարձրացված տարիֆները, ամերիկյան կառավարության հետաքրքրության պակասն Օսմանյան կայսրության հանդեպ, Բրիտանիայի և եվրոպական մյուս տերությունների մրցակցությունը: Թեև ամերիկյան առևտրի ծավալներն Օսմանյան կայսրության հետ շատ մեծ չէին, բայց ԱՄՆ-ի ռազմական առագաս-

տանավերը սկսեցին ավելի հաճախ հայտնվել Միջերկրականում և նեղուցներում՝ ամերիկյան շահերի պաշտպանությունն ապահովելու նպատակով:

Օսմանյան կայսրություն մեկնող ամերիկյան առաջին միսիոներների նպատակը մահմեդականներին և հրեաներին «ուշքի և դարձի բերելու» կամ «Մերձավոր Արևելքի քրիստոնյաներին վերակենդանացնելու» մեջ էր: 1820 թ. Օսմանյան կայսրություն ժամանեցին ամերիկացի պատվելիներ Լիվայ Փարսոնզն ու Փլինի Ֆիսկը, որոնք ներկայացնում էին Միաբանության եկեղեցու «Արտաքին առաքելությունների հանձնակատարների ամերիկյան խորհուրդը»: Նրանք ստացել էին «Ամերիկյան խորհուրդից» հետևյալ հանձնարարականները՝ սովորել լեզուներ, հավաքել տեղեկատվություն, տարածել ավետարաններ և կրոնական գրականություն, չանարգել օրենքներն ու ավանդույթները: Բողոքական միսիոներները համոզված էին, որ Սուրբ երկրում ապրող ոչ քրիստոնյաները շատ շուտով կխոնարհվեն «բողոքական հայտնության» առջև, որին կհետևի աշխարհում «Աստծո թագավորության» հաստատումը: Փարսոնզն ու Ֆիսկն իրենց ուղերձը պետք է հասցնեին նաև ավանդական եկեղեցիների ժողովուրդներին, որոնց «Ամերիկյան խորհուրդը» համարում էր «նոմինալ» քրիստոնյաներ:

Առաջին ամերիկյան միսիոներական առաքելությունը Մերձավոր Արևելքում բացվեց 1823 թ. Պաղեստինում: 1925 թ. և 1828 թ. կայաններ բացվեցին Բեյրութում և Զմյուռնիայում: 1831 թ. Կոստանդնուպոլսում ամերիկյան դիվանագիտական ներկայացուցչության հետ միաժամանակ բացվեց նաև ամերիկյան միսիոներական կայանը: 1834 թ. նոր կայաններ հաստատվեցին Բուրսայում և Տրաբզոնում: Այդ ժամանակվանից սկսած միսիոներական առաքելության գործունեությունն արագորեն սկսեց ընդլայնվել:

Համոզվելով, որ մահմեդականների և հրեաների ավետարականացումն անիրականանալի է, 1831 թ. «Ամերիկյան խորհուրդը» որոշում կայացրեց իր ողջ գործունեությունն ուղղել Արևելքի «այլասերված» եկեղեցիների «հոգևոր լուսավորությանը»: Բողոքական ղեկավարները Միացյալ Նահանգներում չէին կարողանում հասկանալ, որ «Երկրորդ մեծ արթնացման» անհատական և բարեպաշտ մոտեցումը վտանգ էր պարունակում Մերձավոր Արևելքի եկեղեցիների համայնքային, ծեսային, բարդ քաղաքական համակարգի, այսինքն՝ գոյություն ունեցող *ստատուս քվոյի* համար: Օսմանյան օրենքն իր հերթին պաշտպանում էր գոյություն ունեցող իրավիճակը, որը հիմնվում էր ոչ թե յուրաքանչյուր անհատի քաղաքացիական իրավունքների և բոլոր քաղաքացիների ազատությունների, ինչպես որ դա տեղի էր ունենում ԱՄՆ-ում, այլ քրիստոնյա և մահմեդական ավանդույթների վրա: Եթե յուրաքանչյուր անհատի իրավունքն ազատորեն ընտրելու իր կրոնն այդ օրերին դառնում էր օրինակելի Միացյալ Նահանգներում, ապա

Թուրքիայում դա համարվում էր ոչ օրինական, իսկ կրոնափոխ մահմեդականները դատապարտվում էին մահվան:

Միսիոներները կարևոր տեղ էին հատկացնում կրթությանը, առողջապահությանն ու բժշկական ծառայությունների մատուցմանը: Զբաղվելով այդ խնդիրներով՝ ամերիկյան միսիոներները հիմնեցին բժշկական հաստատություններ՝ հիվանդանոցներ և մանկատներ, ուր աշխատում էին քրիստոնյա բժիշկներ և աշխատավորներ: Միսիոներների թարգմանչական, հրատարակչական և «ավետարանականացման» գործունեությանն ավելացավ նաև ընդհանուր կրթության բնագավառը: Միսիոներական դպրոցներն ընդգրկում էին բոլոր տեսակի կրթական հաստատություններ՝ սկսած մանկապարտեզից մինչև աստվածաբանական ճեմարան: Հատուկ նշանակություն էր հատկացվում նաև մարմնամարզությանն ու սպորտին: Տարիների ընթացքում միսիոներները հիմնեցին «տպավորիչ ներկայություն» Կոստանդնուպոլսում՝ դպրոցներ, տպարաններ և Աստվածաշնչի տներ: Կոստանդնուպոլսից միսիոներական շարժումը տարածվեց դեպի Անատոլիա: Մեծ քաղաքներից շատերում բացվեցին դպրոցներ, քոլեջներ, եկեղեցիներ, տպարաններ և հիվանդանոցներ:

Օսմանյան կայսրության հայ բողոքական համայնքի ստեղծման գործում մեծ դերակատարություն ունեցան ամերիկյան միսիոներներ Ուիլյամ Գուդելը և Հարրիսոն Դուայթը: Միսիոներների հետ համագործակցաբար Ջոն Տեր-Սահակյանը ստեղծեց «Ավետարանական միություն», որը 1836 թ. ուներ արդեն շուրջ 20 անդամ: Սակայն շատ շուտով ճգնաժամ առաջացավ միսիոներների և Կոստանդնուպոլսի հայ պատրիարքի միջև: Վերջինս «Ամերիկյան խորհուրդի» և բրիտանական դիվանագիտության կողմից աջակցություն ստացած «Ավետարանական միությունը» դիտարկում էր որպես համայնքի ամբողջականության դեմ ուղղված լուրջ վտանգ: Նա նզովքի ենթարկեց բոլոր այն հայերին, որոնք ավետարանչական գրականություն էին կարդում կամ շփվում ամերիացիների հետ: Ամերիկյան միսիոներների հետ կապեր հաստատած հայերը ենթարկվում էին ճնշումների ինչպես ազգային եկեղեցու, այնպես էլ օսմանյան կառավարության կողմից: Շուտով Տեր-Սահակյանը ձերբակալվեց իշխանությունների կողմից: Սակայն նրան ազատեցին բանտից, և նա շարունակեց «Ավետարանական միության» գործունեությունը, որի անդամների թիվը 1839 թ. հասավ մինչև հարյուրի:

1840-ական թթ. սկզբին բողոքական առաքելության հիմնական աշխատանքը տարվում էր հայերի հետ: 1844 թ. առաքելությունը ստացավ երկու անվանում՝ «Առաքելություն հայերի համար» և «Առաքելություն հրեաների համար»: Հետագայում հրեաների համար ստեղծված առաքելությունը լուծարվեց: Թեև հետագայում այն բաժանվեց երեք մասի՝ «Արևմտյան Թուրքիայի առաքելություն», «Կենտրոնական Թուրքիայի առաքելություն» և

«Արևելյան Թուրքիայի առաքելություն»: Ամերիկյան միսիոներները հիմնականում շարունակում էին աշխատել հայ բնակչության հետ:

1846 թ. միսիոներները նամակով դիմեցին մեծ վեզիր Մուստաֆա Ռեշիդ փաշային, ուր հայցում էին կայսերական կառավարության հովանավորությունը: Նրանք նաև դիմումներ ներկայացրին սուլթանին, ինչպես նաև Բրիտանիայի, Պրուսիայի և ԱՄՆ-ի դիվանագիտական ներկայացուցիչներին: Նույն թվականին Ռեշիդ փաշան այդ հարցով դիմեց Հայոց պատրիարքին, որը հերթական պատարագի ժամանակ ստիպված եղավ հայտարարել, որ «կրոնն ազատ է Թուրքիայում»: Շուտով բողոքականները տեղեկացվեցին, որ նրանց թույլատրվում է իրականացնել իրենց գործունեությունը: Նույն թվականին Կոստանդնուպոլսում տեղի ունեցավ «Ամերիկյան խորհուրդի» միսիոներների համաժողովը, որի ժամանակ մշակվեց Հայ ավետարանական եկեղեցու սահմանադրությունը:

Բրիտանիայի դեսպան Ստրեթֆորդ Կաննինգի ճնշման արդյունքում 1847 թ. սուլթան Աբդուլ Մեջիդը հրովարտակ ստորագրեց բողոքականներին ինքնավարություն և պաշտպանություն ապահովելու մասին: Բողոքական հպատակները պաշտոնապես ճանաչվեցին որպես առանձին և անկախ կրոնական համայնք, որին շնորհվեց խղճի և աղոթքի ազատության իրավունք: 1850 թ. սուլթանը հրովարտակ ստորագրեց, համաձայն որի՝ Օսմանյան կայսրությունում ստեղծվեց բողոքական *միլեթ*, որը ստացավ քաղաքացիական ղեկավար ընտրելու իրավունք: Բացի հայերից՝ այդ ցանկում ընդգրկվեցին նաև հույներն ու սիրիացիները:

Մերձավոր Արևելքը դարձավ «Միացյալ Նահանգների ագրեսիվ կրթական կենտրոններից մեկն արտասահմանում»: Եթե 1850 թ. միսիոներական դպրոցներում ուսանում էին մի քանի հարյուր աշակերտներ, ապա 1914 թ. այդ թիվն անցավ 33 հազարից: 1878-1903 թթ. ընթացքում «Ամերիկյան խորհուրդը» բացեց յոթ քոլեջ Թուրքիայում, որոնք իրենցից ներկայացնում էին բարձրագույն և կրտսեր հաստատությունների համակցություն: Միսիոներները հանդիսացան նաև կանանց կրթության առաջնեկներն Օսմանյան կայսրությունում:

Ամերիկյան միսիոներների գործունեությունը հայերի շրջանում ամերիկյան հեղինակների կողմից համարվում է «տպավորիչ». 1880 թ. տվյալների համաձայն՝ միսիոներները գործում էին Օսմանյան կայսրության 394 բնակավայրերում: 1895 թ. հայերի շրջանում աշխատում էին 176 ամերիկացի միսիոներներ, նրանց օգնում էին 878 տեղացի օգնականներ: Գործում էր 125 եկեղեցի՝ 12 787 ծխականներով և 423 դպրոց՝ 20 496 աշակերտներով:

Տասնյակ լեզուներով տպագրվում էր Աստվածաշունչ և կրոնական գրականություն՝ հիմնականում հայատառ թուրքերեն և արաբերեն: Բացի կրոնական գրականությունից՝ միսիոներները սկսեցին հրատարակել նաև

բառարաններ և ընդհանուր բնույթի գրքեր, ինչպես նաև հինգ լեզուներով պարբերականներ:

Միսիոներական գործունեության ազդեցությունն Օսմանյան կայսրության կյանքի վրա չէր սահմանափակվում միայն կրոնական և կրթական բաղադրիչներով: Հանդիսանալով ոչ առևտրական կազմակերպություն՝ միսիոներական առաքելությունն ու միսիոներները գիտակցաբար կամ անգիտակցաբար գովազդում էին ամերիկյան ապրանքը, քարոզում ամերիկյան կյանքի ապրելակերպը, աշխատանքի և արտադրության փորձը: Միսիոներական առաքելության կրթական և բարեգործական գործունեությունը մեծ ազդեցություն ունեցավ կայսրության տնտեսական կյանքի զարգացման վրա:

ԱՄՆ-Օսմանյան կայսրություն հարաբերությունները սկսեցին վերելք ապրել 1860-ական թթ., մասնավորապես 1861-1865 թթ. Ամերիկայի քաղաքացիական պատերազմի ժամանակաշրջանում: Օսմանյան կայսրությունը մշտապես իր համակրանքն էր արտահայտում Միությանը կամ Հյուսիսին. հարաբերություններն այդ ընթացքում ընդգծված բարեկամական էին: 1862 թ. սուլթան Աբդուլ Ազիզը հրամանագիր ստորագրեց, որն արգելում էր սպասարկել թուրքական նավահանգիստներում ինչպես Կոնֆեդերացիայի կամ Հարավի, այնպես էլ այն երկրների նավերը, որոնք կարող էին վտանգել Հյուսիսի շահերը: Օսմանյան կառավարությունը որոշում կայացրեց նաև ազատել Հյուսիսի ռազմանավերի մուտքն ամեն տեսակի արգելքներից:

1862 թ. ԱՄՆ-ն ու Օսմանյան կայսրությունը Փարիզում ստորագրեցին Բարեկամության և առևտրի պայմանագիր, որի համաձայն՝ օսմանյան կողմն ամերիկյան քաղաքացիներին և նավերին շնորհեց «ամենից արտոնյալ պետության» կարգավիճակ, իսկ ամերիկյան կողմն այլևս չէր պահանջելու թուրք առևտրականներից «առևտրային թույլտվություններ»:

Այդ տարիների ամերիկյան դիվանագետների զեկուցագրերին բնորոշ էին Օսմանյան կայսրության իրավիճակի, ներքին քաղաքականության, քրիստոնյաների վիճակի մասին դրական գնահատականները՝ ի հակադրություն եվրոպական տերությունների օսմանյան ներքին գործերին միջամտելու քաղաքականությանը:

Օսմանյան «մեծության և հանդուրժողականության» տարիներին ինչպես ամերիկյան առևտրականների, այնպես էլ միսիոներների անվտանգությունը երաշխավորված էր օսմանյան կառավարության կողմից: Սակայն հետադիմական միտումների ի հայտ գալուց հետո միսիոներները սկսեցին դժվարություններ ունենալ, կանգնել բազմաթիվ արգելքների առջև:

Ամերիկյան դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցիչները հետզհետե սկսեցին զբաղվել Օսմանյան կայսրությունում ապրող և աշխատող ԱՄՆ-ի քաղաքացիների կյանքի և ունեցվածքի պաշտպանության խնդիրներով: Միսիոներների գործունեության հետ առնչվող առաջին լուրջ

խնդիրը ծագեց 1860-ական թթ. վերջին, երբ Բարձր Դուռը խիստ պայմաններ հաստատեց առաքելության կրթական հաստատությունների համար: Բարձր Դուռը պայմանավորում էր այդ խստացումներն ազգայնականության և հեղափոխություն քարոզելու փոքրամասնությունների միջավայրում և կրթելու հանգամանքով: Միսիոներների անհանգստությունն ավելի ուժեղացավ, երբ 1880-ական թթ. Աբդուլ Համիդը սկսեց փակել միսիոներական դպրոցները:

Սևծովյան նեղուցներով ամերիկյան ռազմանավերի նավարկության խնդիրը մշտապես գտնվում էր ԱՄՆ-ի դիվանագետների օրակարգում: 1871 թ. Լոնդոնի պայմանագիրը կրկին անգամ հաստատեց նեղուցների նավարկությանը վերաբերող սկզբունքները, որոնց համաձայն՝ սուլթանին վերապահվում էր խաղաղ պայմաններում թույլտվություն սահմանել նեղուցներ մուտք գործող բարեկամ երկրների ռազմանավերին: Նույնիսկ այդ պայմանագրի ստորագրումից հետո ամերիկյան կառավարությունն ու դիվանագիտական ներկայացուցչությունը շարունակում էին բանակցել Բարձր Դռան հետ՝ ԱՄՆ-ի համար այդ սահմանափակումը վերացնելու նպատակով՝ նշելով, որ ԱՄՆ-ը ոչ միայն բարեկամ պետություն է Օսմանյան կայսրության համար, այլև չեզոք և անկողմնակալ քաղաքականություն է իրականացնում Եվրոպայի գործերի նկատմամբ, որ իր ռազմանավերի ազատ նավարկությունն անհրաժեշտ է միմիայն առևտրական շահերի պաշտպանության համար:

1880-1890-ական թթ. ԱՄՆ-ում հպատակություն ստացած և Օսմանյան կայսրություն վերադարձած հայերի խնդիրը հայտնվեց պետքարտուղարության և Կոստանդնուպոլսում դիվանագիտական ներկայացուցչության ուշադրության կենտրոնում:

ԱՄՆ-ի դեսպանությունն ուշադրությամբ հետևում էր Օսմանյան կայսրությունում տեղի ունեցող իրադարձություններին, մասնավորապես արևմտահայերի, այլ փոքրամասնությունների և արևելյան շրջաններում տիրող իրավիճակին: Ամերիկացի դիվանագետներին հատկապես հետաքրքրում էր 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքը. պետքարտուղարություն էին ներկայացվում բալկանյան և կովկասյան ճակատներում տեղի ունեցող գործողությունների վերաբերյալ բոլոր մանրամասները:

Միսիոներական գործունեության հանդեպ օսմանյան կառավարության դժգոհությունն ավելի բարդացավ հայերի նկատմամբ աճող թշնամության համատեքստում: Վախենալով քրիստոնյա փոքրամասնությունների շրջանում ապստամբության հնարավորությունից՝ օսմանյան ղեկավարները սկսեցին նյարդայնանալ ամերիկյան քոլեջների գործունեությունից, որոնց հիմնական «կլիենտուրան» հայերն էին: Դրա արդյունքում 1893 թ. թուր-

քերն այրեցին միսիոներների մեկի տունը, իսկ Օսմանյան ոստիկանությունը՝ Մարզվանի «Ամերիկյան խորհուրդի» դպրոցի, Անատոլիական քոլեջի անավարտ շինությունը: Իշխանությունները փորձում էին վախեցնել միսիոներներին և քշել նրանց հյուսիս-կենտրոնական Փոքր Ասիայից: Իշխանությունները մեղադրեցին երկու հայ ուսուցիչների դավաճանության մեջ և դատապարտեցին մահվան: Հետագայում նրանց ներում շնորհվեց, նրանք աքսորվեցին երկրից ամերիկացի դիվանագետների միջնորդությամբ, իսկ ԱՄՆ-ի կառավարությունը փոխհատուցում պահանջեց Մարզվանում միսիոներների ունեցվածքի համար:

Թեև 19-րդ դարի 90-ական թթ. կեսերին ԱՄՆ-ի քաղաքականությունը Մերձավոր Արևելքում շարունակում էր սահմանափակված մնալ Մոնրոյի վարդապետության սկզբունքներով, ամերիկյան դիվանագիտությունը, որի գլխավոր նպատակն էր առևտրական շահերի, ԱՄՆ-ի քաղաքացիների, մասնավորապես միսիոներների անվտանգության պաշտպանությունը, անուղղակի կերպով ներգրավվեց Հայկական հարցում, դարձավ 1894-1896 թթ. հայկական կոտորածների ականատեսը: Քանի որ ԱՄՆ-ն Օսմանյան կայսրությունում եվրոպական տերությունների նման զարգացած դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունների ցանց չուներ, շատ դեպքերում ամերիկյան կառավարությունը տեղեկատվություն էր ստանում անմիջապես միսիոներներից: Թեև ամերիկյան դիվանագետների և միսիոներների զեկուցագրերը ամբողջական պատկերացում չեն տալիս տեղի ունեցած իրադարձությունների մասին, սակայն կարևորագույն սկզբնաղբյուր են հանդիսանում օսմանյան իշխանությունների կողմից ծրագրված կոտորածների կազմակերպման և իրականացման ուսումնասիրության հարցում:

Ամերիկյան հասարակայնության ճնշման ներքո տեղի ունեցան լսումներ և քննարկումներ Կոնգրեսում, ԱՄՆ-ի նախագահն անդրադարձավ արևմտահայության կոտորածներին Կոնգրեսին ուղղված իր տարեկան ուղերձներում, սակայն պաշտոնական Վաշինգտոնը չփորձեց անգամ իսկ միջամտել, պահանջել սուլթանական իշխանություններից դադարեցնել շուրջ 300 հազար հայերի ջարդը, շարունակեց պահպանել բարեկամական հարաբերություններ Օսմանյան կայսրության հետ, սահմանափակվելով՝ միմիայն ԱՄՆ-ի շահերի, քաղաքացիների և ունեցվածքի պաշտպանության խնդիրների հետապնդումով:

Չնայած ԱՄՆ-ի կառավարության Հայկական հարցին չմիջամտելու դիրքորոշմանը՝ 1894-1896 թթ. հայկական կոտորածները բողոքի մեծ ալիք բարձրացրին Միացյալ Նահանգներում: Առաջինն արձագանքեցին Միացյալ Նահանգների բորբոքված հայ համայնքները: Բոստոնի և Նյու Յորքի հայկական մամուլում հրապարակվեցին սուլթանական կառավարության

կողմից կազմակերպված հայկական կոտորածները լուսաբանող նյութեր և հոդվածներ: Հայկական բոլոր կազմակերպությունները միավորվել էին բողոքի ցույցեր և հասարակական հավաքներ կազմակերպելու, Կոնգրեսին ուղղված հայտարարություններ և խնդրագրեր ներկայացնելու գործում:

Ամերիկահայ կազմակերպությունների և Օսմանյան կայսրությունում գործող միսիոներների կողմից տեղեկատվություն ստացող բողոքական եկեղեցու կառույցների գործունեության արդյունքում ԱՄՆ-ում բողոքի ալիքը զգալի թափ հավաքեց: Ամերիկյան պարբերականները սկսեցին հրատարակել առաջնորդողներ, խմբագրականներ, հասարակական գործիչների հոդվածներ Հայկական հարցի, արևմտահայության ծանր իրավիճակի մասին, Հայաստանի քարտեզներ, լուսանկարներ և այլն: Ամսագրերի էջերում տպագրված հասարակական-քաղաքական գործիչների բազմաթիվ հոդվածները, նյութերն ու նամակները վկայում էին ամերիկյան հասարակայնության զայրույթի մասին՝ սուլթանական կառավարության հակահայկական քաղաքականության հանդեպ:

Սասունի կոտորածի մասին լուրերը հաստատվելուն պես տարբեր նահանգների խոշոր քաղաքներում կազմակերպվեցին մեծ հանրահավաքներ, որոնց մասնակցում էին ամերիկյան հասարակայնության հայտնի ներկայացուցիչներ, ստեղծվում էին հայասիրական կազմակերպություններ: Միաժամանակ Միացյալ Նահանգներում գործող Օսմանյան կայսրության դիվանագիտական ներկայացուցչությունն ու որոշ թուրքամետ ուժեր հրապարակայնորեն փորձում էին արդարացնել և պաշտպանել սուլթանական կառավարությունը, վարկաբեկել հայամետ քարոզչությունը:

1895-1896 թթ. տեղի ունեցած կոտորածներն էլ ավելի ամրապնդեցին ամերիկյան հասարակայնության համոզվածությունը սուլթանական կառավարության մեղսակցության մեջ: ԱՄՆ-ի բողոքական եկեղեցին և եկեղեցական կազմակերպությունները եռանդուն կերպով միացան օսմանյան կառավարության դեմ կազմակերպվող բողոքի ցույցերին: Շատ եկեղեցիներ «Հայկական կիրակի» էին հռչակել:

Հատուկ քննարկումներ տեղի ունեցան Կոնգրեսի ներկայացուցիչների պալատում և Սենատում, 1896 թ. հունվարին ընդունվեց «Հայկական բռնություններ» համատեղ բանաձև, ուր հույս էր հայտնվում, որ եվրոպական տերությունները՝ որպես 1878 թ. Բեռլինի պայմանագրի ստորագրող կողմեր, «մարդկության շահերից» ելնելով, «կկանգնեցնեն մոլեռանդության և սանձարձակ բռնության ձեռքը» և «կապահովեն Թուրքական կայսրության անմեղ քրիստոնյաների բոլոր իրավունքները»: Համաձայն ընդունված բանաձևի՝ ԱՄՆ-ի Սենատը և Ներկայացուցիչների պալատը կաջակցեն նախագահի կողմից ընտրված «ամենավճռական գործողությունը»՝ Թուրքիայում ԱՄՆ-ի քաղաքացիների պաշտպանությունն ու անվտանգությունն

ապահովելու, ինչպես նաև նրանց ունեցվածքին հասցված վնասի համար փոխհատուցում ստանալու նպատակով:

Հայ համայնքները, ԱՄՆ-ի բազմապիսի բարեգործական, եկեղեցական կազմակերպություններն ու միսիոներները սկսեցին օգնություն կազմակերպել հայ որբերի և այրիների համար: Միացյալ Նահանգների տարբեր քաղաքներում հիմնվեցին հայ-ամերիկյան բարեգործական միություններ և կոմիտեներ՝ Օսմանյան կայսրության հայ բնակչության համար նյութական և ֆինանսական միջոցներ հավաքելու նպատակով: Արևմտյան Հայաստանի քաղաքներում և գյուղերում զգալի աշխատանք կատարեցին «Ամերիկյան կարմիր խաչի» պատվիրակությունն ու ամերիկյան միսիոներները:

ԱՄՆ-ի և Օսմանյան կայսրության միջև առևտրական հարաբերությունների համար 20-րդ դարի սկիզբը դարձավ «ամբողջովին նոր դարաշրջան»: ԱՄՆ-ի կառավարության «առևտրական դիվանագիտության քաղաքականության» շնորհիվ ամերիկյան ապրանքի արտահանումը զգալի աճ արձանագրեց Մերձավոր Արևելքում: 1899 թ. Նյու Յորքի և Կոստանդնուպոլսի միջև բացվեց շոգենավային ուղիղ գիծը, որը ստեղծեց շատ ավելի էժան պայմաններ դեպի Մերձավոր Արևելք ամերիկյան ապրանքի արտահանման համար: Միացյալ Նահանգները դարձավ Օսմանյան կայսրություն գյուղատնտեսական մեքենաների առաջին ներկրողը:

Ծովային, տնտեսական և միսիոներական շահերի ընդլայնման արդյունքում ԱՄՆ-ի կառավարությունը բարձրացրեց Կոստանդնուպոլսում դիվանագիտական ներկայացուցչի մակարդակը: 1906 թ. Ջոն Լայշմանը նշանակվեց Օսմանյան կայսրությունում արտակարգ և լիազոր դեսպան:

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին ԱՄՆ-ի դիվանագետները շարունակեցին հետևել իրադարձությունների զարգացմանն Օսմանյան կայսրությունում, պաշտպանել միսիոներների, առևտրականների և ԱՄՆ-ի մյուս քաղաքացիների շահերը, պահանջել օսմանյան իշխանություններից փոխհատուցում վնասված ամերիկյան ունեցվածքի համար:

1908 թ. երիտթուրքական հեղափոխությունը մեծ ոգևորությամբ ընդունվեց պաշտոնական Վաշինգտոնի կողմից: Ամերիկյան ղեկավարությունը համոզված էր, որ իրավիճակի փոփոխությունը նպաստելու է ԱՄՆ-ի և Օսմանյան կայսրության միջև առևտրական հարաբերությունների զարգացմանը: Անմիջապես հեղափոխությունից հետո ԱՄՆ-ի վարչակազմն օժանդակեց նավթի և երկաթուղիների կառուցման բնագավառների մի խումբ գործարարների այցն Օսմանյան կայսրություն, որը ղեկավարում էր ծովակալ Քոլբի Չեսթերը: Առաքելության նպատակն էր կոնցեսիաներ ստանալ Թուրքիայի կառավարությունից: Բարձր Դուռն առաջարկել էր երկաթուղային և հանքային կոնցեսիաներ Հայաստանում և Միջագետքում: Ներքին և արտաքին պատճառների բերումով Չեսթերի ծրագիրն ամբողջությամբ չի-

ռականացավ: Ամերիկյան ընկերությունների ակտիվացումն Օսմանյան կայսրությունում մրցակցություն առաջացրեց Գերմանիայի, Անգլիայի և Ֆրանսիայի հետ, որոնք կիսել էին միմյանց միջև իրենց տնտեսական ազդեցությունը:

Թեև բալկանյան պատերազմները բացասական ազդեցություն ունեցան Օսմանյան կայսրության հետ առևտրական հարաբերությունների զարգացման վրա, սակայն ամերիկյան առևտրականներն արդեն իսկ զբաղեցրել էին ղեկավար դիրքեր: Երիտթուրքական հեղափոխությունից հետո ԱՄՆ-Օսմանյան կայսրություն առևտրական հաշվեկշիռը զգալի աճ արձանագրեց: Այն 12.7 մլն դոլարից 1908 թ. աճեց մինչև 25.5 մլն դոլար 1913 թ.: Երիտթուրքական կառավարությունն ԱՄՆ-ի մեջ մեծ ներուժ ունեցող հզոր դաշնակից էր գտել, որը կարող էր դառնալ եվրոպական տերությունների դեմ ուղղված կարևոր հակակշռող լծակ:

Ամերիկյան դիվանագիտական նամակագրությունը կարևոր աղբյուր է արևմտահայության իրավիճակի, մասնավորապես Ադանայի հայ բնակչության կոտորածի լուսաբանման գործում: Սակայն ո՛չ Ադանայի ջարդը, ո՛չ էլ արևմտահայության ծանր վիճակն Առաջին համաշխարհային պատերազմից առաջ այդպես էլ չստացան այնպիսի արձագանք, ինչպիսին էր 1890-ականների թթ. ընթացքում ԱՄՆ-ի հասարակայնության զայրույթը: Հնարավոր է, որ դա նոր օսմանյան իշխանությունների հետ տնտեսական աճող համագործակցության արդյունքն էր:

1913 թ. Օսմանյան կայսրությունում ԱՄՆ-ի դեսպան նշանակված Հենրի Մորգենթաուն փորձում էր շահել Օսմանյան կայսրության ղեկավարների վստահությունը, գոհունակությամբ զեկուցում էր Վաշինգտոնին, որ Թալեաթ փաշան ու մյուս ղեկավարներն արտահայտում էին իրենց բարեկամությունն իր հանդեպ և հավատացած էին, որ ինքը թուրքամետ է: Սակայն 1914 թ. հունվարի կեսերից սկսած Մորգենթաուն սկսել էր իր մտահոգությունը հայտնել երկրի քաղաքական իրավիճակի վերաբերյալ: Մորգենթաուն հետզհետե ականատես էր դառնում, թե ինչպես էր սկսում իրականանալ Թալեաթի «Թուրքիան թուրքերի համար» գաղափարը, երբ վերջինս պնդում էր, որ ամերիկյան բիզնեսի մեջ ներգրավվածները պետք է միայն թուրքեր լինեն: Թուրք-ամերիկյան հարաբերությունները սրվում են, երբ երիտթուրքերը 40 հազար հույներ են տեղահանում Զմյուռնիայից և նրանց փոխարեն բնակեցնում Մակեդոնիայից գաղթած թուրք փախստականների: Իր ծառայության վեց ամիսներից հետո Մորգենթաուն հիասթափվել էր երիտթուրքերի ղեկավարներից և այլևս հաճույք չէր ստանում ո՛չ իր աշխատանքից, ո՛չ էլ Կոստանդնուպոլսում տեղի ունեցող տարբեր միջոցառումներին մասնակցելուց:

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ դիվանագիտական հարաբերությունների հաստատումից ի վեր՝ ութսուն չորս տարիների ընթացքում, Ամերիկայի Միացյալ Նահանգների և Օսմանյան կայսրության պաշտոնական հարաբերությունները եղել են բարեկամական: Թեև 1894-1896 թթ. հայկական կոտորածների ընթացքում հասարակական կարծիքն ԱՄՆ-ում դարձավ խիստ հակաթուրքական, սակայն մինչև Առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը որևէ պատճառով երկու երկրների միջև պաշտոնական հարաբերությունները չեն լարվել: Օգտվելով իր արտաքին քաղաքականության՝ Եվրոպայի հարցերին չմիջամտելու սկզբունքից և Օսմանյան կայսրություն-եվրոպական տերություններ բարդ հարաբերություններից՝ ամերիկյան դիվանագիտությունը հաջողությամբ կարողացավ ապահովել ԱՄՆ-ի տնտեսական շահերի պաշտպանությունը՝ համբերատարությամբ լուծելով այս ընթացքում ծագող յուրաքանչյուր խնդիր:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ԱՐԽԻՎԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ

1. ՀԱԱ, Քաղվածքների ֆոնդ:
2. Archives of the American Embassy at Constantinople. Letters and Papers of the American Legation, 1830-1838. – 1830, November 19; 1832, July 10.
3. The National Archives and Records Service, Despatches from United States Consuls in Erzerum, 1895-1904, Roll 1, Vol. 1, August 5, 1895 – December 31, 1900, R. S. Chilton to Edwin Uhl, 1895, October 9; R.S. Chilton to Edwin Uhl, 1895, October 11; R.S. Chilton to Edwin Uhl, 1895, October 13; R.S. Chilton to Edwin Uhl, 1895, October 15; R.S. Chilton to Edwin Uhl, 1895, October 21; R.S. Chilton to Edwin Uhl, 1895, October 24; Leo Bergholz to N.N. Rockhill, 1896, July 21; Leo Bergholz to N.N. Rockhill, 1896, August 8; Leo Bergholz to N.N. Rockhill, 1896, September 4; Leo Bergholz to N.N. Rockhill, 1896, September 11; Leo Bergholz to N.N. Rockhill, 1896, September 12; Leo Bergholz to N.N. Rockhill, 1896, September 18; Leo Bergholz to N.N. Rockhill, 1896, September 26; Leo Bergholz to N.N. Rockhill, 1896, October 10; Leo Bergholz to N.N. Rockhill, 1896, October 23; Leo Bergholz to N.N. Rockhill, 1896, November 21; Leo Bergholz to N.N. Rockhill, 1896, November 27; Leo Bergholz to William R. Day, 1897, July 12; Leo Bergholz to William R. Day, 1897, August 16; Leo Bergholz to William R. Day, 1897, August 30; Leo Bergholz to William R. Day, 1897, September 7; Leo Bergholz to N.N. Rockhill, 1897, November 27; Leo Bergholz to David J. Hill, 1898, December 8; Leo Bergholz to David J. Hill, 1899, November 10; Leo Bergholz to David J. Hill, 1899, November 13; Leo Bergholz to David J. Hill, 1899, November 20; Leo Bergholz to David J. Hill, 1899, December 26; Leo Bergholz to David J. Hill, 1900, July 31; Leo Bergholz to David J. Hill, 1900, September 20; Leo Bergholz to David J. Hill, 1900, October 1.
4. The National Archives and Records Service, Despatches from United States Consuls in Erzerum, 1895-1904, Roll 2, Vol. 2, January 26, 1901 – May 13, 1904, Vital Ojalvo to David J. Hill, 1901, May 18; Vital Ojalvo to David J. Hill, 1901, July 20; Vital Ojalvo to David J. Hill, 1901, September 3; Leo Bergholz to David J. Hill, 1901, November 16; Leo Bergholz to David J. Hill, 1902, January 17; Leo Bergholz to David J. Hill, 1902, April 12; Leo Bergholz to David J. Hill, 1902, April 21; Leo Bergholz to David J. Hill, 1902, August 8; Leo Bergholz to David J. Hill, 1902, September 9; Vital Ojalvo to Francis B. Loomis, 1903, March 21; Vital Ojalvo to Francis B. Loomis, 1903, April 18; Vital Ojalvo to Francis B. Loomis, 1903, April 21; Vital Ojalvo to Francis B. Loomis, 1903, May 2; Vital Ojalvo to Francis B. Loomis, 1903, October 3; Vital Ojalvo to Francis B. Loomis, 1903, October 6; US Consul to Francis B. Loomis, 1904, February 4.
5. The National Archives and Records Service, Despatches from United States Consuls in Constantinople, 1820-1906, Roll 24, Vol. 24, January 20, 1904 – August 11, 1906, Mr. Usser to Consul Sullivan, Van, Turkey, 1904, February 4; Ernest W. Riggs to Charles M. Dickinson, 1905, September 26; Ernest W. Riggs to Charles M. Dickinson, 1905, October 4; Ernest W. Riggs to Charles M. Dickinson, 1905, October 7.
6. The National Archives and Records Service, National Archives Microfilm Publications. – Microcopy No. 353. – Records of the Department of State Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 4, 867.00 Political Affairs, 867.00/282a-477, William Woodville Rockhill to Philander Chase Knox, 1911, December 12; William Woodville Rockhill to Philander Chase Knox, 1912, August 30; William Woodville Rockhill to Philander Chase Knox, 1912, September 13; American Consul in Bagdad to American Ambassador, 1912, November 5; William Woodville Rockhill to Philander Chase Knox, 1913, January 21.
7. The National Archives and Records Service, National Archives Microfilm Publications, Microcopy No. 353, Records of the Department of State Relating to Internal Affairs of Turkey, 1910-1929, Roll 5, 867.00 Political Affairs, 867.00/478-704, Edward Nathan to Philander Chase Knox, 1913, January 21; William Woodville Rockhill to Philander Chase Knox, 1913, February 21; Edward I. Nathan to Captain William B. Fletcher, 1913, April 18; William Woodville Rockhill to Philander Chase Knox, 1913, April 29; Edward I. Nathan to Captain William B. Fletcher, 1913, April 30; William Woodville Rockhill to Philander Chase Knox, 1913, May 15; William Woodville Rockhill to Philander Chase Knox, 1913, May 24.

2. ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

8. Congressional Globe, 74, pt. 4, 40th Congress, 2nd Session (1867-1868).
9. Monthly Consular and Trade Reports, No. 350, 1909, November.
10. The Statutes at Large of the United States of America, from December, 1895, to March, 1897, and Recent Treaties, Conventions, and Executive Proclamations of the Two Houses of Congress, Vol. XXIX, Washington: Government Printing Office, 1897.
11. US Congressional Record, House, 1896, January 24; January 27; February 12.
12. US Department of State. Papers Relating to Foreign Affairs, Washington: Government printing Office, 1861.
13. US Department of State. Papers Relating to Foreign Affairs, Washington: Government printing Office, 1862.
14. US Department of State. Papers Relating to Foreign Affairs, Accompanying the Annual Message of the President to the Second Session Thirty-Eighth Congress, Part IV, Washington: Government printing Office, 1865.
15. US Department of State. Papers Relating to the Foreign Relations of the United States, Transmitted to Congress, With the Annual Message of the President, December 7, 1874, Washington: Government Printing Office, 1874.
16. US Department of State. Papers Relating to the Foreign Relations of the United States, Transmitted to Congress, With the Annual Message of the President, December 3, 1877, Washington: Government Printing Office, 1877.

17. US Department of State. Papers Relating to the Foreign Relations of the United States, Transmitted to Congress, With the Annual Message of the President, December 2, 1878, Washington: Government Printing Office, 1878.
18. US Department of State. Papers Relating to the Foreign Relations of the United States, Transmitted to Congress, With the Annual Message of the President, December 6, 1880, Washington: Government Printing Office, 1880.
19. US Department of State Papers Relating to the Foreign Relations of the United States, Transmitted to Congress, With the Annual Message of the President, December 5, 1881, Washington: Government Printing Office, 1882.
20. US Department of State Papers Relating to the Foreign Relations of the United States, Transmitted to Congress, With the Annual Message of the President, December 4, 1882, Washington: Government Printing Office, 1883.
21. US Department of State. Papers Relating to the Foreign Relations of the United States, Transmitted to Congress, With the Annual Message of the President, December 4, 1883, Washington: Government Printing Office, 1884.
22. US Department of State. Papers Relating to the Foreign Relations of the United States, Transmitted to Congress, With the Annual Message of the President, December 1, 1884, Washington: Government Printing Office, 1885.
23. US Department of State. Papers Relating to the Foreign Relations of the United States, Transmitted to Congress, With the Annual Message of the President, December 8, 1885, Washington: Government Printing Office, 1886.
24. US Department of State. Papers Relating to the Foreign Relations of the United States, Transmitted to Congress, With the Annual Message of the President, December 6, 1886, Washington: Government Printing Office, 1887.
25. US Department of State. Papers Relating to the Foreign Relations of the United States, for the Year 1887, Transmitted to Congress, With a Message of the President, June 26, 1888, Washington: Government Printing Office, 1888.
26. US Department of State. Papers Relating to the Foreign Relations of the United States, Transmitted to Congress, With the Annual Message of the President, December 3, 1889, Washington: Government Printing Office, 1890.
27. US Department of State. Papers Relating to the Foreign Relations of the United States, Transmitted to Congress, With the Annual Message of the President, December 3, 1890, Washington: Government Printing Office, 1891.
28. US Department of State. Papers Relating to the Foreign Relations of the United States, Transmitted to Congress, With the Annual Message of the President, December 3, 1890, Washington: Government Printing Office, 1891.
29. US Department of State. Papers Relating to the Foreign Relations of the United States, Transmitted to Congress, With the Annual Message of the President, December 9, 1891, Washington: Government Printing Office, 1892.
30. US Department of State. Papers Relating to the Foreign Relations of the United States, Transmitted to Congress, With the Annual Message of the President, December 3, 1893, Washington: Government Printing Office, 1894.

31. US Department of State. Papers Relating to the Foreign Relations of the United States, Transmitted to Congress, With the Annual Message of the President, December 3, 1894, Washington: Government Printing Office, 1895.
32. US Department of State. Papers Relating to the Foreign Relations of the United States, With the Annual Message of the President, Transmitted to Congress, December 2, 1895, Part 1, Washington: Government Printing Office, 1896.
33. US Department of State. Papers relating to the Foreign Relations of the United States, with the Annual Message of the President transmitted to Congress, December 7, 1896, and the Annual Report of the Secretary of State, Washington, 1897.
34. US Department of State. Papers relating to the Foreign Relations of the United States with the Annual Message of the President transmitted to Congress, December 6, 1897, Washington: Government Printing Office, 1898.
35. US Department of State. Papers relating to the Foreign Relations of the United States, with the Annual Message of the President transmitted to Congress on December 5, 1898, Washington: Government Printing Office, 1901.
36. US Department of State. Papers relating to the Foreign Relations of the United States, with the Annual Message of the President transmitted to Congress, December 3, 1900, Washington: Government Printing Office, 1902.
37. US Department of State. Papers relating to the Foreign Relations of the United States, with the Annual Message of the President transmitted to Congress, December 7, 1903, Washington: Government Printing Office, 1904.
38. US Department of State. Papers relating to the Foreign Relations of the United States, with the Annual Message of the President Transmitted to Congress, December 3, 1906, Part 2, Washington: Government Printing Office, 1909.
39. US Department of State. Papers relating to the Foreign Relations of the United States, with the Annual Message of the President Transmitted to Congress, December 3, 1907, Part 2, Washington: Government Printing Office, 1910.
40. US Department of State. Papers relating to the Foreign Relations of the United States, with the Annual Message of the President Transmitted to Congress, December 8, 1908, Washington: Government Printing Office, 1912.
41. US Department of State, Papers relating to the Foreign Relations of the United States, with the Annual Message of the President Transmitted to Congress, December 7, 1909, Washington: Government Printing Office, 1914.
42. US Department of State. Papers relating to the Foreign Relations of the United States, with the Annual Message of the President Transmitted to Congress, December 6, 1910, Washington: Government Printing Office, 1915.

3. ԳՐՔԵՐ ԵՎ ՀՈԴՎԱԾՆԵՐ

43. Aid for Armenia: An Appeal for Immediate Help // *«The Outlook»*, 1896, Vol. 53.
44. Aid for the Armenians // *«The New York Times»*, 1895, December 20.
45. Ambassador Morgenthau's Story: A Personal Account of the Armenian Genocide, New York: Cosimo, Inc., 2010.

46. Americans and Armenians // The Armenian Massacres, 1894-1896: British Media Testimony (Edited by Arman J. Kirakossian), Dearborn, Michigan: The Armenian Research Center of the University of Michigan-Dearborn, 2007.
47. America's Relief Expedition to Asia Minor under the Red Cross, Washington, D.C., 1896.
48. Another Armenian Holocaust // *«The New York Times»*, September 10.
49. Armenia and the Sultan // *«The New York Times»*, 1894, December 17.
50. Armenians Homes Burned // *«The New York Times»*, 1896, January 13
51. Arpee, Leon, A Century of Armenian Protestantism. 1846-1946, New York: The Armenian Missionary Association of America, Inc., 1946.
52. Avakian, Arra S., The Armenians in America, Minneapolis, Minnesota: Lerner Publications Company, 1977.
53. Bakalian, Anny, Armenian-Americans: From Being to Feeling Armenian, New Brunswick, 1993.
54. Barton, Clara, Expedition in Asia Minor and Relief Operation, Yerevan: Armenian Genocide Museum-Institute, 2012.
55. Barton, David H., Clara Barton. In the Service of Humanity, Westwood, Connecticut and London, 1995.
56. Barton, James L., Daybreak in Turkey, Boston, 1908.
57. Barton, William E., Clara Barton. Founder of the American Red Cross, Vol. II, Boston and New York, 1922.
58. Bertram, Marshall, The Birth of Anglo-American Friendship. The Prime Facet of the Venezuelian Boundary Dispute. A Study of the Interraction of Diplomacy and Public Opinion, Lanham, Ney York, London: University Press of America, 1992.
59. Bliss E.M., Turkey and Armenian Atrocities, Philadelphia, 1896.
60. Bribing the Armenians // *«The New York Times»*, 1895, February 23.
61. Brutality of the Turks // *«The New York Times»*, 1890, August 4.
62. Bryce, James, The Armenian Question // The Armenian Massacres, 1894-1896 (Edited by Arman J. Kirakossian), Detroit: Wayne State University Press, 2004.
63. Buckingham, Clyde E., Clara Barton. A Broad Humanity. Philantropic Efforts on Behalf of the Armed Forces and Disaster Victims. 1860-1900, Alexandria, VA, 1980.
64. Burton, David H., British-American Diplomacy, 1895-1917. Early Years of the Special Relationship, Malabar, Florida: Krieger Publishing Company, 1999.
65. Carleton, William G., The Revolution in American Foreign Policy. Its Global Range, New York: Random House, 1963.
66. Cox, Samuel S., Diversions of a Diplomat in Turkey, New York: Charles L. Webster & Co., 1887.
67. Davis, Cushman Kellogg, A Treatise on International Law including American Diplomacy, St. Paul, Minn.: Keefe-Davidson Law Book Co., 1901.
68. Deranian, Hakob Martin, Worcester is America: The Story of Worcester's Armenians, the Early Years, Worcester, 1998.
69. Epler, Percy H., The Life of Clara Barton, New York, 1915.
70. Fish, Carl Russell, American Diplomacy, New York: Henry Holt and Company, 1923.

71. Fishwick, Marshall W., Illustrious Americans: Clara Barton, Morristown, New Jersey, 1966.
72. Foster, John W., A Century of American Diplomacy: Being a Brief Review of the Foreign Relations of the United States, 1776-1876, Boston and New York: Houghton Mifflin Company, 1900.
73. Frazee, Charles A., Catholics and Sultans. The Church and the Ottoman Empire, 1453-1923, London, New York, New Rochell, Melbourne, Sydney: Cambridge University Press, 1983.
74. Fry, Joseph A., Imperialism, American style, 1890-1916 // American Foreign Relations Reconsidered, 1890-1993 (Edited by Gordon Martel), London and New York: Routledge, 1994.
75. Gabrielian, M.S., Armenia: A Martyr Nation. A Historical Sketch of the Armenian People from Tradition Times to the Present Tragic Days, New York, 1918.
76. Gordon, Leland James, American Relations with Turkey. 1830-1930. An Economic Interpretation, Philadelphia: University of Pennsylvania Press; London: Humphrey Milford: Oxford University Press, 1932.
77. Grabill, Joseph L., Protestant Diplomacy and the Near East. Missionary Influence on American Policy, 1810-1927, Minneapolis: University of Minnesota Press, 1971.
78. Greene, F.D., The Armenian Massacres; Or the Sword of Mohammed, Containing a Complete and Thrilling Account of the Terrible Atrocities and Wholesale Murders Committed in Armenia by Mohammedan Fanatics (The Mohammedan Reign of Terror in Armenia), Philadelphia: National Publishing Co., 1896.
79. Greene, F.D., The Armenian Crisis in Turkey; The Massacre of 1894, Its Antecedents and Significance, with a Consideration of Some of the Factors which Enter into Solution of this Phase of the Eastern Question, New York: Putnam's Sons, 1895.
80. Gulesian, M.H., England's Hand in Turkish Massacres // *«The Arena»*, 1897, No. 17.
81. Gulesian, M.H., The Armenian Refugees // *«The Arena»*, 1897, No. 77.
82. Hamlin, C., The Armenian Massacres // *«The Outlook»*, 1895, vol. 52, December 7.
83. Hamlin, C., The Martyrdom of Armenia // *«The Missionary Review of the World»*, 1896, No. 9.
84. Hamlin, C., The Genesis and Evolution of the Turkish Massacre of Armenian Subjects // *«American Antiquarian Society Proceedings»*, 1899, No. XIII.
85. Hart, Albert Bushnell, The Foundations of American Foreign Policy, New York: The Macmillan Company, 1901.
86. Howard, Harry N., Turkey, the Straits and U.S. Policy, Baltimore and London: The Johns Hopkins University Press, 1974.
87. Hundreds Killed at Trebizond // *«The New York Times»*, 1895, October 18.
88. Hunt, Michael H., Traditions of American Diplomacy: from Colony to Great Power // American Foreign Relations Reconsidered, 1890-1993 (Edited by Gordon Martel). – London and New York: Routledge, 1994.
89. Jones, Marian Moser, The American Red Cross. From Clara Barton to the New Deal, Baltimore: The Johns Hopkins University Press, 2013.

90. Kulhanjian, Gary A., The Historical and Sociological Aspects of Armenian Immigration to the United States, 1890-1930, San Francisco, 1975.
91. Lord Salisbury and Armenia // The Armenian Massacres, 1894-1896: US Media Testimony (Edited and with an Introduction by Arman J. Kirakossian), Detroit, 2003.
92. Malcolm, M. Vartan, Armenians in America, Boston and Chicago, 1919.
93. Massacre of Armenians // *«The New York Times»*, 1894, November 17.
94. Mattox, Henry E., The Twilight of Amateur Diplomacy. The American Foreign Service and Its Senior Officers in the 1890s, Kent, Ohio and London, England: The Kent State University Press, 1989.
95. Mirak, Robert, Torn Between Two Lands: Armenians in America. From 1890 to World War I, Cambridge, 1983.
96. Nolan, Jeannette Covert, The Story of Clara Barton of the Red Cross, New York, 1941.
97. Oscanyan, Christopher, The Sultan and his People, by a Native of Turkey, New York: Derby and Jackson, 1857.
98. Paine, Thomas, Common Sense. The Rights of Man and Other Essential Writings of Thomas Paine, New York: Dover Publications, 1997.
99. Payaslian, Simon, United States Policy Toward the Armenian Question and the Armenian Genocide, New York: Palgrave Macmillan, 2005.
100. Pears E., Life of Abdul Hamid, New York, 1917.
101. Prompt Relief for Armenians // *«The New York Times»*, 1895, December 1.
102. Pullman, George H., American Relief Expedition to Asia Minor Under the Red Cross, Washington, D.C., 1896.
103. Rational Sympathy // The Armenian Massacres, 1894-1896 (Edited by Arman J. Kirakossian), Detroit: Wayne State University Press, 2004.
104. Reform for Armenia // *«The Washington Post»*, 1895, October 17.
105. Researches of the Rev. E. Smith and Rev. H. G. O. Dwight in Armenia: Including a Journey through Asia Minor, and into Georgia and Persia, with a Visit to the Nestorian and Chaldean Christians of Oormiah and Salmas, In 2 Vols., Boston: Crocker and Brewster; New York: Jonathan Leavitt, 1833.
106. Rich, Norman, Great Power Diplomacy, 1814-1914, New York: McGraw-Hill, Inc., 1992.
107. Russell, Richard, American Diplomatic Realism: A Tradition Practised and Preached by George F. Kennan // Diplomacy and Statecraft, 2000, November, Vol. 11, Issue 3.
108. Salt, Jeremy, Imperialism, Evangelism and the Ottoman Armenians, 1878-1896, Portland, Oregon: Frank Cass, 1993.
109. Smith, Adam, An Inquiry into the Nature and Causes of the Wealth of Nations, Indianopolis: Liberty Fund, 1981.
110. Stillman W. J., The Eastern Question // The Armenian Massacres, 1894-1896 (Edited by Arman J. Kirakossian), Detroit: Wayne State University Press, 2004, pp. 112-115.
111. Sultan Bars the Way // *«The Washington Post»*, 1896, January 14.

112. Takooshian, Harold, Armenian Immigration to the United States Today from the Middle East // *«Journal of Armenian Studies»*, 1987, No. 3.
113. Tales of Horror Retold // *«The New York Times»*, 1895, May 20.
114. Tashijian, James H., The Armenians of the United States and Canada: A Brief Study, Boston, 1970.
115. Terrel, A.W., An Interview with Sultan Hamid // *«The Century Magazine»*, 1897, vol. 55.
116. The Armenian Massacres, 1894-1896: US Media Testimony (Edited and with an Introduction by Arman J. Kirakossian), Detroit: Wayne State University Press, 2004.
117. The Erzeroum Massacre // *«The New York Times»*, 1890, July 26.
118. The Letters of Theodore Roosevelt / Selected and edited by Eltong E. Morison, Cambridge, MA: Harvard University Press, 1952.
119. Thelberg, Elizabeth B., An American Heroine in the Heart of Armenia: Dr. Grace Kimball and Her Relief Work at Van // *«The Review of Reviews»*, 1896, Vol. 13.
120. Thomas, Lewis V. and Frye, Richard N., The United States and Turkey and Iran, Cambridge, Massachusetts: Harvard University Press, 1951.
121. Turkish Persecution // *«The Washington Post»*, 1896, February 24.
122. Waldstreicher, D., The Armenian Americans, New York, 1989.
123. Wertsman, Vladimir., The Armenians in America, 1616-1976: A Chronology and Fact Book, Dobbs Ferry, N.Y., 1978.
124. Williams, Blanche Colton, Clara Barton. Daughter of Destiny, Philadelphia, New York, London, 1941.
125. Yenovkian, S. S., Martyred Armenia. A brief description of the recent horrible Massacres of the Christian Armenians in Turkey, Cleveland: The Britton PTG. Co., 1896.
126. Young, Charles Sumner, Clara Barton. A Centenary Tribute, Boston, 1923.
127. Բարտոն Կլարա, «Ամերիկյան կարմիր խաչի» նպաստամատույց առաքելությունը Փոքր Ասիայում, Երևան: ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2012:
128. Երեմեն Դ. Ե., Թուրքերի ծագումը, Երևան, 1975:
129. Կիրակոսյան Արման, Բրիտանական դիվանագիտությունը և արևմտահայության խնդիրը (XIX-րդ դարի 30-ական թթ., 1914 թ.), Երևան, 1999:
130. Կիրակոսյան Արման, Հայկական հարցը ԱՄՆ-ի ամսագրերի էջերում (19-րդ դարի 90-ական թվականների կեսեր), ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1980, No.3:
131. Կիրակոսյան Արման, Բաբը Ալիի ցույցը: Հայերի կոտորածները 1895 թ. // Հայոց պատմություն, հ. 3, Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես, 1918 թ.), Գիրք առաջին (XVII դարի երկրորդ կես – XIX դարի վերջ), Երևան: ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2010, էջ 527-534:
132. Կիրակոսյան Արման, 1895 թ. մայիսյան բարենորոգումների ծրագիրը // Հայոց պատմություն, հ. 3, Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես, 1918 թ.),

Գիրք առաջին (XVII դարի երկրորդ կես – XIX դարի վերջ), Երևան: ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2010, էջ 521-527:
133. Կիրակոսյան Արման, Սասունի 1893-1894 թթ. ինքնապաշտպանական մարտերը և հայերի զանգվածային կոտորածների սկիզբը // Հայոց պատմություն, հ. 3, Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես – 1918 թ.), Գիրք առաջին (XVII դարի երկրորդ կես – XIX դարի վերջ), Երևան: ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2010, էջ 515-521:
134. Համբարյան Ա., Երիտթուրքերի ազգային ու հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում (1908-1914), Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1979:
135. *«Հայք»*, 1893, 15 դեկտեմբերի; 1894, 30 դեկտեմբերի; 1895, 15 մարտի:
136. Հովհաննիսյան Ռիչարդ, Ամերիկայի Միացյալ Նահանգները և Հայկական հարցը // Հայկական հարց. Հանրագիտարան, Երևան: Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, 1996:
137. *«Հորիզոն»*, 1910, 18 փետրվարի:
138. Ճիզմէճեան, Մանուկ Գ., Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց, 1890-1925, Ֆրեզնո: Նոր Օր, 1930:
139. *«Մշակ»*, 1913, 7 օգոստոսի:
140. *«Նոր դար»*, 1895, 6 հունվարի; 13 հունվարի; 8 ապրիլի; 3 հունիսի:
141. Սողոմոնյան Ա. Մ., Անգլիական միսիոներների գործունեությունը Արևմտյան Հայաստանում // *«Պատմա-բանասիրական հանդես»*, 1988:
142. Зулалян, М.К., Вопросы древней и средневековой истории Армении в освешении современной турецкой историографии, Ереван, 1970.
143. Инджикян О. Г., Буржуазия Османской империи, Ереван: Издательство АН Армянской ССР, 1977.
144. Шпилькова, В.И., Империалистическая политика США в отношении Турции (1914-1920), М., 1960.

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Ա
Աարիֆի փաշա 114
Աբդալյան Հայկանուշ 286
Աբդալյան Նահապետ 286
Աբդուլ Ազիզ 91, 97, 369
Աբդուլլա, Գալեբ 258
Աբդուլլա փաշա 217
Աբդուլ Համիդ 2-րդ 76, 81, 82, 86, 129, 136, 160, 242-245, 261, 279, 294, 329, 345, 360, 370
Աբդուլ Մեջիդ 45, 72, 368
Ագին 225, 233, 234, 278
Աղաբազար 68, 72, 77, 177, 211
Աղամս Ջոն 44, 48, 364
Աղամս Ջոն Քվինսի 18, 19,
Աղանա 7, 68, 96, 112, 172, 182, 184, 192, 194, 209, 211, 332, 340-343, 350, 351, 374
Աղդյաման 283
Աղդիանուպոլիս 73, 333
Աթալիա (Անթալիա) 164
Աթենք 61, 145, 160, 169, 183, 259
Ալաբաշ 228
Ալահ բեյ Մեհմետ 190, 195
Ալաշկերտ 105, 106, 206, 235, 296
Ալբանիա 321
Ալ-Բուստանի Սուլեյման 357
Ալեքսանդրեթ (Իսքենդերուն) 95, 164, 167, 169, 173, 183, 184, 193, 196, 209, 216, 226, 238, 239, 277, 283, 340-342
Ալեքսանդրիա 60
Ալժիր 44, 45, 50, 365
Ալիշան Ղևոնդ 248
Ալի փաշա 81, 307, 308
Ալի փաշա Մեհմեդ Էմին 93, 99
Ալլեն 189, 191, 289
Ալյասկա 23, 25, 31, 32, 38
Ախեն 13,
Ակհիսար 68, 177, 210
Ահմեդ փաշա 309
Աղբյուր Սերոբ (Վարդանյան Սերոբ) 296
Ամասիա 136, 137, 142, 143, 168, 186, 195, 210
Ամերիկա 10-16, 20-22, 24, 25, 29, 34, 37, 55, 93, 247-249, 258, 263, 295, 338, 359, 362, 363
Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Միացյալ Նահանգներ, ԱՄՆ, Ամերիկյան Հանրապետություն 5-55, 57-66, 69, 71, 73-75, 78-80, 82, 85-87, 89-95, 97-104, 106, 109-111, 113-138, 140, 142-170, 172-178, 180, 182-184, 186, 187, 193-197, 202-215, 217-219, 221-227, 230-232, 234-239, 241, 242, 246-267, 270-276, 278-280, 282-286, 289, 290, 292-297, 299-308, 310, 311, 314, 316, 318-333, 335, 336-343, 345, 347-350, 354, 357-375
Ամիերստ 61, 65, 74, 248
Այդահո 134
Այնթապ (Անթեպ, Գազիանթեպ) 68, 72, 73, 76, 80, 84, 163, 183, 186, 191, 195, 199, 201, 210, 212, 213, 218, 221, 269, 277, 278, 283
Այնշտայն, Լյուիս 338, 339
Այովա 263
Այվազյան Ադամ 154, 155
Այտրն 68
Անատոլիա 64, 66, 73, 80, 83, 84, 144, 346, 348, 349, 352, 355, 367
Անդովեր 57, 60, 64, 66, 77, 248
Անգորա (Անկարա) 81, 136
Անտիոք 73, 283
Աշեր 322, 323
Առաքելյան Գրիգոր 167, 168
Առաքելյան Հակոբ 120
Առաքելյան Սեդրակ 226
Ասիա 14, 29, 39, 58, 185, 199, 202
Ասիական Թուրքիա 96, 127, 213, 239, 249, 250, 353, 354
Ասսիմ բեյ 162
Ասսիմ փաշա 109, 111
Աստրախան 103
Ասուան 207
Ավետիկյան Ավետիս 304, 305
Ավստրիա 10, 17, 69, 321
Ավստրո-Հունգարիա 25, 325
Ատլանտյան օվկիանոս 10, 15,
Արաբիա 122
Արաբկիր 68, 73, 120, 278
Արթուր Չեստեր 112, 114, 117
Արդանա 335
Արփի Լ. 64, 65, 67, 70, 249
Արևելյան Ասիա 26, 27, 34, 363
Արևելյան Եվրոպա 100
Արևելք 31, 61, 64, 259, 277, 356, 366
Արևմտյան Եվրոպա 101
Արևմտյան Հայաստան 5, 243, 255, 373

Աֆրիկա 14, 34, 37, 58, 249, 343

Բ

Բաբերդ (Բայբուրդ) 180, 200, 267, 268, 269
Բաբշեն 296
Բաթում 181
Բալկաններ 261
Բալյան Սարգիս 226
Բալտիմոր 47, 266
Բալու 278
Բակինգեմ Կլայդ 260
Բաղդադ 207, 347, 355, 358
Բայազետ 301, 309
Բայարդ Թոմաս 34, 114, 119-121, 123, 125-127
Բանգոր 269
Բաշկալե 225
Բաջակլյան Սենեքերիմ 226
Բասեն 312
Բաստերմաջյան Գարեգին 271
Բասրա 207, 355
Բարնըմ Հ. Ն. 110, 112, 149, 150, 185-187, 189-191, 219, 223, 323
Բարտլետ 77
Բարտլետ Լ. 112
Բարտոն Կլարա 266, 271-281
Բարտոն Ջեյմս 84, 88, 311, 356
Բարրոուզ Սամյուել 254, 312
Բաքալյան Գեորգ աղա 240
Բեբեկ 67, 72, 75, 247
Բեզջյան Ալեքսան 76
Բելգիա 22, 325, 355
Բելիզ 35
Բեյլան 283
Բեյկոն Ռոբերտ 327, 331, 337
Բեյնբրիջ Ուիլյամ 45
Բեյրութ 57, 59-61, 66, 73, 74, 76, 91, 95, 119, 124, 131, 163, 164, 167, 182, 184, 196, 207, 314, 324, 327, 347, 350-352, 355, 366
Բենեթ Ուիլյամ 338
Բեռլին 12, 127, 147, 158, 183, 255, 256, 262, 263, 326, 341, 357, 372
Բերա 65, 77, 95, 172
Բերգհոլց Լեո 224, 225, 227, 228, 231-233, 235, 267-269, 286-288, 292, 296, 300, 307, 309-313, 324
Բերկին 358
Բեքիր փաշա 143, 195
Բիդդլի Ջեյմս 49, 365
Բիթլիս (Բաղեշ) 68, 73, 77, 80, 114, 134, 135, 163, 166, 181, 182, 187, 188, 192-195, 199, 209, 210, 212, 220, 223, 227, 237-239, 284, 287, 296, 307-313, 322, 347, 351, 358
Բիլլինգզ 357
Բիսմարկ Օտտո 37, 256
Բիրդ 57
Բիրեջիկ 278, 283
Բլեկվել Ալիս Սթոն 254, 256
Բլեկվել Հենրի 254
Բլեյն Ջեյմս 16, 28, 110-112, 128-132
Բլիս Դենիել 91, 118
Բլիս Էդվին 78, 253, 257, 266
Բլիս Հովարդ 54
Բյուքանիա 68
Բյուրեն Մարտին Վան 49
Բոկեր Ջորջ Հենրի 100, 101
Բոյաջյան Թոմաս 189
Բոյաջյան Ջոզեֆ 337
Բոնապարտ Նապոլեոն 16, 17, 23, 44
Բոնապարտ Ջոզեֆ 16,
Բոսնիա 361
Բոստոն 45, 56, 59, 78, 120, 130, 187, 214, 225, 230, 246, 248, 249, 253, 255, 256, 266, 274, 279, 312, 317, 365, 371
Բոսֆոր 51, 77, 97
Բորդենթաուն 271
Բրազիլիա 301
Բրայան Ուիլյամ Ջեննինգս 29, 355, 356
Բրայս Ջեյմս 174
Բրաուն 189, 191
Բրեդիշ Լյութեր 47
Բրիտանական Կոլումբիա 32
Բրիտանիա, Մեծ Բրիտանիա, Անգլիա 9, 10, 12-18, 21, 23-26, 28, 30-33, 35-38, 41, 43, 44, 47, 49, 52-54, 56, 57, 60, 69, 71, 72, 86, 91, 93, 99, 104, 105, 112, 113, 115, 118, 119, 128, 129, 133, 134, 138, 143, 150, 151, 160, 168, 169, 172, 174, 178, 189, 195, 201, 207, 220, 221, 223, 224, 227, 237-239, 247, 250, 257, 258, 261, 270, 273, 282, 289, 290, 295, 298, 311, 317, 324, 325, 331, 335, 340, 341, 343, 355, 361, 364, 365, 368, 374
Բրյուեր Դեյվիդ 266
Բրյուեր Հենրի 357
Բրուկլին 248
Բուդինոտ Էլիաս 59
Բուլղարիա 82, 109, 250, 315, 361
Բունդուկ 230
Բուտենյով Ապոլլինարի 69

Բուրսա (Բրուսա) 50, 60, 68, 72, 112, 211, 290, 334, 366

Գ

Գաբրիելյան 310
Գաբրիելյան Սմբատ 147, 255
Գալաթա 94, 102
Գալատյան 248
Գայայան 136, 143
Գաջարյան Եփրեմ 226
Գարգիուլո 129, 276, 294, 300
Գեթիսբուրգ 92
Գելիեգուզան 296
Գեմերեկ (Գամիրք) 192
Գեյթս 188, 189, 190, 197, 213
Գեյթս Քեյլբ 269, 278
Գերմանիա 22, 28, 29, 36-38, 40, 41, 103, 119, 136, 138, 161, 163, 290, 295, 298, 313, 314, 324, 325, 331, 335, 357, 358, 359, 364, 374
Գիբսոն Թոմաս 163, 172, 173, 182, 196
Գիլման 131
Գիպպիուս Ա. Ի. 83
Գլադստոն Ուիլյամ 32
Գլեն Էրթ 273
Գյոկսուն (Կոկիսոն) 230
Գյուլեսյան Մովսես 254, 255
Գյուլիզյան Գեորգ 119
Գյունկել Օսկար 356
Գյուջյան Մելքոն 169, 170, 209
Գյուրջյան Սերովփե 132, 133, 151
Գյուրուն 68, 185, 196, 210, 286
Գոդկին Էդվին 264
Գորդոն Լելանդ 84, 94
Գորչակով Ալեքսանդր 53
Գոեյվզ 301
Գոռսվենոր Չարլզ Հենրի 263
Գվիանա 35
Գրաբիլ Ջոզեֆ 63, 74, 81
Գրանտ Ուլիս 26, 104
Գրեշամ Ուոլթեր 139-142, 144, 145, 147, 148, 150-157, 159-163, 166, 254
Գրիգոր 57
Գրին Ջոզեֆ 278
Գրին Ֆրեդերիկ 257, 266
Գրիսկոմ Լլոյդ 301, 302, 304, 305
Գուամ 26, 39
Գուանտանամո 39, 341
Գուդել Հենրի 219
Գուդել Ուիլյամ 57, 60, 63-65, 72, 73, 219, 367
Գուդնաու Ջ. 101
Գում Գափու 65, 160, 318
Գուլումջյան Կարապետ աղա 168
Գևորգյան Կարապետ 151

Դ

Դագքի-Ուայլի 343
Դաղստան 103
Դամասկոս 96, 196, 313
Դանիա 25, 47, 325
Դարդանել 48, 50-53, 97, 99, 122, 185, 336
Դարտմութ 65
Դաուդ Հաջի 304
Դաֆֆերին Ֆրեդերիկ 113-115
Դելավեր 34, 253
Դեյ Ուիլյամ 286
Դեյվիս 112
Դետրոյտ 266
Դերբենդ 103
Դերենդե (Տարանդա) 229
Դերսիմ 188
Դերվիշ աղա 296
Դիարբեքիր (Տիգրանակերտ) 68, 72, 73, 136, 183, 188, 199, 210, 223, 227, 237, 249, 278, 287, 311, 318, 351, 358
Դիկինսոն Չարլզ 305, 322
Դիոնիսիուս 57, 60
Դիջիս Էդվարդ 247
Դյուի Ջորջ 28
Դոդդ 192
Դոմինիկյան Հանրապետություն 25, 39
Դոջ Կլիվլենդ 75
Դոջ Ուիլյամ 75
Դուայթ Հարրիսոն Գրեյ Օտիս 64, 65, 66, 75, 118, 367
Դուայթ Հենրի 124, 130, 168, 170, 193, 194, 211, 212, 214, 248, 273, 278
Դուայթ Տիմոթի 58

Ե

Եգիպտոս 44, 48, 77, 249, 250, 361
Եղգարթ 307
Եղիայան Չավեն 357
Եվրոպա 8, 10, 11, 13, 14, 17, 19-22, 24, 27, 34, 39, 86, 92, 100, 103, 109, 126, 128, 143, 162, 216, 243, 249, 255, 256, 261, 262, 264, 316, 326, 338, 362, 363, 375
Եվրոպական Թուրքիա 127, 249, 250, 354

Երզնկա (Էրզինջան) 167, 180, 188, 200, 267, 309, 311
Երֆաս 96
Եփրատ 80, 117, 233, 269

Զ
Զարա 167
Զեյթուն 68, 183, 192, 193, 197, 209, 226, 228-230, 267-278
Զեքքի փաշա 347
Զիհնի փաշա Մուստաֆա 193
Զմյուռնիա (Իզմիր) 45-48, 56, 57, 59-61, 68, 72-74, 76, 77, 122, 149, 164, 166, 167, 186, 187, 196, 207, 211, 267, 282, 304, 305, 319, 324, 330, 347, 348, 360, 365, 366, 374

Է
Էբրոթ Լայմընն 264, 325
Էդինբուրգ 89
Էդհեմ փաշա 183
Էլիոտ 289
Էկֆորդ Հենրի 49, 59
Էմին բեյ
Էմմետ Ու. 119, 120
Էյդի Էլվի 338
Էնթոնի Սյուզըն 273
Էնջել Մոզես 132
Էնջել Ջեյմս 289, 290, 299
Էնվեր փաշա 308, 359, 360
Էջմիածին 83, 101, 310
Էսսեքվիբո 33
Էվարտս Ուիլյամ 103, 104, 106, 109
Էվերետ 112
Էրզրում (Կարին) 66, 68, 72, 73, 84, 96, 105, 112, 130, 132, 134, 163, 174, 177, 180, 181, 195, 199, 200, 204, 207, 209, 212, 223, 224, 227, 228, 231, 235, 267, 268, 269, 286-288, 290, 292, 293, 296, 300, 307-309, 311, 313, 316, 318, 320, 321, 324, 351, 358

Թ
Թաքկոլուկ 229
Թալաս 73
Թալեաթ փաշա Մեհմեդ 357, 358, 359, 360, 361, 374
Թահիր Խոջա 320
Թահսին փաշա 322
Թայրել Ջ. Ի. 317
Թանուր 229
Թաֆտ Ուիլյամ 282, 339, 344, 345, 347, 359
Թեհլերյան Սողոմոն 357
Թեղուտ 296
Թենիջե Կալա 230
Թենեսի 120
Թերեք 103
Թերջան 200
Թիֆլիս 360
Թոխաթ 68, 73, 136, 209, 278
Թոմաս Լյուիս 54, 72, 84
Թոմսոն Ուիլյամ 78
Թոմփսոն Դեյվիդ 134, 136-141
Թոմփսոն Ջ. 256
Թրասկ Սպենսեր 274
Թրեյսի Չարլզ 218, 219, 284
Թումայան 136, 143
Թուրխան փաշա 169
Թևֆիկ Հուսսեյն 115-117
Թևֆիկ փաշա Ահմետ 183, 187, 191, 194, 195, 217, 221, 222, 226, 236, 239, 276, 284, 286, 290, 299

Ժ
Ժնև 160, 272

Ի
Իզզետ փաշա Ահմեդ 333
Իլինոյս 250, 262, 272
Ինգլիշ Ջորջ 48
Ինդիանա 29, 141
Ինդիանապոլիս 266
Իչմե 198
Իռլանդիա 32, 174, 264
Իսպանիա 13, 16-18, 21, 23, 25, 28, 29, 33, 38, 59, 134
Իսքիյան Պետրոս 119
Իտալիա 53, 64, 100, 104, 113, 161, 195, 237, 295, 298, 301, 324, 325, 345, 355

Լ
Լաթաքիա 196
Լայշման Ջոն 294, 313-316, 318-321, 324, 325, 327, 328, 329, 332-337, 340-344, 373
Լատինական Ամերիկա 16, 18, 19, 21, 26, 27, 363
Լեմբ 296
Լեմնոս 180
Լեյարդ Օստին Հենրի 104, 105
Լեյն Ռուֆուս 304, 305
Լենց Ֆոռենկ 206, 258, 301
Լեոնարդ Ջ. 112
Լի Լ. Օ. 192, 193, 195, 196, 278
Լինկոլն Աբրահամ 95, 97, 256, 272
Լինն 169
Լիսաբոն 45
Լոզան 52
Լոնգուորթ 175
Լոնդոն 15, 18, 34, 37, 38, 40, 52, 100, 113, 134, 137, 145, 169, 247, 264, 275, 280, 370
Լովելլ 77, 248
Լորիս Մելիքով Միքայել 103
Լուիզիանա 23, 44
Լումիս Ֆրենսիս 316, 317, 321
Լուֆթի փաշա Ֆերիկ Ահմեդ 240

Խ
Խաղաղ օվկիանոս 19, 26, 37, 363
Խարբերդ (Էլազիգ) 68, 69, 73, 76, 80, 85, 110, 112, 117, 149, 185-189, 191, 193, 194, 197-201, 204, 206-210, 212, 213, 216, 220, 223, 225, 227, 234, 236, 249, 258, 269, 277, 278, 282, 290, 294, 299, 309, 318, 351, 358
Խարկով 103
Խլաթ 296
Խնուս 68, 105

Կ
Կալամազու 260
Կալիֆոռնիա 24, 154, 168, 250, 258, 356
Կահիրե 207
Կանադա 15, 23, 35, 113, 250
Կանդիա 207
Կաննինգ Ջորջ 17, 18, 21,
Կաննինգ Ստրեթֆորդ 72, 368
Կանստորում Շալոմ 132
Կասպից ծով 96, 185
Կասս Լյուիս 53
Կարաման 183
Կարապետ 109
Կարապետյան Հ. Դ. 306, 307
Կարապետյան Նշան 259
Կարիբյան ավազան 26, 39, 88
Կարլման 137
Կարնեգի Էնդրյու 29
Կարս 103
Կարտիս Ուիլյամ 249, 250
Կելլի Ուիլյամ 98
Կենտրոնական Ամերիկա 22, 77
Կեսարիա (Կայսերի) 68, 72, 73, 112, 136, 137, 160, 192, 195, 199, 201, 202, 227, 323, 324
Կիլիկիա 69, 136
Կիպրոս 137, 173, 186, 298
Կլարկ Ն. 121, 122
Կլինտոն 271
Կլոպշ Լուիս 266
Կոլումբուս 266
Կոմիտաս 358
Կոնգո 325
Կոնեկտիկուտ 262
Կոնվեյ 64
Կոշուտ Լայոշ 53
Կոսովո 321
Կոստանդնուպոլիս (Ստամբուլ) 7, 44, 45, 47, 50, 53, 54, 61, 63-65, 67-69, 71-76, 80-82, 88, 90, 93, 94, 97, 99-105, 108, 112, 114, 115, 117, 122-125, 128, 131, 132, 135, 140, 141, 147, 148, 150, 161, 162, 168, 170-172, 175, 176, 179, 181, 184-188, 196, 203, 205-211, 218, 219, 222, 223, 225-227, 230-233, 237-239, 243, 247, 248, 260, 265, 270, 271, 273, 275, 277, 280, 282, 287, 289, 291, 302, 307, 309, 310, 313, 321, 323, 324, 328, 331, 333-336, 340, 343-348, 356-361, 365-368, 370, 373, 374
Կովկաս 83, 270
Կորեա 26, 27, 363
Կորրիգան Մայքլ 266
Կոփ 200
Կոքս Սեմյուել 80, 120, 121, 123
Կոֆֆինգ 95
Կրետե 40, 242
Կրյուգեր Փոլ 36
Կուբա 12, 24, 25, 39, 263

Հ
Հաագա 38, 326
Հաբբարդ Ա. 240
Հաբբել Ջուլիան Բ. 275
Հադդոնֆիլդ 261
Հալեպ 68, 73, 96, 163, 169, 170, 172, 183, 186, 192-194, 209, 221, 225-228, 239, 267, 283, 341, 342, 355
Հալիլ բեյ 142
Հալիմ փաշա Սաիդ 356
Հակոբյան Աբրահամ 357
Համըն 68, 163, 172, 173, 184, 210, 211, 227, 341, 343, 349, 350, 351
Համբարձումյան Սոսի 309
Համդի փաշա 321
Համիլտոն Քարոլայն 213, 269
Համլին Սայրուս 67, 74, 75, 78, 85, 244, 248, 255-259, 261, 266, 278

Հայաստան 57, 60, 66, 86, 105, 108, 115, 128, 131, 137, 138, 147, 180, 202, 208, 210, 252, 255, 259-262, 264, 266, 270, 271, 274, 277, 310, 319, 320, 335, 345-347, 372, 373
Հայիթի 39
Հայ Մարտին 247
Հայ Ջորջ 247
Հարավային Ամերիկա 13, 18, 250
Հարավային Աֆրիկա 36
Հարավային Կարոլինա 44, 273
Հարթ Ալբերտ 12
Հարթֆորդ 249
Հարվարդ 12
Հարրիս 330
Հարրիս Այրա 275, 277, 278
Հարրիսբուրգ 266
Հարրիսոն Բենջամին 29, 128
Հավայան կղզիներ 26, 28, 31, 39, 58, 79
Հաու Ջուլիա Ուորդ 254, 255
Հաուվելլի Ջոն 109
Հեյ Ջոն 26, 109, 290-294, 298, 301, 302, 304-306, 313-316, 318, 320
Հեյլ Էդվարդ Էվերեթ 254, 266
Հեպբըրն Ուիլյամ 263
Հեռավոր Արևելք 8, 37, 88, 362
Հեսս 138, 142, 143
Հերբերտ Հիլարի 166
Հերցեգովինա 361
Հերրիկ Ջորջ 115, 213
Հիլլ Դեյվիդ 292, 296, 300, 308-313
Հիչկոկ Մ. Հ. 85
Հիպ Ջ. 109, 110, 115-118
Հիրշ Սոլոմոն 128-133
Հյուսիսային Ամերիկա 10, 13, 24, 126
Հյուսիսային Աֆրիկա 64
Հնդկաստան 32, 37, 96, 113, 247
Հոբոկեն 249
Հոդգսոն Ուիլյամ 50
Հոլանդական Գվիանա 33
Հոլվորդ 239
Հոհ 198
Հոպկինս Սեմյուել 58
Հոսրեֆ փաշա 138, 139, 141
Հովսեփ 239
Հովհաննիսյան Ռիչարդ 246
Հոր Ջորջ Ֆրիսբի 29, 39, 260
Հոռմ 64, 67, 102, 183, 356
Հունաստան 24, 47, 60, 64, 77, 104, 250, 259, 285, 360, 361
Հուսեյնիկ 189, 216, 286
Հուսսեյն աղա Հաջի 201
Հուսսեյն փաշա Քյուչուկ 45

Ձ
Ձորեր 307

Ղ
Ղրիմ 96

Ճ
Ճապոնիա 25-27, 301, 336, 363
Ճիզմեճյան Մանուկ 84

Մ
Մաթևոս Բ Չուխաճյան
Կոստանդնուպոլսեցի 68, 70, 71
Մաթևոսյան 248
Մաթևոսյան Հակոբ էֆենդի 106, 107
Մալաքիա 68, 136, 184, 188, 210, 278
Մալթա 56, 60, 66, 131, 356
Մալկոմ Վարդան 248
Մակ Ադու Ուիլյամ 356
Մակալլում 228-230, 267
Մակեդոնիա 122, 314, 316, 319, 320, 321, 346, 360, 374
Մակնաբ Ֆրենսիս 131
Մակ Քինլի Ուիլյամ 26, 28, 282, 292, 293, 297, 359, 364
Մակվիգ Ուեյն 100
Մահան Ալֆրեդ 31, 39
Մահմուդ 2-րդ 45, 69
Մամուրեթ ուլ-Ազիզ 194, 223, 227, 323
Մանազկերտ 318
Մանիլա 28
Մանիսա 211, 304, 305
Մաշկերտ 68
Մասաչուսետս 29, 53, 64, 84, 167, 169, 219, 250, 253, 259, 271
Մաստուկ փաշա 95
Մավրոյենի բեյ 144-146, 153, 154, 157, 159, 161-163, 165, 173, 186, 187, 220, 223, 236, 255-259
Մարաշ 68, 73, 76, 77, 96, 110, 112, 163, 172, 173, 183, 191-195, 199, 200, 202, 206, 208, 210, 212, 213, 216, 217, 227, 228, 230, 236, 237, 258, 267, 277, 278
Մարդին 73, 211, 287
Մարզվան (Մերզիֆոն) 6, 68, 76, 77, 80, 85, 112, 135, 136, 137, 138, 139, 140, 141, 142, 143, 144, 149, 167, 168, 181, 186, 192, 194-196, 209, 212, 213, 218, 221, 222, 227, 259, 284, 285, 371
Մարլբորո 253
Մարկես 97
Մարշ Ջորջ 53
Մարոկկո 40
Մարչիսոն Չարլզ 32
Մարսել 145, 185
Մարտին Հենրի 56
Մարտիրոս 143
Մաքսիմիլիան I 25, 97
Մեդիսոն Ջեյմս 19
Մեթանի Աբդուլ Կադեր 318
Մեխիկո 23
Մեհմեդ 5-րդ 341
Մեյն 262, 269
Մեյնարդ Հորաս 103, 104, 105, 106, 108, 109
Մեյսոն Եռնեստ 275
Մետտոքս Հենրի 141
Մերիլենդ 273
Մերձավոր Արևելք 46, 55, 56, 58, 60, 62, 67, 73, 74, 77-79, 156, 282, 344-356, 358, 366, 368, 371, 373
Մերսին 167, 172, 182, 184, 196, 211, 232, 239, 340-343, 349
Մերրիլ Սելահ 82
Մեքսիկա 12, 23-25, 50, 97, 134
Մեքքա 313
Միդվեյ 26
Միլթոն Ջոն 150
Միլլզ Սեմյուել 57
Մինասյան Սիմոն 248
Մինասյան Պողոս 65
Միչիգան 53, 141, 260, 289
Միջագետք 270, 335, 373
Միջերկրական 43, 122, 164, 184, 233, 277, 341, 345, 366
Միսսիսիպի 272
Միսսուրի 29, 141
Միրաք Ռոբերտ 266
Միքայելյան Խաչիկ 135
Մոկս 225
Մոկունք 310
Մոնաստիր 333
Մոնթգոմերի Ջ. 110, 112
Մոնրո Ջեյմս 16, 18, 19, 21, 24, 47, 96, 363
Մոսուլ 73, 232, 355
Մոտտ Ջոն 89
Մորգենթաու Հենրի 7, 355-361, 374
Մորեր 343
Մորրիս Էդվարդ Ջոյ 90, 92, 93, 95-99
Մուխալ 228
Մուշ 182, 208, 227, 237, 308, 310, 312, 320, 322
Մուսսա բեյ 114, 128-130
Մուստանեսսեհ 301
Մուստաֆա բեյ 235, 236
Մուստաֆա փաշա 212, 213, 216
Մուրադ (Համբարձում Պոյաճյան) 160
Մուրադյան Մարտիրոս 168, 169

Յ
Յենովքյան Ս. 202
Յերուսաղեմ 57, 60, 78, 82, 96, 115, 131, 207, 248
Յիրդլի Ջորջ 247
Յոզգատ 73, 136, 142, 154
Յուկատան 24

Ն
Նագասակի 265
Նազարեթ 61
Նազիմ փաշա 224
Նաթան Էդվարդ 349, 351
Նապոլեոն 3-րդ 25, 97
Նավարինո 48, 60
Նեապոլ 16, 166
Նեփ Գրեյս 268
Նեփ Ջորջ 80, 114, 128, 181, 182, 194, 220, 221, 237-240, 278
Նիդերլանդներ (Հոլանդիա) 10, 18, 44, 69, 247, 325
Նիկարագուա 39
Նիկոմեդիա (Իզմիթ) 68, 72, 77, 112
Նյուբերրի 140, 141
Նյուել 171
Նյու Հեմփշիր 132, 253, 269
Նյու Մեքսիկո 24, 111
Նյու Յորք 25, 28, 29, 44, 45, 50, 59, 75, 98, 100, 103, 130, 145-147, 162, 163, 241, 246-250, 253-255, 260, 264, 266, 270, 271, 273-275, 282, 324, 337, 355-357, 365, 371, 373
Նյու Ջերսի 113, 250, 261, 271
Նյուֆաունդլենդ 35
Նորդ Օքսֆորդ 271
Նոր Օռլեան 293
Նորտոն, Թոմաս 88
Նորֆոլկ 348
Նոքս Ֆիլանդեր 337, 347

Շ
Շապլին Գարահիսար 167, 200
Շատթակ 240
Շաքիր փաշա 227
Շեմսի փաշա 288
Շերիֆ աղա 310
Շերման Ջոն 284, 286, 289
Շեքսպիր Ուիլյամ 150
Շիշմանյան 171, 318
Շիրակյան Արշավիր 356
Շիֆ Ջեկոբ 324, 325
Շմավոն 168
Շնայդեր 50
Շորտ Լյուքեր 141, 172, 196, 221
Շվեդիա 36, 44, 47, 69, 325
Շվեյցարիա 272, 313
Շտրաուս Օսկար 125, 290, 291, 293-295, 298-301, 307, 325, 343, 344
Շուրց Կարլ 29

Չ
Չամբերս 211, 268, 269
Չարլստոն 44
Չեմբերլեն Լաուրա 112
Չեսթեր Քոլբի 335, 373
Չերթիջյան Պողոս 226
Չիլի 26, 120
Չիլկանի 301
Չիլտոն Ռ. Ս. 174-176
Չիկագո 217, 249, 266, 306
Չինաստան 26, 39, 285, 289, 363
Չորում 136, 142

Պ
Պագո Պագո 31
Պալերմո 164
Պալյան Կարապետ 66
Պաղեստին 59, 77, 78, 366
Պայաս 95
Պայասլյան Սիմոն 63, 328
Պանամա 28
Պարկինգ Ջաստին 66
Պարմելի 211
Պարսից ծոց 244
Պարսկաստան 66, 74, 96, 122, 206, 224, 270, 288, 300, 301, 309
Պենսիլվանիա 250, 272, 337, 341
Պետերբուրգ 183
Պետրոս Թ (Անտոն Հասունյան) 101, 102
Պերու 26
Պիտսբուրգ 29
Պիրեյ 99
Պոդիկյան Հակոբ 254, 279
Պոնսոնբի Ջոն 69
Պոտտեր Ալոնզո 266
Պորտ Արտուր 265
Պորտեր Դեյվիդ 50, 51, 69, 365
Պորտեր Ջեյմս 120
Պորտ Հադսոն 92
Պորտլենդ 134
Պորտուգալիա 44
Պոռսսեն Անտոնիո 304
Պրժևալսկի 227, 228
Պրինստոն 248
Պրովիդենս 249, 266
Պրուսիա 10, 17, 18, 37, 69, 71, 368
Պուերտո Ռիկո 24, 39

Ջ
Ջաբար բեյ 309
Ջիբրալթար 164
Ջեբեն 230
Ջեկսոն Էնդրյու 49, 365
Ջեմալ փաշա Ահմեդ 360, 361
Ջեյ Ջոն 59
Ջեյմսթաուն 247, 256
Ջեյմսոն Լինդեր 36
Ջեյմս Ուիլյամ 29
Ջերսի Սիթի 248
Ջեֆերսոն Թոմաս 12, 19, 44, 364
Ջիբրալթար 341
Ջոլ Պունար 229
Ջուեթ 137-140, 142, 152, 157-161, 163, 166, 167, 185, 186, 196, 213, 221, 222,
Ջուեթ Թ. 232
Ջևադ փաշա 148

Ռ
Ռադոլին Հյուգո 137
Ռալստոն Ռոբերտ 59
Ռամսեյ Ֆ. Մ. 165
Ռայդ Ուայթլոու 341
Ռաշ Ռիչարդ 18,
Ռաուֆ փաշա 104, 232
Ռեյնոլդզ Ջեյմս 114, 128, 225, 237, 283, 284, 317, 325, 326
Ռեյսվեյկ 13,
Ռեշադ բեյ Մեհմեդ 321
Ռեշիդ փաշա Մուստաֆա 71, 368
Ռիգզ Էդվարդ 142, 143
Ռիգզ Էռնեստ 323, 324
Ռիգզ Էլիաս 74
Ռիդդլ Ջ. 154, 223, 237, 239
Ռիզե 83
Ռինդի Չարլզ 49, 365
Ռիչարդսոն Դ. Ա. 133, 134
Ռիֆաթ փաշա Հալիլ 183
Ռոբինսոն Էդվարդ 77, 78
Ռոբերտս Չալմերս 230, 231
Ռոբերտս Քրիստոֆեր 75
Ռոդ Այլենդ 250
Ռոդոսթո (Թեքիրդաղ) 68, 72
Ռոդս Ֆոստեր 49
Ռոկիֆլ Ն. Ն. 224, 228, 231, 267
Ռոկիֆլ Ուիլյամ 285, 344-348, 350-354
Ռոկ Սպրինգզ 293
Ռոչեստեր 248
Ռոջերս 343
Ռոջերս Ջոն 48
Ռուզվելտ Թեոդոր 35, 39, 282, 313, 314, 321, 324, 330, 332, 336, 339, 343, 359
Ռումինիա 361
Ռուսաստան 17-20, 23, 25, 37, 41, 43, 44, 52, 53, 55, 69, 77, 82-84, 86, 92, 93, 96, 99, 103-106, 113, 119, 133, 134, 146, 160, 161, 168, 185, 209, 227, 228, 249, 250, 259, 262, 285, 296, 309, 312, 314, 317, 320, 324, 325, 349, 355, 357
Ռուստեմ փաշա 87
Ռուտ Իլիհու 324-326

Ս
Սաադ-եդ-դին փաշա 224
Սաիդ փաշա Մեհմեդ 137, 147-149, 157, 161, 163-165, 172, 334
Սալեմ 45
Սալիվան 322
Սալոնիկ 122, 130, 333, 351
Սալվատոր 230, 237
Սամարա 103
Սամուս 26, 28, 31
Սամսուն 185, 278, 319
Սայդա 96
Սանդերս 201, 239, 240
Սան Դոմինգո, Դոմինիկյան Հանրապետություն 25
Սասուն 156-160, 162, 163, 179, 182, 208, 227, 253, 255, 256, 296, 307-309, 322
Սաբատով 103
Սարդինիա 10
Սելֆրիջ Թոմաս 182, 183, 185, 186, 193, 196, 216
Սեյրանյան Լևոն 286
Սեկվիլ-Վեստ Լայոնել 32
Սենտ Թոմաս 25
Սենտ Փոլ 266
Սերբիա 361
Սերոբյան 285
Սերվերյան Հովհաննես 66
Սըվազ (Սեբաստիա) 68, 73, 110, 112, 136, 137, 141, 142, 157, 158, 162, 167, 184, 185, 192, 197, 199, 203, 207, 208, 210, 212, 213, 221, 223, 227, 232, 240, 249, 278, 323, 324, 351, 358
Սթանտեր 175
Սթյուարտ Ուիլյամ 47
Սթոն Լյուսի 254
Սիրակուզ 266
Սիրիա 77, 78, 169, 182, 205, 208, 277, 313, 355, 360
Սիցիլիա 16
Սլաան 47
Սկյութար 66, 77, 172, 203, 347
Սոերդ 287
Սմիթ Ադամ 43
Սմիթ Էլի 66, 77, 78
Սմիթ Հարթֆորդ 50
Սմիթ Ջաքսոն 128, 149, 150, 187, 193, 211, 266, 274
Սմիթ Ուիլյամ 44
Սյուարդ Ուիլյամ 25, 91, 93, 95
Սյուրեյա փաշա 129
Սոլթ Ջերեմի 81, 86, 159, 218, 219, 257
Սոլսբերի Ռոբերտ 32-34, 36, 178
Սոխորդ 296
Սոնդերս 191
Սպաղանք 307
Սպիր Ռոբերտ 356
Սպրինգֆիլդ 248, 266
Ստեփանոս Բ Աղավնի Զաքարյան 67
Ստեֆենս Ջոն Լլոյդ 77
Ստիդման 99
Ստիլման Ուիլյամ 261
Ստյուպ 258
Սուեզ 37
Սուլուկչյան 319
Սևերեկ 239, 283
Սև ծով 46, 51, 52, 96, 98, 122, 136, 185, 277

Վ
Վաթեռլոո 22,
Վահապետյան Հարություն 248
Վայզ Ստեֆեն 356
Վայոմինգ 293
Վան 68, 76, 80, 84, 134, 149, 163, 174, 187, 195, 199, 209, 211, 221, 223-225, 227, 232, 269, 270, 283, 287, 288, 309, 311-313, 316, 317, 322, 347, 351, 357
Վանգեր Իրվինգ 341
Վանյան Նիկողոս 226
Վաշինգտոն 5, 29, 32, 37, 38, 40, 54, 79, 87, 88, 115, 144, 152, 157, 158, 162, 165, 173, 186, 217, 223, 236, 240, 251, 254, 263, 266, 271, 274, 280, 281, 289, 291, 302, 303, 307, 332, 337, 339, 359, 362, 371, 374
Վաշինգտոն Ջորջ 9, 10, 11
Վատիկան 101
Վարտոն Ուիլյամ 131, 137, 138
Վեբբեր Ջորջ 206, 258
Վեբստեր Դենիել 53, 54
Վեյկ 26
Վենեսուելա 33, 35, 36, 38, 261, 264, 364
Վեստ Ինդիա 25, 35
Վեստ Ջորջ Գրեհամ 29,
Վերոնա 17
Վիեննա 17, 183, 275
Վիլհելմ 2-րդ 36, 37
Վիլսոն Հանտինգտոն 338, 339
Վիլսոն Վուդրո 38, 355, 356, 359, 361
Վիկսբուրգ 92
Վինգեյթ Հենրի 195, 202
Վիսկոնսին 248
Վիստար Էդուարդ Մ. 275, 278
Վիրջինիա 16, 247, 256
Վիրջինյան կղզիներ 39
Վրաստան 60
Վուդմաս 46, 66
Վուդ Չարլզ Կինգ 275, 278
Վուստեր 84, 248, 249, 253, 266

Տ
Տարսոն (Տարսուս) 73, 76, 80, 172, 182
Տեխաս 23, 24, 141, 272
Տենեսի 16
Տեմպլտոն 64
Տեր-Սահակյան Ջոն 65, 67, 367
Տեր-Սերոբյան Քրիստափոր 248
Տերրել Ալեքսանդր 82, 141-143, 147-173, 177-188, 190-199, 201, 202, 207, 213-218, 220-222, 225-227, 232-237, 240, 241, 243, 253, 257, 258, 276, 280, 283-286, 299
Տվեյն Մարկ 29
Տրաբզոն 60, 66, 68, 72, 83, 174-177, 181, 185, 199, 208, 209, 211, 311, 322, 324, 366
Տրանսվաալ 36
Տրիպոլի 277, 319, 361
Տրոյ 248, 249
Տերիկ 68

Ց
Ցինցինատի 151

ՈՒ
Ուայթ Ջորջ 135
Ուայթ Ուիլյամ 128, 129
Ուզուն-օվա 198
Ուիլլեր 191
Ուիլյամս Ջեյմս 53, 93
Ուլ Էդվին 163-166, 175
Ունքյար Իսքելեսի 52
Ուոլլես Լյուիս 111-115, 118, 119, 256
Ուոշբըրն Ջորջ 54, 75, 163, 235, 276, 278
Ուորդ Ուիլյամ 253
Ուորեր 173
Ուտրեխտ 13
Ուրմիա 66, 74
Ուրֆա 72, 73, 163, 183, 184, 199, 210, 218, 227, 240, 278, 360

Փ
Փալմերսթոն Հենրի 33
Փամլի 83
Փարիզ 13, 53, 90, 92, 99, 173, 186, 294, 369
Փարսոնզ Լիվայ 56-58, 60, 65, 366
Փարսոնզ Ջաստին Ու. 109-112
Փաուերս 50
Փեյն Թոմաս 9, 362
Փեշտիմալճյան Գրիգոր 65, 70
Փերիչ Նիկոլսոն 50
Փերրի Հ. 112
Փիթ Ուիլյամ 80
Փիրս Էդվին 244, 331
Փիրս Ջ. Ի. 110, 112
Փոլկ Ջեյմս 16, 24,
Փոնսֆոտ Ջուլիան 35
Փոչ Ֆ. 169, 170, 183, 218, 221, 226, 239
Փոքր Ասիա 83, 108, 115, 135, 139, 142, 152, 199, 205, 207, 208, 221, 239, 242, 243, 259, 266, 292, 328, 338, 339, 361, 370

Փուլման 277

Ք
Քալիլ 95
Քարրի Ֆիլիպ 195, 223, 277
Քենեդի Ջոն Սթյուարտ 75
Քեսապ 343
Քըրքլենդ Ու. Ա. 166, 167
Քիլիս 278, 283
Քիմբալ Գրեյս 225, 270, 278
Քինգ Ռուֆուս 44
Քինգ Փենդլտոն 123-125, 128, 130
Քլիվլենդ 266
Քլիվլենդ Գրովեր 28, 29, 33, 35, 123, 144, 146, 148, 153, 157, 158, 202, 205, 253, 255, 261, 262
Քյազիմ Հ. 337
Քյամիլ փաշա 172, 179, 211, 334
Քոլլոմ Շելբի 262
Քոլ Ռ. Մ. 105, 106, 112, 114, 237, 284, 310, 311
Քոլ Ուիլկինսոն 262
Քրդստան 96, 206, 349
Քրեյն Ուիլյամ 48
Քրիստի 258
Քրոուֆորդ 211

Օ
Օլբանի 260
Օլնի Ռիչարդ 16, 34, 168, 169, 170, 173, 174, 177, 178, 181-188, 191, 192, 195, 196, 198, 202, 205, 206, 213, 215, 218-221, 223, 225, 226, 234-236, 258, 284
Օհայո 26, 104, 262, 263, 272
Օ'Նիլ Չարլզ 182
Օջալվո Վիտալ 308, 309, 316-318, 320
Օսկանյան Խաչատուր 247
Օսկանյան Քրիստոֆեր 98
Օսմանյան կայսրություն, Օսմանյան Թուրքիա, Թուրքիա, Տաճկաստան 5, 6, 7, 44-57, 59-68, 70, 72-82, 84, 86-95, 97, 98, 100-104, 106-113, 115-128, 130-135, 139-141, 143-149, 151-154, 157-159, 162, 165, 166, 169, 170, 173, 178, 184-187, 193-195, 197-199, 202-205, 207, 208, 211, 213-215, 217, 219, 221, 223, 230, 231, 234-236, 240-242, 244, 245, 248-265, 267, 269, 271, 273-286, 288-292, 295, 297-299, 301-303, 306, 307, 313, 315, 317, 320, 325-333, 335-339, 341, 342, 344-349, 352, 355-361, 364-375
Օրեգոն 20, 23, 24
Օրինոկո 33
Օրլեան 12,
Օրմանյան Մաղաքիա 88
Օֆֆլի Դեյվիդ 46, 48, 365

Ֆ
Ֆալլեր Ա. 183, 221, 283
Ֆալչեր Էլիզա 112
Ֆարկին (Սիլվան) 278
Ֆարնհեմ Լ. 112
Ֆարնսուորթ 137
Ֆարրագուտ Դեյվիդ Գլազգո 99
Ֆեկկա 343
Ֆեռռուտ բեյ Ալի 291, 292
Ֆերդինանդ VII 17,
Ֆիլադելֆիա 45, 59, 248, 249, 266, 365
Ֆիլիպիններ 24, 26, 29, 39, 295
Ֆիլիպ Հոֆման 356
Ֆիլիպպուպոլիս 73
Ֆիլիպս Ուիլյամ 59
Ֆիշ Համիլտոն 100
Ֆիսկ Փլինի 56-58, 60, 61, 65, 366
Ֆիցմորիս 218
Ֆլետչեր Ուիլյամ 350, 351
Ֆլորիդա 23, 24, 262, 272
Ֆոնտանա Ռաֆայել 223, 239
Ֆոռնոս 229
Ֆոստեր Ջոն 134-138
Ֆորբզ 305
Ֆոռայ Ռիչարդ 54, 72, 84
Ֆոռայ Ուիլյամ 262
Ֆռելինգհույսեն Ֆրեդերիկ 113-119
Ֆրանկլին 141
Ֆրանկլին Բենջամին 44, 364
Ֆրանսիա 10, 12, 13, 16-18, 21, 25, 37, 38, 40, 43, 44, 53, 55, 71, 91, 97, 102, 106, 113, 160, 168, 179, 185, 208, 227, 237, 250, 295, 298, 313, 324, 325, 335, 340, 341, 355, 374
Ֆրեզնո 135, 168, 249, 285
Ֆրիման 311
Ֆուադ փաշա Մեհմեդ 99

ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ ԱՐՄԱՆ ՋՈՆԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Армянский вопрос на страницах журналов Великобритании (середина 90-х гг. XIX в.), Ե., ՀԽՍՀ ԳԱ հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի կենտրոն, 1980, 37 էջ:
2. Политика Англии в Армянском вопросе по материалам еженедельника *«Spectator»* (90-е гг. XIX в.), Ե., ՀԽՍՀ ԳԱ հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի կենտրոն, 1982, 24 էջ:
3. Հայկական հարցի [անգլերեն] գրականության մատենագիտություն (1890-1900), Ե., ՀԽՍՀ ԳԱ հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի կենտրոն, 1983, 31 էջ:
4. Հայկական հարց: 1878-1983 (Ռուսերեն լեզվով գրականության մատենագիտություն), Ե., ՀԽՍՀ ԳԱ հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի կենտրոն, 1985, 64 էջ:
5. Геноцид армян 1915 г. в зарубежной литературе (1975-1985), Москва: Институт научной информации по общественным наукам Академии Наук СССР, 1985, 61 с.
6. Великобритания и Армянский вопрос (90-е гг. 19-го в.), Е.: Айастан, 1990, 240 с.
7. Ջոն Սահակի Կիրակոսյան, Մատենագիտություն, Ե., ՀՀ ԳԱԱ Հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի կենտրոն, 1994, 67 էջ:
8. Բրիտանական դիվանագիտությունը և արևմտահայության խնդիրը (19-րդ դարի 30-ական թթ. – 1914 թ.), Ե., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 1999, 509 էջ:
9. British Diplomacy and the Armenian Question, from the 1830's to 1914. - Princeton and London: Gomidas Institute Books, 2003, 365 p.
10. The Armenian Massacres 1894-1896. US Media Testimony (Edited and with an Introduction by **Arman J. Kirakossian**), Detroit: Wayne State University Press, 2004, 317 p.
11. Ակնարկներ Հայկական հարցի եվ Եղեռնի միջազգային ճանաչման պատմության, Ե., Տիգրան Մեծ, 2006, 262 էջ:
12. Armenia-USA. Current Realities and Vision for Future. – Yerevan: Yerevan State University Press, 2007, 290 p.
13. Հայկական հարցը և հայերի ցեղասպանությունը (Պատմաիրավական եռալեզու տեղեկանք), Ե., «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, 2006, 2007, 101 էջ:

14. The Armenian Massacres 1894-1896. British Media Testimony (Edited and with an Introduction by **Arman J. Kirakossian**). - Dearborn: Armenian Research Center, University of Michigan, 2008, 614 p.
15. Ջոն Կիրակոսյան, Անկախ պետականության և քաղաքական հայագիտության ակունքներում (Կազմող, խմբագիր և առաջաբանի հեղինակ՝ **Արման Կիրակոսյան**), Ե., Տիգրան Մեծ, 2009, 679 էջ:
16. Армения и советско-турецкие отношения в дипломатических документах 1945-1946 гг. (Под редакцией **Армана Киракосяна**), Ереван: Национальный архив Армении, 2010, 239 с.
17. **Կիրակոսյան Ջոն**, Ընտրանի (Կազմող, խմբագիր և առաջաբանի հեղինակ՝ **Արման Կիրակոսյան**), Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2014, 728 էջ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ 5

ԳԼՈՒԽ I
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ (1776-1914 ԹԹ.)

1. ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության ձևավորումը 8
2. Մոնրոյի վարդապետությունը 15
3. ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության սկզբունքները 19-րդ դարի երկրորդ կեսին 24
4. Արտաքին քաղաքականության նոր տեսության ձևավորման և բրիտանա-ամերիկյան բարեկամության սկիզբը 31
5. ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը 20-րդ դարի առաջին քառորդում 38

ԳԼՈՒԽ II
ԱՄՆ-ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԿԻԶԲԸ ԵՎ ՄԻՍԻՈՆԵՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

1. ԱՄՆ-Օսմանյան կայսրություն միջպետական հարաբերությունների հաստատումն ու զարգացման սկզբնական շրջանը 43
2. Միսիոներական շարժման սկիզբն ու շարժառիթները 54
3. Ամերիկյան միսիոներների և արևմտահայերի առնչությունները: Ավետարանական եկեղեցու և համայնքի ձևավորումը 63
4. Ամերիկյան միսիոներների գործունեությունն Օսմանյան կայսրությունում 73

ԳԼՈՒԽ III
ԱՄԵՐԻԿՅԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 1860-1890-ԱԿԱՆ ԹԹ.

1. ԱՄՆ-Օսմանյան կայսրություն հարաբերությունները 1860-1870-ական թթ. 90
2. Ամերիկյան դիվանագիտության գործունեությունը 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքում և 1880-ական թթ. 103
3. 1893 թ. Մարզվանի դեպքերը և ամերիկյան դիվանագիտությունը 135
4. ԱՄՆ-ում հպատակություն ստացած և Օսմանյան կայսրություն վերադարձած հայերի խնդիրը 144

ԳԼՈՒԽ IV
ԱՄՆ-ի ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 1894-1896 ԹԹ. ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ

1. 1894 թ. Սասունի հայ բնակչության կոտորածն ու ամերիկյան դիվանագիտությունը 156
2. 1895-1896 թթ. արևմտահայության կոտորածները. ամերիկյան դիվանագետների և միսիոներների վկայությունները 171

ԳԼՈՒԽ V
ԱՄԵՐԻԿՅԱՆ ԱՐՇԱԳԱՆՔԸ ԵՎ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻՑ ՏՈՒԺԱԾ ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆԸ

1. Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ համայնքի համառոտ պատմությունը 246
2. Ամերիկյան հասարակայնության արձագանքը 252
3. Օգնության կազմակերպումը կոտորածներից տուժած արևմտահայությանը 265

ԳԼՈՒԽ VI
ԱՄԵՐԻԿՅԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 1897-1914 ԹԹ.

1. ԱՄՆ-Օսմանյան կայսրություն հարաբերությունները 1894-1896 թթ. հայկական կոտորածներից հետո 282
2. Երիտթուրքական հեղափոխությունը և Ադանայի կոտորածը 332
3. Ամերիկյան դիվանագիտության գործունեությունն Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին 343

ԱՄՓՈՓՈՒՄ 362
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 376
ԱՆՎԱՆԱՑԱՆԿ 385
ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ ԱՐՄԱՆ ՋՈՆԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ 396

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐՄԱՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ԱՄՆ-Ի ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ

(19-ՐԴ ԴԱՐ - 1914 Թ.)

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Շապիկի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Տեխ. խմբագրումը՝ Լ. Հովհաննիսյանի

Չափսը՝ 60x84 1/16: Տպ. մամուլը՝ 25:
Տպաքանակը՝ 500 օրինակ:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1